

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

Library

ՊՆԻՔ ԱՌԻՅՆՈՒԹԱ ԿԱՐՈՂ ԵՔ ՁՅԸ ՆՈՐԿՈՒՄՆԸ ՈՒՆԵԱՆԱԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԱԿ
ԼՈՒՄՄԱՍՅԱՑՔԵՆԱԶԱՆԵԸ ԳՐՔԵՐ:

ԹԿՈՅՔՆ ԳՐՔԵՐԻ ՄՏԵՂՈՒՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԸ "ՀԱՄԱՀԱՅՐԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅՔԻ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՅՔԻՑ՝

www.freebooks.am

ԸՆԴՐՉԱԿԱԼ ԵՒՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՂ ԿՈՅՔԻՑ:
ՑԱՆՎԱԼՈՒՄ ԵՒՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱԼՈՒԹՅՈՒՆ:



ԳՐՔԻՔ ՄԵՁ՝ freebooks@rambler.ru

1955 500000 045 *



u

j





Что такое

ТОМ 1

Кто такой

Для
младшего
школьного
возраста

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

АРЗУМАНЯН М В (главный редактор) АИВАЗЯН О М (заместитель главного редактора) АЛЕКСАНДРЯН Э А АРАКЕЛЯН Г А АРУТЮНЯН С Б АХУМ-ЯН С Т ВАЛЕСЯН Л А ДЖРБАШЯН Э М ГЮЛЬНАЗАРЯН Х М, ИГИТ-ЯН Г С МИРЗОЯН Л В МУГНЕЦЯН Г М МУРАДЯН С. М., ПЕТРОСЯН В А САРКИСЯН Г Х СИМОНЯН Г Р ТОРОСЯН Дж Л (заместитель главного редактора) ТУРЯН В А ХАЧАТРЯН Г А (ответственный секретарь) ЧИТЧЯН Г О

ГЛАВНАЯ РЕДАКЦИЯ АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ ЭНЦИКЛОПЕДИИ

ЕРЕВАН 1984

ԻՆՁ Ե

ՈՎԼ Ե*

ՀԱՏՈՐ 1

Կրտսեր տարիքի
դպրոցականների
համար

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Մ Վ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ (գլխավոր խմբագիր) Է Ա ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ Հ Մ
ԱՅՎԱԶՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ) Գ Ա ԱՌԱՔԵԼՅԱՆ Խ Մ ԳՅՈՒԻ
ՆԱԶԱՐՅԱՆ Զ Լ ԹՈՐՈՍՅԱՆ (գլխավոր խմբագրի տեղակալ) Հ Ս ԻԳԻԹ-
ՅԱՆ Հ Հ ԽԱԶԱՏՐՅԱՆ (պատասխանատու քարտուղար) Ս Տ ՀԱՆՈՒՄ-
ՅԱՆ Ս Բ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Լ Վ ՄԻՐՋՈՅԱՆ Գ Մ ՄՈՒՂՆԵՑՅԱՆ
Ս Մ ՄՈՒՐԱԴՅԱՆ Գ Հ ՉԹՉՅԱՆ Վ Հ ՊԵՏՐՈՍՅԱՆ Է Մ ԶՐԲԱՇՅԱՆ
Գ Խ ՍԱՐԳՍՅԱՆ Հ Ռ ՍԻՄՈՆՅԱՆ Լ Հ ՎԱԼԵՍՅԱՆ Վ Ա ՏՈՒՐՅԱՆ

ՀԱՅՎԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1984

Թարգմանություն ռուսերենից
լրացումներով

Ի 611 Ինչ է Ով է: [Հանրագիտարան 4 հատորով] Կրտսեր տարիքի
դպրոցականների համար Թարգմ. ռուս. լրաց խմբ կոլեգիա
Մ. Վ. Արզումանյան (գլխ խմբագիր) և ուրիշներ
Հ 1 — Եր.: Հայկ. սոցստ հանրագիտ գլխ խմբ 1984
Հ 1 Ա—Դ 1984 368 էջ նկ

Ի 5000000000 016 Բաժան հրտ
005(01)-84

© Издательство «Педагогика», 1975—1978

© Հայկական սովետական հանրագիտարանի
գլխավոր խմբագրություն 1984

ՄԵՐ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Ձեր առջև է գեղազարդ մի գիրք «ԻՆՉ Է ՈՎ Է» անսովոր վերնագրով

Հավանաբար կարծում եք, թե սա սովորական ընթերցանության այն գրքերից է որ դուք կարդում եք էջ առ էջ հերթով առաջ չանցնելով ու չթռչելով էջերի վրայով Բայց ոչ որքան որ անսովոր է գրքի վերնագիրը, նույնքան էլ առայժմ ձեզ համար անսովոր է ինքը գիրքը Եվ ահա թե ինչու

Հապա ուշադիր նայեցեք ձեր շուրջը. Որքան հետաքրքիր բաներ կան այնպես չէ Պատուհանից երևում են երկինքն ու գետինը. Հեռվում ձգվում են լեռկ կամ անտառապատ լեռները Կանաչին են տալիս մարգագետիններն ու դաշտերը Ահա այնտեղ տուն են կառուցում ճանապարհ գցում: Քայլում են մարդիկ Սարի կատարին թառել է մենավոր մի վանք Պատից կախված է հրաշալի մի նկար Խշշում են ծառերը Փողոցի ծայրին վեր է խոյանում հոյակերտ մի կոթող Բարձր երկնքում սլանում է արբանյակը Թևածում են թռչունները Անձրև է տեղում ապա երփներանգ գույներով շողում է ծիածանը Ահա որսորդները գտել են գազանի հետքը: Ձեր կողքին թկթկում է ժամացույցը Բաբախում է ձեր սիրտը: Անցնում են ռադիոյի անտեսանելի ալիքները Իսկ գիշերը երկրի վրա կախվում է Լուսնի մահիկը

Ամեն ինչի մասին ուզում եք իմանալ չէ Եվ ձեր գլխում միանգամից ծագում են բազմաթիվ հարցեր Ինչ, ո՞վ, որտեղ որտեղից ո՞ր երբ ինչպե՞ս ինչո՞ւ Ահա ձեր այդ հարցերին էլ պատասխանելու է կոչված «ԻՆՉ Է ՈՎ Է» գիրքը ավելի շուտ գրքերը որովհետև լինելու է այդպիսի չորս գիրք չորս հատոր

Ամենևին էլ պարտադիր չէ, որ այդ հատորները դուք կարդաք էջ էջի ետևից սկզբից մինչև վերջ Կարող է պատահել, որ սկզբում անհրաժեշտություն ունենաք կարդալու երկրորդ հատորի ամենավերջում գետեղված մի գրույց ապա անցնեք չորրորդ հատորի սկզբին հետո էլ ձեզ հետաքրքրող գրույցը փնտրեք ու գտնեք առաջին հատորի մեջտեղում: Կարելի է նաև բացել որևէ հատորի ցանկացած էջ դիտել նկարները, ընթերցել մեկ երկու գրույց Դա կախված է նրանից թե տվյալ պահին ինչ հարց է հետաքրքրում ձեզ

Ստացվեց ուրեմն որ «ԻՆՉ Է ՈՎ Է» ն յուրատեսակ հանրագիտարան է ձեր առաջին հանրագիտարանը ավելի ճիշտ մանկագիտարանը գիտելիքների մի շտեմարան

Աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչ չէ, անշուշտ, որ հնարավոր է իմանալ Դուք դեռ կմեծանաք կշարունակեք սովորել, բազմաթիվ լավ գրքեր կկարդաք կծանոթանաք ու կսիրեք երաժշտական շատ ստեղծագործություններ, կդիտեք կինոֆիլմեր ու հեռուստահաղորդումներ Աստիճանաբար դուք բազմազան գիտելիքներ ձեռք կբերեք և կկարողանաք շատ հարցերի էլ ինքներդ պատասխանել: Բայց առայժմ ձեզ համար օգտակար կլինի հազար ու մի կարևոր հարցի պատասխան իմանալ մեր չորս գրքերից, ինչպես մեծահասակները իրենց հանրագիտարաններից, հասկանալ այն հազար ու մի բառերի նշանակությունն ու իմաստը, որոնց դուք հանդիպում եք տանը, փողոցում դպրոցում գրքերում Բառեր էլ կան որ ձեզ առհասարակ ծանոթ չեն, որոնք, սակայն, նույնպես շատ կարևոր են և ամեն մի կրթված մարդ պետք է իմանա դրանք Ձանացեք հիշել այդ բառերը

«ԻՆՉ Է ՈՎ Է» ն հայերեն թարգմանությունն է կրտսեր տարիքի դպրոցականների համար նախատեսված «ЧТО ТАКОЕ КТО ТАКОЖЬ» հանրագիտարանի որը 1975—1978 թվականներին լույս է ընծայել «Պեդագոգիկա» հրատարակչությունը Մոսկվայում Ի դեպ ռուսերեն հրատարակության առաջաբանը գրել է ձեր սիրելի գրողներից մեկը Լև Կասիլը և այդ առաջաբանի բուն էությունն ու հիմնական մտքերն արտահայտված են ձեզ ուղղված այս խոսքում «ԻՆՉ Է. ՈՎ Է»-ն սակայն հիշյալ հրատարակության զուտ թարգմանությունը չէ միայն: Այստեղ ընդգրկված է բավականին լայնածավալ հայկական նյութ ինչպես առանձին գրույցների, այնպես էլ արդեն եղած գրույցների լրացումների ձևով համապատասխան պատկերազարդումով: Արվել են նաև գիտության, տեխնիկայի և մշակույթի արդի պահանջներից բխող մի շարք փոփոխություններ և ճշգրտումներ Այս պատճառներով է ահա որ հայերեն հրատարակությունը ձեզ ներկայացվում է չորս հատորով

«ԻՆՉ Է ՈՎ Է» ն ընդհանուր բնույթի հանրագիտական հրատարակություն է, այսինքն ընդգրկված գրույցները վերաբերում են մարդկության ողջ պատմությանը սկզբից մինչև մեր օրերը, գիտության ու մշակույթի բոլոր բնագավառներին Հատորներում դուք բազմաթիվ գրույցներ կգտնեք Սովետական Միության կոմունիստական կուսակցության մասին Ջրույցներ կան Սովետական Հայաստանի, նրա բնաշխարհի, ծաղկող քաղաքների, հայ ժողովրդի դարավոր անցյալի, նրա մաքառումների ու հերոսապատումների, կարևոր իրադարձությունների, գիտության մշակույթի, գրականության հայ ականավոր դեմքերի հայ հեղափոխական գործիչների, մեր հանրապետության խոշոր նվաճումների, աշխարհով մեկ սփռված հայ գաղթավայրերի մասին Դուք կիմանաք օրինակ, թե ինչպես իր դարավոր պատմության ընթացքում ավերածություններ ու կոտորածներ տեսած, կործանման եզրին կանգնած հայ ժողովուրդը սովետական իշխանության շնորհիվ մոխիրներից հառնեց ինչպես հեքիաթային փյունիկ թռչուն ապրեց աննախընթաց վերելք և այսօր Սովետական Միության եղբայրական ժողովուրդների համերաշխ ընտանիքում կերտում է իր լուսավոր ու երջանիկ կյանքը

Հատորներում գրույցները դասավորված են այբբենական կարգով Ա-ից մինչև Տ Թե որ հատորում գտնեք ձեզ հետաքրքրող գրույցը, կօգնեն յուրաքանչյուր գրքի կազմին նշված տառերը Առաջին հատորում, օրինակ զետեղված են Ա—Դ տառերով սկսվող գրույցները Այս կարգը ձեզ կօգնի հեշտությամբ գտնելու հարկավոր բառը աստիճանաբար կսովորեք նաև օգտվել զանազան բառարաններից ու հանրագիտարաններից

Ենթադրենք դուք ուզում եք իմանալ թե ով է Գայը. Գրքի առաջին երկու պատկերազարդ էջերում նշված է թե որ էջում են Գ տառով սկսվող գրույցները Բացեք այդ էջը՝ Գտնք «Գայի» էջը Հիմա բացեք այն Ահա և գրույցը. Նրանից դուք կիմանաք որ Գայը հայ ականավոր գորավար էր հեղափոխության գործին զինվորագրված մարտիկ. Նրա «երկաթյա դիվիզիան» էր, որ 1918 թ ազատագրեց սովետական պետության հիմնադիր Վ Ի Լենինի ծննդավայր Սիմբիրսկ (այժմ Ուլյանովսկ) քաղաքը, դրանով սպեղանի դնելով մեծ առաջնորդի վերջին Նույն կերպ դուք կարող եք գտնել նաև «Աբովյան Խ» «Անի» «Աճառյան Հ» «Ասեղնագործություն» «Աստղա գիտություն» «Ավտոմոբիլ» «Բակունց Ա.», «Բաքվի 26 կոմիսարներ», «Գագարին Յու Ա», «Գառնի» «Գոգոլ Ն Վ.» «Դավիթ Բեկ» «Դելֆին» «Դոն Կիխոտ» և շատ ու շատ այլ գրույցներ

Մի փոքրիկ գրույցում, իհարկե հնարավոր չէ պատմել այն ամենը, ինչ հայտնի է տվյալ մարդու իրադարձության երևույթի կամ առարկայի մասին. Զրույցը կարդալուց հետո ձեր մեջ ծագած հարցերն ուղղեք նախ ավագ եղբորը կամ քրոջը, մայրիկին կամ հայրիկին Ավելին իմանալու ցանկության դեպքում դիմեցեք գրքերի օգնությանը:


Զրույցները կարդալու ընթացքում դուք կնկատեք որ որոշ բառեր տպագրված են թեք տառերով *շեղատառ*: Դա նշանակում է, որ այդ հասկացության մասին կա առանձին գրույց և այն որոշ չափով լրացնում է ձեր ընթերցած գրույցը: Հասկանալի է որ շեղատառով նշված գրույցը կարող է գետեղված լինել ոչ անպայման նույն հատորում Եթե դուք լավ գիտեք այբուբենը ապա գրույցը հեշտությամբ կգտնեք հատորներից ոռևէ մեկում

Անհրաժեշտ է իմանալ նաև հետևյալը Բոլոր հատորներում դուք կհանդիպեք կրճատ բառերի Այդ կրճատումները համընդհանուր են և ընդունված բոլոր բառարաններում, տեղեկատուներում, հանրագիտարաններում Հիշեցեք այդ կրճատումները թ թվական, կմ՝ կիլոմետր մ մետր, սմ սանտիմետր, մմ միլիմետր, քառ մ քառակուսի մետր, կգ կիլոգրամ, գ գրամ մլն միլիոն հզ հազար

Ահա և իմացաք թե ինչ գիրք է հիմա ձեր առջև և ինչպես պետք է օգտվեք նրանից, բոլոր չորս հատորներից Թող ձեր միտքը թևեր առած սավառնի գիտելիքների խորհրդավոր ու անեզր աշխարհում և օգնի ձեզ գտնելու գանձերի գանձը իմացությունը: Զուր չէ որ հայ գրերի գյուտից հետո հայերեն գրված առաջին նախադասությունն էր «Ճանաչել զիմաստություն և գխրատ իմանալ զբանս հանճարոյ» այսինքն՝ «Ճանաչիր իմաստությունն ու խրատը հասկացիր հանճարի խոսքը»:




U 52 11




P 52 12




9 52 273



7 52 328



ᐱᓂᓂᓂ · ᐱᓂᓂᓂ



w

14	Աբովյան Խ. Ա.	44	Ածխածին
15	Ագռավ և արջնագռավ	45	Ակրոբատ
16	Ագրոնոմ	45	Ակրոպոլիս
17	Ադամյան Հ. Ա.	46	Աղ
18	Ադամյան Պ. Հ.	47	Աղայան Ղ. Ս.
19	Ադրբեջան	48	Աղավնի
21	Ազգանուն	49	Աղվես
22	Ազնիվ մետաղներ	50	Աճառյան Հ. Հ.
24	Ազոտ	51	Ամբարձիչ կռունկ
25	Աթարբեկյան Գ. Ա.	53	Ամերիկա
26	Ալավերդյան Ս. Կ.	59	Ամերիկայի Միացյալ
27	Ալբանիա		Նահանգներ
29	Ալեքսանդր Մակեդոնացի	62	Ամպրոպ
		64	Ամունդսեն Ռուալ
30	Ալեքսանդր Նևսկի	65	Այծ
32	Ալժիր	65	Այծկիրթ
34	Ալիխանյաններ	66	Այծյամ
36	Ալիշան Ղևոնդ	67	Այծքաղ
36	Ալիքներ	68	Այսբերգ
38	«Ալմաստե գահ»	68	Այվազովսկի Հ. Կ.
38	Ալյումին	71	Անագ
39	Ալոճենի	72	Անահիտ
39	Ալպինիզմ	72	Անանիա Շիրակացի
43	Ալքիմիկոսներ	74	Անանյան Վ. Ս.
43	Ածխաթթվական գազ	74	Անապատ

78	Անասնաբույժ	101	Աշորա
78	Անասնապահական ֆերմա	102	Ապագայի քաղաք
79	Անգետիկ	103	Ապակի
80	Անգլիա	104	Ապարներ
80	Անգղ	107	Առած և ասացվածք
81	Անդերսեն Հանս Քրիստիան	108	Առակ
82	Անդորրա	108	Առասպել
82	Անի	111	Առյուծ
84	Անկշռություն	112	Ասեղնագործություն
85	Անձրև	113	Ասիա
85	Անձրևարար սարք	119	Ասմունք
86	Անվերջություն	120	Աստիճանացանց
87	Անտառ	121	Աստղագիտություն
90	Անտառապետ	122	Աստղադիտակ
90	Անտարկտիդա	124	Աստղադիտարան
94	Անուն	125	Աստղեր
95	Աշխատանք	125	Աստղիկ
96	Աշխարհամասեր և մայր ցամաքներ	126	Ավանեսով Վ. Ա.
98	Աշխարհի ժողովուրդներ	127	Ավետիսյան Ա. Մ.
99	«Աշխարհի յոթ հրաշալիքները»	128	Ավետիսյան Հ. Մ.
		129	Ավիացիա
		131	Ավիցեննա
		132	Ավստրալիա
		137	Ավստրիա
		139	Ավտոմատ

140	Ավտոմոբիլ	174	«Արշակ և Շապուհ»
143	Ատլանտիդա	175	Արջ
145	Ատոմ	176	Արսենև Վ. Կ.
146	«Արա Գեղեցիկ և Շամիրամ»	177	Արտեկ
147	Արագած	178	Արտիստ
148	Արագիլ	179	Արտույտ
149	Արագի Մ. Մ.	180	«Արփա-Սևան»
149	Արարատ	181	Արքիմեդ
149	Արարատյան դաշտ	181	Աքվարիում
151	Արաքս	185	Աֆանասի Նիկիտին
152	Արբանյակ	187	Աֆղանստան
154	Արգելանոց	188	Աֆրիկա
159	Արգենտինա		
161	Արեգակ		
163	Արեգակնային համակարգ		
165	Արևադարձային անտառ		
166	Արևածաղիկ		
166	Արիստոտել		
167	Արծիվ		
168	Արկտիկա		
171	Արմավենի		
173	Արյուն		


Չեզ եմ ասում ձեզ հայոց
նորահաս երիտասարդք ձեր
անումին մեռնիմ ձեր արևին
ղուրբան տասը լեզու սովորե
ցեք, ձեր լեզուն, ձեր հավատը
ղայիմ բռնեցեք:

Աբովյան Խաչատուր Ավետիքի

1809—
1848

1829 թ լուր տարածվեց, որ *Էջմիածին* է ժամանել Դորպատի (այժմ՝ Էստոնական ՍՍՀ ի Տարտու քաղաք) համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը *Մասիս* (Արարատ) լեռը բարձրանալու նպատակով:

Եփրեմ կաթողիկոսն իր քարտուղար և թարգմանիչ Աբովյանին հանձնարարում է ուղեկցել Պարրոտի արշավախմբին Եվ արշավախումբը նույն տարվա սեպտեմբերի 27 ին բարձրանում է Մեծ Մասիսի գագաթը



Արարատ «սրբազան լեռան» գագաթը բարձրանալը հոգևորականությունը համարում էր սրբապղծություն, և սկսվում է հալածանք Աբովյանի դեմ: Դա կարող էր ծանր հետևանքներ ունենալ, եթե

Դեռ Էջմիածնում Պարրոտը որ տպավորված էր քսանամյա Աբովյանի ուշիմությամբ ընդունակություններով և ուսումը շարունակելու երազանքով նրան խոս

տացել էր ամեն կերպ աջակցել այդ գործում Եվ ահա 1830 թ Աբովյանը մեկնում է Դորպատի համալսարանում ուսանելու, ուր նրա համար նշանակված էր պետական կրթաթոշակ: Նա այստեղ սովորում է մի շարք լեզուներ (գերմաներեն ֆրանսերեն անգլերեն լատիներեն) բնական և հասարակական գիտություններ երաժշտություն արհեստներ:

Վերադառնալով հայրենիք նշանակվում է նախ Թիֆլիսի (Թբիլիսիի), ապա Երևանի գավառական դպրոցի տեսուչ, ուր պաշտոնավարում է մինչև իր կյանքի վերջը

Աբովյանը հայ առաջին լուսավորիչ դեմոկրատն է մեծ մանկավարժ, հայ նոր գրականության հիմնադիրը. նա գրել է չափածո և արձակ գործեր («Պարապկախտի խաղալիք», «Թուրքի աղջիկը», «Ֆեոդորա կամ որդիական սերը»), զանազան ուսումնասիրություններ, դպրոցական ձեռնարկներ («Նախաշավիղ կըրթության»):

Աբովյանի գրական ժառանգության գլուխգործոցը «Վերք Հայաստանի, ողբ հայրենասերի» պատմավեպն է որի նյութը հայ ժողովրդի այն տարիների կյանքն է, երբ Հայաստանը պարսկական վայրագ բռնակալության լծի տակ էր, և որտեղ նկարագրված դեպքերն ու դեմքերը պատմական են: Առաջինն Աբովյանն էր որ վեպի ժանրով արտացոլեց 1826—1828 թվականների ռուս-պարսկական պատերազմը, Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանին, հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը:

«Վերքը» հայրենասիրական բոցաշունչ մի ստեղծագործություն է գրված կրակված սրտի տեր մարդու գրչով Այն նորություն էր հայ գրականության մեջ լեզվով ու ոճով կառուցվածքով, բնության տեսարանների նկարագրությամբ, հեղինակի խորհրդածություններով: Այս վեպով, գրված 1841 թ մի նոր փուլ բացվեց հայ գրականության մեջ:

Աբովյանը մտահոգված էր Հայաստանի տնտեսական կյանքի վերափոխումներով, համոզված, որ հայ ժողովրդի բարեկամությունը ռուս ժողովրդի հետ հայրենի երկրի բարգավաճման գրավականն է

1848 թ ապրիլի 2 ին, առավոտյան մի վաղ ժամի, Աբովյանը դուրս ելավ տնից ու այլևս չվերադարձավ: Մինչև հիմա պարզված չէ, թե ինչ եղավ նա Գաղտնի աքսորվել է արդյոք անձնասպան է եղել թե ուրիշներն են սպանել...

Ինչ էլ եղած լինի, սերունդների հիշողության մեջ Աբովյանն անմահացած է իբրև մեծ լուսավորիչ իբրև հայ նոր գրականության հիմնադիր և կրակոտ հայրենասեր: Նրա կյանքը, գործն ու կերպարը դարձել են հատուկ ուսումնասիրությունների և արվեստի ստեղծագործությունների թեմա

Հայ ժողովրդի համար Աբովյանի հիշատակը սուրբ է Նրա անունն են կրում Հայաստանի մի շրջան, քաղաք, փողոց և պուրակ երևանում, միջնակարգ և բարձրագույն կրթական հաստատություններ Նրա ծննդավայր Քանաքեռում, որն այժմ երևանի հյուսիսային թաղամասն է, կա տուն-թանգարան, նրա հուշարձանները կանգնեցված են հանրապետության շատ բնակավայրերում

Ագռավ և արջնագռավ

Ագռավն ու արջնագռավն իրար հետ չպետք է շփոթել: Չնայած նրանք ցեղակիցներ են, բայց հեշտությամբ զանազան վում են նույնիսկ արտաքինով: Արջնագռավը խոշոր թռչուն է: Նրա մարմնի երկա

րությունը մինչև 66 սմ է փետուրները խիտ են, փայլուն ու սև: Ագռավն ավելի փոքր է, և, որ գլխավորն է, նրանց մեծամասնությունն էլ սև չէ: Սև են ագռավների միայն գլուխը, թևերն ու պոչը, իսկ մարմինը ծխամոխրագույն է նրանց հենց այդպես էլ անվանում են մոխրագույն ագռավներ

Մոխրագույն ագռավներն ապրում են Հյուսիսային Եվրոպայում Սկանդինավիայում Հյուսիսային Ամերիկայում, մեզ մոտ՝ ՍՍՀՄ-ում, սկսած արևմտյան սահմաններից մինչև Ենիսեյ գետը, այդ թվում նաև մեր հանրապետությունում՝ Սովետական Հայաստանում: Իսկ Ենիսեյից այն կողմ սև ագռավների «տիրույթներն» են նրանք ապրում են ամբողջ Ասիայում և Եվրոպայի հարավ արևմուտքում: Մոխրագույն և սև ագռավների «տիրույթների» սահմաններին միաժամանակ հանդիպում են երկուսն էլ և դեռ խառնածիններ էլ

Իրենց ավելի խոշոր ազգակցից արջնագռավից, ագռավները վախենում են և նրա վրա հարձակվում են ամբողջ երամուկ

Արջնագռավն ամենակեր է, ուտում է մրգեր հացահատիկ, ամեն տեսակ կանաչեղեն ավերում նաև բներ գողանալով նույնիսկ խոշոր որորների ձվերն ու ձա

գերին Ոչնչացնում է փոքրիկ նապաստակներին և որոշ կրծողների, չի խորշում նաև լեշից Ունի սուր լսողություն և տեսողություն: Կարողանում է ապրել թե՛ հյուսիսում ու արևադարձային գոտիներում և թե՛ անապատներում ու ավելի քան 4 հզ մ բարձրությամբ խստաշունչ լեռներում

Արաբներն այդ թռչնին անմահ էին համարում: Առհասարակ, հնում կարծում էին թե՛ արջնագռավը երեք հարյուր տարի է ապրում Իրականում նրա կյանքը տևում է 70 75 տարի: Ողջ կյանքում արջնագռավներն ապրում են համերաշխ զույգերով և միևնույն տեղում: Միայն թե՛ հաճախակի նոր բույն են հյուսում հնի մոտակայքում: Այդ կերպ նրանք ազատվում են տարբեր մակաբույծներից, որ բազմանում են նրանց փափուկ ու տաք բներում:

Արջնագռավները շատ զգուշավոր են և հեռու են մնում մարդկանցից Մինչդեռ ագռավները մարդուց չեն վախենում: Չըմռանը նրանք երամ երամ հավաքվում են նույնիսկ մեծ քաղաքների կենտրոններում: Ամեն առավոտ թռչում են դեպի քաղաք մերձ դաշտերն ու աղբակույտերը, իսկ երեկոյան, միշտ միևնույն ժամին, վերադառնում քաղաք գիշերելու: Մեծ երամներն իրենց սովորական երթուղով թռչում են բարձր կոնչալով, բայց գետնին նստում են անձայն ու անաղմուկ: Ագռավները բնադրում են առանձին զույգերով անտառների փեշին և, նույնիսկ, քաղաքներում:

Տարվա բոլոր պահերին մենք ագռավներ ենք տեսնում բայց դրանք միևնույն ագռավները չեն: Երբ նրանց սկսեցին օղակ հագցնել, պարզվեց, որ լենինգրադյան ագռավները ձմեռում են Փարիզի մոտ, իսկ Լենինգրադի մոտերքում Մուրմանսկի կողմերից չվածները: Մոսկվայի մոտերքում հյուրընկալվում են Արխանգելսկի կողմերից եկածները, իսկ մոսկովյանները Կիևի և Խարկովի մերձակայքում: Գարնանը նրանք վերադառնում են հարազատ վայրերը և նորոգում հին բները

Այդ բներն այնքան էլ կոկիկ տեսք չունեն պարզապես ճյուղերի և շյուղերի կույտեր են նման մաշված լայնեզր գլխարկների: Բայց ներսից դրանք պատված են փափուկ աղվամազով, երբեմն էլ լաթի ու պորոլոնի ծվեններով ագռավը վաղուց է հարևանի պես օգտվում «մարդկային» նյութերից: Սակայն միշտ չէ որ այդ հարևանությունը դուր է գալիս մարդուն Օրինակ որսորդական տնտեսություններում ագռավները երբեմն ոչնչացնում են



Ագռավ



Արջնագռավ

բաղի ձվերը Սպասում է ագռավն այնքան մինչև բաղը հեռանում է բնից, ապա թռցնում է ձուն, մի հարմար տեղ ջարդում ու խմում Դրա համար էլ այդ վայրերում ագռավների վրա կրակում սպանում են Սակայն հեշտ գործ չէ ագռավ խփելը, որովհետև նրանք հիանալի զանազանում են հրացանավոր մարդուն և խուսափում նրանից: Բայց ագռավների խորամանկության դեմ մարդիկ էլ ունեն իրենցը տընտեսության որսորդը բաղերի բների մոտ եղեգներից, կախում է արծաթափայլ փայլաթիթեղի կտորտանք և վրան սպիտակ թել փաթաթում Ջգուշավոր ագռավները երկնչում են այդպիսի անծանոթ խրտվիլակներից

Ե վ արջնագռավներին, և ագռավներին կարելի է խոսել սովորեցնել Դա անշուշտ, ոչ թե իմաստավորված խոսք է այլ նմանակում: Նրանք շատ լավ կարողանում են «օտարներից» զանազանել «իրենց» մարդկանց ու կենդանիներին Այս թռչունները շատ են սիրում նաև փայլուն իրեր գողանալ

Արջնագռավն իսկական սանիտար է որսում է կրծողների, ոչնչացնում լեշն ու հիվանդ սատկող կենդանիներին Ցա վոք, նա հազվագյուտ թռչուն է դարձել Եվրոպայի շատ վայրերում արջնագռավը լրիվ ոչնչացվել է: Այժմ նա պահպանության տակ է առնված

Ագրոնոմ

Ցորենի ոսկեգույն հատիկներ: Կաղամբի անբարետես մուգ ուլունքների նման վող սերմեր Սպիտակ, ասես, լաքապատ բրինձ. Եվ յուրաքանչյուրի մեջ նիրհած կյանք: Ի՞նչ է պետք, որ այն արթնանա: Որտեղ, ինչպիսի հողի մեջ պետք է ցանել սերմերը, ինչպես հետո խնամել դրանք Եվ, վերջապես, քննչ է ստացվելու ամեն մի սերմնահատիկից փարթամ հասկի է վերածվելու արդյոք, ծաղկելու է կապույտ տերեփուկի պես, թե ամենևին չի ծլարձակվելու

Այս բոլոր հարցերին էլ հենց պատասխանում է ագրոնոմը՝ երկրագործության մասին գիտության ագրոնոմիայի, ներկայացուցիչը

Ագրոնոմիան շատ ընդարձակ և կարեվոր գիտություն է Այն ուսումնասիրում է երկրագործության, բույսերի աճեցման

հետ կապված տառաջհորեն ամեն բան գյուղատնտեսական մեքենաները, հողի հատկությունները, բույսերն ու նրանց առանձնահատկությունները և այն ամենը, ինչ կարող է որևէ կերպ ազդել բույսերի վրա եղանակը վնասատուներն ու հիվանդությունները, պարարտանյութերն ու գյուղատնտեսության մեջ օգտագործվող քիմիական այլ նյութեր

Ագրոնոմիան մեզ համար կարևոր է որովհետև այսօր արդեն անհնար է գյուղատնտեսական աշխատանքները կատարել առանց հողի և բույսերի մասին գիտության, առանց այն գիտելիքների, որ կուտակել են մարդկանց շատ սերունդներ Այդ գիտելիքներին տիրապետում է ագրոնոմը. Այդ պատճառով էլ ոչ մի կուտնտեսություն կամ սովետական տնտեսություն առանց նրա դաշտում չի կատարում գյուղատնտեսական որևէ աշխատանք: Բայց չէ որ դաշտերում ամենից առաջ մարդիկ են աշխատում ուրեմն ագրոնոմը պետք է կարողանա նաև ճիշտ կազմակերպել նրանց աշխատանքը: Տեսնում եք, թե որքան գործ ունի անելու ագրոնոմը նրա աշխատանքային տեղն էլ շատ ընդարձակ է կուտնտեսային դաշտերը: Մեկում այսօր ավարտում են հացահատիկի բերքահավաքը մյուսում արդեն վարում են, երրորդում ցանում են, չորրորդում... Բոլորն ինչպես թվարկես: Եվ ագրոնոմը ամեն տեղ պետք է հասնի հուշելու ստուգելու օգնելու, որ ամենուր աշխատանքը «գերազանցի» կատարվի թե չէ մեկ էլ տեսար այնտեղ ուր հացահատիկ են հավաքում դաշտում մնացին չկալսված հասկեր, կամ ինչպես պետքըն է չեն հերկի, և ձմռան քամին դաշտից կքշի կտանի ձյունը մինչև գարուն հողում խոնավություն չի կուտակվի Երեսանց կցանեն աշնանացան սերմը, և այն ցրտին չի դիմանա ու կոչնչանա, կարտոֆիլի բուկլիցը լավ չեն անի ժամանակից շուտ կընդհատվի նրա աճը ցածր բերք կտա

«Ինչպես» հարցին չէ միայն որ պատասխանում է ագրոնոմը նա է որոշում թե ինչպիսի բույս ցանել, որ սորտը և ինչ եղանակով նա լավ գիտե թե որ դաշտին ինչ պարարտանյութ է պետք: Մի խոսքով, ագրոնոմը շատ ու շատ հոգսեր ունի, մի ամբողջ տարվա Բայց, փոխարենը, երբ կուտնտեսությունից քաղաք են մեկնում հացահատիկով, կարտոֆիլով, կաղամբով բեռնավորված մեքենաները, ագրոնոմը հպարտությամբ է նայում նրանց ետևից նա գիտե, որ նոր հարուստ բերքի մեջ կան նաև իր աշխատանքը:

Ադամյան Հովհաննես Աբգարի

1879—
1932

Դաշնակահարուհու նուրբ մատները վարժ շարժումով հպվում են ստեղներին և սենյակն աստիճանաբար լցվում է հնչյուններով: Փոքրիկ Հովհաննեսն ուշադիր հետևում է սև ու սպիտակ ստեղներով սահող մատներին երաժշտության իր ուսուցչուհու նվագը չէ միայն որ գրավել է նրան



Նա ձգտում է նաև հասկանալ թե մատների շարժումը սև ու սպիտակ փայտիկների վրայով ինչպես է վերածվում երաժշտության: Ինչպես է կառուցված այդ սև արկղը ստեղներին իջնող հարվածներն ինչպես են վերածվում հնչյունների: Եվ երաժշտության դասերից հետո փոքրիկ Հովհաննեսը բացում է դաշնամուրի կափարիչը ու շաղիր գննում երաժշտական գործիքի մեջ ձգված լարերը, հարվածող մուրճիկները փորձում հասկանալ դրանք շարժման մեջ դնող մեխանիզմի աշխատանքը

Այսպես դեռ աշակերտական նստարանից Հովհաննեսի մեջ ծնունդ է առնում պրպտելու և ուսումնասիրելու ձգտումը Դպրոցական պարապմունքներից ու երաժշտության դասերից ազատ ժամերին նա տանը փորձեր է անում իր պատրաստած գործիքներով

Պրպտելու և հայտնագործելու ձգտումն ավելի է ուժեղանում Մյունխենի Ցյուրիխի և Բեռլինի համալսարաններում ուր Ադամյանն ուսանելու էր մեկնել իր ծնընդավայր Բաքվից՝ Որոշ ժամանակ լինում

է նաև Փարիզում և դասախոսություններ լսում Սորբոնի համալսարանում:

Ադամյանն օժտված էր արտակարգ ընդունակություններով և տիրապետում էր եվրոպական մի քանի լեզուների: Ուսումնավարտելուց հետո նա սերտ կապեր է հաստատում եվրոպական մի շարք երկրների գիտական ու բարձրագույն ուսումնական հաստատությունների և նշանավոր գիտնականների հետ: Հայ մեծանուն վիպասան Շիրվանզադեն իր հուշերում նկարագրել է թե երիտասարդ Ադամյանի ընդունակությունների և գյուտարարական ձիրքի մասին ինչպիսի բարձր կարծիք է հայտնել ֆրանսիացի նշանավոր ֆիզիկոս և ֆիզիոլոգ դ. Արսոնվալը

1913 թ վերջերին Գերմանիայից ուր կատարել էր մի շարք գյուտեր Ադամյանը տեղափոխվում է Ռուսաստան և մշտական բնակություն հաստատում Պետերբուրգում Այստեղ ինչպես և Գերմանիայում, գյուտարարը սեփական միջոցներով ստեղծում է լաբորատորիա և շարունակում գիտական փորձերը:

Սակայն Ադամյանի գիտական բուռն գործունեությունն սկսվում է սովետական կարգերի հաստատումից հետո գյուտարարը հնարավորություն է ստանում ազատորեն իրագործելու իր մտահղացումները ստեղծելու և փորձարկելու նոր սարքեր

Բազմաթիվ գյուտերի հեղինակ է հայ ինժեներ Հովհաննես Ադամյանը: Նա եղել է գունավոր հեռուստատեսության և լուսահեռագրության առաջին գյուտարարը (տեխնիկայի այս բնագավառների մասին դուրե կարող եք կարդալ «Հեռուստացույց» և «Հեռագրություն» գրույցներում) Ադամյանի առաջարկած եռագույն հեռուստատեսությունն առաջին անգամ կիրառվել է Լոնդոնում 1928 թ

Տեխնիկական գիտություններին զուգընթաց Ադամյանն ուսումնասիրել է նաև գեղագիտություն ու ճարտարապետություն, սիրում էր երաժշտություն այս բնագավառի իր խոր իմացությամբ նա կարող էր բանավիճել ճանաչված երաժշտագետների հետ Ադամյանը կրթոտ շախմատիստ էր նրա մշտական խաղընկերներն էին Լենինգրադում հայտնի շախմատիստները, իսկ Փարիզում եղած ժամանակ հանդիպում է ունեցել հռչակավոր շախմատիստ աշխարհի չեմպիոն Խոսե Ռաուլ Կապալանկայի հետ

Ադամյանը նաև սրամիտ ծաղրանկարիչ էր. Այսպիսի մի դեպք են պատմում Բեռլինում իր ընկերների Ավետիք Իսահակյանի

և բանասեր Գարեգին Լևոնյանի հետ մի սրճարանում նստած Ադամյանը սեղանի մարմարե տախտակին այնպիսի գեղեցիկ ու նուրբ մի պատկեր է նկարում որ հիացած սրճարանատերը այն պահպանելու համար ծածկում է ապակիով

Ադամյանի բնավորության հատկանշական գծերից էին կարեկցանքը դեպի մարդիկ և անխախտ լավատեսությունը նա ուժեղ կամքի տեր մարդ էր երբեք չէր ընկճվում և դժվարություններից չէր հուսալքվում

Ադամյանը մահացավ Լենինգրադում Երան թաղեցին տեղի հայկական գերեզմանատանը՝ 1970 թ աճյունը փոխադրվեց Երևանի քաղաքային պանթեոն

Հայ մեծ գյուտարար Հովհաննես Ադամյանի անունն է կրում Երևանի ռադիո էլեկտրակապի տեխնիկումը



տի Լեբմոնտովի «Դիմակահանդես»-ում Արբենինի և մի շարք այլ դերերով: Մոսկվայի և Պետերբուրգի մամուլը նրան համեմատել է աշխարհահռչակ ողբերգակների հետ և հավաստել, որ «Ադամյանը իր տաղանդի չափով այն արտիստներից է, որոնց նմանները նույնիսկ եվրոպայում էլ քիչ են»:

Հետո նա հյուրախաղերի է մեկնում Խարկով Կիև, Դոնի Ռոստով Մոզդոկ Օդեսա և ուրիշ քաղաքներ՝ միաժամանակ հարստացնելով իր խաղացանկը:

Ամենուրեք, ուր լինում է հայ արտիստը արժանանում է խանդավառ ընդունելության

Ադամյանով ոգևորված էր հատկապես ազատախոհ երիտասարդությունը: Ադամյանն իր լավատեսական արվեստով հատկապես շեքսպիրյան դերակատարումներով բեմից կոչ էր անում չհաշտվել մռայլ իրականության հետ և երիտասարդության սրտերում վառ էր պահում ազատասիրության կրակը:

Ռուսաստանով մեկ հռչակված Ադամյանը 1887 թ մեկնում է իր ծննդավայրը Կոստանդնուպոլիս: Շուրջ տասնամյա բացակայությունից հետո Ադամյանն իր հայրենակիցներին ներկայացավ իբրև մեծ համբավի տեր արվեստագետ: Սուլթանական Թուրքիայի գրաքննությունը նրան թույլ չտվեց հանդես գալու Համլետի և Լիր արքայի դերերով՝ այն ծիծաղելի պատճառաբանությամբ թե իրենց երկրում Սուլթան Համիդից բացի ուրիշ թագավոր չի կարող լինել, թեկուզ և բեմում: Եվ Ադամյանն իր մյուս դերերով (Օթելլո Ուրիել Ակոստա Կորրադո Քին) ցույց տվեց թե

Ադամյան Պետրոս Հերոնիմոսի

1849 —
1891

1866 թվականն էր Թուրքիայի հայաշատ մայրաքաղաք Կոստանդնուպոլսի «Արևելյան թատրոնը» ներկայացնում էր «Գուլիելմոս աշխարհակալ» թատերգությունը

Տասնվեց տարին նոր միայն բոլորած մի պատանի հուզված ետ ու առաջ էր անում կուլիսներում Իր մուտքին էր սպասում Թատրոնում նրա առաջին ելույթն էր դա — Մեռիբ, դավաճան

Դերն այս երկու բառից էր բաղկացած բայց արտասանվեց մի այնպիսի ձայնով այնպիսի հուզումնալի շեշտով որ հանդիսատեսը փշաքաղվեց Դերասաններն զգացին որ այդ պատանու մեջ կրակ կա թաքնված և մի օր պռոթակալու է: Չէին սխալվել: Տարիներ անց այդ պատանին դարձավ հայ բեմի հպարտությունը

Պետրոս Ադամյանն էր նա որ կարճ ժամանակից պոլսահայ թատերասեր հասարակայնության սիրելին էր արդեն:

1879 թ. Ադամյանը հրավիրվում է Թիֆլիս (Թբիլիսի) որտեղ խաղում է երեք տարի. Ադամյանի արտիստական արժանիքներն էին թովիչ ձայնը մշակված շարժումները հարուստ դիմախաղը բուռն խառնվածքը, մարմնավորված կերպարների ինքնատիպ մեկնաբանությունը 1883 թ հրավիրվում է Մոսկվա, 1884 թ Պետերբուրգ և մեծ հաջողությամբ հանդես գալիս Շեքսպիրի «Համլետ»-ում Համլետ

արվեստի ինչ բարձունքներ է նվաճել իր տաղանդը

Ադամյանը ծրագրել էր իր շեքսպիրյան դերակատարումներով շրջագայության մեկնել Կիեւնա Փարիզ Լոնդոն Եվրոպայի թատերասեր հասարակայնությանը ցույց տալու, թե հայ արվեստագետն ինչպես է ըմբռնում և մեկնաբանում շեքսպիրյան նշանավոր դերերը:

Սակայն ծրագրերը ծրագրեր էլ մնացին Լախո նյութական աջակցություն չգտավ հետո էլ օրեցօր վատանում էր առողջությունը: Թեև երիտասարդ՝ նա զգում էր որ ուժերը դավաճանում են իրեն, չունի առաջվա կրակն ու ավյունը Ամիսներով գամվեց անկողնին Ադամյանի հիվանդության լուրը հասավ Թիֆլիս որտեղ անմիջապես հանգանակությամբ դրամ հավաքվեց: Պետերբուրգում կազմակերպվեց Ադամյանին նվիրված երեկո հասույթը Պոլիս ուղարկելու համար Ոչինչ չօգնեց Անբուժելի հիվանդությամբ տառապող մեծ դերասանը վախճանվեց 42 տարեկան հասակում: Նրան թաղեցին Կոստանդնուպոլսի Շիշլիի գերեզմանատանը

Ադամյանը կատարել է շուրջ 300 դեր Նրա դերակատարումների գուլիսգործոցը Համլետն է որի դերը առաջին անգամ նա է խաղացել հայ թատրոնում: Նա վիրթյաբանի ազդեցություն է ունեցել հայ թատրոնի կյանքում: Ադամյանը նաև բանաստեղծ էր գեղանկարիչ

աշտարակների անտառ ծուռումուռ նեղ լիկ փողոցներ մռայլ տներ, բանվորների զորանոցատիպ կացարաններ կավաշեն տնակներ... Միայն քաղաքի կենտրոնում կային գեղեցիկ շենքեր

Սև Բաքուն այլևս չկա. Կանաչ այգիներ կապույտ ծով ու երկինք լուսավոր տներով նոր թաղամասեր ահա ժամանակակից Բաքուն, որն ունի մեկ միլիոնից ավելի բնակչություն Այսօր Բաքուն Ադրբեջանի արդյունաբերական գիտական և մշակութային ամենամեծ կենտրոնն է Այստեղ են գտնվում բազմաթիվ խոշոր գործարաններ հանրապետության գիտությունների ակադեմիան համալսարանը կոնսերվատորիան ինստիտուտներ թատրոններ և թանգարաններ

Բայց այսօր Ադրբեջանը հռչակված է ոչ միայն նավթով Հանրապետությունում արդյունահանում են գազ և երկաթի հանքաքար ձուլում պողպատ ստանում այլու մին պատրաստում խողովակներ, մեքենաներ և հաստոցներ արտադրում առանց քակալներ սինթետիկ կաուչուկ ավտոդոդեր պլաստմասսաներ հանքային պարտանյութեր: Հսկայական գործարանների շուրջը նոր քաղաքներ են աճել:

Ընդարձակ դաշտավայրը որով հոսում է Կուր գետը շրջապատված է Կովկասյան լեռներով: Փարթամ մարգագետիններում արածում են կոլտնտեսային ոչխարների ու այծերի հոտերը, կովերի գոմեշների ու զեբունների նախիրները Կուրի մեջ է թափվում նրա վտակ Արաքսը

Կուր-Արաքսյան դաշտավայրի կլիման շոգ է: Անձրևներն այստեղ հազվադեպ են ցանքսերին չի բավականացնում խոնավությունը Շատ ջանք է թափել ադրբեջանական ժողովուրդը, որպեսզի հագեցվի արևախանձ տափաստանների ծարավը

Հիմա երբ անցնում են դաշտավայրով, արևը կուրացնում է աչքերդ ցուլանալով ջրամբարների ու ոռոգիչ ջրանցքների հայելու մեջ: Եվ հողը ծաղկել է վառ գույներով ինչպես ադրբեջանական հանրապետությունը

հայտ գորգերը Ոռոգվող հողում լավ են աճում բամբակենին ցորենը եգիպտացորենը Շատ խաղող թեյ, ծխախոտ մանդարին է տալիս արևոտ այդ երկիրը Զարգացած է մետաքսագործությունը Իսկ որքան նուռ, սերկևիլ դեղձ թուզ սալոր են աճեցնում Ադրբեջանի այգեգործները:



Ադրբեջան


(Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն)



Մայրաքաղաքը Բաքու
Տարածությունը 86 600 քառ կմ
Բնակչությունը 6 400 000 մարդ

Դեպի Բաքու գնացող ջերմանավերի տախտակամածից գիշերը երևում են ծովի վրա սփռված կրակներ, ապա նավթային աշտարակներ արծաթափայլ հսկա պահեստարաններ ալիքներից վեր բարձրացող ցցագերաններին կառուցված երկհարկանի տներ: Նավթային քարեր ավանդ են հանում Կասպից ծովի հատակից

Ադրբեջանի գլխավոր նավթահանքերը գտնվում են Ապշերոնյան թերակղզում: Բաքվի շրջանում նավթ են հանում շատ վաղուց: Մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Բաքվի հյուսիս-արևելյան մասը կոչվում էր Սև քաղաք սև էին նավթով ներծծված հողը գործարանների ծխից ու մրից աղտոտված երկինքը Նավթային



Բաքու
քաղաքը

Բաքվից ոչ հեռու գտնվող մերկ տափաս տանում կոմերիտականները կառուցեցին մետալուրգների և քիմիագործների քաղա քը Սումգայիթը Սումգայիթի խողովակա գլոցման գործարանը խողովակներ է մա տակարարում ամբողջ Անդրկովկասի նավ թի ու գազի արդյունաբերությանը Քաղաք է դարձել Մինգեչաուր ձկնորսական ավա նը Նրանից ոչ հեռու բարձր ամբարտակը պատնեշել է Կուր գետը և առաջացել է Մինգեչաուրի ջրամբարը Այստեղից ջուրը հոսում է դեպի դաշտերը, պտտեցնում էլեկտրակայանի տուրբինները:

Նավթային
քարեր
ավանը

Քաղաք է դարձել նաև Դաշքեսան գյու ղը Այստեղ երկաթի հանքաքար են ար դյունահանում *Վրաստանի* Ադրբեջանի մետալուրգիական գործարանների համար

Տաղանդավոր է Ադրբեջանի ժողովուր դը Ադրբեջանցի կոմպոզիտորների ստեղ ծագործությունները հայտնի են հանրա պետության սահմաններից շատ հեռու Մեր երկրում և արտասահմանում լայնո րեն ճանաչված են հանրապետության բա նաստեղծների և գրողների գրքերը Ադըր բեջանի գիտնականներն իրենց ավանդն են մուծում սովետական գիտության մեջ



Ազգանուն

«Ազգանուն» ասելով մենք նկատի ունենք այն հատուկ անունը որ տրվում է ոչ թե անձնապես այսինչ մարդուն, այլ նրա ամբողջ տոհմին Այդ տոհմում ազգանունը փոխանցվում է սերնդեսերունդ, ծնողներից երեխաներին

Տոհմական այդ անունները այսինքն ազգանունները, սկզբնապես չկային: Ինչո՞ւ: Հնում մեծ քաղաքներ չկային: Մարդիկ ապրում էին փոքրիկ բնակավայրերում և բոլորը միմյանց ճանաչում էին: Ա՛յ այս տեղ ապրում է Առաքելը այնտեղ Մարտիրոսը, իսկ սա այրի Զառնիշանի տունն է Բավական է հիշես մարդու անունը և նրան այլևս չես շփոթի ուրիշ մեկի հետ Հազիվ թե մի փոքրիկ գյուղում կողք կողքի ապրեին հինգ Առաքել կամ չորս Զառնիշան Բայց դա էլ սարսափելի բան չէր լինի սա Ղազարոսի որդի Առաքելն է իսկ

սա Թովմասի Ծայրահեղ դեպքում միշտ էլ կարելի էր որևէ բնորոշ հատկանիշ գրտնել աչքը կույր Առաքելը կամ ձորատակի Զառնիշանը որ ձորի մոտ է ապրում: Հնում այդպես էլ առաջացել է մարդուն անունից բացի մականուն տալու սովորությունը

Գնալով մարդիկ շատացան: Առաջացան մեծ քաղաքներ Մարդիկ էլ սկսեցին ավելի հաճախ տեղից տեղ գնալ Միայն անունով կամ մականունով բավարարվելն արդեն հնարավոր չէր: Հենց այդ ժամանակ էլ ասպարեզ եկան ազգանունները Ակրճ բում ազգանուն կրում էին միայն ազնվական, հարուստ տոհմերի ներկայացուցիչները Մամիկոնյաններ Արծրունիներ Մեդիչիներ, Ռյուրիկովիչներ և այլն: Հետո ազգանունը դադարեց ազնվատոհմիկության հատկանիշ լինել

Պարզվեց որ շատ հարմար է երբ ամեն մեկն իր ազգանունն ունի

Բայց որտեղից գտնես այդքան շատ տարբեր ազգանուններ

Շատ հաճախ դրանք ծագում էին հոր անունից: Կար մի Պյոտր նա Իվանի որդին էր Այդպես էլ նրան կոչում էին Պյոտր Իվանով նրա եղբայրներին Դորբինյային և Պուտյատային նույնպես Իվանովներ Սրանց զավակներն արդեն Պետրովներ Դորբինիներ Պուտյատիներ էին Բայց պատահում էր և այնպես որ հայր Իվանն ավելի հայտնի էր լինում, քան ասենք, նրա որդի Պյոտրը, և դրա համար էլ Պյոտրի որդիները նույնպես կոչվում էին Իվանով

ներ. Հայրանունը վերածվում էր ազգանվան Շատ հաճախ ազգանուն էր դառնում նաև մոր անունը օրինակ, Եվդոկիմ Մարին (Մարիայի Եվդոկիմը) Ահա թե ինչու ռուսական այնքան շատ ազգանուններ ունեն «ով» կամ «ին» վերջավորությունները

Իմացանք ուրեմն, որ ազգանունները հիմնականում առաջացել են որևէ նախնու անունից որը տոհմում մեծ հեղինակություն է վայելել Այդ նախնու անվանը ավելացվել է պատկանելություն կամ ազգակցական կապ (որդի, դուստր) արտահայտող նախածանց կամ վերջածանց. օրինակ սլավոնների մոտ «իչ», «սկի», «ով» հայերի «յան», «յանց», «ենց», «ունի» հունների «իդես», պարսիկների «զադե» վրացիների «ձե», «շվիլի» և այլն

Ազգանունները երբեմն կազմվել են նաև գործունեությամբ աչքի ընկած կնոջ անունից (Մանանդյան Շուշանյան)



Ազնիվ մետաղներ

Եղել է և այնպես որ տոհմից մեկը համբավ է ձեռք բերել իր արհեստով լավ դարբին է եղել, աչքի ընկնող ոսկերիչ ժամագործ և այլն: Եվ ահա նրա շառավիղներն սկսել են կոչվել Դարբինյան Ոսկերչյան ժամագործյան:

Ազգանունների են փոխվել նաև շատ մականուններ (Կարճիկյան Չոլախյան) Ուկրաինացիները հաճախ հենց մականունը առանց որևէ փոփոխության, դարձրել են ազգանուն Շատ ազգանուններ էլ առաջացել են տեղանուններից: Դրանք ցույց են տալիս թե որտեղից ինչ վայրից է եկել այդ մարդկանց տոհմը (Բայբուրթյան Երևանցյան)

Միջնադարյան Հայաստանում նշանավոր ընտանիքների ազգանվանը ավելացվում էր «ազգ» երբեմն էլ «տուն» բառը «ազգն Մամիկոնյաց» «ազգն Ռշտունյաց», «տունն Արծրունյաց» և այլն երբեմն մարդկանց անվանը կցվում էր նրանց ծննդյան կամ գործելու հիմնական վայրի անունը որը և ազգանվան դեր էր կատարում (Մովսես Խորենացի Եզնիկ Կողբացի Գրիգոր Նարեկացի Լեոսես Լամբրոնացի Ղազար Փարպեցի Ոսկան Երևանցի և այլն)

Հայերի «ունի» վերջածանցով ազգանունները հնում հատուկ էին նախարարական տոհմերին (Ամատունի, Բագրատունի Ռշտունի Արծրունի)՝ «Ենց», «ունց», «ոնց» վերջածանցով ազգանունները տարածված են Զանգեզուրում օրինակ Բակունց Շարունց Ասունց Թոնունց Քոլունց

Հայերի համար ամենատարածվածը «յան» ով վերջացող ազգանուններն են Այդ «յան»-ը առաջացել է «յանց» ձևից որ նույնն է ինչ «ենց»-ը (Արամյանը նշանակել է «Արամենց» «Արամի տոհմին պատկանող»)

Շատ բազմազան են այդ տոհմական անունները ազգանունները: Նրանց մեջ հանդիպում են շատ տարօրինակ երբեմն արտառոց գվարձալի երբեմն նաև անվերծանելի անվանաձևեր: Մեծ մասի ծագումը սակայն հնարավոր է բացատրել: Դրանով զբաղվում են լեզվաբանները երբեմն ազգանուններում պահպանվում են այնպիսի հին բառաձևեր որոնց մասին մենք արդեն մոռացել ենք

Եթե այս գրույցը ձեզ հետաքրքրեց կարող եք հետազայում երբ մեծանաք զբաղվել անունների և ազգանունների վերաբերյալ գիտությամբ որը կոչվում է օնոմաստիկա կամ անվանագիտություն

Ծովի հատակին ընկած են խորտակված նավեր: Վաղճաց արդեն փտել են նրանց առագաստները, ջրիմուռներով ու խեցիներով են ծածկվել նավեզրերի մնացորդները ժանգոտվել երկաթե մասերը Բրոնզե թնդանոթները սևացել են ծովի աղի ջրից: Նավամբարներում մնացած ոսկե դրամներն են միայն, որ երկար տարիների ընթացքում գրեթե չեն փոփոխվել

Դեռևս հնագույն ժամանակներում մարդիկ նկատել են ոսկու և արծաթի բացառիկ հատկությունները Այս մետաղներն օդում չէին կորցնում իրենց փայլը ջրում չէին ժանգոտվում չէին լուծվում հիմքերի և թթուների խիտ լուծույթներում Եվ քանի որ տոկոսությունն ու հաստատակամությունը միշտ համարվել են ազնվության հատկանիշներ դրա համար էլ մարդիկ ոսկին ու արծաթն անվանել են ազնիվ մետաղներ: Բացի դրանից այդ մետաղները հազվադեպ էին հանդիպում Ուստի զարմանալի չէ որ գրեթե ամենուր մարդիկ սկսեցին իրերի արժեքը համեմատել ազնիվ մետաղների արժեքի հետ Որքան շատ ոսկի և արծաթ ուներ մարդը այնքան նա հարուստ էր անվանի և հզոր: Այդ պատճառով էլ շատ պատերազմներ և հանցագործություններ են տեղի ունեցել ոսկու և արծաթի համար:

Դեռևս 300 տարի առաջ Հարավային Ամերիկայի հանքերում իսպանացիները վրդովմունքով դեն էին նետում ծանր մետաղը, որը խանգարում էր լվանալու ոսկին: «Պլատին է» (իսպաներեն նշանակում է «արծաթիկ»): դժգոհելով ասում էին նրանք չկասկածելով անգամ որ այդ մետաղը հետագայում պետք է դառնա ոսկուց ավելի թանկ

Քիմիկոսներն սկսեցին ուսումնասիրել պլատինը և հայտնաբերեցին մի խումբ մետաղներ որոնք անվանեցին պլատինային մետաղներ: Դրանց թվում էր նաև երկրի վրա հանդիպող ամենածանր մետաղը օսմիումը որը 2 անգամ ծանր է կապարից և գրեթե 3 անգամ երկաթից

Ժամանակակից տեխնիկայում օգտագործվում են բոլոր ազնիվ մետաղները և ամենից առաջ պլատինը Նրանից պատրաստում են հատուկ քիմիական անոթներ պլատինե հալոցներ: Չէ որ մինչև սպիտակելու աստիճան շիկացած պլատին անգամ չի միանում օդի թթվածնի հետ և չի փոխում իր կշիռը: Պլատինի և իրի-


դիումի համաձուլվածքներից են պատրաստված կիլոգրամի ստուգանմուշները: Բոլոր երկրներում դրանցով են ստուգում կշեռքները Ռոդիումով որը ևս ազնիվ մետաղ է պատում են լուսարձակների հայելիները. այն փայլը չի կորցնում նույնիսկ բարձր ջերմաստիճաններում

Քիմիկոսները հայտնաբերել են ազնիվ մետաղների այլ կարևոր հատկանիշներ ևս: Որոշ ազնիվ մետաղների (հատկապես պլատինի և պալլադիումի) ներկայությամբ շատ քիմիական ռեակցիաների ընթացքն արագանում է տասնյակ և հարյուր հազար անգամ: Կիրառություն գտավ նաև արծաթը: Առանց նրա չէր լինի ոչ լուսանկարչությունը և ոչ էլ կինոն Հենց արծաթի մի քանի միացությունների լու

սազգայության շնորհիվ է որ լուսանկարչական ժապավենի վրա առաջանում է պատկերը.

Արծաթը հիանալի էլեկտրահաղորդիչ է ևրանից են պատրաստում էլեկտրոնային ռեչենների կոնտակտները իսկ ռադիոընդունիչների մասերն արծաթապատում են:

Փոխվել է նաև վերաբերմունքը ոսկու նկատմամբ Այժմ այն օգտագործվում է ոչ միայն ոսկերչական իրեր պատրաստելու նպատակով. էլեկտրավակուումային սարքերի կոնտակտներն անում են ոսկուց: Առանց ոսկու հնարավոր չէ պատրաստել տրանզիստորներ Պլատինի հետ համաձուլված ոսկին օգտագործում են ամենադիմացկուն քիմիական անոթներ պատրաստելու համար



Թութանհամոն փարավոնի ետմահու ոսկե դիմակը որն ավելի քան երկուս ու կես հազար տարվա հնություն ունի

Ազոտ

Մոտ 200 տարի առաջ գիտնականները հայտնաբերեցին որ մթնոլորտում պարունակվում է այնպիսի մի գազ որը պիտանի չէ շնչառության համար և չի նպաստում այրմանը: Պարզվեց նաև որ մթնոլորտը հիմնականում (4/5 մասով) կազմված է այդ գազից՝ Նոր հայտնաբերված գազն անվանեցին «ազոտ», որը հունարեն բառ է և նշանակում է «անկենդան» Սովորական լաբորատոր պայմաններում ազոտը «չէր ցանկանում» միանալ ուրիշ տարրերի հետ Սակայն շուտով հայտնի դարձավ որ բնության մեջ ազոտը հաճախ հանդիպում է ուրիշ տարրերի հետ միացություններ կազմած գոյացներով, օրինակ բորակ Սա մարդուն հայտնի էր վաղուց և օգտագործվում էր դաշտերը պարարտացնելու համար Այստեղից էլ առաջացել է ազոտի լատիներեն անվանումը «նիտրոգենիում», հայերեն բորակածին

Իսկ ինչպես է այնուամենայնիվ, մըթնոլորտային ազոտը միանում ուրիշ նյութերի հետ:

Նախ *ամպրոպների* ժամանակ: Կայծակը մի ակնթարթում այնպես է տաքացնում օդը որ այդ մասում ազոտի մոլեկուլներն անմիջապես սկսում են բուռն կերպով միանալ *թթվածնի*, *ջրածնի* և այլ տարրերի մոլեկուլներին Անձրևը լուծում է այդ միացությունները և նրանք անցնում են հողի մեջ:

Երկրորդ և սա բնության համար ամենազիջավոր ճանապարհն է հողում գտնվող որոշ բակտերիաներ ազոտ են «որսում»: Ի տարբերություն բույսերի և կենդանիների սրանք ազոտը կլանում են անմիջապես օդից և նրանց օրգանիզմում այն միանում է այլ նյութերի հետ Այս



նվթիս
տսծմ

ազոտային
միացություններ

ազոտային
միացություններ

Աթարբեկյան Գևորգ Ալեքսանդրի

1892—
1925

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո նրա թշնամիները զգալով որ բացառապես հայտ ճանապարհով չեն կարող վերստին ետ վերցնել իշխանությունը սկսեցին «գաղտնի պատերազմ» մղել նորաստեղծ սովետական պետության դեմ նրանք ամենուրեք մահափորձեր էին կատարում հեղափոխության ղեկավարների դեմ,

պես են ստեղծվում ազոտի պաշարները հողում:

Ազոտը մտնում է այն նյութերի բաղադրության մեջ որոնցից կազմված է սպիտակուցը Իսկ սպիտակուցներն ամբողջ կենդանի բնության հիմքն են: Ուրեմն, առանց ազոտի երկրի վրա կյանք չէր լինի:

Բույսերը հողից ստանում են ազոտային միացություններով հարուստ սննդանյութեր և նրանցից արևի լույսի օգնությամբ, կառուցում նոր բջիջներ:

Խոտակեր կենդանիներն իրենց կյանքի համար անհրաժեշտ ազոտն ստանում են խոտ ու տերև ուտելով, գիշատիչ կենդանիներն էլ որսում են խոտակերներին սնվում նրանց մսով և ազոտ ստանում այդ եղանակով

Ամեն անգամ, երբ կենդանին կամ բույսը մահանում է ազոտը դարձյալ վերադառնում է հող և ամեն ինչ սկսվում է նորից: Իսկ վառելանյութը, որ մարդիկ այրում են շարժիչներում և հնոցներում, իր մեջ պարունակող ազոտը վերադարձնում է արդեն ոչ թե հող այլ անմիջապես մթնոլորտ: Այսպես բնության մեջ տեղի է ունենում ազոտի անընդհատ շրջապտույտ

Ազոտի միացությունները մարդը օգտագործում է արհեստական մանրաթելեր, դեղորայք, պայթուցիկ նյութեր ներկեր և այլ նյութեր ստանալու համար

Ազոտային միացությունները ծաղիկները և անասնոսնում



կազմակերպում խռովություններ և ապրտամբություններ ոչնչացնում ու գողանում սննդի, հագուստի և վառելիքի պաշարները որպեսզի աշխատավորների շրջանում դժգոհություն առաջացնեն սովետական իշխանության հանդեպ:

Հակահեղափոխության ծավալած այդ «գաղտնի պատերազմի» դեմ պայքարելու համար ստեղծվեց Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողով որի գլուխ կանգնեց Լենինի գինակից Ֆ է Չերժինսկին: Նա իր շուրջը համախմբեց կուսակցության անձնավեր խիզախ ու ազնիվ անդամների որոնք պատրաստ էին, սեփական կյանքը վտանգելով բացահայտել ու վնասագործել թշնամուն: «Հեղափոխության ասպետներ» այսպես էին անվանում սովետական չեկիստներին և այդ ասպետներից էր հայ ժողովրդի զավակ Գևորգ Աթարբեկյանը:

Դեռ 16 տարեկան հասակում էր նա զինվորագրվել հեղափոխության գործին Ցարական կառավարությունը մի քանի

անգամ ձերբակալել ու բանտ էր նետել երիտասարդ բուլշևիկին սակայն չէր կարողացել ընկճել նրան 1917թ Փետրվարյան հեղափոխության ժամանակ Աթարբեկյանն Ալեքսանդրապոլում էր (այժմ Լենինական) և տեղի բուլշևիկյան կազմակերպության ղեկավարներից էր Հետո տեղափոխվեց Աբխազիա Սուխում ուր այդ ժամանակ ժողովուրդը պայքարում էր սովետական իշխանություն հաստատելու համար: Կրակոտ երիտասարդն անմիջապես ներգրավվեց այդ պայքարի մեջ և դարձավ տեղի բուլշևիկների ղեկավարներից մեկը

Աբխազիայից Աթարբեկյանն անցավ Հյուսիսային Կովկաս, և այստեղ էլ ահա սկսվեց նրա գործունեությունն Արտակարգ հանձնաժողովի մարմիններում Նա նշանակվեց Աստրախանի երկրամասի Արտակարգ հանձնաժողովի նախագահ և հատկապես կարևոր դեր խաղաց նրա պաշտպանության գործում Գլխավորելով պայքարը քաղաքում բուն դրած լրտեսների ու դավաճանների դեմ և ցուցաբերելով մեծ խորաթափանցություն հաստատականություն ու անձնական խիզախություն Աթարբեկյանը կարճ ժամանակում հայտնաբերեց և վերացրեց թշնամական ուժերը

1921թ փետրվարին, երբ կարմիր զորա մասերը Հայաստանից անցան Վրաստան որպեսզի օգնեն վրաց ժողովրդին սովետական իշխանություն հաստատելու Հայաստանի հակահեղափոխական ուժերը խռովություն բարձրացրին և միառժամանակ գրավեցին Երևանն ու հանրապետության հարավային շրջանները Այդ օրերին Գ Աթարբեկյանը նշանակվեց Հայաստանի հյուսիսային շրջանների ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ կազմակերպեց և գլխավորեց տեղի հակահեղափոխականների ջախջախումը Հետագայում հենց այդ շրջաններից էլ սկսվեց սովետական զորքերի հարձակումը և արդեն մայիսին Հայաստանը մաքրվեց խռովարարներից

1925 թ մարտի 22 ին Աթարբեկյանն Ալ Մյասնիկյանի և պետական գործիչ Ս Մոզիլևսկու հետ Թիֆլիսից ինքնաթիռով պետք է թռչեր Սուխում մասնակցելու Աբխազիայի սովետների համագումարին Ինքնաթիռն աղետի ենթարկվեց և նրանք զոհվեցին Սովետական մարդիկ վառ են պահում նրանց հիշատակը.

Աթարբեկյանի անունով են կոչվում բնակավայրեր փողոցներ

Ալավերդյան Ստեփան Կարապետի

1888—
1920

Օգոստոսյան գիշեր էր Երևանի վրա իջել էր հեղձուցիչ շոգը իսկ բանտարկյալներով լեփ-լեցուն խցում շնչելու օդ չկար: Միջանցքում ոտնաձայներ լսվեցին ապա ճռնչաց ժանգոտած դուռը և մթուռայան մեջ մի խռպոտ ձայն կանչեց



— Ալավերդյան Մուսայելյան Ղարիբ ջանյան, դուրս եկեք տանում ենք հարցաքննության...

— Սուտ է ընկերներ ձեզ տանում են առանց դատի ու դատաստանի սպանելու չգնաք, — այս ու այն տեղից լսվեցին բանտարկյալների ձայները

Ալավերդյանը գիտեր այդ ուստի կտրուկ հայտարարեց

— Մենք մեր կամքով դուրս չենք գա Դուք միայն մեր դիակները կհանեք այս տեղից

— Դե լավ դուք դեռ կզղջաք — սպառնալից ասաց նույն ձայնը

Դուռը նորից ճռինչով փակվեց ապա մարեցին հեռացող ոտնաձայները.

Եվ այսպես, ևս մեկ օրով երկարեց մեր կյանքը մտածեց Ստեփանը Բայց արդյո՞ք կհաջողվի ազատվել բանտից... Չէ որ հաղթանակի օրը հեռու չէ ահա ուր որ է կբացվի ազատության առավոտը

16 տարեկան Ստեփանն արդեն կոմունիստական կուսակցության անդամ էր: 1905 թ առաջին ռուսական հեղափոխության ժամանակ նա ոչ միայն աշակերտական միտինգներ ու ցույցեր էր կազմա

կերպում իր ծննդավայրում Քութայիսում այլև կատարում կուսակցության կարևոր հանձնարարություններ

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Ալավերդյանը, որ սովորում էր Մոսկվայի առևտրի ինստիտուտում, տեղափոխվեց Հայաստան և ավերականգնեց Սարիղամիշի (այժմ Թուրքիայի տարածքում) բուլշևիկյան կազմակերպությունը և հեղափոխական լայն գործունեություն ծավալեց կովկասյան բանակի զինվորների շրջանում 1919թ սեպտեմբերին, երբ ստեղծվեց Հայաստանի բուլշևիկյան կազմակերպությունների ղեկավար կենտրոնը Արմենկոմը, Ալավերդյանը ևս ընտրվեց նրա կազմում Նրան հանձնարարվեց ամրապնդել Երևանի բուլշևիկյան կազմակերպությունը և ուժեղացնել հեղափոխական աշխատանքը

Իրադարձությունները զարգանում էին անչափ արագ 1920 թ ապրիլի վերջին Ադրբեջանում հաստատվեց սովետական իշխանություն Այդ լուրը ցնծությամբ ընդունեցին Հայաստանի աշխատավորները, տեղի ունեցան միտինգներ ու ցույցեր Հետո այդ բուռն շարժումը վերածվեց *Մայիսյան ապստամբության*, որի ղեկավարներից էր Ալավերդյանը: Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական) կարմիր դրոշ բարձրացրեց «Վարդան զորավար» զրահագնացքը Ապստամբեցին Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում Դիլիջանում և այլ վայրերում: Երևանում տեղի ունեցավ քաղաքական ցույց

Այդ ելույթները չունեին միասնական ամուր ղեկավարություն: Եվ դաշնակցականներին հաջողվեց ճնշել Մայիսյան ապստամբությունը ձերբակալել նրա ղեկավարներին ու նետել բանտ...

Կատարվեց սոսկալի ոճիր: Ալավերդյանին Մուսայելյանին ու Ղարիբջանյանին դուրս բերեցին բանտից և ծածուկ, առանց դատելու, զնդակահարեցին Նորքի ձորում: Դա տեղի ունեցավ 1920 թ օգոստոսի 14-ի գիշերը: Իսկ երեք ու կես ամիս անց նոյեմբերի 29-ին կարմիր բանակի զորամասերի օգնությամբ Հայաստանն ընդմիջտ ազատագրվեց դաշնակների ու օտարերկրյա իմպերիալիստների տիրապետությունից, երկրում հաստատվեց սովետական իշխանություն Ալավերդյանը և նրա ընկերները թաղված են Երևանում՝ 26 կոմիսարների զբոսայգում Նրա անունով են կոչվում փողոցներ Երևանում Լենինականում, Թբիլիսիում Քութայիսում դպրոց Երևանում:

Ալբանիա

(Ալբանիայի ժողովրդական Սոցիալիստական Հանրապետություն ԱժՍՀ)



Այս փոքրիկ երկիրը գտնվում է Եվրոպայի հարավում: Նրա տարածքի մեծ մասը լեռնաշղթաներ ու սարահարթեր են Լեռները ծածկված են լայնատերև և կաղնու հաճարենու անտառներով Լեռնային կիրճերից դեպի ծով են հորդում արագահոս գետերը: Նրանք հատում են Ադրիատիկ ծովի ափի երկայնքով 150 կմ ձգվող արգավանդ հարթավայրը որի լայնությունը 15—35 կմ է Այստեղ կլիման մեղմ է, իսկ լեռնային շրջաններում խստաշունչ Չմռանը հաճախակի են բուքն ու մինչև 20 աստիճանի հասնող սառնամանիքը:

1944 թ նոյեմբերի 29-ին Ալբանիայում հաստատվեց ժողովրդական իշխանություն: Ստեղծվեցին արդյունաբերության նոր ճյուղեր էներգետիկ տեքստիլ, մետաղամշակման փայտամշակման ցեմենտի Զարգացած են սննդի նավթարդյունահանող լեռնահանքային արդյունաբերությունը: Տնտեսության և մշակույթի վերականգնման ու զարգացման գործում Ալբանիա-

Տիրանա քաղաքը



ԱԼԲԱՆԻԱ

Տարածությունը 28 700 քառ կմ
Բնակչությունը՝ ավելի քան
2 700 000 մարդ

յի աշխատավորությանը մեծ օգնություն ցույց տվեցին սովետական և սոցիալիստական մյուս երկրների ժողովուրդները՝

Ալբանիայի ժողովրդական տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է Արգավանդ հողերն զբաղեցնում են երկրի տարածքի միայն մի մասը այդ պատճառով էլ ալբանացիները չորացնում են ճահճացած հողերը և այգիների համար օգտագործում լեռների մեղմաթեք լանջերը Ալբանիայում գյուղացիները միավորված են գյուղատնտեսական կոոպերատիվներում Նրանք մշակում են եգիպտացորեն, ցորեն, բրինձ գարի վարսակ աճեցնում կարտոֆիլ, բանջարեղեն ընդավորներ խաղող, կիտրոն նարինջ ձիթենի ինչպես նաև ծխախոտ բամբակե սի, շաքարի ճակնդեղ գետնանուշ: Ալբանացիները պահում են կովեր ջորիներ ձիեր, գոմեշներ խոզեր, այծեր ոչխարներ Լճերում և Ադրիատիկ ծովի ափամերձ ջրերում զբաղվում են ձկնորսությամբ:

Ալբանիայի մայրաքաղաք Տիրանան երկրի արդյունաբերական և մշակութային կենտրոնն է Այստեղ կառուցվել են տեքստիլ կոմբինատ, մեխանիկական գործարան կահույքի և կոշիկի ֆաբրիկաներ ապակու հախճապակու և այլ գործարաններ ժողովրդական իշխանության տարիներին մտցվել է երեխաների պարտադիր ուսուցում: Բացվել է երկրի պատմության մեջ առաջին համալսարանը: Ստեղծվել է կինոստուդիա կառուցվել են թատրոններ և կինոթատրոններ

Ալբանիայի ժողովրդական Սոցիալիստական Հանրապետությունն, անկասկած կհասներ ավելի մեծ հաջողությունների եթե 1960 ական թվականների սկզբին ալբանական ղեկավարները չդադարեցնեին Ալբանիայի համագործակցությունը ՍՍՀՄ ի և եվրոպական մյուս սոցիալիստական երկրների հետ



Ալեքսանդր Մակեդոնացի

Մեր թվակա
նությունից
առաջ
356 — 323

Նա մեծ զորավար էր ու նվաճող և հպատակեցրեց Հին Արևելքի շատ պետություններ:

Դեռ երեխա ժամանակ մի անգամ նա իր հոր Մակեդոնիայի թագավոր Փիլիպոս 2-րդի և նրա շքախմբի աչքի առջև սանձեց վայրի ձիուն Բուլորն ապշել էին Ալեքսանդրի ճարպկությամբ ու խիզախությամբ, իսկ Փիլիպոս թագավորը գրկեց նրան և ասաց. «Ձավակս քեզ արժանի թագավորությունն գտիր, Մակեդոնիան խիստ փոքր է քեզ համար»:

Ալեքսանդրը շռայլորեն օժտված էր բնությունից խելացի էր խորաթափանց համարձակ Նրա դայակը Լեոնիդասը թագավորի որդուն դաստիարակում էր ինչպես ռազմիկի, որ նա լինի տոկուն ուժեղ ուսուցիչ մեջ անքմահաճ:

Ալեքսանդրը հետագայում հիշում էր թե ինչպես էր Լեոնիդասն իրեն «նախաճաշի փոխարեն առաջարկում գիշերային արշավ, իսկ ճաշին աղքատիկ նախաճաշ»:

Եվ Ալեքսանդրը մեծացավ ուժեղ ու անվեհեր Նա չէր հանդուրժում պարապուրթյունը և հաճախ ասում էր «Ոչ մի բան ավելի անտանելի չէ, քան անհոգ կյանքն ու շռայլությունը և ոչ մի բան ավելի վեհ չէ քան աշխատանքը»:

Ալեքսանդրի ուսուցիչը հին ժամանակների նշանավոր գիտնական Արիստոտելն էր Նա թագավորի որդու հետ զրուցում էր տիեզերքի ու բնության մարդու և պետության մասին:

Եվ պատանին ուսուցչին ասում էր, թե կցանկանար բուլորին գերազանցել ոչ այնքան ֆիզիկական ուժով որքան գիտելիք ներով:

Ալեքսանդրին ռազմական արշավանքների ժամանակ գիտնականներ էին ուղեկցում Ջորավարը պահանջում էր որ նըրանք ծանոթանային օտար երկրներին դրանք նկարագրեին գրքերում գիտելիքներ տարածեին հպատակեցված ժողովուրդների մեջ:

Բայց ինչպես ամեն մի նվաճող Ալեքսանդրը նախ և առաջ ավերածություն ու մահ էր սփռում ամենուր որտեղով անցնում էր նրա հաղթական զորքը:



Ալեքսանդր
Մակեդոնացի
դրվագ
հնագույն
խճանկարից

Ձորավարը նվաճեց պարսիկների մեծ ու ուժեղ տերությունը նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդներին և թագավորությունները։ Նրան հպատակվեցին Եգիպտոսը Բաբելոնը և շատ այլ երկրներ հին հույներին հայտնի գրեթե ողջ աշխարհը՝ Նա կամենում էր հպատակեցնել նաև հարուստ խորհրդավոր Հնդկաստանը։

Ալեքսանդրը թափանցեց Ինդոսի գետահովիտը և մի շարք հաղթանակներ տարավ Բայց տասնամյա արշավանքից հոգնատանջ զինվորները հրաժարվեցին շարժվել ավելի առաջ դեպի Գանգեսի ափերը և Ալեքսանդրը հարկադրված դադարեցրեց արշավանքը։

Արշավանքից վերադառնալուց շատ չանցած Ալեքսանդր Մակեդոնացին մահացավ Նրա վիթխարի տերությունն արագ քայքայվեց որովհետև այն կանգուն էր միայն զորքի ուժով՝ Սակայն նրա հարթած ճանապարհները չանհետացան Դրանցով սկսեցին անցնել առևտրական քարավանները Հին Արևելքի ժողովուրդների և հույների հարուստ մշակույթները միախառնվեցին և ծրնվեց նորը՝ հելլենիստական մշակույթը ի տարբերություն զուտ հունական կամ հելլենական մշակույթի։

Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստան չարշավեց և չնվաճեց այն։ Սակայն Մենոն անունով մի զորավարի գլխավորությամբ զորամաս ուղարկեց Հայաստան՝ Սպեր գավառի ոսկու հանքերը գրավելու նպատակով Բայց հայերը վտարեցին հունամակեդոնական զորքերը և ճակատամարտում սպանեցին Մենոնին՝ Մեր թվականությունից առաջ 331թ տեղի ունեցած Գավգամելայի ճակատամարտից հետո պարսիկների տիրապետության տակ գտնվող այն երկրները որոնք Ալեքսանդրը չէր գրավել, անկախացան Այդ երկրներից էր նաև Հայաստանը։

Ալեքսանդր Նևսկի

1220—
1263

Ավելի քան 700 տարի առաջ Նևայի ափերը ուր այժմ Լենինգրադն է անմար դաբնակ էին ու ամայի։ Բայց 1240 թ հուլիսի 15 ին թրերի զրնգոցը և վահանների շաշուկը խախտեցին դարավոր լուսթյունը։ Հատկապես թեժ մարտ էր գնում նավերի շուրջը։

Մինչ այդ այս ճահճոտ ափին խարիսխ էին նետել շվեդական նավերը և ափ

իջեցրել մեծաքանակ զորք Թշնամիները որոշել էին օգտվել այն բանից, որ ռուս ժողովուրդը ուժասպառ է եղել մոնղոլ-թաթարական լծից և հյուսիսից հարձակվել Ռուսիայի վրա։

Շվեդական զորքերի հրամանատարն էր թագավորի ազգական փառաբանված ասպետ Բիրգերը Զավթիչները վստահ էին որ իրենք հեշտությամբ կհաղթանակեն Հանկարծ անտառից փոթորկի նման նրանց վրա խուժեցին ռուս ռազմիկները, ազատ քաղաք «Պարոն Մեծն Նովգորոդի» զորագունդը։ Քսանամյա իշխան Ալեքսանդր Յարոսլավիչի զորագունդն էր դա Կրակոտ ձիու վրա դեպի թշնամին սլացավ ինքը իշխան Ալեքսանդր Յարոսլավիչը Նիզակի հարվածով նա գետին տապալեց Բիրգերին Շվեդներն անկանոն փախուստի դիմեցին։

Նևայի վրա տարած փառավոր հաղթանակի համար ռուս ժողովուրդն իշխան Ալեքսանդրին անվանեց Նևսկի։

Բայց իշխան Ալեքսանդրն իր գլխավոր սխրանքը կատարեց երկու տարի անց երբ ռուսական հող ներխուժեց միևնույն թըշնամի գերմանական ասպետները։ Ուր էլ սրանք ոտք էին դնում, իրենց ետևից թողնում էին միայն ծխացող ավերակներ ու մարդկանց դիակներ Ասպետները պընդում էին թե արշավանքի են ելնում ի փառս աստծու դրա համար էլ նրանց վահանների վրա խաչ էր պատկերված Իշխան Ալեքսանդրը զորքով դուրս ելավ խաչակիրներին ընդառաջ և նրանց սպասեց Չուդ լճի սառույցների վրա Այստեղ 1242թ ապրիլի 5 ին, տեղի ունեցած ճակատամարտը պատմության մեջ մտավ Սառցաջարդ անունով։

Ասպազեն խաչակիրներն ահեղ մարտական ուժ էին Բայց երբ ասպետները ներխուժեցին ռուսների շարքերը, երիտասարդ իշխանը գլխավոր ուժերով նրանց հարվածեց թիկունքից։ Խաչակիրների համար դժվար էր ետ շրջել ծանր զրահից դանդաղաշարժ դարձած ձիերին և նրանք սրախողխող ընկնում էին ռուսների հարվածներից Գարնանային սառույցը սկսեց ճաքճքել և շատ խաչակիրներ սուզվեցին ջրի տակ Ռուսական զորքը գլխովին ջախջախեց գերմանական ասպետներին։ Ալեքսանդր Նևսկին ոչ միայն փառապանծ զորավար էր, այլև իմաստուն, հեռատես կառավարիչ Մոնղոլ թաթարների նկատմամբ նա այնպիսի քաղաքականություն էր վարում, որը ռուս ժողովուրդին հնարավորություն



Այս հինա
վուրց ման
րանկարում
պատկեր
ված է Սառ
ցաջարդը:
Մանրանը
կարներ են
կոչվում ձե
ռագիր
մատյաննե
րի պատկե
րագար
դումները

տվեց աստիճանաբար կուտակել ուժերը և ժամանակի ընթացքում թշնամուն վտարել իր երկրից:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Ալեքսանդր Նևսկու շքանշանով պարգևատրվում էին սովետական բանակի աչքի ընկած սպաները

Ալեքսանդր Նևսկու մասին կարող եք կարդա հետևյալ գիրքը


Յուզով Ա Կ Անվեներ սիրողը Ե «Սովետական գրող» 1981

Ալժիր

(Ալժիրի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, ԱԺԴՀ)



Այս պետությունը գտնվում է Աֆրիկայի հյուսիսում, Միջերկրական ծովի ափին ևրա տարածքի մեծ մասն զբաղեցնում է Սահարայի հրաշեկ անապատը սորուն ավազների իր անծայրածիր հարթավայրերով արևից շիկացած քարածայրերով:




ԱԼՃԻՐ

Տարածությունը՝ 2 382 000 քառ.կմ
Բնակչությունը՝ 19 500 000 ևս դ.

- Սև մետաղի դոզա
- Մեքենաշինություն և (ավտո հավաքում) և մետաղամշակման արդյունաբերություն
- Քիմիական արդյունաբերություն
- Նավթամշակման արդյունաբերություն
- Տեքստիլ արդյունաբերություն
- Գինեգործական արդյունաբերություն
- Նավթի արդյունահանում
- Այրվող գազերի արդյունահանում
- Հանրաքարի արդյունահանում

- Նավթամուղներ
- Գազամուղներ
- Ջերմա էլեկտրակայաններ
- Ծովային նավահանգիստներ

- Խաղողագինեք
- Հացահատիկախիբոյս (ցորեն, գարի)
- Ծխախոտ
- Աֆա (կերպույս)
- Ցիտրուսահիսներ
- Օազիսներ
- Ոչխարաբուծություն



Միայն տեղ-տեղ հանդիպում են օազիսներ, որոնք աղբյուրների շուրջ աճող փյուռիկյան արմավենու պուրակներ են Այդտեղ ապրում են մարդիկ. Հազվադեպ կհանդիպես ոչխարի հոտի կամ ուղտերի երամակի որոնց քոչվոր անասնապահը տեղից տեղ է քշում սևունդ և ջուր գրտնելու համար

Ատլասի լեռները Սահարան անջատում են Միջերկրականի ափի երկայնքով ձրգ

ված նավթն ու գազն են: Դրանց արդյունահանումը դժվար է Ջուր չկա այն, ինչպես և պարենամթերքը, բերում են հեռվից Ալժիրցիները կառուցել են երեք նավթամուղ, որոնցով նավթը Սահարայից հոսում է դեպի ծովափ Անապատի մակերևութը թեքված է դեպի Միջերկրական ծովը, և նավթն ինքն է հոսում խողովակներով, գրեթե առանց պոմպերի օգնության

Ալժիրի ընդերքում կան և ուրիշ օգտա-



ված նեղ հողաշերտից, որն ամբողջովին կանաչապատ է Ալժիրցիների հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Նրանք բլուրների լանջերին և հովիտներում մշակում են նարինջ ու կիտրոն, խաղող, ձիթենի, բանջարեղեն հացահատիկային բույսեր Այդտեղ ապրում է երկրի բնակչության մեծ մասը Այդտեղ են գտնվում նաև հանրապետության խոշոր քաղաքները էլ Ջազաիր (Ալժիր) մայրաքաղաքը և Օրանը

Ալժիրի հիմնական հարստությունը Սահարայի ավազուտների տակ հայտնաբեր

կար հանածոներ երկաթ, կապար, ցինկ, ֆոսֆորիտներ, սնդիկ

Գրեթե 130 տարի Ալժիրն անխնա կողոպտում էին ֆրանսիացի գաղութարարները: Նրանք երկրից արտահանում էին հաց, նավթ, քարածուխ, մետաղներ Ալժիրցիները վտարվում էին դեպի անբերրի հողերը, պատսպարվում քաղաքների ծայրամասերում կառուցած կավե խրճիթներում, տառապում քաղցից ու հիվանդություններից

Բայց Ալժիրի ժողովուրդը չհաշտվեց գաղութարարների տիրապետությանը

Յոթ տարի նա պատերազմ մղեց իր երկրի ազատության և անկախության համար 1962 թ պայքարն ավարտվեց Ալժիրի ժողովրդի հաղթանակով Համառ աշխատանքով ալժիրցիներն արդեն շատ հաջողությունների են հասել. Կառուցվել են նոր ֆաբրիկաներ, հիվանդանոցներ դպրոցներ Երկրում բոլոր երեխաները սովորում են: Սակայն դեռ բազմաթիվ դժվարություններ են մնացել. չէ որ գաղութարարների երկարատև տիրապետությունն ու պատերազմը քայքայել էին երկիրը: Ալժիրի ժողովրդին մեծ օգնություն են ցույց տալիս սովետական մասնագետները երկրաբանները, նավթագործները ինժեներները ուսուցիչները և ուրիշներ



Աբրահամ Ալիխանով

Ալիխանյաններ

Աբրահամ
Իսահակի
1904—
1970

Արտեմ
Իսահակի
1908—
1978

Մեծ հայրենականի ահեղ տարիներն էին Խավար գիշերներին ռումբերի պայթյունների տակ, հրի ու ծխի մեջ սովետական ռազմանավերն ապամագնիսացնելու միջոցով երկու եղբայրներ վնասագերծում էին ֆաշիստական ականները: Եղբայրներից մեկը կռվում էր Սև ծովի ափերին, մյուսը Լենինգրադի դարպաս Կրոնշտադտում: Սակայն պատերազմի տարիներին անգամ նրանք զբաղվում էին գիտական աշխատանքով: 1942 թ ամռանը եղբայրները Հայաստան տեղափոխեցին ու Արագած լեռը բարձրացրին մի շարք բարդ սարքեր Վրաններ խփելով բաց երկնքի տակ նրանք շարունակեցին իրենց ուսումնասիրությունները դժվարին պայմաններում:

Ովքեր էին հայրենիքի այդ անվեհեր պաշտպաններն ու տաղանդավոր գիտնականները նրանք ականավոր փորձարար-ֆիզիկոսներ Աբրահամ Ալիխանով և Արտեմ Ալիխանյան եղբայրներն էին

Փոքր հասակից նրանք սիրեցին մաթեմատիկական առարկաները, սակայն հայրը երեխաներին տվեց Թիֆլիսի առևտրի դպրոց. Դպրոցն ավարտելուց հետո նրանք մեկնեցին Լենինգրադ Ավագ եղբայրը Աբրահամը ընդունվեց պոլիտեխնիկական ինստիտուտ իսկ Արտեմը համալսարան: Այն ժամանակ սովորելը հեշտ չէր: Եղբայրները հարևադրված էին և սովորել, և աշխատել ավագ եղբայրը ռենտգենատեխնիկ էր հիվանդանոցում կրտսերը բեռնակիր նավահանգստում

Բուն ավարտելուց հետո եղբայրներն սկսեցին ուսումնասիրել ռենտգենյան ճառագայթների բյուրեղների ֆիզիկան հետազոտել *ատոմի* միջուկն ու ռադիոակտիվությունը (ռադիոակտիվության մասին դուք կարող եք կարդալ «Կյուրիներ» գրույցում)

Աշխարհի մի շարք մեծ ֆիզիկոսներ պնդում էին թե ատոմը կազմող որոշ տարրական մասնիկներ չեն ենթարկվում ֆիզիկայի օրենքներին: Եղբայրները փորձով ապացուցեցին որ, երբ այդ մասնիկները փոխազդեցության մեջ են մըտնում, ֆիզիկայի օրենքները չեն խախտվում

Ինչպես դուք գիտեք *Արեգակը*, բացի լուսային ճառագայթներից արձակում է նաև տարրական մասնիկներից կազմված անտեսանելի ճառագայթներ: Մեզ նման ճառագայթներ են հասնում նաև այլ *ատոմներից*, ամբողջ *Տիեզերքից* Այդ ճառագայթներն ուսումնասիրելու նպատակով Ալիխանյան եղբայրները սովետական կառավարության որոշմամբ Արագած լեռան վրա հիմնադրեցին տիեզերական ճառագայթների Սովետական Միությունում առաջին բարձր լեռնային կայանը: Նրանք աշխարհում առաջինը նկատեցին, որ այդ ճառագայթների մեջ կան նոր, անհայտ տարրական մասնիկներ. Ալիխանյան եղբայրները տիեզերական ճառագայթների մեջ հայտնաբերեցին նաև մեծ էներգիա պարունակող պրոտոններ Այս հայտնագործությունը շատ կարևոր նշանակություն ունեցավ տիեզերական ճառագայթների գաղտնիքները բացահայտելու համար Աշխատանքները շարունակվեցին Երևանի

Արտեմ
Ալիխանյան



Ֆիզիկայի ինստիտուտում որը 1943 թ հիմնադրել էր Արտեմ Ալիխանյանը: Նա 30 տարի անընդմեջ եղել է այդ ինստիտուտի ղեկավարը:

Մեր դարի 30 ական թվականներին ֆիզիկոսներն արդեն բացահայտել էին, որ ատոմի միջուկում թաքնված են էներգիայի վիթխարի պաշարներ Անհրաժեշտ էր այն պես անել, որ այդ էներգիան ծառայեր մարդկանց: Հարկավոր էր նաև խանգարել ֆաշիստական Գերմանիային որը ցանկանում էր այդ էներգիան օգտագործել սարսափելի կործանարար զենք պատրաստելու համար 1942 թ վերջին Աբրահամ Ալիխանովը մեկնեց Մոսկվա որտեղ Ի Վ Կուրչատովի ու սովետական այլ խոշոր գիտնականների հետ մասնակցեց շատ կարևոր հարցերի լուծմանը որոնք կապված էին սովետական պետության ռազմական հզորության մեծացման և նրա պաշտպանունակության ամրապնդման հետ Այդ աշխատանքները հաջողությամբ պսակվեցին:

1945 թ. Աբրահամ Ալիխանովը Մոսկվա յում հիմնադրեց և երկար տարիներ ղեկավարում էր տեսական և փորձարարական ֆիզիկայի ինստիտուտը որը դարձավ գիտության համաշխարհային կենտրոններից մեկը նրա անմիջական ղեկավարությամբ այստեղ նախագծվեց ու կառուցվեց ՍՍՀՄ-ում իր տեսակի մեջ առաջին միջուկային ռեակտորը (դա բարդ «հնոց» է որի մեջ որպես վառելիք օգտագործվում են ուրանի ատոմները)

Ատոմի միջուկի գաղտնիքները բացահայտելու համար ֆիզիկոսներն այն ռմբակոծում են տարրական մասնիկներով և

դիտում, թե ինչ է տեղի ունենում Առաջին հետազոտությունների համար այդ նպատակով օգտագործվում էին ռադիոակտիվ նյութերի քայքայումից առաջացող մասնիկները: Բայց շուտով պարզվեց, որ այդ մասնիկների էներգիան բավարար չէ միջուկի «խորքերը» ուսումնասիրելու համար Ֆիզիկոսներն սկսեցին ուղիներ փնտրել մեծ էներգիա ունեցող մասնիկներ ստանալու համար: Այդ նպատակով ստեղծվեցին արագացուցիչներ, որտեղ տարրական մասնիկների շարժումն արագանում է, և նրանք ձեռք են բերում մեծ էներգիա: ՍՍՀՄ-ում պրոտոնային առաջին արագացուցիչն ստեղծվեց Աբրահամ Ալիխանովի իսկ ժամանակի ամենահզոր էլեկտրոնային արագացուցիչը Արտեմ Ալիխանյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ Երևանում: Մեծ էներգիայով տարրական մասնիկներն ուսումնասիրելու համար Արտեմ Ալիխանյանն ստեղծեց նաև բազմաթիվ յուրատեսակ սարքեր

Աբրահամ Ալիխանովը 3 անգամ արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի, պարգևատրվել շքանշաններով ու մեդալներով: Նա ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էր, սոցիալիստական աշխատանքի հերոս Նա չափազանց աշխատասեր մարդ էր չէր խուսափում նույնիսկ «ամենասև» աշխատանքից: Սիրում էր սպորտը, երաժշտությունը: Տաղանդավոր կազմակերպիչ-փորձարարի ընկերներն էին ոչ միայն ականավոր ֆիզիկոսներ, այլև արվեստի և գրականության շատ գործիչներ:

Արտեմ Ալիխանյանը լենինյան մրցանակի դափնեկիր է, երկու անգամ արժանացել է ՍՍՀՄ պետական մրցանակի, պարգևատրվել շքանշաններով ու մեդալներով Նա ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր Արտեմ Ալիխանյանը լավ շախմատ էր խաղում, սիրում էր գեղանկարչությունը, ուներ նկարների արժեքավոր հավաքածու որի մեջ կային հայ մեծանուն նկարիչներ Մարտիրոս Սարյանի, Մինաս Ավետիսյանի, Հարություն Կալենցի և ուրիշների ընծայած կտավները: Նրա մոտիկ բարեկամներն էին կոմպոզիտորներ Դմիտրի Շոստակովիչը, Արամ Խաչատրյանը Նա սիրում էր սպորտը, հրաշալի թենիս էր խաղում աջակցում Հայաստանում այդ խաղի տարածմանը: Մեր հանրապետության թենիսիստներն ամեն տարի Երևանում անց են կացնում Արտեմ Ալիխանյանի հիշատակին նվիրված թենիսի հուշամրցումներ:




Ականավոր ֆիզիկոսներ Ալիխանյան եղբայրները ՀՍՍՀ ԳԱ հիմնադիր անդամներ են: Նրանց անունով է կոչվում Երևան քաղաքի փողոցներից մեկը, իսկ Երևանի պետական համալսարանում սահմանված է Ալիխանյան եղբայրների անվան ուսանողական կրթաթոշակ

Ալիշան Ղևոնդ

1820 —
1901

Քերովբե Պետրոս-Մարգարի Ալիշանյանը 12 տարեկան էր, որ նավը Կոստանդնուպոլսից նրան տարավ Ադրիատիկ ծովի ափին գտնվող գեղատեսիլ Վենետիկ քաղաքը: Վենետիկը կառուցված է 118 կղզիների վրա, որոնք իրար են միանում 400 կամուրջով և 150 ջրանցքով Կղզիներից մեկը կոչվում է Սուրբ Ղազար



Այդ կղզում դեռևս 1701 թ հիմնադրվել էր հայագիտական խոշոր կենտրոն Մխիթարյան միաբանությունը, որի վարժարանում սովորելու էր եկել Քերովբեն:

Վարժարանում պատանին աչքի ընկավ արտակարգ աշխատասիրությամբ: Ուսումնառության սկզբից նա սիրեց աշխարհագրությունը, պատմությունն ու գրականությունը: 16 տարեկան էր, որ կոչեցին Ղևոնդ Ալիշան: 1832 թվականից մինչև իր կյանքի վերջը Ալիշանը Սուրբ Ղազար կղզուց բացակայեց միայն պաշտոնի բերումով կամ ստիպված: Նա տիրապետում էր տասը լեզվի: Իր խուցը միակ տեղն էր, ուր կարելի էր գտնել նրան խորասուզված բազմալեզու գրքերի ու ձեռագրերի աշ-


խարհում իսկ եթե օրվա մեջ կարճ ժամանակով դադարեցնում էր աշխատանքը, ապա գնում էր հանգստանալու իր իսկ ձեռքով սարքած լճակի ափին, ձիթենիների ստվերում Այդ լճակը շատ նման էր հայրենի Վանա լճին Մայր Հայաստանի կարոտը Ալիշանը այստեղ էր առնում: Ութսուն տարի ապրեց այդ գիտնական հսկան, բայց երբեք չտեսավ Հայաստան աշխարհը: Բնավ չտեսավ... Մինչդեռ այնպես լավ գիտեր Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունը, նրա սարերն ու ձորերը, գետերն ու լճերը ճանապարհներն ու բերդերը, ճարտարապետական հուշարձանները նա ծրագրել էր առանձին հատորներ գրել Հայաստանի բոլոր նահանգների ու Կիլիկիայի մասին, բայց հասցրեց գրել միայն «Շիրակ», «Սիսվան», «Այրարատ», «Սիսական» մեծածավալ աշխատությունները: Վենետիկում իրար ետևից լույս էին տեսնում Ալիշանի գրքերը: Նա առաջիններից էր, որ գրեց աշխարհաբար բանաստեղծություններ «Հրազդան», «Մասիսու սարեր», «Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Ավարայրի» և այլն: Ալիշանը հավաքեց և տպագրեց հայկական ժողովրդական բանահյուսությունից «Հայոց երգք ուսմականք» ժողովածուն, իսկ «Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն» գրքում նկարագրեց Հայաստանում աճող շուրջ 3400 բույս ու ծաղկատեսակ

Ալիշանի խուցը դարձել էր յուրօրինակ ուխտատեղի այն հայերի համար, որոնց հուզում էին հայոց պատմությունն ու ճակատագիրը Աշխարհի տարբեր ծայրերից այստեղ էին գալիս հանրաճանաչ գիտնականներ որպեսզի խորհուրդ հարցնեին պատմաբան ու աշխարհագրագետ բանասեր բանաստեղծ ու թարգմանիչ Ղևոնդ Ալիշանից

Ալիքներ

Երբ դուք ճլրրթիով ճոճվում եք ձեր մարմինը նրա հետ միասին տատանումներ է կատարում: Տատանումները հանդիպում են ամեն քայլափոխի ճոճվում է պատի ժամացույցի ճոճանակը, քամուց ծառերի ճյուղերը, ավտոմեքենաների շարժիչների զլաններում ետ ու առաջ են շարժվում մխոցները, բաբախում է մարդկային սիրտը...

Պարանի մի ծայրը կապեք դռան բռնակից, իսկ ինքներդ բռնեք մյուս ծայրը,



այնպես, ինչպես պատկերված է նկարում Այժմ վեր ու վար շարժեք ձեռքը Ձեր ձեռքը, նրա հետև և պարանի ծայրը, տատանումներ են կատարում: Բայց ինչո՞ւ են տատանվում պարանի մնացած մասերը ինչո՞ւ պարանն ամբողջությամբ սկսում է գալարվել: Պարզվում է, որ տատանումները տեղափոխվում են պարանով մեկ, որովհետև նրա հարևան մասերը միացած են իրար. Տատանումների տեղից տեղ տարածումն էլ հենց ալիքն է

Ջրի մեջ զգված քարը տատանում է ջրի մասնիկները, որոնցից տատանումները հաղորդվում են հարևան մասնիկներին, դրանցից էլ ավելի հեռու, և այսպես ջրի վրայով շրջանաձև տարածվում են ալիքները: Ծովում ալիքներ կարելի է տեսնել նույնիսկ ամենախաղաղ եղանակին Դա նշանակում է, որ բաց ծովում, հեռու մի տեղ քամի է փչում, տարուբերում ջուրը, և քամուց ծնված ալիքները, հարյուրավոր կիլոմետրեր վազելով, աղմուկով խփվում են ափին

Իսկ ինչ են աղմուկը, ձայնը նույնպես ալիքներ են, միայն թե տարածվում են օդում Երբ որևէ առարկա, օրինակ, կիթառի լարը, մարդու ձայնալարերը կամ ադիոընդունիչի բարձրախոսի ձայնափողը արագորեն տատանվում է, ամեն մի տատանման դեպքում այն հրում է շրջապատող օդի մոլեկուլները Սրանք էլ իրենց

հերթին հրում են ուրիշ մոլեկուլների, մինչև վերջապես ալիքը հասնում է մեր ականջներին, ստիպում թմբկաթաղանթներին տատանվել, և մենք ձայն ենք լսում

Տիեզերական տարածությունում օդ չկա, չկան մասնիկներ, որ տատանվեն, այդ պատճառով էլ ձայնային ալիքները այստեղ չեն կարող տարածվել Տիեզերանավից տիեզերական բաց տարածություն դուրս եկած տիեզերագնացները միմյանց հետ կարող են խոսել միայն ռադիոյով

Ալիքները կարող են տարածվել նաև պինդ մարմիններում Ականջը երկաթուղային ռելսին հպելու դեպքում դեռ հեռվից կարելի է լսել մոտեցող գնացքի աղմուկը Երկրաշարժերն առաջ են բերում գետնի տատանումներ, որոնք տարածվում են Երկրի մակերևույթով

Բայց ամենահետաքրքրականն այն է, որ լույսը նույնպես ալիքներ են: Լույսը ծնվում է ատոմներում էլեկտրոնների տատանումներից.

Լույսին նման են նաև ռադիոալիքները, որոնք նույնպես առաջանում են էլեկտրական լիցքերի տատանումներից՝ ռադիոհաղորդչի անտենաներում:

Իսկ ինչո՞վ են տարբերվում ալիքներն իրարից: Ամենից առաջ՝ արագությամբ: Ծովի ալիքները համեմատաբար դանդաղաշարժ են, նրանց մասին երբեմն, նույնիսկ, ասում են ծուլորեն դեպի ափ են շարժվում

Օդում ձայնային ալիքները մեկ վայրկյանում անցնում են 330 մ: Նրանք 30 անգամ ավելի արագ են վազում, քան կարճ տարածության վազքի աշխարհի ռեկորդակիրը: Բայց ամենաարագաշարժը լուսային ալիքներն են և ռադիոալիքները՝ նրանց արագությունը վայրկյանում 300 հզ կմ է


Ալիքները միմյանցից տարբերվում են նաև իրենց տատանման հաճախությամբ Որքան հաճախ են տատանվում օդի մասնիկները ձայնային ալիքում, այնքան ավելի բարակ, բարձր է ձայնը Երբ կովը բառաչում է օդի մասնիկները վայրկյանում տատանվում են 20 — 30 անգամ: Իսկ մոծակի տզզոցը օդի մասնիկներին ստիպում է վայրկյանում տատանվել 10 հզ անգամ

Ալիքները տարբերվում են նաև իրենց երկարությամբ: Դուք գիտեք, որ ռադիոընդունիչներն ունեն երկար միջին և կարճ ալիքների սանդղակներ: Բայց լուսային ալիքների և ռադիոալիքների կարևորագույն առանձնահատկությունն այն է, որ նրանք կարող են տարածվել դատարկու

թյան մեջ Հենց այդ պատճառով է որ մենք կարող ենք տեսնել աստղերը և ռադիոկապ հաստատել ու պահպանել դեպի հեռավոր մոլորակներ թռչող տիեզերանավերի հետ

«Ալմաստ գահ»

Եթե երբևէ այցելեք Կրեմլի Ջինապալատ, թանգարանային բազմաթիվ ցուցանմուշների մեջ ձեր ուշադրությունը կգրավի թագավորական մի շքեղ գահ որի մասին թանգարանի աշխատակիցը կպատմի հետևյալը:



Մեզանից շատ առաջ, 1660 թ առևտրական նպատակներով Ապահանից Մոսկվա է գալիս Ջաքար Սահրատյան անունով մի հայ վաճառական Սահրատյանը ռուսական ցար Ալեքսեյ Միխայլովիչին բերել էր մի թանկագին նվեր, որ պատրաստել էին Ջուղայի հայ արհեստավորները. Գահը պատրաստված էր սոսու և հաճարենու փայտից պատված սև թավիշով, կարմիր մետաքսով ու դեղին կերպասով, ընդելուզված տարբեր չափի 897 ալմաստներով, 1298 մարգարիտներով, մեղեսիկ, շափյուղա տպագիտն, հակինթ կոչվող թանկագին քարերով 1830 նիշա-

պուրի փիրուզով ոսկով և արծաթով Ուրախացած այդ նվերով Ալեքսեյ Միխայլովիչ ցարը Ջաքար Սահրատյանին խնդրում է որ վերադառնալուց հետո նա Մոսկվա ուղարկի հայ ոսկերիչների և արծաթագործների թանկագին քարեր հղկողների ու նկարիչների 1667 թ Մոսկվա է մեկնում հայ նկարիչ Բոգդան Սալթանովը Ցարը նրան դարձնում է պալատական նկարիչ որը պալատական շենքերն ու տաճարները պատեց բազմաթիվ հոյակապ որմնանկարներով

Այլումին

1855 թ Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում ընդհանուրի ուշադրությունն էին գրավում 12 փոքրիկ չորսուներոր պատրաստված էին արծաթավուսպիտակ մետաղից Այդ մետաղը փափուկ էր դյուրահալ նման էր արծաթին, բայց շատ ավելի թեթև էր Ամենագարմանալին այն էր, որ ինչպես պարզվեց, այն պարունակվում էր նույնիսկ, սովորական կավի մեջ, որից վաղուց ի վեր աղյուս էին պատրաստում Ամենից հաճախ հանդիպող ապարներում գրանիտի և բազալտի մեջ, նույնպես կար այդ մետաղից, որն այդ ժամանակ անվանում էին կավի արծաթ Բնության մեջ իր տարածվածությամբ այն զիջում էր միայն թթվածնին և սիլիցիումին: Այդ մետաղն այժմ բոլորին լավ հայտնի այլումինն էր:

Այլումինն այն ժամանակ այնքան թանկ արժեք (ոսկուց շատ քիչ էր էժան) որ օգտագործում էին միայն զարդարանքներ պատրաստելու համար Հումքից բոքսիտից այլումին ստանալը չափազանց դժվար էր որովհետև շատ էլեկտրաէներգիա էր պահանջվում: Իսկ էլեկտրակալաններ դեռևս չկային

Ջուր չէ որ այլումինն անվանում են 20 րդ դարի մետաղ: Առանց նրա չէին լինի ժամանակակից տեխնիկայի ամենահրաշալի նվաճումները: Այլումինը և նրա համաձուլվածքներն օգտագործում են ինքնաթիռներ, ստորջրյա թևերով նավեր Երկրի արհեստական արբանյակներ կառուցելու ժամանակ: Ցանկացած ռադիոընդունիչի կամ հեռուստացույցի ներսում կան այլումինե դետալներ: Այլումինից պատրաստում են էլեկտրահաղորդալարեր խոհանոցի ամանեղեն «արծաթե



Ալոճենի



Ալոճենու տերևը ծաղիկները և պտուղները

Սա փոքր ծառ է կամ բավականին մեծ թուփ Հաճախ հանդիպում է այգիներում, թեև սերում է անտառից: Նրա ծաղիկները տհաճ հոտ ունեն իսկ ճյուղերը փշապատ են: Այնուամենայնիվ, շատ թռչնակներ են իրենց բույնը հյուսում նրա ճյուղերին

Եվ հենց փշերն էլ գրավում են թռչուններին Դրանցով ալոճենին պաշտպանվում է թշնամիներից և պաշտպանում նրանց, ովքեր թաքնվում են իր ճյուղերի մեջ. Փոքրիկ թռչնակը կարող է ազատ թռչել փշոտ ճյուղերի միջով, իսկ եթե ավելի մեծամարմին ու դանդաղաշարժ մեկը ցանկանա ավերել նրանց բները, փշերը կպատժեն: Կատուն, ագռավը կամ բուն այդ բներին հասնել չեն կարող

Եթե դուք ուզում եք, որ ձեր այգում թռչուններ բնակվեն, ալոճենի տնկեցեք Թռչուններն անպայման բույն կիյուսեն նրա ճյուղերին իսկ հետո էլ ձագուկներ կուսենան:

Ալպինիզմ

Բարձրաբերձ լեռների վեհասքանչ աշխարհ ժայռեր, պսպղուն սառույցներ և ձյուն ձնահյուսների թնդյուն և լռություն: Արտասովոր ասես ոչ երկրային բնապատկերներ: Հազարամյակներ շարունակ այդ խորհրդավոր աշխարհը ձգել է մարդուն

Մոտ երկու հարյուր տարի առաջ երկու շվեյցարացիներ առաջին անգամ հասան Ալպերի (Եվրոպայի ամենաբարձր լեռների) Մոնբլան գագաթը: Այդ ժամանակներից էլ ահա դժվարամատչելի լեռնագագաթների հաղթահարումն ալպինիզմ են անվանում Դա խիզախ համարձակ ու տոկուն մարդկանց մարզաձև է

Միանգամից չէ, որ ալպինիստ են դառնում. Նախ պետք է երկար ու համառորեն մարզվես ուսումնասիրես երթուղիները հասարակ վերելքներից աստիճանաբար անցնես առավել բարդերի և հետո միայն ճանապարհ ընկնես դեպի ամենաբարձր գագաթները

Ալպինիստները լինում են այնտեղ ուր ոչ ոք չի կարող հասնել.. Լեռներում վթար է Ամենաժամանակակից ուղղաթիռն ան

գամ ի վիճակի չէ վայրեջք կատարելու կիլոմետրանոց պատի վրա, ամենագնացն իսկ անգոր է հաղթահարել սառցադաշտերի վիթխարի ճեղքվածքները: Ալպինիստներն են միայն, որ կարողանում են միշտ օգնության հասնել փորձանքի մեջ ընկած մարդկանց


Ալպինիստները հատուկ հանդերձանք ունեն քամուց, անձրևից և ձյունից պաշտպանող հագուստ, սեպավոր ներբաններով կոշիկներ, պարան սառցահատեր, ճանկեր կոշիկներին ամրացվող հատուկ կեռեր ապառաժի և սառցի մեջ ամրացվող սեպեր, մուրճեր վրան, քնապարկեր:

Հաճախ ալպինիստները մարզական վերելքների ժամանակ կատարում են գիտական հետազոտություններ նրանց աշխատում են բարձրադիր օդերևութաբանական կայաններում, օգնում հիդրոէլեկտրակայանների շինարարությանը լեռներում գիտական սարքավորում տեղադրում 7 հզ մ բարձրության վրա:

Ալպինիզմը շատ տարածված է մեր երկրում: Սովետական ալպինիստները նվաճել են ՍՍՀՄ բոլոր լեռնագագաթները Լենինի պիկը (7134 մ Պամիր) նվաճած սովետական առաջին ալպինիստների ղեկավարն էր սպորտի վաստակավոր վարպետ ինժեներ-կոնստրուկտոր Վ Մ Աբալակովը Այնուհետև նա ևս երկու անգամ հաղթահարել է այդ բարձր գագաթը նրա եղբայրը քանդակագործ Ե Մ Աբալակովը, առաջինը նվաճեց Կոմունիզմի պիկը (7495 մ, Պամիր) Պամիրի բարձր լեռնագագաթներից մեկը կոչվում է «Ե Մ Աբալակովի պիկ»: 1982 թ սովետական ալպինիստների արշավախումբը Ե Տամի ղեկավարությամբ նվաճեց աշխարհի ամենաբարձր լեռնագագաթը՝ Էվերեստը (8848 մ) Առաջինը Էվերեստի գագաթ հասան արշավախմբի անդամներ Վ Բալիբերդինը և Ե Միսլովսկին:

Հայաստանում ալպինիստական առաջին արշավը կարելի է համարել 1829 թ սեպտեմբերի 27-ին Խ Աբովյանի և գերմանացի պրոֆեսոր Ֆ Պարրոտի վերելքն Արարատի գագաթը (5156 մ) 1845 թ հուլիսի 29 ին Արարատի գագաթն է բարձրացել գերմանացի երկրաբան Հ Աբիխը երեք հայերի ուղեկցությամբ Սովետական Հայաստանում ալպինիստական արշավներ են կազմակերպվում դեպի Արագած (4090 մ) Կապուտջուղ (3904 մ) և Մեծ Իշխանասար (3552 մ) լեռնագագաթները: 1935 թ վեց հայ ալպինիստներ նվաճել են Էլբրուսի գագաթը (5642 մ)







Ալքիմիկոսներ

Կար ժամանակ, երբ մարդիկ կարծում էին, թե սնդիկը երկաթը կամ պղինձը կարող են փոխարկվել արծաթի կամ ոսկու: Դրա համար անհրաժեշտ է միայն մետաղը միահալել հատուկ նյութի «կարմիր առյուծի» հետ, և այն կդառնա ոսկի, իսկ եթե միահալվի ուրիշ նյութի «սպիտակ առյուծի» հետ, կստացվի արծաթ: «Կարմիր առյուծն» այլ կերպ անվանում էին նաև փիլի սոփայական քար: Ասում էին, որ դա ամեն տեսակ հիվանդության դեղ է, հրաշագործ դարման որը երիտասարդացնում է ծերերին և նույնիսկ կարող է անմահացնել մարդուն:

Ուստի զարմանալի չէ, որ «փիլիսոփայական քարը» փնտրում էին շատերը այդ թվում և հին աշխարհի նշանավոր գիտնականները: Նրանք իրենց անվանում էին ալքիմիկոսներ:

Ալքիմիկոսներն իրենց փորձանոթներում և թորանոթներում անվերջ իրար էին խառնում այն ամենը, ինչ գտնում էին հող մինչև փոշու աստիճան մանրացրած հանքաքար, կենդանիների չորացրած փորուտիք, գոմաղբ, ծառերի կեղև: Այս բոլորը նրանք տաքացնում էին, վրան ավելացնում բազմապիսի հեղուկներ, եռացնում..

Միաժամանակ ալքիմիկոսները զանազան կախարդական խոսքեր էին արտասանում, որոնք պետք է օգնեին այդ անիմաստ խառնուրդների փոխակերպմանը խորհրդ դավոր «փիլիսոփայական քարի»: Միայն թե ոչ ոք չգիտեր թե ինչպիսի տեսք ունի այդ ամենագոր քարը:

Թագավորներն ու սուլթանները լսելով այն հարստության մասին որ կարող են ստանալ ալքիմիկոսները, հրավիրում էին նրանց արքունիք և իրենց դրյակներում ու պալատներում լաբորատորիաներ ստեղծում նրանց համար: Եվ պահանջում էին միայն մի բան ոսկի որքան հնարավոր է շատ ոսկի:

Սակայն ալքիմիկոսների ոսկին ոչ մի կերպ չէր ստացվում: Թեպետև մենք այժմ հասկանում ենք, որ ալքիմիկոսները մոլորության մեջ էին այնուամենայնիվ պետք է ծիծաղել նրանց վրա:

Ալքիմիայով զբաղվում էին նաև իսկապան գիտնականներ: Նրանց շնորհիվ են հայտնի դարձել մետաղների և այլ նյութերի շատ հատկություններ հայտնաբերվել մեծ թվով ներկեր կաշի մշակելու շատ նյութեր:

Ալքիմիկոսներն են ապակի արծնապակի համաձուլվածքներ թթուներ ալկալիներ դեղանյութեր ստանալու հիմք դնողները: Նրանք հնարել են լաբորատոր շատ սարքեր օրինակ թորման կաթ սաները տաքացնող վառարանները:

Ածխաթթվական գազ

Պաղպաղակ վաճառողի արկղիկին դրված է մի կտոր «սառնամանիք»: Ցուրտը ասես, քուլա քուլա տարածվում է այդ կտորի շուրջը ինքը կտորն էլ դանդաղ հալվում է սակայն ջրի փոքրիկ լճակ չի առաջացնում ինչպես սովորական սառույցը այլ ուղղակի փոքրանում է գոլորշիանալով առանց մնացորդի: Դա շատերին լավ ծանոթ չոր սառույցն է:

Վերցնենք մի կտոր չոր սառույց և գցենք դատարկ անոթի մեջ: Երբ այն լրիվ գոլորշիանա անոթը շրջենք այրվող մոմի վրա այնպես կարծես ուզում ենք թափել միջի պարունակությունը: Մոմը կհանգչի ասես իրոք ինչ-որ բան են լցրել վրան: Նշանակում է չոր սառույցի «հալվելու» ժամանակ առաջանում է ինչ-որ գազ, որով և լցվում է անոթը: Պարզ է, որ այդ գազը չի նպաստում այրմանը և, բացի այդ, ծանր է օդից, այդ պատճառով էլ հաջողվում է այն «թափել» անոթից: Դա ածխաթթվական գազն է:

Երբ կրակմարիչի փրփրաշիթը հրդեհի ժամանակ հանգցնում է բոցը ապա ջրի հետ միաժամանակ ազդում է նաև ածխաթթվական գազը: Այն մարում է կրակն:



այնպես, ինչպես հանգրեց մոմը մեր փորձի ժամանակ: Հենց այդ նույն ածխաթթվական գազն է հաճելիորեն ծակծկում լեզուդ, երբ գազով ջուր ես խմում

Ածխաթթվական գազը, ջրի մեջ լուծվելով, առաջացնում է ածխաթթու, որը շատ մետաղների հետ գոյացնում է հատուկ նյութեր՝ կարբոնատներ Դրանցից է մեզ բոլորիս լավ հայտնի սոդան նատրիումի կարբոնատը: Ածխաթթվի մյուս աղը կալցիումի կարբոնատը, բնության մեջ հանդիպում է հսկայական քանակությամբ և մի անգամից երեք ձևով կապիձ, կրաքար և մարմար: Այդ ապարների հզոր շերտերը հասնում են մինչև երկրակեղևի հաստվածքը, ուր ստորգետնյա խոր հորիզոնների ջերմությունը քայքայում է կարբոնատները, և անջատվում է ածխաթթվական գազ Դուրս ժայթքելով երկրակեղևի ճեղքերի և հրաբուխների խառնարանների միջով ածխաթթվական գազն ընկնում է մթնոլորտ Մարդկանց և կենդանիների շնչառության զանազան նյութերի այրման և փտման ժամանակ նույնպես անջատվում է ածխաթթվական գազ Այդ պրոցեսների հետեվանքով մթնոլորտ է արտանետվում մի լիարդավոր տոննաներով ածխաթթվական գազ, բայց և այնպես օդում այն մնում է համեմատաբար քիչ քանակությամբ


Մեզ համար դա շատ կարևոր է քանի որ ածխաթթվական գազը թունավոր է, և եթե այն օդում պարունակվեր նույնիսկ մի փոքր ավելի, ապա դա բավական կլիներ թունավորվելու համար

Նման տխուր ճակատագրից մեզ փրկում են կանաչ բույսերը, որոնց համար ածխաթթվական գազը հիմնական սնունդն է Տերևները կլանում են ածխաթթվական գազը և *ածխածնի ատոմներից* ու այլ նյութերից պատրաստում բույսին անհրաժեշտ ածխաջրեր, իսկ այդ բույսերով սնվում են կենդանիներն ու մարդիկ

Ահա և պարզվում է, որ առանց ածխաթթվական գազի ևս գոյություն ունենալ չես կարող: Այն անհրաժեշտ է *երկրի վրա* կյանքը պահպանելու համար

Ածխածին

Այս գրքում «ածխածին» բառը հանդիպում է բավական հաճախ կանաչ տերևի ու երկաթի, պլաստմասսաների ու բյուրեղների մասին պատմող և ուրիշ շատ գրույցներում Ածխածինը «ածուխ ծնողը»



քիմիական ամենազարմանալի տարրերից է Նրա պատմությունը *երկրի* վրա կյանքի առաջացման և զարգացման պատմությունն է, որովհետև ածխածինը մտնում է բոլոր կենդանի օրգանիզմների բաղադրության մեջ:

Իսկ ինչպիսի տեսք ունի ածխածինը:

Կատարենք մի քանի փորձ Վերցնենք *շաքարը* և տաքացնենք օդի բացակայությամբ: Սկզբում այն կհալվի կրառնա շագանակագույն, իսկ հետո կսևանա և կվերափոխվի ածխի Այդ ընթացքում կան ջատվի ջուր: Եթե հիմա ածուխը տաքացնենք *թթվածնի* ներկայությամբ, ապա այն կայրվի առանց մնացորդի և կվերափոխվի *ածխաթթվական գազի*: Նշանակում է, շաքարը կազմված է ածխից և ջրից Իսկ «շաքարի» ածուխը սև փափուկ փոշի է, որն էլ հենց մաքուր ածխածինն է որովհետև ածխաթթվական գազը ածխածնի միացությունն է թթվածնի հետ

Վերցնենք մոխրագույն փափուկ քարը գրաֆիտը: Դուք այն շատ լավ եք ճանաչում նրանից են պատրաստում հասարակ մատիտների միջուկաձողերը Եթե գրաֆիտը տաքացնենք թթվածնի ներկայությամբ այն ևս կայրվի առանց մնացորդի, չնայած մի քիչ ավելի դանդաղ, քան ածուխը. Իսկ փորձասարքում, որտեղ այն այրվում էր կմնա ածխաթթվական գազը Նշանակում է, գրաֆիտը նույնպես մաքուր ածխածին է:

Եթե այդ նույն փորձասարքում թթվածնի ներկայությամբ շիկացնենք ալմաստը, որը թափանցիկ, շողշողուն թանկարժեք քար է, բոլոր միներալներից ամենակարծրը, ապա այն նույնպես կայրվի փոխակերպվելով ածխաթթվական գազի Իսկ եթե ալմաստը

տաքացնենք թթվածնի բացակայությամբ, այն կվերափոխվի գրաֆիտի: Իսկ շատ բարձր ճնշումների և ջերմաստիճանների պայմաններում կարելի է գրաֆիտից ստանալ ալմաստ

Այսպիսով, գրաֆիտը և ալմաստը միև նույն տարրն են ածխածինը: Սակայն ավելի զարմանալի է այն նյութերի բազմազանությունը, որոնց բաղադրության մեջ ածխածին կա: Արդեն հայտնի են մոտ երեք միլիոն միացություններ, որոնց հիմքը ածխածինն է Նման բազմազանության պատճառն այն է, որ ածխածնի *ատոմները* կարող են ամուր կապերով միանալ միմյանց և ուրիշ ատոմների հետ առաջացնելով շղթայաձև, օղակաձև և այլ տեսքի բարդ *մոլեկուլներ*

Անսահման շատ են այն ձևերը, որոնք կարելի է կառուցել ածխածնի ատոմներից, ուստի և անսահման է նրա հնարավոր միացությունների թիվը: Դրանք կարող են լինել և շատ հասարակ նյութեր, օրինակ, այսպես կոչված լուսագազը մեթանը, որի մոլեկուլում ածխածնի մեկ ատոմը միացած է *ջրածնի* չորս ատոմների հետ: Բայց կարող են լինել այնպիսի բարդ նյութեր, որոնց մոլեկուլների կառուցվածքը դեռևս լրիվ պարզված չէ: Դրանցից են, օրինակ Երկրի բոլոր կենդանի օրգանիզմների հիմքը կազմող *սպիտակուցները*

Ակրոբատ

Կրկեսային արվեստի դպրոցներում տղաներն ու աղջիկները սովորում են մաթեմատիկա և աշխարհագրություն պատմություն և մայրենի լեզու, ֆիզիկա և կենսաբանություն, այն ամենը, ինչ պետք է իմանա մեր երկրի յուրաքանչյուր դպրոցական Բայց այստեղ կա առանձնահատուկ մի դաս, որ պարտադիր է հենց առաջին դասարանից: Դա ակրոբատիկան է

Երեխաները սովորում են կծկվել և գլուխկոնծի տալ, կանգնել ձեռքերի վրա և պահել հավասարակշռությունը շատ բարձր ցատկել և շրջվել օդում (այդպիսի ցատկը կոչվում է սալտո-մորտալե մահաթռիչք)

«Ակրոբատ» բառը հունարեն է և նշանակում է «քայլում եմ ոտքի մատների վրա», «մազլցում եմ վեր»:

Ակրոբատիկան կրկեսային վարպետության այբուբենն է Ամեն ոք, ով երազում է հանդես գալ *կրկեսի* ասպարեզում նախ և

առաջ պետք է սովորի կատարելապես տիրապետել իր մարմնին: Դրա համար էլ ակրոբատիկան անհրաժեշտ է և մարմնամարզիկին որ հենց կրկեսի գմբեթի տակ ճոճաձողից ճոճաձող է թռչում, և ճոպանի վրայով վազող լարախաղացին, և զանազան իրեր հեշտությամբ վեր-վեր նետող ժոնգլորին, և սրընթաց ձիարշավորդին, և, նույնիսկ, *ծաղրածուին* Ակրոբատիկան կրկեսային արվեստներից ամենահինն է

Բայց ինքը ակրոբատիկան էլ տարբեր է լինում: Ակրոբատիկական մի շարք համարներում գլխավորը զանազան բարդ ցատկերն են գետնից, ուստնակից կամ խաղընկերոջ ձեռքերից, մյուսներում մի խաղընկերը արագ կամ դանդաղ բարձրացնում է մյուսին, կամ էլ «ներքևի» խաղընկերը ձեռքերի կամ գլխի վրա է պահում «վերևի» երեք-չորս-հինգ խաղընկերների խումբը:

Մինչև վերջերս ակրոբատիկան միայն կրկեսային արվեստ էր Իսկ այժմ այն ճանաչված է նաև որպես մարզաձև: Մարզական ակրոբատիկայի ասպարեզում իրենց վարպետությամբ աչքի են ընկնում սովետական մարզիկները Միջազգային մրցումներում նրանք սովորաբար գրավում են մրցանակային տեղեր:

Մինչև 1974 թ նույնիսկ կրկեսային ակրոբատիկայի բարձրագույն նվաճումը կրկնակի շրջաթռիչքն էր առանց ուստնակի Իսկ 1974 թ ակրոբատիկայի ՍՍՀՄ չեմպիոնատում մինսկցի դպրոցական Վադիմ Բինդլերը աշխարհում առաջինը կատարեց եռակի շրջաթռիչք թափավազքով, մի բան, որն առաջ անհնարին էր համարվում

Ակրոբատիկայի «քառյակ» խմբակային ձևում 1978—1979 թթ ՍՍՀՄ գավաթի մրցանակակիրներ, իսկ 1978 թ ՍՍՀՄ չեմպիոններ են դարձել միջազգային կարգի սպորտի հայ վարպետներ Սերյոժա Բալասանյանը, Նորիկ Սարգսյանը, Արամայիս Ավդալյանը, Լևոն Ղազարյանը

1980 թ դպրոցականների համամիութենական 16-րդ սպարտակիադայում Հայաստանի պատանիների քառյակը դարձավ արծաթե մեդալակիր

Ակրոպոլիս

Հին հունական յուրաքանչյուր քաղաք իր բարձրադիր մասում ուներ պարիսպներով շրջապատված միջնաբերդ ակրոպո-

լիս: Ամենանշանավորը Աթենք քաղաքի Ակրոպոլիսն է. Հույներն այն կառուցել են մեր թվականությունից առաջ 5 դդ դարում, պարսիկներին հաղթելուց հետո.

Ակրոպոլիս էր տանում մուտքի սյունա զարդ շինությունը Պրոպիլեոնը: Այնտեղ էր գեղանկարչության թանգարանը՝ Պի նակոթեկեն Ակրոպոլիսի կենտրոնում Պրոպիլեոնի դիմաց, իմաստության աստ վածուհի Աթենասի բրոնզե հսկայական արձանն էր սաղավարտով և նիզակով: Նա, ասես, աչալուրջ ու խստահայաց դի տում էր շուրջը: Աթենասի արձանից դեպի աջ նրան նվիրված մարմարայուն հոյա կապ տաճարն էր Պարթենոնը. Տաճարի տանիքի թեք լանջերի միջև ընկած եռանկյունիները զարդարված էին քանդակներով: Մի կողմում պատկերված էր Աթենասի և ծովերի աստված Պոսեյդոնի վեճը քաղաքին իշխելու համար Առասպելը պատմում է, որ Պոսեյդոնը եռաժանիով խփեց ժայռին և քարից աղբյուր բխեց: Աթենասը խփեց նիզակով և ձիթենի աճեց: Քաղաքի հովանավորը դարձավ Աթենասը, քանի որ նրա ընծան ավելի օգտակար համարվեց

Պարթենոնի պատերին սյունաշարերի ետևում ձգվում էր բարձրաքանդակների մի շարք որը պատկերում էր Աթենասի

տոնին արթնացիների երթը դեպի Ակրոպոլիս.

Հույներն ամենից շատ հպարտանում էին Աթենասի մյուս արձանով, որ դրված էր Պարթենոնի ներսում Աստվածուհու դեմքն ու ձեռքերը փղոսկրից էին, իսկ հագուստն ու մազերը զուտ ոսկուց. .

Ակրոպոլիսի երրորդ շենքը Էրեքթեոնի տաճարն է, որ կառուցվել է Աթենասի և Պոսեյդոնի պատվին Էրեքթեոնի բակում ըստ ավանդության, այն նույն տեղում, ուր նիզակով հարվածել է Աթենասը, մի ձիթենի է աճում: Տաճարի ներսում խոր ակոսով մի քարածայռ կա: Քրմերը հավատացնում էին, որ դա Պոսեյդոնի եռաժանու հետքն է

Աղ

Ամեն մի սննդամթերք նույնիսկ հացը կարելի է փոխարինել մեկ ուրիշով Բայց առանց աղի ապրել հնարավոր չէ Աղը միակ սննդամթերքն է որը ոչնչով չի փոխարինվում: Բժիշկները պարզել են որ մարդու օրգանիզմում առանց աղի խախտվում է նյութափոխանակությունը Երբ կենդանի էակը աղ չի ստանում մահանում է:


Բարեբախտաբար բնությունը բավականաչափ աղ է կուտակել:

Վաղուց ի վեր մեր երկրում քարաղը արդյունահանում են Դոնբասում, Ղազախստանում Ուրալում և այլ վայրերում Գետնի տակից աղը հանելու համար խոր հանքահորեր են փորում և դրանք միացնում ստորգետնյա միջանցքներով Հողի տակ գտնվող աղի շերտերը հասնում են մեկ, նույնիսկ մեկուկես կմ հաստության երկար ժամանակի ընթացքում աղը խիստ ամրացել է այդ պատճառով էլ այն անվանում են քարաղ

Աղը արդյունահանում են ոչ միայն գետնի տակից, այլև ցամաքած լճերի հատակից և այն աղի լճերից, որոնք դեռևս չեն ցամաքել: Մեքենաները լճերից արտածում են ջուրը, գոլորշիացնում, և մնում է մաքուր, սպիտակ աղը Մեզ մոտ նման ձևով աղն արդյունահանում են Էլտոն և Բասկունչակ լճերից: Սովետական Միությունում օգտագործվող աղի գրեթե կեսը արդյունահանում են Բասկունչակ լճից Իսկ մեր հանրապետությունում աղ արդյունահանում են հանքահորեր փորելու եղանակով Երևանի հյուսիս-արևելյան մասում գտ-



Այսպիսի տեսք ունի Աթենքի Ակրոպոլիսն այսօր: Նրա ավերակներից մենք կարող ենք պատկերացնել թե ինչպիսին էր նա հին հույների ժամանակ. Իսկ այս պատկերում լավ երեվում է թե ինչպես էին դասավորված Աթենքի Ակրոպոլիսի կառույցները:





նըվող Ավանի աղահանքից, որտեղ քար աղի պաշարները կազմում են մոտ 29 մլն տոննա

Աղի մասին կան իմաստուն խոսքեր Այսպես օրինակ ժողովրդի մեջ լայն տարածված է «աղ ու հաց» արտահայտությունը, որը խորհրդանշում է բարեկամություն հյուրընկալություն:

Աղայան Ղազարոս Ստեփանի

1840 —
1911

«Կարծես հեքիաթների միջից եկած մեր իրականության մեջ քայլող մի գորապետ իշխան լիներ լեռների քաջ որսկան աշխարհե աշխարհ կտրող քարավանապետ

.. Կարելի է ասել, որ նա իր կյանքում երբեք չհիասթափվեց, միշտ մնաց ոգևորված հավատով»: Այսպիսին է Ղազարոս Աղայանը Ավետիք Իսահակյանի հուշերում:

Աչքը բաց արեց նա Բոլնիս-խաչենում (այժմ Վրացական ՍՍՀ ում) ու իր շուրջը վաղ հասակից տեսավ դառնություններ խավարի թագավորություն երբ զգաց, որ խավարի այդ աշխարհում «լուսավոր մարդուն լապտերով են փնտրում», երգվեց նվիրվել իր ժողովրդի լուսավորության շնորհակալ գործին: Աշխատեց ու սովորեց քաղաքից քաղաք ման եկավ, փորձով ու գիտելիքներով զինվեց, դասագրքեր կազմեց ուսուցչություն արեց և գրաձանաչություն սովորեցրեց հայ մանուկներին


Ղազարոս Աղայանը լինելով ժողովրդի ցավերի ու վշտերի երգիչ, գյուղացու հոգսերը դարձրեց իր ստեղծագործության առանցքը, ժողովրդի ճակատագիրը համարեց իրենը: 1900-ական թվականներին

թիֆլիսում Թումանյանի նախաձեռնությամբ ստեղծված «Վերնատուն» գրական խմբակի շունչ ու ոգի տվող գրողներից էր նա որին նահապետ էին ասում:

Բնության պատկերների զարմանալի զգացողություն ուներ Աղայանը և նկարչի նուրբ դիտողականությամբ կարողանում էր գրչով նկարել պատկերը դարձնել այն շոշափելի և տեսանելի:

Աղայանի պոեզիայում առանձնահատուկ տեղ են գրավում «Հիշողություն», «Ճախարակ», «Սերմնացան» բանաստեղծությունները: Քնքուշ ու հեզ մանուշակի բերանով անգամ Աղայանը բողոքում է անարդարության դեմ Կոշտ ձեռքերով ու կոպիտ ճանկերով մայր հողից պոկված մանուշակը վշտացած է ու համոզված որ ինքը երկար չի ապրի աշխարհում քանի դեռ կան անգութ մարդիկ («Մանուշակ»)

Ղազարոս Աղայանը գրականության պատմության մեջ մտավ որպես մանկական գրող: Մեկ դարից ավելի է, Աղայանի «Արեգակ» «Առավոտը գյուղում», «Ճախարակ» և ուրիշ շատ ոտանավորներ գարդարում են դպրոցական դասագրքերը: Մանկական աշխարհը Աղայանի ստեղծագործական տարերքն էր



Կյանքում տառապանք ու վիշտ տեսած գրողը մանուկների համար ստեղծում էր ուրախ ոտանավորներ պատմվածքներ ու հեքիաթներ («Հնձվորները», «Տիկնիկի» «Գյուլնազ տատի հեքիաթը», «Խելքն ու բախտը», «Ծույլ տղա», «Դանակով»)


«Անահիտ» հեքիաթը դարձավ հայ հեքիաթագրության հիմնաքարը: Հեքիաթի

վերջում հեղինակն ինքն է պարզաբանում նրա բուն իմաստը « Ինչ որ արել են Վաչագանն ու Անահիտը իրենց աշխարհի համար այդ բանը հեքիաթի ձևով պատմում են մինչև այսօր էլ Այդ հեքիաթի գլխավոր միտքն այն է, որ թագավորի կյանքը արհեստն է փրկել»:

Աղայանն իր հեքիաթներով ընթերցողի ձեռքից բռնած տանում է կախարդական աշխարհներով շունչ ու կենդանություն տալիս քարացած անապատներին ու մարդկանց («Արեգնագան կամ կախարդական աշխարհ» և «Հազարան բլբուլ») հրեղեն Պեգասին նստած սավառնում է երկնքում ամպերից բարձր և հաղթում զարհուրելի վիշապին («Վիշապին հաղթողը»), ուրախանում եղեգնից ծնված ազնիվ ու անմեղ աղջկա բախտով («Եղեգնուհի»): Անարդարությունն ու չարը կործանելու համար Աղայանը, օգտագործելով ժողովրդական ավանդությունը կերտում է գերմարդկային ուժի ու խելքի տեր Տորք Անգեղի կերպարը («Տորք Անգեղ»):

Աղայանը, բարձրանալով իր ժամանակի հետամնաց ու խավար իրականությունից, իր ընթերցողների համար գեղեցիկ կյանք է պատկերում, իր հնարած պատմություններով ու հերոսների արարքներով մտածել տալիս մի նոր աշխարհի ու նոր մարդու մասին:

Աղայանի անունով դպրոցներ ու փողոցներ կան Երևանում և այլուր:



Աղավնի

Լինում է, արդյոք, թռչնի կաթ Դուք, անշուշտ, կպատասխանեք, թե չի լինում: Չէ որ թռչնի կաթը հիշատակվում է իբրև անհնարին մի բան: Եվ այնուամենայնիվ, թռչնի կաթ կա Երբ աղավնիները ձագեր են ունենում, նրանց կտնառքում (զոբում) գոյանում է թանձր կաթի կամ ջրիկ կաթնաշոռի նման մի զանգված: Այդ «կաթով» էլ հենց նրանք կերակրում են աղունիկներին:

Բայց աղավնին հռչակված է ճանապարհը ճիշտ գտնելու և, նույնիսկ, շատ հեռավոր (500 կմ և ավելի) վայրերից վերադառնալու կարողությամբ:

Փոստային աղավնին հարյուրավոր տարիներ ծառայել է մարդկանց: Այժմ երբ լուրերը տեղ են հասնում ռադիոյի և հեռագրի, գնացքների ու ինքնաթիռների միջոցով, աղավնային փոստը կորցրել է իր

Ընտանի
աղավնիներ

նշանակությունը: Սակայն հենց վերջերս, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ, աղավնիներին օգտագործում էին տեղեկությունները տեղ հասցնելու համար Ճապոնիայում բուծել էին անգամ նոր ցեղի աղավնիներ որոնք ընդունակ էին թռչելու գիշերը թռնամին չէր կարող տեսնել և սպանել օդային փոստատարին նա չէր դառնում նաև ցերեկային գիշատիչ թռչունների զոհը:

Փոստային, դեկորատիվ, մսատու աղավնիները մարդը բուծել է արհեստական ճանապարհով սրանք ընտանի թռչուններ են Բայց քիչ չեն նաև վայրի աղավնիները Սովետական Միության անտառներում, օրինակ, ապրում են հոբալներ, անտառաղավնիներ, տատրակներ, որոնք նույնպես աղավնիներ են նրանք տարբեր գույն ունեն, տարբեր չափեր, բայց նման են օրգանիզմի կառուցվածքով ու ապրելա-

կերպով Նրանք բոլորն էլ իրենց ձագերին կերակրում են «թռչնի կաթով», բոլորն էլ հատիկակեր թռչուններ են թռչում են հոյակապ և լավ քայլում գետնին


Աղվես

Հեքիաթներում աղվեսը միշտ խելացի է խորամանկ ճարակորեն խաբում է մարդկանց ու գազաններին: Բայց այդպես է արդյոք իրականում: Եթե պետք է փրկել սեփական կյանքը կամ սնունդ հայթայթել աղվեսն իր հնարամտությամբ իհարկե գերազանցում է շատ կենդանիների բայց այնուամենայնիվ նա ամենախորամանկ և նույնիսկ ամենազգույշ գազանը չէ

հետ, կամ պատահաբար գտնի նրա թաքցրածը, կամ էլ անսպասելի հանդիպի փոքրիկ նապաստակի: Աղվեսն ուտում է թե գորտեր ու մողեսներ, թե խոշոր միջատներ կարող է ավերել գետնին ապրող թռչնի բույնը Սակայն նրա հիմնական կերը դաշտամկներն ու մկներն են: Տարվա ընթացքում աղվեսը ոչնչացնում է մի քանի հազար մուկ իսկ իր ձագուկների հետ երկու-երեք անգամ ավելի Դրանով նա մեծ օգուտ է բերում, որովհետև այդ կրծողները մեծապես վնասում են գյուղատնտեսությանը:

Ամռանն աղվեսը սնվում է նաև բույսերով

Աղվեսի ձագուկները որ լինում են 3-ից մինչև 10 հատ և ավելի ծնվում են գարնանը կամ ամռան սկզբին Նման ըն-



- ակար
- աղվեսն
- ձագուկի

Աղվեսը շատ հետաքրքրասերն է, նրան ամեն ինչ հետաքրքրում է երբեմն հետաքրքրասիրությունից դրդված, նույնիսկ արհամարհում է զգուշությունը եվ եթե չլինեին նրա քողարկվելու հմտությունը, սուր լսողությունը, տեսողությունն ու հոտառությունը, վատ կլինեի շեկիկի բանը Փորձանքից նրան հեռու է պահում հատկապես հոտառությունը թշնամու հոտը նա զգում է դեռ հեռվից և հասցնում ժամանակին փախչել կամ թաքնվել: Իսկ լսողությունն օգնում է կեր հայթայթելու Չմռանն աղվեսն զբաղվում է մկներ որսալով քայլում է ետևի թաթերին հենված ցատկոտում, պտույտներ գործում: Նայողին թվում է թե աղվեսը պարում է Իրականում նա ականջ է դնում ձյան տակ վազվզող մկներին Ամենաթույլ ծվծվոցից էլ աղվեսը գտնում է մկանը:

Աղվեսը դժվարությամբ է հետապնդում ու հասնում նապաստակին և այն կարծիքը թե իբր, աղվեսը շատ նապաստակներ է ոչնչացնում, ձիշտ չէ Թերևս միայն հանկարծակի դեմառդեմ դուրս գա շղիկի

տանիքը կերակրելը հեշտ չէ, և երկու ծնողներն էլ անդադրում «աշխատում են»: Չորս ամսականում արդեն աղվեսի ձագուկները դառնում են ինքնուրույն և հեռանում ծնողներից: Այդ պահից թե քահել և թե ծեր աղվեսներն սկսում են ապրել միայնակ, թափառական կյանքով, մինչև հաջորդ գարուն եթե իհարկե ամռանը չեն ընկնում որսորդի ձեռքը չէ որ աղվեսը գեղեցիկ ու թանկարժեք մորթի ունի

Գազանաբուծական սովետական տնտեսություններում բուծում են արհեստական

ճանապարհով ստացված սև արծաթափայլ աղվեսներ: Նման տնտեսություն կանան Հայաստանում (Գուգարքի շրջանում)

Աճառյան Հրաչյա Հակոբի

1876 —
1953

1885 թ իննամյա մի տղա պայուսակը ձեռքին հոր ուղեկցությամբ ոտք դրեց Կոստանդնուպոլսի Սամաթիայի թաղային վարժարանի շեմին: Կոստանդնուպոլսն այն ժամանակ Թուրքիայի մայրաքաղաքն էր ուր վաղուց ի վեր ապրում էին շատ հայեր և ուր գործում էին բազմաթիվ հայ գրողներ արվեստագետներ գիտնականներ: Պատանու հայացքն ընկավ դիմացի պատին գրված նախադասությանը՝ «Ծանիր գրեզ» («Ճանաչիր քեզ»):



Եվ նա ճանաչեց իրեն իր կոչումը գտնելով գիտության մեջ: Հենց աշակերտական նստարանից ի հայտ եկան նրա փայլուն ընդունակությունները Դպրոցում ավանդվող առարկաներից ամենից շատ սիրում էր հայոց պատմությունը և արտակարգ հետաքրքրություն ցուցաբերում լեզուների նկատմամբ Դեռ վաղ պատանության տարիներից նա սկսեց լեզուներ սովորել:

Հունարենն ու եբրայերենը սովորում է մանրավաճառներից: «Մեր փողոցի ծայրին մի հույն նպարավաճառ կար — տարիներ հետո հիշում է ինքը — խնդրեցի

նրանից, որ տա ինձ հունարեն այբուբենը սովորեցի բոլոր տառերը և այդ փոքր հասակիս ազատ կարդում էի հունարենը Մի քանի փողոց այն կողմ մի հրեա փերեզակ կար, որից երբեմն գնումներ էինք անում Փերեզակը սպիտակ մորուքով պատկառելի և բարի ծերունի էր Ակնոցը աչքերին, գլուխը կախած գրքերի վրա, և ըստ իրենց սովորության միշտ օրորվելով, կարդում էր: Նրանից էլ խնդրեցի, որ տա ինձ եբրայական այբուբենը իրենց անուններով և արժեքով 22 տառերը գրեց մի թերթի վրա և ես արագությամբ սովորելով, եբրայերենն էլ էի կարդում»: Այնուհետև մի ծերունի լազից (լազերը վրացիներին ցեղակից ժողովուրդ են) սովորում է լազերենը գրում նրա քերականությունը, որը 1897 թ ներկայացնում է Փարիզի լեզվաբանական ընկերությանը և արդեն 21 տարեկան հասակում ընտրվում այդ ընկերության անդամ

Այդ պատանին Հրաչյա Աճառյանն էր որը հետագայում դարձավ աշխարհահռչակ գիտնական հայ ամենախոշոր լեզվաբանը:

Դեռ 15 տարին չբոլորած Հրաչյան մեկնում է Փարիզ և ընդունվում Սորբոնի համալսարանը, ուր աշակերտում է ֆրանսիացի նշանավոր հայագետ Անտուան Մեյեին Այնուհետև գերմանացի հայագետ Հայնրիխ Հյուբշմանի հրավերով գնում է Գերմանիա լսելու նրա դասախոսությունները:

Ծանր է եղել ապագա գիտնականի կյանքը Ուսումնառության տարիներին նա շատ զրկանքներ է կրել Ամբողջ օրը համալսարանում դասախոսություններ լսելուց հետո նա հարկադրված էր երեկոները լրագրեր վաճառել մի քանի ֆրանկ վաստակելու և իր գոյությունը պահպանելու համար: Ինչպես եվրոպայում սովորելու տարիներին այնպես էլ աշխատանքային գործունեության ընթացքում Աճառյանը անդադրում հետևողականությամբ սովորում էր նորանոր լեզուներ, խորանում լեզուների ուսումնասիրության մեջ: Նա գիտեր ֆրանսերեն անգլերեն գերմաներեն, իտալերեն, պարսկերեն ինչպես նաև բազմաթիվ չօգտագործվող լեզուներ (լատիներեն սանսկրիտ և այլն) որ գիտության մեջ կոչվում են մեռած լեզուներ

Քաջատեղյակ լինելով աշխարհի շատ լեզուների Աճառյանը գրել է «Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատությունը որը եզակի երևույթ է

համաշխարհային լեզվաբանական գրա կանոնության մեջ Նա է կատարել հայ բարբառների առաջին գիտական դասա կարգումը Մնայուն ու եզակի ուսումնա սիրությունն է նրա «Հայերեն արմատա կան բառարանը» (7 հատորով) որի մա սին Ա Մեյեն ասել է «Ոչ մի լեզվի համար չկա այսքան ճոխ այսքան կատարյալ ստուգաբանական բառարան»

Հայագիտության համար անչափ կարե վոր և արժեքավոր է Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը» (5 հատո րով) որտեղ հավաքված և ուսումնասիր ված են 5—13-րդ դարերում հայ մատե նագրության մեջ հիշատակված բոլոր անձնանունները

Եթե քո անունը Վարսենիկ է Տիգրան կամ Վարոս, ապա այդ բառարանից դու կարող ես իմանալ, որ Վարսենիկ անունը հայերեն վարս բառից է ծագել, Տիգրանն իրանական ծագում ունի, իսկ Վարոսը լա տինական, և հետո թե ինչ են նշանակում այդ անունները և պատմական նշանավոր անձնավորություններից ովքեր են կրել դրանք

Մեծ են Աճառյանի գիտությանը մատու ցած ծառայությունները: Նրա գիտական ուսումնասիրությունները մի յուրատեսակ համալսարան են հայագիտությամբ զբաղ վողների համար:

Աճառյանը 1923 թվականից մինչև իր կյանքի վերջը դասախոսել է Երևանի համալսարանում. Նա Հայաստանի գիտու թյունների ակադեմիայի հիմնադիր ան դամներից էր Նրա անվամբ է կոչվում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտը և Երևանի դպրոցներից մեկը փողոց Երևանում

Ամբարձիչ կռուկ

Շենք է կառուցվում Կառույցում աշխա տում են բազմաթիվ ու բազմատեսակ մե քենաներ: Բայց դրանց մեջ ամենագը խավորը ամբարձիչ կռուկն է: Դեռ հեռ վից երևում է շենքից ավելի վեր խոյացած նրա պողպատե ցանցկեն աշտարակը Ամ բարձիչ կռուկը բետոնե ծանր սալեր հե ծաններ, աղյուս, ցեմենտի շաղախ է բարձ րացնում գետնից և ասես, երկար ձեռք հիշեցնող իր սլաքով մատուցում շինարար ներին: Օրեցօր ավելի է բարձրանում շեն քը «հասակ է առնում» նաև ամբարձիչ

կռուկը, ավելի ու ավելի վեր է շարժվում նրա աշտարակը

Աշտարակի ամենավերևում խցիկում նստած է կռուկավարը Նա հանգիստ կառավարում է ամբարձիչ կռուկի մեխա նիզմները: Ահա միացրեց մի շարժիչը, և սահուն վեր լողաց ծանր սալը, միացրեց մյուսը պատվեց ամբարձիչ կռուկի սլաքը և սալը ճիշտ իր տեղը հասցրեց:


Բայց բեռը բարձրացնելուց առաջ հարկավոր է այն հուսալիորեն կախել ամբարձիչ կռուկի կեռից: Ամենքին չէ, որ վստահում են այդ պատասխանատու աշ խատանքը: Դրանով զբաղվում են հատուկ բանվորներ, որոնք ձեռքի շարժումներով կռուկավարին ցույց են տալիս, թե ինչ պես բարձրացնել և ուր հասցնել բեռը

Բազմապիսի ծանր աշխատանքներ է կատարում ամբարձիչ կռուկը: Մեկ հարկավոր է նոր տեղ տնկել մեծ ծառը, մեկ խրամուղու մեջ տեղադրել հաստ խողո վակները: Եվ ավտոմոբիլին տեղադրված ամբարձիչ կռուկն ամենուր հասնում է Գալիս է, ամբարձիչ թաթերով հենվում գետնին և անցնում աշխատանքի

Ավտոամբարձիչին ճանապարհ է հար կավոր: Իսկ այնտեղ, ուր ճանապարհներ դեռևս չկան, աշխատում են թրթուրավոր ամբարձիչները. Նրանց համար սարսա փելի չեն ոչ առուները, ոչ ցեխը, ոչ ավազը Իսկ եթե անհրաժեշտ է ծովափն ամրացնել բետոնե մեծ սալերով ապա բուքսիրն աշ խատանքի վայր է քարշ տալիս լողացող ամբարձիչ կռուկը

Ջանազան երկրներից բազմաթիվ նա վեր են գալիս ծովային նավահանգիստներ: Մարդատար նավերի բեռը թեթև է. դրանք բեռնաթափում են հենց նավամատույցում տախտակամածին տեղադրված ամբարձիչ կռուկներով Իսկ մեծ նավերը մտնում են բեռնատար նավահանգիստ: Այստեղ նա վահանգստային ամբարձիչների սլաքնե րը անընդմեջ խոնարհվում են նավին, որպեսզի նրա ամբարներից դուրս բերեն ծանր բեռնարկղերն ու տեղադրեն երկա թուղային բաց վագոնների կամ ավտոմո բիլների վրա

Գործարաններում և ֆաբրիկաներում նույնպես հնարավոր չէ աշխատել առանց ամբարձիչ կռուկների: Մեքենաների մա սերը շատ ծանր են լինում, ձեռքով չես բարձրացնի Դրա կարիքը չկա էլ Դրա համար կան և հզոր ամբարձիչ հեծաններ որոնք տեղափոխում են ամենածանր բեռ ները, և ձեռքի պարզ էլեկտրական կա րապիկներ վերհան մեքենաներ, որոնց ան-



վանում են տելֆերներ Այսպես, մարդկանց օգնելով, աշխատում է ամբարձիչ կռունկների փառապանծ ընտանիքը

Ամենամեծն աշտարակային կռունկն է նավահանգստային ամբարձիչը նավահանգստում բեռներ է տեղափոխում նա վամբար Պողպատե կամուրջ հիշեցնող կամրջային ամբարձիչը կիրառվում է գործարանի արտադրամասերում Ավտո ամբարձիչը և թրթուրավոր ամբարձիչը մարդկանց օգնում են բազմաթիվ աշխատանքներ կատարելիս: Բեռներ փոխադրելու համար օգտագործում են նաև ուղղաթիռներ

Ամերիկա

Ամերիկան աշխարհամաս է, որը զըտնըվում է Արևմտյան կիսագնդում, Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև

Բաժանվում է երկու մայր ցամաքի Հյուսիսային Ամերիկայի և Հարավային Ամերիկայի: Նրանց միջև սահմանն անցնում է Պանամայի պարանոցով:

Երկու մայր ցամաքի բնիկներն էլ հընդկացիներն են: Բայց Ամերիկայում հնդկացիներ շատ քիչ են մնացել: Ժամանակակից ամերիկացիները նվաճողների եվրոպացի վերաբնակիչների, սերունդներն են Նրանք խոսում են, հիմնականում, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն և պորտուգալերեն

Գեղեցիկ ու բազմազան է Հյուսիսային Ամերիկայի բնությունը: Եվ շատ բան այստեղ ծանոթ է մեզ մայր ցամաքն ընկած է համարյա նույն բնական գոտիներում, ինչ և մեր երկիրը: Ծայր հյուսիսում, Սառուցյալ օվկիանոսի ափերին, տունդրան է, ուր բռնկվում են բնեռափայլերը Ավելի հարավ սկսվում են խիտ անտառները: Հատկապես հիասքանչ են Կանադայի ողջ աշխարհում հռչակված թխկիների անտառները: Զրառատ գետերը հոսում են ռուսական տափաստանները հիշեցնող հարթավայրերով Միայն թե այստեղ դրանց անվանում են պրերիաներ

Կան նաև մեզ համար զարմանալի շատ բաներ: Հանապարհորդին ապշեցնում են կակտուսների մացառուտները Մեքսիկայում Բայց առանձնահատուկ տպավորություն են թողնում սեբվոյաները մեծ և շատ հին ծառերը Այն անտառները, ուր աճում են հազվագյուտ ծառեր, արգելանոցներ են հայտարարված, որոնց այստեղ անվանում են ազգային պարկեր:

ԱՄՆ-ի արևմուտքում, այնտեղ, ուր հոսում է Կոլորադո գետը, կա ազգային մի պարկ քարերի թագավորությունը Երկար դարերի ընթացքում գետի ջրերն ու բնության այլ երևույթներ առաջացրել են հարյուրավոր մետր խորությամբ հսկայական, սանդղավոր մի կիրճ Մեծ կանխոնը Դրանք քայքայել ու ողողահարել են ապարները արտասովոր ձևեր տալով ժայռերին ու իջվածքներին Մայրամուտի կամ արևածագի ժամանակ հսկայական ժայռերը մեկ հինավուրց ամրոցներ են հիշեցնում մեկ ֆանտաստիկ կենդանիներ: Մեծ կանխոնը հատում է մայր ցամաքի հյուսիսային շըրջաններից մինչև նրա ամենահարավային

Սողոակը տուըը հանդիպում է միայն Կենտրոնական և Հարավային Ամերիկայում Ապրում է ծառերի կա տարներին, սնվում պը տուղներով




Ծառագորտը Կենտրոնական Ամերիկայում ապրող երկկենցաղների ներկայացուցիչն է



ՀՅՈՒՄՆԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ ՀՅՈՒՄՆԱՅԻՆ ՍԱՌՈՒՅՅԱԼ

ՕՎԿԻԱՆՈՍ





Ամերիկյան մասը ձգվող վեհասքանչ Կորդիլիերաների մի մասը ժայռոտ լեռները

Լեռներում կան գործող և հանգած հրաբուխներ Բարձր լեռնաշղթաները հատկապես հյուսիսում պատված են հա վերժական ձյունով ու սառցադաշտերով

Հյուսիսային Ամերիկայի օգտակար հա նածոներն են գազը, նավթը ածուխը երկաթը պղինձը ոսկին արծաթը

Հյուսիսային Ամերիկայի բնության հրաշալիքներից է նաև Մեծ լճերի շղթան Իրար միացած հինգ հսկայական թասեր առաջացնում են անուշահամ ջրի ամբողջ մի ծով Ջրանցքով և Սուրբ Լավրենտիոս գետով նրանք միացած են օվկիանոսին: Վերին լիճը Երկրի ամենամեծ լիճն է (եթ չհաշվենք աղի Կասպիցը)

Երկու լճերի միջև ընկած Նիագարա գետի վրա է հռչակավոր Նիագարայի ջրվեժը Մյուս գետը Միսսիսիպին իր Միսսուրի վտակով, աշխարհի ամենամեծ գետերից է

Պական հետաքրքիր ու բազմազան չէ Հարավային Ամերիկայի բնությունը Ամ



Եղևնի



Շաքարաթխի



Հսկա սեբվոյա



Կակտոս



Արմավենի



Խոսցուլ



Բիզոն



Որմզդեղն



Եղջերու



Հյո սիսախն եղջերու



Եղանանդջուր այծքաղ



Եռնախն ոչխար



Գորշ արջ



Նպիտակ արջ



Բնեռային աղվես



Լուսան



Գայ



Գագետնագայլ կոյոտ



Ջրառջ



Մոյ



Բնեռային բու



Տունդրայի կաքավ



Հավալուսն




Փղկ



Շնածուկ



Ջողածուկ



ՀԱՐԱՎԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Կուրս կղզի

Հայտնի կղզի

ԿԱՐԻՅԱՆ ՄՈՎ



Օրինակի գետ



Ռիո Ենեբոլ գետ




Հասարակած



Արմալենի



Ամերիկյան հովազ (յագուար)



Գետակինն



Վիշապ



Լամա



Կոատա կառչնապոչ կապին



Շնածո կ



Սառնուկի գետ




Մարկոնո գետ



Սան Ֆրանցիսկո գետ



Մոնտեմորանտես



Արոնկադուա կնո 6960



Պարանա գետ



Ռիո Ենեբոլ գետ



Մագելանի նեղուց



Մագելանի նեղուց

Հրո երկիր կղզի

Հոուն հովանդան



Հնդկանշենի



Կակտուս



Կառչնապոչ կոնչակապիկ



Կատվառյուծ



Մրջնակեր



Վայրի խոզ (պեկարի)



Կոկորդիլոս



Զրահակիր



Նանդու ջայլամ



Արա թուրթակ





Փոկ



Պինգվին

Մասշտաբ 1 : 40 000 000



Նանդուն ամերիկյան ջայլամ է բնակվում է Հարավային Ամերիկայի հարթավայրային և լեռնային տափաստաններում


բողջ մայր ցամաքով արևմուտքից մինչև արևելք, ձգվում է Ամազոն հսկայական գետը, որն ունի 500-ից ավելի վտակ Արևադարձային անտառները սելվասները, որոնք շրջապատում են Ամազոնը, լի են միայն այդ վայրերում բնակվող կենդանիներով ու աճող բույսերով Օրինակ, այստեղ է ապրում անակոնդա հսկայական օձը Իսկ Ամազոնի ջրերում իրենց որսին են դարանակալում պիրանիա գիշատիչ ձկները Դրանց վտառը մի քանի վայրկյանում կարող է հոշոտել մարդուն կամ կենդանուն:

Հարավային Ամերիկայում կան չուսումնասիրված բազմաթիվ շրջաններ, որով հետև սելվասների անանցանելի թավուտները փակում են մարդու ճանապարհը Ամազոնը և մյուս գետերը՝ Օրինոկոն, Պարանան, Պարագվայը երբեմն միակ «ճանապարհներն» են այդ վայրերում

Մայր ցամաքի հյուսիսից մինչև հարավ ձգվում է Անդեր լեռնաշղթան Ինկերի հին բնիկների, լեզվով «անդեր» նշանակում է «պղնձե լեռներ»: Անդերի բազմաթիվ գագաթներ, օրինակ Սան Պեդրոն, Կոտոպակսին, հրաբուխներ են: Դրանց ժայթքումը և երկրաշարժերը բազմաթիվ աղետներ են բերում մարդկանց


Լեռներում արդյունահանում են անագ և պղինձ, երկաթ և մանգան ոսկի և արծաթ, ալմաստներ, կապար և նավթ:

Լեռնաշղթաներն անցնում են Հարավային Ամերիկայի շատ երկրներով՝ եվ բազմաթիվ քաղաքներ գտնվում են ծովի մակերևույթից մի քանի հազար մետր բարձրության վրա Օրինակ Լա Պասը Բուիվիա պետության մայրաքաղաքը գտնվում



է ծովի մակերևույթից 4500 մ բարձրու
թյան վրա: Դա աշխարհի «ամենաբարձր»
մայրաքաղաքն է

Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ԱՄՆ)



Ամերիկայի Միացյալ Նահանգները Արևմտյան կիսագնդի խոշոր երկրներից է ևրա գրեթե ողջ տարածքը գտնվում է Հյուսիսային Ամերիկայում: ԱՄՆ-ի արևելյան ափերը ողողում են Ատլանտյան, իսկ արևմտյանը Խաղաղ օվկիանոսի ջրերը:

ԱՄՆ ի կլիման հիմնականում բարեխառն է ու մերձարևադարձային: Կան նաև արևադարձային կլիմայով վայրեր՝ Հավայան կղզիները (ԱՄՆ ի նահանգներից) Խաղաղ օվկիանոսում Իսկ Ալյասկա հյուսիսային նահանգում ձմռանը լինում է արկտիկական սառնամանիք:

Երկրի կենտրոնական մասի հարթավայրերն արևմուտքում փոխվում են վեհա սքանչ, ձյունապատ լեռնագագաթներով ժայռոտ լեռների, իսկ արևելքում ոչ շատ բարձր լեռների Ապալաչների:

Լեռների հատկապես Ապալաչների ընդերքը հարուստ է քարածխով, նավթով, բնական գազով, երկաթի գունավոր մետաղների հանքաքարով և այլ օգտակար հանածոներով Ամենախոշոր գետերն են Միսսիսիպին և ևրա վտակ Միսսուրին

Եվրոպացիներն սկսել են Հյուսիսային Ամերիկա գաղթել դեռևս 16-րդ դարում այն բանից հետո երբ Կոլումբոսը հայտնագործեց Ամերիկան Նրանք անողոքաբար բնաջնջում էին հնդկացիներին ամերիկյան մայր ցամաքի բնիկներին Ողջ մնացած հնդկացիները վտարվեցին դեպի անբերրի, ամայի տարածություններ արգելաբնակավայրեր ԱՄՆ-ում ապրում են նաև նեգրեր, որոնք բռնությամբ Աֆրիկայից Ամերիկա բերված նախկին ստրուկների սերունդներն են: ԱՄՆ-ում վաղուց արդեն ստրկություն չկա, բայց նեգրերն այժմ էլ ամերիկյան ամենաճնշված ու իրավազուրկ քաղաքացիներն են Նեգր գործազուրկներ ավելի շատ կան քան սպիտակամորթ: Սովորաբար նեգրերն ապրում են ամերիկյան քաղաքների ամենաանբարեկարգ, առանձնացված թաղամասերում գետտոներում: Հաճախ նեգր երեխաներին չի թույլատրվում սովորելու այն դպրոցներում ուր սովորում են սպիտակամորթ երեխաները:

րում ուր սովորում են սպիտակամորթ երեխաները:

17-րդ դարում վերաբնակիչները (հիմնականում, անգլիացի) Ատլանտյան օվկիանոսի ափին հիմնադրեցին իրենց բնակավայրերը գաղութները: 18 րդ դարի վերջին 13 գաղութ ազատագրվեց անգլիացիների տիրապետությունից և ստեղծվեց անկախ պետություն Ամերիկայի Միացյալ Նահանգների հանրապետությունը: Դրա համար էլ ԱՄՆ-ի պետական դրոշի վրա կան սպիտակ ու կարմիր 13 զույգ: Դրոշի վերին ձախ անկյունում գտնվող կապույտ ուղղանկյան մեջ նկարված 50 սպիտակ աստղիկները համապատասխանում են ԱՄՆ-ի նահանգների ներկա թվին

ԱՄՆ ը արդյունաբերության արտադրանքի թողարկմամբ գրավում է առաջին տեղը կապիտալիստական աշխարհում երկրում զարգացած են ժամանակակից արդյունաբերության բոլոր ճյուղերը, հատկապես ավտոմոբիլային նավթավերամշակման քիմիական և ատոմային արդյունաբերությունը Շատ զարգացած է նաև գյուղատնտեսությունը, որի բոլոր ճյուղերում լայն կիրառում ունի տեխնիկան: Գլխավոր հացահատիկային բույսը եգիպտացորենն է: Աշխարհում մշակվող եգիպտացորենի գրեթե կեսը հավաքվում է ԱՄՆ-ում

ԱՄՆ ը շատ հարուստ երկիր է, բայց այդ հարստությունը պատկանում է մի բուռ մարդկանց, որոնք ապրում են պերճանքի մեջ, իսկ միլիոնավոր աշխատավոր ամերիկացիներ հաճախ կիսաքաղց կյանք են վարում:

ԱՄՆ-ի տնտեսական և քաղաքական կյանքում վճռական դեր ունեն ֆինանսաարդյունաբերական խոշոր խմբերը՝ մոնոպոլիաները, որոնցից շատերը սերտորեն կապված են ռազմական արտադրության հետ: Նրանք պաշտպանում են հետադիմական քաղաքականությունը երկրի ներսում և ագրեսիվ քաղաքականությունը միջազգային ասպարեզում

Չնայած բարձր զարգացած արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, ԱՄՆ-ում տարեցտարի աճում է գործազրկությունը: Մշտապես բարձրանում են մթերքների ու արդյունաբերական ապրանքների գները: Բնակարանային ու բուժման վարձն այնքան բարձր է, որ հաճախ մատչելի չէ գործազուրկներին և չքավոր ամերիկացիներին, հատկապես նեգրերին Ամերիկյան բանվոր դասակարգը պայքարում է կապիտալիստների դեմ իր աշխա-


◀ Լամաները ուղտերի ցեղակիցներն են. նրանց հայրենիքը Հարավային Ամերիկան է

0 700 կմ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ


Տարածությունը՝ 9 363 200 քառ. կմ

Բնակ. ությունը՝ 228 950 000 մարդ



- | | | | | | |
|--|---|--|---------------------------------|--|-------------------------------|
| | Սև և գունավոր մետալուրգիա | | Հանքարտի արդյունահանում | | Հացահատիկային բույսեր (ցորեն) |
| | Մեքենաշինություն և մետաղամշակման արդյունաբերություն | | Կարի արդյունաբերություն | | Եգիպտացորեն |
| | Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն | | Կաշվի-կոշիկի արդյունաբերություն | | Ծխախոտ |
| | Ժանր մեքենաշինություն | | Պահածոների արդյունաբերություն | | Բանբակենի |
| | Նավաշինություն | | Ալյուրաց արդյունաբերություն | | Բխորուսիներ |
| | Ավտոմոբիլային արդյունաբերություն | | Պոլիգրաֆ արդյունաբերություն | | Ջերաիլեկտրասահուն |
| | Գյուղատնտեսական մեքենաշինություն | | Ածխի արդյունահանում | | Հիդրոէլեկտրակայաններ |
| | Ավիացիոն-որթիոային արդյունաբերություն | | Նավթի արդյունահանում | | Ատոսային էլեկտրակայաններ |
| | Ջրմիական արդյունաբերություն | | Նավթի արդյունահանում | | Շովային նավահանգիստներ |
| | Նավթամշակման արդյունաբերություն | | Ալյուրաց արդյունահանում | | |
| | Փայտամշակման արդյունաբերություն | | | | |
| | Տեքստիլ արդյունաբերություն | | | | |

275 27 550 կմ



Նյու Յորքի
երկնաքեր
ները

տանքային և կենսական պայմանները բարելավելու նոր պատերազմի վտանգը կանխելու համար եվ այդ պայքարի առաջին շարքերում է ԱՄՆ ի կոմունիստական կուսակցությունը

ԱՄՆ-ի բնակչությունը ապրում է հիմնականում քաղաքներում Նյու Յորքը ԱՄՆ-ի ամենամեծ քաղաքն է որը արդյունաբերական խոշոր կենտրոն է և նավահանգիստ Ատլանտյան օվկիանոսի ափին Նյու Յորքի գլխավոր առանձնահատկությունը 60 — 80 հարկանի երկնաքեր շենքերն են որոնք քաղաքի շատ թաղամասեր վերածել են քարե կիրճերի, ուր չի թափանցում արևի լույսը և օդը թունավորված է ավտոմեքենաների արտանետած գազերով Նյու Յորքի կենտրոնում Մանհաթըն կղզում տեղավորված են ամերիկյան խոշորագույն ձեռնարկությունների վարչությունները, պետական և քաղաքային հիմնարկները, բանկերը:

Պոտոմակ գետի ափին է տեղավորված ԱՄՆ ի մայրաքաղաքը Վաշինգտոնը, որն իր անունն ստացել է ի պատիվ երկրի առաջին արեգիդենտ Ջորջ Վաշինգտոնի: Նյու Յորքից մինչև մայրաքաղաք երկաթուղով հինգ ժամվա ճանապարհ է

Ամերիկյան Մեծ լճերից մեկի Միչիգանի, ափին է գտնվում արդյունաբերական խոշոր քաղաք Չիկագոն: Նրանից ոչ հեռու Դետրոյտ քաղաքն է ամերիկյան ավտոմո



Վաշինգտոն Կապիտոլիումի շենքը, ուր նիստեր է գումարում ԱՄՆ-ի կոնգրեսը

բիլաշինության կենտրոններից մեկը Խաղաղ օվկիանոսի ափին ընկած ամենախոշոր քաղաքներն են Լոս Անջելեսը և Սան Ֆրանցիսկոն Լոս Անջելեսի շրջաններից մեկում Հոլիվուդում թողարկվում են ամերիկյան համարյա բոլոր կինոնկարները Սան Ֆրանցիսկոն որը գտնվում է Կալիֆոռնիայի ծաղկուն հովտում ԱՄՆ ի արևմտյան մասի ամենախոշոր նավահան գիստն ու արդյունաբերական կենտրոնն է

ԱՄՆ ը նշանավոր շատ մարդկանց հայրենիքն է Ականավոր քաղաքական գործիչներ Բենջամին Ֆրանկլինը և Աբրահամ Լինկոլնը գյուտարարներ Ռոբերտ Ֆուլտոնը և Թոմաս Էդիսոնը գրողներ Մարկ Տվենը Զեկ Լոնդոնը և շատ ուրիշներ հայտնի են ամբողջ աշխարհին

ԱՄՆ ը հայկական մեծ գաղթավայրերից է Հայերը Հյուսիսային Ամերիկայում հաստատվել են 17 թ դարի առաջին տասնամյակներից ԱՄՆ ում հայ առաջին համայնքը հիմնվել է 1881 թ Կալիֆոռնիայի Ֆրեզնո քաղաքում: ԱՄՆ գաղթած հայերի թիվն ստվարացավ 1894 — 1896 թվականներին Թուրքիայում կազմակերպված հայկական կոտորածներից և հատկապես 1915 թ Մեծ եղեռնից հետո 1920 թ հայերի թիվն ԱՄՆ-ում 100 հզ էր 1983 թ 650 հզ.: Ամերիկահայերը բնակվում են հիմնականում Նյու Յորք Լոս Անջելես Դետրոյտ Բոստոն Չիկագո Ֆիլադելֆիա Ֆրեզնո և Սան Ֆրանցիսկո քաղաքներում

Ամերիկահայ գաղութում գործում են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ մշակութային միություններ և ընկերություններ: ԱՄՆ-ում է գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչությունը Մշակութային ամենահայտնի կազմակերպություններից են Ամերիկահայ առաջադի մական միությունը Թեքեյան մշակութային միությունը

Ամերիկահայ գաղութում ստեղծագործել և ստեղծագործում են հայ անվանի գրողներ: ԱՄՆ ի գրական շրջանակներում հանրաճանաչ են անգլիագիր հայ գրողներ Վ Սարոյանը, Լևոն Ջ Սյուրմեյանը Մայքլ Առլեն կրտսերը

Հանրածանոթ են հայ և օտար շրջանակներին Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» օպերայի մեներգչուհիներ Լիլի Չուգասըզյանը Լուսին Ամարան (Արմաղանյան) և շատ ուրիշներ:

Համաշխարհային հռչակի է արժանացել ԱՄՆ ի կինոարվեստի հայ գործիչ Ռուբեն

Մամուլյանը Գեղանկարչության ասպարեզում ճանաչված են Հովսեփ Փուշմանյանը Արշիլ Գորկին (Ռոտանիկ Ադոյան)

ԱՄՆ ի գիտության և տեխնիկայի զարգացման մեջ իրենց խոշոր ավանդն ունեն ամերիկահայ գիտնականներ Վ Գազանճյանը Ա Գանտոնյանը: Հայաստանի գիտական հաստատությունների հետ սերտ հարաբերություններ են հաստատել ամերիկահայ գիտնականներ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամներ Մանասե Սևակը Չարլզ Հրաչ Փափազը Սիրարփի Տերներսեյանը

1960-ական թվականների կեսերից շատ ամերիկահայ ուսանողներ սովորում են Երևանի բուհերում, ուսումնասիրում հայոց լեզու պատմություն հայ գրականություն: Ամերիկահայությունը օտարացումից փրկելու երաշխիքը Սովետական Հայաստանի գոյությունն է նրա տնտեսական ու մշակութային հարաճուն վերելքը սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում

Ամպրոպ

Ամառային անտանելի տոթ օր է Քուլա քուլա կուտակվում են ծանր, կույտավոր ամպերը Ահա դրանք վերածվեցին սև ամպերի ծածկեցին և կապույտ երկինքը, և պայծառ արեգակը Մի րոպե անդորր տիրեց, և հանկարծ պոռթկաց պտուտահողմը իսկ երկնքից սկսեցին կաթկթալ անձրեփի խոշոր նոսր կաթիլներ Ապա հորդեց ամբողջ մի հեղեղ, ասես երկնքում միանգամից շրջեցին ջրով լի միլիոնավոր դուլլեր Փայլատակեց կայծակը դղրդաց որոտը սկսվեց ամառային ուրախ ամպրոպը

Ի՛նչ տեղի ունեցավ երկնքում Ինչպե՞ս է առաջանում ամպրոպը

Երկրի մակերևույթից շատ վեր բարձրացած ջրային գոլորշին ուժեղ սառչում է և փոխակերպվում ջրի մանրիկ կաթիլների: Այդ կաթիլները ձուլվում են իրար խոշորանում օդի հոսանքները դրանց թշուր են վեր ու վար վեր ու վար Իսկ որքան բարձրությունը մեծ է այնքան ավելի ցուրտ է և ահա ջուրը փոխարկվում է սառցաբյուրեղիկների: Դրանք բախվում են կաթիլներին պատվում ջրի թաղանթով, որը նույնպես սառչում է Սառցաբյուրեղիկն ավելի է ծանրանում ընկնում ամպի «ներքևի հարկը» որտեղ ավելի տաք է



վել և այդպես էլ ցած են թափվում կարկուտ է գալիս

Իսկ ամպի ներսում սառցաբյուրեղիկների և կաթիլների շարժումը չի դադարում: Նրանք հարվածում են իրար բախվում, շփվում լիցքավորվում էլեկտրականությամբ: Եվ ահա ամպի վերևի մասն արդեն կրում է դրական էլեկտրական լիցք, իսկ ներքևինը բացասական դրանց միջև կայծ է անցնում Կայծակ Կայծակը վայր կյանապես տաքացնում է շրջապատող օդը որն արագ ընդարձակվում է և տեղի է ունենում պայթյուն: Որոտ

Կմուխների կանցնի ամպրոպը կցրվեն մութ ամպերը օդը կթարմանա կիեշտանա շնչելը Տեղատարափ անձրևը կլվանա և երկիրը և երկինքը Ջուր չէ որ հին աշխարհի ժողովուրդները երկրպագում

և այդտեղ սկսում է հալվել Բայց նորից նրան ճանկում ու վեր են տանում սրընթաց պտուտահողմերը նորից իրար են բախվում սառցաբյուրեղիկներն ու կաթիլները ջուրը սառչում է սառցաբյուրեղիկները խոշորանում են ծանրանում:

Եվ ահա սառցաբյուրեղիկներն այլևս չեն կարողանում մնալ ամպի մեջ ու այդ տեղից ցած են ընկնում երկրին մոտենալիս նրանք սկսում են հալվել և ստացվում է անձրև: Երբեմն նրանք չեն հասնում հալ



էին ամպրոպի ահեղ բայց և գթասիրտ
աստծուն

Կարդացեք հետևյալ գիրքը
Գումիլևսկայա Մ. Ինչու է այդպես լինում է
<Սովետական գրող> 1980

Ամունդսեն Ռուալ

1872 —
1928

Դեռևս վաղ պատանության տարիներին Ռուալը հաստատապես վճռեց բնեռախույզ դառնալ: Եվ նա սկսեց ֆիզիկապես կոփել իրեն ֆուտբոլ էր խաղում, սառը ջրով շփում մարմինը ձմռանը քնում պատու հանը բաց:

Դպրոցն ավարտելուց հետո ունևոր նոր վեգացու ընտանիքի զավակը ծովային գործը լավ յուրացնելու համար երեք տարով ծով դուրս ելավ որպես հասարակ նավաստի Ապա դարձավ դեկապետ (շտուրման) իսկ կապիտանի դիպլոմ ըստանալուց հետո սկսեց պատրաստել իր առաջին ինքնուրույն արշավախումբը: Նա որոշել էր անցնել Հյուսիսային Ամերիկայի ափերի երկայնքով և փորձել գտնելու Ատլանտյանից դեպի Խաղաղ օվկիանոսը տանող Հյուսիս-արևմտյան ծովանցքը:

Ամունդսենի արշավախումբը բազմա մարդ չէր, համեստ էին նրա համար ծախս ված միջոցները Եվ այնուամենայնիվ Ամունդսենն ամբողջովին պարտքերի մեջ էր: Ուր որ է կալանք կղնեն նրա «Իո» երկկայմ առագաստանավի վրա. Եվ երիտասարդ ճանապարհորդը դիմեց չափազանց հանդուգն մի քայլի: Մութ անձրևոտ մի գիշեր նա իր ուղեկիցների հետ ծածուկ բարձրացավ «Իո» նավը և անհետացավ ծովում Պարտատերերը կատաղել էին բայց «յոթ ամենաերջանիկ ծովահենները» ինչպես հիշում է Ամունդսենը արդեն ապահովության մեջ էին և ուղղություն էին վերցրել դեպի Գրենլանդիա՝ Դա 1903 թ. էր

Գիտարշավը տևեց երեք տարի երեք ձմեռում Ծայր Հյուսիսում: Արկտիկան յոթ խիզախների գլխին էր թափում իր ողջ մոլեգնությունը նրանց դեմ հանում իր սառույցներն ու ձնաբքերը Եվ այնուհանդերձ, 1906 թ ճանապարհորդները, ողջ առողջ, ուրախ, գիտական առատ պաշարով (հաջողվել էր նաև որոշել մագնիսական բևեռի ճշգրիտ տեղը) հասան Կալիֆոռնիայի ափը: Նրանք արեցին այն, ինչ ուրիշներին չէր հաջողվել 400 տարի շարունակ



Այնուհետև իրար են հաջորդում ուրիշ գիտարշավներ 1911 թ դեկտեմբերի 14-ին Ամունդսենն առաջինը հասավ Հարավային բևեռ. հետո «Նորվեգիա» դիրիժաբլով նա առաջինը թռավ անցավ Հյուսիսային բևեռի վրայով ուսումնասիրելով Արկտիկայի օդային ուղիները:

Ամունդսենը հաղթանակներ էր տանում որովհետև խնամքով էր պատրաստվում գիտարշավներին: «Հաղթում է նա, ով նա խատեսում է ամեն բան, մանրուքն անգալի անտեսում դա էլ հենց հաջողությունն է», — ասում էր նա Բայց մի անգամ նա դավաճանեց ինքն իրեն.

1928 թ Արկտիկայում ողբերգություն տեղի ունեցավ աղետի էր ենթարկվեց իտալական «Իտալիա» դիրիժաբլը Սառույցները ճեղքելով արշավախմբին օգնության էր գալիս «Կրասին» սովետական սառցահատը Աղետի վայրն էին շտապու Սովետական Միության, Շվեդիայի, Իտալիայի Նորվեգիայի օդաչուները. Ինքնաթիռով թռավ նաև Ամունդսենը՝ Նա շտապում էր և խախտեց սեփական կարգախոսը մեկ ինքնաթիռով առանց երկրորդ ուղեկցողի չթռչել դավադիր Արկտիկայ վրայով Եվ այդ թռիչքը ճակատագրակա եղավ՝ Ամունդսենը չվերադարձավ Ոչ ոչ օգիտե թե ինչ կատարվեց, թե ինչպիսի եղան փառապանծ ճանապարհորդի կյանքի վերջին րոպեները, ճանապարհորդ ողջ խիզախությունն ու անվեհերությունը հսկվե՞ր՞ դրոշմված են աշխարհագրական հայտնագործությունների պատմության էջերում

Ամունդսենի մասին ավելի մանրամասն դուք կարեք կարդալ հետևյալ գրքում.

Այծ



Օրենքադրության գլխաշորերի համբավը շատերն են լսել Սակայն քչերը երևի գիտեն, որ այդ գեղեցիկ, թեթև, փափուկ ու տաք գլխաշորերը հենց Օրենքադրի կողմերում էլ գործում են Այնտեղ բուծում են աղվամազատու ընտանի այծեր որոնց աղվամազը շատ նուրբ է թեթև ու տաք

Ընտանի այծերը տալիս են նաև կաթ որը շատ արժեքավոր ու բուժիչ սննդամթերք է

Դուք, անշուշտ, բացատում տեսել եք աշխույժ ժիր ուլիկների որոնք ճարպկորեն ցատկոտում են, կարող են, նույնիսկ ծառ ու տանիք բարձրանալ Այդպես ճարպիկ ու ժիր են նաև հասուն այծերը:

Ընտանի այծերը ճարպկությունն ու ժրությունը ժառանգել են իրենց վայրի նախնիներից բեզդարյան և պտուտակաեղջյուրավոր այծերից որոնց կարող եք տեսնել կենդանաբանական այգում Ընտանի այծերի եղջյուրներն իհարկե այդքան խոշոր չեն բայց, այնուամենայնիվ որոշ չափով նման են:

Բեզդարյան այծերն ապրում են Աֆղանստանում, Իրանում, Անդրկովկասում և Փոքր Ասիայում Հայաստանում հանդիպում են լեռնային շրջաններում բազմացվում Խոսրովի արգելանոցում: Պտուտակաեղջյուրավոր այծերն ապրում են Հիմալայներում Սովետական Միությունում Թուրքմենիայի հարավում:

Բեզդարյան և պտուտակաեղջյուրավոր այծերն ապրում են լեռներում հեշտության մագլցում նույնիսկ ամենազառիթափ լանջերը լավ ցատկում են Ինչպես վայրի, այնպես էլ ընտանի այծերը սընվում են խոտաբույսերով ծառերի ու թփերի ընձյուղներով ու տերևներով Սովետական Միությունում բեզդարյան և պտուտակաեղջյուրավոր այծեր քիչ կան: Դրանք պահպանության տակ են առնը ված որսն էլ արգելված է

Բայց այ ընտանի այծեր մեզ մոտ շատ կան նրանք մարդկանց կաթ բուրդ և աղվամազ են տալիս Ընտանի այծերի ցեղերն այդպես էլ ստորաբաժանվում են բրդատու, աղվամազատու և կաթնատու:

Այծերը պահանջկոտ չեն և շատ դիմացկուն են Ասում են որ նրանք նաև շատ

Ընտանի այծ խելացի են ու խորամանկ. Հետևեցեք ընտանի այծերին և կհամոզվեք այդպես է թե ոչ

Այծկիթ

Այս թռչունին կարելի է տեսնել միայն ուշ երեկոյան Մերթ պատվում է բացատի վրա արագ վեր ճախրելով և սրընթաց էլ իջնելով մերթ թռչում է ոչխարների այծերի հոտերի կովերի նախրի և ձիերի երամակի շուրջը Բայց փորձեք նրան գտնել ցերեկը Ոչինչ չի ստացվի. Հնարավոր է որ հենց կողքիդ էլ թառած լինի կպած հողին կամ ծառի հաստ ճյուղին բայց դու նրան չես տեսնի. Թաքը նըվելու մեծ վարպետ է նա որովհետև թե գույնն է նման հողի կամ ծառի կեղևի գույնին և թե կարողանում է նստել անշարժ Բացի դրանից էլ ծառի ճյուղին նա նստում է ոչ թե լայնակի, ինչպես բոլոր թռչունները այլ երկայնակի ձգված

Այս թռչունը կոչվում է այծկիթ Հավա նաբար մեկնումեկը հնարել է թե նա այծ ու կով է կթում Եվ շատերն են հավատացել դրան հապա էլ ինչհու հոտերից պոկ չի գալիս: Պարզ բան է կաթ գողանալու համար Մինչդեռ այծկիթը կովերի, այծերի, ձիերի կողքին պտտվում է, որպեսզի հենց թռչելիս մոծակներ, պիծակներ ճանճեր որսա, իսկ անասունների շուրջը դրանք միշտ էլ շատ են Այծկիթը, դրանց որսալով, լավ գործ է կատարում Իսկ ինչ որ մեկի անմիտ հնարանքի պատճառով այդ թռչունին ոչ միայն հալածում են, այլև պատահում է, սպանում: Շատ հաճախ էլ մարդիկ ոմանք դիտավորյալ, մյուսները




չիմանալով ոչնչացնում են այծկիթների ձվերը

Այծկիթները բույն չեն հյուսում էգը մոխրագույն և դարչնագույն պուտերով 1 — 3 սպիտակ ձու է դնում ուղղակի թափված տերևների, փշերի իսկ երբեմն էլ մերկ հողի վրա: Եվ հենց այդտեղ էլ ծնողները հերթով թուխս են նստում: 17 — 18 օրից հետո դուրս են գալիս գորշ աղվամազով ծածկված ճուտիկները Նրանք լրիվ անպաշտպան են լինում և միայն գույնն է փրկում նրանց, այն էլ ոչ միշտ Եթե ճուտիկներն անվնաս են մնում ապա օգոստոսի վերջին — սեպտեմբերին այնքան են մեծանում որ իրենց ծնողների հետ չվում են տաք երկրներ Գարնանը վերադառնում են և ամբողջ ամառ կատարում իրենց շատ կարևոր գործը ոչնչացնում են վնասակար միջատներին

Այծյամ

Հայկական բնաշխարհը դժվար է պատկերացնել առանց այծյամների: Արագավազ, չքնաղ փոքր եղջերու է այծյամը Մարմինը համեմատաբար կարճ է, վիզը երկար: Ունի փոքր գլուխ ամուր կճղակներով երկար ոտքեր: Նրա գեղեցիկ մորթին ամռանը շիկակարմիր է, իսկ ձմռանը գորշ Այծյամը հիմնականում ապրում է անտառներում: Մնվում է խոտաբույսերով վայրի պտուղներով ու հատապտուղներով, տերևներով: Անտառը նրա և արոտավայրն է և թաքստոցը Սիրում է նաև ջրափի եղեգ նուտներն ու անտառամիջյան բացատները:



Ամռանը առավուտյան, երեկոյան և գիշերը այծյամներն արածում են, իսկ ցերեկվա շոգին թաքնվում են ստվերում և հանգստանում: Յուրտ օրերին կեր են հայթայթում օրվա ցանկացած ժամի Այծյամների քաշը հասնում է մինչև 60 կգ-ի: Շատ լավ լողում են կարող են լողալով կտրել անցնել ցանկացած ամենամեծ գետը: Առատ ձյան ժամանակ դուրս են գալիս ճանապարհները Ունեն սուր հոտառություն տեսողություն ու լսողություն

Որսորդներն այծյամներին հետապնդում են համեղ մսի գեղեցիկ մորթու և էլ ավելի գեղեցիկ եղջյուրների համար Դրա համար էլ այծյամները թաքնվում են անտառի խորքում Նրանց հետապնդում են նաև վայրի գազանները գայլը, որը նրանց հիմնական թշնամին է, աղվեսը, անտառակատուն լուսանը, թափառող շները: Չագուկները հաճախ են արծվի, ուրուրի, անգղի և բվեճի որս դառնում:

Ամռանը հասուն այծյամները թափառում են միայնակ Իսկ աշնանը կազմում են խառը խմբեր (արուներ, էգեր, ձագեր) կազմված, սովորաբար, 20 — 30, երբեմն էլ 50 — 100 կենդանուց Հայկական ՍՍՀ-ի պայմաններում խմբերն ավելի փոքր են լինում:

Բազմացման շրջանում, որը սկսվում է ամռան երկրորդ կեսից, արուների միջև տեղի է ունենում կատաղի պայքար և շատ հաճախ ավարտվում վնասվածքներով:

Մայիսին մայր այծյամն ունենում է 1 — 2 ձագ և առաջին օրերին նրանք մնում են թավուտում խոտերի մեջ պառկած, իսկ հետո կարողանում են կանգնել և քայլել մոր ետևից: Մայր այծյամը հոգատար է ձագուկների նկատմամբ: Նրանց կաթով կերակրում է այնքան ժամանակ, մինչև որ

մեծանան, կարողանան սնվել խոտով ու տերևներով. երկու շաբաթ հետո փոքրիկ ները կարող են իրենց մոր նման արագ վազել. Նրանք իրենց մոր հետ շրջում են մինչև հաջորդ գարուն, երբ մայրը նորից է ձագեր ունենում:

Եղջուրներ ունեն միայն արու այծյամները. Եղջուրներն սկսում են աճել ձմռանը, իսկ հաջորդ տարվա գարնանը դադարում աճել: Սկզբում եղջուրը ունենում է մեկ ուղղաձիգ ճյուղ. Դեկտեմբերին այն ընկնում է և հունվարից աճում են նոր եղջուրներ, որոնք գարնանը ճյուղավորվում են:

Այծյամի ձագերը հեշտ ընտելացող հեզ արարածներ են, ուստի որսորդները, անտառապահները երբեմն նրանց բռնում ու պահում են տանը: Այծյամները ապրում են մինչև 16 տարի:

Այծյամը մեր բնության սքանչելի գարդերից է, նրան պահպանելն ու բազմացնելը մեր բոլորի պարտքն է:

ձիու, իսկ երկկճղակավոր սմբակներն ու եղջուրավոր գլուխը ցուլի. Նա շատ արագավազ է, չնայած թվացող ծանրաշարժությանը:



թրանջուրավոր այծքաղ

Այծքաղ


Հաճախ առում են վիթի պես բարեկազմ է, կամ քարայծի պես թեթևասահ է. Բարակ ոտքերով, նրբագեղ վզով այդ փոքր

այծքաղները վիթերը, իրոք որ շատ բարեկազմ են. Նրանք ապրում են Աֆրիկայի և Ասիայի անապատներում ու տափաստաններում. Մեր երկրում վիթերից հայտնի է ջեյրանը: Սայգա այծքաղը վիթի համեմատությամբ այլանդակ է: Նա ունի մեծ գլուխ փքված և փափուկ զգայուն քթով, ուժեղ և մկանուտ կարճ ոտքեր: Սակայն սայգան կարող է մեկ ժամում տափաստանով կտրել անցնել ավելի քան 70 կմ տարածություն: ՍՍՀՄ-ում նա ապրում է Ղազախստանում և Ստորին Վոլգայի տափաստաններում:

Եվրոպայի լեռներում և Կովկասում տարածված այծքաղ է քարայծը: Նա թեթևությամբ սլանում է լեռների գլխապտույտ բարձունքներով:


Այծքաղները շատ տարբեր են լինում Ամենախոշոր, կովի մեծության այծքաղները աֆրիկյան եզնայծերն են, իսկ ամենափոքրերը, որ նույնպես աֆրիկյան են, նապաստակի մեծության դիկ-դիկներն են:

Աֆրիկայում է ապրում նաև գնու այծքաղը. Նրա մարմինն ու պոչը նման են



գանճ այծքաղ

Արտակարգ գեղեցիկ են այծքաղների, օրինակ, կուրուի գալարուն, սև այծքաղի թրանման, օրիքսի ուղիղ և երկար եղջյուրները



Այսերգ

«Այսերգ» բառը նշանակում է «սառցալեռ» Այսերգներն, իրոք, սառցե լողացող լեռներ են, որոնք առաջանում են սահելով ծովը գլորվող սառցադաշտերից Սառցադաշտի եզրը որոշ ժամանակ կախված է մնում ծովի վրա Մակընթացությունները, ծովային հոսանքներն ու քամիները հետզհետե քայքայում են նրա հիմքը Ի վերջո այն ջարդվում ու դորդյունով ընկնում է ջուրը. Հանձնվելով քամիներին ու հոսանքներին, ճոճվելով, այսերգն ուղևորվում է հեռավոր նավարկության, իր վիթխարի զանգվածի մեծ մասը թաքցրած ջրի տակ. Հա նապարհին այն աստիճանաբար հալվում է և դրանից էլ երբեմն շրջվում

Այսերգները մեծ չեն լինում 1—2 կմ երկարությամբ և կես կիլոմետր լայնությամբ: Բայց լինում են նաև մի քանի տասնյակ կիլոմետր երկարություն և ավելի քան 100 մ բարձրություն ունեցող վիթխարի այսերգներ

Այսերգների հայրենիքը Արկտիկայի և Անտարկտիդայի սառցադաշտերն են

Օվկիանոսում այսերգների հանդիպելը վտանգավոր է Չէ որ նրանց ստորջրյա մասը, որն անհամեմատ ավելի մեծ է վերջրյա մասից, չի երևում 1912 թ Ամերիկայից եվրոպա էր նավարկում «Տիտանիկ» մարդատար մեծ շոգեճանալը մառախուղի մեջ այն բախվեց այսերգին և ջրասույզ եղավ

Բայց եղավ նաև, որ Անտարկտիկայի ջրերում այսերգները բարի ծառայություն մատուցեցին «Յուրի Դուգորուկի» սովետական կետորսական նավախմբին: Ուժեղ փոթորիկը նավաստիներին խանգարում էր պատրաստի արտադրանքը ռեֆրիժերատոր (սառնանավ) տեղափոխել և հեղուկանավից վառելանյութ վերցնել. Հանկարծ նրանք տեսան կողք կողքի ճոճվող երկու այսերգ: Շուրջը հսկա ալիքներ էին, իսկ այսերգների միջև միայն թեթև ծփանք էր նավաստիները խիզախեցին նավերը կանգնեցնել այսերգների միջև և նրանց պաշտպանության ներքո կատարեցին իրենց աշխատանքը

Դա, հավանաբար, միակ դեպքն է, երբ այսերգներն օգնել են նավաստիներին Սակայն գիտնականները ենթադրում են, որ այսերգները կարող են ժամանակ առ ժամանակ օգտակար լինել մարդկանց Չէ որ մեր մոլորակի վրա գնալով ավելի ու ավելի խիստ է զգացվում անուշահամ, մաքուր ջրի պակասը Իսկ այսերգները հենց այդպիսի ջրի պահեստարաններ են Գիտնականները մտածում են, թե հնարավոր չէ, արդյոք, այսերգները քարշ տալ տանել մեծ քաղաքների նավահանգիստները և այնտեղ «խարիսխի տակ առնել»: Այսերգի ջրով կարելի կլինի հագեցնել միլիոնավոր մարդկանց ծարավը ճիշտ է, սա առայժմ նախագիծ է միայն:

Այվազովսկի Հովհաննես Կոստանդինի

1817 —
1900

Սերունդների գիտակցության մեջ Այվազովսկի և ծով ըմբռնումներն, ասես, նույնացել են Այվազովսկու անունը տալիս մտովի տեսնում ենք ծովային ամենատարբեր տեսարաններ ամեհի փոթորիկներ, նավաբեկություններ, պայծառ արևածագեր ու լուսնկա գիշերներ

19-րդ դարի սկզբին Ղրիմի Թեոդոսիա քաղաքում հաստատված հայ առևտրական Կոստանդին Հայվազովսկու երկրորդ որդին էր Հովհաննեսը Մեծ ծովանկարիչը, որ քաջ գիտեր մայրենի լեզուն, իր նամակներում ու հայկական միջավայրի համար



Նախատեսած նկարների տակ երբեմն ստորագրել է հայերեն Հովհաննես Այվազովսկի կամ Օվաննես Այվազյան

Նախնական կրթությունը տեղի հայկական ծխական դպրոցում և ապա Սիմֆերոպոլի գիմնազիայում ստանալուց հետո

«Սորսները
«Վափին»

Հովհաննեսը ոսկե մեդալով ավարտում է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան և գործուղվում արտասահման կատարելագործվելու Վերադառնում է իբրև արդեն եվրոպական հռչակ ձեռք բերած ծովանկարիչ: 1845 թ Այվազովսկին թողնում է Ռուսաստանի մայրաքաղաքը, գալիս է իր հարազատ, հայաշատ Թեոդոսիան, ծովի ափին տուն-արվեստանոց կառուցում և ստեղծագործում մինչև կյանքի վերջին օրը, սերունդներին թողնելով շուրջ 6000 պատկեր:

Այվազովսկին աշխատել է շատ արագ, տեսողական փայլուն հիշողությամբ Պատկերել է ծովը օրվա տարբեր ժամերին, տարվա բոլոր եղանակներին Նա մանկուց ճանաչում ու սիրում էր ծովը Նրա ստեղծած գործերի մեծ մասը ծովի փոթորկահույզ տեսարաններ են եվ ահեղ փոթորիկները պատկերելիս նա ընդգծել է այդ տարերքի դեմ պայքարող մարդու ուժը, ցույց տալով, որ մարդը չի ընկճվի, մարդը կհաղթի: Այդ գաղափարն է արտահայտված, օրինակ, նրա հռչակավոր «Իններորդ ալիք» կտավում Այվազովսկու պատկերների մեջ արտացոլում են գտել





«Նոյը իջնում է Արարատից»

հարազատ ժողովրդին հատուկ անսահման կենսասիրությունն ու լավատեսությունը:

Երիտասարդ հասակում Այվազովսկին ընտրվել է եվրոպական մի շարք ակադեմիաների անդամ և արժանացել ֆրանսիական Պատվո լեգեոնի շքանշանի


Գրեթե ամեն տարի նրա պատկերների ցուցահանդեսներ են կազմակերպվել Ռուսաստանի, Եվրոպայի ու Ամերիկայի խոշոր քաղաքներում: Նա համաշխարհային փառք է նվաճել իբրև ռուսական դպրոցի ներկայացուցիչ և լայն ճանաչում բերել ռուսական նկարչությանը Ռուսաստանի և Եվրոպայի շրջանում:

մանակի առաջադեմ արվեստագետ նա մեծ սեր է տաճել փոքրաթիվ, ճնշված ժողովուրդների, հատկապես հույների հանդեպ և նրա ազատատենչ պայքարին նվիրված կտավներ է ստեղծել:

Այվազովսկին ամբողջ կյանքում սերտորեն կապված մնաց մայր ժողովրդին: Նրան խորապես ցնցեցին 1890-ական թվականների հայկական ջարդերը Թուրքիայում: «Խորին կսկիծով վշտացած է սիրտս անբախտ հայոց չլսված, չտեսնված կոտորածով», — գրել է նա հայրենիք հղած իր նամակներից մեկում Այդ ապրումների արդյունքն են հայ ժողովրդի ողբերգությանը նվիրված մի շարք ցնցող պատկերներ:

1868 թ Այվազովսկին ճանապարհորդել է Անդրկովկասում: Այդ ուղևորությունը նյութ է տվել նկարչին ստեղծելու Հայաստանի բնությունը պատկերող կտավներ («Արարատ», «Սևանա լիճ» և այլն), որոնցով նա սկիզբ է դրել հայկական բնանկարչության զարգացմանը

Այվազովսկու տունը Թեոդոսիայում եղել է մի յուրօրինակ ուխտատեղի: Այստեղ հյուրընկալվել ու ելույթներ են ունեցել մեծ դերասան Պ Ադամյանը, կոմպոզիտոր Ալ Սպենդիարյանը, ջութակահար Հովի Նալբանդյանը և ուրիշներ: Նրան աշակերտել ու նրա արվեստով ոգեշնչվել են բազմաթիվ հայ նկարիչներ: Այվա-



«Նավաբե կութունից փրկվողները»

գովակին երագել է համախմբել աշխարհով մեկ ցրված հայ նկարիչներին

Նա նաև լավ ջութակ է նվագել և երգել Ռուս մեծ կոմպոզիտոր Մ. Գլինկան, լսելով նրա երգերն ու մեղեդիները, այնքան է հավանել, որ այդ մեղեդիներից մի քանիսն օգտագործել է իր «Ռուսլան և Լյուդմիլա» օպերայում:

Այվազովսկին եղել է Ղրիմի հայկական գաղթավայրի հովանավորը, Թեոդոսիայում բացել է պատկերասրահ, հնագիտական թանգարան, գեղարվեստական դըպրոց, գրադարան, համերգային դահլիճ

Այվազովսկու գերեզմանաքարի վրա հայերեն գրված է «Ծնվեց մահկանացու, թողեց անմահ հիշատակ»: Նա վախճանվեց վրձինը ձեռքին, մինչև վերջ հավատարիմ մնալով իր «ապրել ինձ համար նշանակում է աշխատել» դավանանքին

Այվազովսկու նկարները պահվում են աշխարհի խոշոր թանգարաններում: Նրա պատկերների մի սքանչելի հավաքածու մշտապես ցուցադրվում է Հայաստանի պետական պատկերասրահում Այցելելով այդ պատկերասրահը դուք կներշնչվեք ծովի մեծ երգչի կտավների կախարհիչ հմայքով

Անագ



Սա բրոնզե հինավուրց աշտանակ է, սա պահածոյի տուփ, իսկ սա նոր ռադիոընդունիչ: Բայց ինչ ընդհանուր բան կա այս առարկաների միջև:

Շատ հազարամյակներ առաջ մարդիկ սովորել են մետաղներ հալել և մշակել: Հավանաբար, ամենից վաղ ծանոթացել են այն մետաղներին, որոնք բնության մեջ հանդիպում էին մաքուր վիճակում Դրանք այսպես կոչված բնածին մետաղներն էին ոսկին, արծաթը և պղինձը

Ամենից հաճախակի հանդիպում էր պղինձը: Հեշտ էր այն հալելն ու մշակելը, բայց, որովհետև շատ փափուկ էր, պիտանի չէր աշխատանքային գործիքներ ու զենքեր պատրաստելու համար: Եվ հնարավոր է, որ այդ հեռավոր ժամանակներում պղինձն այդպես էլ կիրառություն չգտներ, եթե նրան օգնության չգար մեկ այլ մետաղ անագը Անագը շատ հեշտությամբ հալվում անջատվում էր սև-շագանակագույն անագաքարից կասիտերիտից: Անագն ինքը փափուկ է և դյուրաբեկ Բայց եթե համատեղ ձուլենք անագ և պղինձ,


կստացվի պղնձից շատ ավելի ամուր, գեղեցիկ, դեղին մետաղ բրոնզ: Բրոնզից արձանիկներ էին ձուլում և սրեր կռում, ամանեղեն էին պատրաստում և դրամ հատում: Մարդկության պատմության մի ամբողջ դարաշրջան ստացել է «բրոնզի դար» անունը:

Ժամանակն անցնում էր. Մարդիկ սովորեցին երկաթ ձուլել, և բրոնզի դարին փոխարինելու եկավ երկաթի դարը: Բրոնզն իր տեղը զիջեց երկաթին, իսկ բրոնզի հետ մեկտեղ իր նախկին արժեքը կորցրեց նաև անագը: Չէ որ մաքուր անագը սակավ կիրառություն ուներ: Մի ժամանակ նրանից պատրաստում էին ամանեղեն, գդալներ, կոճակներ: Բայց պարզվեց, որ ուժեղ ցրտի ժամանակ անագի հետ տեղի է ունենում տարօրինակ մի բան փայլուն, սպիտակ մետաղը գորշանում է, կորցնում փայլը և փոշիանում: Մետաղը «մրսում» և «հիվանդանում» է: Այդ երևույթն անվանեցին անագի ժանտախտ

Թվում էր, թե անագն այլևս կիրառման տեղ չունի: Բայց ահա 19-րդ դարի վերջին մարդիկ սովորեցին սննդամթերքները պահածոյացնել: Հսկայական քանակությամբ տուփեր էին անհրաժեշտ պահածոներ պատրաստելու համար: Այդ տուփերը չէր կարելի պատրաստել սովորական երկաթից, որովհետև պարզվեց, որ այն ժանգոտվում և քայքայվում է սննդամթերքներում պարունակվող թթուներից: Հենց այդ ժամանակ էլ, երբ որևէ միջոց էին փնտրում երկաթը պաշտպանելու համար, հիշեցին անագի մասին Անագի ամենաբարակ շերտը դարձավ երկաթի հուսալի պաշտպանը, և անագը նորից պատվավոր տեղ զբաղեցրեց մետաղների բազմանդամ ընտանիքում:

Այժմ արդեն հասկանալի է, թե ինչու է պահածոյի տուփը հայտնվել բրոնզե աշտանակի կողքին Իսկ ռադիոընդունիչը Այն նույնպես չի կարող գոյություն ունենալ առանց անագի Յուրաքանչյուր ռադիոսխեմայում կան տասնյակ և հարյուրավոր կոնտակտներ, իսկ յուրաքանչյուր կոնտակտ անագե զոդանյութի փոքրիկ, սառած կաթիլ է, որը հուսալիորեն իրար է միացնում դետալները և լավ հաղորդում հոսանքը:

Այսպես անագը դարձավ մեր դարի էլեկտրոնիկայի և ատոմային էներգիայի դարի ամենակարևոր մետաղներից մեկը, մետաղ, որը մեզ է հասել հեռավոր բրոնզի դարից և շարունակում է պիտանի լինել մարդկանց



Մեր թվականությունից առաջ 34 թ հռո մեացի զորավար Անտոնիոսը իր պար թևական արշավանքի ժամանակ մտավ Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Երիզա ավանը, ուր դրված էր հայոց մայր աստվածուհի Անահիտի վիթխարի ոսկեձուլլ արձանը՝ Նրա զինվորները ջարդո-



Անահիտ աստվածուհու պղնձա ձուլլ արձանի գլուխը (Բրիտանական թանգարան)

կտոր արեցին ոսկեձուլլ արձանը որպես ավար բաժանեցին իրար մեջ և տարան Հռոմ. Լուրեր էին տարածվում, թե Անահիտի արձանի վրա հարձակված առաջին զինվորը կուրացել, այնուհետև խելագարվել ու մահացել է Հռոմեացի պատմիչ Պլինիոսը մեզանից երկու հազար տարի առաջ գրել է, որ այդ ավարին մասնակից մի հին զինվոր ճոխ ճաշկերույթ է տվել Օգոստոս կայսեր պատվին: Կայսրը հարցրել է Անահիտի արձանի մասին Ջինվորը պատասխանել է, թե ինքն է եղել արձանի վրա հարձակվողներից առաջինը և այդ ճաշկերույթի ծախսը Անահիտի արձանի սրունքի մի կտորով է հոգացել:

19-րդ դարի վերջին գտնվել է Անահիտ աստվածուհու պղնձաձուլլ գլուխը, տարվել է Անգլիա և այժմ պահպանվում է Բրիտանական թանգարանում, իսկ կրոկ նորինակը Հայաստանի պատմության թանգարանում է:

Հին Հայաստանի տարբեր վայրերում, հատկապես Տարոնում և Վասպուրականում, կային Անահիտի տաճարներ որոնց նվիրում էին սպասավորներ սպասուհի

ներ, ինչպես նաև ճակատին սպիտակ նշան ունեցող երինջներ, որոնք նախիրներով արածում էին տաճարների շուրջը, և ոչ ոք իրավունք չուներ ձեռք տալ դրանց:

Անահիտը հայերի գլխավոր աստված Արամազդի դուստրն էր, մայրության, բերքի ու պտղաբերության սրբազան մարմնավորումն ու հովանավորողը, նրան կոչում էին նաև Մեծ տիկին, Ոսկեծղի, Ոսկեմատն: Անահիտը բոլոր խոհեմությունների ու պարկեշտությունների մայրն էր համարվում, մարդկանց սնուցող, ապրեցնող ու փառավորող աստվածուհի Մարդիկ իրենց նախաձեռնությունների մեջ Անահիտից էին հովանավորություն և առողջություն խնդրում. Անահիտ անունը, որ նշանակում է անբիծ, անարատ, մաքուր, շատ սիրված ու տարածված անուն է հայերի մեջ:

Անանիա Շիրակացի

7-րդ դար

Միջնադարյան հայ խոշորագույն գիտնականներից մեկն է եղել Անանիա Շիրակացին, որ նշանավոր թվաբան էր, տոմարագետ, տիեզերագետ, օդերևութաբանական գիտելիքների հմուտ գիտակ և ուսուցիչ:

Յուրացնելով հայրենի դպրությունը, հրաշալի տիրապետելով մայրենի լեզվին, նա իրեն պատրաստ զգաց նաև նվիրվելու համարողական արվեստին, այսինքն թվաբանությանը որ շատ էր սիրում:

Բայց այն հեռավոր ժամանակներում «Հայոց մեր աշխարհում չկար այնպիսի մեկը, որ տիրապետեր իմաստությանը, և ոչ էլ նույնիսկ որևէ տեղ գիտական գորքեր էին ճարվում» — գրել է Շիրակացին «Ինքնակենսագրականում»:

Ի՞նչ կարող էր անել պատանին, որը ոչ միայն պարզապես սիրում էր թվերի մոգական աշխարհը, այլև համոզված էր, թե ամեն ինչի հիմքում թվերն են, իսկ համարողական արվեստն էլ համարում էր բոլոր գիտությունների մայրը Չմոռանանք, որ նա ապրում էր ավելի քան հազար երեք հարյուր տարի առաջ, երբ ուսումը շարունակելու, գիտելիքները խորացնելու միակ միջոցը ճամփորդական գավազանը վերցնելն էր ու հեռավոր երկրներում ուսուցիչ գտնելը:

Իսկ դա այնքան էլ դյուրին գործ չէր. եվ ոչ թե այն պատճառով, որ ընդհանրապես



Անանիա
Շիրակացու
Պճանը
Ռեանում
ատենա-
շարանի
Նքի ճա-
տամա
ում

ծանր ու դժվարին էր ճանապարհորդի վիճակը Բանն այն է, որ շատ ավելի հուսա հատական գործ էր բանիմաց ուսուցիչ գտնելը Օրինակ, մոտ վեց ամիս աշակերտելով մի մաթեմատիկոսի Անանիան ոչ թե նոր գիտելիքներ ձեռք բերեց, այլ համոզվեց, որ ուսուցիչն այնքան էլ լավ չի տիրապետում առարկան, և հեռացավ նրանից՝ շարունակելու իր որոնումները:

Վերջապես, երիտասարդը Տրապիզոն քաղաքում հանդիպեց Տյուբիկոս Բյուզանդացի գիտունին և ութ տարի շարունակ աշակերտեց նրան Ուսուցչի հարուստ գրադարանը Անանիա Շիրակացու համար դարձավ մի երկրորդ ուսումնարան Գիտելիքները խորացնելու համարողական արվեստի մեջ հմտանալու համար օտարության մեջ ապրող հայ երիտասարդն ուսումնասիրեց նաև ուրիշ գիտություններ պատմություն, բժշկություն, աշխարհագրություն... Ինչ խոսք, որ նա գիտակցում էր այն ճշմարտությունը, թե առանց մայրենի լեզուն, առանց ազգային դպրությունն ու պատմությունը և բնական գիտություններն իմանալու կարելի

է դառնալ սոսկ առօրյա կարիքները հոգացող թվաբան, բայց ոչ երբեք հմուտ մաթեմատիկոս:

Ուսումնառությունն ավարտելով, Անանիան շտապեց վերադառնալ Շիրակ ու այստեղ բացեց իր դպրոցը, որտեղ երիտասարդներ էին գալիս սովորելու Հայաստանի տարբեր վայրերից:

Անանիա Շիրակացին ոչ միայն սովորեցնում, այլև դասագրքեր էր ստեղծում, որոնք այնուհետև բազմացնում էին մեկը մյուսից արտագրելով:

Տասնամյակներ ու հարյուրամյակներ շարունակ հայ երեխաներն ու պատանիները թվաբանությունը սովորել են Շիրակացու խնդրագրքով, որտեղ ամփոփված խնդիրները նաև հետաքրքիր տեղեկություններ էին պարունակում պատմությունից, աշխարհագրությունից, զանազան արհեստներից ու ժամանակին բնորոշ առօրյայից: Որոշ խնդիրներ էլ ունեին զվարճալի բնույթ և կոչվում էին *խրախճանականներ*:

Վարուցանքի, արդյունահանման ու առևտրի համար մեծ նշանակություն ունի ժամանակի ճշգրիտ հաշվարկումը: Անանիա Շիրակացու կարևոր աշխատություններից են այդ նպատակին ծառայող տոմարական հաշվումների աղյուսակներն ու բոլորակները (աստղագիտական բնույթի աղյուսակներ), որոնք տվյալներ են պարունակում ոչ միայն հայկական, այլև քաղաքակիրթ մյուս ժողովուրդների տոմարական համակարգերից:

Շետաքրքրական և իր ժամանակի համար չափազանց համարձակ էին Շիրակացու կարծիքները *Տիեզերքի* ու տիեզերական մարմինների մասին: Նա համոզված էր, որ *Երկիրը* ոչ թե տափարակ մի հարթություն է, այլ գնդաձև մարմին: *Լուսինն* էլ ոչ թե իր սեփական լույսն ունի, այլ անդրադարձնում է Արեգակի լույսը:

Արեգակի և Լուսնի խավարումները նա բացատրում էր երկնային այդ մարմինների շարժումով, որի ընթացքում Երկիրը երբեմն հայտնվում է դրանց միջև:

Տիեզերական երևույթներն այսպես բացատրելով, Շիրակացին վեճի մեջ էր մտնում բախտագուշակների հետ, որոնք մարդկանց կյանքն ու ճակատագիրը բացատրում էին աստղերի ու մոլորակների դիրքերով:

Դժվար էր Անանիա Շիրակացու վիճակը Լինելով բազմաշնորհ ու համարձակ իմաստասեր, նա հալածվում էր խավարամիտներից Եվ իր գիտության, տոկու-

նության, համբերության, անշահախնդիր նվիրումի ու անհիշաչար բարության շնորհիվ է որ Անանիա Շիրակացին դարձել է սերունդների պարծանքը:

Անանյան Վախթանգ Ստեփանի

1905 —
1980

«Լեռը, անտառը, խոխոջուն առուն ծաղիկների բույրը, — ահա իմ մայրը, որի գրկում մեծացել եմ հարազատ մորից զրկվելուց հետո Թարմ ու հոտավետ կա նաչը, ահա իմ անկողինը, ուր ննջել եմ ես զեփյուռի մեղմ շոյանքի տակ, աչքերս հառած աստղալից երկնքին»



Գեղեցիկ էր բնությունը, բայց դժվար էր կյանքը: Ուսման ծարավ աչքը գրքերին ստիպված էր օրնիբուն, շոգին ու ցրտին աշիատել, հովվություն անել Հայրը գրքից ու գրականությունից հեռու կանգնած մարդ էր բայց ուզում էր, որ որդին սովորի եվ նրան դպրոց տվեց

Նա սիրեց գիրքը, ինչպես սիրում էր մայր բնությունը, ու կապվեց գրքին

Եվ այն բոլորին, ինչին նա հասավ հետագայում գրքի ու համառ, անդադրում աշխատանքի շնորհիվ էր «Տասնմեկ տարեկան էի, — պատմում է նա, — երբ զրկվեցի դպրոցից, ուսուցիչներից: Այնուհետև գրքերը դարձան իմ ուսուցիչները, իմ դաստիարակները, լեռնականի իմ անտառ հոգին հղկողները»

1920 թ էր: Հայաստանում հաստատվել էին սովետական կարգեր: Նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը, տեղափոխվում Երևան, սկսում հոգվածներ գրել գյուղի մասին:

1934 թ. լույս տեսած «Որսը» ժողովածուն ցույց տվեց որ Անանյանը գաղտնիքներով ու հետաքրքրություններով լի իր աշխարհն ունեցող գրող է:

1950 թ «Սևանի ափին» վեպը համամիութենական մրցույթում արժանացավ մրցանակի և լայն ճանաչում բերեց հեղինակին:

Նրա գրքերը, հատկապես «Սևանի ափին», «Հովազաձորի գերիները» վեպերը և «Որսորդական պատմվածքները» թարգմանվել ու հրատարակվել են տասնյակ լեզուներով:

«Սևանի ափին» վեպը դարձել է մեր մանուկների ու պատանիների ամենասիրված գրքերից մեկը Երբ դուք կարդաք այս վեպը, կտեսնեք, թե իրենց նպատակին հասնելու համար ինչպիսի կամք ու համառություն են ցուցաբերում ձեր տարեկից պիոներները, կհիանաք նրանց հնարամտությամբ, հետաքրքրասիրությամբ և համարձակությամբ

Արկածներով ու խորհրդավորություններով լեցուն նրա ստեղծագործությունների հիման վրա ստեղծված կինոնկարները հիացնում են աշխարհի միլիոնավոր երեխաների:

Աշխարհագրական այս լայն տարածման, տարբեր ժողովուրդների կողմից գրողի խոսքն ընկալելու գաղտնիքը հողի ու բնության նկատմամբ Անանյանի անսահման սիրո մեջ է

Անապատ

Անապատները երկրի շոգ ու չորային շրջաններն են Աշխարհի ամենաընդարձակ անապատներն են Սահարան *Աֆրիկայում* Վիկտորիա Մեծ անապատը *Ավստրալիայում*, Ատակաման Հարավային *Ամերիկայում*: Մեր երկրում ավազային ամենամեծ անապատները Կարակումն ու Կզըլկումը, գտնվում են Միջին *Ասիայում*:

Անապատներում բույսերն ու կենդանիները հարմարվել են խոնավության պակասին, անամպ երկնքում շողացող կիզիչ արևին, սորուն ավազներին Կարակում



անապատում ամռանը ստվերում շոգը հասնում է համարյա 50 աստիճանի: Ավազն այնպես է շիկանում, որ նրա մեջ կարելի է ձու եփել:

Ինչպե՞ս են այստեղ ապրում բույսերը:

Անապատի սաքսաուլի անտառներն ամենևին նման չեն ստվերախիտ լայնատերև անտառների Տերևների փոխարեն սաքսաուլն ունի հյութալի, մուգ կանաչ ճյուղիկներ 2Ճ որ որքան փոքր են տերևները, այնքան քիչ է գոլորշիանում թանկարժեք խոնավությունը: Բույսերն այդպես են հարմարվում չորացնող տապին: Անապատային շատ բույսեր ապրում են միայն տարվա հով եղանակներին վաղ գարնանը կամ ուշ աշնանը, երբ խոնավությունն ավելի շատ է: Վաղ գարնանն ավագաթմբերի բարխանների, ստորոտները մի քանի շաբաթ վերածվում են ծաղկուն մարգագետինների: Անապատային վառ կարմիր կակաչները կարճիկ բոշխի կանաչ ֆոնի վրա բազմագույն գորգ են հիշեցնում: Շուտով արեգակն անգթորեն կայրի այդ կանաչ ծածկույթը, բայց բույսերը կհասցնեն ծաղկել և սերմեր տալ:

Արեգակի կիզիչ ճառագայթներից տարբեր կերպ են փրկվում անապատի բնակիչները Նրանցից շատերը գիշերային կյանք են վարում Ցերեկն այդ կենդանիները թաքնվում են խոր, զով բներում: Ցերեկային կենդանիներն աշխուժանում են միայն վաղ առավոտյան, քանի դեռ ավազը չի շիկացել:

Ահա բարխանի կատարին արձանի նը ման անշարժ կանգնել է կլորագլխիկ մողեսը: Նա համաչափ շարժում է վեր ուղորած պոչը և ուշադիր հետևում որսին մանր բզեզների, թիթեռների Գեղածնկիկի թփի վրա թաքնվել է նրբագեղ մի օձ Նա սպասում է, որ մողեսը մոտենա և կայծակնային արագությամբ բռնում է զոհին Զուր չէ որ նրան նետ-օձ են անվանում:

Բարխանների ստորոտներում ավազի մակերևույթը ակոսված է բներով դա մեծ ավազամկների ստորգետնյա քաղաքն է Այստեղ կարող ես հանդիպել խոշոր վարանին՝ անապատի ամենամեծ մողեսին որի երկարությունը մեկ մետրից ավելի է Այդ «անապատի կոկորդիլոսը» ավազամկներ է որսում:

Ահա թեթև, բարակոտն այծքաղ ջեյրաններն արագ քառատրոփով հատեցին բարխաններն ու թաքնվեցին հորիզոնի ետեվում Նրանք հեռավոր ճանապարհ են կրտելու ջուր գտնելու համար:

Սաքսաուլի մացառուտներում թռչունների անդադրում ճռվողյուն է Գարնանը հյուսիս չվելու ճանապարհին անապատում շատ թռչուններ են կանգ առնում, իսկ դեղձանագույն սերինոսները, անտառային սոխակները, շահրիկ փնթփնթաները այստեղ ճտեր են հանում:

Կեսօրին մոտ անապատն ասես մեռնում է: Բայց իրիկնամուտին կյանքն անապատում վերակենդանանում է Եթե մայրամուտից հետո լապտերով շոջենք բարխաններով, ապա կտեսնենք գիշերային բնակիչներին՝ հսկայական ցատկերով ստվերների պես սլանում են թավոտնյա ճագարամկները, ավազի վրայով սողում են սևամարմին բզեզները, այս ու այն կողմ են վազում գեկոն մողեսները:

Կավային և քարային անապատներում կյանքն ավելի աղքատ է Պինդ, քարացած մակերևույթին աճում են օշինդրի և օշանի ցանցառ թփեր: Քիչ կրծողներ են ընդունակ քարային բնահողում իրենց համար թաքստոց փորելու Այդպիսի անապատներն իրոք որ անկենդան են թվում, արդարացնելով իրենց անունը:

Այնտեղ, ուր ջուր կա, անապատը նահանջում է Շռայլ արևի տակ, արհեստական ոռոգման պայմաններում, կանաչին են տալիս բամբակենու դաշտերը, հյութով են լցվում մրգերը, սեխն ու ձմերուկը: Հողի ծարավը հագեցնելու համար մարդիկ այստեղ վաղուց արհեստական ոռոգում են կիրառում: Մեր երկրում վիթխարի գրոհ է ձեռնարկվել անապատի վրա Մեքենաներն օգնում են մարդկանց ջրանցքներ անցկացնելու, ջրամբարներ կառուցելու: Տարեցտարի ավազներից խլված ավելի շատ հող է ծառայում մարդկանց:

Կարդացե՛ք հետևյալ գիրքը

Сладков Н. И., Земля солнечного огня, П., «Дет. лит.», 1970.

Մի պատկերում նկարիչը ցույց է տվել տարբեր տեսակի անապատներ: Առջևում ավազաթումբ է բարխան և կավապատ հարթություն թաքիր ետևում հողմնահարումից քայքայված ցածր անապատային լեռներ հեռվում ավազահողմ և մրրկասյուններ

Ուղտերի քա
րավան

Մեծականջ կլո-
րագլխիկ մողես

Սաքսաուլ



Ճագարա
մուկ

Ավազային
վիշապիկ

Նարդես
բույսը



Կուլաններն
աղուտում

Ջեյրաններ

Արծիվ

Նետ օձը
սաքսաուլի
թփի վրա

-բզեզ

Ազամա
մողեսը

Միջինա
սիական
կրիա

Գետնա
սկյուռ

Նիրհած Աֆրիկայի երկնքով թռչում է մի մեծ թռչուն՝ Նա առաջ է շարժվում զգուշորեն, որովհետև մեջքին նստած է ողջ Աֆրիկայի համար ամենաանհրաժեշտ, ամենացանկալի մարդը: Հեռավոր Լիմպոպո գետի ափին նրան են սպասում հիվանդ կապիկները: Այդ մարդու անունն է այդ այդ բժիշկ Այբուլիտ

Բժիշկ Այբուլիտն ամենահայտնի անասնաբույժն է աշխարհում: Նա ապրում է Կ Ի Չուկոլսկու հիանալի գրքի էջերում և անում նույնը, ինչ բոլոր անասնաբույժները կենդանիներ է բուժում

Այդ բարի, հետաքրքիր և շատ անհրաժեշտ մասնագիտությունն ամենահներից է երկրի վրա Մեզ հասած հնագույն գրքում ուրիշ մասնագիտությունների կողքին, հիշատակվում են «ձիու բժիշկները»: Նրանք ծառայում էին թագավորական ախոռներում կամ ձիեր բուժող ազնվականների մոտ, իսկ պատերազմների ժամանակ ուղեկցում հեծելազորին «Ձիու բժիշկներն», անշուշտ, միայն ձիերին չէ, որ բուժում էին Համաճարակների ժամանակ, երբ վտանգ էր առաջանում, որ վարակիչ հիվանդությունները հիվանդ կենդանիներից կարող են փոխանցվել մարդուն, նրանք բուժում էին ոչխարներին կովերին խոզերին և նույնիսկ, հավերին

Հին Հայաստանում անասնաբուժությամբ զբաղվում էին քրմերը, հովիվները հեքիմները, իսկ ավելի ուշ պայտարները Հայաստանում հիվանդ կենդանիների բուժման մասին առաջին գրքերը բժշկարանները, որոնք կազմված են մագաղաթե ձեռագիր էջերից ունեն 800—900 տարվա պատմություն: Այդ բժշկարաններից շատերը պահպանվում են Մատենադարանում: Ռուսաստանի անասնաբույժների մասին պատմող առաջին ձեռագիր գիրքը ավելի քան չորս հարյուր տարեկան է Այդ ժամանակներից շատ բան է փոխվել այդ մասնագիտության տեր մարդկանց կյանքում և աշխատանքում: Այժմ կան զանազան կաթինետներ ունեցող անասնաբուժական պոլիկլինիկաներ անասնաբուժարաններ կենդանիների բուժման գործին օգնում են ճշգրիտ սարքերն ու լավ դեղերը Անասնաբույժի «խնամարկյալներն» էլ շատ տարբեր են քաղաքներում կատուներ շներ, ազնվասարեկներ, երաշտահավեր, աղավնիներ, գյուղերում կովեր, խո



զեր ոչխարներ ձիեր կամ ընտանի թռչուններ.

Անասնաբույժներ աշխատում են նաև արգելանոցներում, ուր բազմացնում և ուսումնասիրում են գազաններին, և կենդանաբանական այգիներում: Այդտեղ նրանք, ճիշտ բժիշկ Այբուլիտի նման, չափում են արջի մարմնի ջերմությունը, լուծողական տալիս վագրին կամ թրջոց դնում կապկին:

Մեր օրերի անասնաբույժները ոչ միայն բուժում են հիվանդ կենդանիներին, այլև հետևում են առողջներին պաշտպանում նրանց հիվանդություններից, պատվաստումներ անում հիվանդությունները կանխելու համար Իսկ եթե որևէ կենդանի որևէ տեղ հիվանդանում էլ է, անասնաբույժն անպայման օգնության է հասնում եթե պետք լինի, նույնիսկ Աֆրիկա էլ կթռչի միայն ոչ թե թռչնի մեջքին նստած, այլ ինքնաթիռով

Անասնապահական ֆերմա

Եթե ձեզ հարցնեն, թե ինչ բան է անասնապահական ֆերման, դուք, հավանաբար, կպատասխանեք. «մի շինություն է, ուր պահում են կովեր, ոչխարներ, խոզեր...» Ձեզանից շատերն, անշուշտ, հատկապես գյուղի երեխաները, հաճախ են լինում ֆերմայում և մեծերին օգնում խնամելու կենդանիներին Բայց և այնպես եկեք ուղևորվենք ֆերմա, և ոչ թե հասարակ, այլ «վաղվա օրվա ֆերմա»:

.. Մեր առջև մեծ բայց «խուլ», առանց լուսամուտների, քարե շենք է մի ամբողջ «կովերի քաղաք»: Այստեղ մի ծածկի տակ ժողովված են երկու հազար կենդանիներ: Նրանց համար կան ընդհանուր «բնակարաններ», «մեկուսարաններ», նույնիսկ «մանկական սենյակ» հորթուկների համար, հատուկ խոհանոց և այլ շինություններ: Իսկ այդ այնտեղ մի կողմում, կլոր աշտարակներ են Դրանք լցված են մանրացած «խոտի պահածոյով», որը ձմռանը փոխարինում է հյութալի խոտին

Այդ շենքը մենք կարող ենք մտնել միայն մաքուր, նախօրոք ախտահանված խալաթով ու ճոքավոր կոշիկներով, որ պեսզի կենդանիներին չվարակենք որևէ հիվանդությամբ



Վերջապես մենք ներսում ենք թե ինչը ձեզ ամենից շատ կզարմացնի, չգիտեմ մաքրությունն ու թարմ ճղը, փոխակրիչի շարժվող, խոտով բեռնավորված լայն ժապավենները, թափանցիկ խողովակները որոնցով հոսում է կաթը, թե մարդկանց բացակայությունը Հնարավոր է նաև բոլորը միասին: Այստեղ կթվորուհիներ չկան՝ նրանց փոխարինում են օպերատորները, որոնցից յուրաքանչյուրը կարող է մեկ ժամում 200 կով կթել: Այդ գործում նրանց օգնում են ավտոմատ մեքենաները: Կթող ապարատներից կաթը խողովակներով լցվում է ուղղակի կաթնաընդունիչ խցիկ

Գյուղում ապրողները գիտեն, թե որքան դժվար է, հատկապես ձմռանը, կեր պատրաստելն ու կովին կերակրելը, իսկ այստեղ երկու հազար կով կերակրում են ընդամենը երկու մարդ: Մեկը աշտարակից կանաչ կերը մատուցում է խոհանոց, որն այդպես էլ կոչվում է կերախոհանոց, մյուսը «հրամաններ է տալիս» հենց կերախոհանոցում, շրջապատված մեծ, փակ բաքերով, որոնց մեջ կերը հյութեղ և սնընդարար է դառնում: Սեղմում է մի կոճակը, և պահանջվող կերը մի բաքից խողովակի միջով տեղափոխվում է ընդհանուր խառնիչ Սեղմում է մյուսը երկրորդ բաքից խառնիչի մեջ են լցվում լրացուցիչ սնընդանյութեր: Սեղմում է երրորդը սկսում են աշխատել խառնիչի թիակները և խառնում կերը եվ ահա պատրաստի կերը շարժվող լայն ժապավենով ուղարկվում է կովերին

Կովերին կթում և կերակրում են այդպես իսկ նրանց տեղը մաքրում են շատ հեշտությամբ Շենքի հատակին շատ ձեղքեր կան: Փողրակներից հոսող ջրով լվանում մաքրում են ամբողջ գոմաղբը, որը դուրս է գալիս այդ ձեղքերով

Մեկ էլ ահա թե ինչին անպայման ուշադրություն դարձրեք թարմ ու տաք օդին

որն այստեղ այդպիսին է ամեն եղանակի Ավտոմատների շնորհիվ է այդպես լինում Հենց փոքր ինչ բարձրանում է ջերմաստիճանը, նրանք շենք են մղում սառը օդ, ցրտում է միացնում են ջեռուցումը իսկ անհրաժեշտ պահին ավտոմատը օդափոխում է շենքը


Մենք եղանք միայն «կովերի քաղաքում»: Նույն ձևով, ավտոմատ մեքենաների և սարքերի օգնությամբ, խնամում են նաև խոզերին, ոչխարներին և գյուղատնտեսական մյուս կենդանիներին

Այսօր անշուշտ, բոլոր ֆերմաները չէ որ կառուցված են այնպես ինչպես պատմեցինք: Բայց դրանք անպայման այդպիսին կլինեն ապագայում

Անգետիկ

Վ

Ճստիկների հեքիաթային երկրի Ծաղկառատ քաղաքում, Զանգակաձաղկի փողոցում ապրում էր մի մանչուկ, անունն Անգետիկ Նրան այդպես էին կոչում, որովհետև ոչինչ չգիտեր: Մեկ ուրիշը դրանից, գուցե, վիրավորվեր բայց Անգետիկը միանգամայն գոհ էր իր անունից Նա անհոգ թրև էր գալիս փողոցներում և ամեն տեսակ անհավատալի պատմություններ հորինում Այդ մտացածին պատմությունների պատճառով նրա ընկերները հաճախ էին ընկնում ծիծաղելի և հիմար վիճակի մեջ Բայց, փոքր ինչ բարկանալուց հետո, բոլորն էլ ներում էին նրան: Չէ որ ամեն



քը գիտեին որ Անգետիկը շատ էլ խելացի տղա չէ Անգետիկի խիղճն էր միայն որ բոլորովին այլ կերպ էր մտածում

Մի անգամ Անգետիկն ու նրա խիղճն սկսեցին զրուցել.

— Խորամանկություն մի անի — ծաղրանքով ասաց խիղճը — Դու ամեն ինչ էլ շատ լավ հասկանում ես միայն թե հիմար անգետիկ ես ձևանում

— Չէ, ես հիմար եմ — համառորեն պնդում էր Անգետիկը — Եվ ամենին էլ չեմ ձևանում Շատ պետք է ձևանալը

— Շատ էլ լավ պետքդ է: Ախր հիմարից շատ բան չեն պահանջում: Դու էլ հիմար ես ձևանում, որ ամեն բանի համար անպատիժ մնաս: Բայց ինձ, եղբայրս, չես խաբի ես հո լավ գիտեմ, որ դու այնքան էլ հիմար չես

Եվ, այնուամենայնիվ ինչպիսին է այդ Անգետիկը՝ Եթե ուզում եք նրա հետ մոտիկից ծանոթանալ, ճամփորդության պատրաստվեք: Բանն այն է, որ Անգետիկը շատ հետաքրքրասեր է և, բացի այդ, մոլի ճանապարհորդ է

Ճանապարհորդությունն սկսվում է առաջին «Անգետիկի և նրա ընկերների արկածները» գրքից: Երկրորդ գիրքը՝ «Անգետիկը Արևաշատ քաղաքում», պատմում է զարմանալի բաների՝ զսպանակե ոտքերով ամենագնաց մեքենաների այնպիսի հեռուստացույցի մասին, որը, բավական է սեղմեա կոճակը, կպատմի ցանկացածդ հեքիաթը Այնքան շատ հրաշքներ կան ձստլիկների այդ երկրում. Բայց բանից պարզվում է, որ Անգետիկի համար այդ քանը քիչ է: Նա ուզում է իմանալ թե ինչ է կատարվում նաև այլ մոլորակների վրա Հաջորդ ճանապարհորդությունը երրորդ գիրքն է «Անգետիկը Լուսնի վրա»

Անգետիկի մասին բոլոր երեք վիպակ հեքիաթներն էլ գրել է Նիկոլայ Նիկոլանիչ Նոսովը Նա հեղինակն է նաև «Վիտյա Մալենը դպրոցում և տանը» վիպակի և բազմաթիվ զավեշտական պատմվածքների

Ն Ն Նոսովի գրքի հերոսների հետ շատ զվարճալի է: Նրանք սիրում են կատակել, երբեք չեն վիատվում և, որ գլխավորն է հավատարիմ ընկերներ են Նրանք բարեկամանում են նաև զրբերի հետ և միշտ էլ իրենց համար հետաքրքիր ու կարևոր ըզբաղմունք են գտնում

Գիշատիչների մեծ մասը լեշ չի ուտում Նրանք գերադասում են որս անել, ժամերով նստել դարանում, հետապնդել որսիւ: Գիշատիչներ էլ կան, որ սնվում են սատկած կենդանիների մտով: Լեշերի այդպիսի ոչնչացնողներ են շատ թռչուններ, որոնց անվանում են «թնավոր սանիտարներ»: Անգղներն, օրինակ, գրեթե բացառապես սնվում են լեշով: Նրանք բոլորն էլ խոշոր, շատ ուժեղ թռչուններ են Ամենափոքր անգղի գիշանգղի, թների բացվածքը 170 սմ է, իսկ պասկուճինը (կոնդոր) մինչև 3 մ: Սա ամենախոշոր գիշատիչ թռչունն է:

Անգղներն ապրում են տափաստաններում և լեռնային շրջաններում, բույն են դնում, սովորաբար, ժայռերի մեջ, ծառերի կատարներին և փչակներում, ուր դժվար են թափանցում մարդը և կենդանիները

Պասկուճներն օրինակ ապրում են Ամերիկայի լեռներում, մինչև 7 կմ բարձրության վրա Հաճախ մի քանի կիլոմետր բարձրության վրա օդում ճախրելիս



Անգլիա

— տես Մեծ Բրիտանիա

Նրանք ուշադիր զննում են իրենց «տիրույթները», անմիջապես նկատում լեշը և արագ իջնում վրան. Ինչպիսի սրատես աչքեր են պետք այդքան հեռվից ավարդ տեսնելու համար

Անգղներին հիմնականում չեն սիրում ախր շատ է անհրապույր նրանց կերը: Բայց նա, ով իսկապես սիրում և ճանաչում է բնությունը, երբեք չի կրակի այդ թռչունների վրա նույնիսկ, եթե նրանք կուշտ ուտելուց հետո ծանրացել են և չեն կարողանում անմիջապես թռչել: Իսկ անգղների մեկ կամ երեք ձվերով կամ ձագուկներով բույն գտնելու դեպքում երբեք չի քանդի այն. չէ որ անգղները շատ օգտակար թռչուններ են

Անգղների շատ տեսակներ կան Դրանցից չորսը տարածված են նաև մեր հանրապետությունում: Անգղներից մի քանիսը մշտապես ապրում են մարդու կացարանի մոտակայքում:




Հ Ք Անգերսենի հուշարձանը Դանիայի մայրաքաղաք Կոպենհագենում

մամբ, ծաղր և արհամարհանք պարծենկոտների ու անսիրտների հանդեպ: Այդ հեքիաթներում կողք-կողքի ապրում են լացն ու ծիծաղը վիշտն ու ուրախությունը ինչպես լինում է իրական կյանքում: Անդերսենը մեծ հեքիաթասաց էր և շատ լավ էր հասկանում, որ ամենահրաշապատում հեքիաթն անգամ պետք է արտացոլի կյանքը

Իսկ կյանքն այդ արտասովոր մարդը լավ գիտեր

Հանս Քրիստիան Անդերսենը ծնվել է 1805 թ ապրիլի 2 ին փոքրատարած Դանիայի Օդենսե փոքրիկ քաղաքում Նրա հայրը աղքատ կոշկակար էր, և հեքիաթա-



Հ Ք Անգերսենի «Հին տունը» հեքիաթի պատկերազարդու միջ (նկարիչ Վ Պիվովա ռով)

Անդերսեն Հանս Քրիստիան

1805—
1875

Վաղուց, ավելի քան հարյուր տարի առաջ, շոտլանդական փոքրիկ հյուրանոցի սենյակներից մեկում միջին տարիքի, հեզաբարո մի ուղևոր մոռացել էր իր ձեռնափայտը: Հյուրանոցի տերը ձեռնափայտին ամրացրեց «Դանիացի գրող Հանս Քրիստիան Անդերսենին» երկտողը և ձեռնափայտը տարավ փոստ Փոստն ընդունեց այդ կարճ հասցեով ծանոթը և այն հասցրեց մոռացկոտ ճամփորդին Որովհետև այն ժամանակ արդեն ամբողջ աշխարհը գիտեր այդ արտասովոր մարդու ազգանունը:

Վաղ մանկությունը սկսած և ամբողջ կյանքում մեզ հետ ապրում են Անագետուկուն գինվորի և ու սիրելի Մատնաչափիկը, Անճոռնի բաղիկն ու այն տղան որը միակն էր, որ ի լուր մարդկանց բացականչեց ճշմարտությունը թագավորը մերկ է: Աշխարհում, հավանաբար քիչ երեխաներ կան, որ չեն ճանաչում Անդերսենի հեքիաթների հերոսներին Այդ հեքիաթներում կա այն ամենը, ինչը մշտապես պետք է ապրի իսկական, լավ արդու մեջ հարգանք դեպի քաջությունը, բարություն և կարեկցանք բոլոր նրանց հանդեպ ովքեր դժվարին կացության մեջ են սեր հասարակ մարդկանց նկատ

գրի մանկությունն անցավ մի համեստ տան մեջ: Այստեղ ապագա գրողը կարող էր տեսնել այն ամենը, ինչ հետագայում կենդանություն առավ և իմաստավորվեց նրա հեքիաթներում և անագե հին գրալից պատրաստված զինվորիկը, և կարկատանի ասեղը, և արկղում տեղավորված այն պարտեզը, որ հետո հայտնվեց «Չյունեթագուհին» հեքիաթում: Կոշկակարի ընտանիքը, աշխարհի բոլոր աղքատ մարդկանց նման, դժվարությամբ էր ապրուստ վաստակում: Հանս Քրիստիանը 12 տարեկանից ստիպված էր աշխատել մահուդի ֆաբրիկայում Սովորելու հնարավորություն ուներ միայն երեկոները աղքատների անվճար դպրոցում: Բայց նա սովորում էր, սովորում էր եռանդով, ազատ ժամերին գրքեր էր կարդում միայն ու հեքիաթներ լսում Աշխարհում նա ամենից շատ



հեքիաթներ էր սիրում

Եվ նա որոշեց գրող դառնալ ու հեքիաթներ գրել: Դա հեշտ բան չէր Բայց Հանս Քրիստիանը նույնքան տոկուն ու համառ էր, որքան նրա Անագե զինվորիկը իսկ հեքիաթներում նա բոլորին ճշմարտությունն էր ասում ինչպես մերկ թագավորի մասին հեքիաթի տղան

Անդերսենը դարձավ աշխարհի բոլոր երեխաների, ուրեմն նաև բոլոր մարդկանց, հավատարիմ ընկերն ու բարի խոր հրդեհատուն: Չէ որ բոլոր մեծահասակներն էլ երբեմնի երեխաներ են: Եվ Անդերսենի հեքիաթները միայն երեխաների համար չէ, որ գրված են Դրանք շատ իմաստուն ու խոր մտքեր են պարունակում և միշտ էլ, մինչև խոր ծերություն, մեծ ուրախություն են պատճառում մարդկանց. Անդերսենի հեքիաթները հայերեն թարգմանությամբ լույս են տեսել մի քանի անգամ

Անիի ավերակները առջևում Մայր տաճարը

Լենինականից 30 կմ հարավ-արևմուտք սովետա-թուրքական սահմանի մոտ, Թուրքիայի տարածքում Ախուրյանի ձախափից պարզ երևում են կիսաքանդ շինություններ տաճարներ, եկեղեցիներ աշտարակներ պարիսպների ու բերդերի մնացորդներ որոնք հայ միջնադարյան ճարտարապետության հոյակապ նմուշներ են:

Անին Հայաստանի մայրաքաղաքն է եղել 10—11-րդ դարերում.

Թշնամիների հարձակումից և թափառական ցեղերի արշավանքներից քաղաքը պաշտպանված է եղել երկու ամրակուռ պարիսպներով որոնք կառուցող արքաների անուններով կոչվել են Աշտաշեն և Սմբատաշեն Այժմ պարիսպները մեծ մասամբ քանդված են Այնուամենայնիվ եղածն էլ բավական է պատկերացնելու, թե ինչ հզոր ու անառիկ էին դրանք կանգուն ժամանակ Պարիսպները երկու երեսից շարված են սրբատաշ քարով, ունեն բանդակներ արձանագրություններ Ավագ դռան վերևում վազող հովազի քանդակն է Անի քաղաքի զինանշանը

Անի քաղաքը 40 դուռ է ունեցել, յուրաքանչյուրը իր անունը. Կարսի դուռ, Դվն կամ Երևանի դուռ, Ավագ դուռ, Իգաձորի դուռ, Շախմատաշար դարպաս Գայլաձորի դարպաս

Անին ապրել է վերելքներ և վայրեքներ: Ծաղկուն շրջանում 100 000 բնակիչ է ունեցել: 989 թվականից մինչև 1020 թ հայոց թագավորը Գագիկ Առաջինն էր երեսունմեկ տարվա այդ յաղաղ ժամանակահատվածում Անին ավելի շենացավ ու ճոխացավ Կառուցվեցին հոյակերտ Մայր տաճարը Գագիկաշեն Արուղամբենց եկե-

Անդորրա

— տես Գաճաճ պետություններ

Անի

Պատմիչներն Անին անվանել են «մեծ» «տիեզերական»: Այդ անուններին Անին արժանացել է իր հոյակերտ կառույցներով պալատներով, տաճարներով կամուրջներով... Թեև ավերակ բայց այսօր էլ Անին հիասքանչ է. Քաղաքը փռված է Ախուրյան գետի աջ ափին, բարձր սարահարթի վրա

ղեցիները, պալատներ հյուրատներ ու իջնանատներ Հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին Անին անվանել է «հազար ու մեկ եկեղեցիների քաղաք»։ Եկեղեցիների ու տաճարների պսակը Մայր տաճարն է Նրա հեղինակը մեծատաղանդ *Տրդատ* ճարտարապետն է, որի հռչակը ժամանակին դուրս էր եկել Հայաստանի սահմաններից՝ Ախուրյանի ձախ ափից պարզ երեվում է կիսավեր տաճարի սյունազարդ և կամարազարդ ճակատը։ Տաճարի դիրքը հանդիսավոր է վեհ։ Նրանից դեպի ձախ բլրի վրա, միջնաբերդն է Շատ քիչ բան է մնացել. պարզ գծագրվում է միայն երեք կամար։

Անիի տաճարներն ու պալատներն ունեցել են շքեղ մուտքեր ներսից զարդարված գունագեղ որմնանկարներով։ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու կիսաքանդ պատերին մինչև այսօր էլ պահպանվել են որմնանկարները ձոխ քանդակներով ու նկարներով այդ եկեղեցին ստացել է Նախշազարդ անունը։

Անիում զարգացած են եղել մոտ չորս տասնյակ արհեստներ՝ շինարարական մետաղագործություն, գորգագործություն,

դիպակագործություն, ջուլհակություն, բրուտագործություն, ոսկերչություն և այլն։

Անին միջազգային խոշոր առևտրական ճանապարհների հանգուցակետ էր Անեցի վաճառականները առևտուր էին անում Բյուզանդիայի, Պարսկաստանի, արաբական երկրների, Հարավային Ռուսաստանի և Միջին Ասիայի, Չինաստանի, Հնդկաստանի հետ։ Աշխարհով մեկ տարածված էր անեցի արհեստագործ վարպետների հռչակը, որոնց արտադրանքը զանազանվում էր ճաշակով, գեղեցկությամբ և որակով

Բացի սովորական դպրոցներից, Անին ունեցել է նաև բարձր տիպի դպրոց, որտեղ դասավանդվել են բժշկագիտություն, բնագիտություն, մաթեմատիկա, փիլիսոփայություն և այլ առարկաներ Անին եղել է հայ գրչության կենտրոն։ Երևանի Մատենադարանում պահվում են Անիում գրված ձեռագիր գրքեր որոնք աչքի են ընկնում գունագեղ մանրանկարներով և փրղ ոսկրե ու արծաթե զարդաքանդակ կազմերով։ 10—11-րդ դարերում Անիում գործել է արքայական գրադարան

Անիի պահպանված պարիսպների





Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին

Անին ունեցել է քարանձավային թաղեր Քարանձավներն օգտագործել են նաև որպես զորանոցներ ու զինանոցներ Անիի քարանձավային բնակարանները թաքստոց են ծառայել թշնամիների հարձակումների ժամանակ Քարանձավների մեծ մասն այժմ փլված է

Անեցիները շատ էին սիրում իրենց քաղաքը և հերոսաբար մարտնչում էին նրա անկախության և ազատության համար Տարբեր դարերում Անիի վրա են հարձակվել բյուզանդացիները սելջուկյան թուրքերը, մոնղոլ-թաթարները

1042 թ հայոց բանակը սպարապետ Վահրամ Պահլավունու ղեկավարությամբ պարտության է մատնել Անին նվաճել փորձող բյուզանդացիներին և Անիում թագավոր օծել տասնութամյա Գագիկին Թագադրումից երկու տարի անց Գագիկ Երկրորդը ձակատամարտ է մղել բյուզանդական զորքերի դեմ և նրանց ջախջախել Անիի պարիսպների տակ Հայ պատմիչ Արիստակես Լաստիվերցին գրում է, որ հայոց բանակը 1042—1045 թվականներին ևս երեք անգամ ջախջախել է Անին նվաճելու եկած բյուզանդական մեծաքանակ բանակները: Իր գոյության ընթացքում Անին շատ հաղթանակներ ու պարտություններ է տեսել: 12-րդ դարում քաղաքը մի քանի անգամ ձեռքից-ձեռք է անցել: Քայքայվել ու ավերվել է Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ (14-րդ դար) Նվաճողներից մեկը Չարմաղան զորավարը ապշել է քաղաքի վայելչա

գեղությունից «Սպանեցեք բոլորին, — հրամայել է նա, — բացի արիեստավորներից»: Եվ նա գերեվարել է հազարավոր արիեստավորների մոնղոլական տիրույթների խորքերում նրանց ձիրքերն օգտագործելու համար

14-րդ դարում մոնղոլական և թուրքական ցեղերի պարբերական արշավանքներն այն աստիճան հյուժեցին քաղաքը, որ բնակիչներն աստիճանաբար լքեցին այն ու գաղթեցին օտար ափեր՝ Վրաստան, Ղրիմ, Լեհաստան, Կոստանդնուպոլիս... Անեցիներն ուր էլ որ բնակվեցին, կառուցեցին տներ եկեղեցիներ արիեստանոցներ ու վաճառատներ հիմնեցին դպրոցներ ու գրչության կենտրոններ Իրենց աշխատասիրությամբ և կառուցողական արվեստով նրանք արժանացան ուրիշ ժողովուրդների համակրանքին, դրանով ևս բարձր պահեցին հայոց մայրաքաղաք Անիի անցյալի փառքը

Անին միջնադարյան Հայաստանի ամենալավ ուսումնասիրված քաղաքներից է Պեղումները հնարավորություն տվեցին պարզել քաղաքի ընդհանուր պատկերը, փողոցների համակարգը, ջրմուղի հիմնական ուղղությունները: Բացվեցին հնագույն պարիսպները, հրապարակները, բրնակելի թաղամասերը, հյուրատները, կործանված բազմաթիվ եկեղեցիներ, հարուստների շքեղ ապարանքներ, հասարակ ժողովրդի հյուղակներ, արիեստավորների գործատներ


Անիի հերոսական պատմությունը ներշնչանքի աղբյուր է եղել հայ գրողների համար: Նրա մասին գրվել են շատ գրքեր

Անկշռություն

Զարմանալի երևույթ է անկշռությունը երբ տիեզերանավը դուրս է գալիս մերձեկըրյա ուղեծիր, բոլոր առարկաները հանկարծ կորցնում են իրենց կշիռը: Շրջված բաժակից, օրինակ ջուրը չի թափվում: Եթե բաժակը թափահարենք և ջուրը թափենք, ապա այն կընդունի գնդի ձև և կմնա օդում կախված: Շարժվելու համար ոչ մի ջանք հարկավոր չէ դուրս լողում, սավառնում եք օդում Տիեզերք ուղարկված ձկնիկները սկզբում լողում են ոչ թե ուղիղ գծով, այլ պարուրագծով, ավելի ու ավելի փոքրացող շրջանով: Մի քանի օր անց միայն նրանք սկսում են լողալ նախկինի պես ուղիղ: Մինչդեռ տիեզերքում լույս աշխարհ եկած

ձկնիկներն իսկույն սկսում են լողալ այն պես, ինչպես Երկրի վրա, այլ ոչ թե պտղտվում են նույն տեղում:

Կորցնելով կշիռը, բույսերն ու կենդանիները տիեզերքում կորցնում են նաև կողմ նորոշումը՝ վերևի ու ներքևի զգացումը Որոշ ժամանակ ամերիկյան «Աքայլաբ» ուղեծրային կայանում բնակված Անիտա և Արաբելա սարդերն իսպառ կորցրել էին սարդոստայն հյուսելու ունակությունը. Նրանք խիստ անկանոն սարդոստայն էին հյուսում և միայն մի քանի օր անց կարողացան հյուսել իրենց ավանդական նախշերը



Ինչնու է անկշռությունն առաջանում Բանն այն է, որ Երկրի շուրջը պտտվող տիեզերանավը չի դադարում ենթարկվել Երկրի ձգողությանը Երկրի շուրջը տիեզերանավի թռիչքի ժամանակ տեղի է ունենում նույնը, ինչ գնացքի շրջադարձի ժա-

մանակ ուղևորը *իներցիայով* թեքվում է շրջադարձին հակառակ ուղղությամբ Երկրի վրա իներցիայի այդ ուժը ուղևորին սեղմում է վագոնի պատին, իսկ տիեզերքում այն հավասարակշռվում է Երկրի ձգողությամբ Այդ երկու ուժերի հավասարակշռության հետևանքով էլ առաջանում է անկշռությունը.

Անկշռության պայմաններում մարդկանց ինքնազգացողությունը տարբեր է լինում: Ոմանք իրենց լավ են զգում արտակարգ թեթև և ուրախ, մյուսները վատ, ասես, անընդհատ անկման մեջ լինեն: Մարդու օրգանիզմն էլ է վերակառուցում իր աշխատանքը: Սիրտն աշխատում է ավելի փոքր ծանրաբեռնվածությամբ մղելով «անկշիռ» արյուն: Արյունը հորդում է դեպի գլուխը և մարդուն թվում է թե իրեն գլխիվայր են շրջել: Առանց ծանրաբեռնվածության մկանները թուլանում են փոքրանում են ոսկորների չափերն ու ամրությունը: Տիեզերագնացի համար դժվարանում է երկրային կյանքին նորից ընտելանալը:

Մինչև ճիշտ աստիճանը կարող է վերակառուցվել մարդու օրգանիզմը անկշռության պայմաններում Այս հարցը շատ կարևոր է տիեզերագնացության զարգացման համար Գիտնականները պայքարում են անկշռության վնասակար ազդեցության դեմ Տիեզերանավերում և ուղեծրային կայաններում ստեղծում են շարժվող վազբուղիներ, որպեսզի տիեզերագնացները կարողանան մարզել իրենց մկանները Տիեզերագնացներին հագցնում են նաև ծանրացված համազգեստ


Իսկ, գուցե, կարելի է ազատվել անկշռությունից ուղեծրային կայանին հարկադրելով պտտվել իր առանցքի շուրջը. Այդ պիսի նախագծեր արդեն առաջարկված են, բայց դրանք իրականացնելն առայժմ չափազանց դժվար է

Անձրև

— տես Տեղումներ

Անձրևարար սարք

Շոգ ու չորային ամառ է Մի քանի շաբաթ է արդեն, ինչ երկնքից ոչ մի կաթիլ անձրև չի տեղացել: Իսկ կոլտնտեսության դաշտերում և այգիներում անձրևն ամեն



օր առատ ջրում է բանջարեղենը, մրգատու ծառերն ու հատապտղի թփերը: Այն տեղ աշխատում է ավտոմատ անձրևարար սարքը

Այցելենք կոլտնտեսային այգի: Գետնին մրգատու ծառերի և հատապտղի թփերի միջև, ամենուրեք խողովակներ են գցված Որոշակի ժամերին դրանցից սկսում են ցայտել ջրաշիթերը: Ճիշտ և ճիշտ անձրեվի նման:

«Անձրև» լինի, թե չլինի հրամայում է ինքը հողը: Եթե հողը խոնավ է, ապա ամեն ինչ կարգին է, եթե չորացել է, ժամանակն է ջրելու: Այգու բազմաթիվ մասերում հողի մեջ խրված են հատուկ սարքեր որոնք կոչվում են խոնավության տվիչներ: Դրանք հետևում են հողի խոնավությանը հաղորդալարերով էլեկտրական ազդանշաններ ուղարկում «անձրևի շտաբ» ջրելու կենտրոնական կայան:

Հենց որ շտաբ է հասնում տազնապի ազդանշանը, այնտեղից իսկույն երկու հրաման է արձակվում:

Մի հրամանը գնում է պոմպակայան «Այսինչ խողովակներով ջուր բաց թող նել»: Մյուսը հասցեագրվում է հենց իրենց խողովակներին «Բացել փականները»: Եվ սկսվում է ջրցանը:

Շատ կոլտնտեսություններում, երբ ան հրաժեշտ է, դաշտերում հայտնվում է «անիվների վրա շարժվող անձրևը»: Դա շարժական ջրցան մեքենա է, փոխադրովի ցնցուղ և ոչ թե մեկ, այլ տասնյակ ցնցուղներ, որ տեղադրված են շատ երկար խողովակի վրա: Այդ մեքենան փղի նման կնճիթ ունի, որը ջուր է ծծում դաշտի

երկայնքով փորված առվից: Կնճիթից ջուրը լցվում է խողովակի, խողովակից ցնցուղի մեջ, իսկ այստեղից թափվում բույսերի վրա:

Անցնում է այդ մեքենան դաշտի երկայնքով և հագեցնում հարյուր մետր լայնությամբ հողակտորի ծարավը: Եվ այդպես երկրորդ, երրորդ, չորրորդ անգամ մինչև ջրում վերջացնում է ամբողջ դաշտը:

Արհեստական անձրևը կարող է ոչ միայն ջուր տալ բույսերին, այլև եթե պետք է, սնել: Եվ իրոք միթե դժվար է ջրին պարարտանյութ ավելացնելը: Դա էլ կլինի լրացուցիչ պարարտացումը:

Անվերջություն

Սեղանը, որի շուրջ դուք նստում և պատրաստում եք դասերը, տունը, ուր ապրում եք, փողոցը, քաղաքը և, նույնիսկ, մեր հսկայական երկիրը կարելի է չափել Որքան էլ մեծ է *Երկիր* մոլորակը այնուհանդերձ նրա վրա եղած ամենամեծ հեռավորությունն անգամ հասարակածի երկարությունը, 40 հզ կմ-ից մի փոքր է ավելի: Իսկ գիտնականները կարողանում են չափել Երկրից մինչև *Արեգակը*, *աստղերը* նույնիսկ մինչև միայն աստղադիտակով երևացող երկնային մարմինները եղած հեռավորությունները:

Այժմ պատկերացրեք անհնարինը հզոր հրթիռով մենք սլացել ենք տիեզերք և հասել միայն ամենահզոր աստղադիտակով տեսանելի աստղերից ամենահեռավորին: Այնտեղ մենք նորից կտեսնենք աստղային երկինք և նոր, ավելի հեռավոր աստղեր: Եվ այդպես շարունակ: Ամեն անգամ մենք կթռչենք մի հեռավորություն, որը հնարավոր է չափել, և, ուրեմն, մենք կարող ենք ասել թե քանի կիլոմետր կլինի Երկրից մինչև ցանկացած այն աստղը, որը երևում էր աստղադիտակով:

Ցանկացած հեռավորություն, որը կարելի է չափել, մաթեմատիկոսներն անվանում են վերջավոր: Բայց չէ որ մենք կարող ենք, թեկուզ և մտովի, թռչել ավելի ու ավելի հեռու... Եվ ինչ աստղի էլ հասնենք, մեր առջև առաջվա պես կլինի անսահման տարածություն որովհետև *Տիեզերքն* անվերջ է:

Իսկ այժմ խոսենք այլ բանի մասին Հիշեք, թե ինչպես էիք սովորում հաշվել ձեզ սովորեցրին հաշվել մինչև տասը, և դուք, հավանաբար, հարցնում էիք. «Իսկ ի՞նչ թիվն է գալիս տասից հետո»: Այնուհետև սովորեցիք հաշվել մինչև հարյուրը, ապա մինչև հազարը եվ դուք արդեն հասկանում էիք, որ ոչ հարյուրը, ոչ հազարը վերջին թիվը չէ որովհետև բավական է միայն հազարին ավելացնել մեկ, և կստացվի 1001, ապա 1002 և այդպես շարունակ

Բայց չէ որ ձեր իմացած ամենամեծ թվի հետև կարելի է կատարել նույնը Ավելացրեք դրան մեկ, և կստացվի նոր, ավելի մեծ թիվ Այդ պատճառով ոչ մի «ամենամեծ թիվ» գոյություն չունի Ինչպես ասում են, գոյություն ունի թվերի անվերջ բազմություն:

Եվ տիեզերական թռիչքի, և ամենամեծ թվի օրինակներում մենք ասում էինք «և այդպես շարունակ» Այդ արտահայտության մեջ է թաքնված անվերջության գաղտնիքը: Երբ մենք ասում ենք «և այդպես շարունակ» դա նշանակում է որ գործո

ղությունը, որի մասին մենք խոսում ենք, կարելի է կրկնել ցանկացած անգամ, անվերջ՝

Ահա հենց այդպիսի դեպքերում էլ, որ մենք պատմեցինք, խոսում են անվերջության մասին: Ինչ աստղ էլ որ վերցնենք, կա նրանից ավելի հեռավորը Թվերն անվերջ են, որովհետև չկա «ամենամեծ թիվ». յուրաքանչյուր թվին հետևում է մեկ ուրիշը ավելի մեծը

Անտառ

Անտառը ոչ մեկի թշնամին չէ Անտառը բոլորի բարեկամն է

Գազանների ու թռչունների համար նա հարազատ տուն է և ստնտու:

Դաշտերի համար պահապան է քամուց, հատկապես կիզիչ խորշակից Թե չլիներ անտառը, քամին այնպես անկաշկանդ կսուրար, որ դաշտից կքշեր կտաներ հողի ողջ բերրի շերտը, կչորացներ այն


Անտառը բարեկամն է գետի և նրա բնակիչների ձկների, խեցգետինների, գորտերի Երբ մեռնում է անտառը, շատ չանցած ծանծաղում և ցամաքում է նաև գետը: Ինչո՞ւ է այդպես Գարնանը ձնհալի ջուրը մեկ շաբաթում հոսում հեռանում է դաշտերից. Իսկ անտառի թավուտում, ծառերի ճյուղերի տակ, ձյունը դեռ մնում է մի ամբողջ ամիս, հավելով աստիճանաբար Ձնհալի ջուրը կուտակվում է մամռածածկություն, ինչպես սպունգի մեջ, և անտառային առվակները մշտապես ջուր են մատակարարում գետին

Անտառը բարեկամն է նաև օդի. Անտառի բույսերը օդը մաքրում են փոշուց ու մրից, հագեցնում թթվածնով

Մարդու համար անտառն ամենաշռայլ բարեկամն է Գերան է տալիս տան, տախտակ սեղանի, վառելափայտ վառարանի համար: Թուղթ, թաղանթանյութ, լուցկի, բևեկնախեժ, դեղանյութեր դժվար է թվարկել այն ամենը, ինչ տալիս է անտառը Հապա սնկերը, մորին, հապալմսը, ընկճյզը Մարդը երախտապարտ է անտառին բերրի դաշտերի, խոր գետերի, մաքուր

Հաջորդ երկու էջին դուք կտեսնեք Սովետական Միության միջին գոտու անտառների մի բանի բնակչի ճուռակ և բու կկու և կաքավ գորշուկ և աղվես, մուկ և գորտ, բծավոր եղջերու և աքար սկյուռ գիշատիչ կզաքիս և մրջյուններ (անտառի սանիտարներ)







օգի համար, չէ որ նա օգտվում է այդ ամենից: Անտառը նաև մարդկանց է նվիրում իր գեղեցկությունը Ե կ հիացիր որքան ուզում ես, անտառը քեզ չի վտարի:

Ընդարձակ է Սովետական Միությունը, և անտառներն էլ այնտեղ տարբեր են: Հյուսիսում տարածվում է փշատերև անտառների լայն շերտը: Այնտեղ աճում են եղևնի եղևին, *խեժափիճի*, *մայրի*: Հետո գալիս է խառն անտառների շերտը ուր սոճու և եղևնու կողքին աճում են *կեչին*, կաղամախին, լաստենին Ավելի հարավ այդ թվում նաև մեր հանրապետությունում ձգվում են *կաղնու*, թխկու, լորենու, *հացե նու* սաղարթավոր անտառները:

Անապատներում աճում են սաքսաուլի անտառներ Սաքսաուլը ծառ է որի տերևները բարակ ճյուղերի են նման և քիչ խոնավություն են գոլորշիացնում:

Ամենահարավի Միջին Ասիայի լեռների անտառները կարելի է այգիներ անվանել այնտեղ աճում են *ընկուզենի*, հոնի, վայրի խնձորենի, տանձենի:

Հարուստ ու գեղեցիկ է անտառը: Դրա համար ամեն մի ծառ թուփ ու խոտ պետք է պահպանել, և հատկապես՝ կրակից: Անտառի պահպանությունը մեր երկրում բնության պահպանության համար տարվող մեծ աշխատանքի կարևոր մասն է:

Կարդացեք այս գրքերը
Գարրիելյան Ռ Բ Տերմիտների կյանքը Ե
«Հայաստան» 1969
Смирнов А В Лес М «Дет лит» 1973

Անտառապետ

Երբեմն կարծում են, թե անտառապահն ու անտառապետը միևնույն բանն են Սակայն դրանք միանգամայն տարբեր մասնագիտություններ են: Անտառապահ անվանում են անտառի պահակին, նա պաշտպանում է անտառը Իսկ անտառապետը գիտնական անտառագետն է:

Անտառը հսկայական հարստություն է Այն մեզ տալիս է քիմիական և թղթի արդյունաբերության հումք շինափայտ և վառելափայտ, սնկեր և հատապտուղներ Ինչպես օգտագործել և միաժամանակ պահպանել անտառներն ապագա սերունդների համար:

Այ, հենց դրանով էլ զբաղվում է անտառապետը:

Սովետական Միության ամբողջ անտառային տարածությունը բաժանված է փայտամթերման և փայտի նախնական մշակման կոմբինատների: Դրանցից յուրաքանչյուրի մեջ մտնում են մի քանի անտառապետություններ:

Անտառապետությունը տնօրինում է 5 ից մինչև 10 հզ հեկտար անտառ Յուրաքանչյուր անտառապետություն վարում է անտառապետը:

Անտառապետությունը մեծ և բարդ տնտեսություն է որն իր աշխատանքում օգտագործում է տրակտորներ, ծառատնկիչ մեքենաներ, տարբեր մեխանիզմներ:

Անտառապետի գլխավոր հոգսը անտառի պահպանությունն է Իսկ դա նշանակում է պահպանել այն հրդեհից, վնասառու միջատներից ապօրինի անտառահատումներից:

Անտառապետն է որոշում անտառա հատման համար անհրաժեշտ հատվածները: Անտառի հատված մասերում նորից տնկիներ են տնկում: Նոր անտառի հիմնումը նույնպես ղեկավարում է անտառապետը:


Երիտասարդ անտառի մեկ հեկտարի վրա աճում է մի քանի հազար ծառ: Բայց չէ որ ծառերն աճելով փարթամանում են և սկսում նեղել իրար: Եթե դրանց մի մասը ճիշտ ժամանակին չհատվի ապա շատ ծառեր կչորանան, կտապալվեն և կփտեն, աղբոտելով անտառը: Իսկ հատվելու դեպքում դրանք կտան լրացուցիչ անտառանյութ: Անտառի նոսրացմամբ ևս զբաղվում է անտառապետը:

Անտառապետն իր անտառապետությունում վարում է նաև սնկերի և հատապտուղների արդյունաբերական բերքահավաքը Իսկ նրա տնտեսության մթերած խոտը օգտագործում են հարևան կոլտնտեսությունները իբրև կեր:






Սովետական Միությունում գործում են դպրոցական շատ անտառապետություններ: Երեխաներն անտառապետի գլխավորությամբ ուսումնասիրում են անտառը, ակտիվորեն մասնակցում ծառատնկման և պահպանման աշխատանքներին:



Անտարկտիդա

Անտարկտիդան մեր մոլորակի վեց մայրցամաքներից մեկն է: Գտնվում է երկրագնդի ծայր հարավում և ամբողջովին սառցապատ է: Անտարկտիդան և նրա շուրջը



ԱՐՇԱՎԱՄՔԵՐԻ ԵՐՔՈՒՂԻՆԵՐԸ

-  Ֆ Բե լինագառ զենի և Մ Լազարևի 819-18 թթ
-  Ռ Ամուլգեսնի 1910-1912թթ
-  Ռ Սքոթի 1910-1912թթ
-  Սովետական հետազոտական սահնակա թռթուրավոր գնացքների 1963-1964թթ.
-  Կետի Գործող անտարկտիկական կայաններն ու զրանց անվանումները





գտնվող օվկիանոսային հատվածները միասին մինչև Հարավային բևեռային շրջանը, կոչվում են Անտարկտիկա Անտարկտիդան հայտնագործել են ռուս ծովագնացներ Ֆ Ֆ Բելլինսգաուզենը և Մ Պ Լազարևը, 1820 թ Փոթորիկներն ու սառցապատնեշները ճեղքելով մեծ դժվարությամբ այնտեղ հասան նրանց «Վոստոկ» և «Միռնի» առագաստանավերը:

Երկրի վրա մարդու հայտնվելուց դեռևս միլիոնավոր տարիներ առաջ Անտարկտիդայում տաք էր, աճում էին արևադարձային անտառներ, թափառում ահռելի կենդանիներ. Բայց Անտարկտիդան հյուսիսային երկրներից ավելի վաղ սառցապատվեց այն ծածկված է հնագույն սառցավահանով: Մայր ցամաքի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով՝ երկաթի հանքաքարով, ոսկով՝ ալմաստներով գուևավոր մետաղներով, քարածխով:

Անտարկտիդայում սառույցներից տեղ տեղ դուրս են ցցվում մամուռի ու քարաքոսի նոսր շերտերով ծածկված սև ու շագանակագույն բլուրներ.

Մի տեղ գիտնականները հայտնաբերեցին լիճ որի սառույցը ճաքճքված էր ու թափանցիկ երկու մետր խորությամբ երևում էր կանաչավուն հատակը:

Մյուս լիճը սառած չէր և ջուրն էլ տաք էր 11 աստիճանի Մի գիտնական նույնիսկ լողացավ:

Լճերում հայտնաբերվել են դարչնագույն կարմիր, կապտականաչավուն շատ մանր ջրիմուռներ որոնք ջրին յուրահատուկ վառ գույն են տալիս.

Անտարկտիդայի հյուսիս արևմուտքում Գրեյամի երկրում հանդիպում են խոտեր ծաղիկներ:

Նշանակում է նույնիսկ Անտարկտիդայի սառցե թագավորությունում կյանք կա: Ծովափին ապրում են զվարճալի թռչուններ պինգվիններ Ափամերձ ջրերում լողում են կետեր, կաշալտներ, դելֆիններ մի քանի տեսակի փոկեր, որոնց թվում այսպես կոչված ծովափղեր, ծովալուսաններ:

Անտարկտիդան մեր մոլորակի ամենից քիչ ուսումնասիրված մայր ցամաքը լայնորեն սկսվեց հետազոտվել 1957 — 1958 թվականներին Աշխարհի տասներկու պետություններ պայմանավորվեցին համատեղ ուսումնասիրել մայր ցամաքը Տարբեր ազգությունների հարյուրավոր գիտնականներ Անտարկտիդայի տարբեր մասերում բազմապիսի դիտումներ կատարեցին:


Սովետական Միությունը հետազոտում է նրա արևելյան գրեթե չուսումնասիրված մասը Դեյվիսի ծովի ափին բարձրացել է սովետական գիտնականների «Միռնի» ավանը: Այլ կայաններ ստեղծվեցին նաև մայր ցամաքի ներքին շրջաններում Անտարկտիդական սովետական հետազոտությունների կենտրոնը Մոլոդոյոժնայա կայանն է:

Սովետական անվեհեր հետազոտողները թափանցեցին Անտարկտիդայի խորքերը, այնտեղ, ուր մարդը դեռ ոտք չի դրել նրանք աշխարհագրական կարևոր հայտնագործություններ կատարեցին Օրինակ, սովետական գիտնականները պարզեցին, որ Անտարկտիդան մայր ցամաք է և ոչ թե, ինչպես ենթադրում էին առաջ, կղզիների խումբ:

Անտարկտիդայում շատ ցուրտ է, ձմռանը երբեմն մոտ 90 աստիճանի ցուրտ է լինում:

Գիտնականներն ապրում են լավ տաքացվող տնակներում, իսկ սառնամանիքին աշխատում են էլեկտրաջեռակներով տաքացվող հագուստով և պաշտպանական դիմակով Այսպիսի դիմակ հագած մարդը շնչում է հատուկ գոտիչների միջով:

Անտարկտիդան ոչ մի պետության չի պատկանում: Միջազգային համաձայնագրով արգելված է նրա տարածքում ռազմական բնույթի որևէ միջոցառում անց կացնելը Անտարկտիդան խաղաղության մայր ցամաք է:



Չկա մեկը որ անուն չունենա Պատա հում է որ մարդն ինքը վաղուց չկա բայց նրա անունն ապրում է Այսպես մեզ են հասել անունները Իտալիայում տեղի ունեցած ստրուկների խոշորագույն ապստամբության առաջնորդի մեզնից ավելի քան 2 հզ տարի առաջ ապրած Սպարտակի Աստրեստանի թագուհի Շամիրամի որին վերագրվում է «Աշխարհի յոթ հրաշալիքներից» մեկի Բաբելոնի կախովի պարտեզների ստեղծումը.

Հապա եղբայրիկ Իվանուշկան ու քույրիկ Ալյոնուշկան Հենզելն ու Գրետելը հրաշալի հեքիաթներից Նրանք առհասարակ չեն եղել բայց նրանց անուններն ապրում են

Ի՞նչ է անունը. Դա բառ է բայց առանձնահատուկ մի բառ Բոլոր բառերն ինչ որ բան նշանակում են իսկ սրանք կարծես ոչ. եթե կատվին ցույց տալիս ասեք «Տես շնիկը վազում է», — ձեզ չեն հավատա: Իսկ եթե ձեր քույրիկ Անահիտին մեկնումեկի հետ ծանոթացնելիս նրան ներկայացնեք որպես Գայանեի ոչ ոք նույնիսկ չի էլ կասկածի որ ճիշտ չեք ասում:

Կան ժողովուրդներ որոնց պատկանող մարդիկ իրենց կյանքի ընթացքում փոխում են երկու երբեմն էլ երեք անուն: Եվ դրանից ոչինչ չի փոխվում: Գուցե անուններն իրոք ոչինչ չեն նշանակում

Դա այդպես չէ անշուշտ: Հնում մարդիկ իրար միայն իմաստալից անուններ էին տալիս իրենց կարծիքով երեխաներին անվանակոչելով նրանց պահվածքին արտաքինին համապատասխանող բառերով Ամերիկայի հնդկացիները երեխային կարող էին կոչել Ուի-Ուիս «բվի ձագ», կամ Հոմա Հոմանի «վաղորդյան ամպիկ»: Հին հույները օգտագործում էին այսպիսի անուններ Պետրոս որ նշանակում է «քար», Փոկաս «փոկ» Քրիստոս «ոսկի»:

Այդպես էին վարվում և ռուսների նախնիները Հին ռուսական անունները տարբեր կերպ էին հնչում Դոբրոսլավա (բարի փառք), Դոբրինյա (քաջակորով երիտասարդ), Մալուշա (փոքրիկ): Դրանց իմաստը հասկանալի էր Տղային կարող էին անվանակոչել Վոլկ (գայլ), որպեսզի նա լիներ ուժեղ ու համարձակ և երկար ապրեր. Ով ծնվեր շաբաթ (ռուսերեն «суббота») օրը, կոչում էին Սոբոտկա, անդրանիկ գավակին Պերվուշա (ռուսերեն «первый» բառից) իսկ ճղճղան մանչու

կին Բեսուն (անբուն) կամ Նեուպոկոյ (անդադրուն) Իսկ ինչո՞ւ հետագայում նման անունները չեն պահպանվել:

Նրանց դուրս են մղել քրիստոնեության հետ մուտք գործած օտար անունները Օրինակ Հովհաննեսը ծագել է «եհովան ողորմած է» արտահայտությունից: Ալեքսանդր անունը որ նշանակում է «մարդկանց պաշտպան» եկել է Հունաստանից Վալենտինան լատիներեն է «առողջ կորովի մարդու դուստր»:

Այդ անունները տարածվել են Եվրոպայի բոլոր ժողովուրդների մեջ: Յուրաքանչյուրը դրանք վերափոխել է յուրովի Հովհաննեսը Ֆրանսիայում դարձել է Ժան, Անգլիայում Ջոն, Լեհաստանում Յան, Իսպանիայում Խուան, Իտալիայում Ջովաննի Ռուսաստանում Իվան, իսկ անվան բուն իմաստը մոռացվել է



Հին ռուսական անունների և օտար «եկ վորների» միջև երկար ժամանակ պայքար է մղվել: Հաղթել են երկրորդները քանի որ երեխաներին մկրտելու ժամանակ նրանց անվանակոչում էին ոչ թե ծնողները այլ քահանաները և միայն այն անուններով որ գրված էին եկեղեցական գրքերում Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո այդ սովորույթը վերացվեց Այժմ ամեն մի հայր ու մայր իրենք կարող են ընտրել ցանկացած գեղեցիկ, բարեհունչ անուն կամ որևէ բան մատնանշող մի բառ ասենք, թեկուզ Սվետլանա (պայծառ) Մայա (մայիս), և այդ բառով անվանակոչել իրենց որդուն կամ դստերը: Շատ գործածական են դարձել բազմաթիվ նոր անուններ, օրինակ, Կիմը (Коммунистический Интернационал Молодежи— Երիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալ):

Հնում մարդկանց անուններին կցվում էին նրանց արտաքինի որևէ առանձնահատկությունը, բնավորությունը, հասարակական դիրքը բնութագրող մականուններ օրինակ, Լենկ Թեմուր («Լենկ» նշանակում է կաղ), Իվան Ահեղ Աշոտ Ողորմած, Աշոտ Երկաթ, Տիգրան Մեծ

Անուններն ստեղծվել են նաև կապված գանազան իրադարձությունների հետ

Սակայն ամեն բառ չէ որ կարելի է անուն դարձնել Երբ բառն անուն է դառնում, նրա մեջ շատ բան է փոխվում.

Այդ փոփոխությունների ուսումնասիրությամբ զբաղվում է մի հատուկ գիտությունն օնոմաստիկան (անվանագիտությունը) Սա հունարեն բառ է, որ նշանակում է «գիտություն անունների մասին»: Այն հետազոտում է նաև ազգանունները

Հայկական անունների ուսումնասիրությամբ հատկապես զբաղվել է Հրաչյա Աճառյանը և կազմել իր տեսակի մեջ եզակի «Հայոց անձնանունների բառարանը» հինգ հատորով

Հայկական մի շարք անուններ արտահայտում են մարդու արտաքին ու ներքին բարեմասնությունները (Համեստ Հրաչյա Գեղուհի, Հրայր, Ժիրայր Ազնիվ, Մաքրուհի) կամ կապվում են ծաղիկների, կենդանիների անունների հետ (Վարդիթեր Հասմիկ, Եզնիկ, Արծվիկ Այծմիկ) Անուններ էլ կան, որ ծագում են հայկական տեղանուններից (Նաիրի, Արարատ Սիսակ Արաքսի, Վանուհի), կամ ունեն կրոնական բովանդակություն (Մկրտիչ, Խաչատուր Գալուստ Համբարձում Սըրբուհի) կամ արտահայտում են որևէ

իմաստ (Անդրանիկ, Նորայր, Առնակ, Ռազմիկ, Ազատ, Մանուկ, Արփի, Արևիկ Լուսինե, Աստղիկ):

Կան նաև անուններ որոնք թեև օտար ծագում ունեն, բայց ձևափոխվելով դարձել են հայկական (Սեդա, Մհեր, Եղիշե, Ռուզան, Նարինե, Սոնա) Մի շարք անուններ էլ, թեև նման ձևերով կան և ուրիշ ժողովուրդների մոտ բայց գիտակցվում են իբրև հայկական և շատ տարածված են մեզանում (Դավիթ, Սամվել, Հովհաննես, Հակոբ, Հովսեփ Սահակ, Մարիամ, Լիլիթ, Լևոն Ռուբեն Գևորգ)

Հայկական անունները շատ-շատ են ինչպես տեսնում եք, դրանց մեծ մասը գեղեցիկ է բարեհունչ ու իմաստալից ուստի դրանք չպետք է մոռանալ ու դիմել օտար կամ պատահական, հնարովի ու անճաշակ անունների

Աշխատանք

Գրեթե այն ամենը ինչ մենք օգտագործում ենք առանց որի հնարավոր չէ ապրել ոչ մի օր մարդու ձեռքի գործն է նրա աշխատանքի արդյունքը: Մարդն իր աշխատանքով է փառաբանվում նրանով ինչ ստեղծել են նրա ձեռքերը միտքն ու եռանդը

Աշխատանքն է ստեղծել նաև մարդուն Աշխատանքի շնորհիվ է որ մարդը շարունակում է կատարելագործվել: Աշխատանքի մեջ է որ ի հայտ են գալիս մարդու տաղանդն ու ընդունակությունները ընդլայնվում գիտելիքները: Աշխատանքում մարդը ֆիզիկապես ամրապնդվում է կոփվում են նրա կամքն ու բնավորությունը Չէ որ աշխատանքը և ուժերի լարում է և համբերություն ու ջանասիրություն և կարգապահություն ու ճշտապահություն և պատասխանատվություն հանձնարարված գործի համար

Մեր երկրում գործունեության շատ բնագավառներ կան ուր կարելի է գործի դնել սեփական ուժերն ու ընդունակությունները Մարդկանց մի մասը ստեղծում է գանազան մեքենաներ հաց աճեցնում արդյունահանում օգտակար հանածոներ: Մյուսները նկարում են գրքեր գրում, ստեղծում ներկայացումներ ու կինոնկարներ երաժշտություն հորինում: Երրորդները որոնում են էներգիայի նոր տեսակներ հայտնագործում բնության գաղտնիքները ուսումնասիրում Տիեզերքը



Բայց աշխատանքը միշտ չէ, որ ազատ ու բերկրալի է եղել: Դարեր շարունակ մարդիկ աշխատում էին տերերի, ճնշողների համար Աշխատանքը անեծք էր նրանց համար, ջլատում էր նրանց ուժերը և ոչ մի բերկրանք չէր պատճառում:

Աշխատանքի բնույթը լրիվ փոխվեց սոցիալիզմի օրոք: *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության* հաղթանակից հետո ֆաբրիկաները, գործարանները հողը ամբողջ հարստությունն անցավ ժողովրդին Աշխատավորները դարձան իրենց երկրի տերը Բանվորներն ու գյուղացիներն արդեն աշխատում էին ոչ թե կապիտալիստին կամ կալվածատիրոջը հարստացնելու համար, այլ հանուն իրենց, հանուն ամբողջ ժողովրդի բարօրության: Եվ մարդիկ սկսեցին աշխատել նոր ձևով ստեղծագործաբար Աշխատանքում նրանք երբեմն իսկական հերոսություն էին գործում

1919 թ ապրիլի 12-ին Կազանի երկաթուղու Մոսկվա-Սորտիրովոչնայա դեպոյի կոմունիստները դուրս եկան շաբաթօրյակի նրանք աշխատում էին ոչ թե դրամի այլ իրենց երկրի ապագայի համար, որը ծանր վերքեր էր ստացել *քաղաքացիական պատերազմի* և արտաքին ինտերվենցիայի հետևանքով Շաբաթօրյակը ցույց տվեց որ ծնվել է նոր կոմունիստական վերաբերմունք դեպի աշխատանքը Շարունակելով այդ փառավոր ավանդույթը մեր ամբողջ երկիրն ամեն տարի դուրս է գալիս Համամիութենական կոմունիստական շաբաթօրյակի:

Սովետական իշխանության հաստատումով սկիզբ դրվեց սոցիալիստական մրցությանը: Մեր երկրի պատմության մեջ հավերժ կմնա Մազնիտոգորսկի Ամուրի Կոմսոմոլսկի և Կամազի, Դնեպրի Բրատսկի և Կրասնոյարսկի, Չորագետի ՀԷԿ-երի, Թուրքսիբի, ԲՍՄ-ի, Սևան-Հրազդան կասկադի և «Արփա-Սևան» թունելի շինարարների, ատոմային էլեկտրակայանների և տիեզերանավերի ստեղծողների սովետական ժողովրդի հերոսական աշխատանքը հանուն սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման

Մեր սոցիալիստական պետությունում աշխատելու հնարավորություն ունի յուրաքանչյուր մարդ:

Աշխատանքի իրավունքը հռչակում և ապահովում է ՍՍՀՄ սահմանադրությունը: Մեզ մոտ գործազրկություն չի կարող լինել Աշխատանքը *Սովետական Միության*

յան քաղաքացիների մեծ իրավունքն ու պարտականությունն է

Իսկ այն երկրներում ուր իշխում են կապիտալիստները, աշխատավորները չեն կարող վստահ լինել իրենց վաղվա օրվա նկատմամբ քանի որ հեշտությամբ կարող են կորցնել աշխատանքը մնալ առանց գոյության միջոցների: Այնտեղ տասնյակ միլիոնավոր մարդիկ աշխատանք չունեն

Մեր երկրում ամեն մի հանրօգուտ աշխատանք հավասարապես հարգելի է ու պատվաբեր: Լավագույն աշխատավորները պարգևատրվում են շքանշաններով ու մեդալներով: Աշխատանքային արիության բարձրագույն պարգևը *սոցիալիստական աշխատանքի հերոսի* և լենինյան մրցանակի դափնեկրի կոչումներն են: Այդ կոչումներին կարող են արժանանալ բանվորներն ու կոլտնտեսականները, գիտնականներն ու գրողները, մանկավարժներն ու բժիշկները և ուրիշ շատ բնագավառների աշխատողներ

ՍՍՀՄ ում առաջիկա տարիների համար կոմունիստական շինարարության խնդիրները սահմանող ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումներում նշված են այնպիսի միջոցառումներ, որոնք սովետական մարդկանց աշխատանքը կդարձնեն էլ ավելի հրապուրիչ և ստեղծագործ կաարգեն մեծ բավականություն ու բերկրանք

Կոմունիստական հասարակարգը կարելի է կառուցել սովետական բոլոր մարդկանց բարեխիղճ աշխատանքի շնորհիվ միայն. Կոմունիզմն ու աշխատանքն անքակտելի են Եվ հանուն ողջ ժողովրդի բարօրության կատարվող այդ աշխատանքին դուք պետք է պատրաստվեք դպրոցական նստարանից



Աշխարհամասեր և մայր ցամաքներ

Եթե դուք կարողանայիք մի քանի հազար կիլոմետր բարձրությունից դիտել երկիրը, ապա կտեսնեիք, որ նրա մեծ մասը ծածկված է *օվկիանոսներով և ծովերով*: Դրանք միացած են իրար և բոլորը միասին կազմում են միասնական Համաշխարհային օվկիանոսը Ջրային այդ վիթխարի տարածության մեջ կան ցամաքի հատվածներ որոնց անվանում են մայր ցամաքներ

ԱՐԵՎՍՏՅԱՆ ԿՐԱՎՈՐՈՒՆԳ

ՄԱՅՐ ՑԱՄԱՔՆԵՐ
ԵՎՐԱՍԻԱ
ԱՍԻԱ
ՀՅՈՒՍԻՍԱՑԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ
ԱՎՍՏՐԱԼԻԱ
ԱՆՏԱՐԿՏԻՂԱ

ԱՐԵՎԵՅԱՆ ԿՐԱՎՈՐՈՒՆԳ



ԱՇՏԱՐԱՄԱՍԵՐ

	Եվրոպա		Ամերիկա
	Ասիա		Ավստրալիա և Օվկիանիա
	Աֆրիկա		Անտարկտիդա

Երկրագնդի վրա կա վեց մայր ցամաք Ամենամեծը Եվրասիան է: Այս մայր ցամաքում է գտնվում մեր հայրենիքը Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: Ըստ տարածքի չափերի երկրորդ մայր ցամաքը *Աֆրիկան* է Նրա ափերը ողողում են երկու օվկիանոսներ Նոթկականն ու Ատլանտյանը: Երկու մայր ցամաքներ Հյուսիսային *Ամերիկան* և Հարավային *Ամերիկան*, միացած են Պանամայի նեղ պարանոցով *Անտարկտիդան* հինգերորդ մայր ցամաքն է Այն ծածկված է սառցավահանով և երկրագնդի միակ մայր ցամաքն է ուր մշտական բնակիչներ չկան Ամենափոքր մայր ցամաքը *Ավստրալիան* է, որը զբոսնում է Հարավային կիսագնդում

Մայր ցամաքների չափերն ու ուրվագծերն անընդհատ փոփոխվում են Միլիոնավոր տարիներ առաջ Հարավային Ամերիկան Աֆրիկան *Ասիայի* մի մասը և Ավստրալիան կազմել են մեկ մայր ցամաք Գոնդվանան: Երկրակեղևի տրոհվելու և տեղաշարժվելու հետևանքով այդ մայր ցամաքը բաժանվել է մի քանի մասի Այդպես են առաջացել ներկայիս մայր ցամաքները: Մեր ժամանակներում էլ են մայր ցամաքները դանդաղորեն տեղաշարժվում Օրինակ աստիճանաբար միմյանցից ավելի ու ավելի են հեռանում Եվրասիան և Հյուսիսային Ամերիկան

Դեռևս հին ժամանակներից երկրագնդի ցամաքը բաժանում են ոչ միայն մայր ցամաքների այլև աշխարհամասերի Աշխարհամասերը նույնպես վեցն են *Եվրոպա*, *Ասիա* *Աֆրիկա* *Ամերիկա* *Ավստրալիա* *Անտարկտիդա* Հյուսիսային Ամերիկա և Հարավային Ամերիկա մայր ցամաքները կազմում են մեկ աշխարհամաս Ամերիկան իսկ մայր ցամաքներից մեկում Եվրասիայում, գտնվում են երկու աշխարհամաս Եվրոպան և Ասիան Նրանց միջև պայմանական սահմանագիծն անցնում է Ուրալյան լեռներով Էմբա գետով մինչև Կասպից ծովը, Կուամա և Մանիչ գետերով մինչև Դոնի գետաբերանը և այնուհետև Սև ու Միջերկրական ծովերով

Ուրալյան լեռներում այնտեղ, ուր անցնում է Եվրոպայի և Ասիայի միջև պայմանական սահմանագիծը կանգնեցված են մի քանի կոթողներ: Եվ պատահում է այնպես, որ այդ կոթողների մոտ լուսանկարվելու պատրաստվող զբոսաշրջիկները մի ոտքով կանգնած են լինում Եվրոպայում մյուսով Ասիայում

Ինչպես են առաջացել աշխարհամասերի անվանումները: Եվրոպացիները հայտնագործելով նոր երկրներ դրանք կոչում էին այս կամ այն կերպ *Հին հույներն* օրինակ, զանազանում էին միայն երկու աշխարհամաս Եվրոպան և Ասիան: Հունաստանից արևմուտք գտնվող տարածքը

Նրանք անվանեցին Եվրոպա իսկ դեպի արևելք ընկածը Ասիա երբ հին հռոմեացիները նվաճեցին Միջերկրական ծովի հարավային ափերը մեջտեղ եկավ երրորդ աշխարհամասի անվանումը Աֆրիկա 15-րդ դարի վերջին — 16-րդ դարի ըսկզբին Քրիստափոր Կոլումբոսի արշավախումբը հայտնագործեց Ամերիկան 17-րդ դարում հուլանդացի ծովագնացները հայտնագործեցին հինգերորդ աշխարհամասը «Թերրա Աուսթրալիս Ինքոգնիթա»-ն («Անհայտ Հարավային երկիր») Ավստրալիան 19-րդ դարի սկզբին Անտարկտիդայի (այսինքն «Արկտիկայի դեմ հանդիման ընկած երկիր») ափերին առաջինը հասան ռուս ծովագնացներ Ֆ Ֆ Բելլինսգաուզենի և Մ Պ Լազարևի նավերը: Այսպես հայտնագործվեց վեցերորդ աշխարհամասը

Աշխարհի ժողովուրդներ

Երկրի վրա ապրում է չորս միլիարդից ավելի մարդ: Նրանք բոլորը տարբեր ժողովուրդներ են Կա ժողովուրդ որի թիվն անցնում է 100 միլիոնից, օրինակ ռուսները, ճապոնացիները, չինացիները, բենգալացիները Գերմանացիները ֆրանսիացիները իտալացիները մի քանի տասնյակ միլիոն են

Կան նաև փոքրաթիվ ժողովուրդներ Հավանաբար, ամենափոքրաթիվը Ֆիլիպիններում ապրող տասադայ ցեղն է Նրանք ընդամենը 28 հոգի են: Ապրում են քարայրներում զբաղվում որսորդությամբ վայրի բույսեր հավաքելով և մինչև վերջերս նույնիսկ չգիտեին, որ երկրի վրա, իրենցից բացի, ուրիշ մարդիկ էլ են ապրում:

Երկրագնդի վրա ապրող բոլոր ժողովուրդները մեծաթիվ թե փոքրաթիվ, մոտ 2 հզ. են: Նրանք խոսում են տարբեր լեզուներով և ունեն տարբեր սովորույթներ: Ժողովուրդները զանազանվում են նաև իրենց արտաքին տեսքով. ճապոնացիներն, օրինակ ունեն սև և կոշտ մազեր աչքերն էլ նշաձև են բոլոր բենգալացիները թխամորթ են, Արևադարձային Աֆրիկայի ժողովուրդները սևամորթ են ու զանգրահեր:

Ժողովուրդների մեծ մասը խոսում է իր առանձին լեզվով Կան նաև բացառությամբ

յուններ: Այսպես անգլիացիներն ու ամերիկացիները խոսում են միևնույն լեզվով անգլերեն, գերմանացիներն ու ավստրիացիները գերմաներեն իսպանացիները և Հարավային ու Կենտրոնական Ամերիկայի ժողովուրդների մեծամասնությունը իսպաներեն: Բայց նրանք տարբեր ժողովուրդներ են նրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձին պատմությունը կենցաղն ու սովորությունները:

Ժողովուրդների միջև բազմաթիվ տարբերություններ կան, բայց ավելի շատ են նմանություններն ու ընդհանրությունները Նրանք բոլորը միասին կազմում են ամբողջ մարդկությունը Բոլոր ժողովուրդները աշխատավորները հավասարապես ձգտում են երջանիկ ուրախ և խաղաղ կյանքի

Մեր օրերում ինքնաթիռների ու նավերի ուղեորները հեռագրային ու փոստային կապի գծերը, առևտրական և մշակութային միջազգային համագործակցության հարաբերությունները խիտ կերպով ընդգրկել են երկրագունդը Ժողովուրդների բարեկամության և համագործակցության ձգտումն օրեցօր ավելի է ուժեղանում:

Սակայն դեռևս կան ուժեր, որոնք խաղաղություն չեն ուզում, ձգտում են պատերազմ սանձազերծել: Պատերազմը ձեռնտու է իմպերիալիստներին, որովհետև նրանց հսկայական շահույթներ է բերում: Նրանք շահագրգռված են պատերազմներով որպեսզի ճնշեն ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները: Չէ որ իմպերիալիստները ձգտում են իրենց հարստությունը պահպանել ու բազմապատկել շահագործելով ոչ միայն իրենց երկրների աշխատավորներին այլև ուրիշ ժողովուրդների

Մեր երկիրը սոցիալիստական մյուս երկրների հետ միասին հաստատակամորեն պայքարում է ողջ աշխարհի խաղաղության համար Մոսկվայում անցկացվում են կոնգրեսներ համաժողովներ, հանդիպումներ որոնց նպատակն է համախմբել խաղաղության ու բարեկամության համար պայքարող մարտիկներին:

Այսպես, 1973 թ հոկտեմբերին Մոսկվայում կայացավ խաղաղասեր ուժերի համաաշխարհային կոնգրեսը որին մասնակցում էին աշխարհի 143 երկրների ներկայացուցիչներ: Եվ խորապես խոր հըրդանշական է որ այդ կոնգրեսը կայացավ հենց Մոսկվայում աշխարհում առաջին սոցիալիստական երկրի մայրաքաղաքում

«Աշխարհի յոթ հրաշալիքները»

Այդպես են անվանում հին ժամանակներում փառաբանված շինություններն ու արձանները։ Յավոք մարդկային մտքի և հմուտ ձեռքերի այդ հրաշալի ստեղծագործություններից մեզ հասել են միայն եգիպտական բուրգերը հին եգիպտական թագավորների փարավոնների դամբարանները։

Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեից դեպի հարավ ձգվում է սրագագաթ սպիտակ ու դեղին արհեստական լեռների երկար մի շղթա Դրանք էլ հենց եգիպտական բուրգերն են Ամենամեծը՝ Քեոփս փարավոնի բուրգը որ 147 մ բարձրություն ունի կառուցվել է մոտ 5 հզ տարի առաջ մեր թվականությունից առաջ 28 որ դարում Նրանից ընդամենը երկու մետրով ցածր է Քեփրենի բուրգը։ Այս փարավոնին լեռան մեծությամբ դամբարանը չի բավարարել, և նա հրամայել է դամբարանի կողքին կանգնեցնել ամբողջական ժայռակտորից կերտված քարե մի պահապան։ Մարդու դեմքով և առյուծի մարմնով այդ պահապանը կոչվում է Սֆինքս։ Մարդու պես իմաստուն և առյուծի պես ուժեղ Սֆինքսի կերպարը սնահավատներին վախ էր ներշնչում, և մարդիկ նրան սարսափի հայր էին անվանում։

«Աշխարհի հրաշալիքներից» մյուսը Շամիրամի կախովի պարտեզներն են որ գտնվում էին Հին Արևելքի ամենամեծ ու ամենահարուստ քաղաքում Բաբելոնում Ավանդությունն այդ պարտեզների ստեղծումը կապում է Շամիրամ թագուհու անվան հետ։ Իրականում դրանք ստեղծվել են Նաբուգոդոնոսոր թագավորի հրամանով մեր թվականությունից առաջ 6-րդ դարում Այդ թագավորն իր պալատը կառուցել էր վեց հարկանի տան բարձրություն ունեցող արհեստական հարթակի վրա Դեպի այդ հարթակն աստիճանաձև բարձրանում էին աղյուսե կամարների վեց շարքեր՝ վեց կամարասրահներ։ Ամեն աստիճանի վրա հողի շերտ էր լցված և ծաղկուն պարտեզ էր գցված Գիշեր-ցերեկ հարյուրավոր ստրուկներ պտտում էին կաշվե դուլներով հսկայական անիվները եփրատ գետից ջուր տանելով կախովի պարտեզներին։


Երրորդ «հրաշալիքը» համարվել է հունական աստվածուհի Արտեմիսի տաճարը Փոքր Ասիայի Եփեսոս քաղաքում։ Այն

կառուցվում էր գրեթե 120 տարի, մարմարից և ավարտվել է մեր թվականությունից առաջ մոտ 550 թ Տաճարը փառաբանված էր իր հոյակապ զարդաքանդակներով և թանկարժեք իրերի առատությամբ։ Մեր թվականությունից առաջ 356 թ ոմն Հերոստրատոս, փառամոլության տենչով բռնված, հրկիզել է տաճարը։ Նրա անունն ընդմիջտ մնացել է իբրև անմիտ չարագործության խորհրդանիշ։


Հունաստանի հարավում, *օլիմպիական խաղերի* հայրենիք Օլիմպիայի մի տաճարում էր գտնվում *հին հույների* գերագույն աստված Ջևսի արձանը։ Օլիմպիական Ջևսին կերտել է մեծանուն քանդակագործ Ֆիդիասը ավելի քան 2 հզ տարի առաջ մեր թվականությունից առաջ 5 որ դարում Դա չորրորդ «հրաշալիք» է Վիթխարի տասնչորս մետրանոց Ջևսը բազմած էր ոսկեհուռ փղոսկրով սև փայտով ու թանկագին քարերով ընդելուզված գահին Նրա զուլիք զարդարում էր ձիթենու ճյուղերից հյուսված ոսկե պսակը ահեղ աստծու խաղաղասիրության նշանը Գլուխը, ուսերը, ձեռքերը կուրծքը փղոսկրից էին Չախ ուսին նետած թիկնոցը, մազերն ու մորուքը քանդակված էին ոսկուց Ֆիդիասը Ջևսին օժտել էր մարդկային վեհությամբ։ Գանգուր մորուքով ու մազերով բոլորված Նրա դեմքը միաժամանակ թե՛ խիստ էր թե՛ բարի թվում էր, ուր որ է նա կժպտա կելնի գահից և կշտկի հզոր ուսերը

Փոքր Ասիայում Կարիայի թագավորության մայրաքաղաք Հալիկառնասում (այժմ *Թուրքիայի* Բոդրում քաղաք) էր գտնվում հինգերորդ «հրաշալիքը»՝ Մավ սոլոս թագավորի հոյակերտ դամբարանը, որ կառուցել էր նրա այրին Արտեմիսիա թագուհին, մեր թվականությունից առաջ 4-րդ դարի կեսին Դա մի եռահարկ շինություն էր Առաջին հարկը գոտևորում էր սպիտակ մարմարե բարձրաքանդակների ժապավենը, երկրորդ հարկը մարմարե սլացիկ սյունաշար էր իսկ երրորդ հարկը բրգաձև տանիքն էր նույնպես մարմարից։ Կառույցը պսակում էր քառանկյա մարտակառքը, որ վարում էին մարմարակերտ Մավսոլոսն ու Արտեմիսիան (Մավսոլոսի և նրա կնոջ՝ Արտեմիսիայի արձանները ինչպես նաև դամբարանի այլ զարդարանքներ այժմ պահվում են Լոնդոնի Բրիտանական թանգարանում)

Մեր թվականությունից առաջ 5-րդ դարում Հռոդոս կղզու վրա հարձակվեց զորապետ Դեմետրիոսը Սակայն նրան չը-



1




2




3




4



5



6



7

«Աշխարհի յոթ հրաշալիքները».
 1 Արտեմիսի տաճարը Եփեսոսում,
 2 Հալիկարնասի դամբարանը
 3 Ջևահիրադանը Օլիմպիայում գործ բան դակագործ Ֆիդիասի,
 4 Հռոդոսի կոթողը
 5 Ալեքսանդրիայի փարոսը,
 6 Եգիպտական բուրգերը և Սֆինքսը
 7 Շամիրամի կախովի պարտեզները Բաբելոնում

հաջողվեց հաղթել ազատասեր հռոդոսցի ներին: Ի հիշատակ կղզու հաջող պաշտպանության հռոդոսցիները որոշեցին կանգնեցնել աշխարհի ամենամեծ արձանը: Դա վեցերորդ «հրաշալիքն» է որ հայտնի է Հռոդոսի կոթող անունով: Ծովի և քաղաքի դարպասների միջև ընկած առևտրական հրապարակում կանգնած էր 36 մ հասակով բրոնզե մի պատանի: Նրա հզոր ոտքերը փոքր ինչ բացված էին իսկ աջ ձեռքի ափը հովանի էր արված աչքերին: Թեթևակի ետ հակված՝ նա նայում էր հեռուն: Գլուխը զարդարում էր ճառագայթաձև թագը Արձանը պատկերում էր արևի աստված Հելիոսին որին կղզու բնակիչները իրենց հովանավորն էին համարում: Հնարավոր է նաև որ արձանն ունեցել է այն տեսքը ինչպես պատկերված է նկարում

Ձեզ բոլորիդ հայտնի «փարոս» բառը առաջացել է «աշխարհի յոթերորդ հրաշալիքից»: Նեղոս գետի գետաբերանում գտնվող Փարոս կղզում Ալեքսանդրիա քաղաքի մոտ մեր թվականությունից առաջ մոտ 280 թ կառուցվեց հին ժամանակների ամենամեծ փարոսը. Այդ եռա հարկ աշտարակի բարձրությունը 120 մ էր: Նրա գագաթի քարե կլոր սյունասրահում վառվում էր խարույկը՝ ճանապարհ ցույց տալով նավերին

Շամիրամի կախովի պարտեզները ոչ ընչացել են Եփրատ գետի հեղեղումներից Արտեմիսի տաճարը վերականգնվել է հետո նորից կործանվել: Ջևհիր արձանն այրվել է Մավսոլոսի դամբարանը 15-րդ դարում քար առ քար քանդեցին խաչա կիրները ամրոց կառուցելու համար. Հըս կա կոթողը տապալվեց երկրաշարժից Նույն բախտին արժանացավ նաև Ալեքսանդրիայի փարոսը Եվ միայն բուրգերը մնացին կանգուն Ջուր չեն ասում, թե նրանցից վախենում է ժամանակն ինքը:

Եվ չնայած «աշխարհի յոթ հրաշալիքներ» հանդիսացող բոլոր արձաններն ու շինությունները, բուրգերից բացի, կործանվել են նրանց մասին հիշողությունն ապրում է դարեդար. Եվ հնուց ի վեր ընդունված է մարդկային ձեռքի ամեն մի հոյակերտ ստեղծագործություն որ բոլորին ապշեցնում է իր գեղեցկությամբ անվանել «աշխարհի ութերորդ հրաշալիք»

«Աշխարհի յոթ հրաշալիքների» մասին դուք կարող եք կարդալ հետևյալ գիրքը.
Նեյխարդտ Ա. Ա., Շիշովա Ի Ա Աշխարհի յոթ հրաշալիքները «Լույս» Ե 1964

Սովետական Միությունում աշորայի (տարեկանի) հացն օգտագործում են շատ վաղուց Այդ պատճառով էլ աշորան մեր ցանքատարածություններում զբաղեցնում է երկրորդ տեղը *ցորենից* հետո Աշորան մյուս հացազգիներից ավելի շատ նման է ցորենին: Սակայն նրանց կարելի է տարբերել ծիլերով աշորայի փոքրիկ ծիլերն ունենում են չորս իսկ ցորենինը միայն երեք արմատիկ: Աշորայի ծիլերի առաջին իսկական տերևիկները կարմրավուն են իսկ ցորենինը վառ կանաչավուն Բայց ամենից շատ աշորան ցորենից տարբերվում է ծաղիկներով և հասկերով Աշորայի ալյուրը մուգ գույնի է հացը սննդարար և համեղ: Սովետական Միության հացի գործարաններում թխում են աշորայի հացի շատ տեսակներ օրլովյան սեղանի եփած բորոգինյան և այլն:

Աշորան շատ հետաքրքիր պատմություն ունի Մշակովի աշորան սերում է դաշտամուխտից որը մի ժամանակ աղբոտում էր աշնանացան ցորենի ցանքսերը: Լեռնային շրջանների խստաշունչ պայմաններում ցորենը ցրտերին ավելի քիչ էր դիմանում քան դաշտամուխտը վայրի աշորան: Այդ վայրերում նա աստիճանաբար դուրս մղեց «փափկասուն» ցորենին ժամանակի ընթացքում աշորան սկսեցին մշակել աշխարհի շատ երկրներում:

Աշորան ցորենի հետ եվրոպական հարթավայրեր է բերվել Հարավ-Արևմտյան Ասիայից Այստեղ ցրտադիմացկուն և արժեքավոր այդ հացաբույսը լայնորեն տարածվեց:

Աշորան ցանում են հիմնականում ամռան վերջին Դա աշնանացան աշորան է Ուշ աշնանը նրա դաշտերը զմրուխտ են հագնում Մատղաշ բույսերը չեն վախենում ցրտից և լավ ձմեռում են ձյան տակ Գարնանը խոնավ հողում աշնանացան աշորան միանգամից հասակ է առնում Աշորան տալիս է ոչ միայն հացահատիկ Նրա ծղոտն օգտագործվում է որպես կեր և կենդանիների տակի փոռոց (ցամքար) Նրանից պատրաստում են թուղթ և ուրիշ իրեր



Աշորայի հասկը և սերմը



Ապագայի քաղաք

Որքան են ապրում քաղաքները Մոսկվան, Երևանը Լենինականը օրինակ հարյուրամյակների և հազարամյակների տարիք ունեն: Այնտեղ ապրել են մեր ապուլապաերը կապրեն նաև մեր ծոռները Այդ քաղաքները մեծանում են վերակառուցվում, փոխվում է նրանց ճարտարապետությունը. իսկ սովետական իշխանության տարիներին մեր երկրում կառուցվել են հազարից ավելի նոր քաղաքներ:

Շատ քաղաքներ էլ դեռևս կառուցվում են եվ նրանք նույնպես ստեղծվում են դարերի համար Նշանակում է կարելի է ասել, որ նրանց բնակիչներն այսօր արդեն ապրում են ապագայի քաղաքներում: Ուստի և ճարտարապետի համար ամենագլխավորը կանխատեսելն է թե ինչպիսին է լինելու քաղաքն ապագայում շատ տասնամյակներ անց որքան բնակիչ է ապրելու այնտեղ և ինչ փոխադրամիջոցներից են նրանք օգտվելու ինչպիսի բնակարաններ

Երևանի Նոր Նորքի բնակելի զանգվածն ունի ապագայի քաղաքին բնորոշ գծերը



(կացարաններ) են ունենալու, և ինչպիսին են դառնալու գործարանները եվ թե որքան երեխաներ են լինելու քաղաքում.

Ուշադրությամբ դիտելով ներկան, ճարտարապետը կարող է կռահել, թե ինչն է որ այսօր պակասում է քաղաքին, և ինչը անհրաժեշտ կլինի նրան ապագայում

Շատ քաղաքներ ծնունդ են առել առանց որևէ խելամիտ հատակագծի աճել պատահականության քմահաճույքներով: Եվ մինչև հիմա էլ դրանք չեն կարողանում գտնել իրենց հստակ, բնական սահմանները: Դրանք ընդարձակվել են «դուրս թափվել» թույլատրելի սահմաններից, ինչպես խմորը տաշտից Քաղաքները «հոսում» են իրենց մեջ առնելով արվարձանները, մերձակա անտառները

Ընտրության տարբեր ուղիներ կան քաղաքը կամ պետք է սեղմվի հին սահմանների մեջ կամ անվերջ աճի մեծացնի չափերը: Բայց գուցե կա երրորդ ճանապարհը Առաջ քաղաքներն աճում էին լայնությամբ այժմ վեր են խոյանում իրենց բազմահարկ տներով Այդ կերպ քա-

ղաքը կստանա իրեն անհրաժեշտ տարա ծությունը Իսկ ապագայում, հնարավոր է հին քաղաքների վերևում բարձր սյուների վրա վեր խոյանան տների ամբողջ թա ղամասեր

Մի առասպել կա այն հսկայի մասին որն իր սեփական ծանրությունից մինչև ծնկները խրվեց հողի մեջ: Մեր քաղաք հսկաներն էլ գնալով ավելի խորն են ըն կրդմվում գետնի մեջ տների նկուղներն ու ջրմուղի խողովակները ստորգետնյա ավ տոտնակներն ու մետրոն Բայց, այնուամե նայնիվ քաղաքի մեծ մասը երկրի մակերևույթին է: Իսկ միթե չի կարելի այն ավելի խորն իջեցնել գետնի տակ եթե գետնի վրա տեղը նեղ է:

Այդպես ծագեց ստորգետնյա քաղաքա շինության գաղափարը Ոչ ոք, իհարկե, չի պատրաստվում ամբողջ քաղաքն իջեցնել գետնի տակ և մարդկանց ստիպել ապրելու գետնափորներում: Գետնի տակ կարելի է կառուցել երկաթուղային կայարանները, պահեստները, արխիվներն ու գրապահոց- ները կինոթատրոնները և նույնիսկ թանգարանները Իսկ հետո նաև գործա րաններն ու ֆաբրիկաները որոնք մոտ ապագայում կաշխատեն ինքնակառա վարմամբ բանվորը կառավարման վահա նակի մոտ է լուսավոր տաղավարում իսկ արտադրամասը գետնի տակ

Պատկերացնում եք թե որքան զբոսայ գիներ ու մարզադաշտեր կկառուցվեն ազատված տարածություններում ինչպես կմաքրվի քաղաքի օդը երբ մեքենաների գրեթե ամբողջ հոսքն իջնի գետնի տակ

Երկրագնդի վրա կան այնպիսի վայրեր ուր վնասակար տարերքից պաշտպանվե լու համար ավելի լավ է թափանցիկ գլխարկ հագնել: Օրինակ, կիզիչ անա պատներն ու Ծայր հյուսիսը: Մի տեղ 50 աստիճանի հասնող շոգ ու ավազահողմեր են մյուսում 50 աստիճանի սառնամանիք ու ձյունահողմեր: Իսկ մարդիկ աշխատում են ն բևեռում ն անապատում: Բոլորը հո չեն կարող տիեզերագնացի սաղավարտ հագնել: Նշանակում է այդպիսի սաղա վարտ այդպիսի թափանցիկ գլխարկ հար կավոր է հագցնել քաղաքին ուր հնարա վոր կլինի արդեն արհեստական կլիմա ստեղծել: Եվ այն ժամանակ մեր մոլորակի ամենածայր հյուսիսում էլ մարդիկ կկարո ղանան փողոց դուրս գալ առանց վերար կուի իսկ շիկացած անապատում տների բաց պատուհաններից ներս կթափանցի մեղմ ու թարմ գեփյուռը և զովություն կբերի մարդկանց

Ճարտարապետները ապագայի քաղաք ները նախագծում են օգտագործելով տեխ նիկայի բոլոր նվաճումներն ու գիտության կանխատեսումները Եվ նախագծում են մարդկանց համար: Աշխատանք և քնարա կան գեղեցկություն բնություն և անդորր հարմարավետություն և հանգստություն ահա թե ինչ կտան մեզ ապագայի քա ղաքները ուր մենք ապրելու ենք վաղը

Ապակի

Եգիպտոսում հնագիտական պեղումներ կատարելիս գիտնականները գտան ապա կե մի հիասքանչ սկահակ: Սկահակը գեղե- ցիկ ձև ուներ և պատրաստված էր ամենա- բարձրորակ ապակուց Որոշեցին գտածոյի տարիքը. պարզվեց, որ սկահակը պատ- րաստվել է գրեթե 3 հզ տարի առաջ: Հին Եգիպտոսում ապակուց պատրաստում էին զանազան զարդեր, ամանեղեն Ընդհուպ մինչև մեր թվականությունը Եգիպտոսը մնում էր ապակեգործության կենտրոն, որտեղից ապակե առարկաներ էին ար տահանվում շատ երկրներ

Պեղումները գիտնականներին օգնեցին պարզելու նաև, որ Ռուսիայում ևս պատ- րաստում էին ապակե զարդեր, ինչպես նաև հատուկ ապակի տաճարները զար- դարող խճանկարների համար

Հին Հայաստանում նույնպես ապակե զարդերն ու առարկաները լայնորեն տարածված էին: Պեղումների օգնությամբ Լճաշեն բնակավայրի դամբարաններում, օրինակ, հայտնաբերվել են 3 հզ տարի առաջ պատրաստված ուլունքներ, Կար- միր բլուրում՝ անոթներ, այլ հուշարձաննե րում (որոնց մասին դուք կարող եք իմա նալ՝ ընթերցելով «Հնագիտական պեղում- ներ» գրույցը) ճարմանդներ, կնիքներ և շատ ուրիշ առարկաներ: Միջնադարյան Հայաստանում ապակե գունազեղ ու բազ- մաձև իրեր էին պատրաստում, հիմնակա նում, Դվինում և Անիում, որոնք տարբեր ժամանակ եղել են Հայաստանի մայրա- քաղաքները: Այդ իրերն իրենց որակով չէին զիջում ժամանակի ապակեգործու- թյան լավագույն նմուշներին և նույնպես արտահանվում էին օտար երկրներ

Այդ հին ժամանակներից ի վեր ապակե- գործությունն, անշուշտ խիստ փոփո- խություններ է կրել:

Ջարմանալի նյութ է ապակին: Վերցնում են միանգամայն անթափանցիկ սպիտակ

ավագ, նույնպիսի անթափանցիկ սողա և նման մի քանի այլ նյութեր, խառնում են իրար, ապա խառնուրդը բարձր ջերմաստիճանում հալում վառարաններում: Եվ ահա պատրաստ է թափանցիկ, մածուցիկ զանգվածը: Նրանից կարելի է ապակե թերթ գլոցել, և կտացվի պատուհանի ապակի: Կարելի է փչելով ստանալ ապակե պղպաջակ և այն ձևափոխելով դարձնել բաժակ, ջրաման սկահակ

Բայց ապակին ամանեղեն հայելի զտողեղեն չէ միայն. Լուսանկարչական ապարատների կինոնկարահանման խըցիկների օբյեկտիվները պատրաստված են հատուկ թափանցելիության օպտիկական բարձրորակ ապակուց Իսկ որքան փորձանոթներ, սրվակներ, գալարախոլովակներ կան քիմիական լաբորատորիա

ներում Լուսավորող միլիարդավոր լամպերը նույնպես ապակուց են:

Ասում են «Ապակու պես փխրուն է» Մինչդեռ այժմ ստեղծված է այնպիսի ապակի, որն ամրությամբ պողպատին չի զիջում: Այդպիսի ապակուց կարելի է մեխանիզմների մասեր պատրաստել Ավտոմոբիլների և ինքնաթիռների լուսամուտախորշերում տեղադրում են միսված ապակի: Սա շատ ամուր է. այդպիսի ապակուց պատրաստված թերթը անվնաս կարող է մնալ անգամ այն դեպքում, եթե մեկ կիլոգրամանոց պողպատե գունդը մարդահասակ բարձրությունից ընկնի նրա վրա Այդ ապակին եթե, նույնիսկ, ջարդելու լինենք, սրաշեղբ բեկորներ չեն առաջանա Նշանակում է, եթե հանկարծ այդ ապակուց լուսամուտներ ունեցող ավտոմոբիլը վթարի ենթարկվի, և ապակին ջարդվի, նրա մեջ գտնվող մարդիկ բեկորներից չեն վնասվի.

Ապակուց պատրաստում են արհեստական մանրաթել, իսկ սրանից էլ հյուսում չայրվող գործվածքներ: Քիմիական խեժերով տոգորված ապակե գործվածքներից

պատրաստում են մարդատար ավտոմոբիլների թափքեր, ծովային նավակների և փոքր նավերի իրաններ:

Ապակու և ապակեգործ վարպետների մասին դուք կարող եք կարդալ հետևյալ գրքում

Кирпичникова Т П Хрустальные тайны
Л «Дет лит» 1973

Ապարներ

Երկրի ամբողջ մակերևույթը կազմված է ապարներից: Գետափի քարերը, կավիճը, որով դուք գրում եք գրատախտակին, ածուխը այս բոլորն ապարներ են Հանքաքար կոչվող ապարներից ստանում են տարբեր մետաղներ:

Մարդու համար օգտակար ապարները հենց այդպես էլ անվանում են օգտակար հանածոներ Ինչո՞ւ հանածոներ որովհետև դրանցից շատերը գտնվում են գետնի տակ, դրանք պետք է դուրս բերել գետնի տակից «հանել»: Իսկ օգտակար հանածոները գետնի տակից հանելու համար անհրաժեշտ է իմանալ, թե որտեղ և ինչպես կարող են առաջանալ դրանք ինչպես են, առհասարակ, գոյանում տարբեր ապարները:

Դուք հավանաբար, տեսել եք սրընթաց գետեր, որոնք հոսում են լեռնային նեղ կիրճերով Այդ գետերի ջրերն իրենց հետ տանում են քարեր, ավազ և կավի փոքրիկ մասնիկներ, որոնք առաջանում են լեռների քայքայման ընթացքում: Գետերը թափվում են ծովը, և ջրի հետ ծովն են թափվում նաև քարերը, ավազը, կավի մասնիկները: Ափի մոտ ծովի հատակն են իջնում քարերը քիչ հեռու՝ ավազը իսկ ավելի հեռու, որտեղ ծովը շատ խորն է կավի մասնիկները:

Այսպես, հարյուր հազարավոր ու միլիոնավոր տարիների ընթացքում օվկիանոսների և ծովերի հատակին կուտակվում են նստվածքների հսկայական շերտեր: Ժամանակի ընթացքում դրանք խտանում են և վերածվում ապարների՝ ավազաքարերի և կավային թերթաքարերի Դրանք անվանում են նստվածքային, որովհետև առաջացել են գետերի, լճերի, ծովերի և օվկիանոսների հատակին նստվածքներ տալու հետևանքով

Ծովերում և օվկիանոսներում ապրում են ձկներ, հատակին սողում են ծովախեցգետիններ և ծովախխունջներ Ծովերում




տված
ային
պարներ

սցեքար
պղծված է
աղուց մա
սցած կեն
անիների
ային
ախքնե
ոգ

արմար
ոյանում է
երկրի ըն
դերում
Հարարից
ճնշման
ուսկ, հար
տավոր
Հազարավոր
միլիոնա
տարի
հորի ըն
թացքում

զլոմե
ո ա
որի խո
բեկոր
որոնք
հացած
բնական
սնտով




և օվկիանոսներում ապրող շատ կենդանի
ներ, ձկների նման ունեն կմախքներ կամ
խխուռնների նման խեցիներ երբ կենդա
նիները մեռնում են նրանց կմախքներն ու
խեցիներն իջնում են հատակ Հազարավոր
ու միլիոնավոր տարիների ընթացքում ծո
վի հատակին կուտակվում են հսկայական
քանակությամբ այդպիսի կմախքներ ու
խեցիներ, որոնցից ժամանակի ընթացքում
նույնպես առաջանում է ապար կրաքար
Կավիճը հենց կրաքարն է որը կազմված է
վաղուց մահացած կենդանիների կմախք
ների ու խեցիների բազմաթիվ մանրա
գույն բեկորներից
Պուր հավանաբար տեսել եք ծանծաղ
լճեր կամ ճահիճներ որոնց շուրջը ան
տառներ են աճում: Երբ ծառերը չորանում

Մազմատիկ
ապարներ

Բազալտ ա
ռաջանում է
սառչող լա
վայից որը
դուրս է
ժայթքում
երկրի մա
կերևույթ
կամ ծովի
հատակ
(հրաբխի
ստորջրյա
ժայթքման
դեպքում)




Սառած լա
վա կամ հը
րաբխային
ապակի



Հրաբխային
տուֆ. գոյա
նում է սառ
չող լավայի
ապակու
բլուրեղիկ
ներից և կա
թիլներից



Գրանիտ
գոյանում է
երկրի ըն
դերում
մազմայի
սառչելու
դեպքում



Միներալներ


Քվարց պարունակվում է գրանիտի մեջ, բնութային մեջ հանդիպում է նաև առանձին խոշոր բյուրեղներով




Դաշտային սպաթ. նույնպես պարունակվում է գրանիտի մեջ



Փալլաս գրանիտի թափանցիկ բյուրեղներ են բարակ թիթեղների ձևով



Պիրիտ այս հունարեն բառը նշանակում է «կրակ»: Ուժեղ հարվածելիս պիրիտը կայծեր է արձակում: Շատ երկաթ է պարունակում



Են դրանց զգալի մասն իջնում է ճահճի հատակը ծածկվում ավազով ու կավով: Միլիոնավոր տարիներ առաջ հնագույն

ճահիճների և լճերի հատակն անցած և ամբողջ այդ ժամանակ հողում պառկած ծառերից առաջանում է *քարածուխ* իսկ ոսկեդեղին թափանցիկ սաթը ուրիշ գարմանալի գեղեցիկ առարկաներ են պատրաստում, փշատերև հնագույն ծառերի քարացած խեժն է

Երկրի ամենախոր ընդերքում ջերմաստիճանը շատ բարձր է իսկ ճնշումը շատ մեծ Այնտեղ ամեն ինչ այնքան շիկացած է, որ քարերն սկսում են հալվել և փոխարկվել հրահեղուկի մագմայի: Շիկացած մագման բարձր ճնշման տակ երկրի խոր ճեղքերով բարձրանում է դեպի մակերևույթ և դուրս նետվում Այդպիսի դեպքերում երկրի մակերևույթի վրա տեղի է ունենում հրաբխային ժայթքում: *Հրաբխից* դուրս են թռչում շիկացած քարեր, հորդում է հրահեղուկը: Երկրի մակերևույթին այն սառչում է և նրանից առաջանում են ապարներ օրինակ, բազալտ, որը շատ ամուր է: Բազալտն օգտագործում են շինարարության մեջ Այն կարելի է բարձր ջերմաստիճաններում նորից հալել և այդ հալույթից պատրաստել բացառիկ ամուր խողովակներ:

Բայց շիկացած մագման միշտ չէ, որ մակերևույթ է հասնում Շատ դեպքերում այն սառչում է երկրի ընդերքում և դրանից գոյանում են գաբբրո կամ գրանիտ կոչվող ապարները

Հրահեղուկ մագմայի սառչելուց առաջացած ապարներն անվանում են մագմատիկ ապարներ

Ուշադիր նայեցեք գրանիտի բեկորին և կտեսնեք, որ այն կազմված է մի քանի միներալից թափանցիկ քվարցից, փայլատ դաշտային սպաթից և փայլարի մուգ թեփուկներից Ինչպես տունն է կառուցված քարերից այնպես էլ շատ ապարներ կազմված են առանձին միներալներից:

Երկրի ընդերքում գրանիտի հետ միասին գոյանում են նաև մարդուն շատ անհրաժեշտ օգտակար հանածոներ տարբեր մետաղների հանքաքարեր Մի տեսակի հանքաքարից ստանում են երկաթ, մյուսից կապար երրորդից անագ:

Նշված ապարների մեծ մասը հատկապես մագմատիկ ապարները լայնորեն տարածված են Սովետական Հայաստանում: Դրանք կիրառվում են որպես շինանյութ (գրանիտ մարմար տուֆ) և որպես քիմիական արտադրության հումք

Մինչև այժմ խոսվում էր պինդ ապարների մասին Բայց կան նաև հեղուկ ապարներ օրինակ, նավթը և գազանման

ապարներ օրինակ, բնական գազը: Դրան ցից ստանում են արժեքավոր նյութեր
 Ապարներն ուսումնասիրում օգտակար հանածոները որոնում և հետախուզում են երկրաբանները

Առած և ասացվածք

Ժողովրդի բանավոր և գրավոր խոսքում հաճախ են հանդիպում սեղմ ու պատկերավոր ասություններ: Դրանք կազմված են մի քանի բառից կամ մեկ-երկու նախադասությունից և ունեն ամփոփ ու ավարտուն միտք: Ժողովրդական բանահյուսության այս տեսակները կոչվում են առածներ և ասացվածքներ: Առածներն ու ասացվածքները նման են իրար և տարբերվում են իրարից Առածներն ունեն այլաբանական-փոխաբերական իմաստ, իրենց բովանդակած միտքն արտահայտում են ոչ թե ուղղակի այլ անուղղակի ձևով կյանքից ու բնությունից վերցրած օրինակներով ու պատկերներով Օրինակ «Գեղ կանգնի,



գերան կկոտրի», «Ասեմ բոց կըլնի չասեմ խոց կըլնի», «Ունքը շինելու տեղ աչքն էլ հանեց» առածներից առաջինում գյուղի ոտքի կանգնելու և գերանը կոտրելու պատկերով անուղղակի արտահայտված է այն գաղափարը որ եթե ժողովուրդը միանա, մեծ գործեր կարող է կատարել երկրորդում այն միտքն է արտահայտված, որ եթե ճշմարտությունը բացահայտ ասվի ապա դրանից անխորժություն կըստացվի իսկ եթե բարձրաձայն չասվի և մարդն իր մեջ պահի, ապա դրանից էլ ինքը հանգիստ չի ունենա: «Ունքը շինելու տեղ աչքն էլ հանեց» առածում փոխաբերաբար ընդգծված է այն գաղափարը, որ մի լավ բան անելու նպատակով մարդ ակամա կարող է վնասել եղած լավն ու առավել կարևորը:
 Ի տարբերություն առածների ասացվածքներում միտքն արտահայտվում է ուղղակի ձևով առանց այլաբանության: Այսպես «Շատ մի սիրի ատել կա շատ մի ատի սիրել կա», «Համբերությունը կյանք է», «Ուշ լինի, նուշ լինի» «Ով կարգա նա մարդ ա»:

Առածներն ու ասացվածքներն ունեն ընդհանրացնող իմաստ: Դրանք ժողովրդի կենսափորձի վրա հիմնված իմաստուն եզրակացություններ են: Այդ պատճառով էլ առածներն ու ասացվածքները կոչվում են նաև «ժողովրդական իմաստություններ», «մեծանաց խոսքեր»: Յուրաքանչյուր նոր սերունդ իր նախնիների իմաստուն ասությունները սովորում է, յուրացնում, միաժամանակ ինքն էլ նոր իմաստություններ է ստեղծում և հների հետ ավանդում հաջորդ սերունդներին: Եվ այդպես շարունակ Առած-ասացվածքները հորինվում ու



սերունդներին են ավանդվում թե բանավոր խոսքով և թե գրի ու գրքերի միջոցով. Իսկ առանձին հեղինակների ստեղծած և գրով ավանդված ասույթները *թևավոր խոսքեր* են Առածներն ու ասացվածքները թևավոր խոսքերը ասելիքը ավելի դիպուկ պատկերավոր ու գեղեցիկ են դարձնում

Առակ

«Առակ» բառը հին հայերենում նշանակել է խրատ, իմաստություն այլաբանություն, բարոյախրատական նշանակություն ունեցող փոքրիկ գրույց Առակը ժողովրդական բանահյուսության հնագույն տեսակ է, որ վերոհիշյալ գրեթե բոլոր հատկանիշներն ունի իր մեջ ներառած.

Առակները գեղարվեստական փոքրիկ ստեղծագործություններ են կենդանիների, բույսերի ինչպես նաև մարդկանց մասին պատմող զանազան հետաքրքրաշարժ գրույցներ, որոնք ունեն այլաբանական



իմաստ Նրանցում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով աշխատում են օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում է լավը բարին գեղեցիկը մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում է վատը չարը տը գեղն ու անմարդկայինը: Ամեն մի առակ ունի խրատական դաստիարակիչ իմաստ

Առակները հին ժամանակներից ի վեր սիրված ու թարգմանաբար տարածված են եղել աշխարհի շատ ժողովուրդների բա

նահյուսության և գրականության մեջ Առակների ամենաին հեղինակը հույն եզովպոսն է որի անունով բազմաթիվ առակներ են պահպանվել հին հունական գրականության մեջ: Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը

Հայ գրականության մեջ առակները երեվան են եկել վաղ միջնադարում, սկզբում հունական առակների թարգմանություններով որոնք ամփոփված են եղել «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ուխմպիանի (Ողոմպիանի) առակները» ժողովածուներում Հետագայում 12—13 դդ դարերում, առակներ են գրել նաև հայ հեղինակները որոնցից նշանավոր են *Մխիթար Գոշը* *Վարդան Այգեկցին*: Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ Ամենահայտնին «Աղվեսագիրքն» է: Ահա մի առակ «Աղվեսագրքից», որ կոչվում է «Իմաստուն զինվոր»:

«Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում և նա երկու ոտքով կաղ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց «Ո՛վ ողորմելի հւր ես գնում. Քեզ խնայն կպանեն որովհետև փախչել չես կարող» Եվ նա ասաց «Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ փախչելու, այլ կանգնելու և կռվելու և հաղթելու»

Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ դրանք գրի են առնում գիտնականները և ուսումնասիրում նշանավոր առակագիր էր Ի *Կռիկովը*: Հայ գրականության մեջ առակներ են գրել Խ Աբովյանը Ղ Աղայանը Ավ. Իսա հակյանը *Խնկո Ապերը* և շատ ուրիշներ

Առասպել

Անհիշելի ժամանակներում, երբ մարդը դեռ չէր կարողանում ձիշտ կռահել և բացատրել բնության երևույթների պատճառներն ու օրինաչափությունները, ըստ ստեղծում էր աստվածներ որոնց կամքին ու ցանկություններին էր վերագրում այն ամենը ինչ կատարվում էր բնության և հասարակության մեջ: Մարդը նաև պատմություններ էր հորինում այդ աստվածների շուրջը ուր ջանում էր բացատրել երկրի, Արեգակի աստղերի Լուսնի, կղզիների մարդու կենդանիների և բույսերի ծագումը գոյատևելու օրենքները և բազմաթիվ այլ հարցեր Այդպես ծնունդ առան առասպելները Դրանք գերբնական

ու ֆանտաստիկ գրույցներ էին որոնք բանավոր խոսքի միջոցով անցնում էին սերնդե սերունդ

Եթե ամպրոպն է որոտում նշանակում է երկնքում մոլեգնում է հզոր աստված Պերունը եթե փոթորկվում է ծովը նշանակում է ինչ-որ բանից դժգոհ է խորախոր ծովերի աստվածը մտածում էին հին սլավոնները նրանց պատկերացմամբ դաժան ձմեռ ուղարկում է նիհար ու ժլատ Կոչչեյը իսկ ամառվա ջերմությունն արևի շռայլ ու առատաձեռն աստված Յարիլան

Հին հայերի պատկերացմամբ Նոր տարվա առաջին բարիքներն ուղարկում է Ամանոր աստվածը իսկ հյուրընկալության աստված Վանատուրը օթևան է տալիս Նոր տարվա տոնահանդեսների բազմաթիվ մասնակիցներին (հին հայկական տոմարով Նոր տարին սկսվում էր օգոստոսին)։ Եթե ընտանիքում իշխում են սերն ու համերաշխությունը նշանակում է այդ պես է կամենում ընտանեկան ողջախոհության աստվածուհի Նանեն որին անվանում էին նաև Գերագույն մայր (այս տեղից է ծագում մորը, տատին նանե կան չելու հայերի սովորույթը) Եթե մարդիկ գրել-կարդալ են սովորում ապա դրանով պարտական են գրչության աստված Տիրին որը նաև արվեստների ու գիտությունների հովանավորն էր և գուշակում էր մարդկանց բախտը

Մարդու բնավորության հատկությունները ևս համարձակությունը արիությունը, չարությունը, սերը մեր նախնիների երևակայության մեջ մարդկային (երբեմն նաև կենդանու կամ կես մարդ-կես գազանի) կերպարանք էին ընդունում։ Հին աշխարհի ժողովուրդները մտացածին հերոսների մասին իրենց պատմություններում արտացոլում էին հենց իրենց նիստուկացը, երազանքները, հույսերն ու նվիրական իղձերը Առասպելներում մարդիկ ասում էին այն ամենը ինչ մտածում էին չարի ու բարու, հերոսության ու վախկոտության արդարության ու անհավատարմության մասին Առասպելներ հորինում էին ոչ թե անհատ մարդիկ այլ սերունդներ ողջ ժողովուրդը Դրանք լրացվում էին ուղղվում, կրկնվում դարեդար Եվ այդպես առասպելները տոգորվեցին խոր իմաստությամբ ու վեհասքանչ գեղեցկությամբ

Ռուսական մի քանի հեքիաթներ օրինակ, Բաբա Յագայի և Անմահ Կոչչեյի Պերուն և Խորս աստվածների Յարիլայի և Մոկոչի մասին նույնպես կարելի է ան

վանել առասպելներ, որովհետև նրանցում արտացոլված են նախորդ սերունդների իրական աշխարհի երևույթները բացատրելու փորձերը

Շատ գեղեցիկ առասպելներ են նաև հին հույների և հռոմեացիների ավանդությունները։

Գրադարանից վերցրեք Ն Ա Կունի «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները» գիրքը Դուք այնտեղից կիմանաք միամիտ ու վեհանձն հսկա Հերակլեսի տասներկու սխրագործությունների մասին և շատ կսիրեք նրան։ Կիմանաք Յասունի և իր հսկա ընկերների խիզախ ճանապարհորդության մասին դեպի Կոզքիս (Կոլխիդա Աբխազիա)։ Եվ վերջապես, դուք կկարդաք Հին Հունաստանի ամենավեհ ու ամենագեղեցիկ առասպելը Պրոմեթեոսի մասին

Մի անգամ հին հույների ամենագլխավոր (գերագույն) աստվածը Ջևաը, զայրացավ մարդկանց վրա և վճռեց ոչնչացնել մարդկային ողջ ցեղը։ Բայց հսկա Պրոմեթեոսը որոշեց օգնել մարդկանց և նրանց կրակ նվիրեց։ Նա աստվածներից փախցրեց կրակի մի կայծ և պարզեց մարդկանց Պրոմեթեոսը սովորեցրեց մարդկանց տուն կառուցել, նրանց նավակներին առագաստ հագցրեց։ Նա պատմեց մարդկանց, թե ինչպես կարելի է խոտաբույսերից դեղեր պատրաստել, ինչպես երկրի ընդերքից հանել ու օգտագործել մետաղները Աստվածները զայրացան Պրոմեթեոսի վրա այն բանի համար որ նա մարդկանց դարձրեց իմաստուն և ուժեղ և դաժանորեն պատժեցին նրան հավերժ գամելով ժայռին Պրոմեթեոսին սարսափելի տանջանքների էին ենթարկում։ Նրանից պահանջում էին զղջալ և երես թեքել մարդկանցից Բայց նա այդպես էլ չհնազանդվեց

Պրոմեթեոսի կերպարով մարդիկ մարմնավորել են իրենց լավագույն հատկությունները իմաստությունը տոկունությունը, անձնագործությունն ու բարությունը

Հայ ժողովուրդը ևս ունի իր առասպելները որոնք ստեղծվել են հազարավոր տարիներ առաջ։ Մեզանից հազար հինգհարյուր տարի առաջ պատմահայր *Մովսես Խորենացին* գրի է առել իր լսած «Հայկ և Բել» «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Արամ» Վահագն, Տորք Անգեղ առասպելները

Մարդիկ միշտ էլ աստվածներին ստեղծում էին իրենց նման և իրենք էլ արտացոլվել են առասպելներում ինչպես



Առյուծ

Այս նկարում նկարիչը պատկերել է հին հունական առասպելների հերոսներին. Հպարտ ու արիասիրտ Պրոմեթեոսին որը մարդկանց պաշտպանում էր աստվածների կամայականություններից, վրեժխնդիր աստվածները գամել են ժայռին: Առասպելական հերոս Հերակլեսը մարտի է բռնվել բազմազխանի հրեջի հետ: Խիզախ Յասոնն ու իր ընկերները «Արգո» նավով ուղևորվում են ոսկե գեղմը բերելու Նրանք նավարկում են փոթորկոտ ծովով որը ծովերի ահարկու աստված Պոսեյդոնի տարերքն է

հայելու մեջ Միայն թե պարզվեց որ այդ հայելին իրոք որ «կախարդական» էր որովհետև անցել են արդեն հազարավոր տարիներ բայց նրա մեջ արտացոլված պատկերներն ապրում են ու ապրում: Եվ մեզանից յուրաքանչյուրը կարող է ամեն անգամ տեսնել նրանց երբ թերթի առասպելների մասին գրեքը

Առասպելների մասին դուք կարող եք կարդալ հետևյալ գրքերում

Լիսիցյան Ստ Ծաղկաբաղ է «Հայաստան» 1969:

Ղուկասյան Ա Հայրենի ավանդակներ է Հայպետհրատ 1960

Աֆրիկյան սավաննայի վրա իջավ գիշերը Գյուղում քուն մտան մարդիկ, փարախներում հանդարտվեցին այծերն ու ոչխարները, ննջել սկսեցին կապված ձիերն ու ուղտերը եվ հանկարծ լսվեց մի մռնչյուն, կարծես ամպրոպ ձայնեց Արթնացան մարդիկ, խուճապահար եղան կենդանիները. Իսկ ահեղ, ամեն ինչ ցնցող մռնչյունը կրկնվեց. գազանների արքա առյուծն է, որ որսի է ելել: Ջուր չեն նրան այդպես անվանել: Ուժով, ճարպկությամբ, համարձակությամբ դժվար թե մեկը համեմատվի առյուծի հետ Նա չի թաքնվում, գաղտագողի չի հարձակվում զոհի վրա Առյուծը հպարտ նախազգուշացնում է զգուշացեք, գազաններ, որսի եմ ելել: Ջգուշացիր, վարազ և դու, շերտավոր վագերաձի, արագավագ այծքաղ և հզոր գոմեշ: Ջգուշացեք բուրդը, առյուծը կարող է նույնիսկ գյուղ ներխուժել և վախեցած մարդկանց աչքի առաջ քարշ տալ տանել մատղաշ ցլիկի կամ կովի




Երկար ժամանակ առյուծներն իրոք որ աֆրիկյան սավաննաների տիրակալներն էին: Տեղի բնակիչները հազվադեպ էին առյուծի որսի ելնում Բայց ահա եկան հրացանավոր մարդիկ և առյուծներին արդեն չէին կարող փրկել ոչ ուժն ու ձկու- նությունը, ոչ էլ համարձակությունն ու թաքնվելու հմտությունը Շատ շուտով նրանց գրեթե լրիվ ոչնչացրին Այժմ առ- յուծները պահպանվել են Կենտրոնական Աֆրիկայի մի քանի շրջաններում և ար- գելանոցներում ինչպես նաև, շատ քիչ քանակությամբ Հնդկաստանում

Սկզբում կարծում էին թե առյուծների ոչնչացումով կճղակավոր կենդանիների քանակը կավելանա: Սակայն ստացվեց հակառակը Պարզվեց որ առյուծներն առաջին հերթին ոչնչացնում էին հիվանդ թույլ կենդանիներին, և այդ պատճառով էլ վարակիչ հիվանդություններն այդքան չէին տարածվում Այժմ առյուծների որսն արգելված է: Առյուծ կարելի է որսալ միայն կենդանաբանական այգիների համար այն էլ հատուկ թույլտվությամբ Առյուծ- ներն անազատ պայմաններին հարմար վում են արագ և նույնիսկ, բազմանում են


Առյուծի նորածին ձագուկները կորյուն- ները, որ սովորաբար երեքն են լինում շատ փոքր են, մոտավորապես 30 սմ եր- կարությամբ խայտաբղետ հետո մե- ծանալով, նրանք դառնում են միագույն

փշերից կամ ձկան ոսկորից ապա փայ- տից փղոսկրից այնուհետև մետաղից պատրաստված ասեղներ Ասեղնագոր- ծությամբ զբաղվել են դեռևս հին աշխարհի մի շարք ժողովուրդներ, իսկ ամենահայտ- նի կենտրոնը եղել է Բաբելոնը

Ասեղնագործությունը շատ զարգացած է եղել Հին Հայաստանում Այն ավելի է տարածված եղել, քան գորգագործու- թյունն ու կարպետագործությունը (այդ



Բաճկոնակ
(Ալեքսան-
դրապոլ
18-րդ դար
թավիշ ու
կեթել)



Արբիշ
(18-րդ դար)


Ասեղնագործություն

Հայկական լեռներում բքաշունչ ձմեռ է Գյուղական տան թոնրի շուրջ նստոտած երեխաներն ականջ են կախել տատի հե- քիաթին: Երբեմն-երբեմն երգիկից, որ հին տներում լույսի միակ աղբյուրն էր վար են սահում ձյան ձեթմակ, գեղեցիկ փաթիլնե- ռը իջնում պարզած ափերին և տեղնու- տեղն էլ հալչում: Եթե հնարավոր լիներ պահել այդ փաթիլները, նրանցով զար- դարել տունը, զգեստները Արագ-արագ ասեղնագործող տատը ժպիտով ընդիա- տում է երեխաների ափսոսանքի ձիչերը և ցույց տալիս նրբակար անկրկնելի զարդանախշեր Դրանցից ամեն մեկն ասես իջնող փաթիլն է, որն ասեղի ու թե- լի հմուտ ու հնարամիտ խաղով անմահու- թյուն է ստացել..

Ասեղնագործությունը գալիս է հնուց Սկզբում մարդիկ օգտագործել են բույսի

մասին դուք կարող եք կարդալ նաև «Գորգ» գրույցում): Հայուհին ասեղնագործ իրերով զարդարել է իր տունը, իսկ կարիքի դժվար օրերին պահպանել իր ընտանիքի գոյությունը Հայկական ասեղնագործ իրերի կարելի է հանդիպել ամենուրեք, ուր ճակատագիրը նետել է հայերին:

Ասեղնագործությունը *դեկորատիվ արվեստի* այն տեսակն է երբ ասեղի (երբեմն հելուսի) կամ ասեղնագործող մեքենայի օգնությամբ բազմազան թելերով ու բազմապիսի կարերով պատկերներ են ստեղծում զանազան գործվածքների կաշվի, թաղիքի վրա Ասեղնագործելիս օգտագործում են նաև ուլունքներ, մարգարիտ, թանկագին քարեր, ոսկեթելեր, արծաթաթելեր դրամներ և այլն:



Բարձի երես
(Մարաշ
1930թ
թավիշ մե
տաքսաթել)

Դարերի ընթացքում հորինվել ու մշակվել են ասեղնակարերի տեսակներ որոնք շատ բարդ են և միայն հատուկ վարպետների մենաշնորհն են եղել: Ասեղնագործության մեջ օգտագործվում են մի շարք այնպիսի զարդանախշեր ու զարդանկարներ որոնք մեզ ծանոթ են գորգարվեստից քարի ու փայտի փորագրությունից ոսկերչությունից խեցեգործությունից:

Ասեղնագործված հին պատառիկներ են հայտնաբերվել *Անի* քաղաքի պեղումներից: Դրանք ոսկեթել ասեղնագործության կատարյալ նմուշներ են: Անիում գտնված մի դիպակի ոսկեթել ասեղնանկարը պատկերում է մայր առյուծին կորյունի հետ Մայր առյուծի մարմինը հատում է կենաց ծառը որը հնում խորհրդանշել է կյանքի հարատևությունը:

Կենաց ծառը ասեղնագործության հիմնական մոտիվներից է Նրա հարյուրավոր պատկերումներ կգտնեք կենցաղի հետ կապված բոլոր իրերի զգեստների

սրբիչների գոգնոցների սփռոցների վարագույրների վրա ժողովուրդը հավատում էր որ կենաց ծառի պատկերումը կհեռացնի բոլոր փորձանքները, միշտ արթուն կպահի կենարար ուժերը: Նույնքան հատուկ վերաբերմունք է եղել յուրաքանչյուր զարդանախշի նկատմամբ Օրինակ օձանախշերին վերագրվել է ինչպես արգասաբեր, բարի, այնպես էլ չար հատկություն:

Ջարդանախշեր կան, որոնք արված են ժողովրդական բանահյուսությունից ծանոթ հեքիաթների և երգերի մոտիվներով:

Ասեղնագործված իրերն անթիվ են Գյուղական վայրերի ասեղնագործությունը մոտ է կարպետների, գորգերի նախշերին ավելի պարզ է բայց շատ արժեքավոր ավանդական խորիմաստ զարդանախշերի շնորհիվ Հին Հայաստանի մի շարք գավառների տարազը զարդանախշերի իսկական գանձարան է որտեղ պահպանված են հայկական արվեստի ուրարտական շրջանից եկող հնագույն տարրեր:

Հայ պատմիչները և գրողները հիացմունքով են խոսում եկեղեցական ասեղնագործ վարագույրների, իշխանական հանդերձների մասին:

Տարբեր ժամանակներում մշակված տառատեսակները և նրանց ասեղնագործական բազմազան եղանակները հայ գրերի պատմության զարգացման մեջ մի ինքնուրույն էջ են կազմում: Ժամանա-

կին մի քանի հայաշատ վայրերում (Թիֆլիս Կոստանդնուպոլիս, Տրապիզոն) լույս են տեսել ասեղնագործության հատուկ տետրեր, ուր հայկական այբուբենը ներկայացված է գեղարվեստական բազմազան ձևավորումներով:

Հայկական ասեղնագործությունը հայ արվեստի կարևոր տեսակներից է հայկնոց տաղանդի, անխնոջ աշխատասիրության ապացույցը: Այն հիմա էլ մեծ տեղ ունի ժողովրդի կենցաղում Ասեղնագործության գաղտնիքները բացահայտող ձեռնարկները, պիոներ-դպրոցականների պալատներում գործող խմբակները օգնում են, որ նոր սերունդները չմոռանան իրենց տատիկների ու մայրերի արվեստը:

Ասիա

«Ասիա» հնագույն բառը նշանակում է «արևելք»: Ասիան աշխարհամաս է որը մտնում է Եվրասիա մայր ցամաքի կազմի



Հ Յ ՈՒ Ս Ի Ս Ա Յ Ի Ն Ս Ա Ռ Դ Յ Յ Ա Լ
Օ Վ Վ Ի Ա Ն Ո Ս

Ս
Ո
Ն
Ն
Բ
Կ
Կ
Օ
Ն
Ա
Ն
Ա
Բ
Ք
Ք



Խճճափիճի



Ե լնի



Փ Նրկյան սրնակնի



Հնդկե ես



Ֆիկուս



Հյուսիսային Էղջեռու



Որսզոդ



Լառնային ղչխար



Եղնիկ



Ա ծքաղ



Յակ



Կուղի



Էւեռային ա վես



Գորջ արջ



Գայ



Սկ ո ո



Արջամու Ն



Ձ ա ս Գրկազ



Լ ա



Աստաուիս կատու



Վառ



Հոկազ (ընճառուճ)



Ե կսապա ուղ տ



Մ ասապառ ուղտ



Հնդկական իիղ



Ռնճեղջուռ



Գորն կապիկ



Օրասգուտան կապիկ



Վրշ սա



Ջ սլլա



Տուկթայի կաքազ



Բ եղաին ո



Խ ահազ



Սիղամարա



Դր սխտանազ



Քոչոզ ձուկ



Ծովային կրիա



Ծ սաջո




Փոկ



Կե

Կ-կոբրիլոս

Մասշտաբ 1:50 000



մեջ: Ասիայի և Եվրոպայի միջև ցամաքային սահմանն անցնում է Ռուսլյան լեռներով Էմբա և Մանիչ գետերով

Ասիայում այնքան շատ մարդ է ապրում որ կարելի է ասել, թե երկրագնդի յուրաքանչյուր երկրորդ մարդ Ասիայի բնակիչ է Ասիան զբաղեցնում է երկրագնդի ամբողջ ցամաքի երրորդ մասը Նրա տարածքի 3/4-ը լեռներ ու սարահարթեր են Թեև այնտեղ կան ն հսկայական հարթավայրեր ն ծովի մակարդակից ցածր իջվածքներ բայց ընդհանուր առմամբ դա շատ բարձր աշխարհամաս է Նրա կենտրոնական մասում գտնվում է Տիբեթի սարահարթը Այն նման է վեր խոյացած թասի, որի հարավային եզրին բարձրանում են Երկրի ամենաբարձր լեռները Հիմալայները:

Ասիայի ամենահարավային կետը գրտնըվում է հասարակածի այն երևակայական գծի մոտակայքում որը երկրագունդը բաժանում է երկու կիսագնդերի Հյուսիսային և Հարավային: Իսկ ամենահյուսիսային կետը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ափին է

Տարվա մեծ մասը Ասիայի հյուսիսը ծածկված է ձյունով, մոլեգնում են ձյունահողմերը, փչում են սառցաքամիները, բոցավառվում են բնեռափայլերը: Այստեղ տունդրան է

Աշխարհամասում հսկայական տարածություններ են զբաղեցնում թավախիտ փշատերև անտառները տայգան, ինչպես նաև կիսաանապատներն ու անապատները

ՍՍՀՄ-ի ասիական մասի տարածքում գտնվում են տունդրան և տայգան, տափաստաններ ու անապատներ իսկ հարավում Տյան-Շան, Պամիր Ալթայ և ուրիշ բարձր լեռներ

Կենտրոնական ասիական սարահարթը եզերող լեռներն Ասիայի հարավը փակում են հյուսիսային ցուրտ քամիներից Աշխարհամասի հարավային ափերը ողողում է Հնդկական տաք օվկիանոսը: Այստեղ շատ շոգ է, ձմեռ չի լինում շատ վայրերում ամբողջ տարին առատ անձրևներ են տեղում, և աճում են մշտադալար խիտ անտառներ ջունգլիներ: Ասիայի հարավում բնակվող մարդիկ տաք հագուստի կարիք չեն զգում

Արևելքում Ասիայի ափերը ողողում են Խաղաղ օվկիանոսի ծովերը, ուր կան հրաբխային շատ կղզիներ, իսկ օվկիանոսի հատակին մի քանի չափազանց խոր իջվածքներ (անդունդներ): Օրինակ Մա-



Բենգալյան վագր ազատության մեջ վագրերն ապրում են միայն Ասիայում

Նեղքիթ կապիկ Բոռնեո կղզուց





Մողեսն ապրում է ծառերի ժայռերի զառիթափերի վրա

Մասկյուռը կրծողների ներկայացուցիչ
 էրում է տափաստաններում և կիսա-
 անտառներում

Փասիանը խոշոր թռչուն է մարմնի երկարությունը մոտ 80 սմ
 բաշը մոտ 2 կգ





Երկարակրունկ ապրում է Ֆիլիպինյան և Զոնդյան կղզի սերի ջունգլիներում Այս փոքրիկ գազանների մարմնի երարությունը 8 16 սմ է քաշը 80 150 գ

րիանյան անդունդի ամենամեծ խորությունը 11 կմ է: Ասիայի արևելյան ծովեզերքին և կղզիներում հաճախ տեղի են ունենում երկրաշարժեր և հրաբխային ժայթքումներ: Օվկիանոսում առաջանում են սարսափելի փոթորիկներ թայֆուններ, որոնք հսկայական ալիքներ են բարձրացնում: Թայֆունները կատաղի արագությամբ սլանում են դեպի ցամաք ճանապարհին կործանելով ամեն ինչ և իրենց հետ բերելով խիստ տեղատարափ անձրևներ

Արևմուտքում Ասիայի ափերը ողողում են Միջերկրական ծովի ջրերը: Նրա ափին ամռանը շոգ է, ձմռանը խոնավ ու տաք Այստեղ աճում են արմավենիներ, նարնջի և կիտրոնի ծառեր խաղող

Ասիայում շատ են ջրառատ, խոշոր գետերը: Այստեղ են գտնվում աշխարհի ամենամեծ լիճը Կասպիցը և աշխարհի ամենախոր լիճը Բայկալը: Ասիայի շատ գետեր սկիզբ են առնում լեռներում հալչող սառցադաշտերից: Այդ գետերն ամբողջ տարին ջրառատ են: Դրանց վրա կառուցում են հիդրոէլեկտրակայաններ:

Աշխարհամասի հյուսիս արևելքում Վերխոյանսկի և Օյմյակոնի շրջաններում է գտնվում Հյուսիսային կիսագնդի ամենացուրտ վայրը ցրտի բնեռը Իսկ հարավում, Հիմալայներից ոչ հեռու երկրի «ամենաթաց» վայրն է Չերապունջին Տարվա ընթացքում այստեղ այնքան անձրև է տեղում, որ եթե թափված ամբողջ անձրևաջուրը հավաքենք մի տեղ, ապա այն ջրածածկ կանի քառահարկ շենքը

Ասիայի ընդերքում կան բազմաթիվ օգտակար հանածոներ հատկապես նավթ գազ, քարածուխ և գունավոր մետաղներ:

Ասմունք

Ամեն մի աշակերտ կարող է նկատել թե ինչպես դասընկերներից մեկն արտասանում է ազդու և տպավորիչ լսողի ուշադրությունը գրավելով, իսկ մեկ ուրիշը այնպես անհույզ ու միալար որ լսողը մնում է անտարբեր

Ասմունքի արվեստի կամ ինչպես սովորաբար ասում են գեղարվեստական

ասմունքի էությունը հենց այդ տարբերության մեջ է Ասմունքը արձակ և չափածո գրական երկերի արտասանության արվեստն է:

Ինչնու մեկի արտասանությունը տպավորություն է թողնում մյուսինը ոչ Ո՛րն է գաղտնիքը Այն որ խոսքի իմաստը կախված է ոչ միայն նրանից թե ինչ է ասվում, այլև նրանից, թե ինչպես է ասվում: Նույնիսկ ամենալավ խոսքը «Այո, իհարկե, ես ձեզ շատ եմ հարգում», կարելի է ասել այնպիսի հեզնանքով որ դա հնչի ճիշտ հակառակ իմաստով:

Ինչնով է պայմանավորված այս զարմանալի երևույթը

Հնչող խոսքի ինտոնացիայով հնչերանգով Այդ հնչերանգը բավական բարդ և բազում տարրեր պարունակող հասկացություն է Հնչերանգն է որ բանավոր խոսքին տալիս է իմաստ և հուզական ուժ Դրա համեմատ էլ մասնագետները տարբերում են խոսքի հուզական և իմաստային հետևյալ հատկանիշները. տրամաբանական (իմաստային) պաուզա (դադար) շեշտ տեմպ (խոսքի արագությունը), մեղեդի (բանավոր խոսքն ունի իր մեղեդին) և հուզական պաուզա շեշտ տեմպ ու մեղեդի

Չեք նկատել, որ ամեն ոք ձգտում է իր խոսքը դարձնել համոզիչ Այդ նպատակով էլ ամեն ոք խոսքի մեջ դադարներ է տալիս ուժեղ շեշտում է հատկապես կարևոր բառերը, խոսում է այն արագությամբ, որ ներդաշնակ է խոսքի բովանդակությանը, խոսքի մեղեդին կազմակերպում ըստ իր հուզական վերաբերմունքի

Այսպես է նույնիսկ առօրյա կյանքում.

Այս նույնն են անում նաև ասմունքողները, ինչպես և դերասանները, միայն թե այս ամենը հասցնելով արվեստի մակարդակի: Ասմունքողներն ու դերասանները հնչերանգի վարպետներ են Իհարկե, նրանք պետք է ունենան դուրեկան ախորժալուր ձայն, պետք է կարողանան արտասանել այնպես որ ոչ մի հնչյուն չկորչի պետք է «տեղ հասցնեն» ամեն մի բառ ու դարձվածք: Եվ այդ ամենի հետ միասին ու ամենից առաջ պետք է տիրապետեն հընչերանգի բոլոր գաղտնիքներին

Ասմունքի իսկական վարպետներն օժտված են բոլոր այս արժանիքներով

Տարբերություն կան ասմունքի և բեմական խոսքի, այսինքն բեմից հնչող դերասանական խոսքի միջև, երբ երկուսի դեպքում էլ գործում են նույն օրենքներն ու օրինաչափությունները: Կա, և դա հետև-

յալն է բեմական խոսքն ունի երկխոսութեան բնույթ, դերասանն իր խոսքով շրփման մեջ է մտնում ոչ միայն հանդիսատրահի (ինչպես ասմունքողը) այլև իր խաղընկերների հետ, ուստի և նա պետք է տիրապետի երկխոսություն վարելու, խոսքի միջոցով կերպար ստեղծելու վարպետությանը

Իսկ ինչ տարբերություն ասմունքի և արտասանության միջև, եթե երկուսն էլ

պետք է խոսքը հնչեցնեն հստակ, իմաստալից, զգացմունքով հագեցած Այո, այոպես է բայց տարբերություն, այնուամենայնիվ, կա Արտասանությունը ենթադրում է գրական երկի վերամբարձ բարձրաշունչ մատուցում, ասմունքը պատմողական մատուցում, որի ընթացքում դեպքեր են գալիս ու անցնում, բնավորություններ են գծագրվում: Ահա թե ինչու այրօրինակ ասմունքը կոչում են «մի դերասանի թատրոն» որի վարպետն էր Սուրեն Քոչարյանը


Աստիճանացանց

Աշխարհագրական քարտեզը և գլոբուսը, ասես, պատած են նուրբ ցանցով: Ի՞նչ ցանց է դա. եվ ինչի համար է անհրաժեշտ Դա երկրի աստիճանացանցն է Այն կազմված է միջօրեականներից և զուգահեռականներից, որոնք բաժանված են աստիճանների:

Միջօրեականները «փաթաթվում» են երկրին, հատվելով *Երկրի բևեռներում* Հյուսիսային բևեռում և Հարավային բևեռում: Բոլոր միջօրեականները նույն երկարությունն ունեն. Լոնդոնում գտնվող Գրինվիչի աստղադիտարանով անցնող միջօրեականը գիտնականներն ընդունում են որպես սկզբնական միջօրեական (0°) Դրանից են սկսում միջօրեականների հաշվարկը: Ըստ միջօրեականների որոշում են տվյալ վայրի աշխարհագրական երկայնությունը: Գրինվիչի միջօրեականից արեվելք ընկած բոլոր վայրերն ունեն արեվելյան երկայնություն, իսկ արևմուտք ընկածները՝ արևմտյան երկայնություն

Ջուզահեռականները «գոտևորում» են երկիրը Ի տարբերություն միջօրեականների, դրանք չեն հատվում և ունեն տարբեր երկարություն որքան հեռու են բևեռներից, այնքան երկար են: Ամենաերկար զուգահեռականը կոչվում է հասարակած և ունի 40 075 160 մ երկարություն: Հասարակածը հավասար հեռավորության վրա է գտնվում բևեռներից և երկիրը բաժանում է Հյուսիսային ու Հարավային կիսագնդերի Ջուզահեռականների հաշվարկը կատարվում է հասարակածից Ըստ զուգահեռականների որոշում են տվյալ վայրի աշխարհագրական լայնությունը: Երկրի մակերևույթի հասարակածից հյուսիս գտնվող բոլոր կետերն ունեն հյուսիսային լայնություն, հարավ գտնվողները՝ հարավային լայնություն





որոշակի օրինաչափությամբ նրանց դիրքով մարդիկ կողմնորոշվում էին տեղանքում և որոշում ժամանակը եվ մարդիկ սկսեցին ուսումնասիրել երկնային մարմինների շարժումները Այդպես ծնվեց աստղագիտությունը գիտությունն այն օրենքների մասին, որոնց ենթարկվում են երկնային մարմինների շարժումներն ու զարգացումը

Շատ դարեր պահանջվեցին պարզելու համար, թե երկնային մարմինների որ շարժումներն են իրական և որը միայն թվացող: Օրինակ մեզ թվում է, թե Արեգակը ծագում է, շարժվում երկնքում և մայր է մտնում, իսկ իրականում Արեգակի շուրջը պտտվում է մեր *Երկիրը*: Մինչև 16-րդ դարը համարյա բոլորը համոզված էին, թե Երկիրն անշարժ է և գտնվում է *Տիեզերքի* կենտրոնում, իսկ երկնային մարմինները պտտվում են Երկրի շուրջը:

16-րդ դարի լեհ մեծ գիտնական Նիկոլայ Կոպեռնիկոսը և նրա հետևորդներն ապացուցեցին, որ Տիեզերքն իրականում շատ ավելի բարդ է Երբ 17-րդ դարի սկզբին ստեղծվեց հեռադիտակ աստղադիտակը (օպտիկական սարք, որը հնարավորություն է տալիս մանրամասն դիտելու և ուսումնասիրելու երկնային մարմինները), պարզվեց, որ Արեգակն իր ծավալով ավելի քան միլիոն անգամ մեծ է Երկրից, իսկ աստղերը նույնպիսի շատ ջերմ, ինքնալուսարձակող գազային գնդեր են, ինչպես և Արեգակը: Մակայն աստղերը փոքրիկ և աղոտ են երևում որովհետև մեզանից անհամեմատ ավելի հեռու են, քան Արեգակը Եթե տիեզերական հրթիռը Արեգակին կարող է հասնել վեց ամսում, ապա նրա թռիչքը դեպի ամենամոտ աստղը կտևի շուրջ 130 000 տարի

Բացի Երկրից, Արեգակի շուրջը պտտվում են նաև սեփական լույս չունեցող այլ մոլորակներ

Լուսինը սեփական լույս չունեցող գունդ է և լուսավորվում է Արեգակից: Այն իր ծավալով մոտ 50 անգամ փոքր է Երկրից Լուսինը պտտվում է մեր մոլորակի շուրջը և այդ պատճառով էլ կոչվում է Երկրի բնական արբանյակ Արբանյակներն ունի նաև մյուս մոլորակների մեծ մասը:

Երկնային մարմինները դիտում, իսկ ապա դիտման արդյունքները մշակում ու վերլուծում են աստղադիտարաններում և ինստիտուտներում Սովետական Միությունում տիեզերագնացության հայրենիքում, աստղագիտությունն ամենաարագ զարգացող գիտություններից է Սովետա-

Երկրի աստիճանաքանցը Գը տեք հասարակածը և սկզբնական միջօրեային կանը

Լայնություններն ու երկայնություններն աշխարհագրական կոորդինատներ են, որոնք որոշում են կետերի դիրքը Երկրի մակերևույթի վրա

Պատահում է, որ ռադիոընդունիչը տագնապալի լուրեր է հաղորդում

— Վառվում է անտառը Ինքնաթիռ ու դարկեց: Հաղորդում ենք կոորդինատները հյուսիսային լայնության 55°, արևելյան երկայնության 92°:

— Նավը աղետի է ենթարկվել: Գտնվում է հյուսիսային լայնության 40°-ի արևելյան երկայնության 100°-ի վրա

Այսպես աշխարհագրական կոորդինատներն օգնում են ժամանակին շտապ օգնության հասնելու:

Աստղագիտություն

Դեռևս խոր անցյալում մարդիկ նկատել էին, որ Արեգակը, Լուսինը, մոլորակները աստղերը երկնքում տեղաշարժվում են



ամենանշանավոր գիտնականը ֆիզիկոս մաթեմատիկոս և աստղագետ Գալիլեո Գալիլեյն էր. նա իսկույն հասկացավ, որ աստղագետներին այդպիսի դիտակը շատ պիտանի կլինի, և 1609 թ պատրաստեց նույնպիսի մի դիտակ

Սարքը բարդ չէր Բարակ, երկու կողմից ուռուցիկ, մեծ տրամագծով ապակին (ոսպնյակ)՝ օբյեկտիվը, դրվում էր մետաղե կամ փայտե խողովակի այն ծայրում, որն ուղղվում էր դեպի դիտվող առարկան Փոքր հաստ ոսպնյակը օկուլյարը, դրվում էր խողովակի դեպի աչքն ուղղված բացվածքում: Որպեսզի ոսպնյակները ճիշտ համագործակցեին միմյանց հետ և սարքը պիտանի լիներ ցանկացած տեսողության համար խողովակը շարժական էին անում Օկուլյարը օբյեկտիվից հեռացնելու կամ նրան մոտեցնելու միջոցով դիտողը գտնում էր ապակիների միջև եղած այն հեռավորությունը որի դեպքում ստացվում էր ամենախոշոր ու ամենահիշատակ պատկերը


կան աստղադիտարանները հագեցված են բարդ սարքերով ու գործիքներով հըզոր աստղադիտակներով ու ռադիոաստղադիտակներով

Տիեզերական բազմաթիվ ապարատներում տեղադրված են աստղադիտական սարքեր, որոնք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու Տիեզերքը երկրի մթնոլորտի սահմաններից դուրս: Մթնոլորտը, որը կլանում է երկնային մարմիններից եկող բազմաթիվ ճառագայթներ այդտեղ տիեզերական ուղեծրերում, դիտումներին չի խանգարում: Ահա թե ինչու տիեզերական ապարատների օգնությամբ Տիեզերքի վերաբերյալ ստացվող տվյալները հատկապես արժեքավոր են


Աստղադիտակ

Աստղադիտակները երևան եկան այն ժամանակ երբ ակնոց պատրաստող դանիացի ապակեգործները հնարեցին դիտակը Դա տեղի ունեցավ 17-րդ դարի սկզբին

Հրաշագործ խողովակի մասին լուրը շատ արագ հասավ իտալական Պադուա քաղաքը ուր կար այն ժամանակ հայտնի մի համալսարան Այդ համալսարանում



Գալիլեյի
աստղադի
տակը



Սովետական օպտիկական աստղադիտակ-ռեֆլեկտորը որն ամենամեծն է աշխարհում

Գալիլեյի առաջին դիտակը մեծացնում էր ընդամենը երեք անգամ Բայց, ասես քող ընկավ գիտնականի աչքերից: Նրա հայացքի առջև հառնեցին բազմաթիվ նոր աստղեր այնպես պայծառ ինչպես դեռ չէր տեսել ոչ ոք.

Ի վերջո Գալիլեյին հաջողվեց պատրաստել այնպիսի մի աստղադիտակ որը մեծացնում էր արդեն 32 անգամ: Նրա օգնությամբ գիտնականը շատ հայտնագործություններ կատարեց *Լուսնի Արեգակի* և *մոլորակների* վերաբերյալ

Տարբեր երկրների բազմաթիվ հռչակավոր գիտնականներ *Կեպլերը*, *Նյուտոնը*, *Լոմոնոսովը*, *Կուլիբինը* և նրանցից հետո շատ ուրիշներ, կատարելագործեցին աստղադիտակը: Շատ շուտով ասպարեզ եկավ ոսպնյակային աստղադիտակի ռեֆրակտորի, մրցակիցն ու զինակիցը աստղադիտակ-ռեֆլեկտորը, որտեղ օբյեկտիվի ոսպնյակը փոխարինված էր գոգավոր հայելիով: Ռեֆլեկտորն ստեղծեց անգլիացի գիտնական Նյուտոնը

Աստղադիտակի չափերն աճում էին Մարդու հայացքն ավելի ու ավելի խորն էր թափանցում Տիեզերքի անսահման տարածությունները. Բայց պարզվեց, որ օպտիկական աստղադիտակներն այլևս հնարավոր չէ մեծացնել ոսպնյակներն ու հայելիները սեփական ծանրությունից

փոխում էին իրենց ձևը չափից դուրս երկար խողովակները ձկվում էին հենարանների միջև չէին կառավարվում

Այսօր աշխարհում ամենամեծ աստղադիտակ ռեֆրակտորը որ ամերիկյան է ունի 21 մ երկարությամբ խողովակ և 102 սմ տրամագծով օբյեկտիվ այն մեծացնում է 330 անգամ: Շատ ավելի հզոր և ամենամեծ աստղադիտակ-ռեֆլեկտորի հայելու տրամագիծը 6 մ է: Դասովետական աստղադիտակ է, որը գտնվում է Կովկասի լեռներում 2100 մ բարձրության վրա Աշխարհի խոշորագույն աստղադիտակ-ռեֆլեկտորներից մեկը, որի հայելու տրամագիծը 2,6 մ է գտնվում է մեր հանրապետությունում *Բյուրականի աստղադիտարանում*: Այդտեղ է գտնվում նաև այսպես կոչված Շմիդտի համակարգի աշխարհում ամենամեծ աստղադիտակներից մեկը՝


Անցյալ դարի կեսին սկսեցին աստղադիտակները հանդերձավորել լրացուցիչ գանազան սարքերով աստղերն ու մոլորակները լուսանկարելու, դրանց գույնը, պայծառությունը, շեղումն ու քիմիական բաղադրությունը որոշելու համար Գիտնականները սովորեցին հաշվարկել հեռավոր աստղերի ջերմաստիճանը, չափերն ու զանգվածը և գտնել նրանց հեռավորությունը *երկրից*. Այդ ամբողջ աշխատանքը տարվում է *աստղադիտարաններում*: Սըրանց աշտարակի գմբեթը կարող է պտըտվել: Եթե գմբեթում տեղադրված աստղադիտակը ուղղեք դեպի ձեր ընտրած աստղը, նրան համապատասխան «լարեք» հետևող համակարգի ժամացուցային մեխանիզմը, ապա աստղադիտակը ինքը կսկսի հետևել աստղին նրա օրական շարժման ուղղությամբ: Իսկ աստղադիտակի սարքերը լուսանկարչական թիթեղի կամ ժապավենի վրա ավտոմատորեն կդրոշմեն այն ամենը, ինչ կատարվում է աստղի հետ

Բայց դա էլ դեռ բոլորը չէ Ահա արդեն չորս տասնամյակ է, ինչ աստղադիտարանների տարածքում սկսել են կառուցել ցանցավոր, հսկա անտենաներ: Դրանք ռադիոաստղադիտակներ են. Օր ու գիշեր հետևում են նրանք էլեկտրամագնիսական բազմազան ճառագայթումների որոնք մեզ են հասնում երկնային մարմիններից: Աստղադիտակների և ռադիո աստղադիտակների օգնությամբ գիտնականներն ուսումնասիրում են ոչ միայն առանձին աստղերի, այլև ամբողջ աստղային աշխարհների կառուցվածքն ու զարգացումը

Աստղագիտարան

Աստղագիտարանում գիտնականները դիտում են երկնային մարմինները: Հնում ամբողջ աստղագիտարանում մեկ դիտորդ աստղագետ էր լինում, իսկ նրա գործիքներն էին մեծ համբերությունը, երկու սրատես աչքերը և սեքստանտը:

Սեքստանտը աստղագիտական պարզագույն գործիք է՝ նրա փայտե կամ մետաղե աղեղի վրա արված են բաժանքներ՝ աստիճաններ և րոպեներ: Սեքստանտն ունի երկու սլաք՝ մեկն անշարժ է, մյուսը կարելի է պտտել: Սեքստանտի օգնությամբ որոշում են երկնային լուսատուի բարձրությունը հորիզոնից, ինչպես նաև աստղերի միջև եղած անկյունային հեռավորությունները: Սեքստանտից էր օգտվում մեծ *Կոպեռնիկոսը*:



17 թդ դարի սկզբին ստեղծվեց դիտակը 1610 թ հունվարի 7 ին առաջինը դրանով երկինքը դիտեց իտալացի հռչակավոր գիտնական Գալիլեո Գալիլեյը: Լուսնի վրա աղոտ բծերի փոխարեն նա տեսավ հար

թավայրեր և լեռներ, հայտնագործեց Յուպիտերի չորս ամենախոշոր արբանյակները բծեր հայտնաբերեց *Արեգակի* վրա Իսկ երկնքի այն մասում ուր մի փոքրիկ աստղ էր առկայծում, դիտակով երևաց տասը

Այժմ խոշոր աստղագիտարաններում աշխատում են տասնյակ գիտական աշխատողներ: Հզոր *աստղագիտակները* հնարավորություն են տալիս թափանցելու *Տիեզերքի* խորքերը: Հատուկ սարքերըն օգնում են ուսումնասիրելու երկնային լուսատուների լուսային ճառագայթումը՝ դրանց քիմիական բաղադրությունը որոշելու համար: Ռադիոաստղագիտակները որսում են *մոլորակների, աստղերի, միգամածությունների* և հեռավոր *գալակտիկաների* ռադիոճառագայթումը:

Նախկինում աստղագետները պարզալույսից մինչև արշալույս նստում էին աստղագիտակի օկուլյարի առջև: Այժմ աստղագիտակն ավտոմատ պտտվում է այնպես, որ նրա տեսադաշտում միշտ գտնվի երկնքի նույն տեղամասը, իսկ օկուլյարին հարմարեցվում է լուսանկարչական ապարատ: Մի քանի ժամում լուսանկարչական թիթեղի կամ ժապավենի վրա դրոշմվում են այնպիսի մանրամասներ, որոնք երբեք չի կարող որսալ մեր շուտ հոգնող աչքը: Ամբողջ անծայրածիր երկինքը, լավագույն աստղագիտակներին մատչելի սահմաններում, դրոշմված է լուսանկարչական թիթեղների վրա: Դրանք պահվում են մեծ աստղագիտարաններում:

Շատ աստղագիտարաններ են կառուցված Սովետական Միության հարավում՝ Ղրիմի լեռներում՝ Վրաստանում, Հայաստանում, Միջին Ասիայում: Այնտեղ օդն ավելի թափանցիկ է՝ հաճախ է երկինքն անամպ լինում:

Հայաստանում կառուցված աստղագիտարանի մասին դուք կարող եք կարդալ «Բյուրականի աստղագիտարան» գրույցում:

Սովետական Միության հնագույն աստղագիտարանը Լենինգրադի Պուլկովոյի աստղագիտարանն է:

Երկրի *մթնոլորտը*, ամպերը աստղագետներին միշտ խանգարել են դիտումներ կատարել: *Տիեզերքի, Արեգակնային համակարգի* մասին նոր տվյալներ բերեցին ավտոմատ միջմոլորակային կայանների թռիչքները: Աստղագետները հնարավորություն ստացան դիտումներ կատարելու Երկրի մթնոլորտի սահմաններից դուրս՝ *Տիեզերքից*:

Ժամանակակից աստղագիտարաններում գիտնականները հզոր աստղագիտակների օգնությամբ դիտում են երկնային մարմինները:

Աստղերը երկնքում երևում են փոքրիկ թարթող կրակների նման: Իրականում յուրաքանչյուր աստղ ինքնալուսարձակող, շիկացած, գազային հսկա գունդ է, որը կազմված է, հիմնականում, ջրածնից և հելիումից: Արեգակն աստղերից մեկն է իսկ աստղերը մեզանից շատ հեռու գտնվող արեգակներ են

Աստղերի ընդերքում գազերն ուժեղ սեղմված են ու շիկացած դրանց ջերմաստիճանը հասնում է միլիոնավոր աստիճանների. ենթադրվում է, որ այդպիսի պայմաններում ջրածինն աստիճանաբար փոխարկվում է հելիումի նման փոխարկումներն անվանում են միջուկային ռեակցիաներ Այդ ռեակցիաների ժամանակ աստղի նյութի մի մասը փոխակերպվում է լույսի ճառագայթների

Այսպես, օրինակ, Արեգակը լուսավորում է և «հալվում», այսինքն յուրաքանչյուր վայրկյանում իր քաշից կորցնում է 4 մլն տոննա նյութի այդ քանակությունը փոխարկվում է լույսի կամ, ինչպես ասում են, ճառագայթման: Արեգակնային այդ նյութով կարելի կլիներ բեռնել 4 հզ ապրանքատար գնացք՝ յուրաքանչյուրը կազմված 50 վագոնից

Մի վայրեցեք չնայած այդպիսի վատնողությանը, Արեգակի նյութի պաշարներն այնքան շատ են, որ Արեգակն ու մյուս աստղերը միլիարդավոր տարիներ կարող են մնալ որպես ինքնալուսարձակող մարմիններ

Աստղերը չափերով շատ են տարբերվում միմյանցից: Կան այնպիսի աստղեր, որոնք ծավալով միլիարդավոր անգամ գերազանցում են Արեգակին: Բայց կան թզուկ աստղեր, որոնք նույնիսկ երկրից փոքր են.

Չնայած աստղերի չափերը տարբեր են, սակայն յուրաքանչյուր աստղում նյութի քանակությունը մոտավորապես նույնն է Այդ պատճառով հսկա աստղերը շատ նոսր են, իսկ թզուկ աստղերը, ընդհակառակը մեծ խտություն ունեն:

Ամենաջերմ աստղերը սպիտակ են կամ երկնագույն: Նրանց մակերևույթի ջերմաստիճանը 10 հազարից մինչև 100 հզ աստիճան է Որոշ աստղեր կարմրավուն են Դրանք համեմատաբար սառն աստղեր են, որոնց մակերևույթի ջերմաստիճանը չի գերազանցում 2—3 հզ աստիճանը Մեր Արեգակը պատկանում է դեղին աստղերի

թվին, նրա մակերևույթի ջերմաստիճանը 6 հզ աստիճան է

Մուգ գիշերին ամբողջ երկնքում անզեն աչքը տեսնում է մինչև 6 հզ աստղ Բայց նույնիսկ փոքր աստղադիտակով կարելի է հաշվել միլիոնավոր աստղեր: Ամենապայծառ, երկնակամարում նշմարելի աստղերը հին աշխարհի գիտնականները միավորել են համաստեղություններում: Յուրաքանչյուր համաստեղություն նրանք անվանել են, որպես կանոն, հեքիաթային, առասպելական մի անունով: Այդպես են ասպարեզ եկել Մեծ արջ Կասիոպեա, Եզնարած և այլ համաստեղությունները (այս մասին ավելի մանրամասն կարող եք կարդալ «Համաստեղություններ» գրույցում)

Պետք է հիշել, որ համաստեղությունները երկնքում տեսանելի պայծառ աստղերի թվացող խմբեր են: Միևնույն համաստեղության աստղերը տարածության մեջ կարող են երբեմն իրարից շատ հեռու գտնվել

Սակայն կան իրար շատ մոտ գտնվող աստղեր: Աստղերի այդպիսի զույգերը կոչվում են կրկնակի աստղեր: Հայտնի են նաև բազմակի աստղեր մի քանի աստղերի համախմբություններ Եվ վերջապես, Տիեզերքում կան նաև աստղասփյուռներ, աստղակույտերի հարյուրավոր ու հազարավոր աստղերի միավորումներ.

Որոշ աստղեր փոխում են իրենց պայծառությունը, և դրանց անվանում են փոփոխական աստղեր:

Երբեմն տեղի են ունենում առանձին աստղերի բռնկումներ և այդ ժամանակ նախկինում անտեսանելի աստղը հանկարծ մի քանի ժամում բռնկվում է և դառնում տեսանելի (երբեմն նույնիսկ ցերեկը) Այդպիսի աստղերը կոչվում են նոր ու գերնոր ենթադրվում է, որ նրանց մի մասը բռնկումից հետո կտրուկ սեղմվում է ու դառնում շատ փոքրիկ, բայց և չափազանց խիտ Այդ աստղերի տրամագիծը մոտ 10 կմ է, բայց դրանց նյութն այնքան խիտ է, որ այդ նյութի քորոցի գլխիկի մեծության գնդիկը կկշռեր մոտ 100 000 տոննա.

Աստղերի աշխարհը շատ բազմազան է և մենք նրա մասին դեռ քիչ բան գիտենք

Աստղիկ

Արածանի գետը որ հոսում է Արևմտյան Հայաստանի Մշո դաշտով Կնձան սարի մոտ անցնում է նեղ կիրճով ու գնում-գնում



ձայն հանում Հավանաբար դրա համար էլ այդ տեղը կոչվում էր Գուռգուռա ժողովրդական ավանդությունը պատմում է, որ այս Գուռգուռայում ամեն գիշեր լողա նում էր Աստղիկը իսկ դիմացի Դաղոնա սարի վրա հավաքվում էին սիրահարված տղաները խարույկ վառում, որպեսզի այդ լույսի տակ տեսնեն չքնաղ դիցուհուն Բայց Աստղիկը ամբողջ Մշո դաշտը պատում էր մշուշով և այդ թանձր մշուշի պատճառով էլ, իբր երկիրը կոչվել է Մուշ Տեղացի բնակիչները նույնիսկ այսպիսի երգ ունեն

Մշո սարեր մշուշ է,
Իր հողն ու ջուրն անուշ է

Հին հայերի համար Աստղիկը ջրի սիրո ու գեղեցկության աստվածուհին էր դրա համար էլ նրան անվանում էին Ոսկե ծղի Ոսկեբազուկ Վարդամատն Նա համարվում էր ջրի և արգասավորության հովանավորողը ամպրոպային Վահագն աստծու սիրուհին Աստղիկի տաճարը Տարոնի Աշտիշատում կոչվում էր «Վա հագնի սենյակ»: Դա այն տեղն էր, ուր հին հայերի կարծիքով Աստղիկը հանդիպում էր Վահագնին Հին Հայաստանում Աստղիկի և Վահագնի սերը սուրբ էր համարվում և մարդիկ կարծում էին թե նրանց հանդիպումից է որ անձրև է տեղում երկրի վրա ստեղծվում բերք ու բարիք

Աստղիկի պաշտամունքը շատ էր տարածված նրան նվիրված տաճարներ կային նաև Վանա լճի մոտ գտնվող Արտամետ գյուղում Անձևացիք գավառում և այլուր Աստղիկի տոնը նշում էին հուլիսի կեսերին համաժողովրդական մեծ հանդիսություններով ու արարողություններով: Այդ տոնը կոչվում էր Վարդավառ որը մինչև այժմ էլ ժողովուրդը պահպանում է բայց առանց Աստղիկի անունը հիշատակելու: Տոնակատարության ժամանակ Աստղիկին վարդեր էին նվիրում աղավնիներ թռցնում ջուր էին շաղ տալիս իրար վրա ուրախանում



«Ընկ. Սեմաշկո

Ինձ հայտնում են թե Ավանեսովը տանջում է իրեն լինելով բուլդոզի վատ վիճակում.

Խնդրում եմ Ձեզ նշանակել լիովին հուսալի պրոֆեսորներ և հանձնարարել նրանց տալ գրավոր կարծիք (և դիագնոզը և բուժումը):

Կոմ ողջույնով ԼԵՆԻՆ

Ո՛վ էր Ավանեսովը, որի մասին այդպես հոգում էր կուսակցության և կառավարության ղեկավարը

Նրա իսկական անուն ազգանունը Սուրեն Կարապետի Մարտիրոսյան է Ծընվել է Նախկին Կարսի մարզի Կաղզվան քաղաքում և դեռ պատանի տարվել հեղափոխական ազատագրական գաղափարներով. 1903 թ., երբ 19 տարեկան էր մտավ պրոլետարական կուսակցության շարքերը և եռանդուն կերպով մասնակցեց 1905 — 1907 թվականների հեղափոխությանը 1907 թ., ցարական կառավարության հետապնդումներից խուսափելու նը պատակով նա փոխեց անուն ազգանունը և դարձավ Վառլամ Ալեքսանդրի Ավանեսով: Ապա նա գաղտնի մեկնեց Շվեյցարիա Այստեղ ընդունվեց և ավարտեց Ցյուրիխի համալսարանի բժշկական ֆակուլտետը միաժամանակ կատարելով կուսակցության հանձնարարությունները

1914 թ Ավանեսովը վերադարձավ Ռուսաստան և անցավ ակտիվ հեղափոխական աշխատանքի 1917 թ Փետրվարյան հեղափոխությունից հետո նա ընտրվեց Պետրոգրադի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ և մասնակցեց հոկտեմբերյան զինված ապստամբության նախապատրաստմանն ու իրագործմանը

Ավանեսով Վառլամ Ալեքսանդրի

1884 — 1921 թ մայիսին Վ Ի Լենինը մի այսպիսի նամակ հղեց առողջապահության ժողկոմ Ն Ա Սեմաշկոյին

Շահագործող դասակարգերի տապալումից հետո ստեղծվեցին բանվորների և գյուղացիների իշխանության նոր մարմիններ՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ, որի նախագահը դարձավ Վ Ի Լենինը Կենտրոնական գործադիր կոմիտեի որի նախագահն էր Յա Մ Սվերդլովը իսկ քարտուղարը հայ ժողովրդի զավակ Վառլամ Ավանեսովը: Դա մի ժամանակ էր երբ ստեղծվում էր նոր սովետական պետական ապարատ կազմվում էին աշխատավոր ժողովրդի իղձերին համապատասխանող օրենքներ

Հեղափոխության կարևոր խնդիրներից էր նաև ազգային հարցի արմատական լուծումը սովետական հանրապետությունների ստեղծումը: Այստեղ էլ Ավանեսովը դարձավ Լենինի մերձավոր օգնականներից: Նա Ազգությունների ժողովմատի դեկավար կազմում էր և Հայկական գործերի կոմիսարը Բացի այդ շնայած իր խիստ զբաղվածությանը, նա մասնակցում էր հայերեն հրատարակվող թերթերի աշխատանքին, գրում հայ ժողովրդին ուղղված կոչեր, հոդվածներ նամակներ ու դիմումներ

Հետագայում սովետական իշխանության ամրապնդմանն ու զարգացմանը զուգընթաց ծագեցին նոր խնդիրներ, և առաջացավ կառավարման նոր մարմինների Բանվորագյուղացիական տեսչության ապա արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատների ստեղծման անհրաժեշտությունը: Լենինն ու կուսակցությունը, Ավանեսովին ճանաչելով իբրև խելացի ու անխոնջ գործչի, նրան ուղարկեցին այդ ժողովրդատներում աշխատելու:

Դրանից հետո էլ Վառլամ Ավանեսովը պաշտոնավարել է մեր պետության բարձրագույն այլ մարմիններում: Որպես սովետական ապարատի ստեղծողներից ու կատարելագործողներից մեկը, նա ամենուրեք ցուցաբերել է կուսակցական և պետական գործչի լավագույն հատկանիշներ, արժանացել լայն ժողովրդականության ու հարգանքի

մեջ տեսավ ապագա տաղանդավոր դերասանին ու հանձնարարեց նրան Ոսկանի դժվարին դերը Ալ. Շիրվանզադեի «Չարոզի» դրամայում: Նույն ժամանակ էլ Աբելյանը նրան իր հետ տարավ Թիֆլիս, հայկական դրամատիկական խումբ խմբում էր ճանաչված դերասան Հովսեփ Ոսկանյանը: Ու որպեսզի շփոթ չլինի երիտասարդ դերասանին խորհուրդ տվեցին հրաժարվել իր Ոսկանյան տոհմական ազգանունից: Նա ընտրեց Ավետիսյան ազգանունը որով և հետագայում հռչակվեց թատերական աշխարհում

Երբ 1922 թ հիմնադրվեց Հայաստանի առաջին պետական թատրոնը նա եկավ Երևան ու դարձավ մայր թատրոնի հիմնադիր դերասաններից Ավետիսյանի ստեղծագործական կյանքն անխզելիորեն կապված է Գ Սունդուկյանի անվան թատրոնի կեսդարյա տարեգրությանը



Ջարմանալի բնական ու հողեղեն էր Ավետիսյանի արվեստը: Թանձր վրձնահարվածներով էր ստեղծում նա իր կերպարները և ապա հարստացնում ոսկերչական մանրանկարներով բեմական խորիմաստ մանրամասներով

Նա ազգային ընդգծված նկարագրի տեր դերասան էր: Հոյակապ էին, մասնավորապես, նրա կերտած կերպարները Գ Սունդուկյանի մի շարք պիեսներում Այստեղ նրա ստեղծագործության բարձրակետը եղավ Ջամբախովի դերակատարությունը «Խաթաբալա» պիեսում: Այս կերպարում խտացան դերասանի արվեստի հիմնական հատկանիշները առավելագույնս դրսևոր-

Ավետիսյան Ավետ Մարկոսի

1897 —
1971

1918 թ Բաքվում մեծ դերասան Հովհաննես Աբելյանի խորաթափանց աչքը զինվորի գորշ վերարկուով երիտասարդի

վեցին նրա երգիծական տաղանդը ստեղծագործական ոճն ու խոսքի բացառիկ արվեստը խոսքի ներգործությունը կրկնապատկվում էր շնորհիվ հարուստ դիմախաղի ու մանավանդ, «մատների լեզվի»: Ավետիսյանը կարողանում էր երբեմն անբառ բացահայտել կերպարի հոգեբանությունը: Նրա ստեղծագործության գլուխգործոցներից էր նաև Սաղաթելը՝ Ալ Շիրվան գաղչեի «Պատվի համար» դրամայում:

1962 թ Ավետ Ավետիսյանը արժանացավ ՍՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչման

Իր ողջ կյանքում Ավետիսյանը մշտապես պահպանեց մանկան անմիջականությամբ զարմանալու թանկ ունակությունը Այդ էր, որ հնարավորություն տվեց դեռասանին իր կյանքի վերջին տարիներին կերտելու բացառիկ մի կերպար Անտոնիոն էդ դե Ֆիլիպպոյի «Շաբաթ կիրակի երկուշաբթի» տրագիկոմեդիայում: Իր արվեստին գրեթե անծանոթ գույների նոր համադրումով հերոսի ներքին դրաման դերասանը հանդիսատեսին էր հաղորդում ցնցող ուժով մեծ արվեստագետին հատուկ ողբերգական շնչով

Մեծ է Ա Ավետիսյանի ավանդը նաև հայկական կինոարվեստում Սկսած 1925 թվականից մինչև 60-ական թվականների վերջը նա եղավ ու մնաց իբրև առաջնա կարգ կինոդերասան Անմոռանալի են նրա Հայրապետը «Նամուս», Բազազ Արտեմը «Գիբորը», Զիմզիմովը «Պեպո», Սաղաթելը «Պատվի համար» կինոնկարներում:

Ավետիսյան Հունան Մակիչի

1914—
1943

Զինվորական ստորաբաժանման առաջին վաշտի մարտիկները առավոտյան տողանի են կանգնած զորանոցի բակում: Հնչում է վաշտի ավագի ձայնը, որն անվանական է անցկացնում:

— Սովետական Միության հերոս ավագ սերժանտ Հունան Ավետիսյան — կարդում է նա ցուցակում

Աջթևայինը շարքից զեկուցում է

— Սովետական Միության հերոս ավագ սերժանտ Հունան Ավետիսյանը զոհվել է մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը պաշտպանելիս



Այսպես ամեն օր առավոտյան և երեկոյան հարազատ զորամասում հնչում է հերոսի անունը ՍՍՀՄ զինված ուժերի մինիստրի 1949 թ ապրիլի 22 ի № 30 հրամանով Հունան Ավետիսյանի անունը առհավետ գրանցված է զինվորական ստորաբաժանման նախկին 89-րդ Հայկական հրաձգային դիվիզիայի Սևաստոպոլյան 390-րդ հրաձգային գնդի 1-ին վաշտի անձնակազմի ցուցակում

Հունանը ծնվել է Հայկական ՍՍՀ Ղափանի շրջանի Ծավ գյուղում Սովորել է սկզբում Ծավի ապա հարևան Շիկահող գյուղի դպրոցում: Մանկուց Հունանը օժտված էր սովետական մարդուն հատուկ գծերով ջերմ հայրենասիրությամբ եվ երբ 1941 թ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը Հունանը իր նման հազարավոր երիտասարդների հետ կողք կողքի կանգնեց հայրենիքի պաշտպանների շարքերում

Նա մասնակցեց բազմաթիվ մարտերի 1943 թ սեպտեմբերի 16 ին տվեց իր վերջին մարտը և հավերժացավ:

Թշնամին ամրացել էր Դուգայա բարձունքում Նովոռոսիյսկ քաղաքը և Թա մանյան թերակղզին ազատագրելու համար պետք էր հաղթահարել այդ բարձունքում ամրացված հակառակորդի ուժեղ դիմադրությունը որը դժգոտների ու խրամատների ամուր մի ցանց էր կառուցել այդտեղ

Ինչ գնով էլ լինի, պետք է գրավել Դուգայա բարձունքը: Այս էր հրամանը:

Առաջադրանքն ստանձնեց այն դասակը որի հրամանատարը Հունան Ավետիսյանն էր

Նա սողում էր բլուրն ի վեր Սողում էր դանդաղ բայց համառ մի լարումով Քարերն ու տատասկները քրքրում էին ծնկներն ու արմուկները: Թևի վերքից արյուն էր ծորում ետ չէր նայում Գիտեր որ ետևից գալիս է դասակը իր նման զինվորական համազգեստ հագած երիտասարդ տղաներ...

Հիշեց լեռների գրկում ծվարած հայրենի գյուղը Որքան է վազել սարն ի վեր մա գրցել կատարը Այնտեղից բացվում էր անծայր հորիզոնը և նրան թվում էր թե ինքը տեսնում է ամբողջ աշխարհը, և ամբողջ աշխարհն էլ իրեն է տեսնում:

Ծարավ զգաց. Գուցե հիշեց իրենց սարի զլզլան աղբյուրները: Հավանաբար շատ արյուն էր կորցրել Թևի վերքը տնքում էր ցավում էին վնասված ծնկներն ու արմուկները

Ահա հրակնատը մի քանի քայլի վրա է Գնդացիքը մահ ու արյուն էր սփռում շուրջը: Հունանը ասես մոռացավ ցավը ծարավը ծնկների ու արմուկների կակիծը Հրակնատը, մահվան այդ սոսկալի երախը, կարող է կուլ տալ ոչ միայն իրեն այլև իր մարտական ընկերներին

Պետք է փրկել նրանց: Պետք է կատարել հրամանը Բայց ինչպե՞ս վերջ դնել գնդակների այդ մոլեգին տարափին

Որոշումը եկավ միանգամից անսպասելի Պրկված զսպանակի նման նա պոկվեց պառկած տեղից կանգնեց ողջ հասակով: Դուզայա լեռան բարձունքից փչող քամին ծածանեց նրա թիկնոցի փեշերը Դեմքը լարված էր վճռական Չի թողնի որ ընկերները գոհվեն, թույլ չի տա որ հրամանը չկատարվի: Ու լարվեց նա ձրգվեց վազքի թափից: Եվս մի քայլ, և վայր ընկնելով ծածկեց մահվան երախը Գըն դացիքը ճարձատե՞ց խլելով ևս մի կյանք բայց վերջինը...

Վերջին պահին Հունանի հայացքի առջև փռվեց անծայրածիր հորիզոնը. Նրան թվաց թե տեսավ ողջ աշխարհը... և ողջ աշխարհն էլ տեսավ իրեն:

Հեռվից գարնան ամպրոպի որոտի պես թևդաց Դուզայա բարձունքը գրավող նրա ընկերների միահամուռ ուռան Բայց նա այդ ուռան չլսեց այլևս

Աջ ձեռքին ավտոմատը ուսերին լայն ծփացող թիկնոցը լարված վճռական դեմքով կանգնած է Հունան Ավետիսյանը: Թվում է թե ուր որ է առաջ է նետվելու, որպեսզի փակի մահվան ճանապարհը Բայց նա բրոնզե արձան դարձած հավիտյան կանգնած է հայրենի Ղափանում

Կանգնած է և այստեղից արդեն սկսվել է նրա երկրորդ հավերժական կյանքի ճաճապարհը

ՍՍՀՄ Գերագույն սովետի Նախագահության 1944 թ մայիսի 16 ի հրամանագրով Հունան Ավետիսյանին ետմահու շնորհվել է Սովետական Միության հերոսի կոչում

Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկի շրջանի Վերինի Բակասնսկի բանավանում մի եղբայրական գերեզման կա: Այն տեղ է թաղված հայ քաջորդի Հունանը:

Հ Ավետիսյանի մասին ավելի մանրամասն կարող եք կարդալ հետևյալ գրքում

Մալխասյան Ա. Պ., Ամմահություն Ե Հայպետհրատ 1959


Ավիացիա

Թռչող մեքենաների առաջին գծագրերը հայտնաբերվել են Վերածննդի դարաշրջանի իտալացի մեծ նկարիչ քանդակագործ ու գիտնական *Լեոնարդո դա Վինչիի* ձեռագրերում



Նրանից հետո շատ ու շատ գյուտարարներ են զբաղվել ամենարտասովոր թռչող ապարատների ստեղծումով Ոմանք նմանակում էին թռչուններին, մարմնին թևեր էին հարմարեցնում և այդպես ուզում էին օդ բարձրանալ Բայց մարդը երկինք ճախրեց ոչ թե իր մկանների այլ բանականության ուժով

1885 թ ռուս ծովային սպա Ա Ֆ Մոժայսկու նախագծով ստեղծվեց աշխարհում առաջին թռչող ապարատը որով մարդը կարող էր օդ բարձրանալ: Այն ուներ ժամանակակից ինքնաթիռի բոլոր հիմնական տարրերը իրան, թև պոչաթև շասսի, կառավարման հարմարանք, շարժիչային տեղակայանք Փորձարկումներից մեկի ժամանակ ինքնաթիռը գետնից կտրվեց, բայց թեքվեց կողքի ու կոտրեց թևը Ցարական կառավարությունը չընդառաջեց տաղանդավոր կոնստրուկտորի ձեռնարկումին և Մոժայսկու ինքնաթիռի կառուցման աշխատանքները դադարեցվեցին

Միաժամանակ տասնյակ գյուտարարներ թևավոր մեքենաներ էին ստեղծում ուրիշ շատ երկրներում: Այդ գործում հաջողության հասան հատկապես ամերիկացի Ռայթ եղբայրները 1903 թ դեկտեմբերի 17-ին օդ բարձրացավ կերոսինով աշ



Ա Յ Մոժայսկու ինքնաթիռը



Վերևում սովետական բեռնատար տրանսպորտային Իլ 76 ինքնաթիռը: Այն թռչում է ժամում 850 կմ արագությամբ կտրելով մեծ տարածություններ և փոխադրում 40 տոննա բեռ

Ներքևում սովետական մարդատար Յակ 40 ինքնաթիռը Այն թռչում է կարճ տարածություններ օրինակ Երևանից Գորիս

խատող շարժիչ ունեցող նրանց ինքնաթիռը և անցավ 32 մ ճանապարհի Մարդու առաջին թռիչքն ինքնաթիռով տևեց մի

քանի վայրկյան: Բայց դա արդեն իսկական թռիչք էր վերասլացքով և վայրէջքով Այդպես ծնվեց ավիացիան (լատիներեն «ավիա» թռչուն բառից):

1913 թ Ռուսաստանում ինժեներ Ի. Ի. Սիկորսկին ստեղծեց «Ռուս դյուցազն» եզակի ինքնաթիռը Դա աշխարհում առաջին քառաշարժիչ ինքնաթիռն էր, ծանր ավիացիայի առաջնեկը: «Ռուս դյուցազնի» հետևորդը կարելի է համարել համաշխարհային փառքի արժանացած «Իլյա Մուրոմեց» մարտական ինքնաթիռը

Սակայն մեր երկրում ավիացիոն արդյունաբերություն ստեղծվեց միայն սովետական իշխանության տարիներին Կոմունիստական կուսակցությունը, սովետական կառավարությունը, Վ Ի Լենինը մեծ հոգատարություն ցուցաբերեցին սովետական ավիացիայի զարգացման նկատմամբ

Հենվելով ավիացիոն առաջավոր գիտությանը որի հիմքերը դրել է Ն Ե ժուկովսկին սովետական կոնստրուկտորները ստեղծում էին նորանոր մեքենաներ:

1924 թ մայիսի 26 ին օդ բարձրացավ ամբողջապես մետաղից պատրաստված սովետական առաջին Տուպոլևի կոնստրուկցիայի ԱՆՏ 2 ինքնաթիռը Այդ ժամանակից սկսած մետաղը դարձավ ինքնաթիռաշինության հիմնական նյութը


1924 թ ամռանը Մոսկվա—Նիժնի Նովգորոդ օդային երթուղով հաջողությամբ սկսեց թռիչքներ կատարել Ակ 1 սովետական առաջին մարդատար ինքնաթիռը:

1928 թ Ն Ն Պոլիկարպովը ստեղծեց ՌԻ 2 ուսումնական ինքնաթիռը որն ավելի ուշ վերանվանվեց Պո-2 Այդ ինքնաթիռն օգտագործում էին գյուղատնտեսության մեջ Իսկ Հայրենական մեծ պատերազմի դաժան տարիներին ՌԻ-2-ը և սանիտարական ու կապի ինքնաթիռ էր և գիշերային թեթև ռմբակոծիչ

Հայրենական մեծ պատերազմի տարիներին աշխարհում լավագույն ինքնաթիռ է ճանաչվել Ս Վ Իլյուշինի կոնստրուկցիայի Իլ-2 հակատանկային ինքնաթիռը

1947 թ ստեղծվեց Ա. Ի Միկոյանի և Մ Ի Գուրևիչի կոնստրուկցիայի ՄիԳ 15 ռեակտիվ կործանիչը. Այդ նույն տարում օդ բարձրացավ Մ Լ Միլի կոնստրուկցիայի Մի-1 սովետական առաջին ուղղաթիռը

Սովետական ավիակոնստրուկտորներն այսօր էլ առաջավոր դիրքերում են Նրանք են ստեղծել աշխարհում առաջին մարդատար ռեակտիվ Տու-104 ինքնաթիռը, փոքր և միջին երթուղիների համար աշխարհ



Սովետական առաջին գերձայնային մարդատար Տու 144 ինքնաթիռը Նրա արագությունը ժամում 2500 կմ է, տարողությունը 140 մարդ

հում առաջին եռաշարժիչ Յակ-40 (Ա. Ս Յակովլևի կոնստրուկցիայի) ինքնաթիռը աշխարհում ամենամեծ բեռնատարողության ուղղաթիռները Մի-26, Կ-12 (Մ Լ Միլի կոնստրուկցիայի) աշխարհում առաջին գերձայնային մարդատար Տու 144 ինքնաթիռը: Ներկայումս սովետական ամենատարածված ինքնաթիռը Տու-154-ն է ամենատարողունակը՝ 350 տեղանոց Իլ 86 (Գ Վ. Նովոժիլովի կոնստրուկցիայի) ինքնաթիռ ատրոբուսը

Ավիացեննա

Մոտ 980 — Աբու Ալի Հուսեյն իբն Աբդալլահ իբն Սինա այսպես է Նրա լրիվ անունը Դա Նշանակում է Սինայի որդի Աբդալլահի որդի Հուսեյն որ հայրն է Ալիի Բուխարայում և Սամարղանդում, Խորեզմում և Նիշապուրում Նրան կոչում էին Աբու Ալի իբն Սինա: Եվրոպացիները Նրան ան

վանել են Ավիցեննա Հայ մատենա գրության մեջ հայտնի է Սինայի որդի, Իբն Սինա կամ Աբու Ալի իբն Սինա անունով

Այն ժամանակ նույնիսկ ամենակրթված մարդիկ հավատում էին, որ Երկիրը տա փակ է ու անշարժ, որ «փիլիսոփայական քարի» օգնությամբ կարելի է ոսկի ստանալ, որ գոյություն ունի մարդկանց բոլոր հիվանդությունները բուժող, ծերերին երիտասարդացնող «անմահական ջուր»: Այնպիսի գիտություններ, ինչպես աստղագիտությունը, աշխարհագրությունը, ֆիզիկան, քիմիան, դեռևս «խանձարուրում» էին

Եվ ահա պատկերացրեք մի ոչ թե ծերունազարդ գիտնականի, այլ կրթված պատանու, որը չի վախենում բարձրաձայն հայտարարել, որ ոսկին անհնար է ստանալ այլ մետաղներից, որ մարդու բանակա-նությունը կապված է ոչ թե Նրա «հոգու», այլ ուղեղի հետ, որ հիվանդություններն առաջանում են ոչ թե ինչ-որ համաստեղություններից, այլ կեղտոտ առուններում բնակալող մանր էակներից, որ կախար





դանքն անհեթեթություն է նա համարձակ վում է անգամ ասել որ ինքը ամենա կարող աստվածն իսկ ամենագոր չէ

Տաս տարեկանում արդեն Իբն Սինան գիտեր հանրահաշիվ երկրաչափություն և նույնիսկ, փիլիսոփայություն կարող էր թվարկել և ցույց տալ բոլոր համաստեղությունները, իսկ իր հարցերով շփոթության մեջ էր գցում ուսուցիչներին Դժվար է հավատալը բայց Բուխարայում տասներկուամյա պատանուն օրենքների լավագույն գիտակ էին համարում նրա մոտ խորհրդի էին գալիս ծերերը. Սակայն մաթեմատիկան և ֆիզիկան աստղագիտությունն ու փիլիսոփայությունը Իբն Սինային կյանքից կտրված էին թվում: Չորս կողմը մոլեգնող ժանտախտն ու ծաղիկը մարդկային հազարավոր կյանքեր էին խլում էվ Իբն Սինան վճռեց որ ինքը պետք է բժիշկ դառնա

Այն ժամանակ արևելյան փորձառու բժիշկներն անգամ երբեք չէին տեսել մարդու սիրտը լյարդը թոքերը ոչինչ չգիտեին արյան շրջանառության համակարգի մասին որովհետև մահմեդական նուրայան կրոնական ուսմունքը մահվան սպառնալիքով արգելում էր դիակտերումը Իբն Սինան հասկանում էր որ անհնար է մարդուն բուժել կուրորեն: Եվ նա խախտեց մահմեդականության արգելքը՝ ենթարկվելով անարգանքով օտար երկրներ վտարվելու վտանգին: Նա սկսեց հերձել մեռածներին և ուսումնասիրել մարդու մարմնի կառուցվածքը

Եվ ահա զարմանալի պատանի բժշկի մասին արդեն խոսել սկսեցին Բուխարա-

յում և Խորեզմում Ամեն տեղից նրան էին դիմում տառապյալները իմանալով, որ անպայման կօգնի Շատերն էին ուզում նրա աշակերտը դառնալ: Իբն Սինան սովորեցնում էր ոչ միայն բժշկելու այլև մարդուն կարեկցելու արվեստը

Բժշկագիտության իր փորձը և փիլիսոփայության հանրահաշիվի, աստղագիտության ու քիմիայի վերաբերյալ հարուստ գիտելիքները նա շարադրել է «Գիրք պաքինության», «Կանոն բժշկության» և «Գիրք գիտության» աշխատություններում Գրականության մեջ անգամ նա հետք է թողել իր «քառյակներով»:

Նա ծանոթ է եղել *Դավիթ Անհադթի* գործերին, իսկ միջնադարյան հայ բժշկագետներ *Մխիթար Հերացին* Ամիրդովլաթ Ամասիացին բարձր են գնահատել նրա բժշկագիտական հայացքները և նրան համարել «մեծ իմաստասեր»

Ավստրալիա

Սա մի զարմանալի մայր ցամաք է տարօրինակ ճակատագրով Եվ ոչ միայն նրա համար որ եվրոպացիները հայտնաբերել են այն *Ամերիկայից* շատ ավելի ուշ ոչ էլ նրա համար, որ հեռավոր Ավստրալիան յուրացնողների մեջ կային հանցագործներ, որոնք այստեղ էին աքսորվել Անգլիայից: Ոչ Ջարմանալիս սկսվել էր շատ ավելի վաղ մոտավորապես 100 մլն տարի առաջ երբ Ավստրալիան հարակից կղզիներով անջատվեց մնացած ցամաքից

Դա մի ժամանակաշրջան էր երբ Երկրի վրա արդեն հայտնվել էին կաթնասունները բայց նրանց մեծ մասն իրենց նախնիների մողեսների նման ձու էր դնում Իսկ նրանք որոնք արդեն սկսել էին կենդանի ձագեր ծնել սրանց լույս աշխարհ էին բերում թերզարգացած ու թույլ: Այդ ձագերը մորից առանձին ապրել չէին կարող և մայրը նրանց կրում էր իր փորի վրա մորթու ծալքերից առաջացած պարկում Այդտեղ ձագերը սնվում էին մայրական կաթով և հասունանում

Ավստրալիայի անտառ



ԱՎԱՏՐԱԼԻԱ



Շշածառ



Կենգո ռո



Բադակտուց



Շնածուկ



Նվենի



Կոալա
(պարկավոր արջ)



Երիզնա



Կետ



Դինգո



Էմու ջայլամ



Մովալին կրիա




Ճագար



Բնարահավ

Մասշտաբ 1 25 000 000


0 250 500 750 1000 կմ





Կանբեռա
քաղաքը
պառլամեն
տի շենքը

ներն ու սավաննաներն ընդմիշտ դարձան պարկավորների (գիտնականներն այդպես անվանեցին այդ կենդանիներին) թագավորությունը Դրանցից են և պարկավոր գայլն ու փոքրիկ ծառերի վրա բնակվող պարկավոր արջը կոպյան և պարկավոր սկյուռիկներն ու առնետները Բայց Ավստրալիայի գլխավոր պարկավոր կենդանին կենդուրուն է Հայտնաբերվեցին նաև ձվադրողներ որոնց գիտնականները համարում էին լիովին անհետացած միլիոնավոր տարիներ առաջ Դրանք բազա



Դինգո վայրի շունը գիտնականները ենթադրում են որ նա գաղութարարների այստեղ բերած ընտանի շան վայրենացած սերունդն է Հանդիպում է սիայն Ավստրալիայում

կտուցը և եքիզնան են Ահա թե ինչու Ավստրալիան շատ հաճախ անվանում են կենդանի բրածոների թանգարան

Ավստրալիայում շատ թռչուններ կան Ամենամեծը էմու ջայլամն է, ամենագեղեցիկները ծիածանի նման շքեղազարդ դրախտահավերն են. Ամենազվարճալի ծաղրասարյակն է Հսկայական երամներով թռչում են ալիքափետուր թութակները:

Ավստրալիայում է աճում հոչակավոր պոմպ ծառը անտառային հսկա եվկալիպ տը, որի տերևներն անուշաբույր գուլոր շիներով են հագեցնում օդը:

Ավստրալիայի ընդարձակ սավաննաները և անապատների ծայրամասերը ծածկված են խիտ մացառուտներով թեփապտերներով

Ավստրալիայում մեծ և ջրառատ գետեր չկան Ամենախոշոր գետը Մուրեյն է Նրա Դաուլինգ վտայը երաշտի ժամանակ չորանում է Չորային ոռոգման կարիք զգացող շատ հողատարածություններ դեռևս քիչ են յուրացված և գրեթե ամայի են: Ոռոգման խնդիրն Ավստրալիայում ամենակարևորներից է Գետերի ջուրը վերաբաշխելու համար կառուցում են հիդրոտեխնիկական հատուկ կառույցներ Օգտագործում են նաև ստորգետնյա ջրերը:

Ավստրալիայում լեռներ շատ կան բայց դրանք բարձր չեն: Ընդերքում կան օգտա



Ավստրալիայի բնության մի անկյուն


կար հանածոներ ոսկի արծաթ, պղնձի և երկաթի հանքաքար քարածուխ և այլն Այդ հանածո հարստության մեծ մասը մշտապես արտահանվում է այլ երկրներ Բայց Ավստրալիան ամենից շատ գյուղատնտեսական ապրանքներ է արտահանում Ոչխարաբուծությամբ Ավստրալիան աշխարհում առաջին տեղն է գրավում և եվրոպայի Ասիայի ու Ամերիկայի շատ երկրների մատակարարում է հրաշալի բուրդ Ոչխարների արոտավայրերի համար Ավստրալիայում ոչնչացվել են բազմաթիվ հոյակապ անտառներ:

Անցյալ դարի կեսին երբ Ավստրալիայում ոսկի գտան աշխարհի տարբեր ծայրերից այնտեղ սլացան հեշտ շահ որոնողները

Բնակություն հաստատելով Ավստրալիայում և յուրացնելով այն անգլիացի գաղութարարները գրեթե ամբողջովին ոչնչացրին նրա բնիկներին Ջուր չէ որ հորիզոնում նկատելով եկվորների նավերը, բնիկները ծովափը թողացնում էին «կուի-ի» ձիչերով Դա վտանգի և օգնության կանչի ազդանշանն էր

Բայց ուրիշ ինչով կարող էին նրանք կռվել գաղութարարների թողանդների դեմ իրենց ձկնորսական եռաժանիներից և որսորդական բուժերանգներից բացի

Խայտաբբղետ լորի այս թութակները շատ տարածված են ավստրալիական անտառներում





Կոալա
պարկավոր
արջ. այս
«բարեհո
գի» ան
ճոռնի և
խիստ դան
դաղաշարժ
զազանիկն
ապրում է
միայն Ավս
տրալիա
յում

Ավստրալիայի բնիկներին գայթակղելով ծուղակն էին գցում գնդակահարում դավաճանաբար ոչնչացնում թունավորված ուտելիքով ըջում անապատներ ուր նրանք դատապարտվում էին սովամահության Ավստրալիայում բնիկներ շատ քիչ են մնացել ընդամենը մոտ 50 հզ մարդ:

Ավստրալիա մայր ցամաքը զբաղեցնում է մեկ պետություն Ավստրալիան Ավստրալիացիները հիմնականում անգլիացիների սերունդներն են և խոսում են անգլերեն նրանք զբաղվում են գյուղատնտեսությամբ, աշխատում հանքահորերում և հանքերում մետալուրգիական գործարաններում, մանածագործական և կոշիկի ֆաբրիկաներում: Ավստրալիայի շատ գործարաններ ու ֆաբրիկաներ անասնապահական ֆերմաներ և հանքեր պատկանում են օտարերկրյա հիմնականում անգլիացի կապիտալիստներին ու կալվածատերերին

Ավստրալիան կապիտալիստական պետություն է

Ավստրիա



(Ավստրիական Հանրապետություն)



Այս փոքրատարած պետությունը գրտնըվում է Եվրոպայի կենտրոնում: Արևելքից արևմուտք նրա տարածքը հատում են Ալպերի լեռնաշղթաները որոնց բարձր ձյունապատ գագաթներից սկիզբ են առնում հարյուրավոր գետեր ու ջրվեժներ նրանցից շատերի վրա կառուցված են հիդրոէլեկտրակայաններ

Լեռնալանջերը ծածկված են հիմնականում եղևնու և եղևնի անտառներով Ալպեի բարձր հյուսիսի խոտով լեռնային մարգագետիններ են երկրի գյուղատնտեսության գլխավոր ձյունը անասնապահությունն է Ավստրիան հռչակված է ցեղական խոշոր եղջերավոր անասուններով


Գետահովիտներում կլիման չափավոր տաք է ու մեղմ: Գյուղացիներն այստեղ մշակում են ցորեն աշորա եգիպտացորեն կարտոֆիլ խաղող, մրգեր: Ավստրի




ԱՎՍՏՐԻԱ

Տարածությունը 84 000 քառ. կմ
 բնակչությունը ավելի քան
 - 500 000 մարդ

ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐՏԱՆԵՐ



- Սև մետալուրգիա
- Տրանսպորտային նեքենաշինություն
- Ինիական ղղյունաբերություն
- Կեցտիլ արդյունաբերություն
- Նավթի արդյունահանում
- Հանքաքարի արդյունահանում
- Հիդրոէլեկտրակայաններ
- Հացահատիկային բույսեր (գարի, ցորեն, աշորա)
- Խաղողի այգիներ
- Անասնապահություն
- Ոչխարաբուծություն
- Ծառտարապետական հուշարձաններ
- Երաժշտական մշակույթի կենտրոն
- Ձմեռային սպորտի կենտրոն





**Վիեննա
քաղաքը**

ային սեփական հացահատիկը չի բավարարում ուստի նա հացահատիկ է գնում օրիշ երկրներից

Երկրում նավարկելի միակ գետը Դանուբն է:

Ավստրիայում զարգացած է արդյունաբերությունը՝ նրա գործարանները և ֆաբրիկաները թողարկում են բարձրորակ շատ սարքեր ու մեքենաներ՝ գործվածքներ ու թուղթ:

Երկրի ընդերքից արդյունահանում են մագնեզիտ նավթ, գազ տարբեր մետաղների հանքաքարեր:

Այստեղ Ավստրիայում են ապրել և աշխատել նշանավոր կոմպոզիտորներ՝ Մոցարտը, Բեթհովենը, Շուբերտը, Շտրաուսը, Բրամսը: Ավստրիացիների ազգային մեղեդիներն են վիեննական վալսերը

իողևները (երգեր որ կատարում են շատ բարձր նոտայով՝ ձայնի ուժեղ թրթռումով)՝ Տոներիև կազմակերպվում են նվագախմբերի մրցույթներ, քաղաքների հրապարակներում ժողովուրդը մինչև ուշ գիշեր պարում է ու երգում: Տարեկան մոտ 7 մլն. օտարերկրացի զբոսաշրջիկներ են այցելում Ավստրիա՝ գրեթե նույնքան որքան տեղի բնակչությունն է: Նրանք դահուկասահքի են ելնում Ալպեր՝ բուժվում, բուժիչ ջրերով տարբեր առողջարաններում, այցելում հին դղյակներ ու թանգարաններ, Հատկապես շատ թանգարաններ, հինաՎուրց պալատներ ու զբոսայգիներ կան Վիեննայում Ավստրիայի մայրաքաղաքում և արդյունաբերական խոշոր կենտրոնում:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ավստրիան դարձավ հիտ

լերյան զինված հարձակման առաջին զոհերից մեկը

1945 թ ապրիլին սովետական բանակն ազատագրեց Վիեննան և երկրի մեծ մասը

1955 թ Ավստրիան Սովետական Միության, ԱՄՆ ի Անգլիայի և Ֆրանսիայի հետ ստորագրեց պետական պայմանագիր որով պարտավորվում էր չմիանալ ոչ մի ռազմական դաշինքի Այդ նույն թվականին ավստրիական պառլամենտն օրենք ընդունեց մշտական չեզոքության մասին:

Ամեն տարի Վիեննայի աշխատավորները իրենց երախտագիտությունն արտահայտելով սովետական մարդկանց Ավստրիայի ազատագրման գործում նրանց ունեցած ավանդի համար թարմ ծաղիկներ են դնում Շվարցենբերգի հրապարակում գտնվող սովետական բանակի մարտիկների հուշարձանին

Ավստրիան կապիտալիստական երկիր է Ավստրիական աշխատավորները հարկադրված են համառորեն պաշտպանելու իրենց իրավունքները ավստրիական և օտարերկրյա կապիտալիստների դեմ մղվող մշտական անդադար պայքարում

առաջ մի տաճարում դրված էր «սուրբ» ջուր վաճառող ավտոմատ Հավատացյալները չէին հասկանում թե ինչպես է այն կառուցված և այդ «աուտոմատուը» համարում էին մեծ հրաշք:

Այժմ մեր մտքով էլ չի անցնի երկրպագել ջուր վաճառող ավտոմատը կամ զարթուցիչը, որը նույնպես ավտոմատորեն է աշխատում ինքն է ցույց տալիս ժամը և ինքն էլ զնգում տրված ժամին: Մենք արդեն վարժվել ենք ինքնուրույն գործող սարքերին:

Ավտոմատները հետևում են անվտանգ երթևեկությանը մետաղադրամ են մանրում, կառավարում գնացքներն ու ինքնաթիռները թռչում տիեզերք ճանապարհորդում Լուսնի վրա: Ավտոմատ հաստոցները մշակում են մետաղ ու պլաստմասսա կտոր են գործում թողարկում պտուտակներ կոճակներ շաքարազնդիկներ դեղահաբեր կարկանդակներ բաժակով պաղպաղակ ատամնամածուկի պարկուճներ լուսանկարչական ժապավենով կասետներ և էլի այնքան շատ բան

Հազար ու մի տարբեր գործեր ավտոմատներն ավելի արագ և ճշգրիտ են կատարում քան մարդիկ Ավտոմատը չի հոգնում և չի սխալվում Նա կարող է աշխատել շիկացած վառարանում ու ցուրտ անապատում գետնի ջրի տակ և Տիեզերքում


Ավտոմատ հաստոցները կարող են աշխատել միասին Դրանք միացնում և ստանում են ավտոմատ գծեր Առաջին հաստոցը որոշ չափով մշակում է նախապատրաստուկը և ինքն էլ այն փոխանցում հաջորդին սա աշխատանքի իր մասն է անում և ուղարկում երրորդին Իսկ ամենավերջին հաստոցը տալիս է արդեն պատրաստի արտադրանքը տրակտորի ատամնանիվներ կամ պահածոյի տուփեր գնդառանցքակալներ կամ էլեկտրական լամպեր

Արդեն կան նաև ամբողջական ավտոմատ գործարաններ Նրանք աշխատում են անխոնջ ու ճշգրիտ հեքիաթային արագությամբ Եվ այդպիսի գործարանի աշխատանքը կառավարում է ընդամենը մի քանի մարդ:

Ավտոմատներն իրենց «զգայարաններն» ունեն Ավտոմատն ակնթարթորեն կանգնեցնում է հաստոցը երբ «տեսնում է», որ մարդուն վտանգ է սպառնում: Նա «զգում է» ջերմաստիճանի փոփոխությունը մերթ միացնում մերթ անջատում է արդուկը սառնարանը էլեկտրավառա

Ավտոմատ

«Աուտոմատուս» բառը հին հունարեն նշանակում է «ինքնուրույն գործող»: Բայց միթե հին հույներն ունեին ավտոմատորեն, ինքնուրույն գործող սարքեր: Պարզվում է որ ունեին: Օրինակ, 2000 տարի



րանը. Ավտոմատ «քիթը» հանքահորում «զգում է» գազի հոտը և միացնում տագնապի ազդանշանը Ավտոմատ «ականջները» լսում են ավտոմեքենայի շչակի ձայնը և դարպասները բացելու հրաման տալիս. «Ձեռքեր», «աչքեր», «քիթ» «ականջներ».. Իսկ «ուղեղ» Կարելի է արդյոք այնպիսի ավտոմատ ստեղծել որն ընդունակ լինի մտավոր աշխատանք կատարելու. Պարզվում է այո.

Կան ավտոմատներ, որոնք բարդ հաշվարկներ են կատարում պատրաստում նախագծեր, գծագրեր: Մարդիկ սովորել են կառուցել կառավարման ամենաբարդ ավտոմատ մեքենաներ ստեղծել իսկական էլեկտրոնային «ուղեղներ» Այդպիսի մեքենան ինքն է հաշվարկում և որոշում թե ինչը երբ պետք է արվի, որպեսզի լավ աշխատի դոմնան կամ էլեկտրակայանը որպեսզի հրթիռը վեր բարձրանա ճշտորեն եվ ոչ միայն հաշվարկում ու որոշում է այլև ինքն է անհրաժեշտ բոլոր հրամանները տալիս այլ ավտոմատների և ինքն էլ ստուգում թե այդ հրամաններն ինչ պես են կատարվում.

Ավտոմատ պահակ վաճառող, բանվոր հաշվապահ, ինժեներ օդաչու.. Սրանք բոլորն էլ արդեն կան աշխատում են օգնում մարդկանց Իսկ ինչպիսին կլինեն վաղվա ավտոմատները Ինչի մասին են երազում ինչո՞վ են զբաղված նրանց ստեղծողները:

Պատկերացրեք ավտոմատ բժշկի որը չափում է հիվանդի ջերմությունն ու արյան ճնշումը հաշվում է երակազարկը, լսում սիրտն ու թոքերը: Նա ինքն է անտորոշում հիվանդությունն ու նշանակում բուժում

Պատկերացրեք ավտոմատ քարտուղսի որը մեքենազրում է թելադրածը, և այն էլ շատ մաքուր, առանց մեկ հատիկ սխալի պարզապես «հինգի» Կամ էլ պատկերացրեք ավտոմատ թարգմանչի որն, ասենք գերմաներեն «կարդում է» պատմվածքը կամ գիտական հոդվածը և տեղնուտեղն էլ մեքենազրում հայերեն թարգմանությունը


Կամ պատկերացրեք այսպիսի աներե վակայելի մի տեսարան երկու ավտոմատ իրար հետ շախմատ են խաղում... Թեև ասենք, որ դա իրողություն է 1974 թ օգոստոսին արդեն կազմակերպվել է շախմատի աշխարհի առաջնությունն ավտոմատների միջև Տաս մասնակիցներից առաջին տեղը գրավեց սովետական ավտոմատը

Ավտոմատը, կարծես, կենդանի էակ է ուժեղ արագաշարժ, բանական Բայց ջուր վաճառող ավտոմատը ազատ ժամանակ շախմատ չի խաղա Ավտոմատ մեքենա վարը երբեք չի սովորի կարկանդակներ թխել: Յուրաքանչյուր ավտոմատ կարող է անել միայն այն ինչի համար կառուցվել է, «գիտե» միայն այն, ինչ նրան «սովորեցրել» են մարդիկ: Եվ որպեսզի ավտոմատը լավ աշխատի այն պետք է ստուգի, կարգավորի, նորոգի փորձառու և հմուտ կարգավորող բանվորը: Նոր, ավելի կատարյալ ավտոմատներ ստեղծելու համար անհրաժեշտ են ամենագիտակ, ամենաշնորհալի, ամենաաշխատասեր գիտնականներ ու ինժեներներ, տեխնիկներ ու բանվորներ իրենց գործի իսկական վարպետներ:

Ավտոմատը ոչ միայն շատ բան է տալիս այլև շատ բան է պահանջում Պատրաստ եք դուք արդյոք ապրելու և աշխատելու ավտոմատների դարում:

Ավտոմոբիլ


Վաղուց ի վեր մարդիկ երազում էին այնպիսի մի սայլ կառուցել, որը շարժվեր ինքն իրեն, առանց ձիերի: Ինչքան ասես չէին հորինում և լծակներ, և ոտնակներ, և ատամնանիվներ Սայլին, նույնիսկ առագաստ էին «հագնում»:



ժոզեֆ Կյու
նիոյի շոգե
սայլը
(Ֆրանսիա
1770)


1770 թ Ֆրանսիացի ինժեներ Կյունիոն որոշեց ձիերի փոխարեն սայլին շոգեմեքենա լծել Այդպես էլ արեց և այդ արտասովոր հորինվածքն անվանեց «ավտոմոբիլ», որ նշանակում է «ինքնաշարժ»

Շարժվում է քաղաքով այդ սայլը առջե վից պղնձե կաթսա է կախված, ետևում, նստարանին, նստած է վարորդը և դեկն է պտտում: Անցնում է մի փոքր տարածություն ու այլևս չի շարժվում Պարզվում է կաթսայի գոլորշին է վերջացել Գոլորշի




«Բենց» առաջին եռանիվապտոմոբիլը (Գերմանիա 1885)

չկա մեքենան չի աշխատում, անիվները չեն պտտվում Վարորդը ստիպված էր լինում իջնել սայլից և հնոցապան դառնալ վառում էր կրակարանը և եռացնում կաթասայի ջուրը, որպեսզի գոլորշի առաջա




ԳԱԶ Ա ավտոմոբիլը

Եր այլև վտանգավոր մեկ էլ տեսար կաթասան պայթեց Բայց ահա շոգեմեքենային փոխարինելու եկավ բենզինային շարժիչը կամ մոտորը 1886 թ գերմանացի մեխանիկ



«Ռուսո Բալտ» ֆալտոնը (բաց թափքը Ռուսաստան 1911)

նար: Զուր չէ, որ վարորդին սկսեցին «շոֆյոր» անվանել, որ ֆրանսերեն նշանակում է «հնոցապան» Անգլիացիներն այլ բան հորինեցին շոգեմեքենան լծեցին ծածկակառքին ու սկսեցին ուղևորներ փոխադրել եվ սկսեցին



ԶԻԼ-114 լի մուզիկը (միջնոր մոդ)

Կարլ Բենցը շարժիչ հարմարեցրեց կառքին. Այդ կառքն էլ դարձավ բենզինային առաջին ավտոմոբիլը Տարեցտարի բենզինային ավտոմոբիլները շատանում էին: Փոխվում էր դրանց արտաքին տեսքը, բարելավվում էր կա




ԱՄՕ-Ֆ15 սովետական առաջին ավտոմոբիլներից

ճանապարհներով դրդյունով ու զրնգով առաջ սողալ ծանրաշարժ հրեշները շոգեավտոբուսները, գլխին խողովակ որից քուկա-քուկա ծուխ էր բարձրանում Դրանցով երթևեկելը ոչ միայն անհարմար




«ժիգուլի-2102»

ռուցվածքը, աճում շարժման արագությունը: Բայց մի բանում ավտոմոբիլը անփոփոխ էր մնում դա նույն շարժիչով կառքն էր Սկզբում ավտոմոբիլը նախատեսվում էր միայն ուղևորների համար բայց շու-




Զւպիրո-
մեզ ԶԱԶ
968

տով այն սկսեցին օգտագործել նաև բե-
ներ փոխադրելու նպատակով: Այսպես երե-
վան եկավ ավտոմոբիլների երեք ընտա
նիք մարդատար բեռնատար և ավո-
բուսներ




Բարձր ան
զանելիու
թյան շասսիով
ՌԻԱԶ 469
ֆայտոնր

տոննանոց ավտոմոբիլը Կան նաև հա
տուկ ավտոգնացքներ, որոնք իսկական
հսկաներ են և կարող են միանգամից փո
խադրել մինչև 120 տոննա բեռ: Դրանք
աշխատում են խոշոր կառույցներում և



Վոլգա-
9ԱԶ 24

Մարդկանց նման ավտոմոբիլներն էլ
տարբեր մասնագիտություններ ունեն
Դրանց մեջ կան հրշեջներ և սանիտարներ
փոստատարներ և մոնտյորներ բեռնակի




Մինսկի ավ
տոգործա-
րանի (ՄԱԶ
բեռնատար
ավտոմոբիլ

րաց հանքերում փոխադրում հող խիճ
հանքաքար:
Հսկայական իսքևա թափի կողքին մար
դատար մեքենան խաղալիք է թվում, բայց
փոխարենը հարմարավետ է և արագըն




«Մոսկվի»
412»

ներ և դռնապաններ ռազմիկներ և մար
զիկներ Մի քանիսն ապշեցնում են իրենց
չափերով և դյուցազնական ուժով: Այդպի
սին է օրինակ, ԲեյԱԶ 524 ը՛ Բեյոռուսա
կան ավտոգործարանում արտադրվող 65




Գորպու ավ
տոգործա
րանի (ԳԱԶ
կողային հե-
նահարթակով
բեռնատար
ավտոմոբիլ

թաց «Վոլգա» ավտոմեքենան մեկ ժամում
անցնում է 145 կմ, իսկ «Չայկան» կարող
է, Նույնիսկ, ժամում մինչև 200 կմ արա
գույունն զարգացնել
Արագ վազելու կամ ծանր ու բարձ
րացնելու համար անհրաժեշտ են հզոր




«ԱՁ 548
հեքնաթա

սիրտ և ամուր մկաններ: Ավտոմեքենայի սիրտը շարժիչն է մկանները լիսեռները որոնք շարժիչի էներգիան փոխանցում են անիվներին:



Սոսկվայի
Լիխաշովի
անվան ավ
տոգործա
րանի (ՋԻԼ)
բարձր ան
ցանելիու
թյան բեռ
նատար ավ
տոմոբիլ

րում բազմատոնանոց ինքնաթափնե րում
Ավտոմոբիլն անհրաժեշտ է ամենուրեք տևտեսությունում, կենցաղում նույնիսկ հանգստի ժամանակ. Այդ պատճառով էլ ավտոմոբիլների թիվն օրեցօր աճում է Դա ն լավ է ն վատ: Թե ինչու է լավ, հաս կանալի է յուրաքանչյուրին ավտոմոբի լը մարդու մերձավոր օգնականն է. Բայց բանեցված գազերը որ ամեն վայրկյան արտանետում են միլիոնավոր ավտոմո բիլներ թունավորում են մեր մոլորակի օդը: Նշանակում է որ հարկավոր են այլ շարժիչներ հետևաբար նաև բոլորո վին նոր կառուցվածքի ավտոմոբիլներ Այսօր արդեն այդ մասին են մտածում ամբողջ աշխարհի գիտնականները



Վամայի ավ
տոգործա
րանի (4ամ
ԱՁ) ինքնա
թափ


Ահա վարորդը միացրեց վառիչ հարմա րանքը էլեկտրական կայծը բոցավառեց շարժիչի գլաններում եղած դյուրավառ խառնուրդը և գազերի ճնշման տակ շարժվել սկսեցին մխոցները պտտվել լի սեռներն ու անիվները

Ատլանտիդա

Հին հույն գիտնական Պլատոնը մեզ թողել է բանաստեղծական մի ավանդու թյուն վիթխարի մի կղզու մասին որն իբր շատ հազարամյակներ առաջ գտնվում էր Ատլանտյան օվկիանոսում Ջիբրալթարի նեղուցից արևմուտք

Այդ հարուստ և գեղեցիկ կղզում իբր ինչպես պատմում է ավանդությունը, ըս տեղծվել էր ծովերի աստված Պոսեյդոնի հետևորդների ռազմատենչ թագավորնե րի մեծ ու ահեղ տերությունը Ամենա ավագ թագավորը տիրում էր ամբողջ կղզ ղուն, նրա անունն էր Ատլանտ: Նրանից էլ ծնունդ են առել կղզու Ատլանտիդա և ողջ օվկիանոսի Ատլանտյան անվանում ները

Կղզու կենտրոնում բարձր լեռան վրա հին քաղաքն էր Պոսեյդոնի հիասքանչ տաճարով որը դրվագված էր ոսկով արծաթով և մարմարով. Քաղաքի շուրջը ջրի և ցամաքի լայն շղակաձև շերտեր




Եռանի ավ
տոգործարա
նի («ԵրԱՁ
37305»
ավտոմոբիլը

Որքան հզոր է շարժիչը այնքան ավելի մեծ արագություն կարելի է զարգացնել և շատ բեռ փոխադրել Ահա թե ինչու ամե նահզոր շարժիչները տեղադրում են մըրց արշավային ու քարշիչ ավտոմեքենանե

էին: Ցամաքաշերտերը միանում էին կա մուրջներով իսկ ջրաշերտերը մինչև ծով հասնող լայնակի ջրանցքներով այնպես որ նավերը կարող էին նրանցով ընդհուպ մոտենալ քաղաքի պարիսպներին:

Հրաշագեղ կղզին ծաղկում էր ու բարգավաճում Բայց ահա աստվածները զայրացան ատլանտների վրա հողն սկը սեց ցնցվել լեռները ժայթքում էին ծովն ու կրակ, և «մեկ աղետալի օր ու գիշերում» Ատլանտիդան ընկղմվեց ծովի տակ: Չբացան ատլանտները չբացան հզոր թագա վորները և մնաց միայն ավանդությունը Պլատոնն ասում է որ ինքն այն լսել է իր պապից, իսկ սա էլ իր հերթին եգիպտական քրմերից Բայց Եգիպտոսի պատմության մեջ ոչ մի տեղ հիշատակություն չկա Ատլանտիդայի մասին: Գոյություն ունեցել



է այն արդյոք. Կամ գուցե դա Պլատոնի բանաստեղծական հնարանքն է:

Ավանդությունով հիացած որոշ գիտնականներ շատ կցանկանային գտնել Ատլանտիդայի հետքերը: Նրանք ասում են որ այնտեղ ուր գտնվում էր հեքիաթային կղզին կան ցամաքի ոչ շատ վաղուց ջրի տակ իջնելու հետքեր Բայց արդյոք Ատլանտիդան է այդ ցամաքը:

Ավելի քան 500 տարի առաջ Մեքսիկայում ացտեկների հին պետությունում, կային հրաշալի քաղաքներ նկարագրությանը նման Ատլանտիդային ջրի ու ցամաքի շերտերով կամուրջներով ու ջրանցքներով Այդ քաղաքները տեսել են իսպանացի նվաճողները որոնք ոչնչացրին հնդկացիների ողջ հնագույն մշակույթը Բայց, այ թե ինչն է հետաքրքիր՝ Պարզվում է որ ացտեկները մայաները, ինկերը մի ընդհանուր ավանդություն ունեն ինչ որ սպիտակամորթ մորուքավոր մարդկանց մասին, որոնք նրանց բերեցին իրենց զարգացած մշակույթը իսկ հետո դարձյալ ծովով հեռացան դեպի արևելք Սարսափելի աղետից փրկված ատլանտ

ները չէին նրանք արդյոք Չէ որ ավան դուրսըներին հիմքում հաճախ ընկած են ճշմարտացի իրադարձություններ Գուցե իրոք եղել է Ատլանտիդայի նման մի բան Հանելուկն առայժմ լուծված չէ

Ատոմ

Մեր թվականությունից ավելի քան երեք հարյուր տարի առաջ Հին Հունաստանում գիտնական փիլիսոփաները դատում էին մոտավորապես այսպես ցանկացած նյութ ցանկացած առարկա կարելի է բաժանել մասերի: Քարը կարելի է փշրել և դարձնել փոշի, ջուրը կարելի է շաղ տալ որը հետո կարող է գոլորշիանալ, ինչպես ասում են «վերածվել գոլորշու»: Գոլորշին էլ բաղ կացած է այնպիսի մանրիկ մասնիկներ րից, որ տեսնելն անգամ անհնար է:

Մինչև իր աստիճանը կարելի է մասնա տել նյութը միթե անվերջ. Հավանաբար պետք է որ այնուամենայնիվ, գոյություն ունենան այնքան փոքրիկ մասնիկներ որոնք ոչ մի ուժով հնարավոր չէ բաժան բաժան անել. Այդպիսի մասնիկներն էլ հենց, որոնք ճշմարիտ է դեռ ոչ ոք չի տեսել հին հույներն առաջարկեցին անվա նել ատոմներ, որ նշանակում է «անբաժա նելի»

Գիտնականները շատ թերահավատ մարդիկ են նրանք ամեն ինչ ցանկանում են փորձով ստուգել եվ ահա քիմիկոսներն սկսեցին զբաղվել նյութերը բաղադրիչ մասերի տրոհելով: Օրինակ եթե կաժիճը շիկացնենք այն կտրոհվի ածխաթթվական գազի և կրի Ածխաթթվական գազը կարե լի է տրոհել ածխածնի և թթվածնի, իսկ կի րը թթվածնի և կալցիումի Բայց, այ, կալ ցիումը ածխածինը և թթվածինը հնարա վոր չէ այլևս տրոհել. Մինչև անցյալ դարի



կեսը հայտնագործել էին մոտ 70 այդպիսի «պարզ նյութեր», որոնք քիմիական եղա նակով հնարավոր չէ տրոհել. Պարզվեց նաև որ այդ պարզ նյութերը կարող են նորից միանալ և կազմել բարդ նյութեր միայն թե խիստ որոշակի կերպով Զիմիկոսները վճռեցին որ այդ ամենը կարելի է հեշտությամբ բացատրել եթե ենթադրվի թե ատոմներն իրականում գո յություն ունեն: Յուրաքանչյուր պարզ նյութ ունի իր ատոմները ածխածնի ատոմները տարբերվում են թե թթվածնի և թե կալցիումի ատոմներից առհասարակ որքան պարզ նյութեր կան այնքան էլ

ատոմի տեսակներ. Քիմիական ռեակցիա յի ժամանակ պարզ նյութերի ատոմները միանում են և կազմում մոլեկուլներ: Մոլեկուլները կարելի է վերածել դրանք կազմող ատոմների իսկ ատոմներն արդեն ոչ մի կերպ հնարավոր չէ քայքայել քիմիա- կան եղանակով եվ առավել նս հնարավոր չէ ատոմների մի տեսակը փոխարկել այլ տեսակի, մի պարզ նյութից ստանալ մյուսը Օրինակ սնդիկից կամ կապարից ան հնար է ոսկի ստանալ ինչպես մի ժա մանակ երազում էին ալքիմիկոսները

Ատոմների և մոլեկուլների մասին պատ կերացումները հնարավորություն տվեցին շատ լավ բացատրելու քիմիական բոլոր երևույթները Ատոմների ու մոլեկուլների գոյությանն արդեն համարյա ոչ ոք չէր կասկածում Բայց միթե հնարավոր չէ տրոհել ատոմը. Չէ որ եթե կա նյութի ինչ որ թեկուզ, անգամ, շատ փոքրիկ մի մաս նիկ ինչո՞ւ չի կարելի այն բաժանել գոնե ասե՛նք երկու մասի:

Այդ ժամանակ գործի անցան ֆիզիկոս ները Անցյալ դարի վերջին նրանք հայտնագործեցին որ գոյություն ունեն այնպիսի մանրագույն մասնիկներ որոնք մոտ երկու հազար անգամ փոքր են ատոմ ներից Դրանց անվանեցին էլեկտրոն ներ էլեկտրոնները մտնում են ատոմների կազմի մեջ: Նշանակում է ատոմներն այնուամենայնիվ, կարելի է բաժանել: Եվ իրոք ավելի ուշ ֆիզիկոսներն ապա ցուցեցին, որ ատոմը բարդ կառուցվածք ունի նրա կենտրոնում գտնվում է միջուկը իսկ էլեկտրոնները պտտվում են միջուկի շուրջը ինչպես մոլորակները Արեգակի

Բայց ամենահետաքրքրականը դեռ առ ջնում էր Պարզվեց, որ ատոմի միջուկները նույնպես բաժանելի են: Դրանք կազմված են պրոտոններից և նեյտրոններից որոնք միջուկում հզոր ուժերով կապված են իրար եթե միջուկը քայքայվի ապա կանջատվի հսկայական քանակությամբ էներգիա Գիտնականները գտան ատոմի միջուկնե րը ձեղքելու եղանակը եվ մարդիկ ձեռք բերեցին ատոմային էներգիայի հզոր աղբյուրներ ատոմային ռեակտորներ և այնպիսի սարսափելի մի զենք ինչպիսին ատոմային ռումբն է

Ատոմի բաղադրիչ մասերը էլեկտրոննե րը պրոտոնները և նեյտրոնները կոչվում են տարրական այսինքն պարզագույն մասնիկներ: Ֆիզիկոսները պարզեցին որ այդ մասնիկներն այնքան էլ պարզ կա ռուցվածք չունեն. Ուրեմն ինչ այնուա մենայնիվ ստացվում է որ նյութը կա

րելի է անկերջ բաժանել Հնարավոր է որ այդպես է՝ Մի բան միայն կարելի է վստահորեն ասել անսահման է մարդու բնության գաղտնիքների մեջ թափանցելու ձգտումը

«Արա Գեղեցիկ և Շամիրամ»

Աշխարհի շատ ժողովուրդներ բույսերի հատկապես հացաբույսերի, ծլումն ու ծաղկումը, փթթումն ու պտղավորումը գարնանն ու ամռանը, և հունձն ու չորանալը աշնանն ու ձմռանը պատկերացրել են գեղեցիկ աստծու ծնվելու, մեռնելու և հարություն առնելու գաղափարով: Ըստ այդ պատկերացման, աստվածը ծնվում է, դառնում մի աստվածուհու սիրո առարկա ապա մեռնում կամ էլ սպանվում այդ աստվածուհու կամքով, բայց և նորից հարություն առնում, վերակենդանանում:

Այս հին հավատալիքն ու պատկերացումն են ընկած «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի հիմքում: Գեղեցիկ Արան Հայաստանի թագավորն էր, Շամիրամը Ասորեստանի թագուհին: Վերջինս լսելով Արայի գեղեցկության մասին, պատգամավորներ է ուղարկում նրա մոտ խնդրում գալ Ասորեստան, ամուսնանալ իր հետ և դառնալ Ասորեստանի թագավորը Արան մերժում է Շամիրամին Մի բանի անգամ իր խնդրանքը կրկնելով և միշտ մերժում ստանալով Շամիրամը զայրացած մեծ զորքով գալիս է Հայաստան Արային գերելու: Մի մեծ դաշտում, որն, ըստ ավանդության Արայի անունով կոչվել է Այրարատ ձակատամարտ է տեղի ունենում Շամիրամի և Արայի զորքերի միջև ձակատամարտից առաջ Շամիրամն իր զորապետներին պատվիրել էր չսպանել Արային, այլ բռնել ողջ-ողջ: Բայց կռվի ժամանակ Արան սպանվում է Շամիրամը փնտրում գտնում է Արայի դիակը, տանում դնում է իր ապարանքի աշտարակում և հայտնում Արայի սպանության վրեժն առնելու համար կռվի ելած հայոց զորքին, թե ինքը հրամայել է արալեզներին կենդանացնելու Արային Ըստ հայկական դիցաբանության, արալեզները (կամ հարալեզները) շնակերպ ոգիներ էին, որոնք լիզելով մարտում ընկած քաջերի վերքերը կենդանացնում էին նրանց



«Արա Գեղեցիկ և Շամիրամ» սկարիչ Վ. Սուրենյանց

Արան Հին Արևելքի մի շարք ժողովուրդների ինչպես և հայերի հացահատիկի ու հացաբույսերի աստվածությունն է, որը հին հայկական զրույցներում դարձել է պատմական անձնավորություն հայոց Արամ թագավորի որդին և հաջորդը Արայի անունով է կոչվել ինչպես Այրարատ աշխարհը այնպես էլ Արայի լեռը, Արագածը և Արայի գյուղը: Իսկ Շամիրամը հին սեմական ժողովուրդների Իշտար, Աստարտե, Ատարգատիս Գերկեսո անուններով հան-

դես եկող սիրո աստվածուհու դուստրն է որը հայերի մեջ դարձել է պատմական անձնավորություն Ասորեստանի թագուհի և Արայի սիրահար:

Շամիրամի մասին հնում գոյություն են ունեցել տարբեր զրույցներ, նրա անունով են կոչվել Վան քաղաքը՝ Շամիրամակերտ Վանի ջրանցքը Շամիրամի առու:

Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը հայերի մեռնող և հարություն առնող աստծու առասպելն է պատմական գույն ու երանգ ստացած իսկ Արա Գեղեցիկը բուսական աշխարհի, հատկապես հացաբույսերի անընդհատ մահացման ու վերակենդանացման բնական երևույթի անձնավորումն է:

Մեր պատմահայր *Սոպես Խորենացու* գրի առած «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը վաղուց ի վեր դարձել է շատ գրողների, նկարիչների և կոմպոզիտորների ներշնչման աղբյուր Վահան *Տերյանը*, Եղիշե *Չարենցը*, Վահան *Թեքեյանը* Գևորգ Էմինը գրել են բանաստեղծություններ, Նաիրի *Ջարյանը* ողբերգություն, Գրիգոր Եղիազարյանը համանուն բալետ, իսկ Վարդգես *Սուրենյանցը* այդ թեմայով ստեղծել է մի հիանալի նկար, որի արտատպությունը դուք տեսնում եք:

Արագած

Հայկական լեռնաշխարհի հյուսիս արե վելյան մասում, Արարատյան և Շիրակի դաշտերի սահմանագծին, իր շրջակայքից առանձնանում և վեր է հանում քառագա-

գաթ Արագածը Հայկական ՍՍՀ ի ամենաբարձր լեռը

Արագածի հյուսիսային կատարը 4090 մ է, արևմտյանը 4080 մ, արևելյանը 3916 մ և հարավայինը 3879 մ: Բրգաձև կատարների միջև ընկած է 350 մ խորությամբ և 3 կմ լայնությամբ խառնարանային կրկեսը

Արագած անունը, ըստ ավանդության ծագել է «Արա» անունից և «գահ» բառից

Մթնշաղին, երբ վերջալույսի ցուլքերը սկսում են մարել, Արագածի վրա, նրա չորս գագաթների միջև, կանթեղի նման մի երկար լուսեղեն ցուլք է կախվում ժողովուրդը մի հիասքանչ ավանդազրույց է հյուսել նրա շուրջ և այդ «կանթեղը» համարել հայոց հույսի հայ մարդու երազանքի խորհրդանիշ «Լուսավորչի կանթեղը» բանաստեղծության մեջ Հովհաննես *Թումանյանը* գրում է

Կես գիշերին կանթեղը վառ
Կախ է ընկած երկընթից,
Լուսավորչի կանթեղն անմար
Հայոց մըթնած երկընթից

Կախ է ընկած առանց պարան
Արագածի կատարին,
Ու սեղանից հըսկայական
Լույս է տալիս աշխարհին

Մինչև մեր օրերն են հասել Արագածի լանջերին պահպանված հին մշակույթի հետքեր ոռոգման ջրանցքներ ակունքներին կանգնեցված և ջրի պաշտամունքը խորհրդանշող «վիշապ» կոչվող ձկնակերպ կոթողներ Շատ են միջնադարյան



նշանավոր բերդերի եկեղեցիների ավերակները (Ամբերդ, Բյուրական և այլն) .

Արագածը ասես միանգամից ալիքի նման վեր բարձրանալով Արարատյան ու Շիրակի դաշտերից, սառել մնացել է աչքը երկնքի անհունին հառած: Հենց այդպիսին է Արագածը Ավետիք Բսահակյանի մանկներից մեկում

Ալագյազը աստղերի մեջ
Ադամանդե թագը գլխին
Սարերեն վեր ամպերեն վեր
Թիկն է տվել զմրուխտ-գահին

Գագաթներին մշտական ձյուն է իսկ փեշերին արտահայտվում են տարվա բոլոր եղանակները իրենց նրբերանգներով: Լեռնային շրջաններում կլիման փոփոխվում է ըստ բարձրությունների մերձագաթային գոտում զով է իսկ գագաթում ցուրտ է նաև ամռանը

Արագածի լանջերից բխում են հազարավոր սառնորակ աղբյուրներ որոնցից գոյանում են Գեղարոտ Ամբերդ, Մանթաշ Գեղաձոր Ծաղկահովիտ և այլ գետակներ սառցադաշտային կրկեսներում մեղմ ծըփում են լեռնային սառնորակ լճակները Քարի, Ամբերդի Լեսինգի: Այնա լիճը նույնպես Արագածի աղբյուրների ծնունդըն է

Արագածի ծաղկազարդ փեշերը հարուստ են խոտհարքներով ու լեռնային փարթամ արոտավայրերով: Վաղ գարնանը իսկական ծաղկահանդես է բացվում լեռան փեշերին Պատմիչները վկայում են որ հնում Արագածը ծածկված է եղել փարթամ անտառներով որտեղ ապրել են վայրի կենդանիներ: Լեռան հարավային լանջերին 1800—2300 մ բարձրության վրա պահպանվել է անտառի մի շնչին մաս որտեղ աճող հիմնական ծառը արեվելյան կաղնին է Արագածի լանջերին

դուբ կտեսնեք ճագարամուկ նապաստակ աղվես գայլ, օձ, մողես

Արագածից արդյունահանում են տարբեր շինանյութեր՝ տուֆ պեմզա պեռլիտ

Արագածի հարավային լանջին է կառուցված Բյուրականի աստղադիտարանը: Նրա գագաթին մոտ 1943 թվականից գործում են ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի տիեզերական ճառագայթների հետազոտման կայանը և օդերևութաբանական կայան

Մաքուր ու զովաշունչ օդը գլգլան առվակները բազմերանգ ծաղիկները ամռան ամիսներին իրենց գիրկն են կան

չում հովելներին Լեռան լանջերին կառուցված են հանգստյան տներ պիոնեթական ճամբարներ

Արագիլ

Դուք, հավանաբար, շատ հեքիաթներ, երգեր ու բանաստեղծություններ եք լսել արագիլի մասին: Այժմ օրինակ Հովի Թումանյանի «Արագիլ» բանաստեղծությունը

Արագիլ, բարով եկար
Հնյ, արագիլ, բարով եկար
Բունըղ շինիր են հին ծառին,
Մեզ մոտ մնա ամբողջ տարին:

Այդ արագիլն է որ դյուրահավատորեն անցուղարձ է անում հենց գյուղի մերձակ մարգագետնում և շիվերից ու ձյուղերից իր մեծ լայն բույնը հյուսում գյուղական տան տանիքին:

Ոչ ոք ստույգ չգիտե թե երբ է սպիտակ արագիլը մեծ աչքի զարնող այդ թռչունը բարեկամացել մարդկանց հետ: Բայց մարդիկ շատ թանկ են գնահատում այդ բարեկամությունը սպասում թե երբ են արագիլները հաստատվելու տան տանիքին, նախանձախնդրությամբ պահպանում են նրանց հանգիստը և նույնիսկ կարծում են թե արագիլները երջանկություն են բերում տանտերերին

Եթե արագիլները բույն հյուսեն ձեր տան տանիքին ապա ամեն զարուն նորից ու նորից կվերադառնան այնտեղ: Նորից բնում աշխարհ կզան երկարատու ձագուկները երեք կամ հինգ: Մերթ ընդ մերթ նրանք հավատով աչք կհածեն մարդկանց կսպասեն որսի ելած իրենց ծնողներին և տաք քամուց թեթևակի կխոնարհեն զլիսիկները ասես շնորհակալություն հայտնելով թե քամուն թե բարի մարդկանց: Իսկ ծնողները հերթով կեր կբերեն նրանց գորտեր, մկներ մողեսներ, զանազան միջատներ

Մինչև աշուն արագիլի ձագուկները կմեծանան կդառնան ուժեղ թռչուններ ու կչվեն հարավ եվ գարնանը մարդիկ կըսպասեն իրենց հավատարիմ բարեկամների վերադարձին

Արագիլները ձայներ չեն արձակում նրանք միմյանց հետ «խոսում» են կտուցների կափկափյունով



Սպիտակ արագիլն ունի մոտիկ մի ցեղակից սև արագիլը, բայց սա ապրում է միայն խուլ անտառում և չգիտես ինչու մարդու հետ չի բարեկամացել:

Այդ երկու տեսակներն էլ կան Հայաստանում՝ Սպիտակ արագիլն ապրում է Արարատյան դաշտում Լոռիում իսկ սևը հանդիպում է Սևանա լճի ավազանում և այլ շրջաններում:

Արագի Մովսես Մելիքի

1878—
1964

«Լսում եք... Սպասեք մի փոքր, ես ձեզ կպատմեմ բոլորը սկզբից..»

Գնում եք... լավ, ես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...


— Սիրուն կակաչներ, լավ լսեցեք արևի պատմությունը...

Աղջիկս հիվանդ էր ...».

Շատերն են ծանոթ այս տողերին շատերն են հիացել, երբ կարդացել են Արագու հուզաթաթավ, հանրածանոթ «Արեվը» արձակ բանաստեղծությունը Որքան զգացմունք ու ջերմություն որքան խոր թախիծ կա այդ փոքրածավալ ստեղծագործության մեջ: Կարդում ես այն ու աչքիդ առջև հառնում է երկու հակադիր աշխարհի իր ոսկեհեր աղջկան կորցրած աշխատավոր մարդու սոցիալական բողոքը ու ընդվզումն են պատկերված «վերելի հարկում» ապրող հարուստների դեմ որոնք նյութական բարիքների հետ միասին խլել են նաև «ներքին հարկի» արևի լույսը

Մովսես Արագին հայ պրոլետարական արձակի սկզբնավորողներից է

Նա ծնվել է Շուլավերում (այժմ Վրացական ՍՍՀ ի Շահումյան ավան) Մոտիկից տեսել է հայ մարդու չարքաշ կյանքը տառապանքն ու ցավը, որը հետագայում պատկերել է իր մի շարք գործերում Արագին մեծ հեղափոխական Ստեփան Շահումյանի հետ միասին սովորել է Թիֆլիսի ռեալական ուսումնարանում: Շահումյանը մեծ ազդեցություն է ունեցել Արագու վրա Արագուն դեռ պատանեկան հասակից խանդավառել են հեղափոխական գաղափարները 1901 թ նոյեմբերի 5 ին Պետերբուրգի Կազանի տաճարի հրապարակում կազմակերպվում է ուսանողական ցույց, որին մասնակցում է նաև ուսանող Արագին Այդ օրերին էր որ Ռուսաստանով



մեկ հպարտորեն ճախրում էր Մ Գորկու «Մրրկահավի երգը»: Գորկին դառնում է Արագու ամենասիրելի գրողը և մեծ դեր է խաղում նրա գրական կյանքում: Արագու ստեղծագործությունները տպագրվել են սկսած 1906 թ.:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Արագին գրել է «Սովետական առավոտը», «Ընկեր Մուկուչը», «Աչքը վախեցած Հանեսը», «Հազար գլխանին», «Պիոներ Սարոն», «Լույսերը» «Միշիկը» «Փոքրիկ շինարարները» «Անբախտ որսկաններ» և այլ պատմվածքներ: Հանեսը Մուկուչը Բենոն նախկին իրավագուրկ և չքավոր այդ մարդիկ հասկանում են սոցիալիստական կարգերի առավելությունը և դառնում իրենց իրավունքի ու աշխատանքի տերերը:

Արագին ստեղծել է նաև ուրիշ շատ գործեր որոնց թվում «Իսրայել Օրի» պատմական վեպը

Գորկու «Մանկությունը» և ուրիշ շատ գործեր հայ ընթերցողը կարդում է նրա թարգմանությամբ

Արարատ

— տես Մասիս

Արարատյան դաշտ

«.. Հոյակապ հռչակավոր երևելի գավառն Արարատյան որն ամեն ինչ բուսցնող է ամեն ինչ սովող ամեն ինչով



լի մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն անհրաժեշտ օգտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող դաշտեր լայնատարած ու որսալից շուրջ բոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ արոտներով ծածկված կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրանց հետ էլի ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն Լեռանց բարձր կատարներից ջրեր են հոսում լիուլի ոռոգմամբ արբեցնելով դաշտերը, որոնք անթիվ կին ու տղամարդ բնակչությամբ փարթամացած ոստանն են մատակարարում առատ հացով և գինով անուշաբույր ու մեղրահամ բանջարեղենով և յուղատու զանազան սերմերով Իսկ թե հայացքդ առաջին անգամ ես դարձնում դեպի լեռնափեշերը կամ սարահարթերը, ապա նրանց վրա սփռվածը հանդերձներ կկարծես և ոչ թե ծաղկաբույս երանգներ տարածված փարթամորեն անուշահամ ու պարարտ արոտներ...»:

Այսպես է նկարագրում Արարատյան դաշտը 5-րդ դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցին Այս դաշտում հիմնադրվել ու ծաղկել են Հին Հայաստանի մայրաքաղաքներ Արմավիրը, Երվանդաշատը, Վաղարշապատը Արտաշատը Դվինը Սակայն դարեր շարունակ իրար ետևից դեռ մի թշնամուն չհաղթած ու չվանած Արարատյան դաշտ են ներխուժել նոր ոսոխներ, ավերել քաղաքներ ու շեներ

11-րդ դարում ողջ Հայաստանը և նրա հետ էլ Արարատյան դաշտը տրորվեց ահավոր սամուհի պես լեռնաշխարհ ներխուժած սելջուկյան թուրքերի ձեռքի սղմբակների տակ իսկ 13—16-րդ դարերում նրանց փոխարինեցին նոր նվաճողներ մոնղոլ-թաթարները թուրքերը: «Ծխում էին դաշտավայրի վրա խիտ առ խիտ փրփած գյուղերը... Ծխում էին մեծաշեն քաղաքները: Ծխում էր Դվինը, ծխում էր Արտաշատը ծխում էր Վաղարշապատը, ծխում էր Էջմիածնի վանքը Եվ թանձր ծուխը նսեմացնում էր Արարատյան դաշտի լուսապայծառ գեղեցկությունը», — գրում է *Րաֆֆին*:

Արարատյան դաշտի զգալի մասը 1828 թ ազատագրվեց պարսկական տիրապետությունից և միացվեց Ռուսաստանին

Այժմ փոխվել է Արարատյան դաշտի դեմքը Հոկտեմբերյանի Արարատի, Էջմիածնի Ստորին Հրազդանի, Թալինի ջրանցքներով, Ազատի ջրամբարի ջրով վերակենդանացել է հողը

Շրջապատված Արագածի, Արայի, Մեծ ու Փոքր Մասիսների լեռնազագաթներով, Գեղամա և Հայկական պար լեռնաշղթաներով ծովի մակերևույթից մոտ 800—1000 մ բարձրության վրա փռված այս հարթավայրը նման է մի եռանկյուն սկուտեղի լցված հողի պարզևած բարիքներով

Դաշտն ունի ավելի քան 200 կմ երկարություն և 20—45 կմ լայնություն հյուսիսային սահմանը հասնում է մինչև Ախուրյան և Արաքս գետերի միախառնման շրջանը իսկ հարավայինը մինչև Գայլի դրունք կոչվող լեռնանցքը: Արաքսը դաշտը բաժանում է երկու մասի: Աջ ափին ընկած տարածությունը գտնվում է Թուրքիայի և Իրանի սահմաններում, իսկ ձախակողմյանը Սովետական Հայաստանում և Նախիջևանի ԻՍՍՀ-ում

Արարատյան դաշտն ունի արևոտ, չոր, ցամաքային կլիմա 4—5 ամիս տևող շոգ ամառ: Չմռանը դաշտում չափավոր ցուրտ է, եղանակը, հիմնականում անհողմ Գարունը շատ կարճ է տևում, իսկ աշունը տաք է, տևական, ինչպես ասում են «ոսկե աշուն»: Դաշտն ունի անմշակ աղուտներ ու ճահճուտներ, որոնք 30 000 հեկտար տարածություն են զբաղեցնում

Արարատյան դաշտում աճում են հանրահայտ հայկական ծիրանը խաղող դեղձ սալոր սերկևիլ և ուրիշ շատ մրգեր Այժմ մեծ տեղ է հատկացվում եթերայու

դատու բույսերին *խորդենու* ու վարդե նուն: Արարատյան դաշտը տալիս է ՍՍՀՄ ի խորդենու արտադրանքի մոտ 60 տոկոսը

Հարուստ է Արարատյան դաշտի կեն դանական աշխարհը: Տարածված են վա- րազը եղեգնակատուն, ջրասամույրը լճակներում ու ջրամբարներում արհեստա կան ճանապարհով աճեցնում են կուղբի մի քանի տեսակներ և ձկներ: Շատ են սո դունները գյուրգա եղջերավոր իժ, շահ մար Կան մի քանի տեսակի մողեսներ ու միջատներ որոնցից դեռ շատ հնուց հայտ նի է *որդան կարմիրը*, մանրիկ որդերի մի տեսակ որից կարմիր ներկ էին պատ րաստում

Արարատյան դաշտը հարուստ է հան- քային ջրերով Հնուց ի վեր մեծ համա րում ունի Արզնու ջուրը: Այժմ հայտնի է նաև Արարատինը: Մեծ է երևանյան անու շահամ ջրերի արտեզյան ավազանը Արա րատյան դաշտը հարուստ է հայոց պատ մության ու մշակույթի կենտրոններով ու հուշարձաններով Այստեղ են գտնվում Արին բերդն ու Կարմիր բլուրը մեր թվակա նությունից առաջ 3-րդ—1 ին հազար ամյակներից հայտնի Մեծամորի մետաղա ձուլական կենտրոնը Հռիփսիմեի տաճա րը 1918 թ այս դաշտում տեղի ունեցավ

Սարդարապատի հերոսամարտը, որի տե- դում այժմ կառուցված է փառահեղ կոթող և ազգագրական թանգարան

Արարատյան դաշտը Հայաստանի ամե- նախիտ բնակեցված մասն է Այստեղ են գտնվում Հայաստանի մայրաքաղաք *Երե- վանը*, մի շարք այլ քաղաքներ ու քաղա- քատիպ ավաններ (Արտաշատ, *Էջմիա- ծին* Արարատ և այլն) հանրապետության արդյունաբերական զանազան ճյուղերի բազմաթիվ խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ Այստեղ է գտնվում ՀՍՍՀ-ի առաջին ատոմակայանը

Արաքս (Երասխ)

Ինչպես Նեղոսը եգիպտացիների վոլ գան ռուսների այնպես էլ Արաքսը հայերի համար եղել է սնող կյանք պարգևող սիրելի գետ և կոչվել Մայր Արաքս

Արաքսը վերին հոսանքում անցնում է Թուրքիայով միջին հոսանքում սահմանա- յին գետ է Հայկական ՍՍՀ ի և Թուրքիա- յի (150 կմ երկարությամբ) Նախիջևա- նի ԻՍՍՀ ի և Իրանի Հայկական ՍՍՀ-ի և Իրանի (40 կմ) իսկ այնուհետև Ադրբեջանական ՍՍՀ ի և Իրանի միջև Ստորին հոսանքում Արաքսը հոսում է Ադրբեջանական ՍՍՀ ով Արաքսի ավա զանին է պատկանում Հայկական ՍՍՀ ի տարածքի մոտ 76 տոկոսը:

Սկիզբ առնելով Բյուրակն, այսինքն հազար ակունք ունեցող բարձրավանդա- կի սառնորակ աղբյուրներից գոյացած չորս առվակներից և միանալով Սրմանց գետին Արաքսը սկզբում հոսում է դեպի հյուսիս-արևելք հասնելով մինչև Տվա րածատափի դաշտը ապա դեպի հյուսիս և Այծպտկունք գագաթից ճեղքելով Հայ կական պարի բարձրիկ լանջերը դուրս է գալիս Բասենի դաշտ Չախից ընդունելով Մուրց գետի ջրերը Արաքսն այս անգամ թեքվում է դեպի արևելք և մտնում *Արարատյան դաշտ*, Այստեղ արդեն Մայր Արաքսը չի շտապում թողնել հարազատ ասիերը հոսում է դանդաղ փոփում է, տարածվում առաջացնելով ոլորաններ, ծանծաղուտներ, կղզյակներ

Սովսես Խորենացու վկայությամբ գե տը ժամանակին հոսել է հայկական հինա վուրց մայրաքաղաքների Արմավիրի Ար- տաշատի և Վաղարշապատի մոտով բայց հետագայում հեռացել է այդ քաղաքներից Ցամաքած հին հունի տեղերը նշմարվում

Գոլտնտե
Շային դաշ
տում



Գաղղղի այ
լ - Առա
տայան
աշտում



են նույնիսկ այսօր և կոչվում են «Չոր Արաքս»: Արարատյան դաշտում Արաքսը աչից ընդունում է Դեղին գետը Կարմիր գետը ձախից Ախուրյանը Սև ջուրը Հրազդանը Ազատը (Գառնի) Վերին Արփան ապա Նախճավանը Երնջակը Ողջին (Կապան) Որոտանը Աղավնո գետը (Հագար), մտնում է Մուղանի ու Միլիի դաշտերը և միանում Կուր գետին Արաքսը հնում Կուրին չի միացել, այլ զուգահեռ հոսելով թափվել է Կասպից ծովը

Ըստ ավանդության Երասխի (Արաքսի) անունը կապվում է հայերի անվանադիր նախնիի ժառանգներից մեկի Արամայիսի թոռան հետ «Արամայիսն իր բնակության համար տուն է շինում գետի ափին մի բլուրի վրա և իր անունով այն կոչում է Արմավիր իսկ գետի անունը իր թոռան Երաստի անունով դնում է Երասխ (Մովսես Խորենացի)

Մայր Արաքսի ափերին զարգացել է հայ հին մշակույթը 10-րդ դարի մի աշխարհագրի վկայությամբ Արաքսի ափերին այդ ժամանակ շեն էին ու կյանքով լեցուն հազարից ավելի գյուղեր ու քաղաքներ

Մայր Արաքսի ափերով
Քայլամուր գնում եմ
Հին-հին դարուց հիշատակ
Այսպես մեզը պըտրում եմ

Այսպես է գրում Ռ Պատկանյանը իր «Արաքսի արտասուքը» հանրածանոթ բանաստեղծության մեջ որի համար հետո երաժշտություն է գրվել և այն դարձել է հայկական ամենասիրված երգերից մեկը

Արաքսի վրա շատ կամուրջներ են եղել որոնցից հիշատակվում են հինգը Տափերական, որից սկսվել է Արտաշատ-Տիգրանակերտ արքունի պողոտան Բասենի Երվանդակերտի Նախիջևանի և Ջուղայի Ջուղայի հիասքանչ կամուրջը որը ըստ ավանդության կառուցել է Ալեքսանդր Մակեդոնացին ավերվել է 1605 թ պարսից Շահ Աբբասի հրամանով

Արաքսի ջրերը ոռոգման ու էներգետիկ նպատակներով օգտագործել են շատ վաղուց և էլ ավելի սովետական իշխանության տարիներին Կառուցվել և կառուցվում են բազմաթիվ ջրանցքներ ու ջրամբարներ

Արաքսի երկարությունը 1072 կմ է Արաքսը հորդանում է մարտ-հունիս ամիսներին, ամենից շատ մայիսին՝ Ամենացածր

մակարդակները լինում են հուլիս-օգոստոս ամիսներին ու ձմռանը

Արաքսը հարուստ կենդանական աշխարհ ունի նրա ջրերում բազմանում են կարմրախայտը լոբոն, ստորին հոսանքներում նույնիսկ թառափն ու այլ ձկնատեսակներ

Արաքսի անունով Սովետական Հայաստանում և *սփյուռքի* հայաշատ վայրերում կան բնակավայրեր մշակութային և մարզական կազմակերպություններ՝

19-րդ դարից Հայաստանի մայր գետի անունը հայերը գործածում են որպես իգական անձնանուն (Արաքսի Արաքսյա)

Արբանյակ

Արեգակնային համակարգի մեծ մոլորակներից շատերի շուրջը պտտվում են ավելի փոքր մոլորակներ որոնց անվանում են արբանյակներ: Օրինակ Լուսինը Երկրի արբանյակն է Այդաիսի բնական արբանյակներից բացի կան մոլորակների, մասնավորապես Երկրի շուրջը պտտվող մարմիններ՝ արհեստական արբանյակներ որ ստեղծել է մարդը:


1957 թ հոկտեմբերի 4-ին աշխարհով մեկ տարածվեց հաղորդումն այն մասին որ Սովետական Միությունում ուղեծիր է դուրս բերվել Երկրի առաջին արհեստական արբանյակը: Իսկ հետո բազմաթիվ գիշերներ կարելի էր դիտել, թե ինչպես աստղալից երկնքում արագորեն տեղաշարժվում են երկու փոքրիկ աստղեր: Ավելի պայծառը հրթիռն էր որն արբանյակը դուրս էր բերել մերձերկրյա ուղեծիր Մյուս աչքով հագիվ նշմարելի աստղիկը մեր մոլորակի արհեստական արբանյակն էր որ մարդիկ ուղարկել էին տիեզերական անհայտ տարածություններ

Տիեզերքի առաջին հետախույզը ոչ մեծ փայլուն մի գունդ էր արտաքին չորս անտենաներով ներսից ռադիոհաղորդիչներով Շարժման արագությունը որ վայրկյանում 7 97 կմ էր նրան հնարավորություն էր տալիս մեր մոլորակի շուրջը մեկ լրիվ պտույտ գործել մեկ ու կես ժամում

Այդ օրից շատ տարիներ են անցել, և Երկրի շուրջն արդեն պտտվում է արհեստական արբանյակների հսկա մի ընտանիք: Ժամանակակից հրթիռներն ուղեծիր են դուրս բերում միանգամից մի քանի արբանյակ որոնք Տիեզերք են տանում գիտական բազմապիսի ու բարդ սարքեր:

Երկրի սովե
տական ար
հեստական
արբանյակ
ները.

1 Երկրի ա
ռաջին ար
հեստական
արբանյակը
2 4 ապի
արբանյակ
3 «Կոսմոս»
արբանյակը,
4 Օդերևու-
թաբանա
յան ար
բանյակ



Երկրի առաջին արհեստական արբանյակը կշռում էր ընդամենը 83,6 կգ իսկ այսօր մեր մոլորակի շուրջը պտտվող ժամանակակից գիտական կայաններն արդեն տասնյակ տոննաներ են կշռում:

Երկրի արհեստական արբանյակներից մի քանիսը կարող են արտասովոր ուղեծրեր ունենալ: Այդպիսին են օրինակ, այսպես կոչված օրային արբանյակները, որոնք Երկրի շուրջը պտտվում են նրանից մոտ 36 հզ կմ հեռավորությամբ Դժվար չէ հաշվելը որ այդպիսի արբանյակի պտտման պարբերությունը հավասար է 24 ժամի այսինքն մեկ օրվա: Այսպիսով, եթե նման արբանյակը արձակվի Երկրի հա

սարակածի հարթության մեջ ապա այն մշտապես կգտնվի Երկրի նույն կետի վերևում

Օրային արբանյակները հարմար են ռադիո և հեռուստահաղորդումները վերահաղորդելու համար: Իրարից հավասարապես հեռու պտտվող օրային երեք արբանյակների օգնությամբ կարելի է Երկրի վրա գրտնըվող մեկ ռադիոկայանի հաղորդումներով սպասարկել ամբողջ Երկրագունդը

Այժմ պատկերացրեք տիեզերական տարածությունում գտնվող երկու կետ որտեղ Երկրի ու Լուսնի ձգողության ուժերը միմյանց հավասար են և որոնք Երկրի ու Լուսնի ծանրության կենտրոնների հետ գտնվում են միևնույն հարթության մեջ Այդ կետերն անվանում են լիբրացիայի եռանկյունային կետեր Այդտեղ տեղադրված արբանյակները կգտնվեն կայուն հավասարակշռության մեջ և Երկրի ու Լուսնի նկատմամբ մշտապես կպահպանեն իրենց սկզբնական դիրքը:

Ստեղծվել են նաև այնպիսի արբանյակներ որոնք շարժվելով խիստ ձգված ուղեծրով Երկրից հեռանում են ավելի քան 200 հզ. կմ

Արբանյակներում տեղադրված սարքերն օգնում են ուսումնասիրելու Արեգակնային համակարգի մոլորակները այլ գալակտիկաներ անսահման Տիեզերքը Չէ որ տիեզերական աստղադիտարանի աշխատանքին չի խանգարում Երկրի մթնոլորտը որը դժվարացնում է Երկրից կատարվող դիտումները

«Կոսմոս» սերիայի մեր արբանյակներում փորձարկվում են տիեզերական ապագա թռիչքների համար նախատեսվող սարքեր, կատարվում կենսաբանական փորձեր:

Արբանյակները մարդուն առաջին անգամ հնարավորություն տվեցին հեռվից նայելու սեփական մոլորակին: «Մետեոր» սերիայի արբանյակները օդերևութաբաններին արժեքավոր տեղեկություններ են տալիս օդային զանգվածների շարժման մասին և օգնում անսխալ կանխագուշակելու եղանակը: Գեոդեզիական արբանյակների օգնությամբ քարտեզագիրները որոշում են Երկրի առանձին կետերի կողորդի նատները լուսանկարում մեր մոլորակի մակերևույթը: Նավագնացության արբանյակներով կողմնորոշվում են նավերն ու ինքնաթիռները ինչպես առաջներում կողմնորոշվում էին աստղերով Արեգակով և Լուսնով: «Մոլնիա» սերիայի կապի արբանյակների շնորհիվ կարելի է հսկա

յական հեռավորություններից լսել ու դիտել ռադիո և հեռուստահաղորդումները:

Երկրի արհեստական արբանյակները մարդկանց հրաշալի օգնականներն են:

Երկրի արհեստական արբանյակների հատուկ տարատեսակներն են «Սալյուտ» (ՍՍՀՄ) կամ «Սքայլաբ» (ԱՄՆ) տիպի ուղեծրային կայանները «Սալյուտ»-ներից մեկի մոդելը կարելի է տեսնել Մոսկվայում ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում:

Ուղեծրային կայաններն այնպիսի չափեր ունեն, որ գիտափորձի ժամանակ այնտեղ կարող են ապրել և աշխատել մի քանի տիեզերագնաց Ուղեծրային կայանի և երկրի կապն իրականացվում է «Սոյուզ» տիպի տիեզերանավով Այդ կայանների սարքերը կարող են աշխատել ինքնուրույն ավտոմատորեն:

Նախատեսվում է ապագայում ստեղծել էլ ավելի խոշոր կայաններ Դրանցից մի քանիսում, սեփական առանցքի շուրջ պտտման միջոցով կստեղծվի կենտրոնախույս ուժ արհեստական կշիռ:

Գոյություն ունեն, նույնիսկ այնպիսի նախագծեր, ըստ որոնց երկրի «շրջակայքում» ստեղծվելու են ուղեծրերով պտտվող խոշոր քաղաքներ հազարների հասնող ազգաբնակչությամբ «Եթերային քաղաքների» մասին Կ է Ցիոլկովսկու գաղափարները հետզհետե մարմնավորում են ստանում:

Արգելանոց

Տարեցտարի երկրագնդի վրա ավելի ու ավելի սակավաթիվ են դառնում բնության անձեռնմխելի մնացած անկյունները, ուր կարելի է տեսնել կուսական անտառներ տափաստաններ կամ անապատներ: Որպեսզի պահպանվեն բնության այդ տիպական կամ հազվադեպ հանդիպող տեղամասերն իրենց բուսական ու կենդանական ողջ աշխարհով պետությունը դրանք դարձնում է արգելանոցներ Արգելանոցի տարածքն ընդմիջտ կմնա իր բնական տեսքով և ապագա սերունդները հնարավորություն կստանան այստեղ բնությունը տեսնելու իր ողջ գեղեցկությամբ ու հարստությամբ:

Արգելանոցներն ամենից առաջ գիտական լաբորատորիաներ են բնության մեջ: Այստեղ գիտնականներն ուսումնասիրում

են մարդու ձեռքով չփոփոխված բնության բարդ օրենքները:

Սովետական Միությունում ստեղծվել են շուրջ 120 արգելանոցներ որոնք տեղավորված են մեր հայրենիքի բոլոր բնական գոտիներում:

Յուրաքանչյուր արգելանոցում կան հատկապես արժեքավոր օբյեկտներ որոնց պահպանությանը հատուկ ուշադրություն է դարձվում: Օրինակ Կանդալակշայի արգելանոցում պահպանվում են թռչնաշունկաներն ու այդերուկների բնադրավայրերը Այդ թռչնի աղվամազը բարձր է գնահատվում: Բայկալ լճի ափին է գտնվում Բարգուզինյան արգելանոցը սա մույրի պահպանման հիմնական վայրը Բելուվեժյան թավուտում շատ են կճղակավոր կենդանիները *եղջերուներ* վարազներ, *այծյամներ*, ազատության մեջ ապրում են անտառի հսկաները զուբրերը (վայրի ցուլ) Վորոնեժի արգելանոցում հաջողվել է պահպանել ու բազմացնել *կուղբեր*: Ուկրաինայի տափաստաններում է գտնվում Ասկանիա Նովա արգելանոցը, որտեղ կարելի է տեսնել փետրախոտե տափաստանի ողջ եվրոպայում անձեռնմխելի մնացած միակ հողակտորն իր կենդանական աշխարհով Կովկասի լեռնալանջերին գտնվող արգելանոցում ազատ արածում են վայրի այծերի և քարայծերի հոտեր կիրճերում կան թռչունների հազվադեպ տեսակներ: Իսկ Կասպից ծովի ափին Կզըլ Աղաջի արգելանոցում, ձմեռում են բադերի սագերի և կարապների երամներ, որպեսզի գարնանը վերադառնան իրենց բնադրման վայրերը հեռավոր տունդրա:

Հարավային Թուրքմենիայում Բադխիզի արգելանոցի լայնարձակ տարածություններում բնակվում են նրբագեղ *այծքաղները* ջերյանները վայրի էշերը կուլանները Փորձառու բնախույզն այս

Ծովային կրիա





Զուբրը
Պրիսկսկ-
Տեռասյան
արգելանո
ցում

տեղ կարող է հանդիպել նույնիսկ այն-
պիսի հազվադեպ կենդանիների, ինչպես
ընձառյուծն ու շնագայլը:

Հայաստանում ստեղծված խոսքովի ար-
գելանոցն ունի հարուստ բուսածածկույթ
Այստեղ ազատության մեջ արածում են
հայկական մուֆլոնները (վայրի ոչխար) և
բեզոարյան այծերը: Լայնատերև իլենինե-
րի, արոսենիների ստվերում հանգստա-
նում են գորշ արջն ու գորշուկը Հանդի-
պում են վարազներ լուսաններ, ընձառ-
յուծներ Գիհու նոսր անտառներում և
կաղնուտներում իրենց բույնն են հյուսում
սպիտակագույն անգղներն ու գառնան
գողները: Օդում ճախրում են ճերմակաթև
ճայերը: Այս արգելանոցում կարելի է
տեսնել բնության մեջ հազվադեպ հան-
դիպող սև ցիների:

Մեր հանրապետության մյուս Դիլիջա-
նի արգելանոցի լայնարձակ տարածու-
թյուններում փռված են հաճարենու, կաղ
նու բոխու լորենու, հացենու գեղե-
ցիկ անտառները կարմրածառի (մահիկի)
պուրակները, ուր կլիմայավարժեցվում են
Հեռավոր Արևելքից բերված ուսուրական

բծավոր եղջերուն ազնվացեղ եղջերուն և
վայրի խոզը: Անտառի թավուտում բնա-
կություն են հաստատել գորշ արջն ու
այծյամը լուսանն ու անտառային կա-
տուն: Ճյուղից ճյուղ են թռչկոտում պարս-
կական սկյուռները: Հանդիպում են գորշ
կաքավների անտառային կոցարների
աղավնիների երամներ:

Շատ արգելանոցներ են ստեղծվել նաև
աշխարհի ուրիշ երկրներում, ուր դրանց
հաճախ անվանում են ազգային պարկեր:
Օրինակ Արևելյան Աֆրիկայի սավաննա-
ներում տասնյակ կիլոմետրերով ձգվում է
Սերենգետի ազգային պարկը: Սավաննա-
յի կանաչապատ տարածություններում
արածում են գնու այծքաղների զեբրե-
րի գոմեշների խոշոր հոտեր: Ակացիանե-
րի ստվերում օրվա տապից թաքնվում են
առյուծները Թփուտներով ծանրումեծ
անցնում են հսկա փղերը պոկոտելով
ծառերի տերևները Ահա ակացիաների
ամենաբարձր տերևներն է կրծոտում եր-
կարավիզ ընձուղտը:

Խոժոռ ընգեղջյուրներն արածում են
բացատներում իսկ ծանրամարմին ու
ալարկոտ գետաձիերն ամբողջ օրը պառ-
կած են ջրում Արագավազ հեպարդները
հետապնդում են այծքաղներին զարգաց-
նելով ժամում ավելի քան հարյուր կմ
արագություն Իսկ ընձառյուծը որսի վրա
հարձակվում է դարանից: Ահա նա բռնեց
այծքաղին և նրա հետ մազլցեց ծառը
որպեսզի ոչ ոք չխանգարի նրան հանգիստ
ձաշելու:

Բազմաթիվ գունագեղ թռչուններ են
ճախրում շուրջը: Ծառերի ճյուղերին
պարկանման բներ են հյուսում թռչուն-
ջուլհակիկները: Հաճախ նույն ծառի վրա
կարելի է տեսնել հարյուրավոր բներով մի
ամբողջ «թռչնաքաղաք»: Ծառերի կա-

Այս գունագեղ թռչնակին անվանում են արևելյան ռոզե
լա Նա հաճույքով բնակություն է հաստատում Ավստրա
լիայի ազգային պարկերում






Կարմրաթևիկները Սովետական Միության Ասկանիա Նովա հնագույն արգելանոցում

Աֆրիկական զեբրերը լավ հարմարվել են Ասկանիա Նովայում

տարներին նստած են մերկ պարանոցներով մռայլ թռչունները անգղները Նրանք ուշադիր զննում են թե որտեղ են ճաշում առյուծները որպեսզի օգտվեն նրանց «խրախճանքի» մնացորդներից:





Այերս Ռոք լեռը Ավստրալիայի ազգային պարկերից մեկում

Գալա թռչունները Ավստրալիայի ազգային պարկերից մեկում

տեղավորված իրենց ձագուկների հետ տեղից տեղ են ցատկում կենդանուները: Դանդաղաշարժ պարկավոր արջը կռալան, նստած է ծառին ու տերևներ է ուտում: Հեռվից նկատելով վտանգը, նա բարձրանում է ավելի վեր, որպեսզի անհասանելի մնա



Մեկ այլ մայրցամաքում Ավստրալիա յում արգելանոցների շնորհիվ այսօր էլ գետակներում կարելի է տեսնել բնության հրաշքները՝ բադակտուցը և եքիդնան Որովայնի վրա մեծ, փափուկ պարկերում

Լավ է, որ մարդիկ հասցրեցին երկրի վրա ստեղծել շատ արգելանոցներ Այլ կերպ մենք այլևս չէինք կարողանա տեսնել բազում հիանալի կենդանիների բնության բազում հրաշալիքներ



Բարգուզինյան արգելանոցում



Արգենտինա

(Արգենտինական Հանրապետություն)



Խոսրովի արգելանոցում



Շառուտ Խոսրովի անտառում

Ձախից ներքևում արգելանոցային բույսեր Ավստրալիայում անապատային ոլոռ և բանսիա թուփ



16 ռդ դարում իսպանացիներն սկսեցին նվաճել Հարավային Ամերիկան՝ Նրանց այնտեղ էր ձգում ոսկի և արծաթ գտնելու հույսը. Մայր ցամաքի հարավում ընկած երկիրը նրանք անվանեցին Արգենտինա «արծաթյա»:

Սակայն Արգենտինայում ոչ ոսկի կար ոչ էլ արծաթ: Մի քանի դար շարունակ նա մնում էր Ամերիկայում Իսպանիայի գաղութային տիրապետությունների հեռավոր լքված ծայրամասը: Բերրի հողերի հսկայական տարածությունները որ ռուսական տափաստաններն են հիշեցնում բնակեցված չէին և համարյա չէին օգտագործվում:

Բայց ավելի քան հարյուր տարի առաջ ամեն ինչ փոխվեց: Այդ ժամանակ արդեն բոլոր մայր ցամաքները ծովային ճանապարհներով միացած էին իրար: Եվրոպայում բուռն կերպով զարգանում էր արդյունաբերությունը՝ արագորեն աճում էին քաղաքները՝ Իսկ սեփական պարենամթերքը չէր բավարարում: Այդ շրջանում Արգենտինայում արագորեն զարգանալ սկսեց գյուղատնտեսությունը՝ հատկապես անասնապահությունը՝ Այստեղից սկզբեցին միս արտահանել Եվրոպա:


Եվրոպական երկրներից, գլխավորապես Իսպանիայից ու Իտալիայից Արգենտինա մեկնեցին հարյուր հազարավոր վերաբնակիչներ՝ Լավագույն հողերն ու արոտավայրերը զավթեցին օտարերկրացի կալվածատերերը և արդյունաբերողները՝ Օտարերկրյա կապիտալիստներին են պատկանում նաև ամենախոշոր սպանդանոցներն ու մսի կոմբինատները:

Արգենտինայի աշխատավոր ժողովուրդը պայքարում է հանուն իր իրավունքների հանուն այն բանի որ երկիրը կախում չունենա օտարերկրյա կապիտալիստներից: Շատ բան է ձեռք բերված մասնավոր տերերից ետ են խլվել և պետության սեփականությունն են դարձել երկաթուղիները մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, էլեկտրակայանները Արգենտինայի մայրաքաղաք Բուենոս Այրեսը այժմ աշխարհի խոշորագույն քաղաքներից և նավահանգիստներից է Այնտեղ և հարեվան քաղաքներում արտադրվում է երկրի արդյունաբերական արտադրանքի 3/5-ը: Երկրում ստեղծվել են խոշոր գործարաններ որոնք արտադրում են ավտոմեքենա-

ԱՐԳԵՆՏԻՆԱ

Տարածություն 2 800 000 քառ.կմ


Բնակչությունը 97 800 000 մարդ



- Այրուղի գազերի արդյունահանում
- Նավթի արդյունահանում
- Հանրաքանդի արդյունահանում

- Սև մետաղի գիւղ
- Գյուղատնտեսական մեքենաշինություն
- Ավտոմոբիլային արդյունաբերություն
- Նավթավերամշակման արդյունաբերություն
- Շաքարի արդյունաբերություն
- Պահածոներ արդյունաբերություն
- Գինեգործական արդյունաբերություն
- Հացահատիկաբուսեր (ցորեն, գար, արմավենի)

- Ծախսապահ
- Ի աղոթի այգիներ
- Բրինձ
- Թեւեռա մատ
- Ասասնապահություն
- Ուսարաբուծություն



ներ տրակտորներ հաստոցներ կառուցվել են նոր էլեկտրակայաններ:

Մայրաքաղաքին հարում է Արգենտինայի գյուղատնտեսական գլխավոր շրջանը պամպասները Հարյուրավոր կիլոմետրերով ձգվում են եգիպտացորենի ցորենի արտերը ձիթատու բույսերի տնկարկները Հորիզոնից շատ հեռու են տարածվում կալվածատեր-անասնապահների փշալարով շրջափակված տնտեսությունները, ուր արածում են ոչխարների, խոզերի այծերի անհաշիվ հոտեր կովերի նախիրներ ու ձիերի երամակներ Այդ տնտեսություններում գլխավոր դեմքը հովիվն է գաուչոն: Գաուչոները գունագեղ զգեստներ են հագնում և հոյակապ հեծյալներ են Նրանց երգերը գիտե ողջ երկիրը Այդ երգերը չքնաղ Արգենտինայի ազատասեր արգենտինացիների մասին են հասարակ անօթևան ու անհող մարդկանց տառապանքների մասին:

Արգենտինայում ապրում են շուրջ 80 հզ հայեր Նրանք այստեղ սկսել են գաղթել 19-րդ դարի 80-ական թվականներից Այնուհետև առաջին (1914—1918) և հատկապես երկրորդ (1939—1945) համաշխարհային պատերազմներից հետո հայերի թիվն Արգենտինայում ստվարացել է, և ձևավորվել է հայ համայնքը Հայերը զբաղվում են արհեստներով առևտրով քիչ չեն նաև արգենտինահայ մտավորականներն ու ուսանողները Հայ համայնքն ունի իր եկեղեցիները դպրոցները, մշակութային միությունները հրատարակում է թերթեր ամսագրեր: Հայերը մասնակցում են Արգենտինայի տնտեսական ու մշակութային կյանքին: Ամեն տարի բազմաթիվ արգենտինահայ զբոսաշրջիկներ են այցելում Սովետական Հայաստան Մայր հայրենիքը մշտապես սատարում է արգենտինահայ համայնքին նրա ազգապահպանության գործում ուղարկում դասագրքեր կազմակերպում ցուցահանդեսներ





Արեգակ

Արեգակը մի շիկացած հսկայական գունդ է և կազմված է, հիմնականում, երկու գազերից *ջրածնից* ու հելիումից: Երկնքում Արեգակը փոքրիկ շլացուցիչ սկավառակ է թվում միայն այն պատճառով, որ մենք նրանից հեռու ենք շուրջ 150 մլն. կմ

Արեգակի տրամագիծը 109 անգամ մեծ է *Երկրի* տրամագծից իսկ Արեգակը կազմող նյութից կարելի է 330 հզ. հատ այնպիսի երկրագունդ պատրաստել, ինչպիսին մերն է Արեգակի մակերևույթի ջերմաստիճանը 6000 աստիճան է իսկ նրա ընդերքում կենտրոնին մոտ հասնում է 15 մլն աստիճանի: Այդպիսի աներևակայելիորեն բարձր ջերմաստիճանում արեգակնային նյու-

Բուենոս Այրես քաղաքը

թում տեղի են ունենում փոփոխություններ ջրածինը ասես «այրվելով», աստիճանաբար փոխակերպվում է հելիումի. Ընդ որում արեգակնային նյութը փոխակերպվում է լույսի և ջերմության որոնց շնորհիվ էլ Երկրի վրա կյանք գոյություն ունի:

Արեգակը լույս է տալիս և կարծես թե «հալվում» է անընդհատ նվազեցնելով իր զանգվածը: Բայց Արեգակն այնքան վիթխարի է, որ, նույնիսկ, այդքան նյութ և էներգիա ծախսելով էլ դեռ կշարունակի լուսավորել միլիարդավոր տարիներ

Արեգակի մակերևույթին համարյա միշտ դիտվում են մուգ բծեր Այդտեղ արեգակնային գազերը մի քանի հարյուր աստիճանով ավելի սառն են, քան նրանց շրջապատի մակերևույթը ուստի և բծերը մուգ են թվում: Արեգակի վրայի բծերի

քանակը պարբերաբար փոխվում է Մոտավորապես յուրաքանչյուր 11 տարին մեկ դրանց թիվը դառնում է ամենամեծը: Այդ ժամանակ, ինչպես ասում են աստղագետները, Արեգակը հատկապես ակտիվ է լինում Արեգակի վրա բոլոր պրոցեսներն ընթանում են ավելի բուռն, ուժեղանում է նրա ճառագայթումը, և դա անմիջապես ազդում է մեր մոլորակի կյանքի վրա Արեգակի բարձր ակտիվության տարիներին հաճախանում են բևեռափայլերը:


Գիտնականներն ուսումնասիրում են արեգակնային և երկրային երևույթների կապը, աշխատում գտնել այնպիսի միջոցներ, որոնք պաշտպանեն մեզ Արեգակի վնասակար ազդեցություններից

Արեգակի շուրջը, բոլոր ուղղություններով, տարածվում է արեգակնային մթնոլորտը, որը, Արեգակի նման, կազմված է հիմնականում, ջրածնից և հելիումից: Արեգակի լրիվ խավարումների ժամանակ, երբ *Լուսինն* ամբողջապես ծածկում է Արեգակը, նրա շուրջը մի քանի րոպեով բռնկում է արևապսակը երկար ելուստներով մարգարտաարծաթափայլ լուսապսակը ելուստներն արեգակնային մթնոլորտի ամենաարտաքին մասերն են

Արեգակն անընդհատ դեպի տարածություն է արտանետում Նյութի բազմաթիվ մանրագույն մասնիկներ պրոտոններ, էլեկտրոններ և այլ մասնիկներ, որոնց մասին դուք կարող եք կարդալ «Ատոմ» զրույցում: Նյութի այդ մասնիկներն առաջացնում են այսպես կոչված արեգակնային քամի, որը ներթափանցում է ամբողջ Արեգակնային համակարգը: Երբեմն Արեգակի մթնոլորտում տեղի են ունենում շատ ուժեղ պայթյուններ՝ այսպես կոչված արեգակնային բռնկումներ: Արեգակի այն տեղամասից, ուր տեղի է ունեցել պայթյունը, դուրս են նետվում շատ արագ շարժվող մասնիկներ, որոնց թիվը խիստ մեծ է լինում: Բաց տիեզերքում կամ Լուսնի վրա գտնվող տիեզերագնացների համար բռնկումների մի մասը վտանգավոր է Գիտնական-


ները մշակում են արեգակնային բռնկումները կանխատեսելու և դրանցից պաշտպանվելու եղանակներ

Արեգակը մեր մոլորակի վրա կյանքի գոյության աղբյուրն է, առանց արեգակնային ճառագայթների էներգիայի կյանքը երկրի վրա անհնար կլիներ: Ջուր չէ, որ նրան անվանում են «կենսատու»։ Արեգակի էներգիան ավելի ու ավելի լայնորեն է օգտագործվում զանազան սարքերում արեգակնային ջեռուցիչներում, աղի ծո-



վաջրի աղազատիչներում Արեգակը էներգիայի աղբյուր է նաև արևային մարտկոցների համար, որոնք տեղակայված են գրեթե բոլոր տիեզերանավերում և ավտոմատ կայաններում:

Գիտնականներն Արեգակի դիտումներ են կատարում աստղադիտարաններում արեգակնային աստղադիտակների օգնությամբ. Կարևոր նշանակություն ունեն ուղեծրային աստղադիտարանները, որոնց երկրի մթնոլորտը չի խանգարում



Արեգակի խավարում

Արեգակնային համակարգ

Արեգակը և նրա շուրջը պտտվող բոլոր մարմինները կազմում են Արեգակնային համակարգը։ Նրա մեջ է մտնում նաև մեր մոլորակը Երկիրը, որն ինը մեծ մոլորակներից մեկն է։

Մեծ մոլորակները տարբեր չափեր ունեն և բաժանվում են երկու խմբի

Արեգակը և Արեգակնային համակարգի մոլորակները. Դուք տեսնում եք նաև երկնքի հյուսիսային կիսագնդի մի շարք համաստեղություններ։

Չախից վերևում՝ Արեգակի և մոլորակների համեմատական չափերը

Առաջին խմբում ընդգրկված են հսկա մոլորակները՝ Յուպիտերը, Սատուռնը, Ուրանը, Նեպտունը։ Սրանք կազմված են, հիմնականում, ջրից և գազերից։

Երկրորդ խումբը կազմում են Երկրի տիպի մոլորակները՝ Մերկուրին, Վեներան,

Երկիրը, Մարսը: Պլուտոնի կառուցվածքն
առայժմ հայտնի չէ:

Արեգակին ամենից ավելի մոտ են
գտնվում Մերկուրին, Վեներան, Երկիրը և

Մարսը Սրանք կազմված են դժվարահալ
քարանյութերից, մետաղներից և թթվածնի
հետ դրանց միացություններից, շատ քիչ
են թեթև գազերն ու ջուրը





Մեծ մոլորակներից բացի, Արեգակի շուրջը պտտվում են նաև հազարավոր փոքր մոլորակներ, որոնց անվանում են աստերոիդներ (աստղակերպեր) Ամենամեծ աստերոիդի Ցերերայի, տրամագիծը 1003 կմ է Արեգակի արբանյակներից են նաև գիսավորները Արանց գլուխների ետևից փայլատակող քղանցքների նման երկնակամարով մեկ ձգվում են գազից ու փոշուց կազմված պոչերը՝ գեսերը (այստեղից էլ գիսավոր անունը) Դա շատ գեղեցիկ տեսարան է Աստերոիդները և գիսավորները քայքայվում են: Դրանց մասնիկները ասուպները, մթնոլորտ ընկնելով, այրվում են Բայց ասուպային որոշ մասնիկներ ամբողջությամբ չեն ոչնչանում և քարի ու երկաթի բեկորների՝ երկնաքարերի տեսքով ընկնում են երկրի վրա

Միջմոլորակային ողջ տարածությունը լցված է տիեզերական մանրագույն փոշե-հատիկներով և գազի մասնիկներով

Տիեզերքում և Արեգակնային համակարգում գտնվող բոլոր մարմինների շարժումը կառավարում է տիեզերական ձգողությունը: Այդ մասին դուք կարող եք կարդալ «Նյուտոն Իսահակ» գրույցում.

Արեգակնային ողջ համակարգը՝ Արեգակն ինքը, մոլորակները, գիսավորները, մտնում է աստղային հսկա համակարգի Գալակտիկայի կազմի մեջ. Մեր Արեգակնային համակարգը վայրկյանում մոտ 250 կմ արագությամբ պտտվում է Գալակտիկայի կենտրոնի շուրջը: Մեկ պտույտը նա կատարում է մոտ 200 մլն տարում

Պատկերացնելու համար, թե ժամանակի ինչ հսկայական հատված է այդ, ասենք, որ մեր մոլորակը գոյություն ունի «ընդամենը» 4,5 միլիարդ տարի:

Արեգակնային համակարգը մեր «տունն» է անծայրածիր Տիեզերքում

Արևադարձային անտառ ձախից ծառի կա տարին նստած են հետևյալ թռչունները կվեզալ, կապտահոնք մոմոտ ոնգաթռչուններ արա թութակներ ներքևում դրախտա հավեր: Ծառարմատի մոտ անակոնդա վիշապ օձն է: Կենտրոնում գետակինձը ջուր խմելիս, գվերեցա կապիկը Աջից մակակա կապիկը ձագուկի հետ արևադարձային թիթեռներն ու կոլբրի թռչունները խոլորձների ծաղկաթերթերին

Երկրագնդի առավել տաք գոտիներից են արևադարձային գոտիները, որոնք տեղավորված են հասարակածին մոտ: Արևադարձային գոտիներում բնությունն ստեղծել է յուրօրինակ բնական ջերմոց՝ հաստատուն, հավասարաչափ ջերմությամբ, առատ տեղումներով: Եվ բուսական աշխարհն էլ այստեղ զարմանահրաշ է Անտառն առաջացնում է խիտ թավուտներ, որոնց միջով անցնելը շատ դժվար է, իսկ երբեմն էլ անհնարին Շառերը ձգտում են վեր դեպի լույսը, թանձր ստվերով վարագուրելով անտառը: Այստեղ հավերժական կանաչի թագավորություն է, հավերժական ամառ

Արևադարձային գոտիների բուսականությունն արտակարգ բազմազան է: Անտառն, ասես, մի քանի հարկանի լինի առանձին ծառեր հասնում են մինչև 60 մետրի քսան հարկանի շենքի բարձրության:

Ծառերի տերևները հոծ են, խոշոր և հաստակեղև Դրանք հիշեցնում են տնային ֆիկուսի տերևները, որը ծագումով նույնպես արևադարձային բույս է Հաստ կեղևը տերևներին պաշտպանում է բարկարնից

Արևադարձային անտառի բնորոշ բույսերը լիաններն են Նրանք կառչում են ծառերի բներին և մագլցում վեր դեպի լույսը: Լիանները փաթաթվում են ծառերին, կախվում ցած, ձգվում ծառից ծառ և հասնում են հսկայական, հաճախ 100 մետրից ավելի երկարության

Արևադարձային գոտիներում շատ են նաև ամենաբազմապիսի արմավենիները՝ բարձր, հսկա ծառերից մինչև ցածրիկ թփերը Կան նույնիսկ արմավենի-լիաններ: Բարձր արմավենիներն ունեն գլանաձև, ողորկ բուն՝ Որոշ ցածրիկ արմավենիներ բուն ամեննին չունեն, միայն տերևների պսակն է:

Լույսին ավելի մոտ լինելու համար շատ բույսեր աճում են ոչ թե հողի, այլ ծառերի բների ու ճյուղերի վրա Այդ բույսերից առավել գեղեցիկ են խոլորձները, որոնք նման են հսկա, վառ թիթեռներին

Արևադարձային գոտիներում աճում են ադամաթզենի (բանան), հնդկեղեգ, ծառանման պտերներ, խոլորձներ և շատ ու շատ այլ բույսեր: Աշխարհում ուրիշ ոչ մի տեղ մարդուն օգտակար այդքան շատ բույսեր չկան Արևադարձային անտառը

տալիս է ադամաթուզ, հացածառի և սեխածառի պտուղներ, քիմիկ մանգո ճանդան (սանդալ) կարմիր և սև ծառերի փայտ կառուչուկ լաքեր, կոկոսյան ընկույզ, սագո, շաքար

Արևադարձային անտառների ամենամեծաբանակ բնակիչները միջատներն են և ամենից առաջ՝ գուլնագուլն, խոշոր, մինչև 20 սմ մեծության *թիթեռները*: Վառ գուլն և մեծ չափեր ունեն նաև *սարդերը*:

Ամենաբազմապիսի չափի և գուլնի *թութակներն* իրենց կոկորդային ճիչերով լցնում են անտառը Արևադարձային գոտիներում ապրում են նաև ամենափոքրիկ թռչունները *կոլիբրիները*: Նրանց որոշ տեսակներ բռնից մեծ չեն: Իսկ որքան *կապիկներ* կան այստեղ՝ հսկա գորիլլաներից մինչև փոքրիկ ուխտիտիները, որոնց հասակն ընդամենը 15 սմ է

Արևադարձային անտառներում անչափ շատ են նաև սողուններն ու երկկենցաղները օձերը, մողեսները, գորտերը

Արևածաղիկ

Եվրոպացիներն առաջին անգամ այդ բույսը տեսան մեքսիկական պրերիաներում, երբ հայտնագործեցին Ամերիկան Չորս հարյուր տարի առաջ նրանք այն բերեցին Եվրոպա և անվանեցին «արեւի ծաղիկ»: Ռուսաստանում արևածաղիկը հայտնվեց երեք հարյուր տարի առաջ Ակզբում այն բազմացնում էին պարտեզները զարդարելու նպատակով Այն ժամանակվա արևածաղիկն ուներ բազմաթիվ փոքրիկ զամբյուղներ (ծաղկաբույլեր)

Սակայն շուտով տեսան, որ արևածաղիկի պտուղները սերմնապտուղները, կարելի է օգտագործել որպես համեղ ուտելիք, և սկսեցին այն աճեցնել բանջարանոցներում: 1830 թ Վորոնեժի նահանգի Ալեքսեևկա գյուղի ճորտ գյուղացի Բոկարյովը պարզեց, որ կարելի է նրա սերմնապտուղները ձգմելով ձեթ քամել Այժմ մեզ մոտ ամենատարածված ձիթատու բույսը արեւածաղիկն է Մեր երկիրը դարձել է մեքսիկական «արևի ծաղիկ» երկրորդ հայրենիքը

Արևածաղիկը մշակում են տափաստանային սևահողերում Մուդավիայից մինչև Ալթայ: Այն, իհարկե, շատ քիչ է նման իր վայրի նախնուն Մշակովի արևածաղիկի զամբյուղը մեծ է նրա մեջ լինում է մինչև 7 հզ. սերմնապտուղ Մշակվող արևա-

ծաղիկի ցողունը հասնում է մինչև 4 մ բարձրության և ունենում ձեռքի հաստություն

Առօրյա գործածության մեջ նրա սերմնապտուղներն այդպես էլ մնացին որպես համեղ ուտելիք Բայց գլխավորը, որ տալիս է մեզ արևածաղիկը, լավ ձեթն է Երբ սերմնապտղից ձգմում, զատում են յուղը, մնում է քուսպը, որով կերակրում են կովերին, ոչխարներին, ձիերին, իսկ արեւածաղիկի կտրատած և շոգեխաշած ցողուններով խոզերին Ջամբյուղները չորացնում ու աղում են, և նույնպես լավ կեր է ստացվում: Արևածաղիկի մի քանի սորտեր մշակում են սիլոսի համար Այդ դեպքում բերքահավաքն սկսում են, երբ սերմնապտուղները հասունացած չեն լինում


Արիստոտել

Մեր թվականությունից առաջ 4-րդ դարի սկզբին հույն փիլիսոփա Պլատոնը ստեղծել էր մի դպրոց, որն անվանում էին Ակադեմիա, որովհետև զրույցներն աշակերտների հետ Պլատոնը վարում էր առասպելական հերոս Ակադեմոսի արձանի շուրջ փռված մի ստվերաշատ այգում Աշակերտներից մեկը Ստագիրոս քաղաքից էր: Նա ոչ մի բանի կուրորեն չէր հավատում, աշխատում էր ստուգել այն ամենը, ինչ լսում էր ուսուցչից, և ասում էր «Պլատոնն իմ բարեկամն է, բայց ճշմարտությունն ավելի թանկ է» Այդ աշակերտը Արիստոտելն էր

Այդ ժամանակ մարդիկ դեռ քիչ բան գիտեին շրջապատող աշխարհի մասին Արիստոտելն ուզում էր հնարավորին չափ շատ բան իմանալ, ցանկանում էր աշխարհի, բնության մասին մի գիտության մեջ ժողովել այն ամենը, ինչ հայտնի էր գիտնականներին Այդ նպատակով նա խորամուխ եղավ պատմության ու աշխարհագրության, կենսաբանության ու ֆիզիկայի, մանկավարժության ու բժշկության մեջ

Արիստոտելը շատ հայտնագործություններ է կատարել, սկիզբը դրել բազմաթիվ նոր գիտությունների (օրինակ, եղանակի մասին գիտության օրերաութաբանության): Նա երկրի ու Լուսնի գնդաձեվության առաջին հայտնագործողներից է Նա է բացատրել քամու և ծովային հոսանքների առաջացումը, նշել մարդու և





կապի ծագումնաբանական կապը, գտել հիվանդությունների բուժման նոր միջոցներ, մշակել տրամաբանության ճիշտ դատելու մասին գիտության, հիմունքները: Բայց Արիստոտելը նախ և առաջ փիլիսոփա էր և ստեղծեց պետության բընույթի, մարդկային կյանքի նպատակների մասին իր ուսմունքը:

Արիստոտելն, անշուշտ, ամեն բանում չէ, որ ճիշտ էր: Գիտության այն ժամանակվա մակարդակի համար դա բնական էր Օրինակ, նա գտնում էր, որ երկիրը գտնվում է Տիեզերքի կենտրոնում:

Արիստոտելը արտակարգ շատ բան է արել գիտության զարգացման համար: Եվ նրա գլխավոր ծառայությունն այն է, որ ցույց տվեց, թե ինչպես պետք է աշխատի գիտնականը, եթե ուզում է ուսումնասիրել բնությունը: Նա առաջիններից էր, որ որպես փորձանմուշ օգտագործեց կենդանիներին, առաջինն էր, որ սկսեց կազմակերպել բնության երևույթների մշտական գիտական դիտումներ, հավաքել գիտական հավաքածուներ:

Կարլ Մարքսը Արիստոտելին անվանել է հին աշխարհի մեծագույն մտաօղ:

Մեր թվականությունից առաջ 335 թ Արիստոտելն Աթենքի մոտ հիմնադրել էր իր սեփական դպրոցը Լիկեյոնը, որը նույնքան հայտնի էր, որքան Պլատոնի Ակադեմիան Լիկեյոնում նա աշակերտների հետ դասերը վարում էր զբոսանքի ժամանակ, ճեմելով, և դրա համար էլ նրա աշակերտներին կամ հետնորդներին անվանում էին պերիպատետիկներ (այս հունարեն բառը նշանակում է զբոսնողներ, ճեմողներ): Հայաստանում, հետևելով այդ ավանդույթին, որոշ բարձրագույն դպրոց-

ներ անվանում էին ճեմարան (օրինակ Գևորգյան ճեմարանը էջմիածնում *Հազարյան ճեմարանը* Մոսկվայում) Հին Հայաստանում մեծ ուշադրություն են դարձրել Արիստոտելի ստեղծագործություններին: Նրա բազմաթիվ երկերի հայերեն թարգմանությունները հնագույններից են աշխարհում և այժմ են ընկնում մեծ ճշգրտությամբ Հայ ակադեմիայի փիլիսոփա *Դավիթ Անհաղթը* հատուկ աշխատություններ է նվիրել Արիստոտելի ստեղծագործություններին, իսկ իր հիմնական երկում մեկնաբանել է նրա փիլիսոփայությունը: *Անանիա Շիրակացին* լուսաբանել է բնության և Տիեզերքի մասին Արիստոտելի աշխատությունները Արիստոտելի երկերին քաջատեղյակ են եղել հայ փիլիսոփաներ Գրիգոր Մագիստրոսը (11-րդ դար) Հովհաննես Սարկավազը (11—12-րդ դարեր), Վահրամ Բաբունին (13-րդ դար) Հովհաննես Որոտնեցին (14-րդ դար) Գրիգոր Տաթևացին (14-րդ դար) Այսօր էլ սովետահայ փիլիսոփաները հաճախ են անդրադառնում Արիստոտելի փիլիսոփայությանը:


1977 թ Երևանում հրավիրվել է Արիստոտելին նվիրված գիտաժողով:

Արծիվ

Սովետական Միության տարածքում ապրում են յոթ տեսակի արծիվներ բայց նրանց մեջ ամենաերևելին, անշուշտ, քարարծիվն է: Նա այնքան մեծ է և ուժեղ, որ կարող է նույնիսկ գայլին հաղթել: Մեր երկրում (Կովկասում և Միջին Ասիայում) քարարծիվով որս են անում շատ վաղուց:

Որսորդը նախ փոքրիկ քարարծիվին հանում է բնից Դա շատ վտանգավոր է որովհետև բույնը գտնվում է անմատչելի ժայռերի մեջ, իսկ մայր և հայր արծիվները խիզախաբար պաշտպանում են իրենց ձագուկներին: Հետո էլ ջահել արծիվը դեռ պետք է ընտելանա տիրոջը: Ապա սկսում են վարժեցնել նրան: Վերջապես արծիվն արդեն վարժեցված է, ամրացել են նրա հզոր թևերը: Եվ ահա որսորդն արծիվի հետ ճանապարհվում է որսի:

Վիթխարի թռչունը լայն բացելով երկու մետրանոց թևերը բարձր ճախրում է երկնքում: Ահա սրատես աչքերը նկատեցին գայլին: Պտույտ պտույտի ետևից ասես դժկամորեն արծիվն սկսեց իջնել իսկ հետո հանկարծ ծալեց թևերն ու կայ



Քարարծիվ

Ծակի արագությամբ նետվեց դեպի որսը Եվ գայլն արդեն գնալու տեղ չունի Քարարծիվն ուժեղ ճիրաններով բռնել է գազանին և գետնին սեղմել: Այժմ հեծյալ որսորդին մնում է միայն մոտենալ և կապուտել գայլին

Քարարծիվներն ապրում են նաև Սովետական Միության հարավում, ուր շատ են անմատչելի ժայռերը: Հանդիպում են նաև սիբիրյան տայգայում և ՍՍՀՄ-ի եվրոպական մասի անտառներում Մեր հանրապետությունում տարածված է արծվի չորս տեսակ՝ քարարծիվը, թզուկ, փոքր և տափաստանային արծիվները

Անտառում արծիվներն իրենց բույնը շինում են հնամենի բարձր ծառերին ամենախուլ թավուտում, ճանապարհներից և բնակավայրերից հեռու: Զգուշավոր թռչունները սակավ են մարդկանց աչքին երևում:

Եվ աշնան մոտ միայն, երբ մեծացած են լինում արծվի ձագուկները, երբեմն կարող են տեսնել, թե ինչպես բարձր երկնքում դանդաղասահ ու վեհորեն ճախրում է արծվային ամբողջ ընտանիքը


Երբ վրա են հասնում ցրտերը, քարարծիվները պատրաստվում են քոչելու: Իրենց ձմեռային ճանապարհի վերջում, որևէ տեղ, երիտասարդ արծիվները կանգ կանեն և կման ապրելու մինչև նոր ցրտերը Իսկ հայր և մայր արծիվները ետ կթռչեն,

կգտնեն իրենց նախկին բույնը, կնորոգեն և նորից այստեղ կմեծացնեն մեկ կամ երկու արծվիկի:

Արկտիկա

Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը, նրա կղզիները և Եվրոպայի, Ասիայի ու Ամերիկայի հյուսիսային ծայրամասերը միասին անվանում են Արկտիկա («արկտիկոս» հունարեն բառից, որ նշանակում է «հյուսիսային»): Այնտեղ, Սառուցյալ օվկիանոսի սառույցների մեջ է գտնվում Հյուսիսային բևեռը



Մինչև մայր ցամաքների ծայրամասերն ընկած մերձբևեռային տարածությունն անվանում են Կենտրոնական Արկտիկա Տարվա մեջ մի քանի ամիս այնտեղ բևեռային գիշեր է լինում Այդ շրջանում աստղերը Լուսինը և մեկ էլ բևեռափայլի երփներանգ շերտերն են միայն, որ լուսավորում են անծայրածիր տարածությունները, իսկ արևն ամենևին չի երևում Առաջին անգամ արևը հորիզոնից դուրս է նայում մարտին, ընդամենը մեկ րոպեով, և այդ օրից ավելի ու ավելի երկար է մնում երկնքում Սկսվում է բևեռային շլացուցիչ ցերեկը, որը նույնպես մի քանի ամիս է տևում:



..... Հյուսիսային ծովային ուղի

▶ Ռիսի արշավախմբի երթը դին 1908-1909 թթ

Մասշտաբ 1 : 50 000 000




Որքան էլ որ ցուրտ է արկտիկական ամառը (միջին հաշվով 1—3 աստիճանի ջերմություն) այնուամենայնիվ անտարկտիկականից ավելի տաք է Արկտիկայում ամենուրեք կյանք կա Ամռանը ծովափին ծաղկում են հյուսիսային համեստ ծաղիկները, իսկ այնտեղ ուր փերը ողողվում են Գոլֆստրիմ տաք հոսանքի ջրերով (օրինակ Կոլա թերակղզում), նույնիսկ իսկական շոգ ամառ է լինում

Սառուցյալ օվկիանոսի ջրերում իրենց շատ լավ են զգում գրենլանդական փո-

կերը, ծովացուկերը, ծովային նապատակները, ծովաշները Սպիտակ արջերն ապրում են կղզիներում և մեծ սառցաբեկորների վրա, իսկ ամռանը կղզիների ուղղաբերձ ժայռերը, որոնք շեշտակի իջնում են դեպի ծովը, ամբողջովին ծածկված են ծովային թռչունների բներով Դրանք թռչնաշուկաներն են:

Շատ ճանապարհորդներ են փորձել հասնելու Հյուսիսային բևեռ, բայց նրանց փորձերն անհաջող են անցել: Միայն 1909 թ ամերիկացի Ռոբերտ Պիրին հասավ





երկրի այդ կետը 1912 թ ռուս ճանապարհորդ Գեորգի Սեդովի կազմակերպած ռուսական առաջին արշավախումբը «Սուրբ Փոկաս» նավով ճանապարհվեց դեպի Հյուսիսային բևեռ։ Արշավախումբը Հյուսիսային բևեռ չհասավ, որովհետև ցարական իշխանություններից օժանդակություն չստացավ և, դրանից զատ, վատ էր հանդերձավորված Գեորգի Սեդովը զոհվեց, սակայն մինչ այդ նա արժեքավոր շատ դիտումներ էր կատարել, որոնք հետագայում օգտագործեցին սովետական գիտնականները։ 1929 թ Արկտիկայի այդ ականավոր հետազոտողի պատվին նրա անունը կրող հրվանդանի մոտ կառուցվեց բևեռային աստղադիտարան։

Առաջինը սովետական գիտնականներն են սկսել կանոնավորապես հետազոտել Արկտիկայի բնությունը։ Վ Ի Լենինի առաջարկությամբ կազմակերպվեց Արկտիկայի հատուկ ինստիտուտ, որը գտնվում էր Լենինգրադում Գիտահետազոտական նավերից կազմված արշավախմբերն սկսեցին ուսումնասիրել և յուրացնել Հյուսիսային ծովային ճանապարհը, որն անցնում է Հյուսիսային սառուցյալ օվկիանոսով։ Դա ամենակարճ ճանապարհն է Մուրմանսկ ու Արխանգելսկ նավահանգիստներից դեպի Հեռավոր Արևելքի նավահանգիստներ և հակառակ ուղղությամբ բեռներ փոխադրելու համար Հյուսիսային ծովային ճանապարհով նավարկություն հաստատելը շատ կարևոր էր Առանց այդ ճանապարհի դժվար է Սովետական Արկտիկայի հարստություններն օգտագործելը։ Չէ որ Սովետական Միության Ծայր Հյուսիսի ընդերքում թաքնված են նիկելի, պղնձի, ոսկու, նավթի պաշարներ։ Բայց այդ ճանապարհը դժվարանցանելի է։ Այնտեղով կարելի է նավարկել միայն ամռանը, քանի որ օվկիանոսը տարվա մեծ մասը սառցապատ է։

Որպեսզի նավերը կարողանան մեկ ամառվա ընթացքում անցնել Հյուսիսային ծովային ճանապարհով, հարկավոր է ամեն ինչ իմանալ եղանակի, սառույցների շարժման, ամբողջ Արկտիկայի, այլ ոչ թե միայն ափերի մոտով անցնող ծովային հոսանքների մասին Այդ ամենը պարզելու համար 1937 թ սովետական չորս գիտնականներ պատմության մեջ առաջինը վայրէջք կատարեցին Հյուսիսային բևեռի շրջանում, դրեյֆոդ սառցաբեկորի վրա Չմեռումը ղեկավարում էր Ի Դ Պապանինը։ Չնայած խստաշունչ սառնամանիքներին, ձյունամրրիկներին ու բևեռային գի-

շերվան, պապանինականները կանոնավորապես ուսումնասիրեցին Արկտիկայի բնությունը։

Այժմ «Հյուսիսային բևեռ» դրեյֆոդ գիտակայաններ կան Արկտիկայի բոլոր շրջաններում Չմեռող գիտնականներն այդ կայաններում մշտական դիտումներ են կատարում։ Ամեն օր ռադիոյով տեղեկություններ են հաղորդում եղանակի և օվկիանոսի վիճակի մասին։ Այդ հաղորդումներն օգտագործվում են ամբողջ աշխարհում։

1955 թ. սկսած այն դրեյֆոդ սառցաբեկորների վրա, ուր բևեռախույզների կայաններ չկան, ամեն տարի տեղակայում են ավտոմատ կայաններ, որոնք հետևում են եղանակին և սառույցների շարժմանը։

Սովետական բևեռախույզները բացահայտել են Արկտիկայի բազմաթիվ գաղտնիքներ Օրինակ, դեռ պապանինականները պարզեցին, որ Հյուսիսային բևեռի շրջանում չկա ոչ մի կղզի ու երկիր։ Ավելի ուշ ուրիշ բևեռախույզներ Սառուցյալ օվկիանոսի հատակին հայտնաբերեցին 1800 կմ երկարությամբ մի բարձր լեռնաշղթա, որը կոչեցին Մ Վ Լոմոնոսովի անունով։

Արկտիկան արդեն սպիտակ անապատ չէ Սառուցյալ օվկիանոսի ափերին աճել են ծովային նավահանգիստներ, քաղաքներ ու ավաններ։ Տարեցտարի Հյուսիսային ծովային ճանապարհով կատարվող շարժումն ավելի է աշխուժանում. Սովետական ծովայինները, պատմության մեջ առաջին անգամ, այդ ճանապարհով նավերի կարավանով անցան ոչ թե ամռանը, ինչպես սովորաբար, այլ ձմռանը։ Այժմ ամեն ինչ արվում է, որպեսզի մարդիկ Ծայր Հյուսիսում աշխատեն ու ապրեն նույնպիսի բարեկեցիկ պայմաններում, ինչպես մեր հայրենիքի մյուս շրջաններում։

Արկտիկայի մասին կարդացեք հետևյալ գրքերը
Членов А Ф Твоя Арктика, М, «Дет лит», 1972

Бадигян К С М, «Дет лит» 1964

Արմավենի

Հավանաբար, ամեն ոք էլ արմավենի տեսել է, եթե ոչ այգում, ապա գոնե սենյակում թաղարով։ Որոշ արմավենիների բարձր բունը հարթ է, մերկ, մյուսներինը



պատած է մեռած, հովհարաձև կամ փետրաձև տերևների քրքրված մնացորդների գորշ խրճերով. Արմավենին աճում է միայն դեպի վեր և վարից վեր ունենում է գրեթե նույն հաստությունը. Արմավենիների մեծամասնության ծաղիկները մանր են, անհրապույր, բայց ժողովված են խոշոր, մսալի ողկույզներով. Արմավենիներն աճում են սավաննաներում և արևադարձային անտառներում, անապատների օազիսներում Նրանք սովեր չեն սիրում, նրանց շատ լույս է անհրաժեշտ

Արմավենիները լինում են շատ տեսակների, և գրեթե յուրաքանչյուր տեսակ

մարդուն որևէ օգուտ է տալիս. Փյունիկյան արմավենին տալիս է քաղցր պտուղներ արմավներ (խուրմա) Արաբիայի և Հյուսիսային Աֆրիկայի օազիսներում դա մարդու հիմնական սնունդն է: Մանր արմավներով ու դրանց կորիզներով էլ կերակրում են անասուններին Օվկիանիայի կղզիների բնակիչներին «կերակրում է» կոկոսյան արմավենին Նրա չհասունացած ընկույզների միջուկը պարունակում է կոկոսի կաթ, որը ծարավը լավ հագեցնող, քաղցրահամ հյութ է Նա նաև շինանյութ է տալիս կացարանների համար Իսկ նրա հասուն ընկույզների թելքավոր պատյանից պատրաստում են պարաններ, խսիրներ, ավելներ: Այդ պատ-

Արմավենիներն աճում են արե վաղարձային խոնավ անտառներում, ծովափերին անապատների օազիսներում լեռներում: Նկարում փյունիկյան և յուզատու արմավենիներ (աչից ներքևում), կոկոսյան արմավենի և ոռոտանգյան արմավենի-լիան (կենտրոնում) սագոյան արմավենի և Տենիի արմավենի (ձախից)




յանն անվանում են կոյրա, իսկ հասուն կոկոսյան ընկույզի չորացրած միջուկը կոպրա Գործարաններում կոպրայից պատրաստում են կոկոսի յուղ: Կոյրան և կոպրան ծովամերձ արևադարձային շատ երկրների արտահանման հիմնական ապրանքն են

Եթե կտրենք արմավենու ծաղկաբույլի ցողունը, ապա նրանից կհոսի քաղցր հյութ, որից կարելի է պատրաստել շաքար, մաթ կամ գինի: Նման քաղցր հյութ ստանում են շատ արմավենիներից: Յուղ ստա-

նում են ոչ միայն խոշոր կոկոսյան ընկույզներից, այլև աֆրիկյան յուղատու արմավենու՝ ձիթապտղի նման մանր պտուղներից Արմավենիների մեծ մասի պտուղներն ուտվում են: Իսկ սագոյան արմավենիների բնի միջուկում կա օսլայաշատ զանգված՝ եթե միջուկը մանրացվի և լվացվի, ապա կարելի է ստանալ ալյուր, որից պատրաստում են բլիթներ, շիլա, սագո (սպիտակավուն ձավար): Ինդոնեզիայում և Մելանեզիայում հազարավոր մարդիկ սնվում են սագոյան արմավենու տված բարիքներով: Կան արմավենիներ, որոնք բուսական մոմ են տալիս:

ՍՍՀՄ-ում վայրի արմավենիներ չկան Կովկասի սևծովյան ափերին և Ղրիմում, ինչպես նաև մեր հանրապետությունում արմավենիներն աճեցնում են որպես դեկորատիվ բույսեր



Արյան հիմնական բջիջները 1. էրիթրոցիտներ, 2. թրոմբոցիտներ (արյան թիթեղիկներ) 3 լեյկոցիտներ

Արյուն

Անհիշելի ժամանակներում արդեն մարդիկ հասկացել էին, որ արյունը կարևոր նշանակություն ունի օրգանիզմի համար Սակայն միայն 19-րդ դարում ուսումնասիրվեցին արյան բաղադրությունը, հատկությունները և դերն օրգանիզմում:

Արյունը կարմիր գույնի հատուկ հեղուկ հյուսվածք է, որ անընդհատ շարժվում է կենդանի օրգանիզմի արյունատար անոթներով: Մարդու արյունը կազմում է նրա քաշի միջին հաշվով 6,8 տոկոսը (մոտ 5 լիտր 70 կգ զանգվածի դեպքում)

Արյան հիմնական բաղադրամասերն են բաց դեղնավուն հեղուկը՝ պլազման, և նրա մեջ լողացող արյան կարմիր ու սպիտակ մարմնիկները

Արյան պլազման պարունակում է օրգանիզմի կյանքի համար անհրաժեշտ բազմաթիվ պարզ և բարդ նյութեր՝ սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, աղեր, թթուներ, վիտամիններ և այլն

Արյանը կարմիր գույն են տալիս կարմիր մարմնիկները էրիթրոցիտները, որ փոքրիկ, միայն մանրադիտակով տեսանելի գնդիկներ են Դրանք արյան մեջ ապրում են 80 — 100 օր, իսկ հետո քայքայվում են Յուրաքանչյուր վայրկյան մարդու արյան մեջ փոխարինվում են մոտ 10 մլն. էրիթրոցիտներ:

Էրիթրոցիտները լի են հատուկ նյութով՝ հեմոգլոբինով Հեմոգլոբինի բաղադրության մեջ մտնում է երկաթ պարունակող ներկանյութ: Հեմոգլոբինի երկաթը հեշ

տությամբ որսում է ներշնչելիս թոքեր թափանցող օդի թթվածինը: Արյունը, թոքերում հարստանալով թթվածնով, այն տարածում է ողջ օրգանիզմով: Թթվածինն անհրաժեշտ է մարմնի յուրաքանչյուր բջիջին, առանց նրա բջիջները մեռնում են

Մանրադիտակով մարդու արյունը զընելիս կարելի է էրիթրոցիտների բազմության մեջ նկատել քիչ քանակությամբ արյան սպիտակ մարմնիկներ՝ լեյկոցիտներ Նրանք էրիթրոցիտներից խոշոր են և թափանցիկ: Լեյկոցիտները մեր հավատարիմ պաշտպաններն են ախտածին մանրէներից: Նրանք օժտված են արյունատար անոթների պատերի միջով անցնելու ունակությամբ Բավական է մանրէները թափանցեն օրգանիզմ, որպեսզի արյան սպիտակ մարմնիկների «գործը» նետվի դեպի վտանգավոր տեղը, մարտի բռնվի դրանց հետ, կլանի և մարսի Այդ երևույթն առաջինը բացահայտել է ռուս գիտնական Ի Ի Մեչնիկովը

Արյունը սնում է օրգանիզմը. Մարմնի բջիջները զարգանում են, աճում, և «ծերացած», մեռած բջիջների փոխարեն պետք է առաջանան նորերը Դրա համար «շինանյութ» է անհրաժեշտ, որը տալիս է սնունդը: Ձեր ընդունած սնունդը, անցնելով ստամոքսի և աղիքների միջով, տևական և մանրակրկիտ մշակվում է, ապա ներծծվում արյունատար անոթների մեջ և

միանում արյան հոսքին Արյունատար նուրբ անոթների մազանոթների, պատերի միջով արյունը օրգանիզմի բոլոր հյուսվածքներին ու բջիջներին մատակարարում է ոչ միայն թթվածին, այլև ջուր, սննդանյութեր, աղեր և վիտամիններ

Միաժամանակ արյունը հյուսվածքներից հեռացնում է այն վնասակար նյութերը, որոնք գոյանում են նյութափոխանակության ընթացքում և կարող են թունավորել օրգանիզմը: Այդ նյութերն օրգանիզմից դուրս են գալիս թոքերի, երիկամների, աղիքների և մաշկի միջոցով

Արյան մեջ կան հատուկ բջիջներ թրոմբոցիտներ, որոնք մասնակցում են արյան մակարդմանը: Երբ որևէ արյունատար անոթ վնասվում է, ապա այդ տեղում առաջանում է մակարդուկ և խցանում վերջը:

Այժմ դուք գիտեք օրգանիզմում արյան ունեցած հսկայական դերի մասին Զուր չէ, որ այն անվանել են կենսատու



«Արշակ և Շապուհ»

4 թդ դարում Հայաստանի և Պարսկաստանի միջև տեղի էին ունենում երկարատև պատերազմներ և ընդհարումներ Պարսկաստանի Շապուհ Երկրորդ արքան կամե նում էր նվաճել Հայաստանը և հնազանդեցնել հայոց Արշակ Երկրորդ թագավորին: Բայց հայոց զորքը սպարապետ Վասակ Մամիկոնյանի գլխավորությամբ հերոսաբար կռվում էր պարսիկների դեմ պահպանում երկրի անկախությունը: Շապուհ Երկրորդը, զենքի ուժով չհասնելով նպատակին դիմում է խորամանկության և իր երկիրն է հրավիրում Արշակ Երկրորդին խաղաղության պայմանագիր կնքելու պատրվակով և երդումներով երաշխավորում նրա կյանքի ապահովությունը Արշակ Երկրորդը Վասակ Մամիկոնյանի ուղեկցությամբ մեկնում է Պարսկաստանի մայրաքաղաք Տիզբոն

Հայոց թագավորի հավատարմությունը փորձելու համար Շապուհն իր աստղագուշակների ու կախարհների խորհրդով Հայաստանից բերել է տալիս հող և ջուր: Հողը լցնում է իր ձեմասրահի հատակի կես մասին, վրան ջուրը շաղ տալիս ապա Արշակ Երկրորդի հետ զրուցելով զբոսնում է այնտեղ: Երբ պարսկական հողի վրա են քայլում, Շապուհ արքան հարցնում է Արշակին, թե ինչու է նա թշնամացել իր

հետ, չէ որ ինքը նրան սիրել է որդու պես, անգամ կամեցել է դստերը կնության տալ նրան Արշակն, իբր հեզությամբ խոնարհվում է Շապուհի առջև, զղջում արածների համար: Բայց հետո, երբ Արշակը ոտքը դնում է հայկական հողին կերպարանափոխվում է խոսում հպարտությամբ ու ըմբոստ և Շապուհին անվանում հափշտակիչ:

Շապուհն այդպես մի քանի անգամ փորձում է Արշակին և համոզվելով, որ նա հայրենիքում դարձյալ կըմբոստանա, շղթայակապ բանտարկում է նրան Անհուշ բերդում Իսկ Վասակ Մամիկոնյանին մորթազերծ է անում, մեջը հարդ լցնում և կանգնեցնում Արշակի դիմաց, որ նա, իր քաջ ու սիրելի սպարապետին նայելով ավելի տառապի ու տանջվի:

Այնուհետև զրույցը պատմում է, թե Արշակի պալատական Դրաստամատը պարսկական բանակում քաջագործություններ է կատարել և Շապուհը նրան բազմաթիվ պարգևներ է առաջարկել, բայց Դրաստամատը հրաժարվել է ամեն ինչից և խնդրել միայն, որ իրեն թողնեն մեկ օր ծառայելու իր թագավորին Շապուհը թույլ է տվել: Դրաստամատը արձակել է Արշակի շղթաները, հագրել նրան արքայավայել, կազմակերպել ճոխ խնջույք որի ժամանակ ինքն էլ Արշակն էլ անձնասպան են եղել:

Արշակի մասին այլ զրույցներ էլ են պահպանվել Իսկ այս զրույցն ունի հայրենասիրական խոր իմաստ: Այստեղ հայրենի և օտար հողերի հակադրությամբ շեշտված է այն գաղափարը, որ մարդն իր հայրենիքում է իրեն ազատ, հպարտ, ինքնավստահ ու անկաշկանդ զգում, ուստի պետք է աչքի լուսի պես պահել ու պահպանել հայրենի հողը հայրենիքը

Արջ

Գորշ և սպիտակ արջերի մասին անմիջապես կասես, որ նրանք ցեղակիցներ են, թեև արտաքին տեսքով բավականին տարբերվում են: Բնեռային ձյունների մեջ ապրող սպիտակ արջը միշտ սպիտակ է Իսկ գորշ արջերը լինում են ն հարդագույն, ն շագանակագույն, ն գրեթե սև:

Սպիտակ արջը երկրագնդի ամենախոշոր գիշատիչ կենդանին է: Արկտիկայից բացի, սպիտակ արջերն ուրիշ ոչ մի տեղ չեն հանդիպում: Ամբողջ կյանքն անց են կացնում սառույցների մեջ, ջուրը նրանց հարազատ տարերքն է Սպիտակ արջը կարող է ժամում 4—5 կմ արագությամբ երկար լող տալ, սուզվել գրեթե փոկի նման և երկու րոպե մնալ ջրի տակ: Նա սնվում է փոկերով, ձկներով, թռչուններով երբ գալիս է ձագեր ծնելու ժամանակը, եգ արջը մտնում է ձյունե անձավը: Այդ հսկա, 700 կգ (իսկ արուները մինչև 1000 կգ) քաշով կենդանիների նորածին քոթոթները առնե-

ուր կարելի լինի հանգիստ քնել մինչև գարուն: Շատ է մեծ գազանը, ձմռանը դժվար է լինում սնունդ հայթայթելը ինչպես նաև խոր ձյունների միջով շարժվելը Եվ եթե աշնանն արջը բավականաչափ ճարպ չկուտակի, որջում չի փակվի ու ամբողջ ձմեռ ման կգա չարացած ու սոված Նման «թափառաշրջիկները» վտանգավոր են

Արջի բունը թեթև է քսած ժամանակ մարմնի ջերմաստիճանը չի նվազում: Մայր, արջը որջում փակվում է անցյալ տարվա ձագերի հետ, որոնք նրան օգնում են խը նամելու նորածիններին զուր չեն նրանց «դայակներ» անվանում: Քոթոթները մինչև երկու տարեկանը միշտ մոր կողքին են մնում: Նորածինները, որ սովորաբար երկուսն են լինում լույս աշխարհ են գալիս դաժան ցրտին հունվար փետրվարին Մայր արջը նրանց կերակրում է մինչև գարուն Նա ոչ մի կերպ չէր կարողանա այդպիսի մի ընտանիք աճեցնել եթե ձագուկներն ընդամենը կես կիլոգրամ քաշով չծնվեին: Մինչև գարուն էլ նրանք դանդաղ են աճում որջից դուրս են գալիս փոքր շնիկի չափ դարձած, բայց հետո այնքան են աճում, որ երբեմն, նույնիսկ, դառնում են երկուսուկես մետր երկարությամբ և մինչև 650 կգ քաշով հսկաներ: Գորշ արջերն ապրում են մինչև 50 տարի


Գարնանն արջը «գայլի ախորժակ» է ունենում և դեռ մի բան էլ պվելի Ասում են, թե ձմռանն արջը «թաթն է ծծում»: Բայց այդպես հո չես կշտանա Իրականում նա թաթը չի էլ ծծում Պարզապես ձմռան կեսին փոխվում է արջի թաթի մաշկը ու

Գորշ արջեր

տից մի քիչ են մեծ լինում Մինչև նրանք չմեծանան, մայր արջը որջից դուրս չի գա

Գորշ արջերն ապրում են Եվրոպայում, Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում, Սովետական Միությունում գրեթե ամբողջ անտառային գոտում, բացառությամբ նրա հարավային շրջանների: Նրանք ապրում են ն հարթավայրերում, ն լեռներում, այնտեղ, ուր կան հողմակործան ծառերով, ճահիճներով, ջրամբարներով խուչ անտառներ: Գորշ արջերը հիանալի որսորդներ են, բայց ամեն ինչ ուտում են և հաճախ են սնվում անտառային հատապտուղներով, արմտիքով, մրգերով, հողի տակից փորում հանում են բզեզներ ու թրթուրներ, գորտեր ու ձկներ բռնում: Արջը մեղրի մեծ սիրահար է մեղվի խայթոցից անգամ չի վախենա, միայն թե բերանը քաղցրացնի

Աշնանը գազանը հարկադրված է լինում հոգալու հուսալի ապաստարանի մասին,





Սպիտակ արջեր

քոր է գալիս, նա էլ կիսաքուն վիճակում լիզելով մաքրում է հին կաշին՝

Գորշ արջերի հետքը երբեմն կարելի է շփոթել մարդու հետքի հետ Օրորուն քայլվածքի համար արջին ծուռթաթ են անվանել: Բայց իզուր. արջն արագաշարժ է և կարող է վազել հասնել նույնիսկ ձիուն:

Գորշ արջերը լավ են վարժեցվում Անցյալում գնչուներն արջ էին պտտեցնում գյուղերով ու քաղաքներով, զարմանահըրաշ բաներ ցուցադրում իսկ կրկեսում արջերին սովորեցրել են, նույնիսկ, հեծանիվ և մոտոցիկլետ վարել: Գորշ արջերը բարեկամանում են վարժեցնողների հետ իսկ, այ, սպիտակ արջերը վատ «աշակերտներ» են Փորձված շատ վարժեցնողներ սպիտակ արջին համարում են ամենավտանգավոր գազանը

Հեռավոր Արևելք: Բայց, երբ տեսավ Ուսուրական անծայրածիր տայգան, Սիխոտե Ալինի վայրի լանջերը, լայնահուն գետերն ու օվկիանոսի անհյուրընկալ ափերը, հասկացավ, որ ընդմիջտ կմնա այստեղ

Արսենը տեսնում էր այդ գրեթե չհետազոտված երկրամասի անհատնում հարըտությունները և քաղցից ու հիվանդություններից մեռնող տեղացիների սոսկալի աղքատությունը: Վաճառականները գալիս հասնում էին տայգա, որսորդներին և ժենշեն որոնողներին հարբեցնում ոգելից խմիչքով և չնչին գներով նրանցից գնում բուժիչ «կյանքի արմատը», սամույրի և սևագորշ աղվեսի թանկարժեք մորթիները: Այդ մորթիների և այլանդակ մարդուկի նմանվող փոքրիկ արմատների համար, որոնք գտնելն ավելի դժվար էր, քան ոսկու բնակտորը, նրանք պատրաստ էին մարդ սպանել: Այդպես սպանեցին Արսենի



լավագույն բարեկամին ու հավատարիմ ուղեկցին, հիանալի բնախույզ, տայգաբնակ Դերսու Ուզալային, որը շատ անգամ էր փրկել Վլադիմիր Կլավդիևիչի կյանքը, ազատել նրան բազմաթիվ փորձանքներից իր հավատարիմ բարեկամի և ուղեկցի հիշատակին Արսենը գրեց «Դերսու Ուզալա» հետաքրքիր գիրքը, որը լույս է տեսել նաև հայերեն, և դուրս կարող եք կարդալ այն՝

Ուժեղ, տոկուն, հանդուգն ու արի Արսենը միշտ առաջինն էր խիզախում, չէր խուսափում ոչ մի աշխատանքից և ամենահուսահատ պահերին կարողանում էր առույգություն և աշխուժություն ներարկել ուղեկիցներին:

Արսեն Կլավդիևիչ

1872—
1930

Գիտնական, ճանապարհորդ, գրող ահա թե ով էր Վ Կ Արսենը: Այն ամենը, ինչ նա պատմում է իր գրքերում, տեսել ու ապրել է ինքն անձամբ և սկզբում գրի առել ճամփորդական օրագրերի կամ նոթերի ձևով Դրանց շատ էջեր ծխահարվել են անտառային հրդեհներից, քրքրվել լեռնային սառնաշունչ քամուց, խանձվել երթային խարույկների կայծերից

1899 թ. երիտասարդ սպա Արսենը որոշ ժամանակով ծառայության ուղարկվեց

Արսենը մահացավ գիտարշավի ժամանակ, մրսածությունից. Նրա կյանքն ընդհատվեց անժամանակ 58 տարեկան հասակում, երբ նա լի էր եռանդով և ապագայի ծրագրերով:

Նա հրաշալի շատ գրքեր գրեց, բայց մի գիրք այդպես էլ չհասցրեց գրել, թեև ամբողջ ժամանակ նախապատրաստվում էր դրան. Դա պետք է լիներ գիրք այն մասին թե ինչպես ճանապարհորդ դառնաս Այդ գիրքը չկա Բայց երբ դուք կարդաք Արսենի «Ուսուրական երկրամասով», «Դերսու Ուզալա», «Սիխոտե Ալինի լեռներում», «Հանդիպումներ տայգայում» և մյուս գրքերը, այնտեղ շատ բան կգտնեք այն ամենից, ինչի մասին նա ուզում էր պատմել այդ չգրված գրքում:

տառերով գրված են անուններ՝ Թիմուր, Ֆրունզե, Իվան Տուրկենիչ, Գուլյա Կորոլովա, Վլոդյա Գուբինին, Ռուբեն Իբրուրի... Հայրենական մեծ պատերազմի մի շարք հերոսներ արտեկցիներ են եղել:

1972 թ.: Պիոներների հինգերորդ համամիութենական հավաքն է Թնդում են շեփորները: Շարասյունը քարացել է նավ հիշեցնող տան առջև: Վայր է սահում պաստառը, և պատին հայտնվում է ծանոթ կիսադեմը Բրունզե բառերն ազդարարում են «1931 թ հուլիս-օգոստոս ամիսներին Արտեկի վերին ճամբարում ապրել և աշխատել է Արկարի Պետրովիչ Գայդարը Այստեղ է նա ավարտել «Հեռավոր երկրները», մտահղացել «Ռազմական գաղտնիք» վիպակը»: Ծովի վրա թնդում են համազարկերը «Ողջոյն Գայդարին»..


Արտեկ է գալիս նա, ով աչքի է ընկնում ուսման մեջ ու աշխատանքում, ով խիզախ է ու համարձակ և հավատարիմ պիոներական պարտքին

Արտեկը նաև պիոներական դպրոց է: Այստեղ երեխաները միմյանցից սովորում են, թե ինչպես պետք է ապրել և աշխատել պիոներական ջոկատներում: Արտեկ են ժամանում պիոներական հավաքների պատվիրակները «Պիոներական հավաք» և «Արտեկ» բառերը մեկտեղվել են երկրորդ, երրորդ, հինգերորդ, վեցերորդ համամիութենական հավաքներն անց են կացվել այստեղ

Արտեկում հանգստացել են հինգ աշխարհամասերի 70 երկրներից եկած երեխաներ Բարձրացվում է պիոներական հանրապետության դրոշը, և կարմիր, դեղին, կանաչ փողկապներով երեխաները

Ղրիմում մի հին առասպել են պատմում. մի անգամ վիթխարի մի արջ գալիս է ծովից ջուր խմելու, հակվում է ջրին, հանկարծ քուն մտնում ու քնած տեղն էլ քարանում: Այստեղից էլ ծագել է Այու Դադ Արջասար, անունը: Ոչ ոք չգիտե, քանի հարյուրամյակ է քնած ծեր արջը, բայց մի անգամ նրա քարե ականջի տակ փողեր հնչեցին, քարե կողի վրա խարույկներ բոցկլտացին, իսկ մեջքին հագիվ նշմարվող արահետներով վեր մագլցեցին երեխաներ: Դա 1925 թ էր, երբ սովետական կառավարությունը երեխաներին նվիրեց Արջասարի լանջի Արտեկ ճամբարը, որ այն ժամանակ ընդամենը բրեզենտոս ութ վրան էր

Արտեկի պատանի նկարիչները



Անցնում էին տարիները, և տարիների հետ Արտեկը տարածվում էր ծովափով Արջասարից հասնելով մինչև Գուրզուֆ Այսօր նրա տիրույթները ձգվում են յոթ կիլոմետր և զբաղեցնում 320 հեկտար տարածություն. Արտեկում կա հինգ ճամբար «Լազուր», «Առափնյա», «Ծովային» (Պ Տոլյատի անվան), «Լեռնային», «Նոճի»: Արտեկն ունի իր խաղողի այգին, թռչնաբուծական ֆերման, պիոներական նավատորմիղը, ավտոբուսային կայանը, պիոներների պալատ, թանգարան, դպրոց չէ որ Արտեկում երեխաներն ապրում են ամբողջ տարին: Միայն մեկ հերթափոխում ճամբարում հանգստանում է 4500 պիոներ

Ափամերձ ճամբարներից մեկում, նոճիների և ծաղիկների մեջ սպիտակին է տալիս մարմարե մի տախտակ: Նրա վրա ոսկե



Այու Դարի
քարե
ականջի տակ
շեփորա
հարները
հնչեցրին
փողերը

ողջունում են միմյանց՝ «Դորոյե ուտրո
Գուտեն մորգեն Լաբրիտ Բունա դիմին-
յացն»

...Բոցկլտում է հրաժեշտի խարույկը,
շուրջը նստոտած երեխաները երգում են
Արջասարի մասին, ծովի վրա իջնող
վաղորդյան մշուշի և Արտեկում ծնունդ
առած բարեկամության մասին: Յուրա-
քանչյուրը որպես հիշատակ վերցնում է
դեռևս տաք մի ածխիկ: Այդ ածխիկներից
երկրագնդի տարբեր ծայրերում բոցավառ-
վում են պիտներական հարյուրավոր նոր
խարույկներ:

Ամբողջ աշխարհից բազմաթիվ մարդիկ
են հյուր գալիս արտեկցիներին Մեկնելիս
նրանք գրառումներ են թողնում պատվա-
վոր հյուրերի գրքում Ահա դրանցից մեկը

«Արտեկը աշխարհի բոլոր հրաշալիքնե-
րից ամենահրաշալին է, այն կենդանի
հուշարձան է Լենինին»

Եվ իրոք այդպես է Ահա թե ինչու Ար-
տեկ համամիութենական պիտներական
ճամբարը կրում է Վլադիմիր Իլյիչ Լենինի
անունը

Արտիստ

«Ի՞նչ հրաշալի, ոգեշնչված արտիստ
է», — երբեմն ասում են ն երաժշտի, ն
նկարչի, ն ռեժիսորի, ն գրողի, մի այնպիսի
մարդու մասին, ով անձնուրաց սիրում է
արվեստը, նրան է նվիրել իր ողջ կյանքը

և հասել վարպետության բարձունքներին Բայց ամենից հաճախ «արտիստ» (լատիներեն «արս»-«արվեստ» բառից) են անվանում դերասանին:

Արտիստը կարողանում է վերամարմնավորել պիեսների կամ ֆիլմերի բազմապիսի կերպարներ, ապրել նրանց կյանքով, գործել նրանց անունից: Նա կարող է ընդօրինակել իր հերոսի ձայնը, նրա քայլվածքը: Այսօր արտիստը խաղում է ժամանակակցի դեր, ապրում նրա ուրախություններով ու դժվարություններով, հոգսերով ու հաջողություններով: Վաղը նա միջնադարյան ասպետ է կամ հեքիաթի թագավոր:

Որպեսզի ամեն երեկո հանդիսատեսը հուզվի հերոսի ճակատագրով, հավատա նրան, արտիստը շատ է աշխատում, կարդում է բազմաթիվ պատմական գրքեր, շարունակ ուսումնասիրում մարդկանց, հիշողության մեջ պահում նրանց նկարագրի, շարժումների ու շագրավ գծերը Այդ ամենը պետք կգա բեմում: Չէ որ արտիստը պետք է ամեն-ամեն բան իմանա այն մարդու մասին, որին պատկերում է ով է նա, ինչ է ուզում և ինչ է անում իր նպատակին հասնելու համար: Միայն այն ժամանակ արտիստը լավ կհասկանա ամբողջ պիեսն ու նրա գլխավոր միտքը:

Սովետական ակնանավոր ռեժիսոր Կ Ս Ստանիսլավսկու խոսքերով ասած, արտիստը պետք է «հոտառությամբ կռահի կյանքի ռիթմը, շարունակ որոնի ճշմարտությունը, պայքարի անարդարության դեմ»: «Դերասանը հասարակական գործիչ է», նա առաջնորդում է հանդիսատեսին, դաստիարակում նրան, օգնում գիտակցելու սեփական թերություններն ու ընթանալու ճիշտ ճանապարհով:

Սովետական արտիստը սերտորեն կապված է ժողովրդին նրան է նվիրում իր տաղանդն ու վարպետությունը: Եվ ժողովուրդը բարձր է գնահատում այդ: Ջուր չէ, որ ամենալավ դերասաններին, երգիչներին, ռեժիսորներին շնորհվում է «ՍՍՀՄ ժողովրդական արտիստ» պատվավոր կոչումը:

Գրիմը, զգեստը և դեկորացիան արտիստին օգնում են ավելի լավ ներկայացնելու իր հերոսին, խնդությունն ու բերկրանք, ցավ ու կարեկցանք առաջացնելու հանդիսատեսի մեջ:

Երբեմն արտիստ են անվանում նաև բժիշկներին, մանկավարժներին, դերձակներին, մարդկանց, որոնց մասնագիտությունը արվեստի հետ կապ չունի, բայց որոնք իրենց գործի մեծ վարպետներ են:

Դեռ ցուրտ է գրեթե ամենուրեք ձյուն է նստած Թեև մարտյան արևը պայծառ փայլում է բայց լավ չի ջերմացնում: Սա կայն, արդեն գարուն է:

Դրա ապացույցը թռչնի զրնգուն երգն է որ տարածվում է երկնքից Երգչին տեսնելն այնքան էլ հեշտ չէ որովհետև արևն աչք է կուրացնում: Բայց առանց նայելու էլ կարելի է անմիջապես ասել, որ դա արտույտն է գարնանային մեր ամենավաղ թռչուններից մեկը Նա ՍՍՀՄ միջին գոտի է վերադառնում մարտի վերջին կամ ապրիլի սկզբին:

Ահա արտույտն ավելի ցած իջավ, և այժմ կարելի է մոտիկից գննել նրան Փոքրիկ է, շագանակագույն մուգ պուտերով ու խալերով Նման գունավորումը նրան օգնում է թաքնվելու թշնամիներից, երբ իջնում է գետին: Արտույտն ապրում է միայն գետնին, ուր կեր է գտնում և բույն շինում Նա հիանալի հարմարվել է այդ կյանքին ճանկերը երկար են և ուղիղ, հարմար խոտի վրա քայլելու:

Եթե դուք պատահաբար արտույտի բույն գտնեք, շտապ հեռացեք, մի անհանգըստացրեք թռչուններին Այդ դեպքում հաջորդ գարնանը ոչ թե մեկ արտույտ, այլ արտույտների մի ողջ ընտանիք վնասատուներից կպաշտպանի դաշտերը և զընգուն երգերով կուրախացնի մարդկանց:



Դաշտային արտույտից բացի, որի մասին պատմեցինք, մեր երկրում ապրում են նաև տափաստանային, փուփուլավոր և այլ տեսակի արտույտներ Հայկական լեռնաշխարհում ապրում է 7 տեսակ Զավոլժիեում և Արևմտյան Սիբիրում կան սև արտույտներ: Իսկ առհասարակ հայտնի է արտույտի 78 տեսակ:



«Արփա-Սևան»

Ամռան շոգ օրերին երբ արևը հուր է թափում Երևանի վրա շատանում են մայրաքաղաքից դեպի Սևան սլացող ավտոմեքենաները

Լայնահուն ավտոմայրուղին ոլորվում և բարձրանում է լեռները: Ամռան տոթն աստիճանաբար մեղմանում է լեռնային սառը քամուց և շուտով ուղևորների հայացքի առջև տարածվում է Սևանա լճի կապույտ հայելին

Լիճն իր մեջ է ընդունում բազմաթիվ գետակներ: Սակայն Սևանը սնող հիմնական «գետը» թաքնված է, չի երևում:

Սևանա լիճը շրջապատող Վարդենիսի լեռների տակ փորված է մոտ 49 կմ երկարությամբ ջրատար թունել: Արփա գետի փրփրաբաշ ջրերը հոսում են այդ ջրատարով ու թափվում լիճը: Իսկ ինչո՞ւ է Սևանին հարկավոր Արփայի ջուրը Դա երկար պատմություն ունի:

Սովետական իշխանության հաստատումից հետո Հայաստանում կառուցվեցին բազմաթիվ գործարաններ որոնց էլեկտրականություն էր հարկավոր, մշակվեցին խոպան հողեր որոնք ջուր էին պահանջում: Այս երկու խնդիրը միաժամանակ լուծելու համար Սևանա լճից սկիզբ առնող Հրազդան գետի վրա կառուցվեց վեց հիդրոէլեկտրակայան և մեծացավ լճից ջրի

արտահոսքը: Հզորացան գործարանները, ծաղկեցին դաշտերն ու այգիները:


Տարիներ անցան ժամանակի ընթացքում Սևանա լճի ջրի մակարդակն զգալիորեն իջավ լճի ափերին առաջացան սպիտակ ամայի տարածություններ պակասեց *իշխան* ձուկը Մարդիկ մտահոգվեցին փոխվում էր գեղատեսիլ Սևանի շրջակայքը խաթարվում էր Հայաստանի բնության հիասքանչ անկյուններից մեկի գեղեցկությունը Անհրաժեշտ էր փրկել Սեվանը, թեթևացնել նրա հոգսը: Այդ նպատակով կառուցվեցին բնական գազով աշխատող նոր էլեկտրակայաններ Դրանք հնարավորություն տվեցին պակասեցնել ջրի արտահոսքը Սևանից: Միաժամանակ *Արարատյան դաշտում* փորվեցին շատըրվանող ջրհորներ որոնք հագեցնում են հողի ծարավը: Բայց այդ բոլորը դեռ բավարար չէր Սևանը փրկելու համար որոշվեց օգտագործել Արփա գետի ջուրը որի մեծ մասն անօգուտ էր հոսում Դրա համար անհրաժեշտ էր ստեղծել այնպիսի մի կառույց որի օգնությամբ հնարավոր

լիներ թունելի միջով գետի ջուրը բերել դեպի լիճ: Կառույցի շինարարությունն սկսվեց 1963 թ.: Ջերմուկ առողջարանից ոչ հեռու, Կեչուտ գյուղի մոտ կառուցվեց 40 մ խորությամբ խոշոր մի ջրամբար, որտեղ կուտակվում են Արփա գետի ջրերը և բետոնապատ թունելի միջով հոսում դեպի Սևան: Ճանապարհին թունելը հատում է Եղեգիս գետը իր մեջ առնելով նաև նրա ջրերը:

Շինարարությունն արագացնելու նպատակով թունելագործները Վարդենիսի լեռնաշղթայում փորեցին մի քանի հարյուր մետր խորությամբ չորս ուղղաձիգ հորան, որոնք հնարավորություն տվեցին թունելի փորման աշխատանքներն սկսել միաժամանակ տասնմեկ ճակատներից: Կառույցը համաժողովրդական բնույթ ստացավ. աշխատանքներին մասնակցում էին Հայաստանի տարբեր շրջաններից ու եղբայրական հանրապետություններից եկած բանվորներ ու մասնագետներ, որոնք հերոսաբար հաղթահարեցին եղած բազմաթիվ դժվարությունները: Թունելն անցնում էր կարծր քարերի միջով: Շատ տեղերում առաջանում էին վտանգավոր փլուզումներ Անասելի ծանր պայմաններ էին ստեղծում ստորգետնյա ջրերի հեղեղումները մինչև 48 աստիճանի հասնող ջերմությունը և թունավոր գազերի պայթյունները: Թունելի որոշ հատվածներ անհրաժեշտ եղավ ամրակապել երկաթբետոնե խոշոր

«Արփա Սեվան» թունելի բացույցը





սալերով, որոնք իրենց վրա են կրում լեռնային զանգվածի ճնշումը:

Այս բարդ, մեծ ծախսեր պահանջող կառույցի շինարարությունը տևեց տասնութ տարի և ավարտվեց 1981 թ.. Շինարարների բազմազգ կոլեկտիվը ստեղծեց բնությունը պահպանող և դարերի կյանք ունեցող եզակի մի կառույց

Կեչուտի ջրամբարն իր ջրնետ կառույցով «մարգարիտկայով», որտեղից Արփայի ջրերը հոսում են դեպի Սևան

ցատրում է, թե ինչպես է որ հսկա նավերը կարողանում են լողալ
Արքիմեդն ուսումնասիրել է լծակների գործողության օրենքները: Նա ասում էր «Տվեք ինձ հենման կետ և ես կտեղաշարժեմ երկիրը » Եվ գիտնականը չէր պարծենում: Նա դա ճշտորեն հաշվել էր
Իր հայրենի քաղաքը Սիրակուզան, պաշտպանելու համար Արքիմեդը կառուցեց ռազմական բազմաթիվ, զարմանաիրաշ մեքենաներ Երբ հռոմեացիները հարձակվեցին Սիրակուզայի վրա, Արքիմեդի ռազմական մեքենաները ջրասույզ էին անում, տաշեղների վերածում թշնամու նավերը, ոչնչացնում ռազմիկներին: Բայց շատ փոքրաթիվ ու թույլ էր քաղաքի պաշտպանների զորքը հռոմեական վիթխարի զորքի համեմատությամբ. Եվ հռոմեացիները գրավեցին Սիրակուզան
Ավանդությունը պատմում է, որ այդ ժամանակ Արքիմեդն արդեն 75 տարեկան էր
Հռոմեացի ռազմիկը ներխուժեց գիտնականի տուն և տեսավ ավազով լի արկղին խոնարհված մի ծերունու, որն այնտեղ երկրաչափական պատկերներ էր գծում



— Չդիպչես իմ գծագրերին, — գոչեց Արքիմեդը: Պատասխանի փոխարեն ռազմիկը թափահարեց սուրը և մեծ գիտնականն ընկավ ավազին իր արյամբ ցողելով գծագիրը

Արքիմեդ

Մեր թվականությունից առաջ մոտ 287 — 212

Արքիմեդը Հին Հունաստանի մեծագույն գիտնականներից էր

Դուք դեռ դպրոց էլ չէիք գնում, բայց Արքիմեդի մի գյուտին արդեն ծանոթ էիք՝ Դա մազաղացի պտուտակաձև սռնին է: Երբ սռնին պտտում են, նա ճանկում է մսի կտորներն ու մղում դեպի դանակը Այդպիսի սռնին անվանում են Արքիմեդի պտուտակ: Միայն թե Արքիմեդը այն հնարել էր ամենահին էլ ոչ մազաղացի, այլ ջրամբարձիչ մեքենայի համար, որ ոռոգեին դաշտերը: Արքիմեդի պտուտակը կիրառվում է զանազան մեքենաներում, սորուն բեռներ է բարձրացնում, գործարաններում տեղափոխում մեքենայի մասերը

Դպրոցում, ֆիզիկայի դասին, դուք կծանոթանաք Արքիմեդի օրենքին, որը բա-

Արվարիում

Արվարիում կարող է լինել թե նրեք լիտրանոց ապակե բանկան և թե հսկա ջրավազանը ծովաջրով լցված օվկիանա


Վալիանդեղիա բույսը

Ձկներ
նեոններ
բրոմիս
Մոլիներգիա
ֆունդուլուս

Ֆետրատերև բույսը

Ձկներ
թրակիրներ
(արու և էգ)
դիսկոս
զրահավոր լոբոլիկ

Մոխրադեղիա բույսը



Հայաստանի Հանրապետության
Բնակավայրերի և Գյուղատնտեսության
Նախարարություն


Ջրի սպառումը

Ձկներ
լեկասպիտա
հրաշեկ բարբուսներ
(արու և էգ)
սկալյարիա

Լյուցիֆիգիա բուկս

Ձկներ
պեցիլիաներ
գուպիներ
(արուներ և էգ)
շղարշապոչ

Ջրի սպառումը



րիումը օվկիանոսային խոշոր ձկների համար

Սովորաբար երեխաներն իրենց առաջին արձարիումը պատրաստում են այսպես լճակից բռնում են փոքրիկ ծածաններ, վերցնում ապակե բանկա, մեջը լցնում ավազ, բույսեր տնկում, խխունջներ գցում, և արձարիումն արդեն պատրաստ է: Բայց այ քեզ փորձանք այդպիսի արձարիումը թողնում են արևի տակ, ջուրը տաքանում է և ծածանները սատկում են Կամ էլ այնքան շատ հացի փշրանք են տալիս նրանց, որ ջուրը պղտորվում է ու հոտում:

Դրա համար էլ, երբ սկսեք ձկներ պահել, միշտ հիշեցեք, որ արձարիումը նրանց «տունն» է: Այնտեղ ձկներն իրենց պետք է նույնքան լավ զգան, որքան լճակում, գետակում և լճում Ահա թե ինչու նախքան արձարիում պատրաստելը շատ ուշադիր գրքեր կարդացեք ձկների և արձարիումների մասին կամ էլ խորհուրդ հարցրեք մեծերից:

Պետք է ճշտորեն իմանալ, թե որ ձկանը ինչով կերակրել, ինչպիսի խխունջներ կարելի է կամ չի կարելի գցել արձարիումի մեջ: Օրինակ, լճախխունջը կարող է փչացնել բույսերը:

Սկզբնական շրջանում սկսեք պահել սովորական փոքրիկ ծածաններ կամ նրանց մոտիկ ազգակիցներ ոսկե ձկնիկներ և սրանց տարատեսակներ շղարշապուչեր, աստղադիտակներ ու գիսավորներ: Այս ձկնիկներն իրենց լավ են զգում մինչև 20 աստիճան ջերմաստիճանի պայմաններում: Նրանցով բնակեցված արձարիումը չի կարելի դնել տաքացուցիչների, ջեռուցման մարտկոցների և վառարանների մոտ Իսկ տարվա ցուրտ եղանակներին այն պետք է լուսամուտից հեռու պահել: Երբ ջրի ջերմաստիճանն իջնում է 14 աստիճանից, ձկնիկներն սկսում են հիվանդանալ և կարող են սատկել:

Արձարիումին լավ հարմարվում են նաև այնպիսի էկզոտիկ ձկներ, ինչպես թրակիրները, գուլպիները, բավիղաձկները Սրանք ջերմասեր են, ուստի անհրաժեշտ է, որ ջրի ջերմաստիճանը լինի 25 աստիճանին մոտ Այդ ձկներով բնակեցված արձարիումը տաքացնում են անդրադարձիչ ունեցող էլեկտրական լամպով, որը դրսից կախում են արձարիումի պատին:

Նախքան ձկներն արձարիումի մեջ գցելը, այն պետք է լավ նախապատրաստել: Արձարիումը լիքը լցրեք ջրով և այդպես թողեք մեկ-երկու օր, որպեսզի վերանան ներկի և լաքի հոտը Հետո դատարկեցեք

ջուրը և հատակին 5—6 սմ հաստությամբ փռեք լավ վացած խոնավ ավազ

Այժմ արձարիումում տնկեցեք բույսեր Կարելի է տնկել տեղական, ՍՍՀՄ-ի միջին գոտու համար սովորական բույսեր՝ եղջեռատերև փետրատերև և ջրածանտախտ (էլոդեա), ինչպես նաև կենդանաբանական խանութից գնած վալիսներիա ջրասպար, նետատերև: Հետո պետք է զգուշորեն արձարիումի 3/4 մասի մեջ ջուր լցնել, ավելի լավ է ձագարով որպեսզի բույսերը չվնասվեն և չբարձրանա հատակին լցված ավազը Այժմ կարելի է նրա մեջ գցել լողացող բույսեր ջրոսպ կամ ոռիչիա

Եվ այսպես բույսերը տնկված են, ջուրը լցված, սակայն ձկներն արձարիումի մեջ գցելը դեռ վաղ է Անհրաժեշտ է, որ բույսերն ամրանան և ջուրը պարզվի Մի քանի օրից հետո միայն երբ ջուրը դառնա թափանցիկ կարելի է արձարիումը բնակեցնել ձկներով:

Փոքրիկ ծածանին ոսկե ձկնիկին և նրա տարատեսակներին կերակրում են օրվա մեջ մեկ անգամ ավելի լավ է կենդանի կերով թրթուրներով, որդերով Կարելի է տալ նաև մանր կտրատած մսի և լյարդի կտորներ, հացի փշրանք էկզոտիկ ձրկ նիկներին կերակրում են թրթուրներով, ջրավերով և կիկլոպներով օրընդմեջ: Չոր կեր՝ չորացրած ջրավեր և կիկլոպներ, տալիս են միայն այն դեպքում, երբ կենդանի կեր չի լինում Չի կարելի չափից ավելի կերակրել ձկներին Չոր կերի ավելցուկը նստում է հատակին դրանից հոտում և փչանում է ջուրը: Իսկ եթե այնուամենայնիվ ջուրը փչանա պղտորվի, և հատակին բավականաչափ տիղմ կուտակվի Այդ դեպքում արձարիումի ջրի մի մասը լցրեք մեծ բանկայի մեջ և այնտեղ տեղափոխեցեք ձկներին Բանկայի մեջ սոր ջուր լցնելը վտանգավոր է մեկ էլ տեսար անուշադիր եղար և ստացվեց որ բանկայի ջրի ջերմաստիճանը ավելի ցածր է, քան արձարիումինը իսկ ձկները ամենևին չեն սիրում ջերմաստիճանի խիստ տատանումները: Ձկներին տեղափոխելուց հետո դատարկեցեք հին ջուրը և մաքրեցեք հատակին նստած տիղմը: Ապա արձարիումը լիքը լցրեք թարմ ջրով որի ջերմաստիճանը պետք է հավասար լինի արձարիումի նախկին ջրի ջերմաստիճանին: Այժմ կարելի է ձկները վերադարձնել արձարիում

Միշտ հիշեցեք, որ ձեր տանը ձկներն իրենց պետք է շատ լավ զգան Միայն այդ

դեպքում արժարիումը ձեռ ուրախություն կպատճառի

Վարդաթեք հետևյալ գիրքը
Полканов Ф. М., Подводный мир в комнате
М., «Дет. лит.» 1970

Աֆանասի Նիկիտին

1466 թ աշնանը Մոսկվայից հայրենիք էր վերադառնում Շիրվանի խանության դեսպանը Այդ մասին իմացավ տվերցի ռուս վաճառական Աֆանասի Նիկիտինը Խանությունը գտնվում էր Կասպից ծովի հարավ-արևմտյան ափին և առևտուր էր անում Արևելքի շատ երկրների հետ: Նիկիտինը որոշեց միանալ դեսպանի կարավանին և գնալ Շիրվան առևտուր անելու Դեսպանի հետ ճամփորդելն անվտանգ էր և ուներ պահակախումբ անհրաժեշտ անցաթղթեր

Աֆանասի Նիկիտինը հանդերձավորեց երկու նավ և ուրիշ առևտրականների հետ Տվերից (այժմ Կալինին քաղաք) Վոլգայով նավարկեց դեպի Նիժնի Նովգորոդ (այժմ Գորկի քաղաք) Այստեղ նա որոշ ժամանակ սպասեց դեսպանին և նրա հետ նավարկեց Վոլգայի հոսանքն ի վար

Շատ անակնկալներ էին սպասում ճանապարհորդներին՝ Նրանց վրա հարձակվեցին թաթարները և կողոպտեցին ապրանքը Նավերից մեկը Կասպից ծովում փոթորկի ժամանակ ափ շարտվեց և նրա մեջ գտնվող առևտրականները գերի ընկան տեղի բնակիչներին Նիկիտինի բախտը բերեց դեսպանի նավով նա հասավ մինչև Շիրվան:

Համարյա մեկ տարի նա մնաց այստեղ մինչև որ գերությունից փրկեց ընկերներին: Այնուհետև որոշեց իր բախտը փորձել այլ երկրներում: Հայրենիք վերադառնալ նա չէր կարող առևտուր անելու համար շատ ապրանքներ պարտքով էր վերցրել Բաքվում մի քիչ փող վաստակելով Նիկիտինը անցավ Կասպից ծովի հարավային ափ Պարսկաստան: Հին կարավանային ճանապարհով նա հասավ մինչև Օրմուզ քաղաքը, ուր հատվում էին Հնդկաստանից, Չինաստանից, Եգիպտոսից Փոքր Ասիայից եկող առևտրական ուղիները

Օրմուզում Նիկիտինին զարմացնում էր ամեն ինչ արևադարձային շոգը, ուժեղ տոթակեզ քամին ջրի տկերով բեռնավոր ված ուղտերը սալահատակի շիկացած

քարերը գորգերով ու խսիրներով ծածկելու սովորությունը: Այստեղից Հնդկաստան էին արտահանում ցեղական ձիեր որոնք այնտեղ շատ թանկ էին գնահատվում Նիկիտինը մի լավ ձի գնեց և առանց մեխերի սարքած մեծ նավով Արաբական ծովով նավարկեց դեպի Հնդկաստան Դժվար ու վտանգավոր էր այդ վեցշաբաթյա նավարկությունը

Նիկիտինը ափ իջավ Չաուլ քաղաքում (ժամանակակից Բոմբեյից հարավ) Ակրս վեցին նրա գրեթե երեքամյա թափառումները Հնդկաստանում: Այն ամենը, ինչ նրան հետաքրքրում էր, նա գրի էր առնում իր օրագրում գրում էր թխամորթ երկարա մազ բնիկների մասին, այն մասին, որ հարուստներն ու «իշխանները» հազնվում են շքեղ իսկ հասարակ ժողովուրդը համարյա մերկ է սուլթանի մեծաշուք ուղևորությունների մասին, թե ինչպես էին նրան ուղեկցում հազարանոց զորքն ու ոսկեզօծ ծածկոցներով 300 փիղ

Նիկիտինն ինքը ևս հետաքրքրություն էր հարուցում Նրա շուրջը բազմություն էր հավաքվում դիտում էին նրա անսովոր հագուստը խարտյաշ մազերը

Շատ բան տեսավ ճանապարհորդը Նա նկատեց որ աստղերը Հնդկաստանի երկնքում այլ կերպ են դասավորված, քան Ռուսիայում Բարեկամացավ հնդիկ շատ ընտանիքների հետ, ուսումնասիրեց բնակիչների սովորություններն ու բարքերը

Նա ավելի ու ավելի հաճախ էր հիշում հայրենիքը: «Աշխարհում նրա նման երկիր չկա», — մտածում էր նա

Վերջապես Նիկիտինը հարմար գնով վաճառեց ձին և 1472 թ սկզբին բռնեց ետդարձի ճամփան Երրորդ Սև ծովը, կտրեց նա նավով (առաջինը Կասպիցն էր, երկրորդը՝ Արաբականը): Մեկ ամիս նավը տարուբերվում էր քամուց, մինչև որ հասավ Կաֆա (այժմ Թեոդոսիա քաղաք) Այստեղ Աֆանասի Նիկիտինը հանդիպեց ռուս առևտրականների և նրանց հետ միասին ուղևորվեց Տվեր, բայց մեռավ ճանապարհին, Սմոլենսկից ոչ հեռու Դե 1472 թ վերջն էր Այսպես վերջացավ Աֆանասի Նիկիտինի «ուղևորությունը երեք ծովերից այն կողմ»: Նրա նոթագրությունների տեսքը առևտրականներն ուղարկեցին Մոսկվա, Իվան Երրորդ ցարի ատենադպրին (գլխավոր քարտուղար) Ատենադպիրը կարգադրեց դրանք մտցնել տարեգրության մեջ

Աֆանասի Նիկիտինը առաջին եվրոպացիներից էր, որ ճշմարտացի ու մանրա-



մասն պատմեց հեռավոր Հնդկաստանի մասին Նրա «Ուղևորությունն երեք ծովերից այն կողմ» գիրքը թարգմանված է աշխարհի շատ լեզուներով

Կալինին քաղաքում, Կոլգայի ափին, կանգնեցված է ռուս խիզախ ճանապարհորդի հուշարձանը

Պալեիս ավանտա (ՌՍՖՍՀ Իվանովոյի մարզում) բնակվող նկարիչներն այսպես են պատկերել Աֆանասի Նիկիտինի նավարկությունը

Աֆղանստան

(Աֆղանստանի Դեմոկրատական Հանրապետություն)



Ամայի անապատով, կիզիչ արևի տակ շարժվում է կարավանը: Շարան-շարան քայլում են հակերով բեռնված ուղտերը Հակերի մեջ թանկարժեք բրդի մանրիկ, պիրկ գանգուրներով գառան մորթի է կարակուլ: Կարավանի առաջնորդն ու ուղտապանները հազել են լայն անդրավարտիքներ, ոչխարենու երկար մուշտակներ կամ բամբակե շերտավոր խալաթներ Գլխներին սպիտակ կամ գույնզգույն չալմաներ են, ոտքերին կեռքիթ ոտնամաններ: Հեռվում արածում են ոչխարները, Հորիզոնում սևագորշ, ժայռոտ լեռներն են:

Դա Աֆղանստանն է, լեռների ու անապատների երկիրը. Նրա ողջ տարածքով ձգվում են Հինդուկուշի հավերժական սառույցներով ծածկված հզոր լեռնաշղթաները Մի քանի լեռնանցքներով միայն անցնում են լեռնային արահետ-

ներ ու ճանապարհներ Օվկիանոսներից ու ծովերից երկիրը բաժանում են հարյուրավոր կիլոմետրեր


Ամռանն Աֆղանստանում խիստ շոգ է ձմռանը շատ վայրերում լինում են ուժեղ սառնամանիքներ:

Թե ամռանը և թե ձմռանը ջուրը չի բավականացնում Դրա համար էլ բնակչությունը կուտակված է գետահովիտներում: Իսկ շատերն էլ իրենց հոտերով քոչում են լեռնային և անապատային արտավայրեր

Աֆղանացիները գետերից անց են կացնում ոռոգման ջրանցքներ Սրանց երկայնքով աճում են բարձր բարդիներ և հզոր թեղիներ. Ոռոգվող դաշտերում մշակում են հացահատիկ եգիպտացորեն, բրինձ բամբակենի: Հացահատիկի արտադրությունը Աֆղանստանի տնտեսության գլխավոր ճյուղն է Այգիներում աճում են ծիրան, ընկույզ նուշ, դեղձ թուզ նուռ Մեծ քանակությամբ չոր մրգեր և ընկույզ են արտահանում այլ երկրներ Լեռների միջև ընկած գետահովտում է գտնվում երկրի մայրաքաղաքը Քաբուլը

Հին ժամանակներում Աֆղանստանով շատ անգամ են անցել նվաճողների բանակներ Անցյալ հարյուրամյակում Աֆղանստանը փորձեցին հպատակեցնել անգլիացիները



1919 թ. Աֆղանստանը վերջնականապես անկախություն ձեռք բերեց երկրում կառավարում էր թագավորը բայց Նրա իշխանությունը սահմանափակված էր պառլամենտով 1973 թ. հուլիսին թագավորը գահընկեց արվեց և երկիրը հռչակվեց հանրապետություն:




ԱՖՂԱՆՍՏԱՆ

Տարածությունը 655 000 քառ. կմ

Բնակչությունը 15 540 000 մարդ



-  Տեքստի արդյո նաբերություն
-  Գորգագործություն
-  Արվելագործի արդյունահանում
-  Լազո թիտի արդ ո նահանում
-  Հիդ ու եկտրակայաններ
-  Հացահատիկային բո սե (ցորեն, բրինձ)
-  Բամբակենի
-  Խաղողի ա գինեռ
-  Պտղատու ա գինեռ
-  Ոչխառառ ծությո ն
-  Ո ղտառ ծո թ ո ն

1978 թ ապրիլին Աֆղանստանում տեղի ունեցավ ժողովրդական հեղափոխություն և երկիրը հռչակվեց դեմոկրատական հանրապետություն Աֆղան ժողովուրդը հնարավորություն ստացավ կառուցելու իր ազատ ու երջանիկ ապագան: Աֆղանստանի կառավարությունը վարում է խաղաղության և բարեկամության քաղաքականություն

Աֆղանստանը և Սովետական Միությունը հարևաններ են: Երկու երկրների միջև հաստատվել են բարեկամության և փոխշահավետ համագործակցության հարաբերություններ:

Աֆղանստանում քիչ են գործարանները ֆաբրիկաները, ավտոճանապարհներն ու երկաթուղիները: Բայց գնալով ավտոմեքենաներն ավելի ու ավելի շատ են փոխա-

րինում ուղտերին ու ձիերին Սովետական ինժեներների ու բանվորների օգնությամբ խճուղի է բացվել Հինդուկուշի միջով, կառուցվել են էլեատորներ, նավթաօսիեստարաններ, գործարաններ հացի կոմբինատ հիդրոէլեկտրակայաններ:

Սովետական երկրաբաններն Աֆղանստանում հայտնաբերել են բնական գազ, որը 1967 թ սկսած խողովակաշարով բերվում է նաև ՍՍՀՄ

Աֆրիկա

Չորս կողմն անապատ է Մեկ դեղին ու շատ նուրբ ավազներ են մեկ գորշ, հողմա հարված քարեր: Միգապատ երկնքից տապ



Քամելեոնը հիանալի հարմարվել է ծառերի վրա ապրելուն
Քամելեոնի մաշկն ընդունում է այն առարկայի գույնը որի
վրա նա նստած է Այդպես քամելեոնը «պաշտպանվում է»
թշնամուց

Շակակիր կռունկներ սրանց կարելի է հանդիպել
Հայն Աֆրիկայում

Եզոսյան կոկորդիլոս





Սցանակաղևնի

Փյունիկյան արմավենի

Աղամաթզենի (բանան)



Բաղրաք

Հավվե

Բավենալո



Քալաս

Թռչուն- քարտուղար

Վարդագույն կարմրաթևիկ

Մարարո



Լեփեռնի

Առյուծ

Հովազ (ընծառյուծ)



Մանթաղ

Ուղտ

Ջեբր



Եղջիւր

Գնո այծքաղ

Աֆրիկական փիղ



Մակուս

Շիմպանզե

Լեմուր



Ցեցե ճաշե

Գետածի

Ընձռ ղտ

Մասշտաբ 1 : 40 000 000
400 800 1200 1600 կմ



Հյուսիսային Աֆրիկայի բնության մի անկյուն

Այծքաղների ամենից շատ տեսակներն ապրում են Աֆրիկայում Սրանք կոնգոնի այծքաղներ են





Աֆրիկական
փիղ

է ծորում, ոչ ջուր կա ոչ կանաչ թուփ Դա Աֆրիկան է

Արևադարձային անտառի համատարած պարիսպ որի միջով կարելի է անցնել միայն կացնի օգնությամբ Ծառեր, թփեր լիաններ հաստ ու հյութեղ տերևներ երփներանգ ու բուրումնավետ արտասովոր ծաղիկներ թռչուններ, որ նման են ծաղիկների և մեծ թիթեռներ որ նման են թռչունների Բարձր նոտա վերցրած ասես, քարացել մնացել է ճալուռների երգչախումբը, գիշատիչների միալար մռնչյուն է և կապիկների ճղճղոց Ամբողջ տարին այստեղ փարթամ կանաչ է Դա նույնպես Աֆրիկան է:

Տափաստան է, բայց և տափաստան չէ խոտավետ հարթավայրում կարմրագորշ ժայռեր են մետաքսաթել ճմե գլխարկներով: Հեռվում գանգրահեր պուրակներ են իսկ երբ մոտենում են պարզվում է որ վիթխարի, գետնահար ծառեր են բառբառներ Այդպիսին է աֆրիկական հռչակավոր սավաննան.

Աֆրիկայի մեծ մասը գտնվում է արևադարձային լայնություններում: Մայր ցամաքը 8 հզ կմ երկարությամբ ձգվում է հյուսիսից հարավ: Քիչ ավելի փոքր է նրա արևմտյան ափերից մինչև արևելյանն ընկած հեռավորությունը: Աֆրիկայի ափերը ողողվում են Ատլանտյան ու Հնդկական օվկիանոսների և Միջերկրական ու Կարմիր ծովերի ջրերով Նրա տարածքով հոսում են խոշոր գետեր Նեղոսը, Նիգերը Կոնգոն, Ջամբեզին, Օրանժը, Լիմպոպոն: Կան նաև լճեր Չադ Վիկտորիա, Նյասա Տանգանիկա

Մայր ցամաքի ընդերքում մեծ հարուստություններ են թաքնված Ալժիրում Սահարայի ավազների տակ, հայտնաբերվել են նավթի պաշարներ Աֆրիկայի կենտրոնական մասում Կոնգո գետի ավազանում են գտնվում պղնձի հռչակավոր հանքերն ու ուրանի հանքահորերը Հարավը հարուստ է ոսկով և ալմաստներով

Կոկոսյան և ձիթատու արմավենիների պտուղներ կարմիր ծառի և եբենուսի (սև ծառ) արժեքավոր փայտանյութ, խցանածառ և կաուչուկի ծառ այս ամենը մարդուն նվիրում է Աֆրիկայի շռայլ բնությունը: Աֆրիկական արգավանդ հողում աճում են նաև կակաոյի, սուրճի, ադամաթզի (բա

Լեմուր. լեմուրները պատկանում են կիսակապիկների դասին Նրանք բնակվում են Սադագասկարի արևադարձային անտառներում



նան), արքայախնձորի (անանաս), նարնջի, մանգոյի ծառեր

Աշխատասեր են Աֆրիկայի ժողովուրդները, և ընդարձակ ու բարեբեր են նրա հողերը: Դա երջանկություն է, բայց դժբախտության էր վերածվել: Այդ դժբախտությունը Աֆրիկային բերեց կապիտալիզմը: 15-րդ դարում ծովագնացների ետեվից այստեղ հորդեց վաճառականների ու արկածախնդիրների խառնիճաղանջ բազմությունը: Սկսվեց մի ամբողջ մայր ցամաքի պատմության մեջ չլսված թալանը

Տանում էին ոսկի ու թանկարժեք քարեր, տանում և ստրկության էին վաճառում մարդկանց՝ մեծ ու փոքր: Տասնյակ միլիոնավոր աֆրիկացիներ ստրուկներ դարձան Ամերիկայի պլանտացիաներում

Մինչև գաղութարարների գալը Աֆրիկայում կային առանձին պետություններ իրենց յուրահատուկ մշակույթով: Գաղութարարները հպատակեցրին շնորհալի ժողովուրդներին, գրեթե ոչնչացրին նրանց մշակույթը: Եկվորները աֆրիկացիների ձեռքով իրենց համար կառուցում էին քաղաքներ ու ճանապարհներ, հանքահորեր ու նավահանգիստներ և իրենց երկրներն էին արտահանում այդ հողի հարստությունները Բայց Աֆրիկայի ժողովուրդները պայքարում էին զավթիչների դեմ: Եվ ազատությունը եկավ այժմ համարյա ողջ Աֆրիկան դարձել է անկախ




թարարները հպատակեցրին շնորհալի ժողովուրդներին, գրեթե ոչնչացրին նրանց մշակույթը: Եկվորները աֆրիկացիների ձեռքով իրենց համար կառուցում էին քաղաքներ ու ճանապարհներ, հանքահորեր ու նավահանգիստներ և իրենց երկրներն էին արտահանում այդ հողի հարստությունները Բայց Աֆրիկայի ժողովուրդները պայքարում էին զավթիչների դեմ: Եվ ազատությունը եկավ այժմ համարյա ողջ Աֆրիկան դարձել է անկախ

*Արևելյան
Աֆրիկայի
բնության
մի անկյուն
հեռվում Կի
լիմանջարո
լեռն է*


Նոր կյանք կառուցելու գործում Աֆրիկայի երիտասարդ, զարգացող շատ երկրների օգնում են Սովետական Միությունն ու սոցիալիստական մյուս երկրները

*Զգայնուկ
կոչվող
ծաղկին
հավելիս
այն ճայթ
լունով պայ
թում է
Դրանից է
ծագել նրա
անունը*





Կարմ-
Հինե-
Նիկա
Հնորոշ
Հնեք



F

99	Բաբաջանյան Հ. Խ.	220	Բարդի
100	Բաբուշկին Ի. Վ.	221	Բարեկամներ և ընկերներ
100	Բադ		Բարոն
101	Բադակտուց և Եքիդնա	222	Մյունխհաուզեն
102	Բադմինթոն	222	Բաուման Ն. Է.
103	Բազմանկյուն	223	Բաքվի 26 կոմիսարներ
104	Բաթիսկաֆ		Բերնովեն Լյուդվիգ վան
105	Բալետ	225	Բելգիա
106	Բախ Յոհան Սեբաս- տիան	226	Բելոռուսիա
107	Բակունց Ա. Ս.	228	Բևեռափայլ
108	Բադրամյան Հ. Բ.	230	Բետոն և երկաթբետոն
109	Բամբակենի	231	Բերինգ Վիտուս
110	Բանգլադեշ		Բզեզներ
111	Բանջարանոց	232	Բժիշկ
112	Բանջարեղեն	234	Բիանկի Վ. Վ.
113	Բաշինջադյան Գ. Զ.	236	Բիլինաներ
114	Բառբաբ	236	Բիրմա
115	Բառախաղ	237	Բյուրականի աստղադիտարան
116	Բառարան և տեղեկատու	239	Բյուրեղներ
117	Բասկետբոլ	241	Բնագր
118	Բաստիլի գրավումը	242	
119	Բարբառ	243	

- 243 **Բնակարան**
(Կացարան)
- 246 **Բնակար**
- 248 **Բնավորություն**
- 249 **Բնության պահպանություն**
- 251 **Բուշնիկների**
լենինյան գվարդիա
- 252 **Բոր Նիլս**
- 253 **Բջիջ**
- 254 **Բռնցքամարտ**
- 255 **Բրազիլիա**
- 257 **Բրածո բույսեր և**
կենդանիներ
- 259 **Բրեստի ամրոց**
- 261 **Բրինձ**
- 261 **Բրունո Ջորդանո**
- 262 **Բուժքույր**
- 263 **Բուլղարիա**
- 266 **Բույսերի արմատներ**
- 267 **Բուսաբանական**
այգի
- 270 **Բուրատինո**
- 271 **Բուրգ և կոն**

Բաբաջանյան Համազասպ Խաչատուրի

1906—
1977

Ու՛մ մտքով կարող էր անցնել, թե պատանի Համազասպին, որը հեռավոր Չարդախու գյուղից (Ադրբեջանական ՍՍՀ-ում) եկել էր ընդունվելու Երևանի Այվյանիկյանի անվան ռազմական դպրոցը, զինվորական մեծ ապագա է սպասում: Նա փոքրամարմին էր ու վտիտ: Դպրոցի պետը չէր ուզում ընդունել: Բայց տղան համառեց. Ընդունեցին և «Ծիտիկ» մականունը տվեցին «Սուվորովն էլ էր թուլակազմ ու վտիտ, — ասում էր նա, — բայց տեսնա՞ք, որ ֆելդմարշալ դարձավ»



1927 թ Համազասպը գերազանց ավարտեց ռազմական դպրոցը Նորավարտ սպան դառնում է դասակի, հետո վաշտի, գումարտակի հրամանատար. 1941 թ հունիսի 22-ին նա Սմոլենսկում 19-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետի տեղակալն էր, երբ ֆաշիստական Գերմանիան ուխտադրժորեն հարձակվեց Սովետական Միության վրա Սկսվեց *Հայրենական մեծ պատերազմը*: Առաջին իսկ մարտերում նա աչքի ընկավ և դարձավ 127-րդ հրաձգային դիվիզիայի գնդի հրամանատար

Ֆաշիստները «Կագր» և «Հովագ» տանկերից բաղկացած մոտ 19 դիվիզիա էին կուտակել Կուրսկ-Բելգորոդի ուղղությամբ Արդեն տանկային բրիգադի հրամանատար, գնդապետ Հ. Բաբաջանյանը պետք է ճեղքեր այդ պաշտպանությունը և գրավեր Կազատին քաղաքը: Հմուտ և արի

հրամանատարը որոշեց քաղաքը գրավել գիշերով. Նա հրամայեց վառել բոլոր տանկերի, գրահապատ ինքնազնացների լույսերը, միացնել բոլոր շչակներն ու ազդանշանները:

Հլացնող լույսերով քողարկված, ահարկու շաշյունով ու կրակոցներով տանկերը քաղաք մտան: Հետագա մի քանի օրում Բաբաջանյանը ազատագրեց բազմաթիվ քաղաքներ ու բնակավայրեր. Նրա տանկերը մոտ հարյուր հիսուն կիլոմետր խորացան թշնամու թիկունքը: Զորահրամանատարի այդ ահաբեկիչ ճեղքումները «Բաբաջանյանական ռեյդեր» անվանվեցին 1944 թ ապրիլին գնդապետ Հ. Բաբաջանյանին շնորհվեց Սովետական Միության հերոսի բարձր կոչում: Նույն թվականի օգոստոսին մարտերից մեկի ժամանակ նա ծանր վիրավորվեց Խիզախ տանկիստ Պոլտորակը հրամանատարին դուրս բերեց այրվող մեքենայից և, պառկեցնելով թիկնոց-վրանին, երեք կիլոմետր քարշ տալով, նրան թիկունք հասցրեց

Ապաքինվելուց հետո Հ. Բաբաջանյանը պահանջեց իրեն նորից գործող բանակ ուղարկել Վիլնյուսից մինչև Գոթինյա նրա տանկերը մարտերով անցան ավելի քան հազար հինգ հարյուր կիլոմետր ճանապարհ

«Կգա այն օրը, երբ մենք կհարցնենք, թե քանի կիլոմետր է մնացել մինչև Բեռլին», — դեռևս 1941 թ ամռանն ասում էր Հ. Բաբաջանյանն իր մարտիկներին

Այս բաղձանքն իրականացավ: Եկավ այդ օրը: Մեր զորքերը շրջապատեցին Բեռլինը. Գիշեր ու ցերեկ սովետական հրետանին ու ավիացիան գնդակոծում էին քաղաքը

1945 թ մայիսի 2-ին Հ. Բաբաջանյանի տանկերը վերջին համազարկը տվեցին Ռայխստագի մոտ

Հայ քաջորդու անձնուրաց, հերոսական ծառայությունը բարձր գնահատեց սովետական կառավարությունը. 1975 թ. Սովետական Միության հերոս, գեներալ-գնդապետ Հ. Բաբաջանյանին շնորհվեց զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի պատվավոր կոչում

Բաբաջանյանը սովետական զորավարների համաստեղության փայլուն դեմքերից է:

Ահա թե ինչպիսին էր նա Երևանի ռազմական դպրոցի սան «Ծիտիկը», որը սիրում էր կրկնել «Սուվորովն էլ էր թուլակազմ ու վտիտ, բայց տեսնա՞ք, որ ֆելդմարշալ դարձավ»

Բաբուշկին Իվան Վասիլևիչ

1873—
1906

Ծանր էր խանութպանի մոտ ծառայելը բավական է նստեր, մեկ էլ լսվում էր սպառնալից ձայնը «Վանկա, Վանկա» Տղան ցնցվում էր և շեշտակի նետվում խանութպանի, գործակատարի, գնորդների հանձնարարությունները կատարելու

Թախիծով էր նա հիշում Լեդենսկոյե գյուղը, ուր անցել էր նրա մանկությունը մահացել էր հայրը, և որտեղից մայրն ընտանիքով տեղափոխվել էր Պետերբուրգ



Տասնչորս տարեկանում Վանյա Բաբուշկինը փախավ խանութպանի մոտից և աշակերտ վարձվեց Կրոնշտադի նավահանգստի արհեստանոցներում, հետո էլ փականագործ դարձավ Պետերբուրգի գործարաններից մեկում

Մի անգամ ընկերը Բաբուշկինին թուցիկ տվեց կարդալու Այնտեղ խոսվում էր անարդար կյանքի մասին: Գործարանատերերը ոչինչ չեն անում, բայց ճոխ են ապրում, մինչդեռ բանվորներն օրնիբուն աշխատում են հաստոցների մոտ, բայց շատ քիչ են վաստակում և միշտ կարիքի մեջ են: Այդ թուցիկը Բաբուշկինին ստիպեց այլ աչքերով նայելու կյանքին և տարվեց ընթերցանությամբ, սկսեց հաճախել բանվորների համար բացված կիրակնօրյա դպրոց, ուր դասավանդում էր և Կ Կրուպսկայան: Մի անգամ ռուսաց լեզվի դասին Բաբուշկինը գրեց պարզ նախադասության հետևյալ օրինակը «Շուտով մեր

գործարանում գործադուլ է լինելու» Դասից հետո ուսուցչուհին բացատրեց նրան, որ իսկական հեղափոխականը պետք է զգուշ լինի և կարողանա այնպես հանդես գալ, որ չընկնի ուստիկանության ձեռքը

Շուտով Բաբուշկինը դարձավ Վ Ի Լենինի ղեկավարությամբ գործող «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» գաղտնի կազմակերպության առաջին մասնակիցներից: Ընկերների հետ միասին Բաբուշկինը գրում էր հեղափոխական կոչեր, բանվորներին ներգրավում ընդհատակյա խմբակներում, Լենինին օգնում կազմակերպելու «Իսկրա» թերթը, տարածում այն բանվորների շրջանում, անձամբ հոդվածներ գրում «Իսկրա»-ին ժանդարմները գտան Բաբուշկինի հետքը և ձերբակալեցին նրան: Ընկերները կարողացան բանտախուց ուղարկել մի փոքրիկ սղոց: Փականագործի ճարպիկ ձեռքերն անաղմուկ սղոցեցին վանդակաձողը Եվ ահա Բաբուշկինը ազատության մեջ է

Նա հասավ Լոնդոն, հանդիպեց Լենինին, որն այդ ժամանակ ապրում էր արտասահմանում: Սակայն հանգիստը երկար չտևեց: Բաբուշկինը գաղտնի անցնում է Ռուսաստան, որպեսզի նախապատրաստի հեղափոխությունը Եվ նորից բանտ է ընկնում:

1905 թ հեղափոխությունը Իվան Վասիլևիչին ազատեց Յակուտիայի աքսորից և կրկին գլխովին տարվում է հեղափոխական աշխատանքով, զինված ապրտամբություն նախապատրաստում Իրկուտսկում: Այն գնացքը, որով նա ընկերների հետ 1906 թ Չիտայից գեներ էր փոխադրում Իրկուտսկի հեղափոխական բանվորների համար, բռնեցին պատժիչները: Բուլձնիկները չմատնեցին հեղափոխական գաղտնիքը և չհայտնեցին իրենց ազգանունները:

«Նրանք մեռան հերոսների նըման...», — ասել է Վ Ի Լենինը

Նշանավոր հեղափոխական Ի Վ Բաբուշկինի մասին դուք կարող եք կարդալ «Товарищ Богдан» պատմվածքը հետևյալ գրքում

Раевский Ю. М. Государственный Тимка Л «Дет лит» 1969

Բադ


Ընտանի բադերին գնահատում են համեղ մսի, փափուկ աղվամազի և ամուր փետուրների համար

Մեր երկրում բազմացնում են ընտանի բադերի բազմաթիվ ցեղեր: Առանձնապես հայտնի են երկու սպիտակ (մոսկովյան և պեկինյան), մոխրագույն (ուկրաինական) և սև սպիտակակուրծք (խարկովյան) ցեղերը

Բադերը ջրային թռչուններ են, և տարվա տաք եղանակներին իրենք են կեր հայթայթում լճակներում, լճերում և բրնձի դաշտերում կերակրվում են ծանծաղ ջրերում, հազվադեպ են սուզվում, ավելի շատ ձգտում են լայն կտուցով հասնել հատակին ջրից դուրս թողնելով պոչը: Երբ ջրամբարները սառչում են, բադերին կերակրում են տանը ուտելիքի մնացորդներով, եփած կարտոֆիլով, ծլած հացահատիկով Բադեր բազմացնելն օգտավետ է Նրանք արագ են աճում, և 70 օրվա ընթացքում նրանց քաշը հասնում է մինչև 3—4 կգ-ի

Բադեր շատ են բազմացնում կոլտնտեսությունների և սովետական տնտեսությունների թռչնաբուծական խոշոր ֆերմաներում


Ընտանի բադերը սերում են վայրի բադից կոնչաբադից: Վերջինս, ինչպես նաև մյուս բադերը (մոխրագույն, փասիանաբադ, լայնակտուց, հողմաբադ և մրտիմ), տարածված է մեր երկրի բոլոր ջրավազաններում Կոնչաբադը բնադրում է գրեթե ամբողջ Եվրոպայում Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում: Վաղ գարնանը եգն ածում է 8—11 ձու: Հազիվ չորացած աղվամազոտ բադիկներն արդեն կարող են արագ տեղաշարժվել ցամաքում, լողալ և սուզվել Կոնչաբադերը սնվում են, հիմնականում, ջրային բույսերով, միջատներով, փափկամորթներով



Բադակտուց և եքիդնա

Գիտնականները երկար ժամանակ չէին կամենում հավատալ բադակտուցի գոյությանը Նրա մասին պատմությունները համարում էին հնարովի բաներ, լեգենդներ: Բայց երբ, ի վերջո, համոզվեցին, որ այդ արտասովոր կենդանին իրոք գոյություն ունի, ծագեց այն հարցը, թե ինչ է դա թռչուն, գազան՝ Սկզբում այդ կենդանուն անվանեցին թռչնագազան, իսկ հետո նաև բադակտուց

1 Բադեր մանդարիններ 2 կոնչաբադեր 3 սուլող մրտիմներ 4 պեկինյան ցեղի ընտանի բադ



Բադակը
տուցներ
եքիղնա

Նա իրոք որ բադի նման կտուց ունի: Իսկ գլխավորն այն է, որ բադակտուցը, ինչպես և թռչունները, ձու է ածում, այլ ոչ թե կենդանի ձագեր ծնում: Բադակտուցը շատ այնպիսի հատկանիշներ ունի, որոնք մոտեցնում են նրան սողուններին՝ օրինակ, արյունատար համակարգի կառուցվածքը, մարմնի ջերմաստիճանի խիստ տատանումները՝ նայած միջավայրի ջերմաստիճանին: Նրանց ձվերը նույնպես ավելի շատ նման են սողունների ձվերին, քան թռչունների. Բայց բադակտուցին կաթնասուններին մոտեցնող հատկանիշներն անհամեմատ ավելի շատ են: Եվ հիմնականն այն է, որ ձվերից դուրս եկող իր ձագուկներին նա կերակրում է կաթով:

Բադակտուցներն ապրում են գետերի ափին: Մատների արանքում եղած լողաթաղանթի շնորհիվ նրանք լավ լողում են, կարող են երկար ժամանակ մնալ ջրում հայթայթելով տարբեր ջրային միջատներ, նրանց թրթուրները, խխունջներ:

Մյուս, ոչ պակաս զարմանալի կենդանին եքիղնան, գերադասում է խիտ մացառուտներով կամ անտառներով ծածկված լեռնոտ վայրերը: Արտաքինով եքիղնան բադակտուցին նման չէ ավելի շուտ հիշեցնում է մեր ոզնուն, միայն մի չորս անգամ ավելի մեծ է՝ ինչպես և ոզնին, նա վտանգի դեպքում կծիկ է դառնում և նույնպես փրշեր ունի Այնուամենայնիվ, եքիղնան և

բադակտուցը մոտիկ ազգակիցներ են նրանք կառուցվածքային շատ ընդհանրություններ ունեն. եքիղնան, ինչպես և բադակտուցը, ձու է դնում, այլ ոչ թե կենդանի ձագեր ծնում: Միայն թե նա ձվադրում է ոչ թե գետնին, ինչպես բադակտուցը, այլ իր փորի վրա գտնվող հատուկ պայուսակի պարկի մեջ: Այդ պարկում՝ մաշկի հաստ ծալքում, նա սկզբնական շրջանում կրում է նաև ձվից դուրս եկած իր ձագուկին:

Բադակտուցի և եքիղնայի մարմնի ջերմաստիճանը փոփոխվում է շրջապատի ջերմաստիճանի համեմատ:

Եքիղնան, ինչպես և բադակտուցը, սընվում է միջատներով: Նա արագ վագում է, ճարակորեն փորում հողը, լավ մագցում նույնիսկ գառիկող լանջերով: Ցավոք, մեր երկրում չես հանդիպի ոչ բադակտուցի, ոչ էլ եքիղնայի: Նրանք ապրում են միայն Ավստրալիայում և Տասմանիայում:

Բադմինթոն

Այս գեղեցիկ խաղը ժամանակին հափըշտակությամբ խաղացել են Բուսաստանում և անվանել ֆրանսերեն «վոլան» բառով, որ նշանակում է «թռչող»: Բայց այդ խաղը եվրոպա է մուտք գործել Արևելքից: Անցյալ դարում անգլիացի մի դուքս այն բերեց


Հնդկաստանից Դքսի կալվածքը Բադմինթոնն քաղաքի մերձակայքում էր, և այդ խաղն սկսեցին այդպես էլ անվանել

Մենք հայերս, այն կոչում ենք փետրագնդակ

Բադմինթոնը նման է թենիսի: Խաղում են նույնպիսի հարթ և ամուր տոփանած խաղահրապարակում:

Բադմինթոնի ձեռնաթիակները 2—3 անգամ ավելի թեթև են, քան թենիսինը. Մրցակիցներին իրարից բաժանող ցանցը ձգվում է գետնից 155 սմ բարձրությամբ: Զուգախաղի համար խաղահրապարակը 13,4X6,1 մ է, մենախաղի համար՝ 13,4X 5,2 մ:

Մրցակիցներից մեկը փոքրիկ փետրագնդակը ձեռնաթիակի հարվածով նետում է ցանցի վրայով, իսկ մյուսը, թույլ չտալով, որ այն գետնին դիպչի, ետ է մղում Միավորները հաշվում են ինչպես վոլեյբո-




լի խաղի ժամանակ մինչև 15-ը: Կանայք և երեխաները խաղում են մինչև 11-ը. խաղը բաղկացած է լինում 3 կամ 5 փուլից

Առաջ փետրագնդակի դեր էր կատարում խցանից պատրաստված փոքրիկ գնդակը, որը ճախրում էր վրան պսակաձև ցցված սագի 16 փետուրների շնորհիվ Այժմ փետրագնդակները պատրաստում են

պլաստմասսայից փոքրիկ զամբյուղիկների ձևով

Հմուտ խաղացողը կարողանում է այնպես հարվածել փետրագնդակին, որ այն մերթ սահուն ցած է իջնում, մերթ էլ հանկարծակի ընկնում այնտեղ, ուր երբեք չէիր սպասի: Եվ խաղն էլ ընթանում է գրավիչ, եռանդուն ու արագ: Ցանկության դեպքում կարելի է խաղալ ուզած փոքրիկ բացատում, մարգագետնում, լողափին

Բադմինթոնը Հայաստանում տարածվել է 1960 թ



Բազմանկյուն

Մի անգամ եռանկյունն ու քառանկյունը սկսեցին վիճել

— Դու ինչ բազմանկյուն ես որ, — ասում է քառանկյունը, — ընդամենը երեք անկյուն ունես: Երեքն ինչ է որ: Իսկ, այ, ես չորս անկյուն ունեմ

— Հետո ինչ — նեղացավ եռանկյունը, — փոխարենը եթե քո մեջ անկյունագիծ տարվի, բոլորը կտեսնեն, որ դու կազմված ես երկու եռանկյունուց

Լսեցին այդ վեճը երկու Տասնանկյուն և փորձեցին հաշտեցնել վիճողներին:

— Դուք երկուսդ էլ բազմանկյուն եք, — ասում է համարյա կյոր կտրատված եզրերով ափսե հիշեցնող ուռուցիկ Տասնանկյունը: — Ես էլ եմ բազմանկյուն քառակուսին էլ: Շեղանկյունն էլ Միայն թե մեզանից ամեն մեկը տարբեր քանակի անկյուններ ունի բայց անպայման ունի. Այլ ոչ թե Շրջանագծի և շրջանի նման: Մենք բոլոր բազմանկյուններս նաև կողմեր ունենք որքան անկյուն, նույնքան էլ կողմ վեցանկյունը վեց կողմ ունի, Տասներկուանկյունը տասներկու, բայց մենք դրա պատճառով երբեք չենք զրծովում վեցանկյան և Տասներկուանկյան հետ

Բացի դրանցից, բոլոր բազմանկյունները պարագիծ ունեն որն ստացվում է, երբ բոլոր կողմերը վերցվում են միասին: Պարագիծը, կարելի է ասել, մեր հագուստն է մեր եզրը: Եվ բոլոր բազմանկյուններն էլ մարդկանց համար շատ օգտակար են: Մեր օգնությամբ պատրաստում են մանրատախտակ և հախճասալիկ նախագծում տներ և հորինում նոր մեքենաներ Այնպես որ մենք բազմանկյուններս, վիճելու պատճառ չունենք:

Հաշտվեցին եռանկյունն ու քառանկյունը Տասնանկյունները նրանց հրաժեշտ տալիս հանեցին գլխարկները և մի ակընթաթ ինքնամեկանկյուններին

Բաթիսկաֆ

— Մինչև հատակը մնում է 50 45 40...— բարձրախոսից լսվում է հեռավոր ձայնը Կապիտանի կամրջակին կանգնած մարդիկ ուշադրությամբ լսում են

Օվկիանոսի վրա սահում են ամպերը, զով քամին ալիքների կատարներից փոքր փուր է պոկում. Իսկ այնտեղ, ներքևում խավարի և լռության մեջ, ծովի խորխորատն է իջնում բաթիսկաֆը խորջրյա նավը («բաթիսկաֆ» հունարեն է և բառացի նշանակում է «խոր նավ»)։ Այն նման է սուզանավի, բայց նրա երկարավուն իրանը լցված է ոչ թե օդով, այլ բենզինով։ Օդն այստեղ պիտանի չէ մեծ խորություններում ջրի հսկայական ճնշումը պահածոյի տուփի նման կճզմեր բաթիսկաֆը. Իսկ բենզինը ջրի ճնշմանը լավ է դիմանում և ջրից էլ թեթև է։ Ուստի բենզինով լի իրանը բաթիսկաֆի համար լողան է։ Օդ կամ միայն բաթիսկաֆի ստորին մասում ամենամուր պողպատից պատրաստված գնդում, ուր նստած են մարդիկ։

Չորս և կես ժամ առաջ սեղմվեց «վայրեջք» կոճակը, և բաթիսկաֆը, բալաստի ծանրության տակ, սկսեց ավելի ու ավելի խորասուզվել ջրի մեջ։

Հաստ ապակու ետևում վաղուց մարել է ցերեկվա լույսը Լուսարձակի պայծառ

ճառագայթների մեջ լողում են խորջրյա արտասովոր ձկները վերջապես նրանք էլ անհետացան եվ ահա լուսարձակը լուսավորեց տղմոտ հատակը

— Մենք անդունդի հատակին ենք,— միկրոֆոնով հայտնում է հետազոտողներից մեկը։ Դանդաղորեն հանդարտվում է բաթիսկաֆի բարձրացրած տիղմի ամպը։ Այժմ հարկավոր է ամեն ինչ ուշադիր զննել, լուսանկարել, չափել ջրի ջերմաստիճանը, հատուկ հարմարանքով տիղմի փորձանմուշ վերցնել։ Դրանից հետո միայն սեղմվում է «վերելք» կոճակը։ Բաթիսկաֆը դեն է նետում բալաստը և սկսում է լողալ վեր նորից դեպի արևը, դեպի մարդիկ, դեպի օվկիանոսի ազատաշունչ քամին

Դա 1960 թ էր Շվեյցարացի գիտնական Օգյուստ Փիքարի ստեղծած «Տրիեստ» բաթիսկաֆը իջավ Մարիանյան անդունդի Խաղաղ օվկիանոսի ամենախոր տեղերից մեկի, հատակը։ Ծովային սպա Դոն Ուոլշը և գիտնականի որդին Ժակ Փիքարը, հասան 10 919 մ խորության

Խորության ռեկորդը սահմանված էր Բայց ավելի փոքր խորություններում էլ շատ բան պետք է հետազոտել. եվ նորից դեպի ծովի խորքերն են գնում գիտության նավերը։ Դրանց մեջ է «Սևերյանկա» սովետական սուզանավը։ Սա չի կարող այնքան խորը սուզվել որքան բաթիսկաֆը։ Դրա



փոխարեն «Սևերյանկայով» ինչպես սո վորական սուզանավով կառելի է նա վարկել երկար ու հեռու Ծովի կյանքը դիտելու համար այնտեղ կան դիտապատուհաններ և հեռուստացույց: «Սևերյան կա» սուզանավի օգնությամբ սովետական գիտնականները բազմաթիվ հետաքրքիր հայտնագործություններ են կատարել:

Բալետ

«Կարապի լիճը». Հնչում է Պ Ի Չայկովսկու հրաշալի երաժշտությունը և ան միջապես աչքիդ առջև հառնում է Կարապի լուսավոր կերպարը նրա թախծալի և հպարտ թևածումը Իսկ կարապի թևերն այդ պարուհու թրթռացող ձեռքեր են

Պ Ի Չայկովսկու «Կարապի լիճը» «Քնած գեղեցկուհին», «Շչելկունչիկ» բալետներում վերակենդանանում է վսեմ մի աշխարհի լուսեղեն քնարականության ռոմանտիկայի, սիրո աշխարհը: Նրա մասին պատմվում է պարի օդեղեն ու բոցավառ լեզվով Ամեն մի բալետ ունի իր մեծ թեմա-գաղափարը եվ բոլոր նրանք ովքեր բալետ են գրում ու ստեղծում, այդ միտքն արտահայտում են յուրովի կոմպոզիտորները երաժշտությամբ բալետմայստերները հերոսների պարային «լեզվով»

Պ Ի Չայկովսկին «Քնած գեղեցկուհին» բալետի երաժշտության մեջ դիցանուշներ Սիրենայի և Կարաբոսի կերպարներում մարմնավորել է բարու և չարի պայքարի հավերժական թեման՝ երաժշտության մեջ հնչում է բարու հաղթանակի լուսավոր



Աշակերտու
հի Նադյա
Ռուշևայի
նկարները

հիմնը Ս Ս Պրոկոֆևը «Մոխրոտը» բալետում փառաբանել է Մոխրոտիկի անարատությունն ու հմայքը, որն իր համեստությամբ աշխատասիրությամբ ու բարությանմբ հաղթահարում է բոլոր ձախորդությունները Ա *Խաչատրյանը* «Սպարտակ» բալետում ցասկոտ խարազանում է բռնությունն ու չարությունը և խանդավառ գովերգում ազատության հերոսական ձըգտումը հանուն նրա ժողովրդի գործած սխրանքի գեղեցկությունն ու վեհությունը Ուրեմն, ինչ է բալետը Դա երաժշտաթատերական արվեստի բարդ տեսակ է

Նրա գլխավոր բաղկացուցիչ մասերն են սցենարը երաժշտությունը և պարերը:

Պարը բալետի գեղարվեստական արտահայտչական գլխավոր միջոցն է: Պարի միջոցով պատմվում է բալետի բովանդակությունը պարուհիներն ու պարողները պարով բացահայտում են գործող անձանց բնավորությունը նրանց մտքերը զգացմունքները տրամադրությունն ու արարքները

Բալետում կարևոր նշանակություն ունեն նաև *դեկորացիան* զգեստները լուսավորությունը որոնք ընդգծում են գործողության ժամանակն ու տեղը:

Ռուսական բալետի պատմության մեջ հետաքրքրաշարժ շատ էջեր կան Նրա ակունքները ժողովրդական մերթ վեհ ու սահաքայլ մերթ չարաճճի ու կրակոտ պարերի մեջ են Բալետային ներկայացումները, ուր պարն ու երաժշտությունը միասնություն են կազմում Ռուսաստանում սկսել են բեմադրվել 18-րդ դարի առաջին կեսից: Իսկ 19-րդ դարում ռուսական բալետը տիպար դարձավ ողջ աշխարհի բալետի համար Դրա համար այն շատ է պարտական հիանալի բալետմայստերներ Մ Ի Պետրիպային և Մ. Մ Ֆոկինին Նրանց ստեղծագործական մտահղացումները մարմնավորել են փառաբանված պարուհիներ Ա Պավլովան, Տ Կարսավինան, պարողներ Վ Նիժինսկին Վ Տիխոմիրովը և շատ ուրիշներ:

Այս մեծ ժառանգության հիմքի վրա էլ աճեց սովետական հրաշալի բալետը Մեր երկրում և արտասահմանում հսկայական հաջողությամբ են անցնում բալետային խմբերի և առանձին մենակատարների Սովետական Միության ազգային տարբեր հանրապետությունների ներկայացուցիչների, բազմաթիվ ելույթները: Աշխարհի շատ երկրներում են սքանչանում սովետական բալետի արտիստների վարպե



տուրյամբ Նշում նրանց տեխնիկական կատարելությունը իմաստավորված ու ոգեշնչված կատարումը:

«Մենք ուզում ենք ոչ միայն պարել այլև խոսել պարի լեզվով», — անվանի պարուհի Գալինա Ուլանովայի այս խոսքերում խոր իմաստ կա արտահայտված է մեր բալետային արվեստը բովանդակալից դարձնելու համառ ձգտումը: Այդ խոսքերը լրացնում են այն հիանալի բնորոշումը, որ Ա Ս Պուշկինը տվել է ռուսական բալետին «...ոգեղեն թռիչք»:

Սովետական բալետի զարգացման գործում մեծ ավանդ ունի հայ մեծատաղանդ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը: Նրա «Գայանե» և «Սպարտակ» բալետները հայտնի են նաև Սովետական Միության սահմաններից դուրս: Նա է ստեղծել հայ կական առաջին ազգային բալետը:

Հայ կոմպոզիտորները բալետներ են ըստեղծել նաև ձեզ համար Դրանցից են օրինակ Կարեն Խաչատրյանի «Չիպուի նոն» Գևորգ Մելիք Մուրադյանի «Կարմիր գլխարկը», Էմմա Միհրանյանի «Աբու Հասանի մաշիկները» և այլ բալետներ:

Բախ Յոհան Սեբաստիան

1685 —
1750

Բախ ազգանունը կրող երաժիշտների տոհմը շատ հին է Դեռևս 16-րդ դարում հացթուփ Ֆայտ Բախը ինքնամոռաց ցիտրա էր նվագում քանի դեռ ջրաղացը չխկչխկալով ցորեն էր աղում: Հաջորդ բոլոր Բախերը նույնպես երաժիշտներ էին: «Երաժշտական» այդ ազգանունը լայնորեն հայտնի էր ամբողջ Գերմանիայում Դրա համար էլ երբ ծնվեց Յոհան Սեբաստիան Բախը ոչ ոք չէր կասկածում որ նա երաժիշտ կդառնա: Ճիշտ է այն ժամանակ ոչ մեկը չէր կարող մտածել անգամ որ Սեբաստիանն իր երաժշտության մեջ մարմնավորելու է այն ամեն լավագույնը որ կուտակել էր ոչ միայն Բախերի հռչակավոր տոհմը այլև գերմանական ողջ ժողովուրդը:

Վաղ որբացած Սեբաստիանի ուսուցիչը նրա ավագ եղբայր Քրիստափորն էր: Քառասուն տարի անընդմեջ նա նվագում էր միևնույն երգեհոնը կատարելով միևնույն բազմաձայն օրհներգը Նրա անվրդով տեսքը կարող էր վրդովել ուզած մարդուն

այն աստրճան չոր ու մանրախնդիր մարդ էր, որ նրա դասավանդած երաժշտությունը ատել միայն կարելի էր: Բայց Սեբաստիանը լինում էր նաև ուրիշ Բախերի ընտանիքներում և գիտեր, որ ավագ եղբոր տաղտկալի վարժություններից զատ կա բոլորովին այլ մի երաժշտություն, և ամբողջ հոգով ձգտեց դեպի այն:




Երբ տանը մարում էին մոմերը և եղբայրը խոր քուն էր մտնում Սեբաստիանը խարխափելով մոտենում էր հսկա պահարանին, ուր թաքնված էր «իսկական երաժշտությունը»: Տղան ձեռքը խցկում էր երկաթե վանդակորմից ներս, ուղորում նոտաներն ու դուրս բերում: Ամիսներ շարունակ նա լուսնի լույսի տակ աչքերը ցավեցնելու աստիճան արտագրում էր այդ նոտաները և ընդմիջտ փչացրեց տեսողությունը Մի անգամ Քրիստափորը պատահմամբ Սեբաստիանին բռնեց «հանցանքի» վայրում և խլեց նոտաների տետրը Հուսակտուր աղաչանքներն ու արցունքներն էլ չօգնեցին: Եվ միայն 25 տարի անց եղբոր մահից հետո տետրը վերադարձրին Սեբաստիանին Բայց այն նրան այլևս պետք չէր:

Ինքնուրույն կյանքը Սեբաստիանն սկսեց 15 տարեկանից: Իբրև երգիչ աշխատում էր երգչախմբում, ջութակահար էր նվագախմբում և երգեհոնահար եկեղեցում Իսկ ազատ ժամերին երաժշտություն էր հորինում:

Սակայն նրա երաժշտությունն այն ժամանակվա հասարակությանը դուր չէր գա-

լիս. Արիստոկրատները չէին ըմբռնում նրա ստեղծագործությունների խորությունն ու լրջությունը: Իսկ եկեղեցականները գրտնում էին, որ այդ երաժշտությունը չափից ավելի կենսաթրթիռ, մարդկային և հուզիչ է Մինչդեռ Սեբաստիան Բախը, չնայած կյանքի դժվարություններին, չէր պատրաստվում հաճոյանալ ոչ եկեղեցականներին ոչ էլ արիստոկրատներին Նա ստեղծեց երաժշտական բազմաթիվ ստեղծագործություններ: Դրանցից ամենախոշորներն են օրատորիաներն ու կանտատները երգչախմբի մեներգիչների և սիմֆոնիկ նվագախմբի համար, մեսսաները եկեղեցական երգչախմբային երգասացությունները, սյուիտները չորս հակադիր մասերից կազմված երաժշտական ստեղծագործությունները, որոնց հիմքում ընկած է պարային երաժշտությունը, պրելյուդները պիեսներ զանազան նվագարանների համար, ֆուգաները շատ բարդ բազմաձայն ստեղծագործություններ, տոկատաները արագատեմպ, հատուկ պիեսներ երգեհոնի համար Հարյուրավոր, հազարավոր անկրկնելի մեղեդիներ

Հետնորդները ևս անմիջապես չգնահատեցին այդ հոյակապ գանձերը: Բախի մահից հետո մոտ հարյուր տարի ոչ ոք չէր հիշում նրա երաժշտությունը Առաջինն այն կրկին կյանքի կոչեց գերմանացի կոմպոզիտոր Մենդելսոնը Այդ պահից Բախի ստեղծագործությունները հաստատուն տեղ գրավեցին յուրաքանչյուր երաժշտի նվագացանկում Մեծահասակ երաժիշտները չէ միայն, որ կատարում են դրանք: Աշխարհի բոլոր երաժշտական դպրոցներում երեխաները սովորում են նվագել Բախի փոքրիկ պիեսները:



նոր եղանակներ ձգնում նրանց ամենօրյա աշխատանքում: Այդ տարիներին Բակունցըն արդեն փոթորկալի կյանքի ճանապարհ էր անցել...

1917 թ վերջին կամավոր մեկնել է ռազմաճակատ մասնակցել շատ կռիվների, տեսել մարդկային ծանր տառապանք արյուն ու ավեր: 1918 թ մայիսին երբ վտանգի տակ էր ողջ Հայաստանն ու հայ ժողովրդի ապագան, Բակունցը զենքը ձեռքին մասնակցում էր Սարդարապատի հերոսամարտին...

Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտն ավարտելուց հետո նորից վերադառնում է հայրենի երկիր:

Բակունցը գրել սկսել էր դեռևս մանկուց 14 տարեկան էր երբ նրա գրած «Հիմար մարդը» հեքիաթը տպագրվեց Թիֆլիսի (Թբիլիսիի) «Աղբյուր» մանկական ամսագրում: Գյուղատնտես աշխատած տարիներին թերթերում ու ամսագրերում լույս են տեսնում Բակունցի պատմվածքներն ու ակնարկները Ակսել ստորագրությամբ Հազարավոր ընթերցողներ անհամբեր ըս պասում էին թե թերթերում երբ պետք է նորից երևա Ակսելի նոր պատմվածքը 1927 թ լույս տեսավ նրա պատմվածքների առաջին ժողովածուն «Մթնաձոր» վերնագրով: Այդ գիրքը հագեցած էր բնության շնչով, ընթերցողը տեղափոխվում էր սաղարթախիտ անտառներ անդնդախոր ձորեր, հանդիպում տեղի բնակիչներին

Հետո տպագրվեցին Բակունցի բազմաթիվ ուրիշ պատմվածքներ Նրա լավագույն ստեղծագործություններից են «Միրիափ», «Խոնարի աղջիկը», «Լառ Մարգար», «Ալ

Բակունց Ակսել Ստեփանի

1899 —
1937

1924 — 1925 թվականներին Զանգեզուրի անտառների ու ձորերի կածաններին հաճախ կարելի էր տեսնել մի ձիավորի գյուղից գյուղ գնալիս: Նիհարավուն ու բարձրահասակ, կապուտաչյա այդ երիտասարդը Զանգեզուրի գլխավոր գյուղատնտես Ալեքսանդր Թևոսյանն էր (Բակունցը) Գյուղերում նրա կարիքը շատ էին զգում գյուղացիներին սովորեցնում էր հողը վարելու և ցանելու, բերքը հավաքելու

պիական մանուշակ», «Այու սարի լանջին» «Ապիտակ ձին», «Ծիրանի փողը» «Նամակ ռուսաց թագավորին» «Եղբայրության ընկուզենիները» և այլ պատմվածքներ

Իր կարճատև կյանքի ընթացքում Բակունցը գեղարվեստական շատ երկեր է գրել որոնցից հրատարակվել են շուրջ 100 ը

Բակունցի հերոսներն անցյալի հայ գյուղի մարդիկ են հովիվներ, այգեգործներ բրուտներ գյուղացի կանայք որոնք ունեն բյուրեղյա հոգի և ջերմ սիրտ Նրա ստեղծագործությունների շատ էջեր բազմերանգ ծաղիկներով լի հովիտների ոսկե ծուփ արտերի անտառային մութ թավուտների գողտրիկ բնապատկերներ են Բակունցը իր ժողովրդական բառ ու բանով հարուստ և բանաստեղծական լեզվով ցույց է տալիս որ իր հերոսների հոգին էլ շրջապատի բնության պես գեղեցիկ է ու մաքուր

Անմոռաց է «Նամակ ռուսաց թագավորին» պատմվածքից Արթին պապը իր բարի ու խելճ ժպիտով և «Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սևերես չմնա...» սիրած խոսքով: Թագավորին գրած մի նամակով նա խնդրում է ներում շնորհել իր փախըստական որդուն. Դրա համար նրան դաժանորեն ծեծում են Բայց նա չի հիասթափվում մարդկանցից և շարունակում է հավատալ որ որդուն ներում կշնորհվի Արթին պապի միջոցով գրողն արտահայտել է հայ ժողովրդի հավատը արդարության հաղթանակի նկատմամբ

«Ալպիական մանուշակ», այսինքն լեռնային մանուշակ Դա մի սարվոր գեղջկուհի է Բակունցը գեղեցկություն և հոգեկան արժանիքներ է հայտնաբերում ամենաանսպասելի տեղերում: Եվ ահա իրար հակադրելով գիտությամբ տարված հնազետին և բանաստեղծական խառնվածքի տեր նկարչին գրողն այս վերջինի աչքերով գյուղական անշուք զգեստի մեջ նկատում է մի իսկական գեղեցկություն: Նկարիչը համեմատում է իր քաղաքակիրթ ընկերուհուն «պարտեզի մանուշակին», «լեռնային մանուշակի» հետ: Ամբողջ պատմվածքը մի հրաշալի բանաստեղծություն է ձոնված լեռնային չքնաղ մանուշակին

Բակունցյան բնապատկերների ու հերոսների ջերմ նկարագրությունները նրանց ներքին գեղեցկությունը նաև իր Բակունցի, խոշոր արվեստագետի ու պայծառ մարդու հոգու արտացոլումն են

Բաղրամյան Հովհաննես Քրիստափորի

1897 —
1982

Իջևանի Ակնաղբյուր գյուղում տարիներ առաջ կայծակնահար ընկավ դարավոր մի կաղնի որին ժողովուրդը Զորավարի կաղնի էր ասում Պատմում էին թե այդ կաղնին տնկել էր զորավար *Վարդան Մամիկոնյանը* հազար հինգ հարյուր տարի առաջ: Հաղթանակից վերադարձած մի ուրիշ մեծանուն զորավար Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը, ընկած ծառի տեղում մի ուրիշ կաղնի տնկեց: Հիմա այն մեծացել ու տարածել է իր լայն ճյուղերը և առաջվա նման Զորավարի կաղնի է կոչվում... Այդ ծառը երկու հայրենասեր զորավարների սիրո և նվիրվածության երգումն էր մայր հողին ու հարազատ ժողովրդին

Երկաթուղայինի որդին ստացավ երկաթուղայինի կրթություն բայց.. 1914 թ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը Արյունարբու Թուրքիան կռվի մեջ էր մտել Ռուսաստանի դեմ: Արևմտյան Հայաստանից ահավոր լուրեր էին հասնում հայերի նկատմամբ թուրքերի վայրագությունների մասին Ընդամենը տասնութ տարեկան էր Հովհաննեսը որ կամավոր բանակ գնաց կռվելու իր ժողովրդի փրկության համար Այդ օրվանից էլ սկսվեց նրա զինվորական մեծ ծառայությունը որը տևեց շուրջ յոթ տասնյակ տարի...

Առաջին հայկական հեծյալ գնդի շարքերում որպես դասակի հրամանատար կռվող Հովհաննես Բաղրամյանը Կարսի մոտ գտնվող Խորասան գյուղում հանդիպեց ազգային հերոս Անդրանիկին որի պայծառ կյանքն ու սխրանքները նվիրական դպրոց եղան նրա համար (զորավար Անդրանիկի մասին դուք կարող եք կարդալ «Հայ ազգային ազատագրական շարժումներ» գրույցում).

Թուրքերը գրավեցին Էրզրումը Սարիղամիշը Կարսը Ալեքսանդրապոլը (Լենինական), ապա հասան մինչև Մարդարապատ (Հոկտեմբերյան). սկսվեց *Մարդարապատի հերոսամարտը* որին մասնակցում էր նաև Հ. Բաղրամյանը Այս օրհասական կռիվը մեր ժողովրդի համառոտյն մեծ նշանակությունն ունեցավ ինչ դարեր առաջ ունեցել էր Ավարայրի ճակատամարտը որի մասին դուք կարող եք կարդալ «Վարդան Մամիկոնյան» գրույցում





Հայ ժողովուրդը մեծ ցնծությամբ տոնում էր իր հաղթանակը Բայց Սարգսրապատում հաղթելուց հետո էլ ծանր էր մնում հայ ժողովրդի դրությունը Նրա համար բախտորոշ նշանակություն ունեցավ 1920 թ նոյեմբերը Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն:

Հ Բաղրամյանը կամավոր մտավ կարմիր բանակի շարքերը: 1923 թ նա հայկական հրաձգային դիվիզիայի հեծյալ գնդի հրամանատար էր Մի քանի տարի անց Նրան ուղարկեցին Մոսկվա Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայում սովորելու: Այնուհետև ուսանում է Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիայում և ավարտում այն 1938 թ Նրան պահում են նույն ակադեմիայում դասախոսական աշխատանքի, բայց հին ռազմիկը բանակ էր ձգտում: Նա նշանակվում է Կիևի զինվորական օկրուգի 12-րդ բանակի շտաբի պետ

Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հայրենիքը ֆաշիստներից պաշտպանելու համար ոտքի ելավ սովետական ողջ ժողովուրդը Հ Բաղրամյանը մասնակցեց Կիևի համար մղված մարտերին, կռվեց Դոնի Ռոստովի համար, եղավ Մոսկվան պաշտպանող հարավ-արևմտյան զորքերի շտաբի պետ, իսկ 1942 թ արդեն որպես 16-րդ բանակի հրամանատար մասնակցեց Կուրսկի ահեղ կռիվներին

1943 թ Բաղրամյանը նշանակվում է Առաջին մերձբալթյան ռազմաճակատի

հրամանատար, ստանում բանակի գեներալի աստիճան: Նրա գլխավորած զորքերը մասնակցեցին Բելոռուսիայի և մերձբալթյան հանրապետությունների ազատագրմանը: 1944 թ. Բաղրամյանին շնորհվեց Սովետական Միության հերոսի կոչում

Պատերազմը մոտենում էր ավարտին Սովետական զորքերն արդեն կռվում էին հենց թշնամու հողում

Հայրենական պատերազմի պատմության մեջ ոսկե տառերով է գրված Քյոնիգսբերգ (այժմ Կալինինգրադ) քաղաքի Արևելյան Պրուսիայի պաշտպանության ամրացված միջնաբերդի մոտ տարած դժվարին հաղթանակը Ֆաշիստները քաղաքն ամրացրել էին կրկնակի պատնեշով, երկաթբետոնե պատերով, ստեղծել խրամատների մի քանի շարք Նրանք պարծենում էին, թե ոչ մի ուժ, ոչ մի զորավար չի կարող գրավել քաղաքը Բայց Հ Բաղրամյանը, որ այս անգամ գլխավորում էր Երրորդ բելոռուսական ռազմաճակատի զորքերը, ընկճվողներից չէր: Նա հրամայեց պատրաստել Քյոնիգսբերգ քաղաքի մանրակերտը Եվ երբ սկսվեց գրոհը, ոչ միայն յուրաքանչյուր հրամանատար, այլև յուրաքանչյուր մարտիկ գիտեր իր անելիքը: Հ. Բաղրամյանի ռազմական տակտիկայի շնորհիվ մեր զորքերը չորս օրում գրավեցին անառիկ համարվող այդ ամրոց-քաղաքը:

1945 թ. մայիսի 9-ին ավարտվեց պատերազմը Գերմանիան պարտվեց Ավարտվեց նաև բանակի գեներալ, Սովետական Միության հերոս Հ Բաղրամյանի կյանքի պատերազմական շրջանը, որը նրա համար տևել էր ուղիղ 1418 լարված և անքուն օրեր ու գիշերներ:

1955 թ Հ Բաղրամյանը արժանացավ Սովետական Միության մարշալի բարձր կոչման, իսկ ծննդյան 80-ամյակի առթիվ նրան շնորհվեց Սովետական Միության հերոսի երկրորդ ոսկե աստղը 1981 թ նրա ծննդավայր Կիրովաբադ քաղաքում (Ադրբեջանական ՍՍՀ) կանգնեցվեց հերոսի բրոնզե կիսանդրին. Ականավոր զորավարի կուրծքը զարդարում էին նաև Լենինի յոթ, Հոկտեմբերյան հեղափոխության, Կարմիր դրոշի երեք, Սուվորովի 1-ին աստիճանի երկու, Կուստուզովի 1-ին աստիճանի, սոցիալիստական տարբեր երկրների շքանշաններ ու մեդալներ

1967 թվականից ամեն ամառ Ղրիմի Արտեկ ճամբարում սկսվում են «Փայլակ» ռազմամարզական խաղերը. Խաղի սկսվելուց առաջ պիոներները միշտ տողանի

են կանգնում. Տարիներ շարունակ այդ շքերթը ընդունում էր «Փայլակի» գլխավոր հրամանատար, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը: Կանգնում էր նա մեծ ու հաղթանդամ, տարիներից ու աշխատանքից մի քիչ հոգնած, բայց աչքերում սեր ու խանդադատանք, և ընդունում էր պիոներների զեկույցը: Եվ «Միշտ պատրաստ» զնգուն պատասխանը լսելով, ժպտում էր մարշալը, ուրախանում, որ պաշտպանել է այս և հազարավոր այլ մանուկների երջանիկ ապագան:

Նրա սիրելի Հայաստանի մայր հողում հայրենի ջինջ, պայծառ ու խաղաղ երկնքի տակ ապրում է Ջորավարի կաղնին՝ նրա կյանքի հավերժության կանգուն խորհրդանիշը

Բամբակենի

Բամբակենին շատ արժեքավոր բույս է Այն մեզ հիանալի մանրաթել է տալիս:

Բամբակի մանրաթելը մարդիկ սկսել են հավաքել շատ ու շատ վաղուց, դեռևս մարդկային մշակույթի զարգացման արշալույսին, վայրի բամբակենուց էվ այդ հին ժամանակներից էլ սկսած բամբակը դարձել է մշակովի բույս. Ամենից առաջ այն սկսել են մշակել *Հնդկաստանում*, հետո *Չինաստանում*, *Եգիպտոսում*: Հնդկաստանում ավելի վաղ, քան ուրիշ երկրներում, սովորեցին պատրաստել թեթև, նուրբ, «շղարշե» գործվածքներ, մուսլին և հոյակապ գունազեղ չթեր: Այժմ բամբակենին մշակում են Հնդկաստանում, *Ամերիկայի Միացյալ Նահանգներում*, *Չինաստանում*, *Բրազիլիայում* և այլ երկրներում Սովետական Միությունում բամբակենի աճեցնում են միջինասիական հանրապետություններում, ինչպես նաև Անդրկովկասում (Ադրբեջանական ՍՍՀ-ում)

Բամբակենին շատ է սիրում ջերմություն, արև, արգավանդ հող և խոնավություն: Սովորաբար այն աճեցնում են արհեստական ոռոգմամբ: Բամբակենու թփի բարձրությունը մեկ կամ մեկուկես մետր է, ծաղիկները խոշոր են, պտուղը 3—5 բնանի տուփիկ է (կնգուղ): Երբ պտուղը հասունանում է, նրա փեղկերը բացվում են, և նրանից դուրս է ցցվում սպիտակ, փափուկ մանրաթելի մի փոքրիկ զանգված

Եթե կնգուղից հանենք այդ փափուկ զանգվածն ու զգոզենք, ապա կտեսնենք



Բամբակենու բացված պտուղ-կընգուղը ծաղիկները սերմը տեղը և խակ պտուղը

սերմերը վերցնենք մի սերմ Այնքան էլ հեշտ չէ նրան ընդհանուր զանգվածից անջատելը: Այն պատված է խճճված թելիկներով Սկսենք բացել թելիկները Պարզվում է որ դրանք տարբեր երկարության շատ նուրբ թելիկներ են Հենց դա էլ բամբակի մանրաթելն է, բամբակը: Վուշի և կանեփի մանրաթելը զբտ նըվում է ցողունների մեջ: Իսկ այ բամբակենու մանրաթելը սերմերի վրա է

Մանրաթելը հավաքում են սերմերի հետ միասին, հիմնականում, բամբակահավաք մեքենաներով Ընդ որում հավաքում են մի քանի անգամ որովհետև տուփիկները միաժամանակ չէ որ հասունանում են Հավաքված բերքը դեռևս բամբակի հում քըն է:


Հատուկ մեքենաները սերմերի վրայից հեռացնում են մանրաթելը, որը հետո ուղարկվում է մանվածքային ֆաբրիկաներ: Այստեղ բամբակը մանում են իսկ մանածագործական ֆաբրիկաներում մանվածքից զործում են բամբակե գործվածքներ չիթ բատիստ մարկիզետ սատին բումազե տրիկոտաժ Բամբակից են պատրաստված նաև ծածկոցներն ու խավոտ երեսուրբիչները, *պլաստմասսան* ու թաղանթանյութը (ցելյուլոզան) լուսանկարչական ժապավենն ու թուղթը: Սակայն դա դեռ բոլորը չէ: Նրանից են պատրաստում տեխնիկայում կիրառվող ամուր դիմացկուն գործվածքները:

Իսկ սերմերից ձեթ են քամում որն օգտագործվում է պահածոների արդյունաբերության և մարզարինի արտադրության մեջ: Բացի այդ բամբակի ձեթը կիրառում են օձառ եփելու համար նրանից ստանում են գլիցերին բնաձարա (ստեարին): Ձեթը քամելուց հետո մնում է քուսպը: Սա արդեն լավ կեր է Ձեթը քամելու ընթացքում առաջացած մյուս մնացորդներից անջատում են հանքաձյութ (գուդրոն) որն օգտագործում են ճանապարհային ամուր ծածկույթների և ջերմակայուն լաքեր պատրաստելու համար Սերմերի կեղևը կիրառում են էթիլ և մեթիլ սպիրտների արտադրության մեջ Ցողունը վառելանյութ է և շինանյութ: Տերևներից կարելի է անջատել կիտրոնաթթու և խնձորաթթու: Բամբակենին նաև մեղրաբեր է նրա ծաղիկներից նեկտար են քաղում մեղուները:

Ահա թե ինչու բամբակենին շատ կարեվոր տեխնիկական բույս է Մեր երկրում նրա պլանտացիաներն ընդարձակվում են անապատից նվաճված նոր հողերի արհեստական ոռոգման շնորհիվ

Բանգլադեշ

(Բանգլադեշի ժողովրդական
Դեմոկրատիկ հանրություն)



Ասիայում, Հնդստան թերակղզով, հոսում է Գանգես գետը և գնում թափվում է Հնդկական օվկիանոսը Գանգեսը և լեռներից հոսող նրա վտակներն իրենց հետ բերում են շատ տիղմ ու ավազ: Բազում հազարամյակների ընթացքում ծովի ծանծաղուտը լցվել է այդ գետաբերուկներով: Գոյացած տափարակ հարթավայրում, ուր բոլոր ուղղություններով գալարվում են բազմաթիվ գետեր, գտնվում է Բանգլադեշ պետությունը: Բանգլադեշ նշանակում է «բենգալացիների երկիր»: Այդ երի-

տասարդ պետությունը կազմավորվել է 1971 թ

«Բենգալացիների երկրում» կլոր տարին տաք է երբ մեզ մոտ ամառ է, այնտեղ օվկիանոսից քամիներ են փչում, և օրեր շարունակ անդադար, հորդ անձրև է տեղում Այդ ժամանակ մեծ ու փոքր անհաշիվ գետերը վարարում են, և նրանց արգավանդ բերուկները պարարտացնում են դաշտերը:


«Բենգալացիների երկիրը» համեմատաբար փոքր տարածք ունի, բայց բնակչությունն ավելի շատ է, քան մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում կամ Իտալիայում: Դրա համար էլ երկիրը խիտ է բնակեցված՝ Բենգալացիների մեծ մասն ապրում է գյուղական վայրերում: Տները կառուցում են անպայման բարձրադիր տեղում հնդկե-

ԲԱՆԳԼԱԴԵՇ

Տարածությունը 143 900 քառ.կմ
Բնակչությունը 89 940 000 մարդ

Ա Ս Ի Ա

ԲԱՆԳԼԱԴԵՇ



- Նավթավերամշակման արդյունաբերություն
- Բամբակե գործվածքների արդյունաբերություն
- Ջուտի արդյունաբերություն
- Շաքարի արդյունաբերություն
- Այլովոլ գագերի արդյունահանում
- Հիդրոէլեկտրակայաններ
- Բրինձ
- Թե
- Ջոտ
- Շաքարեղեգ

յավառանգիստներ

20 00 կ

Բանջարանոց



Դաքա
քաղաքը

ղեգից փայտից կամ աղյուսից տանիքները ծածկում են ծղոտով արմավենու տերևներով իսկ ով հարուստ է թիթեղով Երբ գետերը վարարում են մարդիկ հաճախ միայն նավակներով են միմյանց այցելում Տները շրջապատված են դաշտերով և մրգի այգիներով ցանքի համար օգտագործվում է յուրաքանչյուր հողակտորը Ողողվող դաշտերում մշակում են բրինձ որը բեն գալացիների գլխավոր սնունդն է Մշակում են նաև բանջարեղեն ադամաթզենի (բանան) կոկոսյան արմավենի: Ընորիիվ այն բանի որ ջերմությունն ու խոնավությունն առատ են տարվա ընթացքում դաշտերից հավաքում են երկու և, նույնիսկ երեք բերք: Դաշտերը մշակելու համար օգտագործում են գոմեշներ, իսկ բրինձը ձեռքով են տնկում երկրում շատ ջուտ են աճեցնում Նրա երկար և դիմացկուն մանրաթելերից հյուսում են ճուպաններ պարկի գործվածք, գորգեր: Ջուտի բերքահավաքով և արտահանությամբ Բանգլադեշը աշխարհում առաջին տեղերից մեկն է գրավում: Արտահանում են նաև թեյ

Երկրում մեծ քաղաքներ գործարաններ և ֆաբրիկաներ գրեթե չկան Բանգլադեշի ամենամեծ քաղաքը մայրաքաղաք Դաքան է:

Բանգլադեշը հարևան երկրների հետ պահպանում է բարեկամական հարաբերություններ. *Հնդկաստանի* հետ կնքված է խաղաղության բարեկամության և համագործակցության պայմանագիր: Բանգլադեշը համագործակցում է Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների հետ

Հին արևելյան քաղաքի այգիներում տեղը նեղ էր գալիս որովհետև այնտեղ կողք կողքի աճում էին դեղձենին ու սեխը վարդենին ու ձմերուկը Այժմ ձմերուկը սեխը, դդումը լոլիկն ու վարունգը, տաք դեղն ու սմբուկը աճեցնում են առանձին դաշտերում, որոնք կոչվում են բանջարանոց, իսկ այդ բույսերը բանջարանոցային բույսեր կամ *բանջարեղեն*:

Իրանը Աֆղանստանը Սովետական Միության միջինասիական հանրապետություններն աշխարհի լավագույն սեխի հայրենիքն են Այդ երկրներում սեխը սիրել են վաղուց: Այն փոխարինել է ճաշին թե դաշտում աշխատելիս, թե հեռավոր ճամփորդության ժամանակ ով սեխ ուներ ճանապարհին ոչ ծարավ կզգար ոչ էլ քաղց: Սեխի հյութով քաղցրաբլիթներ էին թխում սեխով բուժվում էին:

Բայց առանց ջրի սեխ չես աճեցնի Հնում ոռոգման առուները քիչ էին և միայն հարուստներին էին պատկանում Նրանք կարող էին սպանել գյուղացուն, եթե նա ինքնակամ ջուր վերցնեք այնտեղից

Անցյալում ուզեցեք գյուղացին սեխի սերմը գետեղում էր ուղտափշի արմատա կոճղի ձեղքի մեջ, որպեսզի ուղտափշի հզոր արմատները ջուր հայթայթելով հողի խորքերից առաջին օրերը սնեին սեխի կին Այժմ ուզեցեք կան սեխը «դայակ» ուղտափշի կարիք չունի: Ջուրն առատորեն կոլտնտեսային բանջարանոցներ է հոսում ջրանցքներից, որոնք կառուցել է ազատագրված ժողովուրդը

Պովոլժիեի Հյուսիսային Կովկասի Մոլդավիայի բանջարանոցներում առաջնությունը սեխից անցել է ձմերուկին Հնում փառաբանված էին աստրախանցի «ձմերուկի վարպետները» Ձմերուկի սերմերը Վոլգայի ափին գտնվող նավահանգրստային քաղաք էին բերել Արևելքի վաճառականները Եվ կանաչով ծածկվեցին բանջարանոցները Աստրախանի մոտա կայքում իսկ հետո նաև ամբողջ ստորին Վոլգայի երկայնքով:

Վոլգյան ձմերուկները տանում էին ոչ միայն մայրաքաղաք ցարի սեղանին մատուցելու այլև արտասահման Փարիզ Ռուսական տափաստանային ձմերուկներն ավելի քաղցր էին քան ֆրանսիականները, որոնք աճում էին մերձծովյան խոնավ կլիմայի պայմաններում: Արևի տակ պտղի մեջ կուտակվում է շաքար իսկ երաշտին



Սեխ



Դդում



Սմբուկ



Չմերուկ



Տաքդեղ

ձմերուկը սովոր է Աֆրիկայում, Կալահարի կիսաանապատում, որը ձմերուկի հայրենիքն է անձրևները խիստ սակավ են

Կալահարիում կան քաղցրահամ անհամ կամ դառը վայրի ձմերուկների ամբողջ մացառուտներ ժամանակակից մշակովի ձմերուկը խոշոր է ու քաղցր և պահպանել է աֆրիկականի երաշտադիմացկունությունը: Սովետական Միությունում ձմերուկի բանջարանոցներ կան նույնիսկ Կարակում անապատի ավազուտներում: Մեր հանրապետությունում գերակշռում են ձմերուկի կարմրամիս սորտերը: Տեղական սորտերից առավել տարածված են Էջմիածնի շրջանում մշակվող միջին վաղահաս «Սուլթանը» և Արտաշատի ու Էջմիածնի շրջաններում մշակվող ուշահաս «Չիթը»:

Բանջարեղեն

Բանջարեղենը որ խոտանման բույսեր են մարդու սննդի մեջ մուտք է գործել հազարավոր տարիներ առաջ. Մարդիկ ուտում են դրանց որևէ հյութալի մասը գազարի բողկի շաղգամի մսոտ արմատապտուղը կաղամբի և հազարի (սալաթ) տերևները ծնեբեկի ընձյուղները, ծաղկա կաղամբի ծաղկաբույլերը խավարծիլի տերևակոթուկները լոլիկի (պոմիդոր) վարունգի սմբուկի (բադրիջան) պտուղները

Բանջարեղենը ոչ միայն համեղ է այլև շատ օգտակար Բեռնային շրջանից այն կողմ կիտրոնենի չի աճում, բայց այնտեղի կլիման միանգամայն հարմար է շաղգամակաղամբի համար: Շաղգամակաղամբի մեջ C վիտամինի քանակն ավելի պակաս չէ քան կիտրոնի մեջ իսկ այդ վիտամինը խիստ անհրաժեշտ է հյուսիսաբնակներին լնդախտով չհիվանդանալու համար. նրանով հարուստ է նաև թթու դրած կաղամբը

Վաղահաս ցրտադիմացկուն շաղգամը հասել է նույնիսկ սառցապատ Գրենլանդիա Ինչու է շաղգամի միջուկը նա ընջագույն Շաղգամի մեջ կարոտին կա Դա դեռևս A վիտամին չէ որը երեխաներին օգնում է աճելու պաշտպանում է հավկուրությունից և վարակիչ հիվանդություններից: Դա նրա «կիսաֆաբրիկատն» է որը մարդու օրգանիզմում փոխակերպվում է A վիտամինի: Կարոտին կա տաք դեղում լոլիկում կարմրանարնջագույն բոլոր բանջարաբույսերում: Սակայն ամենից վաղ այն հայտնաբերել են գազարի

մեջ Լատիներեն գազարին ասում են «կարոտա», այստեղից էլ «կարոտին» անվանումը

Բանջարեղենը պարունակում է կալցիումի, մանգանի, նատրիումի, երկաթի, ֆոսֆորի և հատկապես կալիումի հանքային աղեր, որոնք խիստ անհրաժեշտ են մարդուն: Երկաթի աղերը շատ են դոմի և լոլիկի մեջ Այդ աղերը հարկավոր են, առանձնապես, երեխաներին և տարեց մարդկանց

Հազարը և վարունգը ախորժաբեր են, բուրավետ տաքեղը յուրօրինակ համ է տալիս կերակուրներին

Երբ մարդը միս է ուտում, ուժերն ավելանում են, որովհետև միսը հարուստ է սպիտակուցներով: Լոբին, ոլոռը, ընդավորները անվանում են բուսական միս. նրանք նույնպես հարուստ են սպիտակուցներով

Բանջարեղենը ոչ միայն պահպանում է մարդու առողջությունը, այլև օգնում է ապաքինվելու հիվանդներին: Հին ժամանակներում շատ մեծ տեղ էին տալիս, օրինակ, սոխին համարելով այն հազար ու մի հիվանդության դեղ Ինչու են սոխ մաքրող մարդու աչքերն արցունքոտվում: Կտրված սոխուկից արտադրվում են ցընդող նյութեր՝ եթերայուղեր, որոնցով բույսը պաշտպանվում է. Սովետական գիտնական Բ Պ Տոկինն ապացուցել է, որ բույսերի, մասնավորապես, սխտորի, սոխի, կծվիչի (ծովաբողկ) ցնդող գոյացումները, որոնց նա անվանել է ֆիտոնցիդներ, ոչնչացնում են վնասակար բակտերիաներին: Ֆիտոնցիդներն ընդունակ են պաշտպանելու ոչ միայն բույսը, այլև մարդկանց.

Երկրագնդի վրա հայտնի են ավելի քան հարյուր տեսակի բանջարաբույսեր: Միանգամից չէ, որ նրանք զբաղեցրել են իրենց տեղը դաշտում և բանջարանոցում Հին հույները վայրի մաղաղանոսից պսակներ էին հյուսում օլիմպիական խաղերում հաղթողների համար: Հնդկացիների լոլիկը Եվրոպայում սկզբում տնկում էին ծաղկաթմբերին գեղեցկության համար Ամերիկայից բերված առաջին լոլիկի պտուղները դեղին էին, և իտալացիներն այն անվանեցին «պոմո դորո»՝ ոսկե խնձոր Այստեղից էլ առաջացել է լոլիկի մեր առօրյա անվանումը պոմիդոր

Մարդու հոգատար ձեռքերով վայրի ձևերից վերափոխվելով մշակովի բույսերի՝ բանջարեղենի տեսակները խիստ փոխվել են Գազարը կարմրել է, նրա մեջ ավելա-



Սոխ

Սխտոր



Գազար



Վարունգ




Լոլիկ



Կաղամբ

ցել է կարոտինի քանակը խիստ մեծացել է և արմատապտուղը: Վայրի բողկը առնետի պոչից հաստ չէ իսկ ճապոնական ժամանակակից բողկը 30 կգ քաշ ունի և այն դժվար է ձեռքերով պահելը Ավելի մեծ մինչև 100 կգ քաշ ունեն հսկա դոմաները Աշխարհում դոմի պտղից ավելի խոշորը չկա:

Նման հրաշալի փոխակերպման համար անշուշտ հազարամյակներ էին պետք Այդ հազարամյակների ընթացքում մարդիկ սերմացուի համար ընտրում էին ամենալավ բույսերը և աստիճանաբար երևան էին գալիս տարբեր բանջարաբույսերի տեղական հիանալի սորտեր: Իսկ երբ երկրագործներին օգնության եկավ գիտությունը, ստեղծվեցին և շարունակ ըստեղծվում են նորանոր սորտեր:



Բաշինջաղյան Գևորգ Զաքարի

1857 —
1925

Հայաստանի պետական պատկերասրահում որը գտնվում է Երևանում, Լենինի հրապարակում և ուր պետականորեն ժողոված են ազգային կերպարվեստի անգին ու անկրկնելի գոհարներ գրեթե մի ամբողջ սրահ է տրամադրված հայ նկարչության մեծ վարպետներից մեկին Գ Բաշինջաղյանին

Բաշինջաղյանը ծնվել է Վրաստանի գեղատեսիլ անկյուններից մեկում Սղնախ փողոցիկ գյուղաքաղաքում: Նկարչությամբ հրապուրված պատանի Գևորգը թողնում է տեղի գավառական դպրոցը դուրս գալով երրորդ դասարանից ու սկսում նկարել Նկարում է տան կահկարասիների վրա պատերին դռներին ու լուսամուտներին և այնպես լավ որ 14 տարեկան հասակում արդեն նրա համբավը տարածվում է Սղնախից դուրս Շուտով նա ընդունվում է Թիֆլիսի նկարչական ուսումնարանը ցուցաբերում բացառիկ ունակություններ:

1880 թ ավարտում է ուսումնարանը և նյութական ծանր վիճակը (հայրն այլևս չկար մայրը փոխադրվել էր Թիֆլիս և նրա խնամքի տակ էր) նրան ստիպում է զբաղվել հանրահայտ նկարիչների գործերի պատճենահանությամբ

Խնայելով մի փոքրիկ գումար նկարիչը նույն թվականին ընդունվում է Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիան Այս

տեղ ուսանելու երեք տարիները շփումը նշանավոր վարպետների հետ մեծ նշանակություն են ունենում նկարչի կյանքում: Ակադեմիան ավարտելու առթիվ ներկայացրած «Կեչիների պուրակը» աշխատանքն արժանացավ արծաթե մեդալի ազդարարելով մեծ նկարչի ծնունդը:

Ակադեմիան ավարտած Գևորգը վերադառնում է ծննդավայրը մի շարք կտավներ ստեղծում, 1883 թ նախաձեռնում առաջին ցուցադրությունը Թիֆլիսում: Սակայն առաջին անհատական ցուցահանդեսը կազմակերպում է երկու տարի անց Վենետիկ Միլան Ֆլորենցիա կատարած

«Սևան
Անձրևային
օր»





«Վաղ գարուն»

ուղևորությունից հետո Ընդունելությունը բացառիկ էր «Նոր դար» լրագրում դրվատական հոդված է գրում հայտնի դերասան Պետրոս Ադամյանը

Մի առիթով նկարչի մասին Ալեքսանդր Շիրվանզադեն գրել է «Ես տեսա շատ գեղեցիկ պեյզաժներ, բայց նրանցից շատ քչերում իմ աչքը կարողացավ նկատել օդի այնքան թափանցիկություն ջրի և լույսի այնքան հաջող միավորություն որքան Բաշինջաղյանի նկարների մեջ»:

1900 թ նկարիչը ֆրանսիական մամուլի գովեստի խոսքերն է վաստակում իր չորս աշխատանքների («Ամպեր», «Կոչկայի լիճը», «Դարիալի կիրճը», «Արարատ») համար, որ ցուցադրել էր Փարիզում 1911 թ Պետերբուրգում կազմակերպված ցուցահանդեսին նրա ներկայացրած կտավները («Խաչատուր Աբովյանի տնակը Քանաքեռում», «Ալազանի հովիտը», «Էջմիածնի լիճը» «Աևանը վերջալույսին») դիտելուց հետո մի ռուս քննադատ ասել է. «Բոլոր հինգ հարյուր նկարների մեջ ճշմարիտն ասած ամենից առաջ աչքի են ընկնում Բաշինջաղյանի բարձր տրամադրությամբ ոգեշնչված բնանկարները»:

Գ Բաշինջաղյանի ցուցահանդեսները հետագայում մեծ հաջողություն են ունեցել Մոսկվայում Կոստանդնուպոլսում Բաքվում Երևանում և այլուր նկարչին իրենց բանաստեղծական ձոներն են հղել Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Օստրոյանը: Ապրելով Հայաստանից դուրս, հիմնականում Թիֆլիսում, նա ջերմ սիրով էր կապված հայրենի երկրի, նրա մարդկանց ու մշակույթի հետ: Ինչպիսի ոգեշնչվածությամբ է նա նկարել Հայաստանը

Ուր օր էջմիածնում կտուրի վրա է քնել, որպեսզի արշալույսին տեսնի Արարատի գագաթը, ժամերով քայլել է Սևանի ափին լիճը լուսնյակ գիշերով դիտելու համար, Արագածի փեշերն է ելել կամ նստել Անիի ավերակների առջև Ու նկարել է բնության խաղաղ տրամադրությունը խոր ապրումներով, բանաստեղծական հուզականությամբ, հայրենիքի հանդեպ ունեցած սիրով

Սովետական իշխանության տարիներին մեծ բնանկարչի կտավները ցուցադրվել են մեր հանրապետության խոշոր քաղաքներում, Մոսկվայում, Լենինգրադում, Ռիգայում, Թբիլիսիում և այլուր

Գ Բաշինջաղյանը նաև գրող էր, պատմվածքների, նովելների, ակնարկների, պիեսների, հուշագրությունների, բանասիրական հետաքրքրական ուսումնասիրությունների հեղինակ: Նրա աճյունը հանգչում է Սայաթ-Նովայի շիրիմի կողքին, Թբիլիսիի Սուրբ Գևորգ հայկական եկեղեցու գավթում

Բառբար

Այս ծառը, թեև ապրում է 4—5 հազար տարի, այնքան էլ բարձր չէ 18—25 մ: Փոխարենն ուղղակի զարմանահրաշ է բնի հաստությունը շրջանագիծը հասնում է 25 մ-ի: Բառբարը գրկելու համար մի ամբողջ դասարան պետք է միմյանց ձեռք բռներ «Բառբարը մեծ է, բայց նրանից փոքրիկ խարույկ իսկ չես վառի», — ասում են աֆրիկացիները:

Ինչպե՞ս թե: Այդպիսի խոշոր ծառից կարելի է այնքան վառելափայտ մթերել Բայց արի ու տես, որ այդ վառելափայտն անօգուտ կլինե՞ր՝ բառբարի բնափայտը չի այրվում:

Բառբարն ուրիշ առանձնահատկություններ էլ ունի Օրինակ, տերևաթափ է լինում ոչ թե ձմռանը, այլ ամռանը Աֆրիկայում, ուր աճում է բառբարը, ամռանը շատ շոգ է Իսկ տերևները խոնավություն են գոլորշիացնում Բառբարն էլ, որպեսզի քիչ խոնավություն կորցնի, շոգին է տերևաթափ լինում: Իսկ ձմռանը, երբ սկսվում է անձրևների շրջանը, նորից ծածկվում է թաթաձև տերևներով և խոշոր, մինչև 20 սմ տրամագիծ ունեցող սպիտակ ծաղիկներով: Բառբարի պտուղները երկար են, վարունգանման, հյութալի, քաղցրահամ միջուկով, որը կարելի է ուտել



Բառքարի տերևներից թել են պատրաստում, որից հյուսում են գործվածքներ ու պարաններ:

Բառախաղ

Եթե փորձենք այս բառը բացատրել իր բաղադրիչներով բառ և խաղ, ապա այն կնշանակի բառերի խաղ կամ բառերով խաղ եվ իսկապես, հնարավոր է խաղալ ոչ միայն խաղալիքներով գնդակով, պարանով կամ պահմտոցի, այլև բառերով:

Բոլորս էլ կարող ենք բառախաղ խաղալ Դրա համար պետք է գտնել այնպիսի բառեր, որոնց տառերի վերադասավորումով կազմվեն նոր բառեր, ինչպես սրահ-հարս, ժանր-նժար, տնակ-տանկ, վիճակ-կավիճ, ագռավ-գավառ, վտակ-կտավ, մկրատ-մտրակ Մի այլ դեպքում պետք է գտնել այնպիսի բառեր, որոնք վերջից կարդալիս դարձյալ իմաստ արտահայտեն կատակ, քաղաք, ապա, թուֆ, լալ, շիշ, պապ, ինչպես նաև լերկ-կրել, առած-ծառա, շուն-նուշ. Կամ, ասենք, որևէ բառի, օրինակ, երիտասարդ, տառերով կազմել նոր բառեր՝ սար, սարդ, դաս, դար, տեր, տարի, սեր, իր և այլն:

Բայց բառախաղ բառն ավելի հաճախ գործածվում է այլ իմաստով որպես բառերի կապակցության ձև, արտահայտչական միջոց: Բառախաղերի հանդիպում ենք թե բանավոր և թե գրավոր խոսքում, հատկապես գեղարվեստական գրականության մեջ: Ահա մի օրինակ

«— Մոգին ուզում ես
— Ես

- Քանի մանեթ կըտաս
- Տաս...
- Հիմի կըտաս թե չէ
- Չէ...
- Դե էգուց կըգամ որտեղից որ է ճարի
- Արի »:

(Հովի Թումանյան)

Իսկ ինչպես են ստեղծվում բառախաղերը

Մի դեպքում բառախաղերը կարող են ստեղծվել նմանահունչ կամ նույնանուն բառերով դրանց արտաքին հնչունական նմանությամբ օրինակ, «Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ով աղա» (ժողովրդական առած):

Եվ աշունն էլ թող գա բարով
Թող գա առատ բերք ու բարով.

(Հ. Սահյան)

Մեկ այլ դեպքում բանաստեղծական տողերի համահունչ վերջավորությամբ, որով ստեղծվում է իմաստային խաղ

Կյանքից հարբած անցավոր
Ահա դարձյալ անցավ օր
Դու վազում ես դեպի մահ—
Մահը բռնում հանցավոր:

(Հովի. Թումանյան)

Կամ էլ ստեղծվում են բառերի, հատկապես հականիշ բառերի անսպասելի զուգակցումներով, որ հնչում են իբրև սրամիտ խոսք

Հարկավոր չէին ոչ ինձ ոչ էլ քեզ
Ոչ իմ անհամեստ համեստությունը,
Ոչ իմ անիմաստ իմաստությունը:

(Հ. Սահյան)

Բառախաղերն ասելիքը դարձնում են աշխույժ, կենդանի, բազմազան:

Բառարան և տեղեկատու

Մարդը չի կարող հիշողության մեջ պահել ամեն բան անցյալի և ներկայի իրադարձությունները, փաստերը, տարեթվերն ու անունները: Եվ երբ հարկավոր է լինում որևէ հարցի պատասխանն իմանալ կամ տեղեկանք ստանալ, մարդը դիմում է բառարանների և տեղեկատուների օգնությանը:

Այդ գրքերը և ժլատ են, և առատաձեռն, դրանցում չկա ավելորդ ոչինչ, բայց կան անհրաժեշտ շատ և շատ բաներ Նրանցից մեկը ձեզ կհուշի գետերի, քաղաքների, ծովերի ու լեռների անունները, մյուսը կպատմի հիվանդությունների ու դրանց

բուժման երրորդը բույսերի կամ մեքե նաների մասին: Բառարաններ էլ կան որ ձեզ կբացատրեն անծանոթ բառի իմաստն ու ծագումը

Բառարաններում բառերը դասավորված են ըստ այբուբենի իսկ տեղեկատուներում ըստ թեմաների

Այն բառարանները որոնցում բացատրվում է բառերի իմաստը կոչվում են բացատրական

Ռուս նշանավոր գիտնական գրող ու բժիշկ Վ. Ի. Դալը հավաքել է 200 հազար ռուսերեն բառ և բացատրել յուրաքանչյուրի իմաստը

Կան նաև երկլեզվյան եռլեզվյան և բազմալեզվյան բառարաններ որոնցում մեկ լեզվի բառը թարգմանվում է մեկ կամ մի քանի այլ լեզուներով: Այս բառարաններն անհրաժեշտ են նրանց ովքեր ուզում են այլ լեզուներ սովորել կամ կարդալ ուրիշ լեզուներով գրված գրքեր: Մեզանից 800 տարի առաջ գրվել է Արիստակես Գրչի ուղղագրական բառարանը. 1926 — 1935 թվականներին հրատարակվեց ակադեմիկոս Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ը յոթ հատորով որտեղ մեծ գիտնականը ստուգաբանում է հայերեն բոլոր բառերի ծագումը. Շատ գործածական են Ստ. Մալխասյանցի քառահատոր «Հայերեն բացատրական բառարան»-ը Էդ. Աղայանի երկհատոր «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը Ա. Սուքիասյանի «Հայրց լեզվի հոմանիշների բառարան»-ը ՀՍՍՀ ԳԱ հրատարակած քառահատոր «Ռուս հայերեն բառարան»-ը և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»-ը Հ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական ուղղախոսական տերմինաբանական բառարան»-ը Ա. Ղարիբյանի և Գ. Շեկյանի «Դպրոցական ուղղագրական բառարան»-ը «Ամենախմաստունները» հանրագիտական բառարաններն են, ուր հավաքված են լինում մեր կյանքի բոլոր բեռնագավառներին, կարևոր իրադարձություններին, բնությանը, պատմությանը, տեխնիկային, գիտությանը, գրականությանը, արվեստին վերաբերող բառեր: Հանրագիտական բառարաններից ավելի «խելոք» են միայն համընդհանուր բազմահատոր հանրագիտարանները, որոնցում կարելի է մանրամասն իմանալ գրեթե ամեն ինչի մասին: Այդպիսին են «Սովետական մեծ հանրագիտարան»-ը («Большая Советская Энциклопедия»), «Հայկական սովետական հանրագիտարան»-ը և այլն

Բասկետբոլ

Բառարաններում և տեղեկատուներում կուտակված են լինում բազմաթիվ սերունդների ավանդն ու գիտելիքները Այդ գրքերը սովորեցնում են մեզ, խնայում մեր ժամանակն ու ուժերը, օգնում խույս տալու սխալներից այս կամ այն աշխատանքում


«Բասկետ» անգլերեն բառը նշանակում է «զամբյուղ»: Անցյալ դարի վերջին երբ հորինեցին այդ խաղը ներկայիս օղակով ցանցերի փոխարեն պատին ամրացնում էին առանց հատակի իսկական զամբյուղներ: Իսկ «բոլ», որը նույնպես անգլերեն է նշանակում է «գնդակ»


Բասկետբոլի գնդակը վոլեյբոլի և ֆուտբոլի գնդակներից ավելի մեծ է ու ավելի ծանր: Բայց եթե դուք բասկետբոլի գնդակ չունեք, կարող եք բազում բասկետբոլ խաղալ ֆուտբոլի կամ վոլեյբոլի գնդակով

Շատ երեխաներ կարծում են թե այդ խաղի համար անպայման հարկավոր է բարձրահասակ լինել Բասկետբոլիստին անշուշտ բարձր հասակն անհրաժեշտ է բարձրահասակ խաղացողն ավելի հեշտությամբ է գնդակը զամբյուղի մեջ նետում Սակայն լավ բասկետբոլիստներ կարող են դառնալ նաև միջահասակ և ցածրահասակ երեխաները որովհետև խաղում ամեն ինչ կախված է շարժունությունից դիմացկունությունից և արագ կողմնորոշվելու ունակությունից

Խաղի նպատակն է գնդակը ձեռքով հակառակորդի զամբյուղը նետելը որն ամրացվում է վահանին: Խաղում են 26X14մ չափերի հարթ ուղղանկյուն հրապարակում, երկու թիմ յուրաքանչյուրում հինգ հոգի: Բացի այդ ամեն մի թիմ ունենում է նաև հինգ պահեստային խաղացող: Թիմի կազմում լինում են կենտրոնական խաղացողներ հարձակվողներ և պաշտպաններ Եթե գնդակը զամբյուղն է նետվում խաղային իրադրությունից, թիմը վաստակում է երկու միավոր տուգանային նետումից մեկ միավոր Խաղն անց է կացվում երկու փուլով չափահասների համար փուլը տևում է 20 րոպե 13 — 14 տարեկան դեռահասների համար 12 րոպե Գնդակին բռնկեցով կամ ոտքով հարվածել չի կարելի 2ի թույլատրվում նաև ձեռքերով պահել կամ հրել հակառակորդին

Փոքր երեխաների համար կա այսպես կոչված մինի բասկետբոլ Այս խաղի





կանոններն ավելի պարզ են. 12X6 մ հրապարակ կարելի է գծել ուղղակի աս ֆալտապատ բակում Յուրաքանչյուր թի մից խաղին մասնակցում են չորս խաղացող ցանկության դեպքում կարելի է և ավելի

Բասկետբոլիստը պետք է կարողանա գնդակը ձգորիտ նետել կամ որսալ թե աջ թե ձախ ձեռքով Դրա համար օգտակար է օրինակ աջ և ձախ ձեռքերով նշանակետի մեջ փոքրիկ քարեր նետելը: Կարելի է նաև պատի վրա նշան անել և ցատկելով ջա նալ ձեռքով հասնել նրան Մարզվեցեք

Բասկետբոլի պատմության ամենահետաքրքիր մրցաշարերի սովետական բասկետբոլիստների

հաջողությունների մասին կարդացեք հետևյալ գրքում.

Алуевский В В На прицеле кольцо М «Физкультура и спорт», 1965

Բաստիլի գրավումը

Հուլիսյան այդ շոգ առավոտ Փարիզը համակված էր անսովոր հուզմունքով: Փողոցներում մարդկային հեղեղ էր: Բանվորները, արհեստավորները ուսանողները առևտրականները բոլորը շտապում էին դեպի քաղաքի կենտրոն այնտեղ ուր վեր էր խոյանում գորշ վիթխարի Բաստիլը

որ երբեմնի ամրոց էր իսկ այժմ բանտ Օդում թևածում էր համատարած մի ճիչ «Առջ ղեպի Բաստի-իլ»: Արևի տակ փայլատակում էին դանակների պողպատե սայրերը նիզակներն ու տեգերը: Մեկի ձեռքին մուշկետ էր, մյուսի կացին կամ մահակ երրորդը թափահարում էր ատրոճանակը իսկ ոմանք էլ տեղնուտեղը պատից պոկած աղյուսը կամ սալաքարը թմբուկները ահագանգ էին խփում «Դեպի Բաստիլ»

Ահա և Բաստիլը քարե ութ բարձր աշտարակներ 30 մետրանոց վիթխարահասակ ատամնավոր պատեր, շուրջը խոր խանդակ շղթայավոր ամբարձիկ կամըրջով Ֆրանսիական թագավորներն այդ ամրոցը կառուցել էին մայրաքաղաքի մատույցները պաշտպանելու նպատակով բայց հետո սկսեցին Բաստիլում բանտարկել բոլոր նրանց, ովքեր կհանդգնեին պայքարել թագավորների կամայականությունների դեմ կամ, նույնիսկ, ամենափոքր իսկ դժգոհությունը կարտահայտեին Երկաթե դռներով քարե նեղ խցերում տասնյակ տարիներով հեծում էին շղթայակապ կալանավորները: Քաղց ցուրտ խավար խոշտանգումներ Բաստիլ ընկնողն անհետանում էր ընդմիջտ

Ժողովրդի մեջ վաղուց էր ատելություն կուտակվել թագավորի և անբան պալատականների հանդեպ որոնք ապրում էին



ճոխության մեջ և քայքայում երկիրը Եվա հա եկավ պահը, երբ այդ ատելությունը դուրս հորդեց. վերսալում (Փարիզից ոչ հեռու) հավաքված ժողովրդական լիազորները որոշեցին հաստատել պետական նոր կարգ, սահմանափակել թագավորի իշխանությունը: Լյուդովիկոս 16-րդ թագավորը վարձկան զորքեր ուղարկեց նրանց դեմ Այդժամ դեպի Բաստիլ շարժվեց Փարիզի ողջ բնակչությունը նրանք ցանկանում էին գրավել այնտեղ թաքցրած գեները, ազատել բանտարկյալներին

Թնդանոթների կրակը կտրեց ամբարձիկ կամրջի շղթաները Մարդիկ ներխուժեցին ամրոց նրա վրա արդեն սպիտակ դրոշ էր ծածանվում կայազորը տեսնելով որ դիմադրությունն անօգուտ է հանձնը վեց Պահակները բերեցին բանտախցերի բանալիները: Համընդհանուր ցնծության մեջ ազատեցին բանտարկյալներին: Ժողովուրդը տոնում էր հաղթանակը Բաստիլը գրավված է: Անմիջապես գործի դնելով լինգերն ու քլունգները հաղթողներն ըսկըսեցին քանդել իրենց համար այնքան ատելի Բաստիլը

«Դեպի Բաստիլ» — հնչեց մի կոչ Փարիզի բանվորները չթափոթությունը, արհեստավորները շուրջ երեք հարյուր մարդ, նետվեցին դեպի բանտի դարպասները Կատաղի գրոհը շարունակվեց մի քանի ժամ Շատերն սպանվեցին կամ վիրավորվեցին Կերջապես ժողովուրդը ներխուժեց ամրոց Բաստիլի կայազորն անձնատուր եղավ

Մեկ տարի անց Բաստիլը հիմնահատակ կործանված էր

Այսպես, 1789 թ հուլիսի 14 ին Փարիզի աշխատավորներն ուժեղ հարված հասցրին թագավորական իշխանությանը.

Բաստիլի գրոհով և գրավումով սկսվեց հեղափոխություն որի հետևանքով երկիրը թոթափեց ազնվականների լուծը Դա մեծ հաղթանակ էր

Հուլիսի 14-ը Ֆրանսիայում ամեն տարի նշում են որպես ազգային տոն Այդ օրը մարդիկ դուրս են գալիս փողոց երգում են պարում նշում հաղթանակը: Դրա համար էլ ամրոցի պատից պոկված մի բեկորի վրա գրված է «Այստեղ պարում են»

Բարբառ

Հայերի մայրենի լեզուն *հայոց լեզուն* է Բայց բոլորս ենք նույն կերպ խոսում Իհարկե ոչ: Երևանցին ասում է ինչ ես լենինականցին ինչո՞ւ ես մշեցին իմա՞լ իս երևանցին ասում է սարից եմ գալիս լենի նականցին սարեն կուգամ Եվ այսպես շարունակ մեկն ասում է այստեղ մյուսը հոս Երրորդը՝ ըստեղ, չորրորդը էստեղ հինգերորդը Ֆոս վեցերորդը հուգա: Կամ տիկնիկ տիկին, տեկուն, պուպրիկ ախչիկ խըռժիկ հարսնուկ և այլն Այս բոլորն էլ հայերեն են բայց ոչ այն հայերենը որը սովորում ենք դպրոցում և որը կոչվում է գրական հայերեն Սրանք բարբառային ձևեր են որ գործածում է այս կամ այն բարբառով խոսողը

Իսկ ինչ է բարբառը.

Բարբառը ընդհանուր լեզվի ճյուղավորումն է որով խոսում են որևէ տարածքում ապրող մարդիկ: Բարբառը ուրեմն ինքնուրույն լեզու չէ Բարբառներում գործածվում են նույն հայերեն բառերը տարբեր արտասանությամբ խաղող-հավող հաղող հայր-հեր խեր ձյուն ձուն ձին քերականական տարբեր ձևերով (գնալու եմ-գնալ տեմ-քընալական էմ կեշթօմ-դի երթամ նիլացկան ըմ քալվեմ) Հայերեն բարբառների թիվը հասնում է շուրջ հինգ տասնյակի Բարբառը կոչում են այն տեղի անունով, որտեղ խոսում են այդ բարբառով Արարատյան Կարնո, Թբիլիսիի Ջեյթունի Մշո, Վանի խոյի, Ղարաբաղի Տիգրանակերտի և այլն Դրանք ավելի հաճախ տարբերակվում են ներկա ժամանակի կազմությամբ գրում եմ գրըմ եմ կգրեմ, գրիմգը, գրեմգը կ իրիս եմ կիրըմ եմ և այլն: Բարբառային տարբերությունները երբեմն այնքան շատ են որ մեկ բարբառով խոսողը դժվարությամբ կարող է հասկանալ մյուս բարբառով խոսողին Բերենք Հ Թումանյանի «Գիքորը» պատմվածքից մի փոքրիկ հատված

«Գյուղացի Համբոյի տունը կռիվ էր ընկել

Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիքորին տանի քաղաք մի գործի տա որ մարդ դառնա, աշխատանք անի: Կինը չէր համաձայնում:

— Չեմ ուզում, իմ քորփա երեխին էն անիրավ աշխարքը մի ագիլ չեմ ուզում — լալիս էր կինը»:

Այժմ տեսնենք թե ինչպես կհնչի այս հատվածը բարբառներով:

Մշո բարբառ. «Գեղածի Համբոի տունը կռիվ էր հընգի Համբոն գուզեր գուր տըսվերգու տարեգան Գիրկորին տաներ քաղակ գործի մե իղեր, օր մառտ դառներ, դադեր ու բաներ Կընիգ չըր հուզե

— Չըմ հուզի գիմ մադդաշ ճըծուն ինա գուլում աշխարկ մը թալե չըմ հուզի — գիլեր կընիգ»:

Մարաղայի բարբառ «Կեղեցի Համբոյը տունա կըռըվ էր ինգի Համբոն ուզելեր ուր տասներկու տարեկան Կիրիքօրին տանը քաղաք մե կօրծի տինի վօըր մարթ ըլը, աշխատը. Կընիկա չէր ուզելի:

— Չեմ ուզելի իմ քորփա գյեղային էն անտեր աշխարքա մի քիցի չեմ ուզելի — լալ էր կընիկա»

Բարբառները իրենց ծոցում պահում են շատ բառեր քերականական ձևեր որոնք օգնում են պարզելու մեր ժողովրդի անցյալը հայոց լեզվի զարգացման ու փոփոխման օրինաչափությունները

Բարբառներն ունեն արտահայտչական հարուստ հնարավորություններ որոնցից վարպետորեն օգտվում են մեր գրողները Բարբառների հետազոտությունը կարևոր նշանակություն ունի և օգնում է տվյալ ժողովրդի պատմության ազգագրության ուսումնասիրությանը

Բարդի

Հազիվ թե գտնվի մեկ այլ ծառ որն այնքան զովերգած լինեն հայ բանաստեղծները որքան բարդին Սովետահայ բանաստեղծ Համո Սահյանն օրինակ այսպես է գրում նրա մասին

Նազում ես ու շորորում գմրուխտե քո շորերում.

Շուք արած ճամփի վրա մանկության կանաչ արտի Քո կանչը գնգում է գիլ իմ սրտի խոր ձորերում իմ հեռու, հեռու հեռու Նաիրյան դալար բարդի

Գեղանկարչական կտավներում ու հայկական ժողովրդական երգերում նույնպես բարդին իր պատվավոր տեղն ունի: Հնարավոր է միթե պատկերացնել հայկական բնանկարն առանց երկնասլաց, գեղեցիկ բարդիների.

Իրոք հոյատեսիլ ու բրգաձև բարդիները չափազանց բնորոշ են մեր բնաշխարհին Դրանք 40 — 45 մ (հազվադեպ 60 մ) բարձրությամբ ծառեր են որոնց բնի տրամագիծը կարող է հասնել մինչև 1 մ ի Սաղարթը կարող է լինել բրգաձև վրանաձև, ցրված ձվաձև: Տերևները պարզ են

ամբողջաբեր կամ բլթակավոր: Նկատել էր անշուշտ, թե ինչպես գարնանը ապրիլին ասես ձյուն է գալիս Օդոմ բամբակի միլիոնավոր փաթիլներ են ճախրում դրանք բարդու սերմերն են հավելվածնե րով որոնք քամուց քշվում են հեռու և ընկնելով բարենպաստ պայմանների մեջ ծլում:

Բարդիները ցրտադիմացկուն են և շատ խոնավասեր Աճում են հիմնականում, առուների ու լճակների ափերին Հողի նկատմամբ պահանջկոտ են և լուսասեր


Հայտնի է բարդիների 100-ից ավելի տեսակ որոնցից 19-ը տարածված են Հայաստանում Բարդիներն աճում են արագ, տարեկան 1—1,5 մ. 10 տարեկան բարդին արդեն մինչև 10—15 մ բարձրությամբ խոշոր ծառ է Բարդիները երկարակյաց չեն, ապրում են ընդամենը 60—150 տարի

Բարդիների գրեթե բոլոր տեսակներն արժեքավոր են կանաչապատման համար քանի որ արագ աճող ծառեր են Դրանք լավ են դիմանում քաղաքի յուրահատուկ պայմաններին հատկապես ծխին գազերին, փոշուն:

Բնափայտը նույնպես մեծ կիրառություն ունի նրանից ստանում են թուղթ արհեստական մետաքս լուցկու հատիկներ նրբատախտակ, խաղալիքներ տնային գործածության իրեր են պատրաստում օգտագործում շինարարության մեջ

Հայկական ՍՍՀ Մեղրու շրջանում, Արաքս գետի ափին, աճում է տարատերև կամ եփրատյան բարդին՝ Այս զարմանալի

Բարդու ծառը տերևը, ծաղիկն ու սերմերը



ծառի վրա կարելի է տեսնել այն բոլոր ձևի տերևները որ հատուկ են ուռենիներին և բարդիներին Նման հետաքրքիր երևույթը քիչ բույսերի է հատուկ:

Բարդին ունի նաև բուժիչ հատկություն կեղևը և բողբոջները պարունակում են արժեքավոր էթերայուղեր Բարդին հին ժամանակներում համարվել է «կենաց ծառ» և պատկերվել է բրոնզե գոտիների արքայական սաղավարտների պաշտամունքային քանդակների ու որմնապատ կերների վրա Բարդին խորհրդանշել է ժողովրդի հավերժությունը և նրա կենսունակ ոգին:

Հին Հայաստանում եղել է սրբազան բարդիների անտառ և Բարդի անունով գյուղ

Բարեկամներ և ընկերներ

Լավ է երբ բարեկամներ ու ընկերներ ունես: Նրանց հետ քեզ ավելի վստահ ես զգում: Չէ որ ընդհանուր ուժերով կարելի է կատարել ուզածդ ամենածանր գործը

Բարեկամներով ազնիվ ու կտրիճ

Սարսափելի չէ աշխարհում ոչինչ

Երբ բարեկամը անկեղծ է, շիտակ

Նա չի խնայում իր կյանքը միակ

Այսպես է երգվում Ս Վ Միխայլովի խոսքերով ստեղծված ձեզ ծանոթ երգում: Մի անգամ դուք հիվանդացել և դպրոց չէիք գնացել: Անցավ մի քանի օր, դուք սկսեցիք ձանձրանալ, տխրել ու մենակ զգալ Ու շատ ուզեցիք տեսնել ընկերներին Եվ դա հասկանալի է ոչ ոք չի կարող ապրել առանց ուրիշ մարդկանց Եվ որքան ուրախացաք երբ ընկերներն այցի եկան ձեզ

Ընկերներին կապում են ընդհանուր գործերը: Մեր երկրում մարդիկ հենց նրա համար էլ միմյանց ընկեր են կոչում որ ընդհանուր գործ են անում հոգում են մեր հայրենիքի բարօրության մասին ունեն ընդհանուր նպատակ կոմունիզմի կառուցումը: Ընկերներ ենք մենք անվանում նաև արտասահմանցի կոմունիստներին, որոնց հետ միասին պայքարում ենք մարդկության լուսավոր ապագայի համար

Բարեկամը նա է որի հետաքրքրությունները, ձգտումները, հակումները նաև մերն են: Նրանից ոչ մի գաղտնիք չունենք Նա ոչինչ չի խնայում ընկերոջ համար

միշտ ամեն ինչ հասկանում է եթե դուք այդպիսի ընկեր ունեք, պահպանեցեք նրան, ամեն դատարկ բանի համար մի գծովեք հետը և միշտ պատրաստ եղեք օգնելու: Հավատարմությունն ընկերության մեծագույն օրենքն է

Բարոն Մյունխհաուզեն

Երկու հարյուր տարի առաջ Գերմանիայում մի բարոն Մյունխհաուզեն էր ապրում Նա գլխին ծիծաղաշարժ, բարալիկ հյուս քով կեղծամ ուներ և պճնամուլի պես էր հագնվում:

Երեկոյան նրա մոտ հավաքվում էին ընկերներն ու հարևանները և բոցկլտացող բուխարու շուրջը նստած լսում հյուրասեր տանտիրոջ պատմությունները ժամանակին նա քաջարի զինվորական էր եղել և շատ էր ճամփորդել Մյունխհաուզենի հիշողությունները բարձրաձայն քրքիջ էին՝ առաջ բերում այնքան որ անհավանական էին երիտասարդության տարիների նրա արկածները:

Ահա, թե ինչպիսի հսկա ճուտ դուրս եկավ ձկից. Սա բարոն Մյունխհաուզենի բազմաթիվ անսովոր պատմություններից մեկն է միայն: Նկարիչներ Մ Սկոբուլի և Ա Ելիսեևի նկարը



Մի անգամ որսի ժամանակ նա եղջերուի վրա կրակում է բալի կորիզով, որովհետև մոտը գնդակ չուներ: Մեկ տարի անց Մյունխհաուզենը նորից է հանդիպում այդ եղջերուին: Կենդանու ճակատին բուսել էր հասուն բալերով ծանրաբեռնված մի հրաշալի բալենի: Այս անգամ արդեն որսորդը անուշ արեց և եղջերուի տապակած միս, և բալի կոմպոտ

Այսպիսի մի դեպք էլ է եղել. Մյունխհաուզենի վրա հարձակվում է կատաղած մի շուն. Բարոնն էլ վերցնում և ուսերից վայր է նետում ծանր մուշտակը: Գազազած շունը հարձակվում է դրա վրա. Մուշտակը կատաղում է և պատառ-պատառ անում բարոնի բոլոր հագուստները, նույնիսկ նոր համազգեստը: Բարոնն ստիպված գնդակահարում է մուշտակին:

Մյունխհաուզենը ընկերներին պատմում էր նաև, թե ինչպես է մի անգամ կենդանի գայլից տիկ հանել, ինչպես է թռել թնդանոթի արկին նստած կամ Լուսին մագլցել բակլայի երկար ցողունով Իսկ մի անգամ էլ բարոնն ինքն իր մազերից բռնած իրեն դուրս է քաշել ճահճից

Բարոնի արկածները նկարագրող գիրքը գրել է գերմանացի գրող Է Ռասպեն

Որոշ գիտնականներ ենթադրում են, որ նա գրի է առել ինչ-որ ժամանակ իրոք ապրած Մյունխհաուզենի պատմածները:


Ուրիշները գտնում են, որ Ռասպեն ժողովել է ժողովրդական ծիծաղաշարժ պատմությունները պարծենկոտ ռազմիկի մասին և ինքն է հորինել բարոն Մյունխհաուզենին: Մյունխհաուզենի զարմանալի ու անհավանական արկածների մասին գիտեն աշխարհի բոլոր երեխաները. Ախր չափից դուրս հետաքրքրաշարժ արկածներ էր հորինում նա և դեռ հավատացնում էլ էր որ ինքն աշխարհի ամենաճշմարտախոս մարդն է

«Բարոն Մյունխհաուզենի արկածները» գիրքը թարգմանվել է նաև հայերեն և լույս տեսել մի քանի անգամ, վերջին անգամ 1978 թ. Դուք կարող եք գրադարանից վերցնել ու կարդալ այն

Բաուման Նիկոլայ Էռնեստովիչ

1873 —
1905

Այդ օրը ոստիկանները վխտում էին Կիևի կայարանի շուրջը, ուշադիր զննում յուրաքանչյուր ուղևորի Օրը ցերեկով



բանտից փախել էին մի խումբ հեղափոխական բուլշևիկներ:

...Բազում ճամպուռներից կքած բեռնակրի ետևից վազոն մտավ մի հարուստ օտարերկրացի Արծաթե մի դրամ մեկնելով աստիճանների մոտ տնկված լրտեսին նա կոտրատված ռուսերենով ջուր խնդրեց: Լրտեսը շփոթվեց խոնարհվեց և նետվեց ջուր բերելու Իբրև պարզև ուղևորը նրան թողեց դրամի մանրը և մի հաստ սիգար

Բայց հենց այդ «հարուստին» ռուս հայտնի հեղափոխականին էլ որոնում էին ոստիկանները Նրա իսկական ազգանունը Բաուման, գիտեին միայն Վ. Ի. Լենինը և մի քանի ընդհատակայիներ Ուրիշներին նա հայտնի էր Գրաչ Եվգրաֆիչ, Պոլետակ, Վիկտոր, Սորոկին ծածկանուններով

Ինչի համար էին այդ ծածկանունները Ցարական իշխանությունները դաժանորեն հետապնդում էին հեղափոխականներին հատկապես լենինյաններին Նրանց բանտ էին նետում շղթաներ հագցնում և ուղարկում տաժանակրության, մահապատժի ենթարկում Եվ հանուն ժողովրդի ազատագրության մարտնչողները, ոստիկանության ճանկը չընկնելու համար ըստիպված էին թաքցնելու իրենց իսկական ազգանունները հաճախակի տեղափոխվելու տեղից տեղ

Նիկոլայ Բաումանը ցարիզմի դեմ պայքարին ներգրավվել է դեռևս ուսանողական տարիներին Կազմակերպում էր գաղտնի խմբակներ բանվորներին ծանոթացնում *Մարքսի* ուսմունքին կտրում անցնում էր սահմանը և փոխադրում «Իսկրա» լենինյան թերթը. Նա դարձել էր Մոսկվայի հեղափոխականների ղեկավարը Ար

տասովոր քաջության և աննկուն կամքի տեր այդ մարդը կատարում էր Լենինի ամենադժվարին հանձնարարությունները:

Շատ անգամ էին Բաումանին բանտ նետել: Բայց աներևակայելի հանդգնությամբ Գրաչը (հայերեն սերմնաքաղ) դուրս էր թռչում այդ վանդակներից

1905 թ հոկտեմբերն էր առաջին ռուսական հեղափոխության թեժ պահը Կուսակցության հանձնարարությամբ Բաումանը դրոշը ձեռքին կառքով գնում էր բանվորների բազմահազարանոց շարասյան առջևից Տագանյան բանտից ազատելու հեղափոխականներին Հանկարծ ոստիկանության գործակալը երկաթե մի խողովակով ուժեղ հարվածեց նրա գլխին..

Ողջ աշխատավոր Մոսկվան էր քայլում իր հեղափոխական առաջնորդի աճյունի ետևից: Նրա մահն էլ ավելի բորբոքեց ատելությունը ցարիզմի նկատմամբ

Սովետական մարդիկ հարգում են հիասքանչ հեղափոխականի հիշատակը նրա անունով են կոչվում Մոսկվայի մի խոշոր շրջան, փողոց, հրապարակ և բուհ: Բաումանի հրապարակի պուրակում մի հուշարձան է կանգնած ոգեշնչված դեմքով մարդը ձեռքին սեղմում է լենինյան «Իսկրան»: Այսպիսին է մնացել և է Բաումանը ժողովրդի հիշողության մեջ

Կարդացե՛ք Ն. Է. Բաումանին նվիրված հետևյալ վիպակը.

Мстиславский С. Л., Грач — птица весенняя, М «Дет лит», 1967

Բաքվի 26 կոմիսարներ

1918 թ սեպտեմբերի 20-ի գիշերը հեռավոր Ախշա-Կումայի ավազուտներում կանգ առավ զինված պահապաններով շրջապատված մի գնացք Վազոններից դուրս բերեցին խոշտանգված 26 մարդու Որոտացին գնդացիների ու հրացանների համազարկերը, որոնց աղմուկի մեջ լսվում էին հպարտ բացականչություններ «Մենք մեռնում ենք հանուն կոմունիզմի, կեցցե՛ կոմունիզմը»:

Մարդասպաններն շտապում էին նրանց չհասցրեցին թաղել բոլոր դիակները Վաղ առավոտյան արևը բարձրացավ բարկ ավազուտների վրա՝ որպես լուռ վկա հակա հեղափոխականների քստմունքի ոճրագործության և հավիտենական պսակ հերոս



«Անձահ լե-
նինյաննե
րը», նկարիչ
Գ Մնացա
կանյան

ների անթաղ շիրիմներին. 1920 թ սեպտեմբերին, 26 կոմիսարների գնդակահարության երկրորդ տարեդարձին, նրանց աճյունները տեղափոխվեցին Բաբու և հանդիսավոր պայմաններում հողին հանձնվեցին վայրն անվանվեց «26 կոմիսարների հրապարակ»: Այժմ այդտեղ 26 մարտիկների եղբայրական շիրիմներին կանգնեցված է մեծ կոթող-հուշարձան հավերժական կրակով

Ովքեր էին նրանք, մռայլ անապատում գազանաբար սպանված այդ հերոսները, որոնք անմահացել են ազատասեր ժողովուրդների սրտերում: Ահա նրանց անունները Ս Գ Շահումյան, Պ Ա Զափարիձե, Մ Ա Ազիզբեկով, Ի Տ Ֆիլիտով, Ի Վ Մալիգին Գ Ն Կորգանով (Ղորղանյան) Յա Դ Զևին, Մ Հ Վեզիրով, Գ Կ Պետրով, Ա Մ Ամիրյան, Մ Վ Բասին, Ս Գ Հովսեփյան, Վ Ֆ Պոլուխին, Բ Հ Ավագյան, Ի Յա Գաբիշև, Է. Ա Բերգ, Ա. Ա Բորյան Մ Ռ Կոզանով, Ա. Մ Կոստանդյան Ա Ա Բոգդանով, Ս. Ա. Բոգդանով, Ի. Պ Մետաքսա, Ի Ա Միշնե, Ֆ Ֆ Սոլնցև, Ի Մ Նիկոլաշվիլի, Թ Մ Ամիրյան (Ամիրով) Նրանք տարբեր ազգերի ու ժողովուրդների զավակներ էին ութը հայ, վեցը ռուս, երկուսը վրացի, երկուսն ադրբեջանցի, վեցը՝ հրեա, մեկը լատիշ, մեկը՝ հույն, ամենահասակավորը 45 տարեկան էր, ամենաերիտասարդը՝ 22:

Բաբվի կոմիսարների հերոսական կյանքն անխզելիորեն կապված է *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխու-*

յան սովետական իշխանության համար մղված պայքարի պատմության հետ Ոգեշնչված Մեծ Հոկտեմբերի հաղթանակով և կատարելով Վ Ի Լենինի ցուցումները Բաբվի պրոլետարիատը Ս Շահումյանի Պ Զափարիձեի Մ Ազիզբեկովի, Ի Ֆիլիտովի, Գ Կորգանովի և ուրիշների գլխավորությամբ Անդրկովկասում առաջինը բարձրացրեց սոցիալիստական հեղափոխության դրոշը և 1917 թ նոյեմբերի ըսկզբին Բաբվում հռչակեց սովետական իշխանություն, իսկ 1918 թ ապրիլի 25-ին Ս Շահումյանի գլխավորությամբ կազմվեց Բաբվի ժողովրդական կոմիսարների խորհուրդը Բաբվի կոմիսարները Վ. Ի Լենինի անմիջական ցուցումներով Բաբվի պրոլետարիատի ու աշխատավորական լայն զանգվածների օգնությամբ իրականացրին սոցիալիստական մի շարք միջոցառումներ ղեկբերներ հրապարակվեցին նավթարդյունաբերության, բանկերի ու Կասպիական առևտրական նավատորմի ազգայնացման, հողերի բռնագրավման և գյուղացիներին հանձնելու մասին: Հիմնարկ-ձեռնարկություններում մտցվեց բանվորական հսկողություն, Ց-ժամյա աշխատանքային օր, բարձրացվեց աշխատավարձը

Վ Ի Լենինը իր նամակներում կոնկրետ խորհուրդներ և ցուցումներ էր տալիս նավթային տնտեսության կազմակերպման վերաբերյալ Սովետական Ռուսաստանը նավթարդյունաբերության կարիքների համար բաց թողեց 100 մլն ռուբլի: Հա-

տուկ հանձնաժողով ուղարկվեց Բաքու նավթի արդյունահանումն ու արտահանումը կանոնավորելու, որովհետև այն կեն սական նշանակություն ունեցող Սովետական Ռուսաստանի համար:

1918 թ հուլիսի 31-ին սովետական իշխանությունը Բաքվում ժամանակավորապես ընկավ Օգոստոսին գրավելով քաղաքը անգլիական իմպերիալիստներն իրենց գործակալների հետ միասին դա ժան հաշվեհարդար տեսան Բաքվի հերոսական կոմունայի և նրա պանծալի ղեկավարների հետ

Բաքվի այս իրադարձությունները խիստ անհանգստացրին Վ Ի Լենինին, նա շարունակ հետաքրքրվում էր Բաքվի կոմիսարների վիճակով Օգոստոսի 9 ին Վ Ի Լենինը Աստրախանի սովետի նախագահին հեռագրում է «Դրությունը Բաքվում ինձ համար այնուամենայնիվ պարզ չէ

Ո՞վ է կանգնած իշխանության գլուխ Որտեղ է Շահումյանը: Դուք գիտեք որ ես լիովին վստահում եմ Շահումյանին Այստեղից չի կարելի հասկանալ դրությունը և արագ օգնելու հնարավորություն չկա»

Բաքվի 26 կոմիսարների գնդակահարությունը մեծ կորուստ էր Անդրկովկասի պրոլետարիատի համար Սակայն Բաքվի աշխատավորությունը երբեք վայր չդրեց իր զենքը: Սրբությամբ պահելով անմահ հեղափոխականների հիշատակը նա բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ շարունակեց հերոսական պայքարը հանուն սովետական իշխանության 1920 թ ապրիլի 28-ին ռուս մեծ ժողովրդի օգնությամբ Ադրբեջանում հաստատվեցին սովետական կարգեր: Բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ սովետական իշխանությունը հաղթանակեց նաև Հայաստանում ու Վրաստանում:


Գործը, որի համար իրենց կյանքը զոհաբերեցին Բաքվի 26 կոմիսարները հաղթանակեց: Նրանց հիշատակը հավերժ է «Բաքվի 26 կոմիսարներ» անունն են կրում քաղաքային շրջաններ Բաքվում, Երևանում, հրապարակներ փողոցներ Մոսկվայում, Երևանում Բաքվում, Թբիլիսիում և այլուր դպրոցներ Անդրկովկասի և Սովետական Միության շատ քաղաքներում

Բաքվի 26 կոմիսարների հերոսական կյանքն ու գործունեությունը ոգեշնչման աղբյուր են գրողների ու արվեստագետների համար

Բեթհովեն Լյուդվիգ վան

1770—
1827

Վիեննայի բնակիչները լավ են ճանաչում հողմահարված դեմքով, գիսախռիվ ամրակազմ ու տարեց այդ մարդուն Ամեն օր ցանկացած եղանակին, նա դուրս է գալիս տնից: Երաժշտություն գրելու չափ նրան անհրաժեշտ է զգալ ազատ տարածությունը, տեսնել երկինքը Արագ քայլերով նա անցնում է բերդապատնեշի երկայնքով Նայում է ցածրից սահող ամպերին տեսնում թե ինչպես են ծառերը թեքվում քամուց անհանգիստ թևածում թռչունները: Բայց թռչունների ծվլոցն ու քամու աղմուկը նա չի լսում: Բեթհովենը խուլ է



Դա սկսվեց դեռ այն ժամանակ երբ նա նոր էր փառքի հասել: Նա հայտնի դաշնակահար է և կոմպոզիտոր Նրա «Պաթետիկ» և «Լուսնի» սոնատների երաժշտության մեջ խոր զգացմունքներ կան, բուռն պոռթկումներ Բեթհովենը ոգեշնչված է ֆրանսիական հեղափոխության գաղափարներով մարդկանց ազատության հավասարության, եղբայրության կոչով Նա առլեցուն է կյանքով մեծ մտահղացումներով: Եվ հենց այդ ժամանակ կատարվում է երաժշտի համար ամենասարսափելին Բեթհովենը խլանում է

Ճակատագիրը կընկճի նրան արդյոք Ի՞նչը կհաղթի նրա մեջ հուսահատությունը թե՛ ապրելու ու ստեղծագործելու կամ թը:

Հաղթում է արվեստագետի կամքը: Ծնվում է հանրահայտ «Հերոսական սիմ-

ֆոնիան»։ Նրա սգո քայլերգը հնչում է հանդարտ ու պայծառ։ Չէ որ հերոսը իր կյանքը զոհաբերել է հանուն ժողովրդի երջանկության եվ նրա նպատակները կիրառած են ուրիշները

Բեթհովենը ցանկանում էր այդ սիմֆոնիան ձոնել *Նապոլեոնին*։ Բայց, իմանալով, որ նա իրեն կայսր է հռչակել Բեթհովենը ցասումով լցվեց. «Հիմա նա ոտնատակ կանի մարդկային բոլոր իրավունքները իրեն բոլորից բարձր կդասի և բռնակալ կդառնա»։ Կոմպոզիտորը պատռում է ընծայագիրը և սիմֆոնիան անվանում «Հերոսական»։

Խլությունն ուժեղանում է Բեթհովենի համար գնալով դժվարանում է մարդկանց հետ շփվելը, և միայն բնության գրկում է նրա հոգին լցվում երաժշտությամբ, ինչպես մանկության օրերին էր։ Չայների աշխարհն այժմ նա իր մեջ է կրում։ Եվ այդ գեղեցիկ աշխարհը բացահայտում է «Հովվերգական սիմֆոնիայում», ուր առվակների խոխոջ կա ու թռչունների ճռվողյուն, մոտալուտ ամպրոպի կենսալի աղմուկ և հովվական եղջերափողի նվագ։

Տարիներն անցնում են։ Շրջապատող աշխարհից այլևս ոչ մի ձայն չի հասնում Բեթհովենի լսողությանը։ Նա ամփոփվում է ինքն իր մեջ

Վաղուց արդեն ետևում է մնացել հեղափոխությունը, կայսրերն ու թագավորներն ամուր նստած են գահերին։ Նրանց մինիստրները հետապնդում են ազատության ստվերն անգամ Բայց Բեթհովենը հավատարիմ է ինքն իրեն Ոչ աստիճան ոչ տիտղոս և ոչ էլ ազնվատոհմություն նա մարդու միայն անձնական արժանիքներն է ընդունում Ջրոսանքի ժամանակ հանդիպելով Ավստրիայի կայսրուհուն և դքսերին Բեթհովենն իր տեսքով հարկադրում է նրանց զիջել ճանապարհը և անցնում է հազիվ ձեռքը դիպցնելով գլխարկին։ Ի՛նչ մեծամիտն է ժողովրդի ծոցից ելած այդ մարդը, սպասավոր երաժիշտների որդին ու թոռը։ Ոչ նա մեծամիտ չէ։

«Իսկական արվեստագետը զուրկ է մեծամտությունից — գրել է Բեթհովենը — նա տեսնում է թե որքան անսահման է արվեստը նա զգում է թե ինքը որքան հեռու է նպատակից»։

Բեթհովենի ողջ կյանքը նվիրված է արվեստին Աշխատանքի մեջ խորասուզված, նա մոռանում է քնելու ուտելու առողջության մասին Հաճախ հիվանդանում է, ապրում կարիքի մեջ Նա միայնակ է, բայց որքան սեր ունի անթեղած

մարդկանց հանդեպ որքան շատ է հավատում բարուն։ Այդ շրջանում նա ստեղծում է վերջին իններորդ սիմֆոնիան «Բերկրանքի» հիմնով է ավարտվում այն։ Հընչում է լայնաշունչ, լուսավոր մեղեդին

Բեթհովենի երաժշտությունն ընդմիջտ կապրի Այդ երաժշտության մեջ նրա ողջ սերն է մարդկանց հանդեպ հավատը նրանց գալիք ազատության և երջանկության նկատմամբ։

Վ Ի Լենինը բարձր է գնահատել կոմպոզիտորի երաժշտությունը Ինչպես Ա Մ Գորկին է նշում Վլադիմիր Իլիչը մի անգամ, լսելով Բեթհովենի սոնատները, ասել է «Ապասիոնատ»-ից ավելի լավ ոչինչ չգիտեմ պատրաստ եմ այն լսելու ամեն օր Ջարմանահրաշ գերմարդկային երաժշտություն ես միշտ հպարտությամբ, թերևս միամիտ մտածում եմ ահա թե ինչպիսի հրաշքներ կարող են կատարել մարդիկ»

Բելգիա

(Բելգիայի Թագավորություն)





Բելգիան Եվրոպայում գտնվող փոքր երկիր է նրա տարածքը գրեթե հավասար է Հայկական ՍՍՀ-ի տարածքին։ Ավտոմոբիլով կարելի է չորս-հինգ ժամում կտրել անցնել նրա մի ծայրից մյուսը։ Բելգիայի տարածքը տարբեր ժամանակներում պատկանել է Ֆրանսիային, Գերմանիային Իսպանիային, Ավստրիային և Հոլանդիային Բելգիան անկախ պետություն է դարձել 1830 թ միայն։


Բելգիայում ապրում են երկու ազգեր վալոնները և ֆլամանդացիները։ Առաջին անգամ Բելգիա ոտք դրած մարդու ուշադրությունը գրավում է այն, որ այստեղ բոլոր մակագրություններն ու ցուցանակները գրվում են երկու լեզվով ֆրանսերեն (որով խոսում են վալոնները) և ֆլամանդերեն։

Ժամանակակից Բելգիան բարձր զարգացած կապիտալիստական պետություն է։ Նա արտադրում է թուջ պողպատ, պղինձ, ավտոմոբիլներ, հաստոցներ, էլեկտրաապարատներ քիմիկատներ, ապակի գործվածքներ, գորգեր Այդ ապրանքներով Բելգիան առևտուր է անում բազմաթիվ երկրների հետ Արդյունաբերության շատ ճյուղերի հումքը Բելգիան ներմուծում է

Բելգիացիները շատ աշխատանք են կատարում նաև գյուղատնտեսության մեջ Նրանք մշակում են հացահատիկ, կարտո-



- Սև մետալուրգիա
- Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն
- Նավաշինո թյուն և նավանորոգում
- Ավտոմոբիլային արդյունաբերություն (ավտոհավաքում)
- Նավթավերամշակման և նավթաքիմիական արդյունաբերություն
- Ճենապակու-հախճապակու արդյունաբերություն
- Տեքստիլ արդյունաբերություն
- Քարածխի արդյունահանում
- Ծովային նավահանգիստներ
- Ճարտարապետական հուշարձաններ
- Անասնապահո թյուն
- Հացահատիկային թույսն ու (ցորեն, գարի վարսակ)




Ֆիլ, բանջարեղեն երկրում բուծում են կովերի այնպիսի ցեղեր որոնք առատ կաթ են տալիս:

Բելգիան ընկած է Հյուսիսային ծովի ափին՝ Ծովից փչող խոնավ քամիները մեղմացնում են ձմեռային ցուրտն ու ամառային շոգը: Գետերը չեն սառչում: Չմռանը մեծ մասամբ ամպամած է մառախլապատ, ամռանը զով է հաճախ տեղում են հորդ անձրևներ:

Ծովափից դեպի երկրի խորքը հարթավայր է ձգվում: Այն հատում են գետերն ու ջրանցքները, որոնց երկայնքով բարդիներ են աճում Շուրջը մուգ կանաչ մարգագետիններ են արածում են կովերի նախիրներ: Այնուհետև հարթավայրն սկըսում է բարձրանալ և վերածվել բլրաշատ տեղանքի երկրի հարավում սահմանի

մոտ հարթավայրը փոխարկվում է անտառապատ լեռների

Կենտրոնական Բելգիան պատած է երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների, գետերի և ջրանցքների խիտ ցանցով որոնց շուրջը եռում է կյանքը Այստեղ արդյունահանում են քարածուխ ծխնելույզներից ծուխ են արձակում խոշոր գործարաններն ու ֆաբրիկաները և երկինքը պայծառ օրերին անգամ հաճախ մշուշապատվում է Գետահովիտների երկայնքով գրեթե անընդմեջ ձգվում են քաղաքներն ու ավանները: Բելգիայի ամենամեծ նավահանգստում՝ Անտվերպենում, հանգրվանում են աշխարհի գրեթե բոլոր երկրներից եկած նավերը: Բելգիան նաև ծաղիկների նրբագեղ ժանյակների ու կերչական իրերի հնագույն հուշարձան-



Բրյուսել
քաղաքը

ների երկիր է Իսկ Բելգիայի քաղաքները հինավուրց ճարտարապետության քաղաք-թանգարաններ են

Ինչպես և մյուս կապիտալիստական պետություններում Բելգիայի հիմնական հարստությունները կենտրոնացած են կապիտալիստների ձեռքին Կապիտալի ճնշումը հատկապես ուժեղ են զգում բանվորները Երկրում մերթընդմերթ բռնկվում են գործադուլներ որին մասնակցում են հազարավոր աշխատավորներ

Բելգիան կառավարում է թագավորը բայց նրա իշխանությունը սահմանափակված է պառլամենտով:


Բելուռուսիա

(Բելուռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն)



Մայրաքաղաքը՝ Մինսկ
Տարածությունը՝ 207 600 քառ կմ
Բնակչությունը՝ 9 807 000 մարդ

Հանրապետության հարավում Պոլե սիեում հարյուրավոր կիլոմետրեր ձգվում են անտառները և վառ կանաչ տիղմով եղեգնով ու սեզով ծածկված ճահճուտները Դեպի հյուսիս ճահիճները գնալով պակասում են, իսկ վիթխարի ալիքանման բլրաշարերի միջև փայլվում են հայելանման լճերը Թավ անտառներ կանաչ մարգագետիններ արտերի միջով ձգվող ճանապարհներ վուշի երկնագույն դաշտեր հարյուրավոր խաղաղ ու հանդարտ



Հերոս քաղաք Մինսկը

գետեր, որոնցից գլխավորներն են Դնեպրը Արևմտյան Դվինան և Եմանը

Մի ժամանակ դեռևս Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից առաջ բելուռուս նշանավոր բանաստեղծ Յակոբ Կոլասը գրել է

Երկիր հարագատ
Երկիր մեր աղբատ
Լոկ ավագ, ճահիճ
Եվ անտառ այնքան

Դա ցարական Ռուսաստանի ամենից աղբատ և հետամնաց երկրամասերից էր Գյուղերում որ տխուր անվանումներ ու-



նեին Գոլդոնոյե (քաղցած), Բեսիլերնիցի (անհաց), Մոխոյեդի (մամռակեր), Կորոյեդի (կեղևակեր), կտեսնեիր խարխուլ, կիսավեր տնակներ, իսկ հաճախ էլ գետնափոր հյուղակներ: Տեղ-տեղ միայն ծխում էին փոքրիկ-փոքրիկ գործարանների ծխնելույզները

Սովետական իշխանության տարիներին Բելոռուսիան դարձել է զարգացած արդյունաբերությամբ հանրապետություն: Այնտեղ վեր է խոյացել մի նոր անտառ գործարանների ու ֆաբրիկաների ծխնելույզների անտառը: Մեր երկրի և արտասահմանյան շատ գործարաններում աշխատում են բելոռուսական հաստոցները

Ամբողջ աշխարհը գիտե «Բելառուս» տրակտորի մասին

Բելոռուս ավտոմոբիլագործները իրավամբ հպարտանում են հսկա ինքնաթափերով, որոնք միանգամից կարող են փոխադրել մի քանի տասնյակ տոննա բեռ Բելոռուսական գործարաններն ու ֆաբրիկաներն արտադրում են նաև շատ ու շատ մոտոցիկլետներ ու հեծանիվներ, ռադիոընդունիչներ ու հեռուստացույցներ, լուսանկարչական ապարատներ ու էլեկտրալամպեր, դաշնամուրներ ու ժամացույցներ, հաշվիչ մեքենաներ, կոշիկներ, գործվածքներ և ժողովրդատնտեսական այլ ապրանքներ



Այսօր Բելոռուսիայում մշակվում են կալիումական աղերի քիմիական արդյունաբերության արժեքավոր հումքի հարուստ հանքաշերտերը:

Հանրապետության տարբեր շրջաններում սովետական երկրաբանները հայտնաբերել են նավթի և բնական գազի քարածխի և գորշ ածխի ինչպես նաև այրվող թերթաքարերի հանքավայրեր:

Շինանյութ, կահույք, թուղթ, լուցկի արհեստական մանրաթել, դեղամիջոցներ... հնարավոր է արդյոք թվարկել այն ամենը ինչ հանրապետությունում պատրաստվում է բելոռուսական փայտից:

Ճահիճներից տորֆ են արդյունահանում Այն այրում են էլեկտրակայանների հնոցներում, օգտագործում դաշտերը պարտազնելու համար: Ճահիճներն այժմ չորացնում և հերկում են ցանքսերի համար:

Պարարտացված հողը հարուստ բերք է տալիս: Բելոռուսիայում արտադրում են շատ միս, կաթ յուղ, կարտոֆիլ, վուշ կանեփ հաց, բանջարեղեն մրգեր:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ֆաշիստների օկուպացրած բելոռուսական հողում ավելի քան երեք տարի հերոսական պարտիզանական պատերազմ էր մղվում զավթիչների դեմ Պարտիզանները ոչնչացրեցին մոտ կես միլիոն հիտլերականների և հսկայական քանակությամբ ռազմական տեխնիկա:

Գերմանաֆաշիստական զորքերից Բելոռուսիայի ազատագրմանը սովետական մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ կողք կողքի մասնակցեցին նաև հայ ժողովրդի զավակները: Գործող բանակներում և պարտիզանական ջոկատներում մարտնչած հազարավոր հայ ռազմիկներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով: Անասելի ծանր պայմաններում մարտնչեցին *Բրեստի ամրոցի* հայ պաշտպանները որոնք թվով 100 հոգի էին Նրանցից շատերը զոհվեցին անհավասար մարտերում: Հերոսական ուղի անցավ հայկական «Հաղթանակ» պարտիզանական ջոկատը որը կազմավորվեց Բելոռուսիայի անտառներում: Բելոռուսական ընդհատակի հերոսներից փառքով պսակվեց Հենրիկ Ջաքարյանի անունը, որը ֆաշիստական գերության մեջ ստեղծեց «Անհնազանդներ» կազմակերպությունը և փրկեց Գերմանիա աքսորվող սովետական շատ քաղաքացիների կյանքը Իսկ երբ ֆաշիստներին հաջողվեց մատնությամբ ձերբակալել Նրան, մահից առաջ հայ

քաջորդին խեղդեց իրեն քննող գերմանացուն (Հ Ջաքարյանի մասին դուք կարող եք կարդալ Ռ Փաշինյանի «Մահից էլ հզոր» գրքում) 1944 թ հուլիսին սովետական հաղթական զորքերի շարքում, Բելոռուսիայի վերջնական ազատագրմանը մասնակցեցին Առաջին մերձբալթյան ռազմաճակատի զորքերը այն ժամանակ բանակի գեներալ Հովհաննես *Բաղրամյանի* հրամանատարությամբ:

Երբ ատելի թշնամին դուրս բշտեց, Բելոռուսիայում մնացել էին միայն թշնամու ավերած ու հրկիզած քաղաքներն ու գյուղերը: Բելոռուս ողջ ժողովուրդը ոտքի կանգնեց վերականգնելու քայքայված տնտեսությունը: Վերստին կյանքի կոչվեցին քաղաքներն ու գյուղերը, գործարաններն ու ֆաբրիկաները, կուտնտեսությունները դպրոցները, հիվանդանոցները: Բելոռուսիային օգնում էր սովետական ողջ երկիրը: Սովետական ժողովրդի հերոսական աշխատանքը նրա կամքն ու եռանդը հրաշքներ գործեցին Բելոռուսիան դարձավ ավելի գեղեցիկ, ավելի հարուստ:

Մեծ ու գեղեցիկ Մինսկը, ուր մեկ միլիոնից ավելի մարդ է ապրում, այժմ նորից նոր կառուցված մայրաքաղաք է ընդարձակ փողոցներով ու հրապարակներով, կանաչ պուրակներով խոշոր ֆաբրիկաներով ու գործարաններով, թատրոններով համալսարանով, ինստիտուտներով թանգարաններով:

Գեղեցիկ է Բելոռուսիայի հողը
Ուր արծաթալաց մտքերի համար
Կա վեհ թռիչքի անհունություն,
Ուր աշխատասեր ուժեղ և համառ
Իմ ժողովուրդն է հավերժ ապրում...
(Մ Տանկ)

Բելոռուսիայի մասին ավելի մանրամասն կարդացեք հետևյալ գրքում:

Вольский В. Ф., Три путешествия в страну белорусов М «Дет лит.», 1967 (Ты по стране идешь)

Բևեռափայլ

Երկնքի ամբողջ հյուսիսային կողմը լուսավորված է կարմիր ու կանաչ երկու հսկայական վետվետուն կամարներով: Անընդհատ ձևափոխվելով ու երփներանգ վելով կամարները մեկ անհետանում են մեկ նորից հայտնվում: Հանկարծակի մութ երկինքը նետերի նման ճեղքում են պայծառ ճառագայթները իսկ ժամանակ առ ժամանակ օդում կախվում են կարմիր ծոպերով զմրուխտե վարագույրներ:



Դա բնության ամենահիասքանչ և ամենագեղեցիկ երևույթներից մեկն է՝ բնեռափայլը՝ Պայծառ հյուսիսափայլը (հյուսիսում այդպես են անվանում բնեռափայլը) երկնքում փողփողում է մի քանի ժամ անընդհատ

Բնեռափայլերը կապված են Արեգակի հետ՝ Դուք, անշուշտ, գիտեք, որ Արեգակը հսկայական չափերի շիկացած գունդ է Այր վիթխարի «վառարանը» տիեզերական տարածություն է ճառագայթում հսկայական քանակությամբ ջերմություն և արտանետում էլեկտրականությամբ լիցքավորված նյութի մանրագույն մասնիկների հոսքեր: Հասնելով Երկրի մթնոլորտի վերին երկրի մակերևույթից 80 — 1000 կմ բարձրության վրա գտնվող շերտերը, այդ մասնիկները բախվում են օդի ատոմներին ու մոլեկուլներին, և սրանք սկսում են փայլփլել տարբեր գույներով՝ դեղին, կանաչ, կարմիր, նարնջագույն Այսպես է առաջանում բնեռափայլը

Իսկ ինչո՞ւ է այս գեղեցիկ տեսարանը երկնքում հայտնվում սովորաբար միայն Երկրի բևեռների մոտ (հյուսիսային և հարավային): Բանն այն է, որ ամբողջ երկրագունդը մի վիթխարի մագնիս է և, ինչպես յուրաքանչյուր մագնիս, ունի երկու բևեռ: Եվ երբ Արեգակի էլեկտրականությամբ լիցքավորված մասնիկների հոսքերը մոտենում են մեր մոլորակին, Երկրի

մագնիսական ուժերի ազդեցությամբ շեղվում են դեպի հյուսիսային և հարավային մագնիսական բևեռները, և այդ շրջաններում էլ առաջանում են բնեռափայլերը:

Գիտնականները նկատել են, որ բնեռափայլերն ավելի ուժեղ են լինում և ավելի հաճախ են կրկնվում, երբ Արեգակի վրա մեծանում է արևաբծերի քանակը Հենց արևաբծերի տիրույթներից են տիեզերական տարածություն արտանետվում այն մասնիկների առանձնապես հզոր հոսքերը, որոնք Երկրի վրա բնեռափայլեր են առաջացնում

Բետոն և երկաթբետոն

Բետոնից, շատ ամուր արհեստական այդ քարից, շինություններ են կառուցել դեռևս հին հռոմեացիները՝

Ջուր չէ, որ բետոնն անվանում են արհեստական բնության մեջ պատրաստի բետոն չես գտնի Նախ հարկավոր է գործարանում պատրաստել հատուկ փոշի ցեմենտ Ցեմենտը խառնում են ավազին, ապա ցեմենտաշաղախին ավելացնում են մանրացրած քարեր խիճ Այս ամենը միասին լավ խառնում են, և բետոնը պատրաստ է: Այժմ բետոնի «շիլան» կարելի է լցնել փայտե կամ մետաղե հատուկ արկղի

կաղապարարկի մեջ որն ունի ապագա շինվածքի ձևը: «Շիլան» պնդանում է և ստացվում է պատրաստի դետալը հեծան սյունն սալ

Բետոնը մեծ ծանրությունների է դիմա նում և ժամանակի հետ ավելի է ամրա նում: Բայց պարզվում է որ նա թերություն ներ էլ ունի փխրուն է. Ուժեղ հարվածեք բետոնի կտորին և այն փշուր-փշուր կլինի:

Անցյալ դարի կեսին փարիզցի այգեպան ժոզեֆ Մոնիեն որոշեց բետոնից խոշոր թաղարներ պատրաստել և մեջը արմավե նիներ տնկել Թաղարներն ավելի ամուր դարձնելու համար նա բետոնի «շիլայի» մեջ տեղադրեց մետաղալարե վանդակ: Թաղարներն իրոք էլ շատ ամրացան չէին փշրվում Այդ գյուտի լուրն իսկույն տա րածվեց աշխարհով մեկ: Այդուհետև սկը սեցին ամրության համար բետոնի մեջ տե դադրել երկաթե ձողեր, մետաղալար կամ ցանց.

Այդպես ասպարեզ եկավ մի նոր շինա նյութ՝ երկաթբետոնը երկաթե կմախքով բե տոնը Երկաթբետոնը դիմանում է հսկա յական ծանրության հարվածներից չի վա խենում հրակայուն է

Այժմ երկաթբետոնը կիրառվում է ամե նուրեք Նրանից պատրաստում են ամբար տակներ պատեր, առաստաղի սալեր և շենքերի տանիքներ կամուրջներ աշտա րակներ, սյուներ մարզադաշտերի տրի բունաներ երկաթուղիների կոճեր և ուրիշ շատ ու շատ բաներ:

Բերինգ Վիտուս

1681 —
1741

Ուշ աշուն է. Ուժեղ մրրիկ- ները մոլեգնում են Խաղաղ օվկիանոսի հյուսիսային մասում: Նավը մեկ հայտնվում է ալիքների կա տարին, մեկ գահավիժում անդունդը: Եր կինքը ծածկված է կապտագույն ամպե րով, օրեր շարունակ նավաստիները չեն տեսնում ո՛չ արև, ո՛չ էլ աստղեր: Ետևում են մնացել Ամերիկայի նոր հայտնագործած հյուսիս-արևմտյան ափերը, իսկ առջևում փոթորկուն օվկիանոսի անեզր տարածո թյունն է: Եվ հանկարծ լսվում է հերթա պահի կանչը. «Ցամաք»: Բոլորը նետվե ցին դեպի վեր, սողալով մոտեցան անգամ լնդախտից մեռնողները. Իր նավախցիկից դուրս եկավ նաև ծանր հիվանդ կապիտան կոմանդոր Վիտուս Բերինգը:



Վիտուս Բերինգ... Առաջին երկրաչափա ներից մեկը, որի անունը մնացել է մա խարիի բոլոր քարտեզներում: Նա ծնվել է Դանիայում, բայց պատանեկան տարինե րին ծառայության է անցել ռուսական զար Պետրոս Առաջինի նախատրմում, և Ռու սաստանը դարձել է նրա երկրորդ հայրե նիքը: Բերինգը մասնակցել է ծովային ինժեար արշավների, ռուսական գրոշի ներ քո կռվել շվեդների դեմ, ծովագնաց կա րակ Աննյոն Դեթնևից հետո այդպիսի անցել Ասիայի և Ամերիկայի միջև ընկա նեղուցով: Այդպես ապացուցվեց, որ հյու սիսում երկու մայր ցամաքները իրար չեն միանում, այ բաժանվում են նեղուցով:

Եվ ահա նրան «Սուրբ Պետրոս» և «Սուրբ. Պողոս» նավերը ուղղություն վերցրին դեպի հյուսիս-ամերիկյան անծա նոթ ափերը. համաչափայի Պետրոպոլս րվակի նամահանգստից նրանք հեռացան Իուկոնսյան մի խաղաղ, սպայծառ առանու: Բայց շուտով ուժեղ փոթորիկներ սկսե ցին: Նավաստիների համար դժգոյք էր անծանոթ, անհանգիստ ջրերում: Վերջապես, ամենի քան մեկ ամիս անց, նրանք ցամաք տեսան. Ալյասկայի հարթավային ափերը:

Բայց արդեն մոլորեցում էր արևը. Երա նակը օր օրի վաճառում էր: Նավաստինե րը մեռնում էին լրդախտից: Բերինգը որոշեց շուտափույթ տուն մեծ խոտալ նա վախենում էր աշունազրկ փոթորիկնե րից, Ատախտից, օտար անեղոցի հա նախական ձմեռանից: Երկու օր անըն քարին արշավախումբը նոր կղզիներ,



...նախադրոճեց Արեւիկային
 ... Երուսաղիմայի: Այս անգամ
 ... աղբյուրը չեցին ի պատիվ լե-
 ... րաբարից մահացան նավաստի Երուսա-
 ... զին, որ զվարճանք մի մարդ էր ու ուր
 ... նավաստի սրտիկը: Ըստ լեգենդային լե-
 ... իով: Ծովայիններն արևա նորոտել էին
 ... փայտեան հողի:

Ահա հենց այդ ժամանակ էլ հեռվում
 ... Կամ Երուսաղիմի նկատմամբ ինչ-որ անի երե-
 ... մարդ իր ցուց ուռով, որ հուսովանություն
 ... իրողին նավաստիները հասցվեցին, որ
 ... արևը ամառը գնմաց է առանց մի
 ... անգամ հասնում, որ Կաս

ԱՐԵՎԻԿԱ


ԱՐԵՎԻԿԱ

Բզեզներ

Ավելի հաճախ կարծում են թե բզեզները սև են լինում. Իրոք սև բզեզներ շատ կան բայց կան նաև կարմիր կապույտ երկ նագույն, կանաչ դեղին և նույնիսկ, ար ծաթագույն ու ոսկեգույն բզեզներ: Կան հսկա մինչև 15 սմ երկարությամբ բզեզ ներ կան և շատ փոքրիկները որոնց կարելի է գննել միայն խոշորացույցով. Բզեզների կարելի է հանդիպել ամենուր ցանկացած աշխարհամասում ցանկա ցածր աշխարհագրական գոտում լեռնե

րում ու անապատներում, տայգայում և ջրավազաններում Բզեզներն անչափ շատ են միայն մեր երկրում հաշվվում է մոտավորապես 25 հզ տեսակ որոնցից մոտ 4000 ը հանդիպում են նաև Հայկա կան ՍՍՀ-ում. Առհասարակ բզեզների քառորդ միլիոնից ավելի տեսակներ կան Բզեզները միմյանցից զանազանվում են ոչ միայն չափերով և գույներով այլև ապ րելակերպով և վարքով: Բացի այդ, բզեզ ների մի մասը գիշատիչ է մյուսները սըն վում են բույսերով, երրորդները մեռած կենդանիներով

Այնուամենայնիվ չնայած այդպիսի



այգու գնայուկ բզեզ

գերեզմանափոր բզեզ

երկբծանի
հիստեր բզեզ

երկարաբեղ
հյուսն բզեզ

մոխրագույն
ստաֆիլին
բզեզ

մազոտ
ստաֆիլին

մեղվաբզեզ

տարբերություններին, բոլոր բզեզները մոտիկ ազգակիցներ են և միավորված են մեկ խմբում կարգում

Բոլոր բզեզների ընդհանուր հատկանիշը թևերի նման կառուցվածքն է Երկու թևիկները (ներքին կամ, այլ կերպ, ետին) նուրբ են թափանցիկ Դրանք թռչելու համար են: Մյուս երկու թևերը (վերին կամ առջևի) որոնց անվանում են վերնաթևեր կարծր են ծածկում են բզեզի ներքին թևիկները և փափուկ փորիկը Թռիչքի ժամանակ վերին թևերը բարձրանում են տեղ տալով ներքին թևիկներին

Երբեմն հանդիպում են ներքին չգարգացած թևիկներով բզեզներ որոնք չեն կարողանում թռչել Հազվադեպ պատահում է նաև հակառակը երբ լավ զարգացած են լինում բզեզների միայն ներքին նուրբ ու թափանցիկ թևիկները իսկ վերին թևերը (վերնաթևերը) շատ փոքր են լինում

Սովորաբար միշտ լավ նկատվում են բզեզների վերին կարծր թևերը: Ջուր չէ որ բզեզների կարգը գիտականորեն այդպես էլ անվանում են կարծրաթևավորների կարգ:



Եկեք խորհրդածենք թե ինչպիսի հատկություններով պետք է օժտված լինի այն մարդը որը պատրաստվում է բժիշկ դառնալ:

Ամենից առաջ նա պետք է սիրի մարդկանց և բարի սիրտ ունենա որով հետև բժշկի գործը հիվանդների տառա պանքները թեթևացնելն է և նրանց մա հից փրկելը

Բժիշկը պետք է խիզախ լինի Չէ որ նա առաջինն է մեկնում այնտեղ ուր մոլեգ նում է կործանարար համաճարակը օրինակ, ժանտախտը: Նա չպետք է վախենա այնպիսի հիվանդի խնամելուց, որից մահացու հիվանդությամբ կարող է վարակվել ինքն անձամբ

Անհրաժեշտ է որ բժիշկը թեկուզև արտաքուստ միշտ հանգիստ լինի որ պեսզի կարողանա ճիշտ վիրահատել ու լավ վիրակապել հիվանդին կամ վիրավորին երբ և որտեղ էլ դա պետք լինի փոթորկոտ ծովում երկրաշարժի ժամանակ, թե հրետանային ռմբակոծության տակ Բժշկի հանգստությունն ու ինքնա վստահությունը փոխանցվում են հիվանդին և օգնում նրան ապաքինվելու

Բժիշկը պետք է ուշադիր և նրբազգաց լինի Անուշադիր բժշկին հիվանդը չի հավատա իսկ բժշկի ամեն մի անզգույշ խոսք կարող է այնպես վախեցնել հիվանդին որ նա կկորցնի առողջանալու իր հավատն ու հույսը

Բժիշկը պետք է լինի անձնագրի Չէ որ նրան հիվանդի մոտ կարող են կանչել ամեն ժամի գիշեր լինի թե ցերեկ նույնիսկ այն ժամանակ երբ ինքն էլ հիվանդ է և ուրիշ ոչ ոք չկա որ գնա:

Բժիշկը պետք է լինի նաև հետաքրքրասեր ու աշխատասեր Նա պետք է շարունակ ընդլայնի իր գիտելիքները որպեսզի կարողանա կիրառել բուժման ժամանակակից եղանակներն ու օգտագործել բժշկագիտության նորագույն հայտնագործությունները:

Բժիշկը պետք է օժտված լինի տեսնելու, տեսածը գնահատելու ունակությամբ, լինի համբերատար: Նա պետք է գաղտնապահ լինի, որպեսզի բժշկական գաղտնիքը ուրիշները չիմանան. Եվ նաև վճռական պետք է լինի: Ինքներդ էլ տեսնում եք, թե ինչ հոյակապ մարդիկ են իսկա կան բժիշկները, և որքան վեհ է նրանց մասնագիտությունը

Մեր կառավարությունը բժիշկներին տրամադրում է անհրաժեշտ ամեն բան որպեսզի նրանք կարողանան ժամանակին օգնել հիվանդին հիանալի կահավորված ամբուլատորիաներ, պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ և, անշուշտ փոխադրամիջոցներ՝ ավտոմեքենաներ, ինքնաթիռներ, ուղղաթիռներ: Չէ որ բժիշկը պետք է անենակարճ ժամանակում օգնության հասնի հիվանդին ուր էլ նա գտնվելիս լինի մեծ քաղաքում թե փոքրիկ ավանում ծովի հեռուներում թե բարձր լեռներում

Բժիշկները միշտ եղել են և կմնան մեր երկրում կենսագործվող բոլոր մեծ ու փոքր գործերի ակտիվ մասնակիցները Ահա թե ինչու աշխարհում առաջին բազմատեղանոց «Վոսխոդ» տիեզերանավի անձնակազմի անդամներից մեկը բժիշկ էր

Բիանկի Վիտալի Վալենտինովիչ

1894 —
1959

Անտառը ձմեռ է հագել Շուրջը խոր լուրջուն է Սառնամանիքը դաղում է այտերդ բայց եթե ուզում ես տեսնել թե ինչ պես է իր բուլվը շտապում նապաստակը կամ զբոսանքի դուրս գալիս գորշուկը մի քիչ համբերիր Ահա ձյունը շարժվեց



Երեբաց մի ձյուն: Մի քիչ էլ... Ավելի մոտեցիր Եվ դիտողի առջև բացվում է անտառի մի գաղտնիք ևս: Իսկ հետո այն ամենի մասին ինչ տեսել է Վիտալի Վալենտինովիչը երեխաներին կպատմի իր գրքերում կօգնի նրանց թափանցելու բնության հրաշք գաղտնիքների մեջ



- Վ. Բիան
- «Անտա
- նիստ
- հե
- տույզ
- գրքի
- մար
- տոհ
- Դիզնիշի
- տկերա
- որումից

Դեռևս երեխա ժամանակ նա շատ էր լինում անտառում, ազահորեն ականջ դնում ծեր որսորդների պատմություններին: Նա փորձում էր հասկանալ, թե ինչի մասին են «խոսում» թռչունները, ինչու իրար նման չեն ձկնկուլի ոտքն ու խլուրդի թաթը, ինչու մի կենդանին իր բույնը շինում է ծառերին, մյուսը՝ քրի վրա կամ քրի տակ

Համալսարանն ավարտելուց հետո վիտալի Բիանկին արշավախմբերի հետ եղավ Սովետական Միության բազմաթիվ վայրերում. Անտառի մասին պատմող իր զրույցներում ու հեքիաթներում նա պատասխանել է երեխաների բազմաթիվ հարցերին, իսկ դեռահասներին նվիրել իր հետաքրքրաշարժ «Անտառային թերթը» Սովետական Միության բնության օրացույցը

«Ումն են այս ոտքերը», «Ով ինչով է երգում», «Ում բթիկն է լավը», «Անտառի տնակները», «Մենավորը» Բիանկիի այս և մյուս բոլոր անտառային հեքիաթների պատմվածքների ու վիպակների հիմքում ընկած են անտառի և նրա բնակիչների կյանքի նրա սեփական գիտական դիտումները Դրանք ստեղծելով նա ձգտում էր երեխաներին և սովորեցնել ինքնու

րույն դիտել և ճանաչել հայրենի բնությունը Անհնար է չսիրել Բիանկիի բրդոտ և փետրավոր սիրելի հերոսներին, երբ նա պատմում է նրանց սովորությունների, ճարպկության, խորամանկության և թաքնըվելու ու փրկվելու հմտության մասին

Հուզմունքով ենք մենք հետևում «Ծիկ մկնիկը» պատմվածքի հերոս փոքրիկ ճանապարհորդ Ծիկի արկածներին, ծանոթանում խեղճ մրջնիկի հետ, որն ինչ գնով էլ լինի, մինչև արևի մայր մտնելը պետք է տանը լինի Սպասում ենք, թե երբ թավուտից անաղմուկ դուրս կսահի մացառուտների միջով ճանապարհ բացող ուժեղ ու ճարպիկ Մենավոր իշայծյամը:

Բիանկիի հերոսները ոչ միայն կենդանիներն են, թռչուններն ու միջատները, այլև նրանց պատանի ընկերները: «Երկպոչ Կուլյան» պատմվածքում Սերգեյկան երագում է որևէ թռչնակ բռնել «Հետքերի ետևից» պատմվածքում հնարամիտ Եգորկան գլուխը չի կորցնում նույնիսկ այն ժամանակ երբ գիշերն անտառում նրան շրջապատում են գայլերը Իսկ առաջին դասարանցի Մայկային նույնիսկ հաջողվում է լինելու իսկական անտառային հեքիաթում («Ամառ ձմռանը»):

Բայց ավելի լավ է ինքներդ կարդացեք այդ գրքերը, որոնցից շատերը թարգմանված են նաև հայերեն Դրանք բոլորն էլ հետաքրքիր են

Բիլինաներ

Բիլինաները ռուսական ժողովրդական ասքերգեր են Դեռ շատ վաղուց Ռուսիայում ձմռան երկար գիշերներին կամ վատ եղանակներին մարդիկ հավաքվում էին մի տեղ, ուռկան էին հյուսում, կարկատում ձկնորսական սարքերը, պատրաստում տնային զանազան իրեր, իսկ ասացողը ծոր տալով պատմում էր

Դե լսեք ինձ, բարի մարդիկ,
Ասքն այս ճիշտ ու իմաստուն

Առաջին բիլինաները հորինվել են դեռևս Կիևյան Ռուսիայում և երգվել ողջ երկրում:

Այդ բիլինաներն ամենից երկար, գրեթե մինչև մեր օրերը, պատմվում էին հյուսիսում Սպիտակ ծովի, հյուսիսային գետերի ու լճերի ափերին ընկած գյուղերում ու ավաններում, այնտեղ, ուր

Մամուռ ու ճահիճ է Պոմորյան կողմում
Քարեր ու կիրճեր՝ Հյուսիսային կողմում
Սլացիկ ու թավ են անտառները:



«Դյուցազնը
ճամփա
բաժանին»
Մ Վ Վաս
նեցովի
կտավից

Ժողովուրդն առանձնապես շատ բիլի-
նաներ է ստեղծել Ռուսիայի պաշտպան
դյուցազունների մասին, որոնցից առաջի-
նը գյուղացու որդի Իլյա Մուրոմեցն է
այրիների, որբերի ու խեղճերի հովանա-
վորը: Այս ռուս դյուցազնը մարմնավորում
էր մարդու բոլոր լավագույն հատկություն-
ները խիզախություն, ազնվություն, հա-
վատարմություն, անձնուրաց հայրե-
նասիրություն Բիլինաները պատմում
են Իլյա Մուրոմեցի ահռելի ուժի, այս
հիանալի դյուցազնի պայքարի մասին
ընդդեմ Սոլովեյ Ռազբոյնիկի, թալանչի
Հրեշ Պոզանի, Կալին արքայի դեմ տա-
րած հաղթանակի, ինչպես նաև իշխան
Վլադիմիրի հետ ունեցած վեճի մասին:

Իլյա Մուրոմեցի հետ դյուցազունների
շարքում են նաև արդարամիտ ու խելացի
Դորբինյա Նիկիտիչը, հանդուգն ու կատա-
կասեր Ալոշա Պոպովիչը որը «ոչ թե ու-
ժով էր զորեղ այլ պարծենկոտությամբ»:

Իսկ երբ դյուցազունները քաղաքում չեն
լինում և Կիևին մոտենում է թշնամական
անհաշիվ զորքը նրա դեմ դուրս է գալիս

տասներկուամյա Միխայլուչկո Դանիլովի-
չը «ահեղ, բայց մանկական ձայնով դյու-
ցազնը»:

Բիլինաների հերոսները մի քանի անգամ
ուժեղ են սովորական մարդուց Դյուցազնի
նույնիսկ «մատակի պոչը փռվում էր
ծփում, բաշը ոլորվում հյուսվում էր
ասես...»: Բիլինային մաճկալ Միկուլա
Սեյանինովիչի «ուժից երկիրն է դողում»
Նրա արորը հողից հանելու համար «երե
սուն ջահել կտրիճներ» են պետք՝

Դյուցազնական զարմանահրաշ ուժով
օժտված մաճկալ Միկուլա Սեյանինովիչը
մարմնավորում է ռուս աշխատավոր ժողո-
վըրդին

Հզոր դյուցազունները սարսափազու-
ոստխներ ունեն Հրեշ Պոզանը, Սոլովեյ
Ռազբոյնիկը, Տուգարին Զմենիչը Հան-
ձին սրանց ժողովուրդը ցույց է տվել ռու-
սական հողի թշնամիներին: Բայց դյուցա-
զունները միշտ հզոր են նրանցից և միշտ
հաղթում են նրանց

Հրաշալի հերոսներին մենք հանդիպում
ենք նաև հին կենցաղը պատկերող գեղե-

ցիկ բիլինաներում Ահա տավղահար Սադկոն նստած ժեռ քարին ծովերի արքայի պահանջով այնպես է նվագում իր սոսի տավիղը որ

Վեր ելավ տեղից պարեց ծովաքթան կապուտակ ծովում

Բիլինաներում արտահայտված է ոռւս ժողովրդի պայքարը զավթիչների դեմ և հավատը իր դյուցազնական ուժի հանդեպ

Ռուս դյուցազունների և նրանց քաջագործությունների մասին դուք կարող եք կարդալ հետևյալ գրքում Թումանյան Հովհ. «Մուրոմցի Իլիան կոչում է Վլադիմիր իշխանի հետ» Ե «Սովետական գրող 1980:

Բիրմա

Բիրմայական Միության
Գեօգրաֆիկական Հանրապետություն



Բիրմա պետությունը գտնվում է Հարավ-Արևելյան Ասիայում Բենգալական ծոցի ափին

Երկրի հյուսիսից հարավ հոսում է Իրավադի մեծ նավարկելի գետը Արգավանդ գետահովիտը խիտ բնակեցված է և զբաղեցված բրնձի դաշտերով Բիրմացիների

մեծամասնությունն այստեղ է ապրում Բիրմայի բոլոր սահմանամերձ շրջանները զառիկող լեռներ են ծածկված արևադարձային խիտ անտառներով Լեռներում ապրում են զանազան ցեղեր

Անտառներում շատ կան խոշոր ու կլորավուն տերևներով հնդկակաղնու ուղիղ ու բարձր ծառեր որոնց բնափայտը շատ ամուր է ու դիմացկուն և այնքան ծանր, որ սուզվում է ջրում Հնդկակաղնու բնափայտը գրեթե չի փտում դրա համար էլ լայնորեն օգտագործում են նավաշինության մեջ: Այն նաև արտահանում են այլ երկրներ: Արտահանվում են նաև բրինձ ու նավթ որոնք երկրի գլխավոր հարստությունն են: Անտառահատման վայրերում հանքերում և որպես փոխադրամիջոց բիրմացիները հաճախ օգտագործում են ընտելացած փղեր Անտառներում շատ կան նաև վայրի փղեր արևադարձային այլ կենդանիներ կապիկներ սիրամարգեր վագրեր

Բիրմայում տարին բոլոր շոգ է բայց այնուամենայնիվ կլիմայական երկու սեզոն կա անձրևային ամառային և չորային ձմեռային:

Շատ բիրմացիներ այժմ էլ ապրում են բարձր ցրագերանների վրա կանգնեցրած տներում որոնք պատրաստվում են փայ



— Նավուրց
— ճարներ
— նգունում

տից ու հնդկեղեգից ունեն հյուսածո պատեր պատշգամբ և դուրս կախված երկլանջ ծածկ: Թե տղամարդիկ և թե կանայք հազնում են բաց գույնի կարճ վերնազգեստ և երկար շրջազգեստներ լոնջիաներ Բիրմայի կանանց սանրվածքը բարձր է ու բարդ. Տղամարդիկ գլխերին թաշկի նակ են կապում



Բիրմայի մայրաքաղաքը Ռանգունը գտնվում է Իրավադի գետի վտակներից մեկի վրա Այն խոշոր արդյունաբերական քաղաք է և նավահանգիստ Բիրմայի կենտրոնական մասում Իրավադիի ափին է իր նշանակությամբ երկրի երկրորդ քաղաքը Մանդալայը, որը հռչակված է ոսկերչական գեղեցիկ իրեր փայտե տուփեր ու գավաթներ պատրաստող հմուտ արհեստավորներով







Բիրմայի բոլոր քաղաքներում կհանդիպես բուդդայական շատ տաճարների: Դեռ հեռվից երևում են դրանց պագոդաները շրջած ձագարի նմանվող մեծ կոնաձև աշտարակները: Սովորաբար դրանք ձյունաձեռմակ են լինում, բայց Ռանգունի գլխավոր տաճարի Շուեդագոունի հսկա պագոդաները վերից վար ոսկեգօծ են

Բիրման երկար ժամանակ եղել է անգլիական գաղութ: 1948 թ միայն նա անկախություն ձեռք բերեց 1962 թ իշխանության գլուխ անցավ Հեղափոխական խորհուրդը Արդյունաբերության մեծ մասը դարձավ պետության սեփականությունը: Երկրում իրականացվում են դեմոկրատական կարևոր բարեփոխումներ. Հանրապետությունն ընթանում է զարգացման ոչ կապիտալիստական ուղիով:

Բիրմա

Տարածո թ ո ն ը 678 000 քառ. կմ
Բնակչո թյունը 34 060 000 մարդ



-  Փայտամշակման արդյունաբերություն
-  Տեքստիլ արդյո նաբերութուն
-  Բրնձամշակման արդյունաբերություն
-  Նավթի արդյունահանում
-  Թանկարժեք քարերի արդյո նահանում
-  Հիդրոէլեկտրակայաններ

Բյուրականի աստղադիտարան

Հայրենական մեծ պատերազմի օրերին 1943 թ ստեղծվեց Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիան՝ Նրա հիմնադիր անդամների կազմում էր երիտասարդ գիտնական Վիկտոր Համբարձումյանը որն այդ ժամանակ ղեկավարում էր Լենին գրադի համալսարանի աստղադիտարանը Երևան տեղափոխվելուց անմիջապես հետո նա ձեռնամուխ եղավ Հայաստանում աստղաֆիզիկական բնույթի ժամանակակից աստղադիտարան ստեղծելու գործին:

Եվ ահա 1946 թ աշնանը Արագածի հարավային լանջին Աշտարակի շրջանի Բյուրական գյուղի մոտ ծովի մակերևույթից շուրջ 1500 մ բարձրության վրա հիմնադրվեց Բյուրականի աստղադիտարանը:

Այսօր անաչին դիտաշտարակների շինարարությունը և համապատասխան մասնագետների ուսուցումը Երևանի համալսարանում: Միաժամանակ բաց երկնքի տակ տեղակայված անաչին շատ համեստ աստղադիտակներով կատարվում էին անդրանիկ դիտումները:

Հետզհետե ուղի կանգնեց ու առնականացավ Բյուրականի աստղադիտարանը: 1956 թ արդեն, երբ շինարարության առաջին հերթի ավարտից հետո տեղի ունեցավ աստղադիտարանի պաշտոնական բացու-


մը ստացված կարևոր արդյունքների շնորհիվ Նրա անունը հայտնի դարձավ գիտական աշխարհում:

Ներկայումս աստղադիտարանի հիմնական գործիքներն են Եվրոպայում խոշորագույն հայելու 2.6 մ տրամագծով դասական համակարգի աստղադիտակը և ՍՍՀՄ ում ամենամեծ լայնանկյուն այսպես կոչված Շմիդի համակարգի մետրանոց աստղադիտակը (խոշորագույն 1 մ տրամագծով պրիզմաներով), որոնցով դիտում են երկնային մարմինների սպեկտրները Տարբեր բնույթի աստղագիտական դիտումների համար օգտագործվում են նաև 53 50 և 40 սմ տրամագծերով աստղադիտակներ Դիտումների ժամանակ ստացված գիտական տվյալների մշակման համար կան չափիչ ու հաշվիչ ժամանակակից սարքեր:

Բյուրականի աստղադիտարանում կարևորագույն հետազոտություններ են կատարվել աստղերի ու գալակտիկաների առաջացման և զարգացման ինչպես նաև Նյութոնի տիեզերական գոյաձևերի ֆիզիկայի վերաբերյալ: 1947 թ օրինակ, հայտնագործվեցին աստղասփյուռները երիտասարդ աստղերի այնպիսի խմբերը որտեղ ձևավորվում են աստղերը Այդ հայտնագործությամբ առաջին անգամ ապացուցվեց, որ մեր ժամանակներում ևս շարունակվում են աստղերի առաջացման երեվոյթները: Բյուրականում մշակվեցին և հիմնավորվեցին նաև գալակտիկաների կորիզների ակտիվության գաղափարները որոնք հեղաշրջեցին մինչ այդ գիտության մեջ իշխող պատկերացումը Բացահայտվեց, որ կորիզների ակտիվության շնորհիվ գալակտիկաներում անջատվում են էներգիայի ու Նյութոնի վիթխարի քանակություններ և այդ հանգամանքը վճռական դեր է խաղում գալակտիկաների ձևավորման ու զարգացման մեջ: Պարզվեց նաև որ այդ ակտիվության հզոր դրսևորումները ինչպես նաև աստղասփյուռներում դիտվող որոշ երևույթներ պայմանավորված չեն բուն աստղերով կամ գազափոշային Նյութով: Այդ կապակցությամբ Բյուրականում մշակվել է այն վարկածը որ գալակտիկաներում մասնավորապես նրանց կորիզներում, գոյություն ունեն առայժմ անհայտ բնույթի խիտ զանգվածով մարմիններ (գերխիտ նախաստղեր) որոնց Նյութից ձևավորվում են աստղերն ու աստղային համակարգերը:

Բյուրականի աստղադիտարանի հետազոտությունները զգալի ազդեցություն են

Բյուրականի
աստղադիտարանի
6 մ տրամագծով
աստղադիտակի դիտաշտարակը



թողել ժամանակակից աստղաֆիզիկայի զարգացման վրա

Գիտական մեծ վաստակի համար Բյուրականի աստղադիտարանը առաջինը սովետական աստղադիտարաններից 1967 թ պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Հիմնադրման օրվանից Բյուրականի աստղադիտարանի անփոփոխ դիրեկտորն է ակադեմիկոս Վ Համբարձումյանը, իսկ գիտական աշխատակիցները գրեթե առանց բացառության նրա աշակերտներն են Երևանի համալսարանի սաներ

Բյուրեղներ

Ձմեռային խաղաղ մի օր երբ դանդաղ իջնում է ձյունը դուրս եկեք փողոց և ուշադիր նայեք փաթիլներին Այդ աստղիկները կազմված են սառցե նուրբ ասեղիկներից: Երբեմն երբեմն միայն կտեսնեք վեցանկյունաձև ամբողջական թիթեղիկներ

Փաթիլները միշտ վեց ճառագայթ են ունենում: Եվ այնուամենայնիվ, նրանք տարբերվում են իրարից ամեն անգամ սառցե ասեղիկները դասավորվում են նոր արտասովոր զարդանախշով Մի գիտնական լուսանկարել է 2500 փաթիլ և նրանք բոլորն էլ իրարից տարբեր էին:

Գետի հաստ սառույցը կազմված է մատիտների նմանվող վեցանկյուն սյունիկներից որոնք կարելի է տեսնել գարնան հալոցքի ժամանակ: Եվ փաթիլների ասեղիկները և «մատիտիկները» սառած ջրի բյուրեղներ են

Սառույցի մանրիկ մասնիկները չէ մի այն որ բյուրեղներ են անվանում: Գրեթե բոլոր քարատեսակները գրեթե բոլոր ապարները կազմված են բյուրեղներից Մետաղների հանքաքարերը և այդ հանքաքարից ստացվող մետաղները աղը, շաքարը և մեզ շրջապատող շատ ուրիշ նյութեր բյուրեղային նյութեր են Ամենագեղեցիկ բյուրեղները թանկարժեք քարերն են

Բյուրեղներն օժտված են յուրատեսակ հատկություններով որոնք կախված են ոչ միայն այն բանից, թե ինչ ստոմներից են կազմված այդ բյուրեղները այլև թե այդ ստոմներն ինչպես են դասավորված Բյուրեղների ներքին աշխարհը թափանցելուն օգնեցին ռենտգենյան ճառագայթները հենց այն ճառագայթները, որոնցով պոլիկլինիկաներում նկարահանում են հիվանդի այս կամ այն ներքին օրգանը Պարզ

Բյուրեղներն ունենում են ամենաբազմազան ձևեր 1 բերիլ, 2 ամեթիստ, 3 սուտակ, 4 գերմանիում մետաղի բյուրեղ դենդրիտ 5 վանակն (լեռնաբյուրեղ) 6 իսլանդական սպաթ 7 կերակրի աղ, 8 երեսակված ալմաստ մատանուն ընդելուզված ադամանդ. Աղի գերհագեցած լուծույթով փորձանոթի մեջ իջեցված մետաղալարի ծայրին աճում է կերակրի աղի բյուրեղ

վեց որ բյուրեղում ամեն ատոմ կապված է որոշակի թվով հարևան ատոմների հետ որոնք նույնպես դասավորված են որոշակի կարգով. Յուրաքանչյուր բյուրեղի համար այդ թիվն ու կարգը միշտ հաստատուն են Ամեն մի նյութի բյուրեղ իրեն հատուկ ձևն ունի Կատարեք այսպիսի մի փորձ Տաք ջրով լի անոթում այնքան աղ լուծեք



որ այն այլևս չլուծվի: Բարակ մետաքսա թելի ծայրին կապեք աղի մի ավելի խոշոր բյուրեղ երբ լուծույթը սառչի անոթի մեջ իջեցրեք այդ բյուրեղը: Մի քանի օր անց կտեսնեք որ բյուրեղը խոշորացել է Մե տաքսաթելի վրա կարող է գոյանալ նույնիսկ բյուրեղների գեղեցիկ մի շարան եվ քանի անգամ էլ կրկնեք այդ փորձը նըրանք բոլորն էլ կունենան նույն ձևը:

Բայց որոշ նյութեր ունեն բյուրեղային ոչ թե մեկ, այլ երկու, երեք և նույնիսկ ավելի, խիստ որոշակի ձևեր: Այդպիսին է օրինակ *ածխածինը*: Նայած, թե ինչպես են դասավորված նրա ատոմները, այն դառնում է կամ ալմաստ գեղեցիկ, թափանցիկ, աշխարհում ամենակարծր քարը, կամ մոխրասև փափուկ գրաֆիտ, որը դուրք տեսնում եք մատիտի մեջ:

Բյուրեղներն այլ հատկություններ էլ ունեն. բյուրեղի երկայնքով և լայնքով ջերմությունը միատեսակ չի հաղորդվում Տաքացնելիս բյուրեղը տարբեր ուղղություններով տարբեր չափով է ընդարձակվում:

Գիտնականները ջանադիր ուսումնասիրում են բյուրեղները Այսօր մանրադի տակից և ռենտգենյան ճառագայթներից բացի, նրանց ուսումնասիրման համար կան շատ այլ միջոցներ

Բյուրեղներից պատրաստում են խիստ անհրաժեշտ բազմաթիվ առարկաներ: Օրինակ կիսահաղորդիչ բյուրեղները կիրառվում են ռադիոտեխնիկայում ժամացույցի քարերը նույնպես բյուրեղներ են Բյուրեղները բազմաթիվ ուրիշ կիրառություններ էլ ունեն:

տերևներ փռել այնտեղ Մեղուն կարողա նում է մեղրահաց պատրաստել թեև շատ անգամ տեսած էլ չի լինում, թե ինչպես են դա անում մյուս մեղուները. Բնագրի շնորհիվ առափնյա ծիծեռնակը բնադրում է գետնին կավաշատ գառիթափերին, իսկ գյուղական ծիծեռնակը տան տանիքների տակ

Ինչպես ուսուցիչը կյանքն էլ ամեն օր նոր խնդիրներ է առաջադրում ինչպես վարվել զանազան դժվար դեպքերում ողջ մնալու համար եվ եթե շատ դարերի ընթացքում կենդանիները հանդիպում են միևնույն խնդիրներին, դրանք այլևս չեն լուծում: Մշակվում է որոշակի բնագր, որը և ղեկավարում է նրանց վարքը

Դա անշուշտ շատ հարմար է Սակայն լինում է և այնպես որ ժամանակի ընթացքում այս կամ այն կենդանու կյանքի պայմանները փոխվում են: Իսկ նոր պայմաններում արդեն բնագրը կարող է ոչ թե օգուտ բերել այլ վնասել: Օրինակ ամերիկյան բիզոններն ունեին նախիրներով ապրելու ուժեղ բնագր: Նախրով հեշտ էր պաշտպանվելը թե արջերից և թե գայլերից Բայց երբ հայտնվեց հրացանավոր մարդը առավելությունը դարձավ թերություն, որովհետև նախրի մեջ ժողոված կենդանիներին կոտորելն ավելի հեշտ է

Բնագրը կույր է այդ եվ երբեմն, ինչպես տեսնում եք այն կարող է նույնիսկ կորստյան մատնել կենդանի էակին, բայց առանց բնագրի էլ տեսակն ամբողջությամբ վերցրած չէր կարող գոյատևել Տեսակի համար բնագրները նպատակահարմար են և օգտակար:


Բնագր

Մեծ, ուժեղ սաղմոն ձուկը համառորեն լողում է փոքրիկ, գրեթե իսպառ ցամաքած գետակի հոսանքն ի վեր: Քարքարոտ հատակը վնասում է նրա կողերը ջրածգորեն ցնցվում են ջրով հազիվ ծածկված խռիկները: Սակայն չկա մի ուժ որն ընդունակ լինի հարկադրելու նրան շրջվելու ետ դեպի լայնատարած օվկիանոսը Ռրովիետն ձկնկիրթից նա այստեղ է ծնվել, և պետք է որ այստեղ էլ լույս աշխարհի գա նրա սերունդը: Այդ է պահանջում բնագրը այսինքն կենդանու վարքի «գլխավոր» ծրագիրը, որ նա ժառանգել է իր նախնիներից Բնագրն է հենց, որ արջին հարկադրում է հարմար որջ փնտրել ձմռան համար և

Բնակարան (Կացարան)

Ռըր էլ որ բնակվելու լինի մարդը տաք երկրում, թե բևեռային շրջանից այն կողմ ծովի ափին թե բարձր լեռներում, անպայման պետք է բնակարան ունենա, որպեսզի պատսպարվի շոգից ու ցրտից, անձրևից ու քամուց: Մարդիկ միշտ էլ իրենց տները կառուցել են այն ամենից, ինչ ունեցել են ձեռքի տակ հարմարվելով բնության պայմաններին

Հին ժամանակներում մարդը որպես կացարան օգտագործել է քարանձավները շինել գետնափոր տներ և պարզ հյուղակներ Այդպիսի քարայր-բնակարաններ կային Հայաստանի ժայռաշատ վայրե-



2






3



4



5



րում Արզնիում Գեղարդաձորում Գորի սում, Խնձորեսկում, Վանում Բագարա նում Անիում Սասունում, Մանազկեր տում. Իսկ ցածրադիր վայրերում տարած ված էր գետնափոր կամ կիսագետնափոր կացարանը: Հայաստանի շատ շրջան ներում մարդիկ կառուցում էին գերանափայ բրգաձև ծածկով տներ: Այդ ծածկերը որոնց կենտրոնում երդիկն էր կոչվում են հազարաշեն կամ սողոմաքաշ

Ծայր Հյուսիսում ուր ամեն կողմ ձյուն է ու սառույց էսկիմոսներն իրենց կացարանները իգլուները կառուցում էին ձյունե աղյուսներից, իսկ պատուհանները գետի սառույցի բեկորներից: Որպեսզի տաք լիներ, խրճիթում փոկի ճարպի ճրագ էին վառում հատակն ու պատերը ծածկում գազանի մորթով

Անտառի բնակիչների վիճակն անշուշտ ավելի լավ էր Հաստ գերաններից կապված մամռով ու ծառի կեղևներով խծուծված նրանց խրճիթները հուսալիորեն պաշտպանում էին սառնամանիքից և գազաններից

Իսկ տափաստաններում ուր անտառները քիչ են տները շինում էին կավից կամ կավի ու դարմանի արևի տակ չորացրած խառնուրդից

Շատ ժողովուրդներ տեղից տեղ էին թափառում որսատեղ կամ արոտավայր գտնելու նպատակով և նրանց այնպիսի կացարան էր պետք որ հեշտությամբ հավաքվեր ու փոխադրվեր

Չուկոտյան յարանգան և նենեցական չումը պատրաստում են փայտե ձողերից որոնց վրա ձգում են եղջերուի մորթի: Չէ որ չուկչիներն ու նենեցները եղջերվա պահներ են:

Ղազախները կիրգիզները և մոնղոլները վաղուց ի վեր ոչխարներ էին բազմացնում դրա համար էլ ձողերից պատրաստված հիմնակմախքը նրանք ծածկում էին ոչխարի բրդի թաղիքով և ստացվում էր յուրդ

1 Կղմինդրածածկ քարե տուն 2. առագաստանավ հարմարեցված բնակության համար (Հարավ Արևելյան Ասիա), 3 չում եղջերվապահ չուկչիների կացարան 4 յուրդ վաշկատուն անասնապահների կացարան 5 իգլու՝ էսկիմոսների կացարան, 6 հարդածածկ խրճիթներ Նոր Գվինեայում, 7 ռուս գյուղացու խրճիթ 8 հենացքերով հարդե տնակներ 9 ճապոնական տնակ: Կենտրոնում քաղաքային ժամանակակից տուն

Հյուսիսամերիկյան հնդկացիներից ալ գոնկիները որ անտառի բնակիչներ էին ծառերի ձկուն բները խրում էին հողի մեջ ծայրերը իրար կապում ծածկում ճյուղերով եղեգով կամ ծառի կեղևով և ստացվում էր վիզվամ Իսկ սիու հնդկացիները որ որսորդություն էին անում պրեքիաներում, ապրում էին նենեցական չումերին նմանվող վրաններում տիպիներում մի այն թե դրանք ծածկում էին բիզոնի մորթով

Հենացցերով տներում ապրում են նորգվինեական պապուասները և տաք երկրների շատ այլ բնակիչներ Արմավենու տերևներով ծածկված բամբուկե (հնդկեղեգի) թեթև խրճիթները գետնից այնքան բարձր են որ նրանց համար սարսափելի չեն ոչ հեղեղները ոչ էլ գիշատիչ գազանները: Թշնամին անգամ չի կարող աննկատ մոտենալ նրանց բնակավայրին:

Ճապոնացի գեղջուկը իր տնակը շինում է բամբուկից թղթից ու խսիրներից և ոչ միայն այն պատճառով որ աղքատ է այլև այդ կացարաններն առավել անվտանգ են երկրաշարժերի ժամանակ որոնք հաճախակի են Ճապոնիայում

Հարավ-Արևելյան Ասիայում որ շատ խիտ է բնակեցված և հողը չի բավակա նացնում տուն կառուցելու համար, մարդիկ ողջ ընտանիքով բնակություն են հաստատում նույնիսկ, նավակներում, և այդպես էլ մեծ ու փոքրով ձկնորսության ելնում ծովի խորքերը:

Բայց այս բոլոր բնակարանները այն քան էլ հուսալի չեն և հաճախ են կործանվում հեղեղներից փոթորիկներից ու երկրաշարժերից:

Պարզվում է որ ամենադիմացկունները քարե կառույցներն են: Մինչև մեր օրերն են հասել մի քանի հազարամյակ առաջ կառուցված քարե տներ ու տաճարներ Բայց քարե տները թանկ էին նստում որովհետև քար կտրելն ու մշակելը հեշտ գործ չէր: Ջուր չէ որ հին ժամանակներում քարհանքերում աշխատում էին տաճանապարտներն ու ստրուկները

Եվ մարդ սկսեց որոնել այնպիսի մի շինանյութ, որը փոխարիներ բնական քարին: Սկզբում նա սովորեց կավե աղյուսներ թրծել, հետո ասպարեզ եկավ բետոնը ներկայիս ամենատարածված շինանյութը: Այժմ մարդու բնակարանը, որ կառուցվում է ամուր հիմքով դիմացկուն պատերով ու տանիքով հուսալի պաշտպան է քամուց անձրևից ու ճյուղից իսկ երկաթբետոնե

տները չեն վախենում անգամ երկրաշարժից: Այդպիսի տան բնակիչը կարիք չունի աղբյուրից կամ ջրհորից ջուր բերելու, քանի որ կա ջրմուղ, վառարան վառելու կա գազ և կենտրոնական ջեռուցում, նավ թե լամպ օգտագործելու կա էլեկտրականություն:

Այժմ մարդիկ գեղեցիկ քաղաքներ են կառուցում անգամ անապատներում գյուղերում շինում են մեծ ու հարմարավետ տներ Անտարկտիդայի սառցապատ տարածություններում ավաններ և նույնիսկ ծովի հատակն են իջեցնում առաջին ստորջրյա տները

Բնակար

Ճահճոտ հարթավայրով հենց նոր սուրաց անցավ փոթորիկը Հեռվում դեռ մոլեգնում են անձրևն ու քամին Կապտագույն ամպերը լի են խոնավությամբ, ծանրացել են ծառերի ու թփերի թաց ճյուղերը Բայց ահա հորիզոնում երկինքն սկսեց փայլել ջինջ կապույտով երևաց արևը, օդը դարձավ մաքուր ու թափանցիկ, իսկ թաց մարգագետնի վրայով սահեցին ցրվող ամպերի ստվերները: Փոթորկից խռովված բնությանն անդորր իջավ

Այս ամենը մենք տեսնում ենք 19-րդ դարի երկրորդ կեսի ռուս հայտնի բնանկարիչ Ֆ Ա Վասիլևի «Թաց մարգագետին» նկարում: Նկարչի պատկերած բնանկարը անպաճույճ է ու հիասքանչ: Հիասքանչ է ոչ թե արտաքին փայլով, այլ ճշմարտացիությամբ, իրականության պատրանքով: Դա նկարչի ջերմորեն ու ըընթշորեն սիրած հայրենի բնությունն է: Տույց տալ բնությունն իր ողջ գեղեցկությամբ միաժամանակ արտահայտելով մարդկային զգացմունքների ու ապրումների մեծ ու բարդ աշխարհը ահա բնանկարչի գլխավոր խնդիրը

Բնանկարչությունը որպես ինքնուրույն ժանր միանգամից չէ որ ձևավորվել է: Սկզբում բնանկարը ֆոն է եղել դիմանկարների կամ պատմական տեսարանների համար 16—17-րդ դարերում բնանկարը դարձավ կերպարվեստի ինքնուրույն ժանր: Այդ ժամանակ առանձնապես հռչակված էին հուլանդական նկարիչների բնանկարները


19-րդ դարում հանդես եկան բնանկարչության հայտնի վարպետները անգլիացի նկարիչներ Թյոռներն ու Կոնստեբլը



Լարիչ Տ Ա Վասիլևի «Թաց մարգագետին» կտավը

Աշունը Երևանի շրջակայքում». նկարիչ Ա. Առաքելյան

Ֆրանսիացիներ Կորոն ու Կուրբեն ավելի ուշ՝ նույնպես Ֆրանսիացիներ Մոնեն Ռենուարը Սիսլեյը Պիսսառոն, Սեզանը որոնց անվանեցին իմպրեսիոնիստներ



Աշխատելով բնության գրկում նրանք ըստեղծեցին լուսառատ կենսահույզ կտավներ: Շատ բնանկարներ են ստեղծել նաև 19-րդ դարի վերջի նշանավոր նկարիչներ ֆրանսիացի Գոգենը հոլանդացի վան Գոգը և ուրիշներ:

Իրենց կտավներում ռուսական բնության բովանդակալից և բանաստեղծական պատկերն են կերտել նկարիչ *պերեդվիժ նիկները* Ա Կ Սավրասովը Ի Ի Շիշկինը Ի Վ *Լևիտանը* Ա Ի Կուրինջին

Բնանկարն աչքի ընկնող տեղ է գրավում նաև սովետական հայտնի գեղանկարիչներ Ի. Է. Գրաբարի, Ա. Ա. Պեյնեկայի ստեղծագործություններում:

Հայ ժողովուրդը տվել է բնանկարիչների պատկառելի մի սերունդ աշխարհառջակ ծովանկարիչ Հովի *Այվազովսկի* Վ Մախոխյան, Գ *Բաշինջադյան* Է Շահին Փթերլեմեզյան Ե Թադևոսյան Ս Առաքելյան Մ Ավետիսյան Հ Հակոբյան: Անունների այս շարքում առանձնահատուկ տեղ է գրավում 20-րդ դարի հայ խոշորագույն նկարիչ Մ Ս *Սարյանը* որը մեծ վարպետությամբ է պատկերել հայրենի հեքիաթային բնաշխարհը Հայրենի բնության գողտրիկ մի անկյուն է ներկայացնում Ս Առաքելյանի «Աշունը Երևանի շրջակայքում» նկարը անվրդով մաքուր ու լուսավոր տրամադրությամբ աշխատավոր մարդու առօրյայով դեղնակարմիր ծառերի ու ձյունապատ լեռների փայլուն ներդաշնակումով

Բանաստեղծորեն պատկերելով մեզ շրջապատող բնությունը նկարիչ արվեստագետները մեր առջև բացում են նրա անսպառ գեղեցկությունները և սովորեցնում ավելի խորը սիրելու հայրենի բնաշխարհը

Բնավորություն

Ինչպիսի մարդիկ են ձեզ հատկապես դուր գալիս

Նրանք անշուշտ ովքեր խիզախ են համարձակ արի հավատարիմ իրենց պարտքին Մեզ բուրդիս միշտ էլ գրավում է մարդու բարությունը, նրբազգացությունը ազնվությունը: Մենք թվարկեցինք միայն այն մի քանի գծերը, որոնք կազմում են մարդու բնավորությունը Մարդու բնավորությունը դրսևորվում է նրա արարքներում, վարքագծում, կյանքի ու շրջապատի նկատմամբ ունեցած վե

րաբերմունքում, այն բանում, թե ինչպես է նա աշխատում կամ սովորում Համարձակ մարդը հրդեհից չի վախենա և մարդկանց փրկելու համար կմտնի անգամ այրվող տունը Հաստատական մարդը միշտ հասնում է իր նպատակին ազնիվը երբեք չի խաբում

Սովետական մարդկանց բնորոշ են այն բուրդ վեհ, գեղեցիկ հատկությունները, որ մենք թվարկեցինք Բայց նրանք ունեն նաև միանգամայն առանձնահատուկ սովետական բնավորության գծեր «Սովետական մարդկանց մեջ, — ասվում է մեր կուսակցության ծրագրում, — ձևավորվել են հոգևոր նկարագրի ընդհանուր գծեր» Չէ որ սովետական մարդկանց նպատակը մեկն է կառուցել կոմունիզմ նպատակի միասնության հետ էլ կապված են նրանց հրաշալի գծերը

Կույր ծանր հիվանդությամբ անկողնուսն գամված մարդը գիրք էր գրում Տառերը նա գրում էր մատիտով, սովորաբար թղթի վրա արված ակոսներում այլապես տողերը կխառնվեին: Աշխատանքը գեր մարդկային տոկոսություն և ուժերի լարում էր պահանջում Բայց նա գրում էր որովհետև ուզում էր մարդկանց պատմել հեղափոխության նոր կյանքի համար մղված պայքարի իր ընկերների մասին որոնց հետ մարտնչել էր սովետական իշխանության համար Այդ մարդը Նիկոլայ Օստրովսկին էր մեր ամենալավ գրքերից մեկի «Ինչպես էր կոփվում պողպատը» վեպի հեղինակը Նրա հերոսի մասին դուք կարող եք իմանալ «Պավել Կորչագին» գրույցից

1919 թ ապրիլի 12-ին Մոսկվա Սորտի րովոչևայա շոգեքարշային դեպոյի տասն հինգ բանվորներ դեպոյից դուրս չեկան այնքան ժամանակ մինչև չնորոգեցին երեք շոգեքարշ այն էլ առանց վարձատրության: Դա մեր երկրում կոմունիստական առաջին շաբաթօրյակն էր:

Հայրենական մեծ պատերազմի ժամանակ օդաչու Ալեքսեյ Մերեսևը ծանր վիրավորվելուց հետո կորցրեց զույգ ոտքի թաթերը: Թվում էր այլևս խոսք անգամ չի կարող լինել, թե նա նորից կթռչի և կկռվի ֆաշիստների դեմ Բայց Մերեսևը հրաշք գործեց: Հաղթահարելով ցավը՝ նա երկար ժամանակ մարզվում էր և սովորեց այնպես կառավարել իր պրոթեզները որ կարողացավ նորից նստել ինքնաթիռի դեկի առջև և ռազմաճակատ վերադառնալ:

Հայ ժողովրդի զավակ Հունան *Ավետիսյանը* Նովոռոսիյսկ քաղաքի ազատա

գրման ժամանակ հանձնարարությունն ըստացավ ճանապարհի բացել հարձակվող գործարարների համար: Առաջադրանքը կատարելիս Հունանը վիրավոր վիճակում կրծքով փակեց թշնամու գնդացրի հրակատարը և ապահովեց գրոհի հաջողությունը:

Այդպիսին է սովետական բնավորությունը: Մեր և նվիրվածությունն սոցիալիստական հայրենիքի հանդեպ, հաստատ համոզվածությունն կոմունիզմի հաղթանակի նկատմամբ և սեփական համոզմունքները պաշտպանելու հաստատակամությունն ահա սրանք են սովետական բնավորության կարևորագույն գծերը: Սովետական մարդուն խորթ է եսամոլությունը նրա համար թանկ են հասարակության, կուլեկտիվի շահերը, նա միշտ պատրաստ է օգնելու ընկերոջը Դուք զգում եք սովետական մարդկանց հոգևոր շռայլությունը, նրանք միշտ ձգտում են օգնել ձեզ աջակցել դժվարին պահին իրենց իմացածը հաղորդել ձեզ:

Սովետական բնավորությունը միանգամից, կախարհական գավազանի շարժումով չէ, որ ձևավորվել է: Այն դաստիարակել են մեր կյանքը, մեր իրականությունը սովետական իշխանությունը, մեր կուսակցությունը Սովետական բնավորության գծերը լավագույն մարդկանց մեջ երևան են եկել դեռևս *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից* շատ առաջ Պայքարելով ժողովրդի լուսավոր ապագայի, մեր երկրում սովետական իշխանության հաստատման համար բուշկիկները ցուցաբերում էին խիզախության ու հաստատակամության, իրենց իդեալներին խոր նվիրվածության, մարդկանց հանդեպ անձնուրաց սիրո օրինակներ: Այդպիսին էր Վ Ի *Լենինը*: Այդպիսին էին Ի Վ *Բաբուշկինը*, Ն է *Բաումանը* Մ Ի *Կալինինը*, Ս. Ս *Կիրովը* Բ Մ *Կունյանցը* Վ Վ *Կուլբիշևը* Ֆ է *Չերոխնսկին*, Ա Ֆ *Մյասնիկյանը*, Ս Գ *Շահումյանը*, Ս Ս *Սպանդարյանը*, Յա Ս *Սվերդլովը*, Գ Կ *Օրջոնիկիձեն*, Մ Վ *Ֆրունզեն* և *բուշկիկների լենինյան գվարդիայի* շատ ուրիշ փառապանծ ներկայացուցիչներ:

Դուք ում պատկանում է մեր երկրի վաղվա օրը այսօր արդեն պետք է նպատակադրվեք ինքներդ ձեր մեջ դաստիարակելու և զարգացնելու սովետական բնավորության գծերը օրինակ վերցնելով սովետական երկրի լավագույն մարդկանցից: Եվ դա պետք է անել դպրոցական նստարանից սկսած:

Բնության մեջ ամեն բան սերտորեն կապված է միմյանց Մարդը ինքը լինելով բնության մի մասնիկը նույնպես կապված է շրջակա միջավայրի հողի, գետերի օդի և շրջապատում ապրող մյուս բոլոր օրգանիզմների հետ: Գիտությունն օգնում է մեզ քննելու և բացատրելու այդ նրբին փոխադարձ կապերը որպեսզի նախ և առաջ մենք ինքներս մեզ չվնասենք:

Մի ժամանակ մարդը լավ չիմանալով բնության օրենքները անխնա ոչնչացնում էր բոլոր գիշատիչ կենդանիներին՝ գայլերին աղվեսներին ուրուրներին Իսկ հետո պարզվեց որ այնտեղ ուր ոչնչացրել էին գայլերին սկսել են հիվանդանալ եղջերուները Աղվեսների և գիշատիչ թռչունների բացակայությամբ կրծողներն այնքան էին բազմացել, որ մեծ վնաս էին հասցնում գյուղատնտեսությանը Օգուտի փոխարեն վնաս էր ստացվում:

Գիշատիչներն ու նրանց կերակուրը դարձող մյուս կենդանիները կողք կողքի գոյություն ունեն արդեն շատ հազարավալկներ և այդ ընթացքում մշակվել է մի այնպիսի բնական հավասարակշռություն, որն օգնում է գոյատևելու թե՛ առաջիններին և թե՛ երկրորդներին:

Բնության այդ հավասարակշռության մասին է ահա որ մարդը չպետք է մոռանա:

Վերցնենք այսպիսի մի օրինակ Թունաքիմիկատները ոչնչացնում են վնասատու միջատներին Եթե դրանցով սրսկենք դաշտերն ու անտառները, ապա բոլոր վնասատու միջատները կոչնչանան: Բայց դրանց հետ միասին կարող են ոչնչանալ նաև օգտակար կենդանիները որովհետև տասնյակ հազարավոր թռչուններ, հարյուրավոր որմզդեղներ ու նապաստակներ սննդի հետ թույն էլ կստանան:

Ծխի քուլաներով կեղտոտված օդից կեղտաջրերով աղտոտված գետերից վր նասվում է ոչ միայն բնությունը այլև հիվանդանում ու տառապում է նաև մարդը Ահա թե ինչու այն ինչ մենք անվանում ենք բնության պահպանություն կամ ավելի ճիշտ բնական միջավայրի պահպանություն, վերջին հաշվով հենց մարդու պահպանումն է Դա մեր ապագայի պահպանումն է այն կյանքի որ երկրագնդի վրա կշարունակվի մեզանից հետո կամ էլ կդադարի մեր մեղքով:

Ողջ աշխարհի գիտնականները վաղուց են տազնապում: Նրանք ապացուցել են, որ

Պատանի անտառապահները վերաբնակեցնում են մրջյուններին Որբան անտառում շատ լինեն այդ փոքրիկ սանիտարները այնքան առողջ կլինի անտառը



հարկավոր է մանրագնին կշռադատել մարդու կողմից բնության ամեն մի մի ջամտություն:

Բնության պահպանությանը առանձնապես մեծ նշանակություն է տրվում մեր երկրում Սովետական Միությունում Մեզ մոտ գոյություն ունեն բնության պահպանության մասին հատուկ օրենքներ և ամեն մարդ պարտավոր է հետևել դրանց Չէ որ մեր սերունդներին էլ են անհրաժեշտ լինելու կանաչապատ տարածությունները մաքուր ջուրը, թռչունների դալալը երկրի ողջ գեղեցկությունը

Մարդը երկրագնդի վրա արդեն ոչնչացրել է ավելի քան 270 տեսակի վայրի կենդանիներ: Այն կենդանիները, որոնց ևս սպառնում է անհետացումը, ընդգրկված են Բնության պահպանության միջազգային միության «Հազվագյուտ և անհետացող կենդանիների կարմիր գրքում» Դրանք խնամքով պահպանվում են: Այդ ցուցակի մեջ մտել են ոչ միայն անվնաս ու անօգնական կենդանիները այլև հզոր ռեզերվուրն ու քամու պես սուրացող բծավոր հեպարդը: Անհետացումն ըստ պառնում է նույնիսկ վագրին Եվ ոչ թե սուսկ այն պատճառով, որ նրա մորթին թանկ է գնահատվում, այլև որովհետև մարդը, նոր հողեր յուրացնելով կրճատում է վայրի կենդանիների բնակության

վայրերը Օրինակ այնտեղ, ուր գարնանը անտառ են հատում այլևս բնակություն չեն հաստատում զգուշավոր խլահավերք կամ երկչոտ աքարները չեն զուգավորվում գեղեցիկ ցախաբլուրները: Դրա համար էլ բոլոր երկրներում կան *արգելանոցներ* վայրեր, ուր պահպանվում է կենդանիների և բույսերի կուսական աշխարհը: Արգելանոցներում գիտնականներն ուսումնասիրում են բնության օրենքները

Բայց արգելանոցից դուրս էլ մարդը պետք է խելացի օգտագործի բնության հարստությունները հողը անտառը ձկան թռչունների ու գազանների պաշարները որոնք անհրաժեշտ են իր սննդի և արդյունաբերության համար Կենդանի բնության ուժերին մարդը պետք է օգնի վերականգնելու, իսկ դրա համար հարկավոր է խորապես ուսումնասիրել բնության օրենքները բոլոր կենդանի օրգանիզմների առանձնահատկությունները Ամեն ոք պետք է իմանա որ մենք բոլորս սերտորեն կապված ենք բնության հետ և մեզանից յուրաքանչյուրն իր արարքների համար պատասխանատու է ներկայի և ապագայի առջև:

Բերենք սուսկ մի օրինակ Մերձմուսկովյան վայրերում իսպառ անհետացել են բույսերի որոշ տեսակներ և մեղավորները միայն զբոսաշրջիկներն ու հովեկներն են

հսկայական ծաղկեփնջերի սիրահարները։ Այնպես որ դուք էլ մտածելու բան ունեք՝ Հիշեցեք, Երկիրը ձերն է եվ դուք պարտավոր եք պայքարել, որ նա մնա բարի ու չքնաղ որ այնտեղ ապրեն զգուշավոր գազաններն ու գեղգեղուն թռչունները որ լավ, ուրախ ապրեք այնտեղ դուք և ձեր երեխաները։

Մեր հարազատ բնությունն ավելի լավ ճանաչելուն ու սիրելուն, նրա հավատարիմ պաշտպանը դառնալուն ձեզ կօգնեն հետևյալ գրքերը

Шам Э. Ю Сказки, найденные в траве М «Дет. лит.» 1972

Смирнов А В, Лес, М «Дет лит», 1973

Բուլշևիկների լենինյան գվարդիա

Նրանց անուններն ընդմիջտ կմնան սովետական մեր հայրենիքի լենինյան մեծ կուսակցության հերոսական տարեգրության մեջ։ Նրանք Ռուսաստանի հեղափոխական բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության պանծալի ներկայացուցիչներն էին, որոնք բոլորանվեր զինվորագրվեցին հեղափոխության գործին և Ի Լենինի հետ միասին նրանք ստեղծեցին կոմունիստական կուսակցությունը բանվորներին առաջնորդեցին դեպի 1905 թ բարիկադները, 1917 թ նրանց գրոհի տարան տապալելու ցարական ինքնակալությունն ու բուրժուազիային։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ նրանք պաշտպանում էին երիտասարդ սովետական հանրապետությունը, խաղաղ շինարարության տարիներին վարում պետական կարևոր պաշտոններ

20 ռդ դարի արշալույսին Լենինի ստեղծած «Իսկրա» բանվորական թերթի շուրջը համախմբվեցին մի խումբ պրոֆեսիոնալ հեղափոխականներ Ի Վ Բաբուշկինը, Ն է Բաումանը, Մ Ի Կալինինը, Գ Մ Կրոֆ-ժանովսկին, Ն Կ Կրուպսկայան, Ս Գ Շահումյանը, Ս Ս Ապանդարյանը, Գ Ի Պետրովսկին Բ Մ Կուլեյանցը, Ֆ Ա Սերգենը (Արտյոմ), Յա Մ. Սվերդլովը Ի Վ Ստալինը, Ե Դ Ստասովան և շատ ուրիշներ։ Մենք նրանց անվանում ենք պրոֆեսիոնալ հեղափոխականներ որով հետև տակավին երիտասարդ նրանք ներգրավվեցին հեղափոխական շարժման մեջ և իրենց կյանքի հիմնական նպատակը

դարձրին պայքարը հանուն Ռուսաստանում պրոլետարական հեղափոխության հաղթանակի։ Ընդհատակի և ոստիկանական հետապնդումների պայմաններում նրանք միավորեցին Ռուսաստանի հեղափոխական բանվորական կազմակերպությունները և ստեղծեցին պրոլետարական գանգաձայնի կուսակցություն

Հեղափոխական պրոլետարիատի գլուխ էին կանգնած լենինյան գվարդիայի փառապանծ գավակները։ Արդյունաբերական խոշոր կենտրոններում բանվորների հեղափոխական շարժումը գլխավորում էին Յա Մ Սվերդլովը Ֆ Ա Սերգենը (Արտյոմ) Գ Ի Պետրովսկին Ս Մ Կրոպը Ա Ի Կալինինը Վ Վ Կուլբիշևը, Կ Ե Վորոշիլովը, Գ Կ Օրջոնիկիձեն Ս Գ Շահումյանը Ֆ է Չերժինսկին։ Իվանով-Վոզնեսենսկ քաղաքում ստեղծված բանվորների դեպուտատների առաջին սովետի ղեկավարը Մ Վ Ֆրունզեն էր

1905 թ հեղափոխությունից հետո սկսված ռեակցիայի տարիներին կուսակցության նշանավոր շատ գործիչներ ձերբակալվեցին կամ հարկադրված եղան ցարական պահնորդական բաժնի հետապնդումներից թաքնվել արտասահմանում։ Սակայն ոչ բանտերը, ոչ էլ աքսորն ու տաժանակրությունը չընկճեցին լենինյան գվարդիայի աննկուն ու քաջարի բուլշևիկների կամքը Լենինի կուսակցությունը, նրա ընկերներն ու զինակիցները միավորեցին բանվորների ու գյուղացիների հեղափոխական ելույթները, նրանց առաջնորդեցին վճռական մարտի ընդդեմ ինքնակալության, ընդդեմ բոլոր կեղեքիչների

1917 թ հոկտեմբերին Պետրոգրադում տեղի ունեցած զինված ապստամբությունը Լենինի հետ միասին ղեկավարում էին Ֆ է Չերժինսկին Մ Ի Կալինինը Ն Ի Պոդվոյսկին Յա Մ Սվերդլովը Ի Վ Ստալինը, Գ Կ Օրջոնիկիձեն և ուրիշներ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը որը տեղի է ունեցել ավելի քան 66 տարի առաջ, մի նոր էջ բացեց պատմության մեջ։ Հեղափոխական շարժումը ծավալվում էր ողջ երկրով մեկ Պետրոգրադից և Մոսկվայից հետո բանվորներն իշխանությունն իրենց ձեռքը վերցրին նաև ուրիշ քաղաքներում։ Սակայն տապալված դասակարգերը գեները վայր չէին դնում նրանք դեռևս հույս ունեին, թե օտարերկրյա բուրժուազիայի օգնությամբ կկարողանան վերականգնել իրենց իշխանությունն ու հարստությունը Կապիտալիստական տասնչորս պետու-

յուններ որոնց աջակցում էին հեղափոխության Ռուսաստանի ներսում գտնվող թշնամիները հարձակվեցին սովետական երիտասարդ հանրապետության վրա Բանվորների ու գյուղացիների առաջին պետության կենաց և մահու խնդիրն էր դրված: Երկրի համար դժվարին այդ շրջանում լենինյան գվարդիայից աճեցին հիանալի շատ զորավարներ ու զորապետներ

Դուք անշուշտ արդեն լսել եք Ս Մ Բուդյոննու փառապանծ լեգենդար հեծելազորի մասին որը մարտում երբեք չէր պարտվում Ս Մ Բուդյոննին և Կ Ե Վորոշիլովը պարտիզանական մի փոքր ջոկատից ստեղծեցին Առաջին հեծյալ բանակը, որը ջախջախիչ հարվածներ էր տեղում սովետական երիտասարդ հանրապետության թշնամիների գլխին 1935 թ Ս Մ Բուդյոննին դարձավ Սովետական Միության առաջին հինգ մարշալներից մեկը Մարշալի կոչում շնորհվեց նաև Կ Ե Վորոշիլովին Կարմիր բանակի մարտական զորավարներից էր Մ Վ Ֆրունզեն Ավելի քան 20 տարի հայրենիքի պաշտպանության գործին էր նվիրված Վ Կ Բլյուխերը Քաղաքացիական պատերազմի նշանավոր զորապետներից էին լեգենդար Ն Ա Շչորսը հայ ժողովրդի պանծալի զավակ Գայը (Հ Բժշկյան) Կարճ բայց պայծառ կյանքով ապրեց Հեռավոր Արևելքի պարտիզանական կռիվների ղեկավարներից մեկը Ս Գ Լազոն: *Բաքվի 26 կոմիսարների* շարքում հերոսաբար զոհվեց Բաքվի բանվորների ղեպուտատների սովետի առաջին նախագահ Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ս Գ Շահումյանը:

Հաղթանակ տանելով միջազգային իմ պերիալիզմի և ներքին հակահեղափոխության միացյալ ուժերի դեմ երկրի բանվոր դասակարգը բոլոր աշխատավորները ձեռնամուխ եղան գլխավոր խնդրի լուծմանը սոցիալիստական հասարակարգի կառուցմանը Սովետական իշխանությունը դիմացավ բոլոր փորձություններին և գործով ապացուցեց որ արտահայտում և պաշտպանում է ժողովրդի շահերը

Լենինյան կուսակցության երեք հեղափոխությունների քաղաքացիական պատերազմի բովով անցած փառապանծ գվարդիականներն սկսեցին ղեկավարել խաղաղ շինարարությունը կենսագործել նոր կյանքի կառուցման Լենինի մշակած պլանը:

Գյուղացու որդի պետրոգրադցի բանվոր Մ Ի Կալինինը դարձավ սովետական պե

տուբյան գերագույն մարմնի ղեկավարը Վ Վ Կուլբիշևը որը Ֆ Է Չերժինսկու մահից հետո գլխավորում էր երկրի գերագույն տնտեսական մարմինը (ժՏԳԽ), աչքի ընկնող դեր կատարեց մեր երկրում սոցիալիստական բարեփոխությունների իրականացման գործում Սովետական կառավարության առաջին ժողովմներից էր Ս Վ Լուևաչարսկին: Տասներկու տարի նա ղեկավարում էր Ռուսաստանյան հանրապետության ժողովրդական լուսավորությունը վիթխարի աշխատանք ծավալում նոր սովետական դպրոցի ստեղծման, անգրագիտության վերացման, սոցիալիստական մշակույթի ստեղծման ու զարգացման գործում:

Պանծալի իրադարձություններով և լեգենդար հերոսներով հարուստ է *Սովետական Միության կոմունիստական կուսակցության* պատմությունը:

Մենք ձեզ պատմեցինք լենինյան գվարդիայի միայն մի քանի մարտիկների մասին

Մենք ուզում ենք, որ այս փոքր գրույցը ձեր մեջ հետաքրքրություն առաջացնի ավելի մոտիկից ծանոթանալու մեր կուսակցության հերոսական պատմությանը, նրա հիանալի զավակներին

Վ. Ի Լենինի մերձավոր զինակիցների մասին պատմում է հետևյալ ժողովածուն.

Жизнь в борьбе. II. «Дет. лит» 1972

Բոր Նիլս

1885 —
1962

1943 թ աշնանային մի մուլթ գիշեր Դանիայի ափերից գաղտնի հեռացավ փոքրիկ մի նավ: Բարեհաջող անցնելով էրեսուն նեղուցը նավը խարխիս նետեց Շվեդիայում: Ափ իջան հիտլերականներից փախած երկու մարդ

Մի քանի ժամ անց փախստականներին ոմբակոծիչով ուղարկեցին ԱՄՆ Ինքնաթիռում տեղ չկար, դրա համար էլ սկզբում վերցրին միայն ավագին և տեղավորեցին ոմբախցում

Ո՞վ էր այդ խորհրդավոր դանիացին Ինչո՞ւ համաշխարհային պատերազմի այդ թեժ պահին այդքան ջանք, ժամանակ ու միջոցներ ծախսեցին նրան Դանիայից ԱՄՆ հասցնելու համար

Դա 20-րդ դարի մեծ գիտնական ֆիզիկոս Նիլս Բորն էր Իսկ ֆաշիստները հետապնդում էին նրան իրենց ձեռքը գցելու համար, որովհետև հույս ունեին նրա օգ



հայտման մեջ. Բայց նա հայտնի է նաև որպես խաղաղության, ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման աննկուն մարտիկ. Պատերազմի ժամանակ նա հրաժարվեց մասնակցել ատոմային ռումբի ստեղծմանը: Հետագայում էլ նա բոլոր երկրների կառավարություններին միշտ կոչ էր անում արգելել ատոմային զենքը:

Բջիջ

Նույնպե՛ս ստեղծել ատոմային զենքը

Կեսդարյա գիտական աշխատանքի ընթացքում Նիլս Բորը նյութի կառուցվածքի բազմաթիվ գաղտնիքներ բացահայտեց. նա առաջինը ստեղծեց *ատոմի* արդի մոդելը, բացատրեց, թե ինչպես է կառուցված ատոմը. Դրա համար նրան շնորհեցին Նոբելյան մրցանակ

Երկար տարիներ Նիլս Բորը ղեկավարում էր Կոպենհագենի ֆիզիկական պրոբլեմների ինստիտուտը. Ամբողջ աշխարհի ֆիզիկոսները հաշվի էին նստում նրա հեղինակության հետ «Ի՞նչ նոր բան է ասել Բորը», — հարցնում էին Եվրոպայի, Ասիայի, Ամերիկայի լաբորատորիաներում: Բորի մոտ գիտական խորհրդակցությունների սեմինարների էին գալիս բոլոր երկրների անվանի ֆիզիկոսները. Այնտեղ լինում էին նաև մեր սովետական գիտնականները. Իսկ ինչպես էին ուզում այնտեղ լինել երիտասարդները. Այդ սեմինարներում բանավիճում էին հաշվի չառնելով ոչ տարիք, ոչ կոչումներ, որովհետև գիտական ճշմարտության առջև ամենքն էլ հավասար են. Ինքը Բորը կարող էր մի քանի օր վիճել ուզածը երիտասարդ գիտնականի հետ: Եվ երբեք համառորեն չէր պնդում իր տեսակետները, եթե որևէ մեկը համոզիչ կերպով հերքում էր դրանք: Նա ասում էր, որ չի վախենում երիտասարդների առջև անգետ երևալ: Գլխավորը ճշմարտությունն է և սիրած գիտության զարգացումը

Շատ նոր բան է մուծել Նիլս Բորը ֆիզիկայի, ատոմի գաղտնիքների բացա-

Անցյալ դարում արդեն գիտնականները պարզել էին որ ամենայն կենդանին, լինի մարդ թե ցորեն, գորտ թե *մանրէ*, կազմված է բջիջներից. Միայն թե մանրէն ընդամենը մեկ բջիջ է, իսկ խնձորենու տերևը՝ 50 մլն. Բջիջների մեծ մասը կարելի է տեսնել միայն մանրադիտակով. Բայց կան և հսկա բջիջներ, օրինակ՝ ձկնկիթի հատիկը կամ հավի ձուն:

Բայց որքան էլ զանազանվեն իրարից տարբեր կենդանիների և բույսերի բջիջներն ընդհանուր շատ բան ունեն.

Բջիջը սովորաբար կազմված է կիսահեղուկ ցիտոպլազմայից և ավելի խիտ, կլոր կամ ձվաձև կորիզից: Հարևան բջիջները միմյանցից և կորիզը ցիտոպլազմայից անպայման բաժանվում են թաղանթով

Երբ գիտնականներն առաջին անգամ, արդեն մեր օրերում, հարյուր հազար անգամ խոշորացնող էլեկտրոնային մանրադիտակով նայեցին մի բջջի, շատ հետաքրքիր բաներ տեսան. Պարզվում է, կորիզի թաղանթում անցքեր կան: Նրանց շուրջը խմբված են գերմանր գնդիկներ՝ ռիբոսոմներ. Բջիջներում գտնվող այդ ռիբոսոմները կարելի է համեմատել հսկա գործարանի արտադրամասերի հետ. Ներանց պատրաստում են այն նյութերը, որոնցից կազմված է բջիջը, և, ամենազբախավորը, նաև այնպիսի նյութեր, որոնց պատրաստման համար օրգանիզմին անհրաժեշտ է հենց ինքը բջիջը: Օրինակ, արյան սպիտակ գնդիկների ռիբոսոմները հակաթույն են պատրաստում վնասակար մանրէների և նրանց արտադրած թույների դեմ պայքարելու համար: Իսկ արյան կարմիր գնդիկների ռիբոսոմները արտադրում են հեմոգլոբին՝ որը կարմիր է ներկում մեր *արյունը* և ողջ մարմնով մեկ տարածում *թթվածինը*:

Աշխատելու համար արտադրամասերին անհրաժեշտ է էներգիա. Այն անհրաժեշտ է նաև ռիբոսոմներին: Դրա համար ամեն մի բջիջ ունի իր սեփական «էլեկտրակայան-



Բջջի կա
ռուցվածքը
1 կորիզակ
2 կորիզ
3 միտոքոնդ
րիա (կը
տըրվածքը)
4 ռիբոսոմ
5 6 բջջի
երկշերտ
թաղանթ

ները» այսպես կոչված միտոքոնդրիա-
ները:

Բջջիներն անընդհատ աշխատում են դրա համար էլ մաշվում են և մեռնում Հապա օրտեղից են հայտնվում նոր բջջե-
ները: Բջջիներն ընդունակ են կիսվելու, և մեկից առաջանում են երկուսը Բջջիների կիսվելու ընթացքը հաջողվել է հետազո-
տել մանրադիտակով:

Բարդ օրգանիզմում, օրինակ, մարդու մարմնում, շատ տարբեր բջջիներ կան Դրանց մի մասից գոյանում են ոսկորները, մյուսից մկանները: Այդ բջջիները կարող են կծկվել, որի շնորհիվ էլ մենք շարժվելու ընդունակություն ունենք: Արյան կարմիր բջջիները տեղափոխում են թթվածինը Մաշկի բջջիները պաշտպանիչ ծածկ են ստեղծում մարմնի համար: Կան նյարդա-
յին բջջիներ, որոնք ընկալում են ցավը, ջերմությունը, ցուրտը և գրգիռը փոխան-
ցում նյարդային այլ բջջիների օրգանիզմի ամենակարևոր օրգաններից մեկի՝ գը-
խուղեղի բջջիներին

Կարելի է ասել, որ յուրաքանչյուր բջջի մի «նեղ մասնագետ» է: Դա ամեն մի բջջի


օգնում է յուրովի էլ ավելի լավ ծառայելու ամբողջ օրգանիզմին

Բռնցքամարտ

Ի՞նչ ուժ ունի բռնցքամարտիկի հարվածը: Դա կարելի է միանգամայն ըս-
տույզ պարզել հետևյալ կերպ Բռնցքա-
մարտիկը հարվածում է սարքի կաշվե բար-
ձիկին: Ջսպանակը սեղմվում է, և սլաքը
ցույց է տալիս հարվածի ուժի չափը

Բռնցքամարտով չգրադվող մարդու հարվածի ուժը 60 — 80 կգ է, իսկ ՍՍՀՄ ութակի չեմպիոն Վիկտոր Միխայլովի շեշ-
տակի հարվածը կշռում է 300 կգ:

Մի անգամ Միխայլովին, երբ նա դեռ ծառայում էր սովետական բանակում, մարտի հրավիրեց իրենց գյուղում ան-
պարտելի կռիվամարտիկի համբավ վայե-
լող մի գինվոր, որի հասակը համարյա 2 մ էր, քաշը մոտ 100 կգ: Նրա կողքին նիհարավուն, միջահասակ Միխայլովն այնքան էլ ազդու տեսք չուներ



1956թ օ
 իմպիական
 խաղերի
 չեմպիոն
 Վլադիմիր
 Ենգիբար
 անը մրցա
 մարտի պա
 ոհն

Մենամարտն սկսվեց. Սկզբում Միխայլովը հեշտությամբ խուլյս էր տալիս իր ոյուցազնակերպ հակառակորդի հարվածներից, իսկ հետո զգուշացրեց «Դե հիմա դիմացիր»

Հարմար պահ ընտրելով Միխայլովը մի արագ ու հատու հարված հասցրեց երիտասարդի ծնոտին՝ Սրա ծնկներն անմիջապես ծավվեցին։ Միխայլովը բռնեց նրա թնատակերից և զգուշորեն իջեցրեց հատակին

Բռնցքամարտիկի հարվածն այդպես ծանր է, որովհետև նա ձեռքի հետ միասին հարվածելու է մղում նաև իրանը Այդպիսի ուժգին հարվածից հարվածող մարզիկի մատները կվնասվեին, հակառակորդն էլ վերջեր կստանար։ Ահա թե ինչու մարտից առաջ բռնցքամարտիկներն ամուր փաթաթում են ձեռքերի դաստակները և հազնում մազով լցված ձեռնոցներ։ Հենց նույն նպատակով էլ մրցամարտերում հանդիպում են միայն միևնույն քաշի բռնցքամարտիկները Գոյություն ունի 11 քաշային կարգ թեթևագույնից (մինչև 48 կգ) մինչև ծանրը (81 կգ-ից բարձր) Արգելվում է հարվածել գոտկատեղից ցածր, ծոծրակին, մեջքին. ԱՄՆ-ում և կապիտալիստական այլ երկրներում տարածված է նաև պրոֆեսիոնալ բռնցքամարտը, որի կանոնները թույլ են տալիս մարտը վարել մարզիկների առողջության համար վտանգավոր ձևերով

Սիրողական բռնցքամարտում պայքարն ընթանում է 3 հերթամարտում (ռաունդ) յուրաքանչյուրը 3 րոպե տևողությամբ Հաղթում է նա, ով հակառակորդին ավելի շատ դիպուկ հարվածներ է հասցնում, կամ էլ նա, ով մրցակցին ենթարկում է նոկաուտի մի այնպիսի ուժ-

գին հարվածի, որից տապալված հակառակորդը այլևս ի վիճակի չի լինում շարունակելու մարտը Մարզիկների դիպուկ հարվածները հաշվում և նրանց օգտին են գրանցում ճոպաններով շրջափակված մրցասպարեզի (ռինգի) չորս կողմը նստած դատավորները

Բռնցքամարտի սովետական դպրոցը ճանաչվածներից մեկն է աշխարհում Զուր չէ, որ մեր բռնցքամարտիկները, ինչպես նաև կուբացի, լեհ և հունգարացի մարզիկները, միջազգային մրցամարտերում և օլիմպիական խաղերում շատ հաճախ են նվաճում մրցանակային առաջին տեղերը

Միջազգային և միութենական զանազան առաջնություններում իրենց վարպետությամբ փայլել են հայ բռնցքամարտիկները։ Օլիմպիական խաղերի և Եվրոպայի չեմպիոն է դարձել Վ Ենգիբարյանը, Եվրոպայի առաջնության երկրորդ մրցանակակիր Կ Զաներյանը Տարբեր ժամանակներում ՍՍՀՄ չեմպիոններ են եղել Լ Թեմուրյանը, Ա Պայայանը, Դ Վարդանովը, Ս Նավասարդովը, Ա Հարությունյանը, Է Արիստակեսյանը, Վ Ենգիբարյանը, Ս Ղազարյանը, Կ Սարոյանը, Ս Դուրյանը, Դ Թորոսյանը, Ա Ավետիսյանը Ի Հակոբբեքիսյանը, Վ Մանուկյանը, Մ Մուրադյանը, Ս Խաչատրյանը՝

Բրազիլիա

(Բրազիլիայի Տեղերատիվ
 Հանրապետություն)




Բրազիլիան Հարավային Ամերիկայի ամենամեծ պետությունն է Գրեթե 500 տարի առաջ ներկայիս Բրազիլիայի ափերին մոտեցավ պորտուգալացի ծովագնաց Պեդրու Կաբրալի նավը Ծովագնացն ափ իջավ և հայտարարեց, որ այդուհետև այդ հողերը լինելու են Պորտուգալիայի տիրույթները. Տեղաբնակ հնդկացիները փորձեցին ընդդիմանալ նվաճողներին բայց պարտվեցին։ Նրանց մի մասը ստրկության մատնվեց, իսկ մյուսները թաքնվեցին երկրի խորքում արևադարձային անանցանելի ջունգլիներում

Նվաճողներն սկսեցին երկրից արտահանել ոսկի, թանկարժեք քարեր և արծեքավոր ծառատեսակներ, հատկապես կարմիր ծառ, որին պաու բրազիլ էին անվանում Այդտեղից էլ ծագել է երկրի անվանումը Բրազիլիա

ԲՐԱԶԻԼԻԱ


Տարածությունը 8 512 000 քառ.կմ
Բնակչո թյո նը մոտ 29 000 000
մարդ



- Սև մետաղի արդյունաբերություն
- Ավտոմոբիլային արդյունաբերություն
- Նավթավերամշակման արդյունաբերություն
- Տեքստիլ արդյունաբերություն
- Նավթի արդյունահանում
- Հանքաքարի արդյունահանում
- Կառուցական շինություններ
- Հիդրոէլեկտրակայաններ
- Ադախաթենի (բանան)
- Հացահատիկահանք (ցորեն)
- Կակաո

- Անասնապահություն
- Կարմիր ցորեն
- Բրինձ
- Շաքարեղեգ
- Բամբակեն

Օղակային նավահանգիստներ



18-րդ դարի սկզբին Բրազիլիան ազատագրվեց պորտուգալացիների լծից իսկ 19-րդ դարի վերջին դարձավ ֆեդերատիվ հանրապետություն։

Բրազիլիայում ամբողջ տարին շոգ է հաճախակի են անձրևները և շատ խոնավ է երկրի բնակչության մեծ մասն ապրում է Ատլանտյան օվկիանոսի ափին։ Այստեղ են կառուցված ամենամեծ քաղաքները (այդ թվում Հարավային Ամերիկայի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը Ռիո դե Ժանեյրոն), համարյա բոլոր ֆաբրիկա-


ներն ու գործարանները, այստեղ են սուրճի հիմնական պլանտացիաները։ Աշխարհում սպառվող սրճի մեծ մասը մշակում են Բրազիլիայում։ Մշակում են նաև կակաո բամբակենի, շաքարեղեգ։

Երկրում կան հիդրոէներգիայի, բնափայտի արևադարձային արժեքավոր տեսակների, երկաթի, մանգանի հանքաքարի և շատ ուրիշ հազվագյուտ մետաղների հսկայական պաշարներ։ Զարգացած է խոշոր արդյունաբերությունը, կան ավտոմոբիլային և քիմիական, մեքենաշինական և

մետալուրգիական շատ գործարաններ Մայրաքաղաքը Բրազիլիա քաղաքն է Բրազիլիայի տարածքով, արևադարձային անտառների խուլ թավուտներով հոսում է աշխարհի ամենախոշոր ու ամենագեղեցիկ գետերից մեկը Ամազոնը Կարելի է օրեր շարունակ նավարկել Ամազոնում և ճանապարհին ոչ մի բնակավայր չտեսնել: Գետի մակերևույթին շատ մոտիկ սլանում են կանաչ թուփերի երամները, երբեմն երբեմն ճյուղերից դուրս է նայում կոչիբրին: Թավուտում կոտրատվող ճյուղերի ճարձատյուն է լսվում այնտեղ ցատկոտում են անհամար կապիկները: Ծանծաղուտում արևկող են անում կոկորդիլոսները: Հազվադեպ, միայն հեռվում, ծառերից վեր, ճամփորդի աչքին կզարնի խարուկի ծուխը նշանակում է, մոտերքում հնդկացիների բնակավայր կա Նախքան պորտուգալացիների ափ հջնելը, երբ հընդկացիներն իրենք էին երկրի տերը, նրանք մի քանի միլիոն էին: Իսկ այժմ շատ սակավաթիվ են Մեծամասնությունը գոհ գնաց նվաճողների բռնություններին ուժից վեր աշխատանքին սովին ու հիվանդություններին:

Բայց Բրազիլիայում միայն հնդկացիները չէ, որ վատ են ապրում Ծանր է նաև բրազիլական գյուղացիների ու բանվորների կյանքը: Օրինակ, երբ սկսվում է երաշտների ժամանակը, հազարավոր գյուղացիներ, ունեցած-չունեցածը բարձելով սայլերին, լքում են հարազատ վայրերը և բռնում թափառումների ճամփան դեպի հարավի մեծ քաղաքները հուսալով գտնել այնտեղ աշխատանք գտնել և սովամահությունից փրկել իրենց երեխաներին:

Բրազիլիա
Քաղաքը



Բրածո բույսեր և կենդանիներ


Միլիոնավոր տարիներ առաջ այնտեղ, ուր այժմ տարին բոլոր ձյուն է նստած, տաք էր Մենք գիտենք, օրինակ, որ 500 մլն տարի առաջ ցամաքն անբնակ էր, իսկ կյանք գոյություն ուներ միայն ծովերում և օվկիանոսներում: Գիտենք նաև, որ մոտ 400 մլն տարի առաջ ցամաքի վրա հայտնվեցին առաջին երկկենցաղներն ու միջատները Այդ ամենը մարդիկ ինչպես իմացան Մեր մոլորակի հեռավոր անցյալի մասին պատմում են հնադարյան կենդանիների այն ժամանակներից պահպանված խեցիներն ու կմախքները, բույսերի ու կենդանիների քարերի վրա թողած դրոշմները:

Հավերժական սառցույթում, քարանձավների տաք օդում նավթահորերում մահացած կենդանիները լավ են պահպանվում: Լենինգրադի կենդանաբանական թանգարանում մամոնտի մի խրտվիլակ կա: Կենդանուն գտել են Սիբիրի Բերյոզովկա գետակի ափին Հավերժական սառցույթում պահպանվել են ոչ միայն կմախքը, այլև մկանները, կաշին և բուրդը: Գիտնականները որոշեցին, որ մամոնտն ապրել է 11 հզ տարի առաջ Հատուկ սարքերի օգնությամբ գիտնականները կարողանում են ստույգ իմանալ հնադարյան կենդանիների և բույսերի մնացորդների տարիքը:

Մոնղոլիայի անապատներում գիտնականները հայտնաբերեցին հնադարյան մողեսների հսկա կմախքներ. Այդ կմախքներով գիտնականները վերականգնեցին հնադարյան շատ կենդանիների, օրինակ, 27 մ երկարություն ունեցող վիթխարի մողեսի դինոզավրի, ատամնավոր թռչնի արխեոպտերիքսի, հնադարյան ծովերի գիշատչի տասներկու մետրանոց իխտիոզավրի, արտաքին տեսքը:

Երբեմն գտնում են ծառերի քարացած բներ, քարերի վրա տերևների ու մանր





Այս կենդանիները մի ժամանակ ապրել են մեր մոլորակի վրա. Կերևում՝ մողես-դինոզավրերի մի խումբ: Ներքևում հնադարյան ծովերի բնակիչներ Ներքևի ձախ անկյունում ութ մետրանոց ձկնամողես՝ իխտիոզավր: Նրա կողքին զրահաձուկն է որի մարմինը պատած է ոսկրե զրահով Ավելի վեր ծովային մողեսներն են տիլոզավրը և պլեզիոզավրը Ծովերում ապրել են նաև ամոնիտներ գալարածալ խեցիներով փափկամորթներ: Թռչող մողեսների պտերա նողոնների թևերի բացվածքը հասնում էր 8 մ ի

կենդանիների դրոշմներ Ինչ-որ մի ժամանակ տերևը կամ մահացած կենդանին ընկել են ջրի մեջ, ծածկվել տիղմով: Հետո կենդանու կամ բույսի մնացորդներն աստիճանաբար քայքայվել են Բայց ծովային տիղմի վրա նրանց թողած դրոշմը կարծրացել է և պահպանվել

Դպրոցական սովորական կավիճը ոչ այլ ինչ է, եթե ոչ ծովային մանրագույն կենդանիների խեցիների բազմություն: Հնադարյան ծովերի հատակին, նըստվածքների վերին շերտերի ծանրության ազդեցությամբ, այդ խեցիները մամլվել են և փոխակերպվել խիտ ապարի Ավելի ուշ փոխվել են ծովերի ուրվագծերը, և կավձաշերտերը հայտնվել են ցամաքում

Ուսումնասիրելով բրածո բույսերն ու կենդանիները գիտնականները վերականգնում են կենդանական և բուսական աշխարհի պատմությունը, մեր մոլորակի պատմությունը:

Բայց բոլոր հնագույն բույսերն ու կենդանիները չէ, որ ոչնչացել են: Դրանցից ոմանք, օրինակ, կրիաները, կոկորդիլոսները, հարմարվել են երկրի կլիմայի փոփոխություններին: Մյուսները կենդանի են մնացել, որովհետև նրանց բնակության վայրերում կլիման շատ չի փոխվել: Հնագույն շատ կենդանիներ են պահպանվել Ավստրալիայում. պարկավորները *կենգուրուն*, կոալան և այլն, կաթնասունները՝ *բադակտուցը* և *եքիդնան*:

Բրեստի ամրոց

Պատկերացրեք, որ ամառային մի շաբաթ երեկո քուն եք մտել այն հաճելի զգացումով, թե վաղը հանգստանալու եք, խաղալու, զբոսնելու, զվարճանալու եվ հանկարծ լուսաբացին արթնանում եք խլացուցիչ դղրոյունից, ձեր տունը ցընցվում է ու երբեք, պատուհաններից զընգոցով դուրս են թռչում ապակիները

Շուրջը վառվում ու փուլ են գալիս շենքերը, բակում պայթում են ռումբեր ու արկեր, այս ու այն կողմ են վազվզում ահաբեկված, կիսամերկ մարդիկ, ոմանք ընկնում են սպանված կամ վիրավոր, լալիս են կանայք, ճչում են երեխաները

1941 թ հունիսի 22-ին այդպես արթնացան Բրեստի ամրոցում ապրող մարդիկ Նրանց արթնացրեց պատերազմը

Բրեստ քաղաքը գտնվում է Բելոռուսիայում, Սովետական Միության արևմուտյան սահմանի մոտ Նրա կողքին, Բուգ գետի ափին, մի հին ռուսական ամրոց կա Պատերազմից առաջ Բրեստի ամրոցի զորանոցներում ու տներում ապրում էին կարմիրբանակայիններ և հրամանատարներ, շատերը՝ կանանց ու երեխաների հետ

Բուգի մյուս ափին կանգնած էին հիտլերյան բանակի զորքերը: Ֆաշիստները գաղտագողի պատրաստվում էին հանկարծակի հարձակվել Սովետական Միության վրա Գիշերները նորանոր զորքեր էին փոխադրում սահմանի մոտ, առափնյա խիտ թփուտներում քողարկում էին թնդանոթներ, որոնց նշանակետը ամրոցն էր Հունիսի 22-ի կիրակի օրը, առավոտյան ժամը 4-ին երբ նոր-նոր լուսանում էր, այդ թնդանոթները կրակ բացեցին, իսկ ամրոցի վրա սկսեցին պտտվել գերմանական ինքնաթիռներն ու ռումբեր տեղալ: Անակընկալի եկած, դեռևս կիսարթուն մարդիկ զոհվում էին շենքերի փլատակների տակ, սպանվում կամ վիրավոր ընկնում թշնամու կրակից: Պատերազմի այդ առաջին սարսափելի առավոտը Բրեստի ամրոցում զոհվեցին հարյուրավոր սովետական ռազմիկներ, կանայք ու երեխաներ

Ֆաշիստները կարծում էին, թե այդ անսպասելի հարվածը իրենց հեշտ հաղթանակ կբերի, և արագ կգրավեն ամրոցը Բայց երբ հիտլերականները ներխուժեցին ամրոցի բակը, նրանց դիմավորեց զնդացիների և հրացանների կրակը Գրոհը ետ մղվեց

Ողջ մնացած սովետական զինվորները զենք վերցրին Նրանց հրամանատարներն էին մայոր Պյոտր Գավրիլովը, կապիտան Իվան Զուբաչովը, գնդի կոմիսար Եֆիմ Ֆոմինը և ուրիշներ. Սկսվեցին ծանր, երկարատև մարտերը: Ֆաշիստները շրջապատել էին ամրոցը ռմբակոծում ու զրոհում էին ամեն կողմից: Մեր զինվորներին փամփուշտները չէին հերիքում, ուտելու բան չկար, որովհետև փլատակների տակ էին մնացել ռազմամթերքի ու պարենի պահեստները Նույնիսկ ջուր չկար





«Բրեստի ամրոցի պաշտպանները» նկարիչ Պ Ս Կրիվոնո
գոփի կտավից

ջրմուղը չէր աշխատում Իսկ երբ մարդիկ փորձում էին սողալով մոտենալ գետին նրանց դիմավորում էր գերմանական գընդացիների կրակը: Ֆաշիստները գիշեր ու զօր գնդակոծում էին ափը, հուսալով որ ծարավը պաշարվածներին կստիպի դադարեցնել դիմադրությունը

Ամրոցի պաշտպանները ծարավից ու քաղցից ուժասպառ էին լինում Ջենքն ու փամփուշտը նրանք ձեռք էին բերում թշնամու հետ ունեցած ձեռնամարտում և շարունակում էին մարտնչել: Թշնամին պահանջում էր գերի հանձնվել, բայց նրանք պատասխանում էին գրոհներով ու կրակով Ամրոցի դարպասներից նրանք մի պաստառ էին կախել որի վրա արյունով գրված էր «Բոլորս կմեռնենք, բայց ամրոցից չենք հեռանա»:

Մարտը շարունակվեց 28 օր հունիսի 22-ից մինչև հուլիսի 20 ը Բրեստը մնացել էր թշնամու թիկունքում, հարյուրավոր կիլոմետրեր հեռու: Մեր զորքերը նա հանջել էին դեպի արևելք Իսկ ամրոցի պաշտպանները առաջվա պես կռվում էին ֆաշիստների դեմ: Նրանք համարյա բոլորը զոհվեցին մարտերում, և քչերը միայն գերի ընկան վիրավոր ու սովից ուժա սպառ

Պատերազմի ավարտից հետո միայն հայտնի դարձավ, որ Բրեստի ամրոցի մի

քանի պաշտպաններ ողջ են մնացել և գերությունից վերադարձել հայրենիք: Նրանցից մենք իմացանք այդ մարտերի մանրամասներն ու հերոսների անունները: Ամրոցի պաշտպանների մեջ էին նաև հայ ժողովրդի զավակներ Սոս Նուրիջանյանը, Գուրգեն Խաչատրյանը Թորգոմ Ղուկասյանը Արամայիս Բաղդասարյանը Շմավոն Դավթյանը և շատ ուրիշներ, թվով ավելի քան 100 հոգի: Բրեստի ամրոցի պաշտպանությունը *Հայրենական մեծ պատերազմի* պատմության ամենահերոսական էջերից է սովետական ռազմիկների բացառիկ տոկոսության և խիզախության լավագույն օրինակներից Ամրոցում կազմակերպվել է թանգարան և կառուցվել վեհաքանչ հուշարձան-համալիր Պաշտպանության շատ մասնակիցներ ետմահու պարգևատրվել են շքանշաններով ու մեդալներով ՍՍՀՄ Գերագույնսովետի Նախագահության հրա մանագրով Բրեստի ամրոցին շնորհվել է «հերոս ամրոց» աստվավոր կոչումը

Սովետական Միության բոլոր ծայրերից և արտասահմանյան երկրներից ամեն տարի միլիոնավոր մարդիկ են այցելում Բրեստ, որպեսզի գլուխ խոնարհեն Բրեստի ամրոցի հերոս պաշտպանների հիշատակի առջև:

Կարդացեք հետևյալ գիրքը

Смирнов С С Мы — из Бреста М «Дет. лит.», 1972



1548—
1600

Մի քանի հազարամյակ է արդեն, ինչ Հարավ-Արևելյան Ասիայում մարդիկ բրինձ են մշակում: Բրնձի հայրենիքը *Հնդկաստանն* ու *Հնդկաչինն* են. Դեռևս *Ալեքսանդր* Մակեդոնացու զինվորներն են տեսել, թե ինչպես են հնդիկները մարգերով բրինձ աճեցնում: Մինչև հիմա էլ ամենից շատ բրինձ ցանում են *Հնդկաստանում* և *Չինաստանում*, նաև *Ճապոնիայում*: Բրինձը մշակում են արհեստական ոռոգմամբ

ՍՍՀՄ-ում բրինձ ցանում են Պրիմորիեի երկրամասում, Ղազախստանում, Միջին Ասիայում, Վոլգայի ստորին ավազանում, Կուբանի գետաբերանում, Անդրկովկասում. Նշված շրջաններում այդ ջերմասեր բույսի համար բավականին շոգ ամառ է լինում, իսկ ոռոգման ջուրը վերցնում են գետերից

Բրինձը ցանում են խոնավ հողի մեջ: Երբ բույսերն աճում են մինչև 15—20 սմ, դաշտը ողողում են ջրով, բայց այնպես, որ բույսերի վերին մասը ջրից դուրս մնա:

Ինչպես է բրինձն աճում ջրում: Չէ որ նրա արմատներին օդ է անհրաժեշտ Պարզվում է, որ բրնձի արմատներում կան օդատար հատուկ խոռոչներ:

Բրնձի սերմը կարելի է ցանել նաև անմիջապես ջրի մեջ: Իսկ եթե հատուկ տընկարաններում սածիլներ աճեցնենք և դաշտ տեղափոխենք փոքրիկ բույսերը, ապա կարելի է նույն տարում մեկ դաշտից երկու կամ երեք բերք ստանալ:

Բերքահավաքից երկու կամ երեք շաբաթ առաջ դաշտերից ջուրը բաց են թողնում: Բրինձը հավաքում են մեքենաներով կամ ձեռքով

Բրնձի հատիկները պատված են կոշտ, կիպ կպած թեփուկներով Այդ թեփուկները պետք է հեռացնել, և կստացվի բրնձի հիանալի, սպիտակ ձավարը: Նրանից փլավ, շիլա ու ապուր են եփում Բրնձից ստանում են նաև օսլա, շաքար, սպիրտ և բրնձափոշի

Արժեքավոր է նաև բրնձի ծղոտը Նրանից մշակում են շատ բարակ ու շատ ամուր թուղթ և բարձրորակ ստվարաթուղթ Բրնձի ծղոտից հյուսում են պայուսակներ, ամառային գլխարկներ, խսիրներ

Հայաստանի բնակլիմայական յուրահատուկ պայմանների պատճառով մեզ մոտ բրնձի մշակումը արդյունավետ չէ

Հոռմում շատ հուշարձաններ կան և դրանց մեջ՝ մեկը, որը գիշերը չեն լուսավորում և չեն սիրում ցուցադրել զբոսաշրջիկներին: Կանգնած է նա հին տներով շրջապատված նեղ հրապարակի կենտրոնում, այնտեղ, ուր 1600 թ. բոցկլուտում էր խարույկը Այդ խարույկի վրա այրեցին Ջորդանո Բրունոյին և նրա հրաշալի գրքերը:

Պատանի Ջորդանոն վանքի դպրոց էր հաճախում: Այն ժամանակ սովորեցնում էին, որ Երկիրը Տիեզերքի կենտրոնն է, իսկ Արեգակն ու բոլոր մոլորակները պտտվում են նրա շուրջը Եկեղեցականները հալածում էին բոլոր նրանց, ովքեր դրան համաձայն չէին, իսկ առանձնապես համառներին ոչնչացնում էին



Բրունոյին ստիպում էին առանց մտածելու սերտել ու կրկնել եկեղեցու ուսմունքը Բայց նա ուզում էր ինքնուրույն մտածել Բրունոն սկսեց թաքուն այնպիսի գրքեր ձարել, ուր աշխարհի կառուցվածքի մասին այլ կերպ էր խոսվում: Նա ուշադրությամբ ընթերցում էր դրանք, խորհում կարդացածի մասին, ինքնուրույն դիտում երկնային լուսատուների շարժումները Եվ Բրունոն գիտնական դարձավ

Շատ տարիներ թափառեց Բրունոն Իտալիայում, Ֆրանսիայում, Անգլիայում, Գերմանիայում: Ամենուր նա ջանում էր իմանալ այն ամենը, ինչ սովորեցնում էին իսկական գիտնականները, նրանք ովքեր համամիտ չէին եկեղեցականների հետ

Շուտով Բրունոն ինքն սկսեց գրքեր գրել և սովորեցնել ուրիշներին

Նա համամիտ էր լեհ մեծ գիտնական Կոպեռնիկոսի հայացքներին, իսկ Կոպեռնիկոսն ասում էր, որ ոչ թե Արեգակն է պտտվում Երկրի շուրջը, այլ Երկիրը Արեգակի՝ Բրունոյի համարձակ միտքն ավելի հեռուն էր տեսնում: Նա հասկացավ և ուրիշներին բացատրեց որ կյանքը հնարավոր է ոչ միայն Երկրի վրա, որ Տիեզերքն անվերջ է և կազմված է բազմաթիվ աշխարհներից

Բրունոն սուր ծաղրի էր ենթարկում տերտերներին և եկեղեցուն, մարդուն կոչ անում թափանցել Երկրի և երկնքի առեղծվածների խորքերը: Նա այդ մասին գրում էր թե կրքոտ բանաստեղծություններում և թե նույնքան կրքոտ գիտական գրքերում Անխոնջ ու ջերմեռանդորեն այդ մասին խոսում էր իր դասախոսություններում Նրա փառքը տարածվեց Եվրոպայի շատ համալսարաններում:

Բայց եկեղեցականները չէին կամենում հաշտվել հանդուգն գիտնականի գոյության հետ: Նրանք գտան մի ծախու մարդու որը Բրունոյին բարեկամ ձևացավ և նրան ինկվիզիցիայի ծուղակը գցեց:

Բրունոյին բանտ նետեցին: Ութ տարի նա մնաց զնդանում: Նրան մեկ տանջում ու ահաբեկում էին, մեկ համոզում հրաժարվել իր հայացքներից:

Բայց Բրունոյին հնարավոր չէր ոչ ա հաբեկել, ոչ կաշառել, ոչ ընկճել: Այդժամ նրան դատապարտեցին մահվան «առանց արյուն հեղելու» Դա նշանակում էր խարույկ

Երբ դատի ժամանակ հայտարարեցին դատավճիռը Ջորդանո Բրունոն արտասանեց դարերի խորքից մեզ հասած այս բառերը «Այրել չի նշանակում հերքել»

Փետրվարյան վաղ մի առավոտ Հռոմում հնչեցին զանգերը. Նետաձիգների նրբանցքից դեպի Ծաղիկների հրապարակն էր շարժվում վանականների ծանրաքայլ թափորը: Նրանք ռնգաձայն հոգեհանգստի աղոթքներ էին երգում Վանականները մահապատժի էին տանում անվեհեր խռովարարին գիտնական Ջորդանո Բրունոյին

Բրունոյի սխրանքը չի մոռացվել և երբեք չի մոռացվի Այն, ինչ սովորեցնում էին Բրունոն, Կոպեռնիկոսն ու Գալիլեյը, հնարավոր չէր արգելել ու թաքցնել, որովհետև դա ինքը ճշմարտությունն էր, որը հետագայում հաստատվեց գիտության նորանոր նվաճումներով:

Մարտի թեժ պահին է Պայթում են արկերը, երկինք են բարձրանում հողի հրեղեն լեռներ: «Ուռա» բացականչություններով գրոհի են նետվում սովետական մարտիկները պաշտպանելով հարազատ հողի յուրաքանչյուր մետրը Գնդակից խոցված ընկնում է առաջին մարտիկը, երկրորդը Մինչդեռ ընկերները պետք է առաջ գնան, թշնամուն դուրս քշեն Հայրենիքի սահմաններից:

Իսկ կռվի դաշտում վիրավորներն այդպես, առանց օգնության, պառկած չեն մնում Ռազմաձակատի բոլոր հատվածներում մարտիկների ետևից գնում են բժիշկները բուժքույրերը, սանիտարները

Ահա տնջալով ընկավ վիրավոր ռազմիկը Եվ անմիջապես սողեսող նրան է մոտենում բուժքույրը կապում վիրավորի վերքերը ջուր տալիս խմելու Հետո ճարակորեն գրկում է զինվորին և իր ծանր բեռով, դարձյալ սողեսող, շարժվում դեպի դաշտային հիվանդանոց Այստեղ վիրավորին ցույց են տալիս անհրաժեշտ բժշկական օգնությունը մշակում վերքը, վիրահատում, գիպսակապ դնում Այստեղ էլ բուժքույրը բժշկի առաջին օգնականն է

Քանի-քանի վտանգավոր երթ է կատարում բուժքույրը մեկ օրվա ընթացքում,

«Մաշենկա»
Նկարիչ
Բ Մ Նե
մենսկու
կտավից



քանի կյանք է փրկում Իսկ որքան բարի սփոփիչ խոսքեր է ասում ամեն մի վիրավորի: Նա գիտե, որ բարությունն ու գթասրտությունը երբեմն ավելի լավ են օգնում, քան ցանկացած դեղ ժամանակ առ ժամանակ նա հերթապահում է նաև գիշերը: Դաշտային հիվանդանոցի գիշերային այդպիսի հերթապահություններից մեկն է պատկերել պատերազմի մասնակից, սովետական նկարիչ Բ Մ Նեմենսկին: Այդ և սովետական նկարիչների շատ այլ կտավներ հավերժացնում են հարյուր հազարավոր բուժքույրերի *Հայրենական մեծ պատերազմի* հերոսական մասնակիցների սխրանքը:

Խաղաղ ժամանակներում էլ բուժքույրերը պետք է լինեն տոկուն ու անվախ

Վիրահատարանում շատ բարդ, ժամեր տևող վիրահատություն է կատարվում Բժշկի կողքին մշտաբաժնի կանգնած է բուժքույրը: Նա մատուցում է վիրաբուժական գործիքները, վիրակապելու նյութերը, որոնք ինքն էլ նախօրոք պատրաստում է Հիվանդասենյակում տնքում է հիվանդը Նա շատ վատ է զգում, ջուր է ուզում, իսկ կողքին հարազատներից կամ ծանոթներից ոչ ոք չկա եվ նորից օգնության է հասնում բուժքույրը սփոփում է, ուղղում բարձր, ջուր տալիս, եթե պետք է, սրբս կում, դեղ տալիս, կերակրում իր ձեռքով

Ձեզանից նա, ով հաճախել է մանկապարտեզ կամ էլ երբևէ դիմել պոլիկլինիկա, բուժվել հիվանդանոցում, լավ գիտե, որ բուժքույրը բժշկի հավատարիմ օգնականն է Ջուր չէ, որ հիվանդները երբեք նրան այլ կերպ չեն կոչում, քան «քույր», «քույրիկ»: Այդ փաղաքշական բառն առաջին անգամ նման նշանակությամբ օգտագործվել է այն ժամանակ, երբ ծնունդ էր առնում բուժքրոջ մասնագիտությունը Դա 1854 — 1855 թվականներին էր, Սևաստոպոլ քաղաքի հերոսական պաշտպանության ժամանակ Սևաստոպոլի հասարակ կանայք դուրս էին եկել կռվի դաշտ օգնելու քաղաքի պաշտպաններին: Նրանք գինվորների համար հաց ու ջուր էին բերում, կապում վերքերը, վիրավորներին հեռացնում մարտադաշտից: Եվ գինվորներն իրենց կամավոր օգնականներին ու փրկիչներին փաղաքշորեն անվանում էին «քույր», «քույրիկ»...

Առաջին ռուս բուժքրոջն անվանում էին Դաշա Սևաստոպոլսկայա Նրա կերպարը հավերժացվել է նկարիչ Տ Ա Ռուբոյի «Սևաստոպոլի պաշտպանությունը» համայնապատկերում

Հաշվի առնելով կանանց «գթասիրտ մասնակցությունը» Սևաստոպոլի պաշտպանությանը ռուս մեծ վիրաբույժ Ն Ի Պիրոգովը կառավարությանն առաջարկեց Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիային կից բացելու գթության քույրերի (այդպես էին 19-րդ դարում, Ն Ի Պիրոգովի ժամանակներում, անվանում բուժքույրերին) դասընթացներ. Այդպես սկսվեց բուժքույրերի մասնագիտական ուսուցումը:

Սովետական Միությունում բուժքույրերի ուսուցման համար ստեղծված են բժշկական ուսումնարաններ

Բուլղարիա

(Բուլղարիայի Ժողովրդական
Հանրապետություն, ԲժՀ)



Ամեն տարի մայիսի 24-ին Սոֆիա քաղաքը տոնական զգեստ է հագնում. Գեորգի Դիմիտրովի դամբարանի տրիբունաների առջևով անցնում են շքերթի մասնակիցները, որոնց շարքերում նաև շատ դպրոցականներ են լինում Ազգային տարազներ կամ սև-սպիտակ աշակերտական համազգեստներ հագած նրանք տանում են պլակատներ և ցուցանակներ: Այդ օրը բուլղարական ողջ ժողովուրդը մեծ շուքով նշում է սլավոնական դպրության, լուսավորության և մշակույթի օրը:

Բուլղարները հարավային սլավոններ են Հնուց անտի նրանք բնակվում են Բալկանյան թերակղզու հյուսիս-արևելքում: Բայց իրենց ողջ պատմության ընթացքում նրանք հարկադրված են եղել պայքարել անկախության համար, ըսկըզբում Բյուզանդիայի, հետո թուրքական Օսմանյան կայսրության դեմ Չնայած 500 ամյա թուրքական լծին, նրանք կարողացել են պահպանել իրենց դպրությունն ու մշակույթը, որը շատ մոտ է արևելյան սլավոնների ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների մշակույթին



Բուլղարական այբուբենի հիմքում ընկած է ավելի քան հազար տարի առաջ ստեղծված հին սլավոնական այբուբենը «կիրիլիցան», որի վրա է հիմնված նաև ռուսական այբուբենը:

Ամառային արձակուրդներին բուլղարացի դպրոցականները ճանապարհորդության են մեկնում հայրենի երկրով: Նրանց կարելի է հանդիպել Բալկանյան լեռների Շիպկայի նշանավոր լեռնանցքում: Այս-

ԲՈՒՂԱՐԻԱ


Տարածությունը 111 000 քառ կմ

Բնակչությունը 8 878 000 մարդ




- Սև և գունավոր մետաղուղի
- Էլեկտրատեխնիկական արդյունաբերություն
- Նավաշինություն
- Գյուղատնտեսական մեքենաշինություն
- Զինիական արդյունաբերություն
- Նավթավերամշակման արդյունաբերություն
- Տեքստիլ արդյունաբերություն
- Պահածոների արդյունաբերություն
- Գինեգործական արդյունաբերություն

- Հանրաքարի արդյունահանում
- Զերմաէլեկտրակայաններ
- Հիդրոէլեկտրակայաններ
- Արևածաղիկ
- Վարդենի
- Պտղատու ազիներ
- Ծխախոտ
- Անասնապահություն
- Ոչխարաբուծություն
- Խաղողի այգիներ
- Հացահատիկային բույսեր (ցորեն)
- Եգիպտացորեն



տեղ մի վեհասքանչ հուշարձան է կանգնեցված ի պատիվ ռուս ազատարար զինվորների, որոնք 1877 թ այդ վայրերում հերոսաբար մարտնչում էին թուրքական զորքերի դեմ: Դպրոցականների կարելի է հանդիպել նաև Պլովդիվ քաղաքի կենտրոնում գտնվող բլրին վեր հառնող սովետական զինվորի հուշարձանի մոտ Գրանիտից կերտված այդ զինվորին ժողովուրդը քնքշանքով անվանում է Ալյոշա: Կոթողը կառուցված է սովետական զինվորների

հիշատակին, որոնք 1944 թ իրենց կյանքը գոհեցին Բուլղարիան ֆաշիստներից ազատագրելու համար
 Սովետական ռազմիկների հետ ուս ուսի ֆաշիստների դեմ կռվում էր նաև բուլղարական ժողովրդաազատագրական բանակը որը ղեկավարում էին կոմունիստները Հաղթանակից հետո երկրում իշխանությունն անցավ աշխատավոր ժողովրդի ձեռքը, և սկսվեց սոցիալիզմի կառուցումը: Նախկինում Բուլղարիան եվրոպայի



ամենահետամնաց երկրներից էր Նույն իսկ մանգաղները, գերանդիներն ու ասեղները ներմուծում էին օտար երկրներից: Այժմ բուլղարներն իրենք են արտադրում պողպատ և կապար, տրակտորներ և ավտոմոբիլներ, սարքեր, հաստոցներ, վերամբարձ կռուկներ, նավեր: Հարյուրավոր գործարաններ և ֆաբրիկաներ կառուցվել են ՍՍՀՄ-ի օգնությամբ. Բուլղար շինարարներն էլ իրենց հերթին մասնակցում են մեր երկրում ձեռնարկություններ կառուցելու գործին:

Բուլղար գյուղացիները մշակում են եգիպտացորեն, հացահատիկ, բրինձ, բամբակենի: Բայց Բուլղարիան առավել հռչակված է իր խաղողով և բանջարեղենով լլիկով, տաքդեղով, վարունգով Դրանք հատուկ ավտոգնացքներով ու ինքնաթիռներով թարմ և պահածոյացված վիճակում առաքվում են տարբեր երկրներ այդ թվում նաև ՍՍՀՄ Իսկ Բուլղարիայի կենտրոնական մասում լեռների գոգահովիտներում տարածված են յուղատու վարդի հանրահայտ պլանտացիաները

Ֆիա
աղաքը

Վարդի թերթերից այստեղ ստանում են վարդի յուղ

Սովետական և բուլղար ժողովուրդներին միավորում է եղբայրական անբակտ բարեկամությունը: Իրականություն են դառնում բուլղար ժողովրդի մեծ գավակ Գեորգի Դիմիտրովի խոսքերը «Բուլղար ժողովրդի համար բարեկամությունը Սովետական Միության հետ Նույնքան անհրաժեշտ է, որքան արևն ու օդը ամեն մի կենդանի էակի համար»

Հայերի հետ բուլղար ժողովրդի բարեկամությունը սկիզբ է առնում 5-րդ դարի կեսերից, երբ 451 թ տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտից հետո որոշ հայ իշխաններ, խույս տալով հետապնդումներից, իրենց գործով հեռացան Հայաստանից և հաստատվեցին Բալկանյան թերակղզու արևմտյան մասում 13—18-րդ դարերում մոնղոլական և թուրքական արշավանքների հետևանքով Հայաստանից Բուլղարիա գնացին գաղթական հայերի նորանոր խմբեր: 1800 թ Բուլղարիայի քաղաքային հայ բնակչությունը



շուրջ 10 հզ էր, իսկ 1880-ական թվականների 2-րդ կեսին մոտ 13 հզ


19-րդ դարի վերջին Բուլղարիայի տընտեսական ու մշակութային կյանքին ակտիվորեն մասնակցել են հայ մտավորականներ՝ բժիշկներ, ինժեներներ, իրավաբաններ, ուսուցիչներ, պետական պաշտոնյաներ Դարավերջին Բուլղարիայի հայաշատ քաղաքներում գործում էին երկսեռ հայկական դպրոցներ

1912—1913 թվականների Բալկանյան պատերազմների տարիներին Բուլղարիայի հայերը մասնակցեցին Թուրքիայի դեմ բուլղարական բանակի ռազմական գործողություններին Հայ ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, զորավար Անդրանիկի գլխավորած հայկական կամավորական ջոկատը արժանացավ բուլղարական կառավարության պարգևների և հատուկ շնորհակալագրի Բուլղար ժողովրդի մղած հակաֆաշիստական պայքարին մասնակցում էին նաև բուլղարահայ կոմունիստներն ու առաջադեմ մարդիկ, որոնցից շատերը պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով 1946 թ ամռանը կազմակերպվեց 6 հզ հայերի ներգաղթը Սովետական Հայաստան

Այսօր էլ Բուլղարիայում շատ հայեր են ապրում (շուրջ 25 հզ.) Բուլղարահայ գաղութը սերտ կապեր է պահպանում մայր հայրենիքի Սովետական Հայաստանի հետ, մասնակցում սովետա-բուլղարական բարեկամության ընկերության կազմակերպած միջոցառումներին (մշակույթի տասնօրյակներ, ցուցահանդեսներ և այլն)

է ճյուղավորվում, քան ցողունը Աշորայի ամեն մի թուփ ամառվա ընթացքում առաջացնում է միլիոնավոր արմատներ և միլիարդավոր մանրագույն մազարմատներ Եթե դրանք բոլորը միացնենք իրար, կստացվի 600 կմ երկարությամբ մի գիծ

Որքան ուժեղ է զարգացած արմատը այնքան շատ ջուր և սննդանյութ է հայթայթում հողից, լավ սնուցում բույսը Արմատի հզորությունը շատ կարևոր հատ-



Բույսերի արմատներ

Սերմի սաղմում միաժամանակ գտնվում են թե՛ ապագա ցողունը և թե՛ սաղմնային արմատիկը Հետագայում նրանց ճանապարհները կբաժանվեն ցողունը կձգվի վեր դեպի լույսը, արմատը կուղղվի ներքև դեպի հողը և բույսը կկապի հողին:

Բույսը հողում կանգուն պահելը կարևոր գործ է Բայց արմատի հիմնական աշխատանքը հողից ջուր և «սնունդ» հանքային աղեր, հայթայթելն է Բույսը ուղղություններով հողի մեջ խոր թափանցելու համար արմատները խիստ ճյուղավորվում են Արմատի ճյուղավորվելու ունակությունը զարմանք է հարուցում. արմատը հարյուրավոր անգամ ավելի շատ

կանիչ է լավագույն բույսերի ընտրության ժամանակ, որով զբաղվում է նոր սորտեր ստեղծող գիտնական-սելեկցիոները:

Արմատը սննդանյութերը ոչ միայն որոնում ու հայթայթում է, այլև պահեստավորում, և յուրատեսակ ստորգետնյա քիմիական լաբորատորիա է Ծխախոտի արմատներում, օրինակ, կուտակվում է նիկոտին, կոկսագիզի արմատներում առաջանում է կաուչուկ, գազարի արմատներում ընդերվում են շաքար ու կարմիր կարոտին, իսկ կարոտինից մարդու կամ կենդանու օրգանիզմում գոյանում է A վիտամին Արմատը նաև դիսպետչեր է, այսինքն նա է բաշխում սննդանյութերը, ապահովում ցողունի և տերևների աճը.

Տերևներն ու արմատները տարբեր խնդիրներ են կատարում, բայց նրանց աշխատանքը մեկ ամբողջություն է կազմում հողից ջուր և աղեր կլանելու համար արմատը պետք է շնչի, բայց նա շնչել չի կարողանա, եթե չստանա տերևների պատրաստած շաքարը

Մակաբույծ բույսերը, միջատների թրթուրները, վնասատու մանրէները արմատի թշնամիներն են: Բայց նա նաև օգնականներ ունի Անխոնջ հողափոր անձրեվորները հաճախ են նրա համար ճանապարհ բացում Կան և անտեսանելի բարե-


կամներ, օրինակ, ընդավոր բույսերի արմատների վրա բնակվող պալարաբակտերիաները: Սրանց շնորհիվ ընդավորներն ազոտ են ստանում ոչ միայն հողից, ինչպես մնացած բույսերը, այլև օդից.

Գյուղատնտեսական բույսերը մշակելիս մարդը փխրեցնում և պարարտացնում է հողը Որքան լավ աշխատեն արմատները այնքան առատ կլինի բերքը:

Բուսաբանական այգի

Ջարմանահրաշ ծառ է սեքվոյան Նրա բարձրությունը հասնում է 150 մ-ի, իսկ դա ավելի բարձր է, քան Երևանի երկաթուղային կայարանատունն իր սայրով Սեքվոյայի կեղևի հաստությունը 70 սմ է, այսինքն ավելի հաստ, քան որոշ տների պատեր. Իսկ առանձին սեքվոյաների կոճղին կարող է տեղավորվել, նույնիսկ, մի փոքր նվազախումբ Ջարմանալի է նաև ճահիճները չորացնող նվենին: Նրա արմատներն աշխատում են պոմպի նման, արևին կողքով նայող տերևները ստվեր չեն գցում. Ջմայլելի է և վիկտորիա-ռեզինան ջրաշուշաններից ամենամեծը Նրա ծաղիկները, որ բացվում են սոսկ երկու երեկո և երկու գիշեր, չորս անգամ փոխում են իրենց գույնը ճերմակից մինչև մուգ կարմիրը Երեք տարեկան աղջնակը, անդերսեյան Մատնաչափիկի նման, կարող է հանգիստ տեղավորվել վիկտորիա-ռեզինայի լաստ հիշեցնող երկու մետրանոց տերևին

Հարավային Ամերիկյան վիկտորիա-ռեզինայի հայրենիքը, Հյուսիսային Ամերիկյան սեքվոյայի բնօրրանը, և Ավստրալիան նվենու բնաշխարհը, մեզանից շատ հեռու են: Եվ շնայած դրան, կարելի է մեկ օրվա ընթացքում «շուրջերկրյա ճանապարհորդություն» կատարել, տեսնել թե սեքվոյա ու նվենի, թե վիկտորիա-ռեզինա ու աֆրիկյան արմավենիներ, թե ալպիական կակաչներ ու տայգայի մայրիներ և թե հասունացող ադամաթզենիներ (բանաններ): Դրա համար պետք է միայն գնալ բուսաբանական այգի Նրա դռները բաց են բոլոր նրանց առջև, ով ցանկանում է ծանոթանալ հայրենի երկրի և ողջ երկրագնդի բուսական հարստությանը Այստեղ էքսկուրսիայի են գալիս դպրոցականները, իրենց պարապմունքների համար այգու կենդանի հավաքածուից ու հերբարիում-



Արմատը շատ կարեվոր դեր ունի բույսի կյանքում բույսն ամրացնում է հողին հողից կլանում բույսի աճի ու զարգացման համար անհրաժեշտ ջուրը և հանքային նյութերը



Երևանի
բուսաբա-
նական այ-
գում. վերե-
վում գիհի
ների պու-
րակ ներքե
վում ալ
պիական
բուսակա
նություն

ներից օգտվում են թե ուսանողները
և թե պրոֆեսորները

Ամենաառաջին բուսաբանական այգի-
ների մասին իմանալու համար եկեք տե-
ղափոխվենք անցյալը: Արևմտյան Եվրո-
պայում մեզ կղիմավորեն վանքերի այ-
գիները, Ռուսաստանում «դեղատնային
բանջարանոցը», ուր սկզբում աճեցնում
էին դեղաբույսեր, հետագայում նաև
արժեքավոր ծառեր ու ծաղիկներ: Աշխար-
հում ամենահին բուսաբանական այգին
գտնվում է Սալերնոյում (Իտալիա), որը
հիմնադրվել է 1309 թ Սովետական





Արքայա
խնձոր
(անանաս)

◀ Վարդանոց

Մագնոլիա

Միության հնագույն Մոսկվայի պետական համալսարանին և Լենինգրադի բուսաբանական ինստիտուտին կից բուսաբանական այգիներն արդեն տոնել են իրենց 250-ամյա հոբելյանը:

Սովետական Միությունում հարյուրից ավելի բուսաբանական այգիներ կան Գլխավոր և ամենամեծ բուսաբանական այգին Մոսկվայում է և գործում է ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային կից այնտեղ միլիոնից ավելի բույսեր կան Ամենաբարձր լեռնային բուսաբանական



այգին գտնվում է Պամիրում, աշխարհի մասշտաբով ամենահյուսիսայինը Բևեռային ալպիականը Խիբիններում (Կոլա թերակղզի) .

Հայկական ՍՍՀ-ում բուսաբանական այգի հիմնվել է 1935 թ. , Երևանում, ուր աճում են ավելի քան 1200 տեսակի ծառեր ու թփեր, Հայաստանի բուսական աշխարհի ամենատարբեր ներկայացուցիչներ: 1936 թ կազմակերպվել են Երևանի բուսաբանական այգու Կիրովականի, 1944 թ Սևանի բաժանմունքները

Մեր այգիների կենդանի հավաքածուներում և հերբարիումներում պահպանվում են նշանավոր ճանապարհորդներ Պրոծվալսկու, Պոտանինի, Սեմյոնով-Տյան-Շանսկու նվերները Մեր այգիները սերմեր են փոխանակում աշխարհի 52 այգիների հետ, գիտարշավներ կազմակերպում արժեքավոր բույսեր գտնելու: Բերված բույսերը ընտելացվում են կլիմայական նոր պայմաններին

Բուրատին

Թե ով է Բուրատինոն, բոլորը գիտեն Այն ուրախ, երկարաքիթ փայտե մարդուկն է, որին ծեր Կառլոն պատրաստեց մի սովորական փայտի կտորից

Այսպես եղավ

«Առաջին հերթին Կառլո հայրիկը փայտի վրա փորեց մազերը հետո ճակատը հետո աչքերը

Հանկարծ աչքերն իրենք իրենց բացվեցին և այլեցին ուղիղ նրա վրա..



Կառլոն ցույց էլ չտվեց, թե վախեցավ և միայն քնքշանքով հարցրեց

— Փայտե աչիկներ, այդ ինչու եք այդպես տարօրինակ նայում ինձ

Բայց տիկնիկը լուռ էր, երևի նրա համար, որ դեռ բերան չուներ: Կառլոն փայտի վրա այտեր փորեց, հետո՝ քիթ, ամենասովորական մի քիթ

Հանկարծ քիթը սկսեց ձգվել, աճել և այնպիսի երկար ու սուր քիթ ստացվեց, որ Կառլոն նույնիսկ կռնչաց

— Լավ չի, շատ է երկար

Եվ սկսեց քթի ծայրը քերել, կտրել Բայց ուր... Քիթը ծոմովում էր, այս ու այն կողմ դառնում այդպես էլ մնաց երկար երկար, հետաքրքրասեր ու սուր

— Լսիր, — խստորեն ասաց Կառլոն, — քեզ դեռ չեմ պատրաստել վերջացրել, իսկ դու արդեն սկսել ես անկարգություններ անել. Ի՞նչ կստացվի դրանից, հի՛...»

Ինչպես տեսնում եք, Կառլո հայրիկը հենց նոր էր սկսել Բուրատինոյին պատրաստել, իսկ նա արդեն դրսևորում էր իր չարաճճի ու անհանգիստ բնավորությունը

Դուք, անշուշտ, արդեն փոքր չեք և շատ լավ եք հասկանում, որ կյանքում նման բան չի լինում:

Եվ իրոք, ով է տեսել, որ փայտե տիկնիկի քիթն ինքն իրեն երկարի և խույս տա դանակից Այդ բոլորը կատակ է, հնարանք, ամենասովորական մի հեքիաթ

Հեքիաթ է, ճիշտ է, և այդ հեքիաթը գրել է խոսքի իսկական վարպետ, հրաշալի գրող Ալեքսեյ Լիկուլանիչ Տոլստոյը

Սկզբում Ալեքսեյ Լիկուլանիչը վճռել էր միայն ռուսերեն վերապատմել իտալացի գրող Կառլո Կոլլոդիի «Պինոքիո» հանրահայտ հեքիաթը: Եվ «Ոսկե բանալու» առաջին գլուխներն էլ գրեթե նույնությամբ կրկնում են Կոլլոդիի սյուժեն

Բայց հետո, թերևս հենց իր հեղինակի համար էլ անսպասելի, Բուրատինոն ձեռք բերեց բոլորովին այլ բնավորություն, քան Պինոքիոյինն էր

Փայտե մարդուկն սկսեց քմահաճություն դրսևորել, անսպասելի ծեծկոտուք սարքեց հենց իր Կարաբաս Բարաբասի հետ, հեղինակին ներքաշելով նորանոր արկածների մեջ, որոնց մասին իտալական հեքիաթում խոսք անգամ չկար

Ա և Տոլստոյն, իհարկե, հեշտությամբ կարող էր «կարգի հրավիրել» իր անհնազանդ Բուրատինոյին, ինչպես ասում են, նրան իր տեղը նստեցնել: Դրա համար նա պետք է պարզապես դադարեր ինքնու-

րույն, տաղանդավոր արվեստագետ լինելուց և սահմանափակվեր ուրիշի գրածի պարզ վերապատմողի դերով

Բարեբախտաբար, նա այդպես չվարվեց: Դրա համար էլ նրա «Ոսկե բանալին» իտալական հին հեքիաթի պարզ փոխադրությունը չէ միայն Դա յուրօրինակ, ինքնատիպ, վառ գիրք է ռուսերեն գրված մանկական ամենասիրելի գրքերից մեկը «Ոսկե բանալին» լույս է տեսել նաև հայերեն, և դուք կարող եք գրադարանից վերցնել այն ու կարդալ

Բուրգ և կոն


Պատկերացրեք միջնադարյան պաշարված մի ամրոց Պարիսպներից վեր են խոյանում կլոր աշտարակները՝ Դրանք կոնաձև տանիքներ ունեն, որ սուր ծայրով դեպի վեր շրջված ձագարներ են հիշեցնում: Ահա և քառանկյուն մի աշտարակ, որի տանիքը քառանիստ բուրգի ձև ունի Հեռվում, պարիսպներից ներս, երևում են եկեղեցիների սայրերը՝ մեկ կլոր ու կոնաձև, մեկ վեցանիստ, վեցանկյուն բուրգի ձևով

Այժմ պատկերացրեք ամրոցի պարիսպներին կանգնած ժամապահներին՝ Նրանք զինված են քառանիստ ու եռանիստ սու-


սերներով, որոնց շեղբերը նման են ձգված բուրգերի Ամրոցից ոչ հեռու, անտառի բացատում, աճում են բրգաձև եղևնիներ Այնտեղ ճամբար է խփել պաշարող զորքը Ահա ռազմիկների կոնաձև վրանները: Իսկ անտառի փեշին այլ ձևի վրաններ են կենտրոնում ամրացված է երկար մի ձող, իսկ հիմքի անկյուններում, վրանի եզրերը պահելու համար, խփված են չորս ցից՝ Դրանք, ասես, եգիպտական փարավոների հռչակավոր բուրգերի տասնյակ անգամ փոքրացված պատճենները լինեն Ամրոցին մոտիկ բարձրանում են բաբաների բուրգերը, որոնք հեռվից հեռուստատեսային փոքրիկ աշտարակներ են թվում: Իսկ ճամբարի կենտրոնում դիտման աշտարակի եռանիստ բուրգն է

Մենք չենք սպասի մարտի սկսվելուն Չէ որ մեզ այժմ հետաքրքրում են միայն բուրգերն ու կոները: Ավելի լավ է վերցնենք թուրթ, մկրատ ու սոսինձ և պատրաստենք մի քանի բուրգ ու կոն՝ Կոն պատրաստելը շատ հեշտ է: Նկարեք մի շրջան և նրա մեջ երկու շառավիղ Կտրեք հեռացրեք շրջանի այն մասը, որն ընկած է շառավիղների միջև (ինչպես ցույց է տրված նկարում) Մնացած մասի եզրերը սոսնձեք ու փակցրեք իրար այնպես, որ ստացվի փոքրիկ թասակ: Ներքևից թասակին սոսնձեք մի կլոր հիմք, և կոնը պատրաստ է

Բուրգը պատրաստելու համար ևս սոսնձեք մի փոքրիկ թասակ, ծալեք այն նախկին շրջանի չորս շառավիղներով, ապա մակերևույթի նիստերի ներքևի մասերը ծալեք դեպի ներս այնպես, որ բոլոր նիստերը դառնան եռանկյուններ Այժմ ներքևից փակցրեք քառանկյունաձև մի հիմք և կստանաք քառանիստ բուրգ: Իսկ թե ինչպես պետք է պատրաստել եռանիստ կամ հնգանիստ բուրգ, կռահեք ինքներդ:



1725 · 1745



274	Գագարին Յու. Ա.	299	Գերմանիայի Ֆեդերատիվ
275	Գագ		Հանրապետություն
275	Գալակտիկա		Գիշատիչ բույսեր
276	Գալիլեյ Գալիլեո	301	Գիսավոր
277	Գաճաճ պետություններ	302	Գիրք
	Գայ	303	«Գիքորը»
280	Գայդար Ա. Պ.	305	Գլինկա Մ. Ի.
281	Գայլ	306	Գլխուղեղ
282	Գայլաձուկ	308	Գծանկարչություն
283	Գառնի	309	Գյուղացիներ և կալվածատերեր
284	Գավրոշ		Գոգու Ն. Վ.
285	Գարիբալդի Ջուզեպպե	310	Գոմեշ և յակ
286	Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոն	312	Գորգ
287	Գեղանկարչություն	312	Գորկի Ա. Մ.
288	Գեղարդ	314	Գորշուկ (Փորսուղ)
291	Գեղգեղիկ	315	Գրադարան
293	Գեյզեր	316	Գրատպություն
293	Գետ	319	Գրաֆիկ
294	Գետաձի	319	Գրիգ Էդվարդ
296	Գերմանական	320	Գրիգոր Նարեկացի
297	Դեմոկրատական Հանրապետություն	321	Գրիմ
		322	«Գրքի շաբաթ»
		323	Գութան
		324	Գուլիվեր
		324	Գունդ
		325	

Գագարին Յուրի Ալեքսեևիչ

1934—
1968

1961թ ապրիլի 12-ին աշխարհով մեկ կայծակի նման տարածվեց ցնցող մի լուր. «Մարդը, սովետական մարդը, տիեզերքում է»

Իրականացավ դեպի աստղերը թռչելու մարդկանց դարավոր երազանքը: Հեքիաթըն իրողություն դարձրեց սմուլենկցի երիտասարդ Յուրի Գագարինը Սովետական Միության քաղաքացին: Ողջ մոլորակը հիացած էր նրա սխրանքով Գագարինի անունը միանգամից հայտնի դարձավ ողջ աշխարհին: Բայց նա մնաց նույն համեստ ու բարի, ժպտադեմ ու հմայիչ մարդը Տիեզերքի հերոս դարձավ իր կամքի, հաստատակամության և երազանքին հավատարիմ մնալու շնորհիվ: Իսկ այդ երազանքը նա մանկուց էր փայփայում

Գարնանը ձնհալից հետո երեխաներն օդապարուկ էին թռցնում: Յուրան վազում էր օդապարուկի ետևից, երկինք նայելով, մտածում «Երանի, ես էլ թռչեի նրա հետ...»:

Շուտով խաղաղ մանկություն ներխուժեց պատերազմը: Յուրին ինքն էլ ապրեց նրա սարսափները: Պատերազմից հետո սովորեց Մոսկվայի մոտ գտնվող արհեստագործական ուսումնարանում, ապա Սարատովի ինդուստրիալ տեխնիկումում: Նա անբողբոջ անդամ էր, թռչում էր պարաշյուտով: Հետո ընդունվեց Օրենբուրգի ռազմաօդաչուական ուսումնարանը, որն ավարտելուն պես խնդրեց իրեն ուղարկել Հյուսիս: Այնտեղ Գագարինը շատ էր թռչում, սովորում էր, իսկ ամբողջ ազատ ժամանակը կարդում:

Անցնում էին տարիները: Երկրի արհեստական *արթանյակներին* հետևեց տիեզերական հրթիռը, որը լուսանկարեց Լուսնի հակառակ, չերևացող երեսը: Թռիչքը դեպի անհայտություն մոտենում էր:

«Տիեզերական» նախապատրաստությունը Յուրի Գագարինն սկսեց տիեզերագնացների առաջին խմբում, հաջողությամբ անցավ փորձությունը խլախցիկում, արագընթաց ցենտրիֆուգում, հաղթահարեց թռիչքներն անկշռության պայմաններում:

Դեպի տիեզերք կատարվելիք թռիչքին նա պատրաստվում էր համառորեն չինայելով ոչ ջանք, ոչ ժամանակ: Պատրաստակամորեն օգնում էր ընկերներին, ըն-



կերներն էլ նրան Յուրաքանչյուրն այրվում էր առաջինը Տիեզերք թռչելու ցանկությամբ: Բայց ոչ ոք գրեթե չէր կասկածում, որ առաջինը կթռչի Յուրի Գագարինը: Այդպես էլ եղավ Պետական հանձնաժողովը նրան հանձնարարեց առաջին թռիչքը:

Մենակ մնալով այդ աննախադեպ երթուղում նա մտածում էր տիեզերական ուղեծրերի առաջին հայտնագործողի վիթխարի պատասխանատվության մասին: Դա պատասխանատվություն էր երկրի վրա բնակվող բոլոր մարդկանց առջև: Բայց տիեզերքից հնչող նրա ձայնը հանգիստ էր:

—Թռիչքը նորմալ է ընթանում. Տեսնում եմ երկրի հորիզոնը Այնքան գեղեցիկ լուսապսակ է:

108 րոպեում մեր մոլորակի շուրջը կատարելով մեկ լրիվ պտույտ, Գագարինի տիեզերանավը բարեհաջող վայրէջք կատարեց Սկսվեց տիեզերական դարաշրջանը:

Գագարինից հետո տիեզերք թռան ուրիշները: Առաջին տիեզերագնացը ուրախանում էր իր ընկերների հաջողությամբ, երազում նոր թռիչքների մասին և պատրաստվում դրանց: Սակայն ողբերգական մահը ընդհատեց նրա կարճատև, վառ կյանքը: Բայց նրա թողած հետքը հավերժ կմնա թե՛ երկրի վրա և թե՛ Տիեզերքում:

Կարդացեք հետևյալ գրքերը
Լագիբին Յու., Փոքր պատմվածքներ մեծ կյանքի մասին, Ե., 1982:

Гагарин Ю. А. Вижу землю М «Дет лит.», 1971

Գագ

Առօրյա կյանքում գագ ասելով ամենից հաճախ նկատի են ունենում մեթանը, որը կապույտ բոցով այրվում է խոհանոցի գազասալիկի այրիչում: Այն ստանում են գազի ստորգետնյա հանքավայրերից, իսկ այդպիսի հանքավայրեր մեզ մոտ Սովետական Միությունում, շատ կան Սիբիրում և Միջին Ասիայում: Վնասակար խառնուրդներից մաքրելուց հետո գազը խողովակաշարերով մատուցում են գործա-

րաններին և բնակելի տներին Բացի դրանից, գագ է դուրս գալիս նավթի որոշ հորատանցքերից: Գագ կարելի է ստանալ նաև այրվող հանածոները՝ ածուխն ու թերթաքարերը, հատուկ եղանակով մշակելու միջոցով: Քիմիկոսները գազից ստանում են սինթետիկ թելեր՝ հագուստներ պատրաստելու, փաթեթանյութ արագ իչացող սննդամթերքները պահելու համար և շատ այլ բաներ:

Բայց մեթանը չէ միայն, որ գագ է Գագ է նաև թթվածինը, որը մենք շնչում ենք Առանց թթվածնի մի լուցկի անգամ չէր այրվի Այն փչում են դոմենյան և մարտենյան վառարանների մեջ, որպեսզի մետաղներն ավելի արագ հալվեն: Իսկ ածխաթթվական գազն, օրինակ, համ ու հոտ է տալիս «գազով ջրին», որը մենք օդորոս էլ, հավանաբար, խմել ենք:

Գազերը շատ են: Օդն, օրինակ, մի քանի գազերի խառնուրդ է Բոլոր գազերի հիմնական հատկությունն այն է, որ զբաղեցնում են իրենց մատչելի ողջ տարածությունը: Եթե շշի միջից պոմպով արտածենք այնտեղ եղած օդի կեսը, ապա մնացած օդը հավասարաչափ կտառածվի շշով մեկ:

«Աշխատավոր» գազերը մարդուն մեծ ջգուտ են բերում: Սեղմած օդը երկրի վրա աշխատում է ավտոմոբիլների անվադողեռում, իսկ տիեզերքում բաքերից վառելանյութ է մղում դեպի հրթիռային շարժիչները: Պնևմատիկ (օդի ճնշմամբ գործող) ռատուկ սարքերում օդը կառավարում է շարքեր ավտոմատների փականները, զորքերում կրակը դարբնոցում, հնչյուններ սորգում փողային նվագարաններից, ջրի շարժության վրայով սահեցնում առագաստանավերը... Ջանազան գազերի խառնուրդները լույս են ճառագում ազդաբային խայտաբղետ խողովակներից, ձագային լազերներում ծնվում են լույսի զոր հոսքեր Բսենոն գազով են լցնում

լուսանկարչական ապարատների լուսաբռնկիչ լամպերի անոթները Իսկ կրիպտոն գազը սովորական էլեկտրական լամպերի շիկացած թելը պահպանում է վաղաժամ այրվելուց, և լամպը երկար է ծառայում

Գալակտիկա

Մեր Գալակտիկան

Մութ գիշերներին պարզ ու աստղալից երկնքում դուր կարող եք նկատել լայն, թույլ առկայծող մի շերտ, որն, ասես,



գտնուողում է ողջ երկնակամարը: Այդ շերտը թափված կաթի հետք է հիշեցնում և այդ պատճառով էլ դեռ հնում այն անվանել են Ծիր կաթին: Հայերը Ծիր կաթինն անվանում են նաև Հարդագողի ճանապարհ

Ժամանակակից *աստղադիտակներով* դիտելիս երևում է, որ Ծիր կաթինը կազմված է աղոտ առկայծող բազմաթիվ աստղերից, որոնք անզեն աչքով դիտելիս միաձուլվում են և երևում որպես համատարած մի շող

Ծիր կաթինն այն աստղերի մեծամասնությունն է, որոնք մտնում են աստղային հսկայական համակարգի Գալակտիկայի, կազմի մեջ Գալակտիկային են պատկանում նաև երկնքում դիտվող մյուս աստղերը և մեր աստղը՝ *Արեգակը*: Գալակտիկայի աստղերի ընդհանուր թիվն առեւելի է մոտ 100 միլիարդ: Նրանք գոյացնում են սկավառակի ձև ունեցող վիթխարի մի խառնակույտ Գալակտիկայի մեծ տրամագիծն այնքան մեծ է, որ լույսի ճառագայթը նրա երկարությունը կարող է հաղթահարել միայն 100 հզ տարում: Արեգակը Գալակտիկայի սովորական աստղ է Այն ավելի մոտ է մեր աստղային համակարգի եզրին, քան կենտրոնին: Իսկ Գալակտիկայի կենտրոնում կա աստղերի խիտ, գրեթե գնդաձև մի կույտ, որը կազմում է Գալակտիկայի միջուկը:

Բոլոր աստղերը պտտվում են Գալակտիկայի միջուկի շուրջը, ընդ որում Արեգակն իր մոլորակներով Գալակտիկայի միջուկի շուրջը իր պտույտն ավարտում է 200 մլն տարում Այդ հսկայական ժամանակահատվածը կոչվում է գալակտիկական տարի:

Աստղերից բացի Գալակտիկայի կազմում կան տիեզերական պինդ, մանր փոշու և գազի չափազանց նոսր, վիթխարի ամպեր Դրանք անվանում են փոշային և գազային միգամածություններ: Շատ հավանական է, որ Գալակտիկայի բազմաթիվ աստղերի շուրջը պտտվում են մոլորակներ բայց ժամանակակից հզոր աստղադիտակներով անգամ դրանք տեսնելն անհնար է

Բացառված չէ, որ մեր Գալակտիկայի որոշ մոլորակների վրա կան բանական էակներ, որոնք ունակ են ռադիոազդանշաններ ուղարկելու Տիեզերք Այժմ գիտնականները փորձում են հզոր ռադիոաստղադիտակների օգնությամբ որսալ այլ մոլորակների բնակիչների այդպիսի ռադիոազդանշաններ Բայց մինչև օրս այդ փորձերը հաջողությամբ չեն պսակվել Մեր

Գալակտիկայից բացի, Տիեզերքում կան բազմաթիվ այլ գալակտիկաներ: Դրանցից ամենամոտիկները մեր երկնքում երևում են որպես փոքրիկ, մշուշոտ բծեր Այդ Գալակտիկաներից լույսի ճառագայթը մեզ է հասնում միլիոնավոր, իսկ հայտնի ամենահեռավոր գալակտիկաներից՝ միլիարդավոր տարիների ընթացքում

Գալիլեյ Գալիլեո

1564—
1642

Առաջին մարդը որ երկնքին նայեց խոշորացնող օպտիկական խողովակով՝ *աստղադիտակով*, իտալացի նշանավոր գիտնական Գալիլեո Գալիլեյն էր:


1608 թ Գալիլեյն իմացավ, որ Հոլանդիայում դիտակ է ստեղծվել, և այն ժամանակների համար խիզախ մի միտք հղացավ՝ այդպիսի դիտակով դիտել գիշերային երկինքը: Եվ Գալիլեյն ինքը պատրաստեց գիտության պատմության մեջ առաջին երկու աստղադիտակները Դրանք դեռևս շատ անկատար էին փոքրը խոշորացնում էր ընդամենը 3, մեծը՝ 32 անգամ: Բայց այդ համեստ միջոցներով Գալիլեյը մեծ հայտնագործություններ կատարեց

1609 թ աշնանը նա առաջին անգամ աստղադիտակն ուղղեց դեպի Լուսին և պարզորոշ տեսավ նրա մակերևույթի անհարթությունները Լուսնի «լեռներն» ու «հովիտները»: Նշանակում է, Լուսինը բյուրեղապակե ողորկ գունդ չէ, ինչպես այն ժամանակ ենթադրում էին շատերը, այլ նման է Երկրին:

Աստղադիտակով նա տեսավ, որ Վեներա մոլորակը, Լուսնի նման, փոխում է իր տեսանելի ձևը կամ ինչպես ասում են, փուլերը Դա կարելի էր բացատրել միայն նրանով որ Վեներան պտտվում է ոչ թե Երկրի, այլ Արեգակի շուրջը, ինչպես և պնդում էր Նիկոլայ *Կոպեռնիկոսը*:

Արեգակի վրա Գալիլեյը նշմարեց մութ բծեր Դրանց տեղափոխությունից ելնելով գիտնականն ապացուցեց, որ Արեգակը պտտվում է իր առանցքի շուրջը: Նշանակում է, Արեգակը ևս բացարձակ մաքուր, «կատարյալ» մարմին չէ ինչպես սովորեցնում էին հին փիլիսոփաներն ու Գալիլեյի ժամանակների եկեղեցականները

Բայց ամենազարմանահրաշը Յուպիտեր հսկա մոլորակն էր: Նրա շուրջը պտտվում էին չորս լուսին-արբանյակներ, ճիշտ այնպես, ինչպես, ըստ Կոպեռնիկոսի



ուսմունքի, Արեգակի շուրջը պետք է որ պտտվեն երկիրն ու մյուս մոլորակները

Վերջապես, աստղադիտակով Ծիր կաթինը դիտելիս երևաց, որ այն կազմված է անզեն աչքի համար անտեսանելի բազմաթիվ աստղերից Գալիլեյի հայացքի առջև հառնեց աստղերի անեզր աշխարհը, որոնցից ամեն մեկը հեռավոր մի արեգակ է նման մեր Արեգակին: Ճշմարտանման էր դառնում նաև Զորդանո *Բրունոյի* ուսմունքն այն մասին, թե հեռավոր աստղերի շուրջը պտտվում են բանական էակներով բնակեցված բազմաթիվ մոլորակներ:

Գալիլեյի հայտնագործությունները Կոպեռնիկոսի ուսմունքի համոզիչ, փորձի օգնությամբ հիմնավորված ապացույցներըն էին Դրանք խարխուլում էին Արիստոտելի և Պտղոմեոսի եկեղեցու ընդունած ուսմունքի հիմքերը, ըստ որի երկիրը Տիեզերքի անշարժ կենտրոնն էր, իսկ երկինքն, իբր, ամենագոր աստվածների կացարանը:

Կոպեռնիկոսի ուսմունքը եկեղեցականները հերետիկոսություն հայտարարեցին բոլոր նրանց, ով տարածում և պաշտպանում էր այդ ուսմունքը, դաժան դատաստան էր սպառնում Բայց Գալիլեյը համարձակ պայքարում էր եկեղեցական խավարամոլության դեմ և շարունակում ապացուցել Կոպեռնիկոսի իրավացիությունը Այնժամ 1633 թ. եկեղեցականները դատի կանչեցին ծերունազարդ գիտնականին և տանջանքների սպառնալիքով հարկադրեցին ուրանալ իր հայացքները: Բայց դա, անշուշտ, սոսկ ձևական ուրացում էր: Գալիլեյը մնաց Կոպեռնիկոսի ուսմունքի համոզված կողմնակիցը: Թեև մեծ գիտնականին տնային ցմահ կալանքի էին վերց-

րել և արգելել աստղագիտության վերաբերյալ որևէ գիրք հրատարակել, մեխանիկայի բնագավառի իր նոր հայտնագործություններով նա շարունակում էր աջակցել գիտության զարգացմանը Չնայած եկեղեցականների բոլոր հալածանքներին, Գալիլեյն իրեն դրսևորեց որպես գիտական աշխարհայացքի հաղթանակի համար մղվող պայքարի ամենաականավոր մարտիկներից մեկը

«Անհայտ աշխարհի նախաշեմին», այսպես է կոչվում Գալիլեո Գալիլեյի մասին պատմվածքը, որը դուք կարող եք կարդալ հետևյալ գրքում

Филиппов Л. А. Колумбы Вселенной М «Дет лит.» 1970


Գաճաճ պետություններ

Եվրոպայում կան չորս պետություններ, որոնք միասին զբաղեցնում են ավելի փոքրը տարածություն, քան միայն Մոսկվան Այդ «գաճաճները» պահպանվել են այն ժամանակվանից, երբ գրեթե ողջ Եվրոպան կազմված էր այդպիսի մանր պետություններից: Այժմ նրանք շատ բանով կախման մեջ են իրենց ավելի ուժեղ հարևաններից Եվ. այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրն ունի իր դեմքը, իր առանձնահատկությունները

Պիրենեյան լեռների մեջ աննկատ ծվարել է փոքրիկ Անդորրան: Անդորրան հանրապետություն է, ունի իր կառավարությունը, բայց երկրի համատեղ կառավարողներ են համարվում նաև Ֆրանսիայի արեգիդենտը և Ուրխելի (Իսպանիա) եպիսկոպոսը: Անդորրայով է անցնում Իսպանիան Ֆրանսիային միացնող խճուղին: Չյունապատ լեռները տարվա մեջ ութ ամիս անանցանելի են: Իսկ ավելի ցածում, լեռնային հրաշալի արոտավայրերում, արածում են ոչխարները: Անդորրան հարևաններին վաճառում է բուրդ, պանիր և փայտածուխ Բնակիչները խոսում են ֆրանսերեն և իսպաներեն: Անդորրա են գալիս օտարերկրյա շատ զբոսաշրջիկներ


Գաճաճ պետություններից ամենափոքրը Մոնակոյի իշխանությունն է Այն զբոսնդվում է Ֆրանսիայի խնամակալության ներքո, և այստեղ ֆրանսերեն են խոսում: Միջերկրական ծովի ափին գտնվող մեղմ կլիմայով և մերձարևադարձային հարուստ բուսականությամբ գեղատեսիլ այդ անկյունը վեր է ածվել թանկ առողջավայրի Բայց ողջ աշխարհի հարուստներին Մո-








ՄՈՆԱԿՈ

Տարածությունը 1,3 ջառևս
Բնակչությունը՝ ավելի քան
25 000 մարդ




ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳ

Տարածությունը 2 600 ջառևս
Բնակչությունը՝ մոտ
360 000 մարդ



ՍԱՆ ՄԱՐԻՆՈ

Տարածությունը 61 ջառևս
Բնակչությունը՝ ավելի քան
20 000 մարդ




ԱՆԴՈՐՐԱ

Տարածույունը 465 քառ.կ

Բնակչությունը՝ մոտ

30 000 մարդ






ԼԻՒՏԵՆՇՏԱՅՆ

Տարածությունը մոտ 160 քառ. մ

Բնակչությունը՝ ավելի քան

25 000 մարդ



3 կմ

6 կմ



Սև մետաղի ոգիս



Մետաղամշակման արդյունաբերություն



Ջարքաշինո թյուն



Դեղագործական արդյունաբերություն



Ճենապակո հախճաաակո արդյունաբերություն



Հանքարի արդյունահանում



Հիդրոէլեկտրակայաններ



Խաղողի այգիներ



Հացահատիկա ինքույսեր (ցորեն գարի)



Պարսկա լուսնիկներ



Անասնապահություն



Ոչխարաբուծություն



Խոզաբուծություն



Տնօրոգ

նակոն հրապուրում է ոչ միայն բնության հրաշալիքներով, օվկիանոսագիտական հիանալի թանգարանով, որտեղ օվկիանարիումի հաստ ապակիների ետևում լողում են ստորջրյա աշխարհի բնակիչները Նրանց գրավում է նաև Մոնտե Կարլոյի խաղատունը, ուր շահում կամ տանուկ են տալիս հսկայական գումարներ Եվ Մոնակոյի ամբողջ բնակչությունը, իշխանի գլխավորությամբ, հիմնականում ապրում է խաղատան և օտարերկրյա հարուստ զբոսաշրջիկների սպասարկման եկամուտների հաշվին:

Հռենոսի աջ ափին, Ավստրիայի և Շվեյցարիայի միջև, պատասպարվել է Լիխտենշտայնի իշխանությունը Նրա երեք քառորդը զբաղեցնում են փշատերև անտառներով և մարգագետիններով ծածկված լեռները: Կլիման լեռներում խիստ է հարթավայրում մեղմ, տաք ամառով: Բնակիչներն զբաղվում են անասնապահությամբ, մշակում հացահատիկ, խաղող եփում զարեջուր: Գործարաններն ու ֆաբրիկաները մշակում են փայտանյութ, արտադրում մեքենաներ, գործվածքներ, մսի պահածոներ Ֆաբրիկաներից մեկն էլ հայտնի է ողջ աշխարհին այնտեղ պատրաստում են արհեստական ատամներ Լիխտենշտայնի իշխանությունում խոսում են, հիմնականում, գերմաներեն Այս փոքր պետությունը բանակ չունի, իսկ ամբողջ ոստիկանությունը հաշվվում է 18 մարդ Պետությունը գլխավորում է իշխանը

Ապենինյան լեռներում է գտնվում Սան Մարինո փոքրիկ պետությունը Այս երկրի բնակիչները մշակում են մրգի ու խաղողի այգիներ, զբաղվում անասնապահությամբ: Այստեղ գալիս են բազմաթիվ զբոսաշրջիկներ: Հատկապես հայտնի է Մոնտե Տիտանո լեռը, որի լանջերին է տեղավորված մայրաքաղաքը Սան Մարինոն:

Եվրոպայում, այս չորս գաճաճ պետություններից բացի, կա նաև մեկ ուրիշ փոքր պետություն՝ Լյուքսեմբուրգի մեծ դքսությունը: Արդեն կես դար է, ինչ նա անկախ է Բայց, այնուամենայնիվ, երկրում մեծ դեր են խաղում հարևան երկրների Բելգիայի և Ֆրանսիայի, խոշոր կապիտալիստները

Լյուքսեմբուրգում զարգացած է արդյունաբերությունը, առանձնապես սև մետալուրգիան, որն օգտագործում է տեղի երկաթի հանքաքարը Այստեղ ձուլում են ավելի շատ թուջ և պողպատ, քան որոշ անհամեմատ ավելի խոշոր երկրներում

Ինժեներները, բժիշկները, ուսուցիչները կրթություն են ստանում Լյուքսեմբուրգից դուրս, որովհետև այնտեղ բարձրագույն ուսումնական հաստատություններ չկան

Լյուքսեմբուրգի ինքնատիպ բնությունը արագահոս գետերը ընդարձակ հովիտները փարթամ անտառները և հինավուրց հուշարձանները հրապուրում են բազում զբոսաշրջիկների

Գայ

(Բժշկյան
Հայկ
Դմիտրիի)
1887 —
1937

1915 թ Արևմտյան Հայաստանում ահեղ մարտեր էին գնում: Էրզրումի մոտ հայկական ջոկատն ընկել էր թուրքական մեծաթիվ զորքերի շրջապատման մեջ Անհավասար մարտում զոհվել էր ջոկատի հրամանատարը Երեք տեղից ծանր վիրավորված ենթասպա Հայկ Բժշկյանը դիմեց հուսահատված մարտիկներին

— Մենք թվով քիչ ենք ճիշտ է բայց մենք կռվում ենք մեր հայրենիքը մեր ժողովրդին փրկելու համար: Հանեք սրերը պատյաններից: Ես եմ ձեր հրամանատարը

Գոտեպնդված մարտիկները մարտի նետվեցին և ճեղքելով թուրքերի օղակը դուրս եկան շրջապատումից..

Բայց Հայաստանը չփրկվեց Հայաստանը փրկելու համար պետք էր ազատարար Հոկտեմբերի արևը Լենինի բանակը, որին էլ զինվորագրվեց Հայկ Բժշկյանը: Նրան մի քանի տարի հետո կոչելու էին Գայ որ «հայ» բառն էր ռուսերեն արտասանությամբ և ժողովուրդը երգեր ու լեզենդներ էր հորինելու նրա մասին

Դրանից դեռ շատ առաջ ընտանիքի հետ իր ծննդավայրից Պարսկաստանի Թավրիզ քաղաքից Թիֆլիս (Թբիլիսի) տեղափոխված պատանին մասնակցում էր աշակերտական հեղափոխական ելույթների որի համար հեռացվեց Ներսիսյան դպրոցից ուր սովորում էր Հետագայում Բաքվում Թիֆլիսում Աստրախանում և այլուր ծավալած նրա հեղափոխական գործունեությունն աննկատ չմնաց ցարական ժողովրդներից: Նրան բանտ նետեցին: Բայց ոչ մի բռնություն չէր կարող ընկձել բոլշեվիկյան դրոշի ներքո պայքարի ելած Հայկ Բժշկյանի ոգին:

1918 թ Հայկ Բժշկյանը նշանակվում է Սիմբիրսկի հավաքական դիվիզիայի պետ որը կռվում էր հեղափոխության թշնամիների դեմ Կենսաց և մահու այդ պայքարում



այնպես կոփվեց և այնպիսի հաղթանակներ էր տանում Գայի հրամանատարությամբ գործող դիվիզիան որ այն անվանեցին «երկաթյա»:

Սիմբիրսկ (այժմ՝ Ուլյանովսկ) քաղաքը ուր ծնվել է կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը գտնվում էր սպիտակների ձեռքին Քաղաքի ազատագրության համար ծանր մարտեր էին գնում: Վերջապես թշնամին նահանջեց, «երկաթյա» դիվիզիան մտավ քաղաք Գայը Վ. Վ. Կուլբիշեվի հետ հեռագիր ուղարկեց Վ. Ի. Լենինին որն այդ ժամանակ վիրավորվել էր մահափորձի հետևանքով: Մեծ առաջնորդը բերկրանքով ընդունեց հայրենի քաղաքի ազատագրման լուրը և այդ հեռագիրն անվանեց բուժիչ հեռագիր:

Մարտիկները շրջապատել էին սիրելի զորավարին և ուզում էին լսել նրա խոսքը Գայը բարձրացավ ռազմակառքի վրա և սկսեց խոսել: Նա անթերի գիտեր ռուսերենը, բայց մարտիկները նրան չէին հասկանում: Գայը հուզմունքից հայերեն էր խոսում: Երբ այդ մասին ասացին, նա մի պահ լռեց, ապա բարձրաձայն ասաց

— Ես հայ եմ քաջեր որդին տառապած մի ժողովրդի, որին դարեր շարունակ ուզել են ստրկացնել, ոչնչացնել, բայց նա զենք է վերցրել բարձրացել իր անառիկ լեռներն ու կռվել իր հայրենիքը, իր պատիվը փրկելու համար:

Այստեղից հեռու է Հայաստանը իմ չքնաղ իմ վեհ հայրենիքը բայց կգա օրը երբ «երկաթյա» դիվիզիան Վոլգայից կհասնի Արաքս

Սովետական իշխանության հաղթանակի շնորհիվ վերջնական կործանումից փրկվեց հայ ժողովուրդը: Գայը դարձավ Սովետական Հայաստանի զինված ուժերի առաջին կոմիսարը և շատ զինվորական գործիչներ դաստիարակեց նա մի շարք զորամիավորումների հրամանատար է եղել: Բազմիցս պարգևատրվել է պետական բարձրագույն շքանշաններով Քաղաքացիական պատերազմի մասին շատ գրքեր ու պատմվածքներ է գրել նա միաժամանակ դասավանդել է Մ Ֆրունզեի և Ն Ժուկովսկու անվան ռազմական ակադեմիաներում:

Գայի և նրա «երկաթյա» դիվիզիայի մարտիկների հիշատակին հուշարձան է կանգնեցված Ուլյանովսկում: Նրա անունով են կոչվում բազմաթիվ դպրոցներ ՍՍՀՄ շատ քաղաքներում, այդ թվում նաև Երևանում, պիոներական դրուժինաներ, ջոկատներ, փողոցներ Երևանում, Նորքի սարալանջին, վեր է խոյանում Գայի հուշարձանը

Մ Ֆրունզեի, Ս Բուդյոննու, Վ Չապաևի, Ս Լազոյի և քաղաքացիական պատերազմի մյուս հերոսների կողքին անմար լույսով միշտ կշողջողա հայ ժողովրդի լեգենդար զավակ Գայի պայծառ անունը

Գայդար Արկադի Պետրովիչ

1904 —
1941

Ողջ կյանքում նա չմոռացավ 302939 թիվը Դա նրա առաջին հրացանի համարն էր, որ ձեռքն էր վերցրել դեռ դպրոցական եղած ժամանակ, մեր հեղափոխությունը թշնամիներից պաշտպանելու համար:

Արկադի Պետրովիչ Գուլիկովը, որին դուր չաճաչում եք որպես գրող Գայդար, ծնվել է Կուրսկից ոչ շատ հեռու գտնվող Լգով քաղաքում Անչափահաս, իր տարիքի համեմատ բարձրահասակ պատանին, թաքցրնելով իսկական տարիքը, կամավոր զինվորագրվեց կարմիր բանակին, կռվեց քաղաքացիական պատերազմի շատ ռազմաճակատներում և տասնվեց տարեկանում արդեն գնդի հրամանատար էր Ծանր վիրավորվելուց հետո միայն նա հարկադրվեց հեռանալ մարտի դաշտից

Պանծալի հեղափոխական զորավար Միխայիլ Վասիլևիչ Ֆրունզեի Գայդարից հուսահատական մի նամակ ստացավ իրեն կարմիր բանակում թողնելու խնդրանքով:



Ընկեր Ֆրունզեի խորհրդով, որը նամակից կռահեց ապագա գրողի ձիրքը, Արկադի Պետրովիչը ձեռնամուխ եղավ գրական աշխատանքի. Շուտով նա սկսեց հանդես գալ «Գայդար» ստորագրությամբ Մի ժամանակ մոնոլոգ հեծյալներն այդպես էին անվանում այն ձիավորին, որը որպես պարեկ սլանում էր ջոկատի ամենաառջեվից Գայդարը, իրոք, դարձավ սովետական այն գրողների մեծ ջոկատի պարեկը (առաջամարտիկը) որոնք գրքեր էին գրում երեխաների համար

Գայդարն ասում էր «Թող հետո երբևէ մարդիկ մտածեն, թե եղել են այնպիսի մարդիկ, որոնք խորամանկորեն իրենց մանկագիր են համարել: Իրականում նրանք պատրաստել են կարմիր հնգաթե վայրենների ամրակուռ գվարդիա»: Գայդարը ևս իր սքանչելի գրքերով օգնում էր որ աճեր մեր ժողովրդի երիտասարդ որդիների ու դուստրերի խիզախ և աշխատասեր գվարդիան երեխաները շատ սիրեցին Գայդարի «Դպրոցը» «Հեռավոր երկրներ» «Ռազմական գաղտնիք» «Թմբկահարի ճակատագիրը», «Չուկը և Գեկը» գրքերը: Բայց բոլոր տղաների ու աղջիկների առանձնահատուկ սերը նվաճեցին Գայդարի «Թիմուրը և իր ջոկատը» վիպակը և նրա գլխավոր հերոս Թիմուրը Ինքը Գայդարը ևս այնպիսին էր, ինչպես իր գրքերի հերոսները՝ անվեհեր ու բարի ազնիվ ու անշահախնդիր *Հայրենական մեծ պատերազմի* առաջին իսկ օրերից նա մեկնեց ռազմաճակատ իբրև «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի հատուկ թղթակից. 1941 թ աշնանը նա կամավոր մնաց թշնամու թիկունքում և դար-

ձավ պարտիզանական ջոկատի գնդացրորդ Լոկտեմբերի 26-ին Գայդարը որպես պարեկ գնում էր պարտիզանական մի փոքրիկ խմբի առջևից: Նրանց ճանապարհին ֆաշիստները դարան էին սարքել Գայդարն առաջինը նկատեց հիտլերական ավտոմատավորներին և հասցրեց նախազգուշացնել իր մարտական ընկերներին: Սակայն ինքը զոհվեց գնդակների տարափի տակ

Գայդարի գրքերում շարունակում են ապրել նրա հերոսները, հնչում է հեղինակի խելացի ախորժալուր խոսքը, իսկ նրա փառքը կոչում է լավ ու սխրալի գործերի:



*«Մանչուկները կովում էին մութ գիշերից մինչև պայծառ արշալույս»
Ա Գայդար
«Ռազմական գաղտնիք»*

1965 թ Արկադի Պետրովիչ Գայդարը ետմահու պարգևատրվեց Հայրենական պատերազմի I աստիճանի շքանշանով Սովետական ողջ գրականությունը հպարտությամբ ընդունեց այդ շքանշանը, որով հայրենիքը պարգևատրել էր իր մարտիկ-գրողին:

Կարդացեք այս գիրքը
Եմեյանով Բ Պատմածքներ Գայդարի մասին,
Ե «Հայաստիրատ» 1959:

Գայլ

Գայլն օգտակար կենդանի է, թե վնասակար: Նման հարց տալը ճիշտ չի լինի, որովհետև շատ կենդանիներ կարող են միաժամանակ թե օգտակար լինել և թե վնասակար

Երբ գայլը հարձակվում է ոչխարների կամ ընտանի եղջերուների վրա, մարդ-

կանց վնաս է տալիս. Բայց այդ նույն գայլը անտառում կամ տունդրայում ավելի հաճախ որսում է թույլ, հիվանդ կենդանիներ, որովհետև դրանց բռնելն ավելի հեշտ է Հիվանդ կենդանիներին ոչնչացնելով գայլն օգուտ է տալիս անտառին և նրա բնակիչներին. Դրա համար նրան անտառի սանիտար են անվանում

Բայց գայլը միայն հիվանդ կենդանիներին չէ, որ հետապնդում է: Նրա ավարն են դառնում նաև այնպիսի վայրի կենդանիներ, որոնք բավականաչափ զգուշ, ճարպիկ ու խորամանկ չեն լինում կամ էլ իրենց ցեղակիցներին զիջում են ուժով ու քաշով Ստացվում է, որ այն անտառում, ուր որս են անում գայլերը, ավելի հաճախ կարելի է հանդիպել ճարպիկ, արագաշարժ, ուժեղ և խորամանկ գազանների ու թռչունների

Մի բանով էլ է գայլն օգնում անտառին եթե անտառում չափից շատ գազաններ ու թռչուններ բազմանան, սնունդը նրանց չի բավականացնի նրանք քաղցած կմնան վատ կաճեն ու կսկսեն հիվանդանալ թույլ թռչուններին և գազաններին ոչնչացնելով, գայլը մյուս կենդանիներին մի տեսակ «փրկում է» սովից, այլասերումից և հնարավոր հիվանդություններից: Ահա թե ինչու գայլին անվանում են նաև վայրի կենդանիների պահապան-հովիվ, որովհետև նա, ասես, «հետևում է», որ գազաններն ու թռչունները ուժեղ և առողջ մեծանան

Ինչպե՞ս վարվել հապա, ոչնչացնել գայլերին թե՛ պաշտպանության տակ առնել Այնտեղ, ուր գայլերը շատ են բազմա-
նում և նրանց պատճառով տուժում են

ոչխարի հոտերը, կովերի և ընտանի եղջերուների նախիրները, գայլերին սկսում են որսալ

Իսկ այնտեղ, ուր գայլերն այնքան էլ շատ չեն և ամբողջ ժամանակ մնում են խուլ անտառում, նրանց հետ պետք է այլ կերպ վարվել: Գայլը շատ խորամանկ և խելացի գազան է: Նա արագ կռահում է, որ իրեն հետապնդում են, և երկար ժամանակով հեռանում է վտանգավոր վայրից: Ուստի երբեմն պարզապես բավական է, ինչպես հարկն է վախեցնել գայլին

Գայլը զգուշավոր կենդանի է. երբեմն ամենափորձառու բնախույզն անգամ չի կարողանում գտնել մայր գայլի որջը, ուր մեծանում են ձագուկները Սպառնացող վտանգն զգալով մայր գայլը կարող է ձագուկներին տեղափոխել մի այլ տեղ ու ապահով թաքցնել Մինչև աշուն ձագուկները մեծանում են և մոր հոր ավագ եղբայրների ու քույրերի հետ դուրս գալիս ձմեռային արշավների: Ձյան վրայի հետքերով որսորդներն անմիջապես իմանում են, թե երբ է անցել գայլերի ոհմակը, բայց շատ դժվար է լինում այդ արագաշարժ ու զգուշ ոհմակը գտնելը: Ձմռանը գայլերը հեշտությամբ խուսափում են մարդկանցից շրջանցում թակարդներն ու վտանգավոր տեղերը նրանք հայտնվում են անսպասելի և հանկարծակիի բերում մարդկանց գոմերից ոչխարներ փախցնում իսկ շներին ճանկում հենց տների լուսամուտների տակ


Գայլաձուկ



Գայլաձուկը Սովետական Միության տարածքում գտնվող գրեթե բոլոր ջրամբարներում հանդիպող խոշոր ձուկ է: Նրա մարմնի երկարությունը հասնում է ավելի քան 1,5 մ-ի, քաշը կարող է լինել 35 կգ-ից ավելի

Շատ լեգենդներ են հյուսվել գայլաձկան արտասովոր երկարակեցության շուրջ, բայց իրականում նա ապրում է ամենաշատը 20 տարի եղել է նաև երե սուներեք տարեկան գայլաձուկ որսալու դեպք

Սովորաբար գայլաձուկը կշռում է 6—8 կգ: Հավանաբար, կհամաձայնեք որ նման ձուկն էլ փոքր չէ, և նա պետք է շատ սնունդ հայթայթի: Դրա համար էլ գայլաձուկը որս է անում օրեր շարունակ Սա կայն նա իր զոհին չի որոնում և չի հե-



տապնդում այլ սպասում է որ այն լողալով մոտենա իրեն Ձկները չեն տեսնում ջրիմուռների մեջ թաքնված գիշատչին գայլաձկան խալերով ու զուլերով ծածկված մոխրագույն կամ մոխրականաչ մաշկը քողարկվելու հիանալի «զգեստ» է Հենց որ զոհը հայտնվում է նրա կողքին, գայլաձուկը կայծակի արագությամբ հարձակվում է վրան և ավարն արդեն չի կարող դուրս պրծնել նրա սուր թրանման ատամներով հսկա երախից

Գայլաձուկը գիշատիչ է նա հարձակվում է թե՛ մանր և թե՛ խոշոր ձկների վրա կույ տալիս սագի և բադի ճուտիկներին ջրի հատակը քարոջ տալիս նույնիսկ մեծ բադերի և կտցարների

Ձկներին և թռչուններին ոչնչացնելով գայլաձկներն անշուշտ վնաս են պատճառում: Սակայն որսալով առաջին հերթին հիվանդ և թույլ ձկներին նրանք կանխում են հիվանդությունների տարածումը ջրամբարների բնակիչների մեջ

Գառնի

Գեղամա լեռների ճյուղերից մեկը ծունկ է տալիս Ազատ գետի աջ ափին և դառնում եռանկյունաձև բարձրիկ հրվանդան:

Հենց այդ հրվանդանի վրա է Գառնիի 24 սյուներով հրաշակերտ տաճարը որը հեթանոսական ժամանակներից մեզ հասած եզակի կառույցներից է Սովետական Միության տարածքում:

Բայց միշտ է կանգուն եղել այն:

Տաճարը կառուցվել է 77 թ և կանգուն մնացել շուրջ 1600 տարի Հայաստանի ամենաերկարակյաց այս շինությունը փլուզվել է 1679 թ հունիսի 4-ի կործանարար երկրաշարժից. ժամանակի պատմիչ Ջաքարիա Սարկավագի հավաստմամբ երկրաշարժի ցնցումն այնքան ուժեղ է եղել

որ մի քանի տոննա կշիռ ունեցող քարերը դյուրությամբ բեկվել են տաճարից, օդ բարձրացել փետուրի պես և թափվել մոտակա ձորը

Դրանից հետո ճարտարապետական հնամենի կոթողը կիսավեր է մնացել մոտ 300 տարի 1909—1911 թվականներին անվանի գիտնական Նիկողայոս Մառը տաճարի հիմքի մոտ է հավաքել ցիրուցան եղած կապտավուն որձաքարերը հուսալով, որ մի օր կվերականգնվի հայոց այս գեղեցկաշեն կառույցը: Սակայն հետագայում քանդակազարդ շատ խոյակներ ու սյուներ անհետացել են և նորոգող ճարտարապետները դրանց հետքերը որոնել են Գառնիից հեռու ընկած վայրերում Գառնիի տաճարը վերականգնվել է ճարտարապետ Ա. Սահինյանի նախագծով և անմիջական ղեկավարությամբ 1969—1975 թվականներին



Գառնիի տաճարը

Ենթադրվում է որ սյունազարդ տաճարը նվիրված է եղել արևի հայոց աստված Միհրին: 24 սյուները խորհրդանշել են օրվա 24 ժամերը

Հետագայում տաճարը եղել է Հայոց Տրդատ Գ թագավորի քրոջ Խոսրովի դուստի ամառանոցը հովանոցը. Պատմիչները այն կոչել են նաև Տրդատի թախտ կամ Տրդատի սարավույթ

Տաճարի կողքին հնում եղել են պալատական շենքեր Պահպանվել է բաղնիքի խճանկարով հատակը որ պատրաստված է 15 գույնի բնական քարերից և պատկե-

րում է ծով ու ծովային տեսարաններ Այդ խճանկարը հին Հայաստանի մոնումենտալ գեղանկարչության հրաշալի հուշարձաններից է

Այդ, հին է այս հոյակապ տաճարը Բայջ նրանից ավելի հին է Գառնի անունը, որով կոչվել են նաև բարձրիկ հրվանդանի վրայի ամրոցն ու կողքի գյուղաքաղաքը Պատմահայր Մովսես Խորենացին գրում է որ այս բնակավայրը հիմնադրել է Հայկ նահապետի ծոռ Գեղամը որի թոռան Գառնիկի անունով էլ կոչվել է Գառնի

Այժմ իր նախկին տեսքն ստացած տաճարը Սովետական Հայաստանի տեսարժան վայրերից է 1980 թվականից սկսած այստեղ անց են կացվում երգի ու պարի ամենամյա փառատոներ

Գառնիի հրաշալի փաճարն են այցելում արտասահմանյան տարբեր երկրներից Հայաստան ժամանած հազարավոր զբոսաշրջիկներ:

Գավրոշ

Փարիզի աղմկոտ փողոցներով օրեր շարունակ թափառում է տասներկուամյա մի տղա: Նրա հագին կանացի կարճ վերնաշապիկ է չափից դուրս երկար տաբատ իսկ փողպատի փոխարեն վզին պատռված

թաշկինակ է կապել Հաճախ էլ քաղցած է մնում: Բայց նա Գավրոշը չի վիատվում նրա շուրթերին միշտ մի ուրախ երգ կա եվ ուրիշներին օգնելու հնար էլ է գտնում իր թաշկինակն օրինակ, տվեց մի աղքատ աղջկա իսկ վերջին դրամով հաց գնեց մոլորված երեխաների համար Սրանց նաև օթևան տվեց «իր տանը» հրապարակում կանգնած փայտե հսկայական փղի փորում:

Բայց Գավրոշի կյանք ներխուժեցին փոթորկոտ ժամանակներ. Ֆրանսիայում հեղափոխություն բռնկեց Բուրժուական կառավարությունը ապստամբած բանվորների արհեստավորների ուսանողների դեմ զորք հանեց

Փողոցներում բարիկադներ են բարձրանում ցած գլորած ծառերից ու լապտերա սյուներից իրար գլխի դիզած սալաքարերից, տախտակներից ու ջարդոտած կահույքից:

Գավրոշն օգնում էր ապստամբներին չոր նրանց փամփուշտները վերջանում էին Գավրոշը դուրս էր գալիս բարիկադների ետևից, իջնում սալարկուղուն և ըս-

պանված զինվորների պայուսակներից փամփուշտներ հավաքում Գնդակների տարափի տակ վախ չիմանալով, նա երգում է իր ուրախ երգը և ծիծաղում կառավարության զինվորների երեսին

Բթիցս արցունք է գալիս
Բյուժոն բարեկամ,
Ժանդարմները փոխ տուր ինձ
Խրատեն նրան:

Շինելը կապտավուն
Գլխարկին էլ մի հավ:
Մոտեցանք մեր ուղուն
Կեցցե ծուղորուղուն:

Բայց երգը կիսատ մնաց նրա շուրթերին նա ընկավ խոցված...

Գավրոշի և շատ վիշտ ու ցավ տեսած ուրիշ հասարակ մարդկանց մասին է պատմում ֆրանսիացի գրող Վիկտոր Հյուգոյի (1802 – 1885) «Թշվառներ» վեպը Իսկ Գավրոշի մասին կարդացեք երեխաների համար լույս տեսած առանձին գրքույկը: Հյուգոյի գրքերը «Փարիզի աստվածամոր տաճարը», «Մարդ որը ծիծաղում է», «Իննսուներեքը» կարդում և սիրում են որովհետև դրանք պատմում են ազնիվ բարի ու արդարամիտ մարդկանց մասին հանուն մարդու ազատության և արժանապատվության մղվող պայքարի մասին:

Վ Հյուգոն բարեկամական և նամակա գրական կապեր է ունեցել մի շարք հայ



մտավորականների հետ Նրա «Թշվառներ» և «Փարիզի աստվածամոր տաճարը» վեպերը դեռևս Նրա կենդանության օրոք թարգմանվել են հայերեն և ձևվել հեղինակին «Թշվառների» թարգմանիչ Գր Զիլինկիյանին հղած պատասխան նամակում Վ Նյուգոն գրում է «Ձեր հիանալի լեզուն ես չգիտեմ բայց սիրում եմ այն Դրա մեջ արևելքն եմ զգում դարերն եմ նշմարում այնտեղ տեսնում անցյալի խորհրդավոր նշույլի շողոզալը:

Ինձ համար պարծանք է հայերեն թարգմանվելու Երախտագիտությամբ եմ ընդունում ձեր ազնիվ ձևերը և շնորհակալություն հայտնում»:

Կարող եք կարդալ հետևյալ գիրքը
Նյուգո Վ Գավրոշ Ե «Հայպետհրատ» 1932

Գարիբալդի Զուգեպպե

1807 —
1882

«Երկու կիսագնդերի հերոս» «ավագակ» ասում էին միևնույն մարդու մասին Օնվել է նա Նիցցա քաղաքում ծովայինի ընտանիքում: Տասներեք տարեկանում Զուգեպպեն ծով է դուրս գալիս որպես նավի փոքրավոր (յունգա) քսանհինգ տարեկանում դառնում նավապետ Բայց այդ արևախանձ շիկահեր նավապետին մտահոգում էին բնավ էլ ոչ իր նավի բեռներն ու կատաղի փոթորիկները այլ հարազատ երկրի ճակատագիրը

Այն ժամանակ Իտալիան միասնական երկիր չէր, ինչպես այժմ այլ կազմված էր առանձին մանր թագավորություններից և իշխանություններից իսկ Նրա մեծ մասը գրավել էին ավստրիացիները: Նվաճողների դեմ այս ու այնտեղ կազմակերպվում էին գաղտնի դավադրություններ բռնկում ապստամբություններ:

1834 թ ձմեռն էր Զենովա նավահանգստային հինավուրց քաղաքի փողոցներում ավստրիական զինվորները մահապատժի էին տանում հերթական ձախողված ապստամբության մասնակիցներին Բայց ապստամբների անվեհեր առաջնորդը նավապետ Զուգեպպե Գարիբալդին Նրանց մեջ չէր Նա կարողացել էր խույս տալ և մեկնել Հարավային Ամերիկա և Նրան մահվան դատապարտեցին հեռակա կարգով

Տասնչորս տարի անց Գարիբալդին որ արդեն փառաբանված զորավար էր, հարավամերիկյան հանրապետությունների

անկախության համար պայքարող մարտիկ Նորից ուրեք դրեց հայրենի հող. Նրա հետ էին 63 հավատարիմ մարտական ընկերները նույնպիսի վտարանդի հեղափոխականներ: Նոր արյունահեղ մարտեր էին սպասում նրանց հանուն հարազատ երկրի միավորման և ազատության Իտալիայի ողջ ժողովուրդը զենք վերցրեց

Սյդ ծանր պայքարը տևեց համարյա 20 տարի: Գարիբալդիի անունը դեպի նա էր ձգում հեղափոխությանը նվիրված երիտասարդներին Մարտում պարտվելիս անգամ գարիբալդիականներն իրենց հաղթված չէին համարում: Իսկ երբ գոտեմարտի մեջ ներխուժում էր ինքը Գարիբալդին, բարձրահասակ, լայնեզր գլխարկով, կարմիր վերնաշապիկով և ուսերին ծածանվող մեքսիկական գորշ թիկնոցով մորուքավոր այդ հեծյալը հակառակորդին սնտոյի սարսափն էր պատում:

Գարիբալդին ավստրիացիների դեմ մի քանի փայլուն հաղթանակ տարավ Ազատագրված էր գրեթե ողջ Իտալիան:

Բայց Հարավային Իտալիան և Սիցիլիա կղզին դեռևս Նեապոլի թագավորի իշխանության տակ էին: Սիցիլիայի ժողովուրդն ապստամբեց թագավորական իշխանության դեմ: Գարիբալդին օգնության շտապեց սիցիլիացիներին Թշնամու նավերից արձակվող զնդակների տարափի տակ նա իր հազար կամավորներով ափ իջավ լեռնոտ Սիցիլիայում: Ողջ աշխարհն էր հետևում ասես մահվան դատապարտված այդ կտրիճների գործողություններին Ինչպես ամենուրեք, Սիցիլիայի հասարակ ժողովուրդը ևս խանդավառությամբ էր դիմավորում Գարիբալդին, միանում Նրա ջոկատին Թագավորն արտաքսվեց Սիցիլիայից, իսկ հետո նաև Հարավային Իտալիայից

Գարիբալդին երազում էր Իտալիայի միավորման իտալական հանրապետության ստեղծման մասին Իտալիան միավորված էր, բայց Նոր կազմավորված իտալական պետությունը հանրապետություն չէր Եվ Գարիբալդին դառնությամբ էր դա խոստովանում

Զուգեպպե Գարիբալդիի անսահման խիզախ և անշահախնդիր մարդու, անունը դարձել է հայրենիքի, ազատության և արդարության հանդեպ տածած սիրո խորհրդանիշ

Գարիբալդիի ծավալած ազատագրական պայքարին ոգևորված հետևում էին Միքայել Նալբանդյանն ու հայ առաջադեմ այլ գործիչներ:

Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոն

— Բոլոր բոլոր մանուկներին...
Տարիներ առաջ, 1970 թ., այսպիսի մի կոչ արձակվեց մուլտրակի երեխաներին Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում ստեղծված մանկական առաջին պատկերասրահից

« Բոլոր նրանց, ովքեր սիրում են երկինք ու արև հող ու հեքիաթ, ովքեր սիրում են նկարել, այստեղ սպասվում են հետաքրքիր հանդիպումներ գեղեցկի մաքրության անկեղծության, բարի երազների հետ»:

Եվ երեխաներն արձագանքեցին Պատկերասրահի հասցեով աշխարհի տարբեր ծայրերից սկսեցին ստացվել նամակներ մանկական նկարներ պարունակող փոքրիկ ծանրոցներ Տատիկների, պապիկների հայրիկների ու մայրիկների ձեռքերը բռնած, մեծ ու փոքր թղթապանակներ թևատակերին մանկական պատկերասրահի շենքն էին գալիս տարբեր տարիքի երեխաներ

Մանկական պատկերասրահի ստեղծման հիմք ծառայեց 1968թ Երևանի նշանավոր տանը կազմակերպված «Աշխարհը երեխաների աչքերով» մանկական ստեղծագործությունների ցուցահանդեսը 1975 թ Անգլիայի պրեմիեր մինիստր Հարոլդ Վիլսոնը պատկերասրահին նվիրաբերեց անգլիացի երեխաների 150 աշխատանք Մանկական պատկերասրահին այժմ իր ֆոնդերում ունի ավելի քան 150 000 ստեղծագործություն աշխարհի 90 երկրներից Դրանք տարբեր բնույթի աշխատանքներ են գեղանկարներ, գորգ, գորելեն կարպետ ձեռագործ, ապլիկացիա, դեկորատիվ տիկնիկներ ժանեկագործության, արծաթագործության նմուշներ և այլն Պատկերասրահի ֆոնդերից տարբեր տարիների աշխատանքներ են ուղարկվել ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իտալիայում Չեխոսլովակիայում կազմակերպված ցուցահանդեսներին: Պատկերասրահը 1975 թ արժանացել է ՀԼԿԵՄ, 1980 թ ՀամԿԵՄ մրցանակների:

— Բոլորին բոլորին, բոլորին
Այս անգամ արդեն Հայաստանի երեխաներին դիմեց մանուկների Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնը, որն ստեղծվեց 1978 թ, մանկական պատկերասրահի հիման վերապատկերասրահի որ տարիների ընթացքում վերածվեց մանկական ստեղծագործության մի իսկական թանգարանի ժամանակի ընթացքում հանրապետական կենտրոնն իր մեջ ներառեց արվեստի տարբեր տեսակների ստեղծագործական ուսուցման օղակներ մանկապատանեկան թատերական, դեկորատիվ-կիրառական և կերպարվեստի փորձարարական



Ցուցահանդեսի մուտքը

տական կենտրոնը, որն ստեղծվեց 1978 թ, մանկական պատկերասրահի հիման վերապատկերասրահի որ տարիների ընթացքում վերածվեց մանկական ստեղծագործության մի իսկական թանգարանի ժամանակի ընթացքում հանրապետական կենտրոնն իր մեջ ներառեց արվեստի տարբեր տեսակների ստեղծագործական ուսուցման օղակներ մանկապատանեկան թատերական, դեկորատիվ-կիրառական և կերպարվեստի փորձարարական

Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի ցուցասրահում




ստուդիաներ մանկական ֆիլիարմոնիա
և այլն

Այսօր կենտրոն են հաճախում 4—16
տարեկան 1000-ից ավելի երեխաներ:

Գեկորատիվ-կիրառական և կերպար
վեստի ստուդիայի 11 արվեստանոցների
50-ից ավելի խմբերում երեխաներին ու
սուցանում են արվեստի տարբեր ձևեր ու
տեսակներ գեղանկարչություն քանդակ
գծանկարչություն (գրաֆիկա) փայտի
քարի, մետաղի գեղարվեստական մշա
կում, խեցեգործություն գորգագործու
թյուն, կարպետագործություն, գոբելենի
մանվածք, ձեռագործ ժանեկագործու
թյուն, դիզայն

Թատերական ստուդիայում գործում են
դրամատիկ, տիկնիկային, մնջախաղի
ստվերների խաղի, մեկ դերասանի, պոե
զիայի, երաժշտական թատրոնի խմբեր
երեխաները հաճույքով հաճախում են
ֆիլիարմոնիայում գործող հայկական ժո
ղովրդական երգ ու պարի ազգագրական
խմբերը: Շուտով դրանց շարքը կհամալը
րեն նաև կամերային նվագախումբը տղա
ների ու խառը կազմով երգչախմբեր

Կենտրոնը վերջերս կրկին դիմեց «Բո
լորին, բոլորին» կոչով, բայց այս անգամ
լուսանկարչական արվեստ և կինոարվեստ
սիրող մանուկներին



Այո երեխաները պետք է իրենք փորձեն
նկարահանել փորձեն ստեղծել մուլտիպ
լիկացիոն, վավերագրական, գեղարվես
տական կինոնկարներ Այսօր Կենտրոնի
շուրջը համախմբված երեխաները իրենց
առաջին քայլերն են անում մեծ արվես
տում՝ նկարում են քանդակում պարում
երգում, նկարահանում

Նրանց ձեռքին է գեղեցիկը հայտնաբե
րելու կախարդական բանալին

Եթե ուզում եք այդ ամենը տեսնել, այ
ցելեք Գեղապետական դաստիարակության
հանրապետական կենտրոն դեռ հեռվից
իր հետաքրքիր ցուցափեղկերով ուշադրու
թյուն գրավող այն շենքը, որը գտնվում է
Երևանի Արոյան և Սայաթ-Նովա փողոց
ների հատման տեղում

Գեղանկարչություն

Եգիպտոսում գիտնականները գտել են
գրեթե երկու հազար տարի առաջ ապրած
մարդկանց դիմանկարներ: Հին աշխարհի
գեղանկարիչը նկարել է դրանք վառ գույ
նի ներկերով տախտակի վրա և այնքան
հրաշալի որ սևահեր թխամորթ ցուլուս
աչքերով մարդիկ թվում են կենդանի
կանգնած քո առջև

Գեղանկարչությունը ներկերով նկարե
լու այն արվեստն է երբ նկարչի պատ
կերածը հուզում է մեզ այնպես, ինչպես
կիուզեր իրական կյանքում: Նկարիչը գույ
ների և գծերի զուգորդությամբ վերար
տադրում է մարդկային դեմքի արտահայ
տությունն ու խաղերը լույսի շողն ու
ստվերը Լավ նկարը միշտ էլ մեր մեջ որևէ
տրամադրություն է առաջացնում ուրախ
եթե գույները պայծառ ու տոնական են,
թախծոտ եթե նկարիչը պատմում է ինչ
որ տխուր բանի մասին և նրա վրձինը
ներկապնակի վրա խառնում ու կտավին է
հանձնում մուգ, մռայլ գույներ

Գեղանկարիչն իր տեսած ամեն բանը
չէ որ անխտիր նկարում է Նա ձգտում է
մեր առջև բանալ կյանքի դյուրիչ պատ
կերները բարձրաբերձ լեռների վեհ գե
ղեցկությունը փոթորկուտ ծովի ահարկու
ուժը ծաղիկների նրբին գույները փոր
ձում արտահայտել նույնիսկ, մարդկային
զգացմունքների ողջ խորությունը

Ցուցադրվող աշխատանքները միշտ էլ ի
րենց են ձգում թե մեծերին թե երեխա
ներին



հանդիմանում ես «Այդ ինչպես է, որ առաջ չէի նկատում ծառերի գեղեցկությունը»: Այդուհետև կսկսես նկատել ծաղիկների, քարերի ամպերի նրբերանգները, լուսի շողերն ու մութ, թավշե ըստվերները Այդ ամենը տեսնել մեզ սովորեցրեց գեղանկարիչը

Ահա Մարտիրոս Մարյանի «Քարինչ գյուղի կուտնտեսությունը թումանյանի լեռներում» կտավը Ամենասովորական մի պատկեր է ասես, լեռ, ժայռոտ լեռների փեշին նեղ հովտում ծվարած մի գյուղ մի կտոր երկինք, մի քանի ծառ ու փոքր մի նախիր Բայց տեսեք, ինչ խրոխտ ու վեհ են ուս ուսի թիկնել լեռները ինչ երկնասլաց են դրանց ժայռեղեն կատարները, իսկ որ քան մտերմիկ է ձորակում ծվարել գյուղը և որքան ջերմորեն փարվել տաք լեռան փեշին Բնության ինչպիսի վեհասքանչ պատկեր: «Իսկ ինչո՞ւ է, այն լեռը մանուշակագույն, — գուցե կհարցնեք դուք, — միթե այդպիսի լեռ լինում է»: «Իսկ դուք ուշադիր նայել եք մեր Հայաստան աշխարհի լեռներին Չեք նկատել, հապա, թե ինչպես են նրանք անսպասելիորեն գունափոխվում վայրից վայր, եղանակից եղանակ, ժամեծամ թե ինչպիսի անհավանական երանգներ են ստանում արևի ճառագայթների տակ», — ասում է նկարիչը: Իրոք որ, լեռներն այնքան դյուրօրիչ են այնքան լուսաշողախ ու խորհրդավոր. եվ դու լցվում ես գեղեցիկ մի հույզով գեղեցկանում ես ինքդ

«Ճյուղ» նկարիչ Ա Ա Իվանովի կտավից

Եգիպտոսում գտնված դիմանկարներից մեկը

Ռուս գեղանկարիչ Ալեքսանդր Իվանովը մի այնպիսի հիասքանչ նկար ունի որ այն համեմատում են երաժշտության և բանաստեղծության հետ Այնինչ կտավի վրա յուղաներկով պատկերված է սոսկ քամուց օրորվող մեն մի ճյուղ «Միթե որեւէ հետաքրքիր ու գեղեցիկ բան կա այս սովորական ճյուղի մեջ», — հնարավոր է որ մտածեք դուք: «Նայեցեք, հապա, — ասում է նկարիչը, — տեսնո՞ւմ եք, որքան նրբագեղ ու սլացիկ են ոստերի գալարները, ինչ բազմերանգ են տերևները արևի տակ ոսկեզօծ են, սովերում կապտակա նաչ, գրեթե սև» Ճյուղը նկարված է այնպես թեթև, այնքան ներթափանցված լուսով ու ճախրասլաց, որ ականա ինքդ քեզ






Գեղանկարչության ինչպես և արվեստի այլ բնագավառների սքանչելի ստեղծագործությունները սովորեցնում են մեզ ճիշտ կողմնորոշվել կյանքում ներշնչում ուժ ու կորով երևան հանում մարդկանց գեղեցկությունը, ազնվությունը խելքը և հարկադրում ջերմորեն սիրել նրանց:

Նայեցեք Բ Իոզանսոնի «Կոմունիստների հարցաքննությունը» նկարին: Մենք չգիտենք թե ինչ է եղել ու ինչ կկատարվի պատանու և աղջկա հետ, որոնց այժմ հարցաքննում են չարությամբ ու վախով համակված սպիտակգլարդիականները Բայց վստահ ենք կոմունիստներն արիաբար կտանեն տանջանքները և իրենց ընկերներին չեն մատնի: Այդ միտքը նկարիչը կարողացել է հաղորդել ձեռքին ունենալով միայն վրձին ու ներկեր

«Քարինջ գյուղի կոլտնտեսությունը Թու մանյանի լեռներում». նկարիչ Մ Ս Սարյան

«Կոմունիստների հարցաքննությունը նրկարիչ Բ Վ Իոզանսոնի կտավից



Գեղանկարչությունն բառի փոխարեն հայերը երբեմն օգտագործել են նաև գունանկար, գունանկարչություն, գունագրություն, կենդանագիր, կենդանագրություն, երփնագիր բառերը Հայկական գեղանկարչությունը սկզբնավորվել է շատ վաղուց: Միջնադարում հայկական գեղանկարչությունը դրսևորվել է *մանրանկարչությամբ*: 4-րդ դարից առանձին թերթիկներով, իսկ 9-րդ դարից մատյաններով մեզ են հասել մանրանկարչության բազմաթիվ նմուշներ

Գեղանկարը պետք է դիտել ուշադիր և համբերությամբ: Երբ դուք սովորեք հասկանալ նրա ինքնատիպ լեզուն՝ գեղանկարչի ներկայանակի գաղտնիքները շատ նկարներ կսիրեք և նրանց հերոսների հետ կմտերմանաք այնպես ինչպես գրքերի հերոսների հետ

Գեղանկարչության մասին դուք կարող եք կարդալ հետևյալ գրքերը

Каменева Е О Какого цвета радуга М «Дет лит.», 1971

Туберовская О М., В гостях у картин Расказы о живописи Л., «Дет лит» 1973

Գեղարդ

Ավանդությունն ասում է որ մեծ ասպատակող Լենկթեմուրը ոտքի կոխան դարձնելով աշխարհի կեսը եկել հասել էր Գառնո ձոր

Ահա և Այրիվանք Գեղարդը ուր հայ քարգործ ճարտարապետ Գալձագը միակտոր ժայռի մեջ քանդակել էր երկու եկեղեցի

— Հրաշք կառույց է ժայռակոփ տաճար. — զեկուցեցին արնածարավ Լենկթեմուրին

— Մեր ինչին է պետք սա Ոչ ավերել կարող ենք ոչ շալակել տանել

— Ասում են, այստեղ է պահվում Հայոց աշխարհի յոթ ձիաբեռ ադամանդը

Լսելով այդ մասին Լենկթեմուրը որոշեց անձամբ հափշտակել այդ մեծ հարստությունը՝ Նա մոտեցավ ժայռափոր տաճարին և աչք ածեց ներս: Մուտք տաճարում հուրհրատում էր մի լուսափունջ: Այդ, այդպես պայծառ կարող է փայլատակել միայն ադամանդը: Լենկթեմուրը հազիվ զսպելով իր ուրախությունը՝ նետվեց ներս և ձեռքերը տարածեց դեպի լուսափունջը: Բայց այ քեզ հրաշք լուսափունջը միան

գամից անհետացավ: Լենկթեմուրը վերադարձավ տաճարի մուտքի մոտ Ադամանդը նորից ցուցլաց Մի քանի անգամ նա փորձեց ձեռքերը պարզել դեպի ադամանդը բայց բան չստացվեց: Հենց որ ներս էր մտնում լուսափունջը մարում էր

Եվ Լենկթեմուրը քմծիծաղ տվեց ու ասաց

— Մարդ պետք է միայն տեսնի ու անցնի և հայոց փայլատակող ադամանդը և ադամանդափայլ այս տաճարը


Այդ ժամանակվանից էլ Այրիվանք Գեղարդը օտարներն անվանեցին Տես ու անցիր: Դարերի հետ շատ նվաճողներ եկան Գառնո ձորը տեսան ու անցան իսկ հրաշք կառույցը մնաց դառնալով Սովետական Հայաստանի տեսարժան վայրերից մեկը Եվ հիմա քչերը գիտեն որ հայկական ճարտարապետության եզակի այս հուշարձանախումբը մի ժամանակ կոչվել է Տես ու անցիր: Նա պահել է միայն իր հայկական կրկնակ անունը 4—13-րդ դարերում կոչվել է Այրիվանք ժայռափոր կառույցների պատճառով, 13-րդ դարից ստացել իր երկրորդ Գեղարդ անունը, որովհետև այս վանքին էր պահ տրվել սուրբ համարվող մի գեղարդ (Նիզակ)

Իսկ քնչ լուսափունջ էր, որ չկարողացավ բռնել Լենկթեմուրը: Ժայռակոփ տաճարի ճարտարապետ Գալձագը շարժական մի քար էր պատրաստել որի շնորհիվ կեսօրին ձեղք էր բացվում դեպի դուրս և արևի ճաճանչները ներս ընկնելով մթության մեջ այնպիսի լուսափունջ էին կազմում որ ասես ադամանդ էր շողշողում 1679 թ. երկրաշարժից այդ քարը տեղաշարժվեց և կորցրեց լուսափունջ արարելու իր հատկությունը

Գեղարդը միջնադարյան Հայաստանի ճարտարապետական նշանավոր հուշարձաններից է, եղել է հոգևոր ու մշակութային կարևոր կենտրոն: Այստեղ գործել են դպրանոց, հարուստ գրադարան, գրչատուն, ուր ընդօրինակվել ու պատկերազարդվել են բազմաթիվ ձեռագրեր

Գեղարդը հայտնի է նաև իր ժայռափոր *խաչքարերով*՝ եկեղեցիների ու մի շարք հարակից կառույցների պատեր ծածկված են բարձրարվեստ քանդակներով Հնամենի հուշարձանի վիմագիր արձանագրությունները ուշագրավ տեղեկություններ են հաղորդում ժամանակի իրադարձությունների մասին

Այցելեք Գառնիի գեղատեսիլ ձորը և անձամբ տեսեք Գեղարդը



Գեղարդի
վանական
համալիրը

Գեղզեղիկ

Ամպամած անձրևոտ օրերին փոքրիկ գեղզեղիկը մի մոխրագույն, աննշան թռչնակի է նման Հայտնվում է, մտնում



թփերի մեջ և այլևս չի երևում. Բայց ասի դուրս եկավ արևը կեչու և թխենու տերևներին ուրախ թռչկոտեցին արևի շողերը և գեղզեղիկն ինքն էլ ասես արևի շող դարձավ ժիր թռչնակը ճախրում է ծառն ի վեր թաքնվում խիտ սաղարթի մեջ, և ապա տարածվում է երգը «ճընկ-ճընկ» «ճընկ-ճընկ»: Գեղզեղիկն է երգում:

Ահա թխենու ոստն ի վեր ցատկոտում է ոսկեկանաչ մի թռչնակ նայում ամեն տերևի տակ, այս ու այնտեղ խցկում հետաքրքրասեր կտուցիկը և անընդհատ կըրկ նում «Ֆյուլթի-Ֆյուլթի», «Ֆյուլթի-Ֆյուլթի» Հետո նստում է դալար ծառի կատարին և սկսում հնչել ու սահուն արտաբերել «Ֆյուլթի-Ֆյուլթի-Ֆյուլթի...» Ապա ասես ձայնը կտրվեց քնքշորեն նվաղում է «Ֆյուուուլթի...»: Այդպես է երգում իր երգը մեկ այլ գեղզեղիկ գարունիկը

Բացի նշվածներից Առվեստական Միության անտառներում հանդիպում է գեղզեղիկների ևս տասներեք տեսակ Նրանց

միմյանցից կարելի է զանազանել իրենց երգով

Գեղզեղիկները հսկայական օգուտ են տալիս ոչնչացնելով վնասատու շատ միջատների Գեղզեղիկի քաշը 5—12 գ է, բայց մեկ օրում կարող է ուտել մինչև 17 գ կեր

Գեյզեր

Աշխարհում կան զարմանալի շատրվաններ, որոնք գործում են իրենք իրենց, առանց մարդու մասնակցության Դրանց ջուրը

տաք է, եռացող Այդ շատրվանները խփում են ուղղակի գետնի տակից Դրանք գեյզերներն են (խլանդերեն «գեյզա» բառից, որ նշանակում է «դուրս հորդել»), որ կարող են տեսնել Կամչատկայում, Իսլանդիայում, Նոր Զելանդիայում, ԱՄՆ-ում

Գեյզերները միշտ լինում են գործող կամ էլ նոր հանգած հրաբուխների մոտ Մագմայից անջատված շիկացած գոլորշու և գազերի ազդեցությամբ օտորոգետնյա ջրերը տաքանում են և եռացող շատրվանի կամ աղբյուրի ձևով դուրս գալիս երկրի



մակերևույթ. Յուրաքանչյուր գեյզեր ժայթքում է յուրովի որոշակի ժամանակահատվածից հետո տարբեր ուժով: Կամչատկայում մի գեյզեր «աշխատում է» ամեն չորս րոպեն մեկ նրան այդպես էլ անվանել են ժամացույց Իսկ Ելուուսթոնի պարկի «Օեր գինվորական» կոչվող գեյզերը խփում է ժամը մեկ, Անդադրունը կես րոպեն մեկ, կարող էս, Նույնիսկ, ժամացույցդ ստուգել: Իսլանդիայի Մեծ գեյզերը ժայթքում է օրը մեկ անգամ, բայց նրա շատրվանով կարելի է հիանալ 3 ժամ անընդհատ Հենց ժայթքումն ավարտվում է, անդորր է տիրում, ասես ոչինչ էլ չի եղել Իսկ հետո ջուրը նորից սկսում է եռ գալ քլթքլթալ, մինչև նոր ժայթքումը

Գեյզերի եռացող ջրից անջատվող սիլիկահողի նստվածքների երփներանգ գեյզերիտի շիթերն ու մակահոսուկները գեղեցկացնում են թե բուն ժայթքումը և թե ողջ շրջապատը Գեյզերիտը տարբեր երանգներ է ունենում վարդագույն, մոխրադեղին, մարգարտափայլ

Առաջ գեյզերների ջուրը զուր տեղը կորչում էր իսկ այժմ այն օգտագործում են շենքերի, ջերմոցների լողավազանների ջեռուցման համար

Գրեթե յուրաքանչյուր գետ սկիզբ է առնում գետնի տակից բխող աղբյուրից Փոքրիկ առվակները միախառնվում են և դառնում գետակներ փոքր գետակները գետեր: Սրանք իրենց մեջ են առնում ստոր գետնյա ջրերն ու տեղումները Գետի ըսկիզբը կոչվում է ակունք Այն տեղը ուր գետը թափվում է օվկիանոսի ծովի լճի կամ մեկ ուրիշ գետի մեջ անվանում են գետաբերան

Գետեր էլ կան որ աղբյուրներից չեն սկսվում: Հրազդան (Զանգու) գետն օրինակ, սկիզբ է առնում Սևանա լճից: Նրա


վրա կառուցված է էներգետիկ-ոռոգիչ համալիր Սևան-Հրազդան կասկադն իր վեց էլեկտրակայաններով: Ալթայի երկրամասում գտնվող Տելեցկոյե լճից է սկիզբ առնում Բիյա գետը որն ակունքում նույնքան մեծ ու հզոր է որքան գետաբերանում: Կան գետեր որոնք գետաբերան չունեն, օրինակ Թուրքմենիայի Մուրգաբ և Թեջեն գետերը: Սրանց ամբողջ ջուրը կոլտնտեսականներն օգտագործում են հողը ոռոգելու համար և այդ գետերը ոչ մի տեղ չեն թափվում

Մեծ ջրառատ գետերի օրինակ Սովետական Միության տարածքով հոսող Վոլգայի աֆրիկական Նեղոսի հյուսիսամերիկյան Միսսիսիպիի ջրերը դեպի ծով



են տանում մեծ քանակությամբ տիղմ ու ավազ Գետաբերաններում և ցածրավայրերում նրանց հոսքը թուլանում է տիղմն ու ավազը նստվածք են տալիս, և առաջանում են տղմոտ կամ ավազոտ կղզիներ: Գետը բաժանվում է բազմաթիվ բազուկների: Այսպես է առաջանում գետի դելտան. Միսսիսիպիի դելտայում գտնվող Նոր Օռլեան քաղաքը ջրաբերուկների հետևանքով մնացել է գոգահովտում որից վեր բարձրանում է Միսսիսիպիի հունը

է Բայց վարարումների ժամանակ երբեմն այդ գետերն էլ են փոխում իրենց հունը առաջացնելով հնահուներ (հին հուներ) Սրանք շուտով ծածկվում են եղեգնով ջրաշուշաններով խաժուրեկով Այդպես են առաջանում ճահիճները:



Գետերը հոսում են ափերի միջով հունով. երբ ձյունը կամ սառցադաշտերը հալչում են գետերը վարարում են, դուրս գալիս ափերից և ողողում գետափնյա հողերը Սովորաբար այդ մասերում լինում են ողողատային մարգագետիններ որտեղ աճող խոտը հիանալի կեր է Հարթավայրային գետերը հոսում են դանդաղ սահուն: Կտրուկ ոլորաններին և հորձանուտներում միայն դրանց հոսքն արագանում

Լեռնային գետերը, ինչպես նաև են հիմնականում մեր հանրապետության գետերը հոսում են սրընթաց, ժայռերի մեջ բացելով խոր հուներ գահավիժում որպես ջրվեժներ Տեղատարափ անձրևների ուժեղ ձնհալքի և սառցադաշտերի հալոցքի ժամանակ դրանք երբեմն միլիոնավոր տոննաներով քար ու տիղմ են տանում մեկ-մեկ էլ իրենց ճանապարհին քշում տանում ամբողջ բնակավայրեր

Անհիշելի ժամանակներից գետերը մարդկանց ջուր են տալիս: Վաղուց նրանք հաղորդակցման ուղիներ են եղել: Գետերի վրա մարդիկ քաղաքներ են կառուցել: Գետերը եղել են պետության սահման պաշտպանել թշնամիների հարձակումներից: Մարդկանց կյանքում գետերը շատ կարևոր դեր են խաղում նաև այժմ Գետի ջուրն անհրաժեշտ է գյուղերին ու քաղաքներին գործարաններին ու ֆաբրիկաներին: Գետերի վրա կառուցում են հիդրոէլեկտրակայաններ, որոնք էժան էլեկտրա էներգիա են տալիս Գետերով նավարկում են բեռնատար և մարդատար նավեր լաս տառաքվում է անտառանյութ Գետերի ջրով ոռոգվում են պապակ հողերը:

Գետերը մեր մեծ հարստությունն են նրանք պետք է պահպանել նավթով տըն տեսական և արդյունաբերական թափոններով աղտոտվելուց: Իսկ որպեսզի գետերը ջրառատ լինեն չպետք է կտրել նրանց ափերին ու ջրբաժաններին աճող ծառերն ու թփերը

Գետաձի

Հին հռոմեացիները Աֆրիկայում Նեղոսի գետաբերանում տեսնելով ծանրամարմին դանդաղաշարժ ինչ-որ կենդանիների նրանց անվանեցին հունարեն «հիպոպոտամ» բառով որ նշանակում է «գետաձի» Բայց գետաձին թերևս միայն փոքրն չացնում է ձիու պես իսկ ընդհանուր առմամբ նրան ամենևին նման չէ:



Գետաձիու մաշկը փայլուն է, գրեթե մերկ և արագ չորանում է: Աչքերը թըմբիկների վրա են և տեղափորված են գլխի վերին մասում, ինչպես գորտինը կամ կոկորդիլոսինը: Թմբիկավոր են նաև ռունգերը: Դա շատ հարմար է, քանի որ կարելի է, սուզանավի ջրադիտակների (պերիսկոպների) նման, ջրից դուրս թողնել միայն աչքերի ու ռունգերի «կղզյակները» Գետաձիերի փոքրիկ ականջները ևս տեղավորված են «գագաթին»: Գլուխը մեծ է դունչը լայն, աչքերը՝ փոքր: Մատները միացած են փոքր լողաթաղանթներով

Շոգ օրերին գետաձիերը ջրից դուրս չեն գալիս: Մի քանի տասնյակ կազմող հոտերով կամ փոքր ընտանիքներով ձողփում են, փնջացնում, ֆսֆսում, և հաճախ գետով մեկ տարածվում է նրանց մռնչյունը: Գետաձիերին մոտենալը վտանգավոր է, նրանք կարող են հարձակվել ոչ միայն մարդկանց, այլև, անգամ, նավակների վրա հզոր ծնոտներով ջարդոտելով ու տաշեղի վերածելով դրանք: Գետաձիու երախն ահռելի է, ասես ճամպրուկ լինի, իսկ ժանիքները 70 սմ երկարություն ունեն: Հատկապես մեծ են ներքին ծնոտի ժանիքները, որով գետաձին, էքսկավատորի շերտի նման, ջրիմուռներ է հավաքում ջրի հատակից:

Երբեմն, ավելի հաճախ գիշերը, նրանք ափ են դուրս գալիս անուշ անելու հյութալի բույսերը: Ժամանակ առ ժամանակ էլ լինում են գետամերձ դաշտերում իրենց շատ սիրած եգիպտացորենն ուտելու Փղերուն հողին մնում են նրանց չորս հաստ ու կարճ ոտքերի հետքերը և գեր որովայնի թողած ակոսը դրանց մեջտեղում Հասուն գետաձին 3 տոննայից ավելի է կշռում, իսկ ձագերը ծնվում են 35—40 կգ քաշով Երկու-երեք շաբաթից հետո արդեն փոքրիկը կարող է շորորալով քայլել մոր ետևից, բայց միևնույն է, գետաձիու ընտանիքն ավելի շատ ջրում է մնում: Փոքրիկ գետաձիերը հաճախ են «բազմում» իրենց ծնողների մեջքին ինչպես թաց ժայռերի. Իսկ երբ մայրն սկսում է լողալ, փոքրիկը կանգնում է, ինչպես նավապետն իր կամրջակին

Մարդիկ գետաձիեր էին որսում նրանց մսի, հաստ կաշվի, արժեքավոր ժանիքների համար

Հյուսիսային և Հարավային Աֆրիկայում գրեթե բոլոր գետաձիերը ոչնչացվել են. Այժմ նրանց կարելի է հանդիպել միայն Արևելյան ու Կենտրոնական Աֆրիկայում, այն էլ, սովորաբար, արգելանոցներում:

Գերմանական Դեմոկրատական Հանրապետություն (ԳԴՀ)




Ավելի քան երեք տասնամյակ է անցել այն պահից, երբ գերմանական հողում ըստեղծվեց խաղաղասեր մի պետություն, բանվորների և գյուղացիների պետություն՝ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը Այդ ժամանակամիջոցում ԳԴՀ-ն, Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների անշահախնդիր օգնությամբ ու աջակցությամբ, փառապիր մի ուղի է անցել: Այսօր այն բարձր զարգացած սոցիալիստական երկիր է, աշխարհի արդյունաբերական առաջատար տերություններից մեկը:

Երկաթուղային մայրուղով Մոսկվայից մինչև ԳԴՀ-ի մայրաքաղաք Բեռլին, կարելի է հասնել 30 ժամում Բեռլինում սովետական մարդիկ առաջին հերթին ստ

վորաբար, այցելում են Տրեպտովի զբոսայգում գտնվող սովետական զինվորի հուշարձանը Այն կանգնեցված է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ի պատիվ ֆաշիստական Գերմանիային հաղթանակած սովետական բանակի

Պատերազմից հետո Բեռլինը գրեթե ամբողջությամբ վերակառուցվել է Այնտեղ, ուր ավերակներ էին, զցվել են Մարքսի և Լենինի ծառուղիները: Վերակառուցվել է կենտրոնական հրապարակը, ուր վեր են խոյացել բազմահարկ շենքեր ու 365 մ բարձրությամբ հեռուստատեսային աշտարակը:

Բեռլինից հյուսիս տարածվում է ընդարձակ մի դաշտավայր աշորայի, վարսակի, կարտոֆիլի դաշտերով, ուր աշխատում են մեքենաները: Խոտապետ մարգագետիններում արածում են կովերի նախիրներ Բայթիկ ծովին մոտ դաշտավայրը վեր է ածվում ավազոտ բլրաշարերի Նրա ավերին տեղավորված են ԳԴՀ-ի նավահանգիստներն ու նավաշինարանները



Բեռլինը
երեկոյան


Բեռլինից հարավ գերակշռում են ոչ շատ բարձր լեռները, որոնք հատկապես գեղեցիկ են էլբա գետի հովտում

Հարթ գագաթներով քարանձավներով և գետնանցքերով զարմանահրաշ ժայռերըն այստեղ են ձգում զբոսաշրջիկներին

Երկրի հարավային մասում տեղավորված է քաղաքների գործարանների ու ֆաբրիկաների մեծ մասը Ամենախոշոր քաղաքներն են Լայպցիգն ու Դրեզդենը Լայպցիգը վաղուց ի վեր հռչակված է իր ամենամյա գարնանային ու աշնանային միջազգային տոնավաճառներով Հայտնի է նաև որպես տպագրության կենտրոն Այստեղ հաճախ է եղել Վ Ի Լենինը: 1900 թ քաղաքի փոքրիկ տպարաններից մեկում տպագրվել է լենինյան «Իսկրա» թերթի առաջին համարը Լայպցիգի կայարանը ամենախոշորն է ԳՂՀ-ում կարող է միաժամանակ ընդունել 26 գնացք Դրեզդենում շատ գործարաններ և գիտական ինստիտուտներ կան, այստեղ է գտնվում ողջ աշխարհին հայտնի պատկերասրահը որը պատերազմի ժամանակ փրկել են սովետական ռազմիկները:

ԳՂՀ-ի գրեթե յուրաքանչյուր քաղաք որևէ բանով հայտնի է՝ Օրինակ Մայսերը հռչակված է իր 300 ամյա ճենապակու գործարանով Ենան «Կարլ Ցայս» գործարանով, որը թողարկում է հեռադիտակներ աստղադիտակներ մանրադիտակներ և պլանետարիումի (աստղացուցարանի) հատուկ սարքեր: Վայմարում են ապրել և աշխատել մեծանուն գրողներ Գյոթեն ու Շիլլերը Շվեդտի նավթաքիմիական հսկա կոմբինատը «Դրուօբա» նավթամուղի վերջնակետն է նավթամուղ որն սկիզբ է առնում Սովետական Թաթարիայի ստոր գետնյա նավթային պահեստարաններից

ԳՂՀ ին և սովետական պետությանը շաղկապում է ամուր բարեկամությունը դրա համար էլ «ֆրոյնդշաֆտ» (բարեկամություն) բառը շատ տարածված է ԳՂՀ-ում: Բարեկամներ են նաև երկու երկրների




ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ


Տարածությունը 108 200 քառ.կմ
Բնակչությունը 6 739 000 մարդ

- Գրեթե ամբողջությամբ համարվում է
- Նավթամուղ
- Ջեռուս Էլեկտրակայաններ
- Ատոմային էլեկտրակայաններ

Օղակային նավահանգիստներ



- Սա մտնում էր զիս
- Ծառա՝ երենաշխատություն
- Հեղուկառաճիչներ և ապրանքաբերություն
- Ճարտիս մեխանիկա օպտիկա
- Տրանսպորտային մեքենաշինություն
- Ապտոմոբիլային արդյունաբերություն
- Գյուղատնտեսական մեքենաշինություն
- Նավադրոնություն
- Քիմիական արդյունաբերություն
- Նավթամերաճապաս արդյունաբերություն
- Ճենապակու-հախճապակու արդյունաբերություն
- Տեքստիլ արդյունաբերություն
- Պոլիգրաֆ արդյունաբերություն
- Պեճեմունեն արդյունաբերություն
- Հագահատիկային քույներ Խարեկալ, ցորեն, վարսակ, գա
- Պողատո: այգիներ
- Անասնապահություն
- Խոզաբ ծուծ ն
- Ճարտարապետական հուշայ ձաններ



դպրոցականները Նրանք նամակագրական կապ են պահպանում, իսկ «բարեկամության գնացքներով» հյուր գնում միմյանց:

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետություն (ԳՖՀ)

Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը կազմավորվել է 1949 թ սեպտեմբերին

Արևմտյան Եվրոպայում կար բուրժուական վավաճատիրական մի պետություն Գերմանիան: Նրա կառավարիչները վարում էին ագրեսիվ, հարձակողական քաղաքականություն Նրանք եղան առաջին համաշխարհային պատերազմի գլխավոր սանձազերծողներից մեկը, որի ժամանակ հենց իրենք էլ պարտություն կրեցին

Պատերազմը տանուլ տալուց հետո նրանք սկսեցին պատրաստվել նոր պատերազմների. Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը և երկրի բանվոր դասակարգը փորձեցին թույլ չտալ այդ Այնժամ գերմանական կապիտալիստները բանկատերերը, կալվածատերերն ու գեներալները ֆաշիստներին օժանդակեցին զավթելու իշխանությունը Գերմանիայում և ճնշելու բանվորների, կոմունիստական

և դեմոկրատական զարգացման ուղիով Պարտություն կրած Գերմանիայում գերագույն իշխանությունն իրականացնում էին չորս դաշնակից տերությունների ՍՍՀՄ-ի ԱՄՆ-ի Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունները, որոնք այդ նպատակով երկրում հաստատեցին չորս օկուպացիոն գոտի

Սովետական Միությունն ազնվորեն կատարում էր ընդունված որոշումները իսկ արևմտյան երկրները խախտեցին դրանք Նրանք իշխանության գլուխ թողեցին նախկին կալվածատերերին ու կապիտալիստներին օգնեցին նրանց վերականգնելու ռազմական արդյունաբերությունը ապա պառակտեցին Գերմանիան հայտարարելով ԳՖՀ-ի ստեղծման մասին Այսպես ծնվեց այդ պետությունը:


ԳՖՀ ն բարձր զարգացած կապիտալիստական երկիր է. Արդյունաբերության հիմնական ճյուղերն են ածխի մետալուրգիական մեքենաշինական, քիմիական, ավտոմոբիլաշինական, էլեկտրատեխնիկական: ԳՖՀ ի ընդերքը հարուստ է քարածխով, կան գունավոր մետաղների հանքաքարեր, քիչ քանակությամբ նավթ. ԳՖՀ-ի արդյունաբերական գլխավոր շրջանը Ռուրի մարզն է: Այստեղ արդյունահանում են քարածուխ ձուլում մետաղ պատրաստում արդյունաբերական զանազան ապրանքներ: Ռուրի միջով է անցնում Հռենոս գետը: ԳՖՀ-ի շատ ուրիշ քաղաքներում ևս կան խոշոր գործարաններ ու ֆաբրիկաներ

ԳՖՀ ի մայրաքաղաք Բոննը

կուսակցության ելույթները: 1939 թ սեպտեմբերին Գերմանիայի ֆաշիստները սանձազերծեցին երկրորդ համաշխարհային պատերազմը: 1941 թ հունիսի 22-ին նրանք ուխտադրծորեն հարձակվեցին Սովետական Միության վրա

Ակավեց Հայրենական մեծ պատերազմը որն ավարտվեց ֆաշիստական բանակի լիակատար ջախջախումով, Գերմանիայում ֆաշիստական վարչակարգի տապալումով 1945 թ ամռանը Պոտսդամ քաղաքում (Բեռլինի մոտ) հանդիպեցին ՍՍՀՄ-ի ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների ղեկավարները: Որոշվեց Գերմանիայի նկատմամբ համատեղ վարել այնպիսի քաղաքականություն, որ նա այլևս երբեք չկարողանա նոր պատերազմ սկսել Դրա համար անհրաժեշտ էր ոչնչացնել ֆաշիզմը գերմանական ժողովրդին օգնել ընթանալու խաղաղ










ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Տարածությունը 248 000 քառ. կմ

Բնակչությունը 59 700 000 մարդ



ԳՖՀ-ի տնտեսության մեջ կարևոր դեր ունի գյուղատնտեսությունը Մշակում են հացահատիկ աշորա գարի, կարտոֆիլ շաքարի ճակնդեղ, բանջարեղեն. Զարգացած է անասնապահությունը. Գյուղացիներն անձնական օգտագործման համար քիչ հող ունեն, և շատերը քաղաք են գնում աշխատանք գտնելու. Բայց դա այնքան էլ հեշտ չէ ԳՖՀ-ի բանվոր դասակարգը ապրում է ծանր պայմաններում, տարեց-տարի աճում են գործազրկությունը, հար

կերը, բարձրանում գները, բնակարանավարձը: Բանվորները պայքարում են իրենց իրավունքների, աշխատանքային ու կենսական պայմանների բարելավման համար կազմակերպելով գործադուլներ, ցույցեր

ԳՖՀ-ում հիշարժան շատ վայրեր կան կապված ականավոր մարդկանց կյանքի ու գործունեության հետ Մոզել գետի (Հռենոսի վտակը) ափին է տեղավորված Տրիբ հնագույն քաղաքը ուր 1818 թ մայիսի

5-ին ծնվել է համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդ Կարլ Մարքսը: Բունն քաղաքը հանճարեղ կոմպոզիտոր *Բեթհովենի* ծննդավայրն է, նրա հնագույն համալսարանում սովորել է Կարլ Մարքսը Դյուսելդորֆը գերմանացի մեծ բանաստեղծ Հայնեի ծննդավայրն է Մայնի Ֆրանկֆուրտ հնագույն քաղաքում է իր մանկությունն ու պատանեկությունն անցկացրել մեծ բանաստեղծ և մտածող Գյոթեն:

Գիշատիչ բույսեր

Ամեննախն էլ զարմանալի չէ, որ միջատները տերև են ուտում. Բայց պարզվում է, որ տերևն ինքն էլ կարող է ճանկել և ոչնչացնել մծեղին Եթե չեք հավատում, եկեք գնանք մոտակա ճահիճը:

Ահա մամուռների մեջ նշմարվում է փոքր, կարմրավուն մի բույս Դա ցողիկն է որսորդ բույսը

Ցողիկի տերևները մեծ չեն, բայց անսովոր են Եթե խոշորացույցով նայեք, կտեսնեք, որ ամեն մի տերևիկ ամբողջովին պատած է կարմրավուն մազմզուկներով: Արանց ծայրին մաքուր ցողի նման փայլ փլուզում է փոքրիկ, թարմ մի կաթիլ

Ահա մոծակը նստեց ցողիկի տերևին, իսկ այնտեղ ոչ թե զովասուն ցող է, այլ թանձր ու կաշույն լորձ, որն ամուր պահում է մոծակին: Տերևի մազմզուկները սկսում են թեքվել դեպի մոծակը և հավում նրան արտադրելով այրող հյութ՝ Նրա ազդեցությամբ մեկ-երկու օրից մոծակը լուծվում է և ներծծվում տերևի մեջ Հիմա արդեն տերևիկը բոլորովին չոր է Քամին նրա վրայից քշում տանում է մոծակի հետքերը

Շուտով ցողիկի տերևին նորից է փայլում «ցողը»՝ նոր որս է սկսվում ձահձահողն աղքատ է սննդանյութերով, և ցողիկն էլ ահա հարմարվել է այդ կերպ «լրացուցիչ սնունդ» հայթայթելուն:

Արևադարձային տաք երկրներում աճում է մեկ այլ հետաքրքիր գիշատիչ բույս, ցնցղենին (սափորատունկը) Նրա տերևների ծայրին կան կարմիր կամ դեղին սափորիկներ, որոնք հեռվից էլ են երևում: Եվ ինչ էլ անուշ են բուրում: Ամենաքաղցր նեկտար քաղելու հույսով դեպի սափորիկն է թռչում մծեղը Բայց արի ու տես որ սափորիկի պատերը շատ ողորկ են, և հենց որ մծեղը նստում է նրա եզրին, իսկույն սահում է դեպի հատակը, ուր միջատին



Գիշատիչ բույսեր 1 սառացենիա, 2 դառլինգտոնիա, 3 ցնցղենի, 4 ցողիկ

մարտոզ հեղուկն է Երկրագնդի վրա մոտավորապես հինգ հարյուր զանազան գիշատիչ բույսեր կան Գիտնականները նրանց անվանում են միջատակեր բույսեր:

Կարդացեք հետևյալ գիրքը.

Александров В Д Растения хищники 1, Дет. лит» 1972.

Գիսավոր

Երկնքում երբեմն հայտնվում են արտասովոր «պոչավոր» աստղեր գիսավորներ որոնք արագ շարժվում են աստղալից երկնքում Դա շատ գեղեցիկ տեսարան է

Որքան գիսավորն ավելի է մոտենում Արեգակին այնքան ավելի պայծառ է փայլում նրա գլուխը այնքան ավելի է երկարում նրա միգամած պոչը

Գիսավորը կարող է ունենալ մեկ կամ մի քանի պոչ Դրանք սովորաբար ուղղված են Արեգակին հակառակ

Հնում գիսավորներն իրենց անսպասելի հայտնություններով ու խորհրդավոր կերպարանափոխություններով սնոտի վախ էին առաջ բերում Մարդկանց նրանք պատկերանում էին կտրված գլուխների արյունոտ դաշույնների տեսքով: Այն ժամանակներում երկնքում վառ գիսավորի

հայտնվելը վատ նախանշան էր համարվում

Գիտությունն ապացուցեց որ այդ բոլոր երկյուղներն անհիմն են Գիսավորներն Արեգակնային համակարգին պատկանող երկնային մարմիններ են: Խիստ ձգված ուղեծրերով նրանք պտտվում են Արեգակի շուրջը:

Գիսավորների մեծ մասը Արեգակի շուրջը մեկ լրիվ պտույտ է գործում հսկայական ժամանակահատվածում՝ հազարավոր ու միլիոնավոր տարիների ընթացքում Կան նաև այնպիսի գիսավորներ որոնց համար այդ ժամանակը չափվում է ընդամենը տասնյակ տարիներով կամ, նույնիսկ մի քանի տարով

Գիսավորի գլխավոր մասը միջուկն է Այն սովորական փխրուն սառույցի մեծաբեկոր է որին խառնված են «սառած» գազեր մեթան, ամոնիակ և պինդ ածխաթթու այն նույն «չոր սառույցը», որն օգտագործում են պաղպաղակ վաճառողները

Գիսավորի միջուկում պարունակվում են նաև բազմաթիվ մանր, պինդ փոշեհատիկներ և քարանյութեր:

Արեգակին մոտ գտնվող գիսավորները չեն երևում:

Արեգակին մոտենալիս գիսավորի միջուկը տաքանում է նրանից սկսում են անջատվել գազեր և փոշի, որոնք էլ առաջացնում են գիսավորի գլուխն ու պոչը:

Երկրի համեմատությամբ, գիսավորների միջուկները շատ փոքր են: Դրա փոխարեն գիսավորի գլուխը տրամագծով երբեմն գերազանցում է Արեգակի չափերը, իսկ որոշ գիսավորների պոչեր ձգվում են հարյուր միլիոնավոր կիլոմետրեր: Որոշ գիսավորների թե գլուխը և թե պոչը չափազանց նոսր են դրանց խտությունը միլիարդավոր անգամ փոքր է մեր շնչած օդի խտությունից: Դրա համար էլ գիտնականները վաղուց արդեն գիսավորներն անվանում են «տեսանելի ոչինչ»:

Գիսավորի գլուխն ու պոչը կատարելապես թափանցիկ են Երբ գիսավորը հայտնվում է Երկրի և որևէ աստղի միջև, ապա աստղի լույսն առանց թուլանալու հասնում է մեզ

Գիսավորները Երկրի համար միանգամայն անվտանգ են: Երկիրը շատ անգամ է բախվել գիսավորների պոչերին և հեշտությամբ անցել դրանց միջով

Երկրի և գիսավորի միջուկի բախվելու դեպքում (ինչը կարող է տեղի ունենալ չափազանց հազվադեպ, ոչ հաճախ, քան



մեկ անգամ միլիոնավոր տարիների ընթացքում) կարող է կործանվել միայն գիսավորը

Ամեն տարի գիտնականները մի քանի նոր գիսավոր են հայտնաբերում Դրանց մեծ մասը սլանում անցնում է Երկրից շատ հեռու և երևում միայն *աստղադիտակով*: Անգեն աչքով տեսանելի, պայծառ, մեծ գիսավորները երկնքում հայտնվում են միջին հաշվով, տաս տարին մեկ

Գիրք

Ահա բացում եք գիրքը աչքերը սահեցնում տողերի ուղիղ շարանով: Անցնում է մի քանի ակնթարթ և դուք արդեն մարտի եք գնում Պավել Կորչագինի հետ կամ էլ երեք հրացանակիրների հետ գլխովին նետվում հրապուրիչ արկածների մեջ: Գիրքը ձեզ առաջնորդում է թե դեպի տիեզերքի անհունը, թե ծովի անդունդը և թե ատոմի խորքը

Գիրքն արդեն մի քանի հազար տարեկան է և այդ ընթացքում տարբեր կերպարանք է հագել: Բաբելոնացիները ասորեստանցիները և ուրիշ հին ժողովուրդներ գրքերը պատրաստում էին կավից սուր ձողիկով հատուկ նշաններ դրոշմելով փափուկ կավե սալիկների վրա: Ապա այդ սալիկները չորացնում կամ թրծում էին: Սալիկներից գրքեր էին կազմում, իսկ հետո էլ, նույնիսկ, ստեղծում ամբողջ գրադարաններ: Աշուրբանիպալ թագավորին (մեր թվականությունից առաջ 7-րդ դար) պատկանող այդպիսի մի գրադարան է հայտնաբերվել Ասորեստանի հնագույն պետության մայրաքաղաքի տեղում հարյուր տարի առաջ պեղումներ կատարելիս


Իսկ Չինաստանում առաջին գրքերը գրում էին հնդկեղեգից (բամբուկից) պատրաստված շերտիկներին և դրանք շարում ամուր թելի վրա Ավելի ուշ չինացիներն իրենց գրքերը գրում էին մետաքսի, իսկ մեր թվականության 2-րդ դարից սկսած թղթի վրա վրձնով ու սևաներկով (տուշով)


Հին Եգիպտոսում գրքերի բովանդակությունը փորագրում էին քարե սալիկների վրա: Այնուհետև հայտնագործեցին պապիրուսը: Եղեգի մամլած շերտիկներն իրար սոսնձելով պատրաստում էին մի քանի տասնյակ մետր երկարությամբ ժա-

պավեններ Այդ ժապավենները գլանաձև փաթաթում էին և այդպես պահում: Եգիպտական պապիրուսը, իբրև գրելու ամենալավ նյութ օգտագործում էին նաև Հունաստանում և Հռոմում գրեթե 2 հզ տարի Հին աշխարհում ամենամեծ գրադարանը գտնվում էր Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում: Այն համարել են «աշխարհի ութերորդ հրաշալիքը»: Ալեքսանդրիայում ուսանելու տարիներին այդ գրադարանից օգտվել են Մեսրոպ Մաշտոցի աշակերտները այդ թվում Մովսես Խորենացին:

Մեր թվականությունից առաջ 2-րդ դարում Պերգամոնի թագավորության վարպետները կենդանիների կաշվից պատրաստեցին գրելու նոր նյութ պերգամենտը, որ հայերեն կոչվում է *մագաղաթ* Պապիրուսն ու մագաղաթը շատ թանկ էին, դրա համար էլ Հին Հունաստանում և Հռոմում սևագրություններն ու նամակները գրում էին մոմապատ տախտակի վրա սրածայր փայտիկով

17-րդ դարի վերջի ռուսերեն այբ բենարանի մի էջ





Պատկերա
գարդ էջ
989 թ հա
յերեն ձեռա
գրից

Միջնադարում գրքերը ձեռագիր էին գրում էին մագաղաթե թերթերի վրա Որպեսզի թերթերը չծռմուկվեն մագաղաթները կարում էին միմյանց և ամփոփում կաշեպատ կամ լաթապատ փայտե կազմով: Ստացվում էր մատյան: Այդպես առաջացավ գրքի այն ձևը, որը մեզ համար այժմ սովորական է: 10—11-րդ դարերից սկսած եվրոպայում գրելու հիմնական նյութը դարձավ թուղթը որի պատրաստման եղանակը հայտնաբերվել էր Չինաստանում, դեռևս 1—2-րդ դարերում Հայաստանում թուղթը որպես գրելու նյութ սկսել են գործածել 8—9-րդ դարերից:



Հովհ. Թու
մանյան
«Հեքիաթ
ներ»,
1978թ

Մանրակարներով զարդարված ձեռագիր գրքերը շատ թանկ էին Վերջապես, 15-րդ դարում կատարվեց տպագրության գյուտը

Հայերեն առաջին գրքերը եղել են ձեռագիր մատյաններ, որոնք ստեղծվել են 5-րդ դարում, հայ գրերի գյուտից հետո Մեզ հասած հնագույն ձեռագիր մատյանը 7-րդ դարում ստեղծված «Վեհամոր ավետարանն» է: Նույնիսկ տպագրության գյուտից հետո էլ հայերեն ձեռագիր գրքերի ստեղծումը շարունակվեց մինչև 18-րդ դարի վերջը Ձեռագիր գիրքը կամ մատյանը գրվում էր մեկ օրինակ, մագաղաթի թերթերի վրա, ապա բազմացվում ընդօրինակմամբ: Ընդօրինակողը կոչվում էր գրիչ: Հայաստանում (Անի, Վաղարշապատ, Հաղպատ, Սանահին, Տաթև, Գլաձոր Վան Աղթամար, Կարին, Բաղեշ), Կիլիկիայում և հայ գաղթավայրերում (Լվով, Կաֆա, Վենետիկ և այլն) կային գրչության կենտրոններ՝ դպրոցներ, ուր ստեղծվում և ընդօրինակվում էին հայերեն ձեռագիր գրքեր: Երբ գրիչն ավարտում էր երկի ընդօրինակումը գրված էջերը հանձնրվում էին զարդանկարչին, որը կոչվում էր ծաղկող Նա մագաղաթների էջերի լուսանցքներում նկարում էր ձեռագրի բովանդակության այս կամ այն դրվագն արտահայտող պատկերներ, հաճախ էլ տարբեր բնույթի այլ նկարներ, խորաններ, զարդեր: 13—14-րդ դարերի ձեռագիր մատյանների էջերում են ստեղծվել հայկական մանրանկարչության գլուխգործոցները՝ Գըրված ու ծաղկեցված մագաղաթի թերթերն այնուհետև անցնում էին կազմարարի ձեռքը, որը դրանք կարում էր, կազմում, և այդպես ձեռագիրը գրքի կերպարանք էր ստանում Տարբեր դարերից մեզ է հասել շուրջ 25 հզ հայերեն ձեռագիր գիրք Տասնյակ հազարներ էլ կորստյան և ոչընչացման են մատնվել օտար նվաճողների ձեռքով Օրինակ 1170 թ, սելջուկյան արշավանքների ժամանակ, Սյունիքի Բաղաբերդ ամրոցում ավարի է մատնվել շուրջ 10000 ձեռագիր գիրք Հայերեն առաջին տպագիր գիրքը, որ կոչվում է «Ուրբաթագիրք», լույս է տեսել Վենետիկում (Իտալիա), 1512 թ, Հակոբ Մեղապարտի ջանքերով: Ներկայումս աշխարհի տարբեր վայրերում լույս են տեսնում հարյուրավոր հայերեն գրքեր. Հայկական ՍՍՀ-ում տարեկան տպագրվում է մոտ 1000 անուն գիրք: Կատարելագործվել է նաև գրքերի ձևավորման, նկարազարդման արվեստը Հայկական ՍՍՀ-ում ձեռագիր ու

հնատիպ (այսինքն մինչև 1800 թ լույս տեսած) հայերեն գրքերի ամենամեծ գրապահոցը Մեսրոպ Մաշտոցի անվան *Մատենադարանն է*, ուր պահվում են նաև այլ լեզուներով ստեղծված բազմաթիվ ձեռագրեր

Աշխարհի ամենամեծ գրադարաններից մեկում Մոսկվայի Վ Ի Լենինի անվան ՍՍՀՄ պետական գրադարանում, պահպանվում են միլիոնավոր գրքեր՝ Ամենաարժեքավորները հավաքված են հազվագյուտ գրքերի բաժնում: Առանձնահատուկ խնամքով են պահպանվում առաջին տպագիր տպագրության «խանձարուրային շրջանի» գրքերը՝ ինկունաբուկաները (լատիներեն «ինկունաբուկա» բառից, որ նշանակում է «խանձարուր»)՝ Դրանք մինչև 1501 թ հունվարի 1-ը տպագրված գրքերն են: Այս գրադարանում պահպանվող որոշ հազվագյուտ գրքեր ավելի քան մեկուկես մետր բարձրությամբ հսկայական հատորներ են Դրանք մի մարդը հազիվ թե բարձրացնի: Կան փոքր գրքեր, որոնցից մի քանիսը լուցկու տուփից մեծ չեն, կան նաև այնպիսիները, որոնք փոստային դրոշմանիշի չափ են

Հայկական ՍՍՀ Ալ Մյասնիկյանի անվան պետական գրադարանը հայ գրքի ամենախոշոր պահոցն է աշխարհում: Այնտեղ նույնպես պահվում են միլիոնավոր գրքեր ու պարբերականներ Հատուկ հոգատարությամբ են պահպանվում 1512—1800 թվականներին լույս տեսած հայերեն գրքերը, որոնք գտնվում են անձեռնմխելի և հնատիպ գրքերի բաժնում

Լենինի անվան, ինչպես և Ալ Մյասնիկյանի անվան գրադարաններում պահվում են նաև մետաքսի, մետաղե բարակ թիթեղների, կաշվի վրա տպագրված գրքեր:

Բայց բոլոր գրքերից մարդկության համար առանձնապես թանկ են գիրք-մարտիկները Դրանց հեղինակներն իրենց կյանքով են հատուցել այդ համարձակ ու ճշմարտացի գրքերը գրելու համար, զըրքեր, որոնք պայքարի են կոչում անարդարության, ճնշողների դեմ, մարդկանց ճշմարտությունը պատմում Երկրի վրա կյանքի ծագման, Երկրի և այլ մոլորակների կառուցվածքի մասին Դրանցից շատ քչերն են հասել մինչև մեր օրերը, որովհետև *ինկվիզիցիան* դաժան դատաստան էր տեսնում ոչ միայն նրանց հեղինակների, այլև հենց գրքերի հետ: Այդպես խարույկի վրա այրեցին նշանավոր գիտնական Ջորդանո Բրունոյին և նրա ըստեղծագործությունները

ՍՍՀՄ-ում շատ են սիրում և գնահատում գիրքը ՍՍՀՄ-ում ամեն տարի ավելի շատ գիրք է հրատարակվում, քան աշխարհի որևէ այլ երկրում:

Բարեկամացեք գրքի հետ, նա ձեր առջև կբացի գիտելիքների բոլոր գանձերը Մաքսիմ Գորկու խոսքերով ասած գիրքը «... մարդկության ստեղծած բոլոր հրաշքերից ամենամեծն է...»:

«Օ, գրքերի աշխարհը— տիեզերք է անեզր», — այսպես է արտահայտվել գրքերի մասին հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցը:

«Գիրքը»

— տես «Թումանյան Հովհաննես Թադև վոսի» գրույցում

Գլինկա Միխայիլ Իվանովիչ

1804—
1857

Կյանքում ձեզ բազմաթիվ հետաքրքիր հանդիպումներ են սպասում գիտության աշխարհի և արվեստի գանձերի հետ: Դուք բախտ կունենաք նաև ունկնդրելու ռուս մեծ կոմպոզիտոր Մ Ի Գլինկայի հոյակապ երաժշտությունը Հնարավոր է, որ նրա երաժշտությունն առաջին անգամ լըսեք ձմեռային ձեր սիրելի տունին, ուր հավաքված կլինեն գեղեցիկ հագնված երեխաներ Լսում եք, նվագախմբի երաժիշտները լարում են գործիքները: Լռում են խոսք ու ծիծաղ: Եվ ահա տոնական «Մանկական պոլկայի» հնչյունների ներքո բոլորը շուրջպար են բռնում տոնածառի շուրջը:

Կամ, գուցե, ձեզ հուզի «Արտույտի» վճիտ նրբին դայլայլը, որին կոմպոզիտորն, ասես, ականջ է դրել արևից ջերմացած դաշտում: Կամ էլ կհափշտակվեք սրընթաց «Ճանապարհային երգով»

Մանկության տարիներին Գլինկան տարված էր ճանապարհորդությունների մասին պատմող գրքերով Կոմպոզիտոր դառնալուց հետո ինքն էլ շատ էր ճամփորդում: Ահա թե ինչու նրա երաժշտության մեջ լսվում են ոչ միայն ռուսական, այլև հայկական, ֆիննական, վրացական, իտալական, լեհական մեղեդիներ (արևելյան մեղեդիներն, առհասարակ, Գլինկային հա-



ղորդում էր նկարիչ Հ Այվագովսկին) նրա «Արագոնյան խոտա» և «Գիշերը Մադրիդում» գործերը վառ ու հրապուրիչ երաժշտական պատկերների միջոցով պատմում են Իսպանիայի մասին

Գլինկան սիրում էր երաժշտությունը հորինել ամենանրբագագ «գործիքի» մարդկային ձայնի համար Նա շատ երգեր ու ռոմանսներ է գրել Պուշկինի բանաստեղծությունների տեքստերով

Ռուսական առաջին օպերան «Իվան Սուսանին»-ը Գլինկան է ստեղծել: Այս օպերան պատմում է հայրենիքի համար իր կյանքը զոհաբերած ռուս գեղջուկի սխրանքի մասին:

Առաջին անգամ թատերաբեմ ելավ հասարակ գյուղացին օպերայում հնչեցին սրտառուչ իրապես ժողովրդական մեղեդիներ: Առհասարակ Գլինկայի ողջ երաժշտությունն առլեցուն է ռուսական ժողովրդական երգերի ու պարերի հյութեղությամբ ու գունագեղությամբ Այդ երգերի ու պարերի ճոխ գեղեցիկ և անզուսա շահնդով լի երաժշտությունն ունկնդրի հոգուն հասցնելու համար Գլինկան օգտագործում էր ամբողջ նվագախմբի հնչողությունը նրբին ջութակներից ու ֆլեյտաներից մինչև փողային ու հարվածային ամենահզոր նվագարանները «Իվան Սուսանին» օպերայի «Փռաբանվիր» խմբերգի երաժշտությունը հանդիսավոր արարողություններին հաճախ է հնչում

Միխայիլ Իվանովիչը հեքիաթներ շատ էր սիրում և «հեքիաթային» երաժշտություն էլ է ստեղծել: Եթե երբևէ լսեք նրա «Ռուսլան և Լյուդմիլա» օպերան երբեք չեք մոռանա այդ գերող օպերայի կախար

Մ Ի Գլինկան «Ռուսլան և Լյուդմիլա» օպերան հորինելիս նկարիչ Ի Ե Ռեպինի կտավից



դական հերոսներին պատկերող երաժշտությունը:

Մ Ի Գլինկան իր երաժշտության մեջ կարողացել է արտահայտել ռուս ժողովրդի լուսավոր, կենսուրախ բնավորությունը: Լսեք նրա «Կամարինյանը» և կհամոզվեք, որ այդպես է:

Գլինկայից է սկսվել ռուսական երաժշտության ծաղկումը: Նա ռուս կոմպոզիտորներից առաջինն էր, որ հայտնի դարձավ աշխարհին

Գլխուղեղ

Դուք նայում եք ձեր շուրջն ու տեսնում առարկաներ մարդիկ Դուք կարդում եք, գրում: Ենթարկվելով սեփական ցանկությանը բացում եք գրապահարանն ու գիրք հանում կամ գնդակն այնպես եք նետում, որ հասնի ուղիղ նպատակակետին Եվ այդ բոլորն անում եք այնպես, ինչպես մտածել էիք: Առանց դժվարության մտաբերում եք, թե որտեղ եք եղել երեկ կամ էլ պատկերացնում եք այն կենդանաբանական այգին, ուր այցելել էիք անցյալ ամռանը Դուք վարժություն կամ խնդիր եք վճռում Այս ամենը ձեզ համար սովորական և դյուրին գործ է


Բայց երբևէ մտածել եք, արդյոք, թե ինչպես է, որ մենք ընկալում ենք շըրջապատը Ինչպես է, որ հիշում ենք, մտածում: Ինչպես ենք կարողանում ղեկավարել մեր շարժումները: Մարմնի որ օրգանն է կատարում այդ ամբողջ աշխատանքը:

Այդ ամենը կառավարում է մեր գլխուղեղը մարմնի կարևորագույն օրգանը

Կենդանիների գլխուղեղը փոքր է Ձկներինը երբեմն ցորենահատիկի չափ է լինում Կատուների, շների, կապիկների գլխուղեղը շատ ավելի մեծ է Մարդու գլխուղեղը մի մեծ և բարդ «ապարատ» է, որը մեզ հնարավորություն է ընձեռում ընկալելու շրջապատող աշխարհը, շարժումներ կատարելու, հիշողության մեջ պահելու այն ամենը, ինչ մենք տեսել և արել ենք: Այն կառավարում է մարդու խոսքը, մարդու միտքը:

Մարդու գլխուղեղը կազմված է հսկայաթիվ նյարդային բջիջներից: Գլխուղեղն ամփոփող գորշ նյութի շերտում միայն կա 14 միլիարդ այդպիսի բջիջ

Նյարդային ամեն մի բջիջ ընկալում է մարդուն հասնող ազդանշանները: Բջիջ



մարդու
գլխուղեղ


թռչնի գլխուղեղ



սողունի գլխուղեղ



ծկան գլխուղեղ



ների մի մասն ընկալում է տեսողական ազդանշանները, մյուսները ձայնը, երրորդները՝ հպումները մաշկին: Կան հատուկ բջիջներ, որոնք «իրամաններ են տալիս» ձեռքերին ու ոտքերին՝ նրանք տեղավորված են գլխուղեղի կեղևի առջև-վի բաժիններում: Կակաչի սերմում կտեղավորվի մի քանի տասնյակ հազար այդպիսի բջիջ

Նյարդային բջիջներն ունեն փոքրիկ ելուստներ, որոնցից դուրս են գալիս սարդոստայնի թելիկների նման նուրբ

Չախից մարդու և կենդանիների գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևի զարգացումը: Ամենամեծ և ամենաբարդ գլխուղեղը մարդունն է Աջից վերևում մարդու գլխուղեղի կեղևի կտրվածքը, ներքևում գլխուղեղի նյարդային բջիջները

նյարդաթելեր. Սրանց մի մասը նյարդային բջիջն տեղեկություններ է բերում աչքերից, ականջներից, ոտքերից, ձեռքերից: Մյուսները գլխուղեղի հրամանները հասցնում են մկաններին:

Բոլոր նյարդային բջիջների աշխատանքը սերտորեն կապված է, այնպես որ մի բջջում ծագած գրգռան ամենանուրբ փոքրիկ «սարքերի» սինապսների, միջոցով հաղորդվում է մյուսներին Այդպիսի ամեն մի «սարք» հատուկ քիմիական նյութեր արտադրող բարդ ֆաբրիկա է, իսկ այդ նյութերը հնարավորություն են տալիս գրգռող մի նյարդային բջջից հաղորդելու մյուսին

Մարդու գլխուղեղում կան ոչ միայն այնպիսի նյարդային բջիջներ, որոնք ընդունում են մարմնի տարբեր օրգաններից եկող ազդանշաններն ու առաջ բերում այդ

օրգանների շարժումը, այլև այնպիսիները, որոնք տարբեր տեսակի բջիջները կապում են միմյանց: Դրանք առանձնապես շատ են և նման են մանրագույն աստղիկների Այդ բջիջներն ապահովում են ամբողջ գլխուղեղի ներդաշնակ աշխատանքը՝ Նրանց շնորհիվ է, որ մարդն ընդունակ է մտածելու և զգալու:

Գլխուղեղի բոլոր բջիջները խիստ հըստակ են դասավորված՝ Մեր զգայարաններից եկող գրգռներն ընդունող բջիջների վրա կառուցված են այն բջիջները, որոնք այդ հաղորդումները մշակում են, միավորում, դասավորում բարդ պատկերներով:

Գլխուղեղի խորքում եղած բջիջների կուտակն անվանում են գլխուղեղի բուն Այդ բջիջները գլխուղեղը լիցքավորում են էներգիայով, ապահովում նրա արթուն վիճակը. Երբ գլխուղեղի այդ բաժինները դադարում են աշխատել, մարդը քնում է Գլխուղեղի ետին բաժինները՝ ծոծրակային, քունքային և գագաթնային մասերը, շատ բարդ «սարքեր» են: Դրանց օգնությամբ մարդն ազդանշաններ է ստանում արտաքին աշխարհից, վերամշակում դրանք և պահպանում դրանց հետքերը: Գլխուղեղի առջևի բաժինները (ձակատային մասերը) կազմակերպում են մարդու բոլոր շարժումներն ու գործողությունները, նրան հնարավորություն տալիս իրականացնելու իր մտահղացումները, չչեղվելու, ուշադիր լինելու աշխատանքում

Մարդու գլխուղեղը բաժանված է երկու մեծ մասերի՝ ձախ և աջ կիսագնդերի: Արտաքինից նրանք միանման են, բայց տարբեր աշխատանքներ են կատարում: Մարդկանց մեծ մասի համար ավելի կարևոր է ձախ կիսագնդը՝ Եթե ձախ կիսագնդի աշխատանքը խախտվի, մարդը չի կարողանա ոչ խոսել, ոչ էլ հասկանալ ուրիշի խոսքը:

Մարդու գլխուղեղն աշխարհում գոյություն ունեցող «ապարատներից» ամենաբարդն է ու ամենակատարյալը. Գիտնականները բացահայտել են նրա բազմաթիվ գաղտնիքներ Բայց մարդկային ուղեղի կառուցվածքի և աշխատանքի շատ առեղծվածներ էլ դեռ սպասում են իրենց հետազոտողներին



Գծանկարչություն (Գրաֆիկա)

Հիշեցեք ձեր առաջին նկարները, որ նկարում էիք մատիտով, թանաքով, ջրաներկով և գրեթե միշտ թղթի վրա: Դուք չէիք էլ մտածում, անշուշտ, որ զբաղված եք գծանկարչությամբ: Գծանկարչությունը թղթի վրա արված գծանկարն է, որը լինում է, սովորաբար, սև-սպիտակ, առանձին դեպքերում գունավոր: Գծանկարչության (գրաֆիկայի) դուք հանդիպում եք ամեն քայլափոխի գրաֆիկական ստեղծագործություններ են թե թերթի ծաղրանկարներն ու գրքի պատկերները, թե փողոցում փակցված պլակատները, թե դրոշմանիշներն ու դրամանիշները, թե ապրանքների փաթեթների վրա արված մակագրությունները և թե, վերջապես, այն գծանկարները, որ կախված են ցուցասրահներում, թանգարաններում տանը, դպրոցում և այլ վայրերում

Գծանկարչի աշխատանքային սեղանը Ձախից աջ փորագրված շիմշատե տախտակ որից դրոշմանկար է հանվում գլանիկով ապակուն քսված տպագրական ներկ տախտակի փորագրման համար հենարան ծառայող բարձիկ ամրակալով խոշորացույց, որով նկարիչը փորագրելիս նայում է տախտակին փորիչներ փորագրելու գործիքներ



Սովորաբար նկարիչը ստեղծում է մատիտով, ածուխով, տուշով, իսկ որոշ դեպքերում գունավոր մատիտներով կամ ջրաներկով արված գծանկարի մեկ օրինակ: Գրքերում կամ հանդեսներում եղած նրա բազմաթիվ կրկնօրինակները պատրաստվում են տպարանում հատուկ գործիքների և մեքենաների օգնությամբ: Բայց նկարիչն ինքն էլ կարող է այն վերարտադրել նկարիչը դանակով, դուրով կամ հատուկ գործիքով փորիչով, նկարը միշտ հակառակ «հայելային» պատկերով փորագրում է փայտի, լինուլեումի, մետաղի վրա կամ էլ վիմագրական հատուկ քարի, պղնձի կամ ցինկի թիթեղիկի մակերևույթը նախապես ծածկում է հատուկ լաքով և այդ մակերևույթի վրա ասեղի խազերով վերարտադրում նկարը, ապա այն խաժատում թթվով: Այնուհետև, այդ նկարին գլանիկով ներկ քսելով, ստանում է ցանկացած քանակությամբ դրոշմանկար օրինակներ: Տախտակից և մետաղե թիթեղիկից արված դրոշմանկարները, ինչպես նաև նկարի վերարտադրության այդ եղանակը կոչվում են փորագրություն, իսկ վիմագրական քարից արված դրոշմանկարները վիմագրություն:

Գծանկարչությունը կերպարվեստի հին տեսակ է Քարանձավների պատերին հնագույն նկարիչների թողած նկարները, հին հունական սկահակների պատկերներըն ու գծանկարները, *Վերածննդի* հռչակավոր վարպետների փորագրություններն ու գծանկարները գրաֆիկական հիասքանչ ստեղծագործություններ են

Հայաստանի տարածքում գծանկարչության ամենահին նմուշներից են Արագած լեռան վրա, Գեղամա լեռներում Սյունիքում և այլուր պահպանված ժայռապատկերները Իսկ հին և միջին դարերից մեզ հայտնի են որմնանկարչության, *մանրանկարչության*, *քանդակագործության* հույակապ հուշարձաններ, որոնք վկայում են, թե ինչպիսի կատարելության էր հասել այն ժամանակ հայկական գծանկարչությունը: Հետագայում գծանկարչությունը նոր վերելք ապրեց *Հովնաթանյանների*, ապա *Հ Այվազովսկու*, *Վ Սուրենյանցի*, եղիշե Թադևոսյանի *Մ Սարյանի* արվեստով

Այսօր գծանկարչական արվեստը գեղանկարչության և քանդակագործության հետ միասին այնքան բազմազան է դարձել, որ առանց նրա արդեն անհնարին է պատկերացնել մեր կյանքը: Բացք ուզած մանկական գիրքը և այնտեղ կգտնեք

գծանկարներ, որոնք ձեզ օգնում են ավելի լավ հասկանալու շարադրանքը

Ն Վ *Գոգոլի* «Տարաս Բուլբա» վիպակի համար գեղեցիկ պատկերազարդումներ է արել սովետական գծանկարիչ Ե. Ա. Կիբրիկը: Ողջ աշխարհի ընթերցողներին ծանոթ են Վ. Ա. Ֆավորսկու պատկերազարդումները Ա. Ս. Պուշկինի, Դ. Ն. Շմարինովի, Լ. Ն. Տոլստոյի, Կուկրինիկսներինը և Ս. Վ. Գերասիմովինը և Մ. Գորկու ստեղծագործությունների համար

Սքանչելի պատկերազարդումներ են արել Հ. Կոջոյանը «Հազարան բլբուլ» հեքիաթի և «Սասունցի Դավիթ» էպոսի, Մ. Սարյանը՝ *Չարենցի* «Երկիր Նաիրի»-ի և պարսիկ բանաստեղծ Ֆիրդուսու «Ռուստամ և Ջոհրաբ» պոեմի, Գ. Խանջյանը խ Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպի, Պ. Սևակի «Անլուելի զանգակատուն», Հովհ. Շիրազի «Սիամանթո և Խջեզարե» պոեմների համար

Գյուղացիներ և կալվածատերեր

Ավելի քան հարյուր տարի առաջ Ռուսաստանի շատ քաղաքներում կարելի էր տեսնել որևէ տեղ փակցված այնպիսի հայտարարություններ, ուր հայտնվում էր, թե այսինչ տեղում վաճառվում է, ասենք, 10 տարեկան մի տղա Այն ժամանակ դա առանձնապես ոչ ոքի չէր գարմացնում, որովհետև Ռուսաստանում գոյություն ուներ ճորտատիրական իրավունք. ճորտ գյուղացիները պատկանում էին կալվածատիրոջը և նրա համար էլ աշխատում էին: Կալվածատերը նրանց լիիշխան տերն էր: Օրենքը կալվածատիրոջը թույլ էր տալիս ճորտ գյուղացուն ճիպոտահարել, շղթայել, աքսորել Սիբիր Գյուղացիներին փոխանակում էին ազնվացեղ շների հետ, վաճառում ամբողջ գյուղերով կամ առանձին-առանձին մասնատելով ընտանիքը:

Ճորտ գյուղացիներն ամբողջ ժամանակ հոգնատանջ աշխատանքի մեջ էին Շաբաթվա գրեթե բոլոր օրերը նրանք օրնիբուն աշխատում էին կալվածատիրոջ դաշտում կոռ ու բահրա էին վճարում: Եվ միայն գիշերներն ու կիրակի օրերն էին գյուղացիները աշխատում իրենց փոքրիկ հողակտորի վրա, որը և կերակրում էր նրանց:

Կալվածատիրոջ տնտեսության մեջ ամեն ինչ անում էին նրա ճորտերը, որոնց աշխատանքը վարձատրելու հարկ չկար Նա ուներ ատաղձագործներ ու դերձակներ, հյուսներ ու այգեպաններ և, նույնիսկ, իր ճորտ նկարիչները, ճարտարապետները, դերասանները՝ Ամենափոքր իսկ զանցանքի համար կալվածատերը կարող էր դաժանորեն պատժել նրանց

Գյուղացիների ծանր աշխատանքը կալվածատիրոջը հնարավորություն էր տալիս ապահով ու կուշտ կյանք վարելու Կալվածատիրոջ ընտանիքն ապրում էր ընդարձակ աղայական տանը: Իսկ աղայական դաստակերտի պարիսպներից դուրս գյուղացիների խարխուլ, գետնամած խըրճիթներն էին, մեծ մասն առանց ծխելուլզի, այնպես որ ծուխն անմիջապես տուն էր լցվում Պատուհաններին ապակու փոխարեն եզան փամփուշտ էր քաշված Ուտում էին կալվե ու փայտե կոպիտ ամանների մեջ Հագուստները տնախոս կտավից էին, բազմաթիվ կարկատաններով «Ագահ գազաններ, անկշտում տղճրուկներ, ինչ ենք մենք թողնում գյուղացուն: Այն, ինչ խլել չենք կարող՝ օդը», — մոտ 200 տարի սրանից առաջ գրել է ազնվական հեղափոխական Ս. Ն. Ռադիշչևը:

Սակայն գյուղացիները չէին հաշտվում իրենց դժնդակ ճակատագրի հետ: Մեկ անգամ չէ, որ բռնկում էին գյուղացիական խռովություններ և, նույնիսկ, պատերազմներ Իվան Բոլոտնիկովի, Ստեպան Ռազինի, Եմելյան Պուգաչովի առաջնորդությամբ: Գյուղացիների համընդհանուր ապստամբության սարսափը Ալեքսանդր 2-րդ ցարին հարկադրեց 1861 թ վերացնելու ճորտատիրական իրավունքը Գյուղացիները դարձան անձնապես ազատ Բայց նրանց կրկին խաբեցին ստիպելով մեծ փրկագին վճարել կալվածատերերին իրենց ազատագրության համար Գյուղացիների կյանքը չբարելավվեց

Երբ Ռուսաստանում բանվոր դասակարգը ոտքի կանգնեց տապալելու ցարին, կալվածատերերին ու կապիտալիստներին, աշխատավոր գյուղացիությունը դարձավ նրա հավատարիմ դաշնակիցը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը կատարյալ ազատություն բերեց աշխատավոր գյուղացիությանը Առաջին անգամ գյուղացին դարձավ իր կյանքի լիիրավ տերը, այն հողի տերը, որի վրա նա ապրում ու աշխատում է

Աճուրդ
Տեսարան
ճորտական
կենցաղից»
Նկարիչ
Ն. Վ. Ներե
վի կտավը
ճորտական
իրավունքի
ժամանակ
կալվածա
տերը կարող
էր գույքի
նման վա
ճառել իր
գյուղացի
ներին



Ճորտ գյուղացիների ծանր կյանքի մասին դուք կարող եք կարդալ հետևյալ վիպակը.

Алексеев С П Крепостной мальчик М
«Дет лят», 1973

Գոգու Նիկոլայ Վասիլևիչ

1809 —
1852

Գիրքն, իրոք, զվարճալի էր Գոգուլը հագիվ էր հայտնվել տպարանի շեմին, երբ գրաշարներն սկսեցին փռթկալ ու բըրբջալ

«Երեկոներ Դիկանկայի մերձակա խուտորում» պատմվածաշարը բոլորի կարծիքով արտասովոր հետաքրքիր և բանաստեղծական էր Մինչ այդ անհայտ երիտասարդ գրողը պատմում էր Ուկրաինայի բնության, Նրա մարդկանց, կենցաղի և սովորույթների մասին: Բարի ծիծաղն այնպես էր ճառագում գրքի էջերից, ինչ-

պես արևն է լույսով ողողում անծայր դաշտերը: Եվ յուրաքանչյուր պատմության մեջ զգացվում էր հին ավանդությունների, ժողովրդական հեքիաթների շունչը.

Դեռևս մանկությունից Գոգուլը սիրում էր լսել ժողովրդական երգեր ու հեքիաթներ: Իսկ գիմնազիայում սովորելու տարիներին ճանաչեց ու սիրեց գիրքը, թատրոնը Պատանին երազում էր օգտակար լինել մարդկանց, իր աշխատանքով ծառայել հայրենիքին

Բայց երբ երիտասարդ Գոգուլը եկավ Պետերբուրգ, ոչ մի բան այնպես չստացվեց, ինչպես ինքն էր երազում: Նա ապրում էր կիսաքաղց ու միայնակ. Երկար ժամանակ աշխատանք փնտրելուց հետո ծառայության անցավ մի գրասենյակում, թեև ատում էր պետական ճանձրալի գրադրությունները: Նրա գրչի տակից դուրս էին գալիս զվարթությամբ և հայրենի երկրի ձայներով լի վառ էջեր.

«Երեկոներ Դիկանկայի մերձակա խուտորում» պատմվածաշարով Գոգուլը ուրբ դրեց գրական ճանապարհի Նրան իբրև



հավասար ընդունեցին գրողներ Վ ժուկովսկին, Ս Ակսակովը և ինքը Պուշկինը Գոգոլը մտերմացավ նաև հայտնի դերասան Մ Շչեպկինի հետ

Այժմ արդեն կարելի էր ամբողջովին նվիրվել ստեղծագործելուն Նա գրում է «Տարաս Բուլբա» վիպակը, որ պատմում



Ն Վ Գոգոլի «Տարաս Բուլբա» վիպակի համար նկարիչ է Ա Կիրիկի պատկերազարդումից

էր Ջապորոժյան Սեչի փառավոր անցյալի մասին: Մեծ քաղաքի կյանքից և գրասենյակային տաղտկալի ծառայությունից ըստացած տպավորությունները հիմք դարձան «Պետերբուրգյան պատմվածքներ»-ի համար. Խեղճ ու բուրբից արհամարհված չինովնիկ Ակակի Ակակինիչի մասին է «Շինելը» պատմվածքը

Գոգոլի «Ռևիզոր» կատակերգությունն արդեն մարտահրավեր էր ցարական չինովնիկներին, որոնց գլխավոր օրենքն անօրինականությունն էր, թույլերին կեղեքելն ու ճնշելը, խաբելը, կաշառակերությունը Ռուսաստանի առաջավոր մարդիկ բարձր գնահատեցին Գոգոլի համարձակությունն ու մերկացնող ծիծաղի ուժը: Այդ կատակերգությունը մինչև օրս էլ հաջողությամբ բեմադրվում է բազմաթիվ թատրոններում.

Երկար տարիներ Գոգոլն ապրում էր հայրենիքից հեռու, Իտալիայում: Բայց չէր դադարում մտածել Ռուսաստանի մասին, տառապել նրա համար և գրել նրա մասին Իրեն հուզող բոլոր ցավոտ հարցերը Նա արտահայտեց իր «Մեռած հոգիներ» պոեմանման վեպում: Առաջին հայացքից թվում էր, թե Գոգոլը, ինչպես և առաջ, մարմնավորում է միայն ծիծաղելի հիմարների ժլատ Պլուշկինին, անտաշ ու թանձրամիտ Սոբակևիչին, անհոգ Նոզդրյովին, խարդախ Չիչկովին. Բայց հանձինս այս ծաղրական կերպարների հառնում էր ցարական Ռուսաստանում տիրող կյանքի ճշմարտացի ու մերկացնող պատկերը

— Աստված իմ, որքան տխուր է մեր Ռուսաստանը, — ասել է Պուշկինը Գոգոլի նոր գրքի առաջին գլուխներն ունկնդրելիս

Գոգոլին շատ բարձր էր գնահատում մեծ գրող Վիլյամ Մարոյանը:

Գոգոլի գրքերը, որ միաժամանակ և լուրջ են, և թախծոտ, և ուրախ, միշտ կապրեն Մարդիկ գծուծ մարդու հանդիպելիս ասում են սա կատարյալ Պլուշկին է, տեսնելով բուֆ և կոպիտ մեկին հիշում են Սոբակևիչին

Բայց և այնպես, առաջին ծանոթությունն այս գրողի հետ սկսվում է «Երեկոներ Դիկանկայի մերձակա խուտորում» պատմվածաշարով: Աշխատիր շուտ գըտնել ու կարդալ այդ գիրքը

Գոգոլի բազմաթիվ երկեր թարգմանվել են նաև հայերեն: Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանում կան ռուս մեծ գրողի անունը կրող փողոց և դպրոց:

Գոմեշ և յակ

Գոմեշներն ու յակերն ապրում են շատ երկրներում, միանգամայն տարբեր պայմաններում

Ընտանի գոմեշներ բուծում են Հարավային Ասիայում, Աֆրիկայում և Հարավային Եվրոպայում, Սովետական Միությունում՝ Ադրբեջանում, Հայաստանում և Կրաստանում և Հյուսիսային Կովկասում

Հարավային երկրներում ցրտեր գրեթե չեն լինում, բայց դրա փոխարեն ձմռանը հաճախակի են հորդառատ անձրևները



Գոմեշներ ներքևում յակեր

Գետինը ցեխամած է դառնում գոյանում են ցեխոտ ջրափոսեր Եթե գոմեշներին չեն աշխատեցնում, ապա նրանք կարող են ամբողջ օրը հաճույքով պառկած մընալ ջրափոսերում: Ջրիկ ցեխը զովացնում է մաշկը իսկ երբ պետք է լինում վեր կենալ կենդանու վրա ցեխը չորանում է դառնում կավե կեղև և զրահի նման պաշտպանում նրան մակաբույծ միջատներից:

Գոմեշներով վար են անում հեծնում սայլերի լծում, նույնիսկ մրցավազք կազմակերպում: Գոմեշների երկատված լայն կճղակները նրանց օգնում են քայլելու ցեխի և ճահճուտների միջով

Ընտանի յակեր բուծում են Ասիայում, այդ թվում և Սովետական Միությունում Բայց նրանց գրավում է ոչ թե թանձր ու տաք ցեխը, այլ լեռնային ձյուններն ու քարքարոտ, դժվարամատչելի կաճանները Օրինակ, հեռավոր Տիբեթի լեռներում, 3—4 հզ մ բարձրության վրա, ոչ մի ընտանի կենդանի չի կարող դիմանալ սառնամանիքին ու բքին, նոսր օդին: Իսկ ահա յակերը, երկար եղջյուրներով գլուխները խոնարհած, կարող են բուկդոգերների նման հանգիստ ճեղքել անցնել ձյան միջով

Գոմեշն ունի նոսր, կարճ մազածածկ, իսկ յակը տաք մուշտակ. Ալիքաձև, երկարաթել բուրդը ծածկում է ողջ մարմինը և թավ ու լայն ծոպերի նման կախվում կողքերից ու կրծքից: Եվ յակերը քայլում են, ասես, երկար շրջազգեստով կամ մինչև գետին հասնող սթարով: Վայրի յակերի «մուշտակի» գույնը ավելի հաճախ գորշ է, գրեթե սև, իսկ ընտանի յակերն ունենում են նաև գեղեցիկ, արծաթավուն բուրդ: Յակի համար ամենատհաճը շոգն է Նույնիսկ ձյունապատ սարալանջերին նա ստվեր է փնտրում

Գոմեշներն ու յակերը միանման են պաշտպանվում թշնամուց նախիրը, հորթերին ներս առնելով, կանգնում է շրջան կազմած, և բոլոր հասուն կենդանիները խոնարհում են գլուխներն ու եղջյուրներն ուղղում են դեպի թշնամին: Նման միասնական պաշտպանության առջև երբեմն ընկրկում են, անգամ, ձյան հովազն ու ջունգլիների տիրակալը վագրը:

Վայրի յակեր արդեն գրեթե չկան


Վայրի գոմեշներ հանդիպում են Հարավային Ասիայում և Աֆրիկայում Աֆրիկական գոմեշներն ապրում են սավաննաներում, ուր տեղ-տեղ կան խիտ թփուտներ և ծառեր: Գոմեշների հիմնական թըշնամիներն առյուծներն են Նրանք հաճախ են հարձակվում հորթերի վրա

Շատ որսորդներ վայրի գոմեշին համարում են ամենավտանգավոր կենդանիներից մեկը


Գորգ

Ավելի քան յոթ դար առաջ Ասիայի ճանապարհներով անցնում էր իտալացի հայտնի ճանապարհորդ Մարկո Պոլոն: Նա այն խիզախներից էր, որին վիճակված էր ցրել Արևմուտքի և Արևելքի միջև եղած

Հնդանի
Բոս Կատ
Երևերով
Կոգ (Ռա
Կոտաղ
Կոգ դար)



անհայտության մշուշը Պոլոն եղավ Հայաստանում և հետո իր ուղեգրություններում չմոռացավ հիշատակել Փոքր Ասիայի քաղաքներում ապրող հայերի մասին, «...որոնք հյուսում են աշխարհի ամենագեղեցիկ գորգերը» ձիշտ է, դեռ նրանից դարեր առաջ արաբ աշխարհագիրներն ու ճանապարհորդները հիացած գովում էին հայկական բարձրարժեք գորգերը բայց եվրոպան դրանց հետ մոտիկից ծանոթացավ միայն 13-րդ դարից սկսած Այդ ծառայությունը հետաքրքրական հետևանքներ ունեցավ. 15—16-րդ դարերի եվրոպական նկարիչների կտավներում հանդիպում են հայկական գորգերի պատկերներ Դրանց մի փոքր մասը պահպանվել է աշխարհի տարբեր թանգարաններում Մինչև 20-րդ դարի սկիզբը բազմաթիվ զարդամոտիվներ շարունակ ընդօրինակել են ժողովրդական վարպետները. եվ այժմ հայկական գորգերի այդ շրջանի պատմությունն ուսումնասիրվում է իտալական, հուլանդական, գերմանական ակադեմիայի նկարիչների կտավների շնորհիվ



Կապ
Կ
քսանդ
Կ
Կար)

Գորգը բազմագույն զարդանկարներով, խավածածկ կամ առանց խավի ուղղանկյուն գեղարվեստական գործվածք է: Ծառայում է որպես փռոց, ծածկոց, վարագույր բնակարանը տաքացնելու, զարդարելու, ինչպես և ձայնակլանման միջոց: Գորգերը հիմնականում գործում են թելերից, լինում են նաև ասեղնագործ և գույնզգույն կտորներից կարված

Հայկական գորգերը մեծ համբավ ունեն Հայաստանը խավավոր գորգի, ինչպես նաև կապերտի (կարպետի) ստեղծման կենտրոններից է. Կապերտ բառը հայերենից անցել է եվրոպական շատ լեզուների լատիներենին, անգլերենին, սերբերենին և այլն: Գորգերը հավերժ երիտասարդ են իրենց մի զարմանալի հատկությամբ մեկ անգամ ստեղծվելով, նրանց զարդանկարները չեն մոռացվում այլ շարունակ ընդօրինակվելով փոխանցվում են սերընդից սերունդ. Հայկական զարդամոտիվներն արտահայտում են ժողովրդական հնագույն պատկերացումներ Ուշադիր ուսումնասիրելիս դիտողի համար բացվում է գորգերի լեզվով պատմվող հայկական առասպելների հեքիաթների աշխարհը Ահա «վիշապագորգերն» իրենց վրա պատկերված գալարագեղ վիշապներով, սրանց զայրույթը մեղմելու համար զոհաբերված խոյերի մորթիներով, կայծակներով, ինչպես նաև այդ չար ուժերը զսպելու ելած ցուլերի, արծիվների, առյուծների պատկերներով Կենաց ծառերի, ականթատերևների, արմավենյակների ու վարսանդների գունագեղ, բազմապիսի պատկերումները հավաստում են կյանքի, արգասաբերության գաղափարը

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 13—17-րդ դարերում գործված վիշապագորգերում առասպելական կենդանիների տեսքով արտահայտվել են հայկական հեթանոսական հավատալիքների վերապրուկները կապված *Վահագնի*, *Աստղիկի*, *Անահիտի*, *Արամազդի*, *Միհրի* և այլ աստվածների պաշտամունքի հետ

Հայկական գորգերը նշանավոր են եղել նաև իրենց սքանչելի գույների շնորհիվ, որոնք ստացվել են բնական միջոցներով տարբեր ծառերի կեղևներից ու տերևներից, բույսերի արմատներից, ծաղիկներից Հայտնի են եղել իրենց ամենաարժեքավոր գունանյութի *որդան կարմիրի* շնորհիվ

Հայաստանի ամեն մի շրջանին, անգամ առանձին գյուղերին, բնորոշ են սեփական զարդանկարները: Դրանք ավելի հաճախ իրար հետ կապված են հմաստով, հայկա-

կան արվեստին բնորոշ ներդաշնակ գու-
նային անցումներով: Հայաստանի տար-
բեր նահանգների Այրարատի, Սյունիքի,
Արցախի, Ուտիքի Գուգարքի, Շիրակի,
Տարոնի, Բարձր Հայքի և Վասպուրա-
կանի գորգերը հստակորեն տարբերվում
են իրենց յուրօրինակության շնորհիվ

Սովետական Հայաստանի գորգագործ
ները, որ ժառանգել են հին ավանդույթնե-
րը, այսօր էլ ամբողջ աշխարհին հայտնի
են իրենց բարձր վարպետությամբ: Թե
ինչպիսին են այդ, ասես անձեռակերտ
գորգերը, կարող եք տեսնել Հայաստանի
տարբեր թանգարաններում, որտեղ անց
յալում ստեղծված լավագույն ցուցանը-
մուշների կողքին կան նաև նորերը
որոնք ցուցադրում են ժամանակակից
գորգագործուհիների մատների բարդ ու
նուրբ աշխատանքը:

Խավոտ և թաղիքե ամենավաղ գորգերը
հայտնաբերվել են ՍՍՀՄ-ի տարածքում

Արևելքի գորգերից առավել հռչակված
են իրանական, թուրքմենական, ադրբե-
ջանական գորգերը:

Գորգերը գործվում են ձեռքով և մեքե
նաներով. Իջևանում կա գորգագործական
խոշոր կոմբինատ, որն ամենամեծն է Ան-
դրկովկասում և երրորդը ՍՍՀՄ-ում Մե-
քենայական գորգագործությունը ավելի
արտադրողական է, սակայն կատարման
որակով և զարդանկարի բարդությամբ ձե-
ռագործ գորգերն անգերազանցելի են



տերը կիմանա ու կծծի իրեն: Հետո աշխա-
տեց կոշկակարի մոտ, շոգենավի վրա
ամաններ լվաց...

Գրքերից Ալյոշան իմացավ տարբեր
երկրների, խելացի հպարտ ու աշխատա-
սեր մարդկանց մասին այն մասին, որ



«Հանկարծ պապը ինչ որ տեղից վերցնելով մի նոր գըր-
բուկ, նրանով պինդ խփեց ձեռքի ափին ու կանչեց ինձ
— Ապա է՛յ դու, աղ դրած ականջ պերմացի, արի՛ այստեղ
նստի՛ր, կալմիկի երես տեսնո՞ւմ ես սա այբն է ասա՛ ա՛յբ
բե՛ն գի՛մ»:

Մ Գորկի «Մանկություն» նկարիչ Բ Ա Դեխտերյովի
պատկերագրողուհից

Գորկի Ալեքսեյ Մաքսիմովիչ

1868 —
1936

Ալեքսեյ Պեշկովը շատ ծանր մանկու-
թյուն ու պատանեկություն է ունեցել: Ահա
թե ինչու, երբ գրող դարձավ, իբրև *կեղծա-
նուն* ընտրեց Մաքսիմ Գորկի անունը
(«գորկի» ռուսերեն բառը նշանակում է
«դառը»): Ալյոշայի հայրը վաղ մահացավ
և երեխան ապրում էր պապի տանը: Ալյո-
շան սովորելու հնարավորություն չունե-
ր ուսման տալու փոխարեն պապը հարկա-
դրում էր նրան բակերից հնամաշ շորեր
հավաքել, որ հետո վաճառում էին Որոշ
ժամանակ անց պապը նրան «մարդամեջ
հանեց» Ալյոշան խնամում էր տանտիրոջ
երեխաներին: Վերջին կոպեկները նա հա-
ցի փոխարեն գրքերի էր տալիս և գիշերնե-
րը, մոմի լույսի տակ, թաքուն կարդում
ամեն րոպե սպասելով, թե ուր որ է տան-

հարկավոր է պայքարել որպեսզի աշխարհի երեսին բոլորը երջանիկ լինեն Եվ նա երդվեց միշտ օգնել մարդկանց

Անցան թափառումներով լի տարիները: Գորկին պայքարում էր *պրոլետարների* գործի համար, ակտիվորեն մասնակցում սոցիալիստական մշակույթի ստեղծմանը: Նա բազմաթիվ հոյակապ գրքեր գրեց: Նրա ստեղծագործությունը բարձր էր գնահատում Վ. Ի. Լենինը: Համաշխարհային պրոլետարիատի առաջնորդը Գորկու մասին խոսում էր իբրև պրոլետարական գրողի, որն «ամուր կապել է իրեն Ռուսաստանի և համայն աշխարհի բանվորական շարժման հետ...» Լենինի խորհուրդներն օգնում էին Գորկուն ընթանալու հեղափոխական ճիշտ ուղիով. Հետագայում, արդեն Վլադիմիր Իլյիչի մահից հետո, Գորկին գրեց «Վ. Ի. Լենին» ակնարկը, ուր ցույց տվեց Լենինի մեծատառով Մարդու, կենդանի հմայքը, որը «պարզ է, ինչպես ճշմարտությունը»:

Երբ դուք մեծանաք, անկասկած կկարդաք ու կսիրեք Մաքսիմ Գորկու «Բազեի երգը» և «Մրկահավի երգը», «Մանկություն», «Ծառայության մեջ», «Իմ համալ սարանները» ինքնակենսագրական եռերգությունը, «Ֆոնա Գորդեն», «Արտամուտվների գործը», «Կլիմ Սամգինի կյանքը» վեպերը, թատերգությունները, ակնարկները, պատմվածքները: Դուք կուսումնասիրեք Գորկու սովետական գրականության հիմնադրի, ստեղծագործությունը:

Գորկին գրել է նաև մանուկների համար «Ճնճղուկը» հեքիաթը Պուլգիկ թռչնակի մասին է, որը մայրիկին չլսեց և քիչ էր մնում զոհ գնար կատվին: «Դեպք Եվսեյ-

կայի հետ» գործում Գորկին պատմում է մի տղայի մասին, որը երազում ընկնում է ծովի հատակը ձկների մոտ: Գրել է Իտալիայում ապրող չարաճճի Պեպեի մասին, իր մանկության, Արխիպ պապի և Լյոնկայի թափառումների մասին: Գորկին պատասխանում էր երեխաների նամակներին, խորհուրդ տալիս, թե ինչպես պետք է բարեկամություն անել, ինչ կարդալ, ինչպես գիրք գրել, դրոշմանիշեր հավաքել, ինչ են պարտավոր անելու պիոներները:

«Պիոներները, այսինքն առաջամարտիկները, — գրել է նա, — հայտնագործում էին անհայտ աշխարհներ և ճանապարհներ Արվեստում և գիտության մեջ նույնպես նրանք հայտնագործում էին նորը Դուք, երեխաներ պետք է ոչ միայն հայտնագործեք, այլև ստեղծեք նոր կյանք, արվեստ, գիտություն Առաջ, պիոներներ»

Գորկին միշտ գիտեր, որտեղ և ում պետք է ավելի շատ օգնել Եվ փորձանքի մեջ ընկածներին միշտ մեկնում էր իր ուժեղ ու բարի ձեռքը

Ա Մ Գորկին հայ ժողովրդի լավագույն բարեկամն էր: 1915 թ Մեծ եղեռնի ժամանակ նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ կազմվեց և 1916 թ հրատարակվեց «Հայ գրականության ժողովածու»-ն. Ա Մ Գորկին նամակագրություն է ունեցել Վ Տերյանի, Ալ Շիրվանզադեի հետ, իսկ 1928 թ եղել է Սովետական Հայաստանում և իր ստացած տպավորությունները շարադրել «Սովետական Միությունում» ակնարկների ժողովածուում:

Գորշուկ (Փորսուղ)

Այս գազանը շատ զգույշ է. նա որսի է դուրս գալիս գիշերը Այդ պատճառով էլ, եթե, նույնիսկ, ամռանը խիտ անտառում, զառիկող բլրին գորշուկի բույն հայտնաբերեք, նրան հեշտությամբ չեք տեսնի. նախքան բույնը թողնելը նա զգուշորեն դուրս է նայում, ականջ դնում, հոտոտում և, եթե թեկուզ փոքր-ինչ կասկածելի բան է զգում, նորից թաքնվում է Եվ հավաստիանալուց հետո միայն, որ շուրջն ամեն ինչ խաղաղ է, նա դուրս է գալիս բնից:

Գորշուկի գետնափոր բները խորն են, շատ ճյուղավորումներով և անցքերով Բացի դրանից, ամեն տարի նա նոր անցքեր է փորում: Գորշուկը բնում է անցկացնում նաև ձմեռը խոտ է հավաքում, ներ-



սից փակում մուտքը և քուն մտնում ձիշտ է, գորշուկը խորը չի քնում, նրա մարմնի ջերմաստիճանը չի իջնում. երբե մըն, հատկապես ձնհալքի ժամանակ, նա արթնանում է և դուրս գալիս բնից, այն էլ, հիմնականում, ցերեկը: Ահա հենց այդ տեղ էլ կարելի է ինչպես հարկն է, զննել նրան

Գորշուկը բավականին խոշոր, մինչև 90 սմ երկարությամբ (իսկ պոչի հետ մեկ մետրից ավելի), արծաթամոխրագույն կոշտ մազերով գազան է Քթից դեպի ծոծրակը ձգվում են դեղնասպիտակ շերտեր, իսկ աչքերի և ականջների վրայով մի սև շերտ Փափուկ ձյան վրա լավ երևում են նրա ամուր մագիլներով ուժեղ թաթերի հետքերը: Այդ թաթերով նա բներ է փորում, հմտորեն հողից արմտիք հանում, նաև պաշտպանվում է Գորշուկն ինքը խաղաղասեր կենդանի է և ոչ մեկի վրա չի հարձակվում

Չյան վրա մի քիչ զբոսնելուց հետո գորշուկը դարձյալ քնելու է գնում: Գարնանը դուրս գալով բնից, նա անմիջապես գործի է անցնում նախ, պետք է մի լավ ուտել, ձմեռվա ընթացքում շատ է նիհարել երկրորդ, պետք է փոխել կացարանի ցամքարը կամ նոր բույն փորել Հետո ծնվում են գորշուկի ձագուկները որոնք սովորաբար երեքից հինգն են լինում Մայր գորշուկը շատ հոգատար է Կույր ձագուկներին նա ամեն օր արևի է դուրս բերում: Իսկ հայր գորշուկը խնամքով մաքրում հավաքում է կացարանը ամառվա ընթացքում մի քանի անգամ փոխում ցամքարը:

Աշնան մուտքերին ընտանիքի բոլոր «անդամները» հոգում են գիրանալու մասին, նախապատրաստվելով ձմռանը Չը նայած թվացող ծանրաշարժությանը գորշուկները ճարակորեն որսում են կրծողներ, գորտեր, մողեսներ, հողի տակից փորում հանում են որդեր Գորշուկներն առանձնապես օգտակար են նրանով, որ մայիսյան բզեզների բազմաթիվ թրթուրներ են ոչնչացնում:

Ցրտերն ընկնելուն մոտ գորշուկն արդեն այնքան ճարպ է կուտակած լինում, որ այն կազմում է նրա քաշի մեկ երրորդ մասը: Այժմ կարելի է և հանգիստ պառկել ու քուն մտնել, մինչև հաջորդ գարուն երբ նա նորից կսկսի իր «եռուն» գործունեությունը

Գորշուկի ձագուկները ձմեռում են ծընողների հետ միասին Իսկ գարնանն արդեն սկսում են իրենց ինքնուրույն կյանքը

Դուք հյուր եք եկել ձեր ընկերոջը նա ասում է «Հիմա ես քեզ ցույց կտամ իմ գրադարանը», և մոտենում գրքերով լի պահարանին կամ դարակին:

«Այսօր պետք է գրադարան գնամ», — ասում եք դուք և գնում մտնում եք մի շենք, որի դռանը փակցված է «Մանկական գրադարան» ցուցանակը:

Եթե երբևէ առիթ ունենաք լինելու Մոսկվայում, դուք կտեսնեք մի քանի շենքեր, որ մի ամբողջ թաղամաս են զբաղեցնում: Մուտքին գրված է «Վ Ի Լենինի անվան Լենինի շքանշանակիր ՍՍՀՄ պետական գրադարան»: Այդ գրադարանի ներսը շրջելու համար շատ ժամանակ է հարկավոր: Դուք պետք է բարձրանաք վերելակներով, իջնեք աստիճաններով, անցնեք միջանցքներով Այնտեղ դուք կտեսնեք գրքերով լեցուն գրադարակների անվերջ շարքեր և սայլակների մի շարան, որով գրքերն ընթերցասարահ են բերում, և շատ ու շատ այլ բաներ


Սովետական Միությունում տպագրված ամեն մի գիրք, թերթ ու հանդես անպայման հանգրվանում է այդ գրադարանում Այս գիրքը ևս, որ հիմա դուք կարդում եք, իր տեղը կգտնի Լենինի գրադարանի գրադարակին Այստեղ գրքեր, թերթեր, հանդեսներ են ստացվում նաև այլ երկրներից Գրադարանում նրանց թիվը միլիոնների է հասնում: Ահա թե ինչպիսին է այդ աշխարհի ամենախոշոր գրադարաններից մեկը, որն ստեղծվել է ավելի քան հարյուր տարի առաջ: Ժամանակին այնտեղ պարապել է Վլադիմիր Իլյիչը

Պատահական չէ, որ թե գրքերի մի ամբողջ քաղաք կազմող այս հսկայական գրադարանը, թե մանկական գրադարանը, ուր դուք հաճախում եք, և թե ձեր տան գրադարակը անվանեցինք միևնույն բառով «գրադարան»:

Գրադարանը այն գրքերի հավաքածուն է, որ մեկ մարդ կամ շատ մարդիկ սիրով հավաքել են և խնամքով պահպանում են

Գրադարանները գոյություն ունեն հազարամյակներ ի վեր: Սովետական Միության տարածքում առաջին գրադարաններն ստեղծվել են շատ դարեր առաջ

Հայաստանում, օրինակ, գրադարաններ են եղել մեզանից դեռևս 1500 տարի առաջ Սկզբում դրանք կոչվել են գրատուն, գրանոց, արկեղք գրոց, գանձատուն, մատենադարան, դիվան, ջամբռ, երբեմն էլ



Վերևում ձախից Վ. Բ. Լենինի անվան ՍՍՀՍ պետական գրադարանը Մոսկվայում Կենտրոնում ընթերցասրահը: Վերևում աջից գրացուցակների սրահը

Նշխարանոց, նշխարախուց և այլն. Դրանք եղել են վանքերին կից կամ ունեցել են առանձին շինություն, ինչպես Հաղպատում, Արգինայում եղել են նաև վանքերին մոտակա քարայրային գրապահոցներ: Միջնադարում իրենց գրադարաններով հռչակված էին Մանսիինի, Հաղպատի, Տաթևի, Գետիկի վանքերը: Հայտնի էին նաև Անիի արքայական գրադարանը, Գլաձորի, Գեղարդի, Երզնկայի, Կիլիկիայում գտնվող Սկևռա քաղաքի ու Դրազարկի վանքի և շատ ու շատ այլ գրադարաններ:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հիմքը կազմում է Էջմիածնի ձեռագրատունը, որը հիմնադրվել էր 5-րդ դարում:

Այժմ Հայկական ՍՍՀ-ում կան երեք հազարից ավելի գրադարաններ Ամենախոշորներն են Ալ Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանը, որ հայ գրքի ամենախոշոր պահոցն է աշխարհում, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Երևանի քաղաքային գրադարանները



Խնկո Ապրի անվան մանկական գրադարանը Երևանում աջից գրադարանի «Հեթիաթների սրահը»

Դպրոցական ու մանկական գրադարանների թիվը հազարից ավելի է: Մանկականներից ամենախոշորը Խնկո Ապրի անվան գրադարանն է Այս բոլոր գրադարաններն էլ գտնվում են Երևանում Հարյուրավոր հայկական գրադարաններ կան նաև սփյուռքում, որոնցից նշանավոր են Երուսաղեմի ձեռագրատունը Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունների մատենադարանները և այլն

Գրադարաններում այնքան շատ գրքեր կան, որ նրանց մեջ դժվար է պետք եղածը



Ալ Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի ընթերցասրահը



գտնելը Ահա այդ ժամանակ օգնության են հասնում ուղեցույցները գրացուցակները, որ կան ամեն մի գրադարանում: Երկար արկղիկներում շարված են քարտեր: Ամեն մի քարտի վրա գրված է գրքի անունը և հեղինակի ազգանունը, իսկ անկյունում մի նշան կա, որ կազմված է տառերից ու թվանշաններից և կոչվում է գրանիշ: Գրանիշը գրադարանում պահվող գրքի կրճատ հասցեն է՝ Գրադարանավարը գրանիշին նայելով անմիջապես իմանում է, թե որ գրադարանում պետք է փնտրի գիրքը:

Եթե դուք դեռ գրադարանի անդամ չեք, անպայման անդամագրվեցեք Դրանից հետո դուք կսովորեք օգտվել գրացուցակից

Եթե դուք դեռ գրքեր չեք հավաքում, սկսեք հավաքել: Որոշ ժամանակ անց դուք կունենաք ձեր սեփական գրադարանը Գրքերն այնտեղ պահեցեք կարգ ու կանոնով և խնամքով: Եթե մեկնումեկից գիրք եք վերցրել, մի մոռացեք վերադարձնել և ինքներդ էլ հիշեցեք, թե ում եք գիրք տվել կարդալու: Բայց անպայման ձեր գրքերն ընթերցելու տվեք նաև ընկերներին

Գրատպություն

— տես Տպագրություն

Գրաֆիկ

Հայր ու որդի պատրաստվում էին մեկնել Կիրովական քաղաքը Նրանք ապրում էին Երևանում, որտեղից դեպի Կիրովական տանում է 150 կմ երկարությամբ ասֆալտապատ խճուղին

«Գնանք ավտոբուսով, — առաջարկեց հայրը, — մեկնում է առավոտյան ժամը 10-ին, շարժվում է ժամում 45 կմ արագությամբ և ընդամենը երկու կանգառ ունի՝ Նայիր, հիմա ես կգծեմ ավտոբուսի շարժման գրաֆիկը» Եվ հայրը սև մատիտով գծեց գրաֆիկի երկու փոխուղղահայաց ուղիղներ և կտրուկ վեր բարձրացող բեկյալ գիծը:

«Հորիզոնական ուղղի վրա ես նշել եմ ժամանակը արտահայտված ժամերով, իսկ ուղղահայացի վրա Երևանից եղած հեռավորությունը կիլոմետրերով, — ասաց հայրը: — Ժամը տասին գրաֆիկի գիծն սկսում է վեր բարձրանալ Տասնմեկն անց


կեսին ավտոբուսը կես ժամով կանգ է առնում Ապարանում Այդ ժամանակամիջոցում Երևանից եղած հեռավորությունը չի ավելանում, ուստի և այստեղ գրաֆիկը հորիզոնական է Ապա գրաֆիկի գիծը նորից վեր է ձգվում, այսինքն՝ ավտոբուսը շարունակում է ճանապարհը ժամը հինգը դեռ չլրացած մենք կլինենք Կիրովականում»:

«Ավելի լավ է հեծանվով գնանք, — առաջարկեց որդին. — Դուրս կգանք առավոտը վաղ, ժամը յոթին, կշարժվենք ժամում 15 կմ արագությամբ Հինգ ժամում կանցնենք ճանապարհի կեսը Մի երեք ժամի չափ կհանգստանանք, կնախաճաշենք և նույն արագությամբ կշարունակենք ճանապարհը» Եվ որդին կանաչ մատիտով գծեց հեծանվային ճանապարհորդության գրաֆիկը: «Տեսնում ես, — ասաց նա, — տասնմեկն անց կեսին կլինենք Ալագյազ գյուղում, իսկ չորսն անց կեսին՝ Սպիտակում: Կիրովական կհասնենք ժամը ութին»:

Ճանապարհորդությունը շատ հետաքրքրական էր: Բայց այն սկսվեց ոչ թե առավոտյան ժամը յոթին, այլ ութին (գուշակիր, թե ինչն) և ընթացավ բոլորովին էլ ոչ այնպես, ինչպես նախատեսված էր:

Նայեցեք այդ ճանապարհորդության գրաֆիկի կարմիր գծին և ասացեք, թե ինչ պատահեց հեծանիվներին Ինչ արագությամբ էին հեծանվորդները շարժվում առաջին ժամում: Որտեղ ջարդվեցին հեծանիվները և որքան ժամանակում հաջողվեց դրանք նորոգել Որտեղ էին հեծանվորդները շարժվում պլանավորվածից ավելի արագ Որ ժամերին էին նստել խարույկի մոտ Ինչ արագությամբ էին շարժվում նրանք խճուղու նորոգվող տեղամասով Երբ անցան Ալագյազ գյուղով և երբ հասան Կիրովական: Ընդամենը քանի կիլոմետր անցան հեծանիվներով և քանիսը ճանապարհին հանդիպած մեքենայով

Մեր գրույցում հայրն ու որդին կառուցում էին անցած ճանապարհի ժամանակից ունեցած կախվածության գրաֆիկը Բայց տրանսպորտի տարբեր տեսակների շարժման գրաֆիկների չէ միայն, որ դուք կհանդիպեք կյանքում: Հիվանդանոցներում, որպեսզի ավելի լավ պատկերացնեն հիվանդության ընթացքը, գծում են հիվանդի մարմնի ջերմաստիճանի գրաֆիկը, ինչպես նաև ջերմաստիճանի կախումը բուժման ժամանակից Խոշոր գործարանի դիրեկտորի աշխատասենյակում կարելի է տեսնել արտադրական բազմաթիվ գրա-



Ֆիկներ, օրինակ, պլանի կատարման ընթացքի գրաֆիկը:

Ամեն անգամ, երբ թվային որևէ մեծություն (ճանապարհ, ջերմաստիճան, արտադրանքի քանակ, կշիռ, երկարություն) կախված է թվային մեկ այլ մեծությունից ապա այդ կախման բնույթն ամենից ավելի ակներև ցուցադրում է գրաֆիկը Օրինակ, եթե դուք փոքրիկ եղբայր ունեք, որին պարբերաբար կշռում են ու չափում հասակը, ապա դուք կարող եք նկարել նրա մարմնի կշռի և հասակի կախվածության գրաֆիկը Գյուղատնտեսության մեջ օգտագործվում են պարարտանյութի քանակից բերքի կախվածության գրաֆիկներ: Վանդակավոր թղթի վրա գծեք տարբեր չափերի քառակուսիներ և հաշվեք դրանցից յուրաքանչյուրի մեջ եղած վանդակների քանակը: Այժմ դուք կարող եք կառուցել քառակուսու կողմի երկարությունից քառակուսու մակերեսի կախվածության գրաֆիկը

Աշխատեք պատասխանել մեր գրույցի բոլոր հարցերին Ապագայում շատ անգամ հարկ կլինի, որ դուք ինքներդ կառուցեք տարբեր գրաֆիկներ Էլ ավելի հաճախ անհրաժեշտ կլինի պարզել, թե ինչ են պատմում ուրիշների կառուցած գրաֆիկները Չէ որ գրաֆիկներից օգտվում են թե բժիշկներն ու ինժեներները, թե գիտնականներն ու շինարարները, թե տնտեսա-

գետներն ու օդերևութաբանները, ինչպես նաև ուրիշ շատ ու շատ մասնագիտությունների տեր մարդիկ

Գրիգ Էդվարդ

1843 —
1907

Տղան ամբողջ օրը թափառում է ծովափին, մերթ ընդ մերթ հայացքը հառում երկինք Ամպերը նրան թվում են բարի աչքերով շիկամորուս հսկաներ, դիցալուշներ, խռիվ մազերով թզուկներ Երեկոյան նորվեգական Բերգեն հիևավուրց քաղաքի փողոցներում, քաղաք, ուր ծնվել ու մեծացել էր Էդվարդը, գազալպատերների թարթող լույսի մեջ տղան վերստին տեսնում է այն, ինչ չեն տեսնում մեծահասակները Նրա ականջներում շարունակ հնչում է բազմաձայն մի երգչախումբ, որը զարմանալի երգեր է երգում:

Մի առանձնահատուկ ձևով տեսնելու և լսելու, ամենասովորական բաների մեջ հրաշքներ գտնելու այդ ունակությունը նա կպահպանի երկար ու երկար, իր ողջ կյանքում: Շատ տարիներ անց այդ հրաշքները կենդանություն կառնեն նրա երաժշտության մեջ, որը կդառնա նրա հայրենի Նորվեգիայի և հարազատ ժողովրդի ձայնը: Էդվարդ Գրիգի անունն արագորեն կտարածվի շատ երկրներում Նրան կճա-



նաչեն եվրոպայում և Ամերիկայում նա բարեկամներ կգտնի նաև Ռուսաստանում
«Նրա երաժշտության մեջ կա մոտ հարազատ մի բան, որն անմիջապես ջերմ համակրական արձագանք է գտնում մեր սրտերում», — նրա մասին ասել է Պյոտր Իլյիչ Չայկովսկին:

Գրիգը նրա հետ ծանոթացել և մտերմացել է Գերմանիայում: Առհասարակ նա այնքան էլ չէր սիրում հեռանալ իր հայրենիքի սահմաններից Կյանքի վերջին քսան տարիներին նա գրեթե մշտապես ապրել է փոքրիկ, բլրաշատ Տրոլդհաուգենում, որը գտնվում էր հայրենի Բերգենի մերձակայքում

Բարձր ծառերը խիտ շրջապատել են փայտե տնակը: Ծովափից գալարվելով ձգվում է նեղլիկ մի արահետ որով դեպի տնակն են բարձրանում ձկնորսները, մոտակա սղոցարանի բանվորները, գյուղացիները Նրանք լուռ նստոտում են պատուհանների տակ և երաժշտություն լսում. Բաց պատուհաններից տարածվում է դաշնամուրի նվագը որ պատմում է հայրենի անտառների գեղեցկության, ծովի հեռուներում թևածող ազատաշունչ երգի, հյուսիսային ջինջ երկնքի մասին Երբ Գրիգը նվագում էր «Նորվեգական պարերը», մարդկանց թվում էր, թե նորից իրենց ջահել օրերի գեղջկական հարսանիքում են ահա գյուղի ջութակահարը հնչեցրեց առաջին ուրախ ակորդները, և մարդկանց վառ զգեստներն արդեն փայլկլտում են հնօրյա կրակոտ շուրջպարում

Գրիգի Տրոլդհաուգենի տունը հիմա էլ կա Տարբեր երկրներից շատ այցելուներ են գալիս այն տեսնելու: Չէ որ նրա երա

ժըշտությունը հուզում է ոչ միայն նորվեգացիներին, այլև բոլոր նրանց, ովքեր սիրում են իսկական, կենսունակ արվեստը բարի անպաճույճ, մարդկային:


Երբ ձմռանը ձյունը նստում է տան շուրջը եղած ծառերին և թավ գորգով ծածկում տանիքը, թվում է, թե արահետի ոլորանից այն կողմ մեծ եղևնու ետեվում թաքնվել են Գրիգի ստեղծագործությունների հերոսները: Ահա վիկինգները հյուսիսի դյուցազունները, որոնց խրոխտ քայլքը մենք լսում ենք նրա դաշնամուրային բալլադում, «Հուլբերգի ժամանակներից» սյուիտում: Թվում է նաև, թե սառցաշունչ օդում քարացել մնացել է քնքշալի ու թախծոտ, մեղմանուշ մի մեղեդի, որ ասես կանչ է կամ տրտունջ Սուլվեյգի Իբսենի «Պեր Գյունետ» պիեսի հերոսուհու, ձայնն է դա Այդ պիեսի համար Գրիգի գրած երաժշտությունը դուք դեռ բախտ կունենաք լսելու և կսիրեք: Դուք երբեք չեք մոռանա Սուլվեյգին Պերի հավատարիմ համբերատար մտերմուհուն, որն իր ողջ կյանքում սպասեց նրան

Գրիգոր Նարեկացի

951 —
1003

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հազարավոր ձեռագրերի հետ պահվում է 9861 թվահամարով մի մատյան որը գրվել է Աստրախան քաղաքում, 1837 թ.: Այդ ձեռագրում թվով 17 ավանդություններ ու գրույցներ կան Գրիգոր Նարեկացու մասին: Իսկ ակադեմիկոս Արամ Ղանալանյանն իր «Ավանդապատում» գրքում դրանց թիվը 24-ի է հասցրել: Այսքան շատ ավանդություն ու գրույց ոչ մեկի մասին չի ստեղծվել: Նարեկացու անունն են հիշեցնում նաև Հայաստանում և նրա սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ հիշարժան վայրեր, հուշարձաններ Նարեկացու քարերը Վասպուրականի Նարեկ, Հարզիդ գյուղերում և Նարեկա վանքի մոտակայքում, Նարեկացու աղոթատեղին Նարեկ գյուղի մոտ, Նարեկացու գիհի ծառը Ջևե գյուղում, Նարեկացու տունը Եվդոկիայում և այլն:

Ավանդություններն ու գրույցները պատմում են այն ջերմ սիրո ու վերաբերմունքի մասին, որ Գրիգոր Նարեկացին տածել է մարդու և ապրող ամեն արարածի նկատմամբ: Դրանցից մեկում կարդում ենք, որ Նարեկացին հովվություն է անում Հարզիդ գյուղի մեռած հովվի փոխարեն և ստացած



Գրիգոր Նարեկացի (մանրանը կար «Մատյանն ողբերգության» 1173 թ ձեռագրից, ծաղկող Գրիգոր Մլխ ճեցի)

վարձը տալիս նրա կնոջն ու որբացած երեխաներին:

Մեզանից հազար տարի առաջ ապրած մի բանաստեղծ է Գրիգոր Նարեկացին գողտրիկ տաղերի, «Մատյանն ողբերգության» հիասքանչ պոեմի և ուրիշ շատ

գործերի հեղինակ, որին դնում են աշխարհի հանճարեղ բանաստեղծների կողքին

Նա ծնվել է Հայաստանի Վասպուրական աշխարհի Նարեկ գյուղում (այստեղից էլ նրա Նարեկացի անունը) հոգևորականի ընտանիքում, սովորել Նարեկա վանքում (հին ժամանակներում ուսում միայն վանքերում էին ստանում), դարձել հոգևորական

Հայ ժողովուրդը սրբացրել է Գրիգոր Նարեկացուն, իսկ նրա «Մատյանն ողբերգության» պոեմը դարեր շարունակ կոչել է «Նարեկ» և այդ գրքին վերագրել հոգեկան ու մարմնական ցավեր բուժելու մեծ գորություն: Հովհաննես Թումանյանն այդ պոեմի մասին գրել է «Հայի լեզուն չի, որ խոսում է, բերանը չի, որ պատմում է, կրակված սիրտն է, որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»:

Նարեկացին իր քնարական պոեմով սեր, մարդասիրություն, բարություն, ազնվություն է սերմանում մարդկանց հոգում, կոչում աշխարհի բոլոր մարդկանց լինել բարի ու անաղարտ, սիրել ու օգնել միմյանց, ձգտել կատարելության Այս գաղափարները նա արտահայտել է հանճարի



Թատերական դիմակներ

երևակայությամբ և բանաստեղծական բարձրաթռիչ պատկերներով ու համեմատություններով: Մարդու հոգեկան ու մարմնական գեղեցկությունների և բնության հրաշալիքների նկարագրության մեջ Նարեկացու բանաստեղծական երևակայությունը սահմաններ չի ճանաչում և զարմանք ու ապշանք է հարուցում: Կար դացեք Նարեկացու տաղերից այս հատվածը և ինքներդ կհամոզվեք

Նոճիներն ու արոսենին նորաբողբոջ
Շրջում էին հեղով հուշիկ
Գվելով վարդ ու շուշանին
Շողշողում էր շուշանն հովտում
Շողում էր դեմն արեգակի:
Հյուսիսային հովն հեգասահ
Հովհարում էր գիրգ շուշանին
Հարավային լեռների գով
Օդն էր ցողում ջինջ շուշանին
Ու շուշանն է լցվում շաղով,
Շող շաղով ու շար մարգարտով

Գրիմ

Արտիստը պատրաստվում է բեմ ելնել նոր դերով Ջգեստն արդեն ընտրված է հիմա հարկավոր է «վերափոխել» դեմքը Արտիստը երկար տնտղելուց հետո իր համար կեղծած է ընտրում փորձում զանազան «ֆառոնների» բեղ կամ մորուք, կպցնում հատուկ պլաստիլինից սարքած քիթ ու բամբակե այտեր:

Ապա նա սկսում է ներկերով հարդարել դեմքը գրիմ անել («գրիմը» ֆրանսերեն բառ է որ նշանակում է «ներկել դեմքը»):

Սկզբում արտիստը (կամ էլ դիմա հարդարը) ամբողջ դեմքը պատում է «ընդհանուր երանգով» և այն դառնում է երիտասարդ կամ ծեր, գունատ կամ թուխ: Ապա ներկում է աչքերը շուրթերը, հոնքերը որպեսզի իր դեմքի արտահայտությունն օժտի գործող անձի բնավորության գծերով օրինակ, հպարտությամբ տխմարությամբ վեհանձնությամբ:

Նշանավոր երգիչ և արտիստ Ֆ Ի Շալյապինը Գունոյի «Ֆաուստ» օպերայում Մեֆիստոֆելի դերերգը կատարել է իր ստեղծագործական ողջ կյանքում Ըսկըզբում, քանի դեռ երիտասարդ էր, Շալյապինն այդ դերում դիմահարդարվում էր հանդիսատեսի համար սովորական «օպերային» սատանայի տեսքով: Տարիների հետ երգչի տաղանդն ավելի վառ էր դրսևորվում ավելի արտահայտիչ էին

դառնում նրա հերոսների նկարագրերը փոխվում էր և գրիմը Ի վերջո նրա Մեֆիստոֆելը հանդիսատեսի առջև կանգնեց որպես մարդու կերպարանք առած մի չար ոգի կեղծավոր և ահարկու

Արևելքի մի շարք թատրոններում դերասանները գրիմի փոխարեն պատրաստի դիմակներ են հագնում կամ էլ այդ դիմակները նկարում դեմքերին

Կրկեսի դերասանները նույնպես գրիմ են գործածում Հիշեք վառ շուրթերով և կարմրաշեկ կեղծամով զվարճասեր ծաղրածուներին կարմիր շպարի եռանկյունները ձյունաձերմակ այտերին: Այդ գրիմ-դիմակը հարուցում է հանդիսատեսի ծիծաղը և ավելի ևս զվարճալի դարձնում ծաղրածուներին

«Գրքի շաբաթ»

Ծանր ու տագնապալի 1943 թ մարտյան մռայլ մի օր էր Պատերազմ էր պարենը տրվում էր քարտերով, տանը վառելու բան չկար Այդ օրը Մոսկվայի Միությունների տան սյունազարդ դահլիճ էին հավաքվել հնամաշ շորերով, ծռմռված կոշիկներով ու կարկատած թաղիքե ոտնամաններով մոսկվացի պատանիներ ու աղջիկներ:

Ջահերի անսովոր պայծառ լույսից աչքերը կկոցած, նրանք լսում էին գրքերով իրենց քաջ ծանոթ գրողների ու բանաստեղծների ելույթները: Առաջին անգամ այսպես էր նշվում մանկական «գրքի շաբաթը»

Այդ օրվանից սկսած ամեն տարի, դրսևրոցականների գարնանային արձակուրդների ժամանակ, մանկագիրները մեկ շաբաթով մի կողմ են դնում իրենց ապագա գրքերի ձեռագրերը և հյուր լինում պիոներների ու դպրոցականների պալատներում, դպրոցներում, մանկական գրադարաններում, մեկնում ուրիշ գյուղեր ու քաղաքներ եվ ամենուր նրանց սպասում են երեխաները: Գրողներն ու բանաստեղծներն ընթերցում են իրենց ստեղծագործությունները, պատմում նոր գրքերի մասին: «Գրքի շաբաթ» առանձնապես հետաքրքրական է անցնում Մոսկվայի Միությունների տան սյունազարդ դահլիճում և Լենինյան բլուրներում գտնվող պիոներների պալատում Այնտեղ բացվում են նոր գրքերի ցուցահանդեսներ

«Գրքի շաբաթվա» օրերին երեխաներին հյուր են գալիս նաև երաժիշտներ ու արտիստներ Հայրենական մեծ պատերազմի հերոսներ ու գիտնականներ, գործարաններում ու դաշտերում աշխատող անվանի մարդիկ նրանք պատմում են իրենց կյանքի ու աշխատանքի մասին: Այդ օրերին կինոթատրոններում և թատրոններում ցուցադրվում են մանկական կինոնկարներ ու ներկայացումներ

Մանկական գրքի համամիութենական շաբաթը մեծ տոն է Սովետական Միության բոլոր երեխաների համար. նրանք նախապատրաստվում են ձգտում ավելի շատ գրքեր կարդալ շատ բան իմանալ սիրելի գրողի և հերոսի մասին Այս տոնից հետո գրքի հավատարիմ բարեկամների թիվն ավելի է շատանում Կարելի է ասել, որ «Գրքի շաբաթը» տևում է ամբողջ տարին որովհետև տարին բոլոր մենք անբաժան ենք գրքից


1982 թ մարտի 24 – 30 ը մանկական գրքի համամիութենական շաբաթն անց կացվեց Հայաստանում: Մեր հանրապետության մայրաքաղաք Երևանը հյուրընկալեց 15 հանրապետությունների անվանի մանկագիրների, Բուլղարիայից Չեխոսլովակիայից Հունգարիայից ժամանած գրողների: Շաբաթի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Ալ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքում Հյուրերն իրենց հայ գրչակիցների ուղեկցությամբ եղան Երևանում, Լենինականում Կիրովականում Հոկտեմբերյանում Աշտարակում և այլուր հանդիպումներ ունեցան իրենց փոքրիկ ընթերցողների հետ

Գրող Լև Կասիրի հանդիպումը պատանի ընթերցողների հետ մանկական գրքի շաբաթի ժամանակ



Գուլթան

Մեզանից դեռևս 6—7 հզ տարի առաջ մարդիկ հողը փորում էին փայտե բրիչներով Բայց երբ սկսեցին ընտելացնել վայրի կենդանիներին, ստեղծեցին նաև արորը Իսկ երբ կարողացան հալել ու կռել երկաթը, արդեն պատրաստեցին գուլթանը



Տրակտորային գուլթան

որը հիմնովին փոխեց մարդկային հասարակության տնտեսական կյանքը Գուլթանի խոփը մի քանի անգամ ավելի լայն էր ու երկար, և այդ պատճառով էլ նույն ժամա նակամիջոցում անհամեմատ ավելի շատ հող էր վարում, քան արորը, իսկ բրիչների ու բահերի մասին խոսելը նույնիսկ ավելորդ է: Գուլթանով հողը վարում էին ավելի խորը, լավ շուռ տալիս ու փխրեցնում որի հետևանքով էլ բերքը լինում էր առատ Լինելով ծանր ու բարդ գործիք՝ գուլթանը պահանջում էր ավելի շատ աշխատողներ Դրա համար էլ գարնանն ու աշնանը գուլթանն աշխատեցնում էին մի քանի հարևաններով բոլորի հողերը համատեղ վարելու համար Իսկ որպեսզի բոլորն էլ հասցնեին ժամանակին վարել իրենց հողերը, շատ դեպքերում գուլթանավարն ըսկըսում էին ծեփից առաջ երբ դեռ երկնքում երևում էին աստղերը և դադարեցնում միայն ուշ գիշերին: Գուլթանին սովորաբար լծում էին 4—12 լուծ եզ (շատ վայրերում էլ՝ ձի էշ ուղտ) որոնց քշում էին հոտաղները հիմնականում 12—15 տարեկան պատանիներ: Իսկ մաճով գուլթանին ուղղություն էր տալիս ակոսի միջով քալող մաճկալը Գուլթանավարի ժամանակ աշխատողները երգում էին հորովելներ որոնք շատ դեպքերում հորինվում էին տեղում. Հիշճում եք Կոմիտասի գրի առած հորովելները («Հուլ արա եզն...») Գուլթանի նշանակությունը ժողովրդի կյանքում այնքան մեծ էր, որ հնագույն շատ նկարներում և հուշարձանների վրա հաճախ

պատկերում էին գուլթան ստեղծում դրան նվիրված երգեր ու բանաստեղծություններ Հայաստանը այն երկրներից է, որտեղ ստեղծվել են առաջին գուլթանները:

Մեր օրերում օգտագործվում են տրակտորային գուլթաններ Հաճախ մեկ տրակտորին կցված են լինում հինգ, յոթ և նույնիսկ ութ գուլթան որոնց աշխատանքը կարգավորում է կցասարքի բանվորը: Տրակտորային գուլթանները հողը վարում են ավելի խոր և ավելի լայն մոտ մեկուկես մետրանոց շերտով: Այդ գուլթանները տարբեր տեսակի են և օգտագործվում են տարբեր նպատակներով Կան կախովի գուլթաններ որոնք անմիջապես կցված են տրակտորին Այս դեպքում գուլթանը անիվների և հենցի կարիք չունի բավական են և տրակտորինը Կցասարքի բանվոր էլ չի պահանջվում այն ղեկավարում է տրակտորավարը Դրանով մեքենան դառնում է առավել դյուրաշարժ և նույնիսկ քիչ վառելանյութ է ծախսում

Գուլիվեր

Այս բառը հաճախ կարելի է լսել երբ խոսք է լինում որևէ վիթխարահասակ մար



դու մասին «Իսկական հսկա է ոնց որ Գուլիվերը լինի»

Ամեն մի, նույնիսկ մեծահամբավ գրողի չէ, որ հաջողվում է ստեղծել այնպիսի հերոսի որի անունը դառնա հասարակ անուն: Այդպիսի հաջողություն ունեցավ անգլիացի երգիծաբան Ջոնաթան Սվիֆթը (1667 — 1745), երբ գրեց «Գուլիվերի ճանապարհորդությունը» Ի միջի այլոց, հսկայակերպ մարդկանց Գուլիվեր կոչելը ինչ-որ չափով պատահական է: Դրա պատճառն այն է, որ մարդկանց ամենից շատ դուր եկավ Գուլիվերի ճանապարհորդությունը թզուկների աշխարհում: Մինչդեռ Սվիֆթի գրքում պատմվում է թե դեպի իսկանների աշխարհը, թե Լապուտա թռչչող կղզին և թե զարմանահրաշ ձիերի հուհիընհընմների, երկիրը կատարած ճանապարհորդությունների մասին

Սվիֆթի այս մտացածին ու ֆանտաստիկ երկրներում Գուլիվերի արտասովոր արկածներն այնքան հրապուրիչ են որ երեք հարյուր տարի է արդեն, ինչ նրա գիրքը տարված կարդում են և երեխաները, և մեծերը Բայց Սվիֆթն այդ ամենը հորինել է բնավ էլ ոչ այն բանի համար, որ ընթերցողներին մի քիչ զվարճացնի նա ունեցել է նաև մեկ այլ, ավելի կարեվոր նպատակ Պատմելով օրինակ, Լիլիպուտիա երկրի մասին Սվիֆթը ծաղրել է Անգլիայի քաղաքական կարգերը

Իր գրքում Սվիֆթը ցանկացել է որքան հնարավոր է ցայտուն և համոզիչ ցույց տալ մարդկանց այն ժամանակվա կյանքի այլանդակ կողմերը, դրանք այնպես պատկերել, որ ծաղր ու արհամարհանք առաջացնեն:

Օրինակ, այն ժամանակներում թագավորներին ու կայսրերին հաճախ էին աստվածացնում ուռճացնում նրանց հզորությունը, ժպիտը համեմատում արևի զայրույթը շանթ ու որոտի հետ Իրականում թագավորը կամ կայսրը շատ սովորական մարդիկ էին, երբեմն նույնիսկ ողորմելի

Ահա մեր առջև է «Լիլիպուտիայի գեր հզոր արքան տիեզերքի ուրախությունն ու սարսափը միապետների միապետը մարդկության որդիներից մեծագույնը, որն իր կրունկով հենվում է երկրի կենտրոնին իսկ գլխով հավում արևին և իր տիրապե-

տությունը հասցրել է մինչև աշխարհի ծայրը..» Եվ պարզվում է, որ Գուլիվերը անգլիացի մանր հողատիրոջ որդին, կարող է գոռոզությամբ փքուն այս «նորին մեծությանը», իր ողջ արքունիքով, մինիստրներով ու զորապետներով հանդերձ հանգիստ փաթաթել թաշկինակի մեջ ու դնել բաճկոնի գրպանը

Գրականությունը հաճախ են համեմատում կյանքն արտացոլող հայելու հետ Սվիֆթի «Գուլիվերի ճանապարհորդությունը» գրքի նման գրքերը կարելի է համեմատել խոշորացույցի հետ

Բուրժուական աշխարհի այլանդակությունները Սվիֆթի ապրած ժամանակների հետ չանհետացան Ահա թե ինչու այս տաղանդավոր գիրքը այսօր էլ նույնքան սրամիտ է և արդիական, որքան այն հեռավոր տարիներին երբ գրվում էր

Գուլնդ


Ձեզ անշուշտ, լավ ծանոթ է կլորիկ ու ողորկ գուլնդը: Թե ձեռքիցդ բաց թողնես կգլորվի կգնա:

Գնդի ձև ունեն շատ մարմիններ ու առարկաներ որսորդական հրացանի փոքրիկ կլոր կոտորակներն ու հսկա գնդաձև աստղերը քաղցր ձմերուկներն ու գուլնըզգույն փուչիկները ապակե լուսամ փոփների անդորր սփռող գնդերը և անդորրը խախտող թնդանոթային ռումբերն ու ծովային ականները:

Քիչ խաղեր կան, որ առանց գնդերի են խաղում Գնդեր են վոլեյբոլի ֆուտբոլի ու բասկետբոլի մեծ սեղանի թենիսի թենիսի, բիլիարդի փոքր գնդակները

Միլիոնավոր մեծ ու փոքր մետաղե գընդիկներ են աշխատում գնդիկավոր առանցքակալներում: Նավթի ու այլ հեղուկների հսկայական պահեստարաններ (ռեզերվուարներ) կառուցելիս ամենաքիչ քանակությամբ մետաղ է ծախսվում եթե դրանք պատրաստում են գնդի ձևով Գնդաձև էր նաև երկրի սովետական առաջին արքան յակը:

Գնդի կենտրոնում մի շատ հետաքրքիր կետ կա որը հենց այդպես էլ անվանում են «գնդի կենտրոն»: Եթե կենտրոնից ուղիղ գծով ճանապարհորդության դուրս գանք, ապա, որ ուղղությամբ էլ շարժվենք, գնդի կենտրոնից մինչև նրա մակերևույթը եղած հեռավորությունը միշտ նույնը կլինի



գնդի կենտրոն

Այդ հեռավորությունն անվանում են գնդի շառավիղ. Փոքրիկ կոտորակների շառավիղը նույնպես փոքրիկ է իսկ վիթխարի *Լուսնի* շառավիղը 1737 կմ է

Հակադիր ուղղված, բայց նույն ուղղի վրա գտնվող երկու շառավիղներ կազմում են գնդի տրամագիծը որը միշտ երկու անգամ երկար է շառավիղից: Փորձեք ինքներդ չափել գնդակի տրամագիծը Տրամագիծը գտնելուց հետո հեշտ է որոշել նաև շառավիղը այն հավասար է տրամագծի կեսին

Որ մասում էլ գունդը կտրենք ու բաժանենք երկու մասի հատույթն անպայման շրջանի տեսք կունենա: Կտրեք ձմեռուկը և ինքներդ կհամոզվեք որ դա ճիշտ է

Ամենամեծ շրջանը կստացվի, եթե գունդը կտրենք նրա կենտրոնով: Այդ շրջանն ունի նույն շառավիղը ինչ և գունդը


Եթե մենք ունենայինք գնդի մեծ շրջանի չափերով գործվածքի չորս կտոր, ապա կկարողանայինք գնդի համար «հագուստ» կարել՝ գնդաձև մի պատյան ձիշտ է, դերձակը պետք է շատ հմուտ լիներ և հագուստն այնպես ձևեր որ գործվածքի ոչ մի ծեղ գուր չկորչեր. Հիշեցեք որ գնդի մակերևույթի մակերեսը ուղիղ չորս անգամ մեծ է նրա մեծ շրջանի մակերեսից:

Հիշեցեք նաև որ եթե 10 սմ շառավիղ ունեցող վոլեյբոլի գնդակի պատյանի մեջ լիքը ջուր լցնենք ապա այդ ջրի քանակությունը կկազմի 4 լիտրից քիչ ավելի: Բավական է գնդի շառավիղը մեծացնենք երկու անգամ և այնտեղ կտեղավորվի արդեն 8 անգամ ավելի հեղուկ իսկ ինչ եք կարծում որքան ջուր կարելի է լցնել 30 սմ տրամագիծ ունեցող գնդի մեջ:

Պարզվում է որ այն 27 անգամ ավելի շատ ջուր է տեղավորում քան մեր վոլեյբոլի գնդակի պատյանը:



ገጽ ፩ · ፳፭



ቲ

329	Դահուկներ	355	Դոմնա
330	Դանիա	357	Դոն Կիսոտ
330	Դանիելյան Հ. Բ.	359	Դպրոց
331	Դավիթ Անհաղթ	361	Դրամ
332	Դավիթ Բեկ	363	Դրոշ
334	Դարվին Չարլզ	363	Դրուժինա
335	Դափնեկիր	364	Դուրյան Պ. Ա.
336	Դելֆին		
337	Դեկաբրիստներ		
339	Դեկորատիվ արվեստ		
340	Դեկորացիա		
341	Դեղաբույսեր		
343	Դեղձենի		
344	Դեմիրճյան Դ. Կ.		
345	Դետեկտիվ		
346	Դիլիջան		
348	Դիմապատկեր		
350	Դիմիտրով Գ. Մ.		
351	Դիսպետչեր		
352	Դիրիժոր		
352	Դիքենս Չարլզ		
353	Դմիտրի Դոնսկոյ		
354	«Դյուլցագնական սիմֆոնիա»		
355	Դոդոշ		

Դահուկներ

Ընկերներին հղած նամակներից մեկում Վլադիմիր Իլիչ Լենինը հարցնում էր «... իսկ դահուկներով զբոսնում եք: Ան պատճառ զբոսնեցեք Սովորեցեք ձեռք բերեք դահուկներ և սլացեք լեռները ան պայման: Չմեռը լեռներում լավ է: Սքան չելի է...»:

Ով բարեկամանում է դահուկների հետ գիտե թե ինչպիսի մեծ հաճույք է ձյունա

պատ լանջերով սլանալը կամ դահուկադուրով անցնելն ու ձյունապատ անտառով հիանալը, կամ էլ դաշտի միջով արևի շոյող ճառագայթներին ընդառաջ վազելը: Եթե մտնեք մարզական խանութ այնտեղ կտեսնեք բազմաթիվ ու բազմազան դահուկներ նեղ ու լայն ծանր ու թեթև Ամենափոքրերը մանուկների համար են իսկ դպրոցականները պետք է ընտրեն տուրիստական կամ էլ մարզական դահուկներ:

Մրցարշավային դահուկներով հանդես



են գալիս առաջնակարգ մարզիկ դահուկորդները: Մրցարշավներն անց են կացվում լավ հարթեցված 3-ից մինչև 70 կմ մրցատարածությամբ դահուկադուրում

Սովետական դահուկորդները մեծ հաջողությունների են հասել, բազմիցս շահել աշխարհի առաջնությունը: Իսկ 1956 — 1984 թվականների ձմեռային օլիմպիական խաղերում նրանք նվաճել են 59 մեդալ, որից 22-ը ոսկե:

Առանձնահատուկ են լեռնադահուկային սպորտի դահուկները երեսպատված են գույնզգույն պլաստիկ նյութերով, ունեն մետաղե եզրակ, փայլուն փականքներ ու դահուկակապի զսպանակներ. Այդպիսի դահուկները նախատեսված են սլալոմի (այս բառը նորվեգերեն է և նշանակում է «ոլորապտույտ հետք սարալանջին») և տափանված ձյան վրայով լեռնային գըլ-

խապտույտ զառիթափերից սրընթաց վարսահքի համար:

Սլալոմի մրցումներն անց են կացվում կարճ (100—500 մ) բայց խիստ ուրապտույտ մրցուղով որը նշագծված է տասնյակ «դարպասներով»՝ միմյանցից 35—45 մ հեռավորությամբ զույգ առ զույգ տեղադրված կարմիր կապույտ կամ դեղին դրոշակներով Մարզիկը պարտավոր է անցնել բոլոր դարպասներով հա կառակ դեպքում նա դուրս է մնում մրցա պայքարից

Սրընթաց վարսահքի դեպքում դարպաս ները կրկնակի եռակի լայն են և համեմատաբար սակավաթիվ բայց մրցուղու երկարությունը մինչև 3 կմ է վարսահքի արագությունը այս մրցաձևում հասնում է ժամում 90 կմ-ի իսկ երբեմն նույնիսկ ավելի է լինում Լեռնադահուկային մրցումների երրորդ ձևը մինչև 1200 մ երկարության հսկա սլալոմն է

Ամենաճանրը դահուկացատկի դահուկներն են զույգը մինչև 9 կգ Դրանցով ցատկում են ոստնակից (տրամպլինից) Մարզահրապարակից մարզիկը կբանըստած սլանում է թափավազքի սարով և այնտեղ ուր այն ընդհատվում է սանդղավանդով (այդ տեղը կոչվում է «թռիչքաստղան») եռանդագին ետ է հրվում և թռչում միաժամանակ վերև ու առաջ ասես ճախրելով օդում

Թռիչքի ժամանակ անվեհեր մարզիկն ամբողջ մարմնով թեքվում է առաջ որի շնորհիվ փոքրանում է օդի դիմադրությունը, առաջանում է ամբարձիկ ուժ և նա թռչում է տասնյակ մետրեր: Թռիչքի երկարությունը որոշվում է լանջի վրա վայրէջքի տեղով և կախված է մարզիկի վարպետությունից ու ոստնակի չափերից: Հըսկայական ոստնակներից հնարավոր է կատարել 150 մ-ից ավելի հեռու ցատկ թռիչքներ

Լինում են նաև որսորդական (անտառային) դահուկներ որոնք նման են տուրիստականին բայց զգալիորեն ավելի լայն են: Իսկ հյուսիսային ժողովուրդների որսորդներն ու զանազան արշավախմբերի մասնակիցներն օգտագործում են քայլքի դահուկներ որովհետև նրանց երկար ճանապարհ է սպասվում խոր կուսական ձյունածածկույթի միջով Քայլքի դահուկները կրկնակի կարճ են սահքի դահուկներից և նման են թենիսի ձեռնաթիակների: փայտե ձվաձև օղագոտովրա ձգված է կաշեփոկի կամ պարանի ցանց

Դանիա

— տես Սկանդինավյան երկրներ

Դանիեյան Հայկանուշ Բաղդասարի

1893 —
1958

Հայ ազգային երգարվեստի մեծերից է Հայկանուշ Դանիեյանը իր կատարյալ հայկական երգելաձևով: Բնությունը Հայկանուշին օժտել էր արտակարգ գեղեցիկ թրթռուն հնչերանգ ունեցող հարուստ ձայնով որը հոգեպարար քնարականից կարող էր անցնել դրամատիկ հնչողության



1920 թ Հայկանուշ Դանիեյանն ավարտում է Պետրոգրադի կոնսերվատորիան ստանում ազատ արվեստագետի դիպլոմ և կոմպոզիտոր Անտոն Ռուբինշտեյնի անվան մրցանակ Կոնսերվատորիայի դիրեկտոր կոմպոզիտոր Գլազունովը դիպլոմը նրան հանձնելիս ասել է, որ կոնսերվատորիայի գոյության հիսուն տարիների ընթացքում նա առաջինն է որ վերցրել է այն ամենը ինչ կոնսերվատորիան կարող էր տալ:

Պետրոգրադյան տարիներին ստեղծագործական շփումը ռուսական երաժշտական մշակույթի հայտնի դեմքերի Գլազունովի, Լյադովի, Լյապունովի, ինչպես նաև այդ շրջանում Պետրոգրադում գտնվող հայ

երաժշտական գործիչներ, կոմպոզիտորներ Ռոմանոս Մելիքյանի, Անուշավան Տեր Ղևոնդյանի Սարգիս Բարխուդարյանի և այլոց հետ, մեծապես նպաստեց երգչուհու արվեստագիտական և գեղագիտական մտափորձի ընդարձակմանը

1923 թ Հայկանուշ Դանիելյանն ընդունվում է Թբիլիսիի օպերայի և բալետի պետական թատրոն ուր մարմնավորում է ռուսական, արևմտաեվրոպական, ինչպես նաև վրացական օպերային կերպարներ Թբիլիսիում իր ծավալած արտիստական գործունեությանը զուգընթաց, մեծ երգչուհին սերտ կապերի մեջ էր մշակույթի հայ կենտրոնների հետ 1932 թ նա տեղափոխվում է Սովետական Հայաստան եռանդուն կերպով մասնակցում էրևանում օպերայի և բալետի թատրոն հիմնադրելու աշխատանքներին:

Ամբողջ 15 տարի հայ հանդիսատեսը մեծ հափշտակությամբ ունկնդրում էր Հայկանուշ Դանիելյանի դերերգերը Ավելի քան քսան օպերային կերպարներ է մարմնավորել նա, որոնց շարքում, սակայն, անմոռաց պիտի մնա ազգային հոգու և նկարագրի տեր մեծ երգչուհու կերտած Անուշը Արմեն Տիգրանյանի համանուն օպերայում

Այս օպերայի վայելած համազգային համբավը սերտորեն կապված է Հայկանուշ Դանիելյանի և Սարոյի դերակատար Շարա Տալյանի անունների հետ: Իր իսկ երգչուհու խոստովանությամբ, նրա ողջ ստեղծագործական գործունեության մեջ «Անուշ» օպերան առանձնահատուկ տեղ է գրավում:

Բացի օպերային դերերգերից, մեծ երգչուհին կատարում էր հայ, ռուս, արևմտաեվրոպական կոմպոզիտորների մոտ 300 երգեր և ռոմանսներ նա հատկապես խոր ներշնչանքով էր երգում «Ծիծեռնակ», Կոմիտասի «Ալազյազ բարձր սարին», «Չինար ես», «Ծիրանի ծառ», «Քելե-քելե», «Քելեր-ցուլեր», «Էս առուս» երգերը Ա Սպենդիարյանի «Առ սիրուհիս», Ռ Մելիքյանի «Ան կաքավիկ» «Շափաղ կուտաս» ռոմանսները

1939 թ Հ Դանիելյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով և արժանացել ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհու բարձր կոչման:

Հայկանուշ Դանիելյանի հիշատակը հավերժացնելու համար նրա անունով է կոչվել Երևանի երաժշտական դպրոցներից մեկը

Դավիթ Անհաղթ

5 — 6-րդ դարեր

Վաղ միջնադարյան հայ ականավոր փիլիսոփա և գիտնական Դավիթ Անհաղթն ըստ ավանդության, ծնվել է Տարոն նահանգի Ներգին գյուղում Այդ պատճառով էլ գրականության մեջ նա հայտնի է նաև Դավիթ Ներգինացի անունով: «Անհաղթ» պատվավոր մականունը ստացել է գիտական վեճերում հաղթանակներ տանելու համար:

Գիտության հանդեպ ունեցած սերը երիտասարդ Դավթին բերել էր Ալեքսանդրիա քաղաքը որը հին աշխարհի խոշորագույն գիտական կենտրոններից էր, հունական մշակույթի լավագույն ավանդույթների պահապանը վաղ միջնադարում Այստեղ 6-րդ դարի առաջին կեսին, Դավիթը սովորել, իսկ հետո երկար տարիներ փիլիսոփայություն է դասավանդել իր շուրջը հավաքելով տարբեր երկրներից եկած աշակերտների: Փիլիսոփայական բանավեճերին մասնակցելու համար նրան հրավիրել են Աթենք և Կոստանդնուպոլիս, ուր նա միջտ փայլել է իր կուռ տրամաբանությամբ ու հոգետորական ձիրքով:

Մեծ հռչակ վայելող փիլիսոփան ծեր հասակում վերադառնում է Հայաստան նա ստեղծում է իր դպրոցը և ծավալում բեղմնավոր գիտական ու մանկավարժական գործունեություն Բազմաթիվ աշխատություններից, որ գրել է Դավիթ Անհաղթը, պահպանվել են միայն չորսը, այդ թվում նրա ամենակարևոր երկը «Սահմանք իմաստասիրության» («Փիլիսոփայության սահմանումները») նա առաջ է քաշում շատ հետաքրքիր հարցեր, որոնք այժմ էլ հուզում են փիլիսոփաներին և գիտնականներին: Օրինակ, Դավիթը քննում է ինչ է աշխարհը, ինչ օրինաչափություններ ունի այն, ինչ տեղ է գրավում մարդը Տիեզերքում և ինչպես նա պետք է ճանաչի աշխարհը, ինչպես պետք է օգտագործի իր մտավոր կարողությունները բնության գաղտնիքները բացահայտելու համար: Նա քննադատում է այն փիլիսոփաներին որոնք պնդում էին, թե իբր մարդն ի վիճակի չէ թափանցելու իրերի և երևույթների էության մեջ Դավիթն ապացուցում է, որ մարդու հինգ զգայարանները և բանականությունը լիովին բավարար են լուծելու համար բնության բոլոր առեղծվածները Բայց այդ նպատակին հասնելու համար մարդ պետք է տիրապետի ճանաչման տարբեր աստիճաններին, մտածողության օրենքներին



Դավիթ Անհաղթ (մանրանկար 13-րդ դարի ձեռագրից)



Այս ամենը մարդուն տալիս է փիլիսոփայական գիտությունը որը սովորեցնում է ճանաչել աշխարհը և իմանալ ճշմարտությունը

Բայց կատարելության հասնելու համար մարդ չի կարող բավարարվել միայն գիտելիքներ ձեռք բերելով և ճշմարտություններ կուտակելով: Նա պետք է կարողանա ճիշտ գործադրել դրանք կյանքում Դավիթ Անհաղթի համար մեծ կարևորություն ունի մարդու բարոյական նկարագիրը Կատարյալ մարդ կարող է համարվել միայն նա ով ձեռք բերած գիտելիքները կամ արվեստը զուգակցում է բարոյական բարձր հատկանիշների ազնվության բարության ընկերասիրության և խիզախության հետ

Մինչև Անհաղթը հայ փիլիսոփայության մեջ ոչ ոք մարդուն այդքան բարձր չի դասել

Նա գտնում է որ առաքինությունը ձեռքբերովի է Մարդը առաքինի չի ծնվում Նա կարող է ծնվել խարտյաշ աչքերով կամ ֆիզիկական այլ հատկանիշներով իսկ առաքինի է դառնում դաստիարակության և այլ միջոցներով: Լինել առաքինի նշանակում է լինել արդարամիտ

Դավիթ Անհաղթի առաջավոր գաղափարները լայն տարածում գտան Հայաստանում և նրա սահմաններից դուրս: Դասականագետացնում էր կրոնամոլ իշխանավորներին որոնք և սկսեցին հալածել իմաստուն փիլիսոփային Ըստ պահպան

ված գրավոր ավանդության, Դավիթ Անհաղթն ստիպված է լինում հեռանալ ասպարեզից և մեկուսանալ Հաղպատի հին մենաստանում, որտեղ և մահանում է: Բայց նրա թշնամիները չեն հասնում իրենց նպատակին: Դավիթ Անհաղթի հռչակը տարածվում է երկրով մեկ Նրա գրքերն անցնում են ձեռքից ձեռք, արտագրվում են բազմաթիվ օրինակներով իսկ գաղափարները ձեռք բերում հազարավոր հետևորդներ: Նրա գործը հաղթում է: Դավթի աճյունը մեծ շուքով տեղափոխում են հայրենի գավառը և որպես սուրբ մասունք թաղում Մուշ քաղաքի Առաքելոց վանքում: Նրա գերեզմանը դառնում է ուխտավայր: Դրանով ժողովուրդն իր հարգանքն ու երախտագիտությունն է հայտնում իր զավակին որն անձնվիրաբար ծառայեց հայ մշակույթի ու գիտության զարգացմանը:

Հետագա դարերի և հատկապես սովետահայ գիտնականների ուսումնասիրություններն ու Դավիթ Անհաղթի գործերի թարգմանությունները համընդհանուր ճանաչում բերեցին մեծ մտածողին

1980 թ Երևանում, Մոսկվայում, ինչպես նաև մեր երկրի ուրիշ քաղաքներում և արտասահմանյան տարբեր երկրներում մեծ շուքով նշվեց Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյակը:

Դավիթ Բեկ

Ծննդյան
թվականն
անհայտ
է — 1728

Հայ ժողովրդի բազմադարյան ազատագրական պայքարի ականավոր հերոսներից է Դավիթ Բեկը, նշանավոր զորավար, որը 1720-ական թվականներին գլխավորեց Սյունիքի ապստամբությունը պարսկական խաների ու թուրք նվաճողների դեմ հանուն հայրենիքի ազատության: Սյունյաց աշխարհը հայկական այն բազմամարդ շրջաններից էր որը, թեև գտնվում էր պարսից շահերի տիրապետության ներքո, կառավարվում էր հայ մելիքների (իշխան, կառավարիչ) կողմից խորախոր ձորերի, անտառապատ լեռների, լեռնային արագասահ գետակների այս երկիրը ըմբոստոզի և ազատասիրություն էր ներարկել իր զավակներին, որոնք փառքով պսակեցին իրենց անունը, երբ ուղի ելան հանուն հայրենի հողի ազատության 1722 թ Սյունիքում սկսված այդ ազատամարտերն էլ հենց գլխավորեց Դավիթ Բեկը: Պատմությունը շատ քիչ տեղեկություն

ներ է պահպանել հայ ժողովրդի այդ հեռու զավակի մասին և ա սյունեցի էր, ծառայության էր մտել վրաց Վախթանգ 6-րդ թագավորի բանակում և նրա ճանաչված զորավարներից էր:

1722 թ. տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որոնք ազդակ ծառայեցին Արցախի և Սյունիքի հայերին բարձրացնելու ազատագրական պայքարի դրոշ Պարսկական տիրապետության դեմ ապստամբել էին աֆղաններն ու գրավել նրա Սպահան մայրաքաղաքը Բացի դրա



Ռազմապետի արձանը Ղափան քաղաքում

նից, Կասպից ծովի ափին կանգնած էին Պետրոս Առաջին ռուսական ցարի զորքերը պատրաստ հարձակվելու Պարսկաստանի վրա Այս հանգամանքն անչափ ոգևորեց իրենց ազատագրական բաղձանքները Ռուսաստանի հետ կապած հայերին ու վրացիներին Ահա այդ պայմաններում էր, որ Ռազմապետը Վրաստանից հրավիրվեց Սյունիք համախմբելու տեղական ուժերը և կազմակերպելու ազատագրական պայքարը

Առաջին հերթին անհրաժեշտ էր երկիրն ազատագրել ավազակությամբ զբաղվող

օտար ցեղախմբերից Իր շուրջը համախմբվելով 400 հայ քաջերի Ռազմապետը Ուշթափալար կոչվող դաշտում ջախջախում է Կարաչոռու, ապա Ջիվանշիր ցեղերին Այդ հաղթանակները ընդհանուր ազատագրական պայքարի սկիզբը դարձան: Ամենուր ոտքի ելան հայ մելիքներն ու տանուտերերը և իրենց զորական ուժերով հավաքվեցին Ռազմապետի դրոշի ներքո Սյունիքում հայոց զորքի թիվը հասավ յոթ հազարի: Սկզբում Ռազմապետը նստավայրը Որոտան գետի ափին գտնվող Շինուհայր բերդն էր, իսկ 1724 թվականից Հալիձորը, որտեղ Ռազմապետը ամուր բերդ կառուցեց Մեծ հմտությամբ էր Ռազմապետը ղեկավարում ապստամբական շարժումը, պահանջում էր պահպանել խիստ կարգապահություն, անողոք էր դավաճանների ու երկչոտների նկատմամբ:


Տեսնելով Ռազմապետի առաջին հաջողությունները հարևան պարսից խաները զորք հանեցին ճնշելու Սյունիքի հայերի ազատագրական պայքարը, բայց Ռազմապետի զորապետներ Բայանդուրն ու Թորոս իշխանը 1723 թ ջարդեցին խանական զորքը, իսկ զորապետներ Մխիթար սպարապետը և Տեր Ավետիսը գրավեցին Ասլամազ-Ղուլի խանին պատկանող անառիկ Ջեյվա բերդը 1724 թ Ռազմապետի զորքը պաշարեց Որոտան բերդը, ապա հակառակորդի նկատմամբ փայլուն հաղթանակ տարավ Մեղրիի բերդի մոտ

Սակայն 1726 թ. Սյունիք ներխուժեցին թուրքական զորքերը: Հակառակորդի ներշնչած ահն ու սարսափն այնքան մեծ էին, որ գրեթե բոլորը լքեցին Ռազմապետին, և նա սակավաթիվ զինակիցներով փակվեց Հալիձորի բերդում Բեքիր փաշայի բազմահազար զորքը պաշարել էր բերդը: Յուր շարունակ Ռազմապետը իր փոքրաքանակ ուժերով ետ էր մղում թուրքերի հարձակումները: Յոթերորդ օրը, երբ մուսն արդեն ծածկել էր երկիրը, բացվեցին բերդի դարպասները, և Մխիթար սպարապետի ու Տեր Ավետիսի առաջնորդությամբ երեք հարյուր զինավառ քաջեր նետվեցին թուրքական բանակի վրա Ահաբեկված ու զարհուրած թշնամին գլխակորույս փախուստի դիմեց Սրան հետևեցին նորանոր հաղթանակներ, և Ռազմապետի դրոշը կրկին փողփողաց Սյունիքի վրա

Տեսնելով Ռազմապետի հաջողությունները թուրքերի դեմ վարած կռիվներում պարսից Թահմազ շահը նրան ճանաչեց որպես սյունյաց իշխան, ուղարկեց իշխանական պատվանշաններ ու դրոշ և շնոր-

հեց դրամ հատելու իրավունք: Դաշինքը Պարսկաստանի հետ Դավիթ Բեկին խրախուսեց ձեռնամուխ լինելու Արաքսի ամբողջ հովտի ազատագրմանը թուրքերից Բայց վերահաս մահը խիզախ զորավարին հնարավորություն չտվեց ավարտին հասցնելու ազատագրական այն մեծ գործը, որին նա նվիրաբերել էր իր կյանքը

Դավիթ Բեկի անունը հայ ժողովրդի համար դարձել է հանուն հայրենիքի ազատության մարտնչող հերոսի խորհրդանիշ: Ուֆֆու «Դավիթ Բեկ» պատմավեպից բացի, նրան է նվիրված նաև Ա Տիգրանյանի համանուն օպերան Դափան քաղաքում կանգնեցված է քաջարի զորավարի հուշարձանը



Դարվին Չարլզ

1809 –
1882

Չարլզ Դարվինը ապագա նշանավոր գիտնականը, ծնվել է Շրուսբերի անգլիական փոքրիկ քաղաքում Մանկուց նա սիրում էր թափառել դաշտերում ու անտառներում ուշադրությամբ զննում շքր ջապատող բնությունը: Իր դիտումները Չարլզը համեմատում էր գրքերում կարդացածի հետ Տղան հափշտակությամբ խեցիների, միներալների, թռչունների ձվերի հավաքածուներ էր կազմում: Հավաքածուի համար նա բնից վերցնում էր միայն մեկ ձու մնացածները թողնելով տեղում

1831 թ գարնանը Չարլզն ավարտեց Քեմբրիջի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետը սակայն հրաժարվեց քահանա դառնալ: Նրան հրապուրում էր միջատների և բույսերի ուսումնասիրումը: Պրոֆեսոր Գեյսլոյի երաշխավորությամբ Չարլզին վերցրին «Բիզլ» առագաստանավը, որն ուղևորվում էր շուրջ երկրյա ճանապարհորդության Դարվինի պարտականությունն էր նավարկության ընթացքում երկրաբանական կենդանաբանական և բուսաբանական հավաքածուներ կազմելը Հինգ տարի տևած այդ նավարկությունը նա գրավիչ և ճշմարտացի նկարագրել է «Շուրջերկրյա ճանապարհորդություն «Բիզլ» նավով» գրքում

Ճանապարհորդության ընթացքում Դարվինը շատ էր դիտում և մտորում: Նա եկավ այն հաստատ համոզման որ աշխարհը աստված չի ստեղծել, ինչպես կարծում էին շատերը, որ Երկրի վրա բույսերի և կենդանիների տարբեր տեսակ

ների առաջացման բացատրությունը պետք է փնտրել բուն բնության մեջ:

Տուն վերադառնալուց հետո Չարլզ Դարվինն սկսեց ջանասիրությամբ ժողովել իր միտքը հաստատող փաստեր Ուսումնասիրում էր ընտանի կենդանիներին, նորից ու նորից կարդում հարյուրավոր գրքեր ու բազմաթիվ քաղվածքներ անում: Այդ աշխատանքը տևեց երկար տարիներ: Եվ միայն 1859 թ նա լույս ընծայեց մի գիրք, ուր մանրամասն շարադրում էր իր տեսությունը

Ո՞րն է Դարվինի հայտնագործության էությունը

Մարդը իր տնտեսությունում օգտագործում է շատ բույսեր ու կենդանիներ, որոնք վայրի վիճակում գոյություն չունեն. Բայց անկասկած, անցյալում նրանք ունեցել են իրենց վայրի նախնիները: Բացի դրանից, մարդը բուծել է այդ բույսերի և կենդանիների բազմաթիվ նոր սորտեր ու ցեղեր Հիշեցեք, թե կաղամբի, խնձորենու, տանձենու քանի տարբեր սորտեր, շների, ոչխարների, կովերի, ձիերի քանի տարբեր ցեղեր գոյություն ունեն: Գիտնականներն այդ սորտերն ու ցեղերն ստացել են արհեստական ընտրությամբ:

Ենթադրենք, որ պետք է բուծել արագավազ ձիերի ցեղ: Արագավազ գույգ ձիերից ցեղի համար թողնում են ամենարագավազ մտրուկներին: Եվ այդպես, անընդհատ ընտրելով ամենալավ ձիերը, ի վերջո ստանում են հիանալի վազկանների ցեղը Դարվինը մտածեց գուցե, վայրի

Դափնեկիր

բնության մեջ էլ նոր տեսակներն առաջա
նում են ընտրությամբ Չէ որ կենդանիներն
ու բույսերը, սովորաբար, շատ մեծաքա-
նակ սերունդ են տալիս: Յուրաքանչյուր
ծառ ամեն տարի տալիս է բազմաթիվ
սերմեր բայց նրանցից շատ քչերն են
հայտնվում հարմար պայմանների մեջ ծի-
լեր տալիս և մեծ ծառեր դառնում Իսկ որոշ
ձկներ օրինակ միլիոններով ձկնկիթ են
դնում, բայց նրանց մեծ մասը ոչնչանում
է Ձկնկիթից դուրս եկած մատղաշներից էլ
հասուն վիճակի են հասնում անհատներ
միայն մնացածներին կամ գիշատիչներն
են խժռում կամ էլ նրանք ոչնչանում են
անբարենպաստ պայմաններից Կենդանի
է մնում ամենահարմարվողը ամենաուժե-
ղը ամենաճարպիկը Այսպես բնության
մեջ տեղի է ունենում այն բույսերի ու
կենդանիների ընտրությունը որոնք ավելի
լավ են հարմարված կյանքի որոշակի
պայմաններին Դարվինն այդ պրոցեսն
անվանեց բնական ընտրություն

Դարվինը մի հայտնագործություն էլ
արեց: Շատ վաղուց մարդիկ ուշադրու-
թյուն են դարձրել որ բոլոր բույսերն ու

կենդանիները խիստ նպատակահարմար
են կառուցված Ամեն մի առանձին օրգան
որևէ բանով օգտակար է ողջ օրգանիզմին
Եվ նրա կառուցվածքն օրգանիզմը հար-
մարվող է դարձնում կենդանու կամ բույսի
բնակության պայմաններին

Մինչև Դարվինը գիտնականները դա
բացատրում էին այն բանով որ աստված
նախօրոք նախատեսել է, թե ինչպես պետք
է կառուցված լինեն բույսերն ու կենդա-
նիները, որպեսզի կարողանան ապրել
իրենց համար նախասահմանված պայ-
մաններում Դարվինն ապացուցեց որ
եթե գոյության պայքարում կենդանի են
մնում ամենահարմարվող օրգանիզմները
ապա պետք է, որ նրանք անպայման նպա-
տակահարմար կառուցված լինեն: Բայց
կյանքի այլ պայմաններում այդ օրգա-
նիզմների կառուցվածքը կարող է դառնալ
աննպատակահարմար չհարմարվող, և
նրանք կոչնչանան իրենց տեղը զիջելով
ուրիշներին

Վ Ի Լենինը նշել է, որ Դարվինն առա-
ջին անգամ կենսաբանությունը դրեց մի-
անգամայն գիտական հողի վրա

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսից հայ
մտավորականները մեծ հետաքրքրություն
են ցուցաբերել Դարվինի ուսմունքի հան-
դեպ Նրա հիմնական գիտական աշխա-
տությունը առաջին անգամ հայերեն է
թարգմանվել 1936 թ

«Դափնեկիր» բառը ծագում է «դափ-
նի» բառից: Դափնին մշտադալար ծառ է
Հին հույներն ու հռոմեացիները հատուկ
մեծարանքի էին արժանացնում այն, որով-
հետև դափնին պոեզիայի և արվեստների
հովանավոր Ապոլլոն աստծու ծառն էր
Դափնու տերևներից հյուսած պսակով
պարգևատրում էին երաժշտական և մար-
զական մրցույթների հաղթողներին, եր-
գիչներին, ֆլեյտահարներին, մարմնա-
մարզիկներին Հռոմեացիները դափնե-
պսակ էին ընծայում թշնամիներին հաղ-
թած զորավարներին: Նրան, ում դափնե-
պսակ էին հանձնում անվանում էին
դափնեկիր

Հին Հայաստանում իրենց ստեղծագոր-
ծություններով աչքի ընկած բանաստեղծ-
ներին թարգմանիչներին ու այլ գործիչ
ների պարգևատրում էին ուռնու պսակ
ներով և նրանց անվանում պսակավոր

«Դափնեկիր» բառը նույն իմաստով գոր-
ծածվում է և այսօր: Մեր երկրում Սովե-
տական Միությունում, դափնեկիրը գեղար-

վեստական մրցույթի հաղթողը չէ միայն,
ասես, երաժիշտը, ասմուսը կամ բալե-
տի պարուհին: Դափնեկիր կարող է լինել և
բնության գաղտնիքների խորքերը թա-
փանցած գիտնականը, և նոր կառուցված
քի ավտոմոբիլ կամ ինքնաթիռ հորինած
ինժեները, և բանվորը, որի հմուտ ձեռքերն
ու հնարամտությունը մեքենային հարկա-
դրել են աշխատելու ավելի արագ, ճշգրիտ
ու հուսալի, և ռեկորդային բերք հավաքած
կոլտնտեսության ղեկավարը Դափնեկիր
կարող են լինել նաև գրողն ու կոմպոզի-
տորը, հետաքրքրական կինոնկարի բեմա-
դրիչը, պետական գործիչն ու արտիստը

Դափնեկրի վեհ կոչում են կրում նրանք,
ովքեր արժանանում են պետության ինչ
պես նաև գիտական կամ հասարակա-



կան կազմակերպությունների սահմանած բարձրագույն մրցանակին Դափնեկիրը նա է ով իր տաղանդով և աշխատանքով համաժողովրդական ճանաչման է արժանացել ու գնահատվել հատուկ պատվավոր պարգևով լինի դա գիտական հայտ նագործության թե նավթի արդյունահանման նոր եղանակ ստեղծելու, նախագծի թե գրքի քանդակի կինոնկարի թե դեղատարման համար

Սովետական Միությունում ամենապատվավորը լենինյան մրցանակն է Այն շնորհում են Սովետական Միության կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադրի Վլադիմիր Իլյիչ Լենինի ծննդյան օրը ապրիլի 22-ին առավել երևելի գիտական աշխատությունների, տեխնիկական կարևորագույն հայտ նագործությունների, գրականության և արվեստի ամենատաղանդավոր ստեղծագործությունների հեղինակներին կրեմ

լի պալատում հանդիսավոր պայմաններում, լենինյան մրցանակի դափնեկիրներին պարգևի հետ միասին հանձնում են նաև դիպլոմ և Լենինի պատկերով ոսկե մեդալ. Լենինյան մրցանակի արժանանալը մեծագույն պատիվ է

Պատվավոր պարգև է նաև ՍՍՀՄ պետական մրցանակը Աշխատավորների լավագույն գործերի համար պատվավոր պարգև է սահմանված նաև մեր հանրապետությունում շՍՍՀ պետական մրցանակը

Մրցանակներ են սահմանված կոմունիստական հասարակարգի այն երիտասարդ կառուցողների համար որոնք ցուցաբերում են աշխատանքային արիության և նախաձեռնության օրինակներ կամ հասնում ստեղծագործական մեծ նվաճումների. Դրանք կոմունիստական կուսակցության հավատարիմ օգնականի լենինյան կոմերիտմիության մրցանակներն են

Պատվավոր պարգևներից է «Ժողովուրդների միջև խաղաղության ամրապնդման համար» լենինյան միջազգային մրցանակը. Ամեն տարի այս մրցանակի դափնեկրի կոչում է շնորհվում տարբեր երկրների ներկայացուցիչների խաղաղության առավել համարձակ, իմաստուն եռանդուն մարտիկների գրողների գիտնականների, հասարակական գործիչների

Մրցանակներ են սահմանված նաև աշխարհի ուրիշ երկրներում. Ամենահայտնին միջազգային նոբելյան մրցանակն է որը տրվում է գիտնականներին, գրողներին, խաղաղության համար մարտնչող գործիչներին

Վաղուց ի վեր դելֆինների մասին գոյություն ունեն հեքիաթների նման զարմանահրաշ պատմություններ

Հունական լեգենդը պատմում է մի դելֆինի մասին, որն ամեն օր մի տղայի ծովածոցով տանում էր դպրոց ու ետ բերում: Մի անգամ տղան հիվանդացավ ու մահացավ Դելֆինը շարունակ սպասում էր նրան սովորական տեղում և մեռավ իր փոքրիկ բարեկամի կարոտից: Հույն պատմիչը պատմում է, որ դելֆինները ձկնորսներին օգնում էին ձկներն ուռկանների մեջ բռնել և դրա համար իբրև պարգև ստանում գինու մեջ թրջած հացի կտորներ

Պիլորուս Ջեյ անունով մի դելֆին Նոր Զելանդիայում, Օովակալության ծոցում, 30 տարի շարունակ ուղեկցում էր նավե-



Դեկաբրիստներ

րին, և նրա պաշտպանության համար հատուկ օրենք էր հրապարակվել

Դեկտեմբերը կաթնասուններ են և, չը նայած ապրում են ջրում օդ են շնչում: Սովորաբար դեկտեմբերն ապրում են վտառներով յուրաքանչյուրում 15—40 կենդանի: Երբ դեկտեմբերն օգնության է կանչում, ընկերները սրընթաց լողալով մոտենում են, բռնում նրան երկու ծայրից և պահում ջրի վրա որ նա կարողանա շնչել: Նույն կերպ նրանք օգնում են նաև խեղդվող մարդուն

Բաց օվկիանոսում դեկտեմբերը շատ հաճախ ուղեկցում են նավերին Վիթսարի արագությամբ ճեղքելով ալիքները, սլա նում են նրանց տորպեդանման, փայլուն ու ողորկ մարմինները. Հանկարծ այս ու այն տեղ, ասես, աննկատ մի ազդանշանով նրանք զույգերով, եռյակներով և ամբողջ խմբերով մեկ-երկու մետրով դուրս են ցատկում ջրից, ապա սահուն աղեղ գծելով դարձյալ մխրձվում են ջուրը, որպեսզի վայրկյան անց նորից դեպի վեր նետվեն

Դեկտեմբերը որսում են նույնիսկ թռչող ձկներին և արագաշարժ թյունիկներին Սնվում են նաև փափկամորթներով խեցգետնակերպերով նրանք լողում են ժամում մինչև 50 կմ արագությամբ

Մարդը բուրոսովին վերջերս է սկսել լրջորեն ուսումնասիրել դեկտեմբերին Մեր երկրում նրանց սպանելն արգելված է

Գիտնականները պարզել են որ դեկտեմբերն ավելի խելամիտ են բան կապիկներն ու շները:

Դեկտեմբերը միմյանց հետ հաղորդակցվում են սուլոցի և չպպոցի նմանվող ձայներով Դրանցից մի քանիսը մարդու ականջն ի վիճակի չէ զանազանելու Մինչդեռ դեկտեմբերը գերության մեջ փորձել են սովորել նմանակելու մարդկային խոսքը

Հաղորդակցվելով միմյանց հետ դեկտեմբերն արձակում են նաև ուլտրաձայներ, որոնք մենք չենք լսում Ուլտրաձայները դեկտեմբերին օգնում են հեշտությամբ կողմնորոշվելու շատ պղտոր ջրում և մթության մեջ զանազանելու, օրինակ, կենդանի ձկանը նույն չափի ու ձևի անկենդան առարկայից:

Դեկտեմբերն ապրում են խմբերով խոշոր դեկտեմբերի կյանքի տևողությունը 50 ավելի փոքրերինը՝ 30 տարի է

Դեկտեմբերը բարձր զարգացած էակներ են Այս բարյացակամ զվարճալի կենդանիները կարող են դառնալ մեր մեծ բարեկամները

1825 թ դեկտեմբերի 14-ին Պետերբուրգի Սենատի հրապարակում շարվել էին երեք գնդերի զինվորներն ու սպաները. Այդ օրը մայրաքաղաքի զորքերը հավատարմության երդում պետք է տային նոր ցար Նիկոլայ Առաջինին Բայց Սենատի հրապարակում շարված զինվորականները նոր ցարին երդում տալու փոխարեն նրանից սահմանադրություն պահանջեցին նրանք ցանկանում էին գյուղացիներին ազատել ճորտատիրական կախումից և ամեն մարդու ազատ լինելու իրավունք ընձեռել Ռուսաստանում այդպիսի օրենքներ չկային: Գյուղացիները լիովին կախման մեջ էին կալվածատերերից: Բոլոր նրանց, ովքեր պայքարում էին ցարական կարգերի դեմ մահապատժի էին ենթարկում բանտ նետում հետապնդում

Ապստամբները պահանջում էին նաև, որ ողջ Ռուսաստանում ընտրություններ անցկացվեն և որ ժողովրդի ընտրած լավագույն մարդիկ մասնակցեն երկրի կառավարմանը: Ապստամբության որոշ դեկավարներ նույնիսկ գտնում էին որ հարկավոր է տապալել ցարին և հանրապետություն ստեղծել

Նիկոլայ Առաջինը վախեցավ և գեներալ-նահանգապետ Միլորադովիչին ուղարկեց ապստամբներին համոզելու, որ ցրվեն. նրա հորդորները կարող էին դժվարացնել ապստամբության ընթացքը Եվ այդժամ ապստամբության մասնակիցներից մեկը Պ Գ Կախովսկին մահացու վիրավորեց գեներալին Ցարը հեծյալ զվարդիային հրամայեց հարձակվել Սենատի հրապարակում հավաքված զորքի վրա. Գրոհը ետ մղվեց Այնժամ ցարը հրամայեց թնդա նորներից կրակ բացել ապստամբների վրա Ապստամբները ցրվեցին, իսկ փողոցներում և Նալի սառույցների վրա մնացին սպանվածների դիակները:

Ապստամբության կազմակերպիչներին և մասնակիցներին անվանում են դեկաբրիստներ դեկտեմբեր (ռուսերեն декабрь) ամսվա անունով, երբ այն կատարվեց

Այդ նույն օրերին ապստամբություն տեղի ունեցավ նաև Ուկրաինայում: Այնտեղ Չեռնիգովյան գնդի վեց վաշտ գլխավորում էր սպա Ս Ի Մուրավյով-Ապոստոլը, բայց 1826 թ. հունվարի 3-ին նրան վիրավոր վիճակում գերի վերցրին, իսկ ջուրը ջարդեցին





Ապստամբություն Պետերբուրգի Սենատի հրապարակում 1825 թվականի դեկտեմբերի 14-ին Նկարիչ Կ. Ի Կոլմանի ջրանկարից

Պետերբուրգի ապստամբները Հյուսիսային ընկերություն կոչվող գաղտնի հեղափոխական կազմակերպության անդամներ էին, իսկ հարավի ապստամբները Հարավային ընկերության անդամներ Ապստամբության ջախջախումից հետո ոստիկանությունը երկու ընկերությունների անդամներին էլ ձերբակալեց:

Ովքեր էին դեկաբրիստները Մեծամասնությամբ սպաներ էին, որ կրթուտ սիրում էին ազատությունը և ատում ցարական իշխանությունը: 1812 թ նրանք մասնակցել էին Նապոլեոնի ջախջախմանը Բայց Եվրոպայից տուն վերադառնալով, նրանք իրենց երկրում տեսան նույն անգութ կարգերը: Պատերազմի մասնակից սպաներից բացի, գաղտնի ընկերությունների անդամներ դարձան Ռուսաստանի կրթված, խիզախ ու վճռական մարդկանցից շատերը: Նրանց շարքում էին բանաստեղծներ Կ Ֆ Ռիլենը, Ա Ի Օդոևսկին և Վ Կ Կյուխելբեկերը որոնք երիտասարդ տարիքի բերումով չէին մասնակցել 1812 թ պատերազմին, գրող Ալեքսանդր Բեստուժև-Մարկինսկին:


Ցարը դաժանորեն հաշվեհարդար տեսավ դեկաբրիստների հետ: Բանաստեղծ Կոնդրատի Ռիլենին, Հարավային ընկերության ղեկավար Պավել Պեստելին, Սերգեյ Մուրավյով-Ապոստոլին, Պյոտր Կա

խովսկուն և դեռ բլորոպին երիտասարդ Միխայիլ Բեստուժև-Ռյումինին կախաղան բարձրացրին Ապստամբության շատ մասնակիցների աքսորեցին Սիբիր տաժանակրության Որոշ սպաների աստիճանագրեցին և որպես շարքային զինվոր ուղարկեցին Կովկաս, ուր այդ ժամանակ պատերազմ էր գնում

Կովկաս աքսորված դեկաբրիստներից շատերը եղան Հայաստանում և ակտիվորեն մասնակցեցին Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու, ինչպես նաև հայկական մի շարք բաղաձեռնի ու բերդերի համար մղված մարտերին Նրանց մեջ էին Ն Դեպրերադովիչը, Ա , Պ և Պ Բեստուժև եղբայրները, Ի Բուրցովը, Ե Լաչինովը, Պ Լեմանը, Պ և Ի Կոնովնիցին եղբայրները, Մ Պուշչինը և շատ ուրիշներ: Կովկասյան բանակում ծառայող դեկաբրիստների ոգևորության և հերոսական գործերի աղբյուրը նրանց առաջավոր գաղափարներն էին, ազգերի հավասարության, նրանց իրավունքների ճանաչման սկզբունքները Նրանց համար շատ հասկանալի էր Անդրկովկասի ժողովուրդների պայքարը պարսիկ և թուրք կեղեքիչների դեմ:

Դեկաբրիստները ծանոթ են եղել և բարեկամական կապեր են հաստատել մի շարք հայ գործիչների Հարություն Ալամ-

դարյանի, Ներսես Աշտարակեցու Բարսեղ Բեհբուժովի, Վալերիան Մաղաթովի, Լազար Լազարևի և ուրիշների հետ: Տարիներ շարունակ գտնվելով Անդրկովկասում, դեկաբրիստները շփվել են տեղի բնակիչների հետ, մոտիկից ծանոթացել նրանց կյանքին ու կենցաղին: Ա Բեստուժն Մարլինսկին Ե Լաչինովը, Ս Գլինկան և ուրիշ դեկաբրիստներ արժեքավոր ու բազմակողմանի տեղեկություններ են թողել երկրամասի և մասնավորապես, Հայաստանի տնտեսական կյանքի, ժողովրդի նիստուկացի, ավանդույթների մասին: Դեկաբրիստները խորացրին և նոր աստիճանի բարձրացրին ռուս և հայ ժողովուրդների շարավոր բարեկամությունը



Պուշկինն իր դեկաբրիստ ընկերներին շատ բանաստեղծություններ է ձոնել, այդ թվում և հանրահայտ «Դեպի Սիբիր» ուղերձը

*Օձակա
պերտ (Սե
բաստիա
19 թղ դար)*

Հպարտ ապրեցեք, ով աքսորյալներ
Խավար հանքերում հեռու Սիբիրի
Չի կորչի իզուր աշխատանքը ձեր
Ու ձգտումները ձեր վեհ մտքերի:

Դեկաբրիստ բանաստեղծ Ա Ի Օդոևսկին տաժանավայրից այսպես է պատասխանել Ա Ս Պուշկինին

Չի կորչի իզուր աշխատանքը մեր
Կայծից բոց կբռնկի

Ռուսաստանի լավագույն մարդիկ սըրբությամբ էին մեծարում դեկաբրիստների հիշատակը: «Կայծից բոց կբռնկի...» տողը դարձավ լենինյան «Իսկրա» թերթի բնաբանը

Վ Ի Լենինը, գնահատելով դեկաբրիստների ապստամբությունը, նշել է, որ նրանք կարևոր դեր են կատարել Ռուսաստանում հեղափոխական շարժման զարգացման գործում:

Դեկաբրիստների մասին ավելի մանրամասն դուք կարող եք կարդալ հետևյալ գրքում
Алексеев С. П., Декабристы М «Дет лят» 1969

Դեկորատիվ արվեստ

Անդերսենի մի հեքիաթում կախարդուհին բանաստեղծին է տալիս իր ակնոցն ու լսափողը, և բանաստեղծին շրջապատող բոլոր իրերը կենդանանում են ու սկսում խոսել

Եթե ամենասովորական, գրեթե չնկատվող իրերին գավաթին, աթոռին, հագուստին, դիպչի վարպետ նկարչի կախարդական ձեռքը, նրանք նույնպես «կսկսեն խոսել», սակայն առանձնահատուկ մի լեզվով՝ գեղեցկի լեզվով

Ցանկացած նյութ գեղեցիկ է, բայց նրա գեղեցկությունը միանգամից չէ, որ երևան է գալիս Կավի անմշակ, գորշ կտորը ուշադրության չես արժանացնի, բայց, այ, օրինակ, հայ բրուտի հմուտ ձեռքով այդ փափուկ, դյուրաբեկ նյութից ծնունդ են առնում զարդարուն, ասես անզգուշորեն վառ ջնարակով ցողված գավաթներ, սկա հակներ, սափորներ:




*Արագիլի
պատկերով
թաս (Դվին
13 թղ դար)*

Անտառին հատուկ խեժահոտ բուրող սոճու բունը մարդու ձեռքով նորից կենդանություն է առնում. Բոգորոդսկցի վարպետ-խաղալիքագործը, բնի վրայից փրփրանման տաշեղ հանելով, ասես մաքրում բացում է գեղեցկահյուս մանրաթելերի թաքնված նախշը, մուգ ոստերի խայ-



Դիմկովյան կավե ծեփածո խաղալիք



Խառատալին հաստոցով պատրաստված խաղալիքներ

տերն ու պուտերը, որոնցից աչք չես կտրում.

Ջարմանալի գեղեցիկ են ուռնու ճկուն շիվերից հյուսված զամբյուղները: Բամբուկահյուս ճապոնական զամբյուղներն իրենց ուրվագծով դեպի ափ վազող թեթևասահ ալիքներ են հիշեցնում: Ճապոնացիներն այդպես էլ անվանում են դրանք «ալիքներ»:

Երկաթն ամենևին էլ կոպիտ նյութ չէ, ինչպես թվում է առաջին հայացքից: Նրա «հոգին» կարողացել են հասկանալ դարբինները, որոնք գեղեցիկ աշտանակներ են կռում և կաղնե դռների հիասքանչ նախշազարդեր

Ասիայում բրդե խիտ գորգերը փոխարինում էին ոչ միայն կահույքին ու պաս-

տառին Գորգագործ վարպետը նրա նախշերով երբեմն մարմնավորում էր իր երազանքը: Այդ վառ գույներն ու նախշերը կախարդական հեքիաթների, խայտաբղետ հարավային շուկաների, երկնքի շացուցիչ կապույտի, շատրվաններով և պալատներով ծաղկուն այգիների պատրանք են ստեղծում:

Մեծ համբավ ունեն, օրինակ, Թուրքմենիայի գորգերը


Հապա վոլոգոացի և կիրովցի ժանեկագործուհիների, լաբե մանրանկարչության պալեխյան վարպետների, խոլմոգորցի ոսկրափորագրիչների, ուզբեկ քարափորագորդների, վրացի դրվագողների աշխատանքները: Նրանց արվեստը բոլորին է հիացնում:

Համաշխարհային դեկորատիվ արվեստի գանձարանում մեծ է հայ վարպետների ավանդը: Հայկական գորգերը, ժանյակները, կարպետները, ասեղնագործ կտորեղենը, տարազի տարատեսակները, խեցեղենը, փայտի գեղարվեստական մշակումը վկայում են, որ արվեստի այդ ճյուղը Հայաստանում զարգացած է եղել դեռ շատ հնում. Հապա հայկական հինավուրց խաչքարերի զարդանախշերը, որ ամենանուրբ ժանյակներ լինեն ասես

Մարդիկ դեռևս խոր անցյալում էին կարողանում գեղեցիկ պատրաստել կյանքի ու աշխատանքի համար անհրաժեշտ առարկաները Բայց ժամանակի հետ փոփոխվում էին նաև մարդկանց ճաշակն ու պահանջները Եվ այսօր երբեմն մեկ առարկայով սկահակով կամ հին բազկաթոռով, մասնագետները որոշում են, թե այս կամ այն ժամանակաշրջանում մարդիկ ինչպես էին հագնվում, ինչ զարդեր էին կրում, ինչպիսի շենքեր կառուցում՝ Եվ այսպես, դեկորատիվ արվեստը ամանեղենի և կահույքի, այգու ցանկապատերի և տների երեսպատման, հագուստի և ոսկերչական իրերի և, նույնիսկ, մեքենաների գեղարվեստական ձևավորումն է Արվեստագետի ձեռքն ամենասովորական իրը կարող է վերածել արվեստի գեղեցիկ ստեղծագործության

Դեկորացիա

Բացվում է թատրոնի բեմի վարագույրը, և դուք տեսնում եք ծաղիկներ, ծառեր, մի տնակ, իսկ հեռվում լեռնազագաթներ, երկինք ու ամպեր Այդ ամենն, իհարկե,



իսկական չեն, այլ դեկորացիա են, դեկորներ (լատիներեն «դեկոր» բառից, որ նշանակում է «զարդարում են»)

Բեմի խորքում մի հսկայական յուզանկար կա, որ նկարված է կոշտ քաթանի վրա: Դա ետնավարագույրն է՝ Նրա և բեմի առջևի մասի բեմեզրի, միջև տեղավորում են կախովի դեկորները՝ վերնադեկորները: Դրանք կարող են պատրաստված լինել նրբատախտակից և պատկերել ծառեր, ժայռեր, սյուներ, տների պատեր: Բեմի վրա կարող է լինել նաև գրեթե իսկական տուն սանդուղքով, դռներով, պատշգամբով: Դա ճարտարապետական դեկոր է

Դեկորները, եթե, նույնիսկ, շատ բարդ են ու խոշոր, փոխում են արագ, մի քանի րոպեում, ներկայացման արարների ընդմիջումների ժամանակ ետնավարագույրն ու վերնադեկորները բարձրացվում են վեր կամ իջեցվում ներքև, ճարտարապետական դեկորները մի կողմ են տարվում, իսկ նրանց տեղում հայտնվում են նորերը: Այս ամենն անում են հատուկ մեխանիզմները

Բեմում դուք կարող եք տեսնել լուսնի լույս, արևածագ, կայծակի փայլատակում, հնօրյա լապտերների մեղմ թարթում: Այդ և ուրիշ լուսային տպավորությունները ձեռք են բերվում լուսավորող բազմաթիվ սարքերի օգնությամբ:

Թատրոնը գոյություն ունի շատ վաղուց Բայց տարբեր ժամանակներում ու տարբեր ժողովուրդների թատրոնի բեմը տարբեր տեսք է ունեցել. եղել են բեմեր, որ չեն ունեցել ոչ դեկորներ, ոչ վարագույր, ոչ էլ հատուկ լուսավորություն: Դերասաններն իրենք են իրենց խաղով ցուցադրել, թե որտեղ են գտնվում անտառում, պալատում թե ալիքներին օրորվող նավակում Կամ էլ գործողության վայրը պայմանականորեն նշվել է որևէ առարկայով: Որոշ թատրոններ ունեցել են մշտական դեկորացիա որը չի փոխվել, ինչ թատերախաղ էլ որ ներկայացվել է: Ավելի ուշ երևան եկան փոխարինվող դեկորներն ու թատերական բարդ մեքենաները, որոնք ուղղակի հանդիսատեսի աչքի առջև փոխում էին գործողության վայրը. հյուսիսը վեր էին ածում պալատի անապատը ծաղկուն այգու, պատկերում փոթորիկ կամ երկրաշարժ

Ժամանակակից թատրոններում օգտագործում են բեմի ձևավորման այն բոլոր ամենահետաքրքիր ու ամենաարտահայտիչ միջոցները, որ թատրոնի երկարատև պատմության ընթացքում ստեղծել են բեմանկարիչներն ու թատերական մեքենավարները: Երբեմն էլ դերասանները խաղում են առանց դեկորների բեմում, ինչպես *Շեքսպիրի* թատրոնում էր

Դեղաբույսեր

Բոլորն էլ, մարդ լինի, թե կենդանի, կարող են հիվանդանալ: Բայց ո՞վ է դեղատոմս գրում վայրի գազանի համար: Հիվանդ գազանն ինքն է իրեն բուժում անտառային դեղատանը, հոտառությամբ և կռահելով գտնելով այն բույսը, որը կարող է դարմանել իրեն

Դեռևս հին ժամանակներում Հարավային *Ամերիկայի* հնդկացիները նկատել էին, որ հիվանդ կատվառյուծները (պումաները) ինչ-որ ծառի կեղև են կրծում: Հընդկացիները փորձեցին այդ ծառի կեղևի եփուկով բուժել ճահճատենդով տառապող մարդկանց: Դեղն օգնեց Այդպես հայտնաբերվեց քինածառը (ծառն այդպես անվանեցին Հարավային Ամերիկյան նվաճող իսպանացիները) Նրա կեղևից ստացվող քինինը դարձավ մալարիայի դեմ հանրահայտ դեղամիջոց

Մեր ժամանակներում ևս կենդանին, այս անգամ արդեն մարալը, սովետական



Դեղաբույսերը մարդկանց օգնում են պայթարելու հիվանդությունների դեմ 1 հովտաշուշան և նրա պտուղները 2 ժենշեն և նրա արմատը 3 կատվախոտ և նրա արմատը 4 սրտիունդ 5 անանուխ 6 կատվալեզու 7 հազարաուտ բևույ

գիտնականներին օգնեց գտնելու նոր դեղաբույս եղջրարմատը Աշնանը, ախոյանների հետ մարտի պատրաստվելով, եղջրուներն ուտում են այդ բույսի արմատները Պարզվեց, որ եղջրարմատն ուժ է տալիս նաև մարդուն

Բայց մարդը միշտ չէ, որ գազանի հետքերով է գնացել, նա ինքն էլ է դեղաբույսեր փնտրել ու գտել

Այդ որոնումներն ու հայտնագործություններն սկիզբ են առել հազարավոր տարիներ առաջ: Հին եգիպտոսում սահմանված էր, որ թե՛ հիվանդ և թե՛ առողջ

մարդիկ ամեն ամսվա երրորդ օրը գերչակաձեթ (լուծողական) խմեին:

Հին Հունաստանի քաղաքներից մեկը հայտնի էր նրանով, որ այնտեղ բուժում էին անքնությունը Բավական էր խմել նրա բնակիչների պատրաստած կակաչի թուրմը, և հիվանդն արդեն քնում էր. Հաջորդ առավոտ հիվանդը գնում էր երկրագործության աստվածուհու տաճարը, որի քրմերը կակաչի պսակներ էին կրում: Նա գնում էր իր երախտագիտությունը հայտնելու աստվածուհուն, որը մարդկանց նվիրել էր քուն պարգևող և ցավամոքիչ այդ ծաղիկը

Երբեմն էլ դեղաբույսերը փորձելը թանկ էր նստում մարդուն: Եթե եզան լեզվի (ջղախոտի) տերևները բուժում էին հարված ոտքը, ապա եղինջի տերևները դադում էին: Կիտրոնաթփի մի բուռ հատա-

պտուղ ուտելուց հետո որսորդը կարող էր ամբողջ օրն առանց հոգնելու հետապըն դել գազանին, իսկ բանգիի պտուղներ «ճաշակած» մարդը խելագարի նման ջղաձգվում էր ու զառանցում:

Ավանդությունը պատմում է, որ դեղորայքային թունավոր մահամորմը (շիկատակը) շոտլանդական մի գյուղի բնակիչներին օգնել է փրկվելու թշնամիներից Գյուղը գրաված դանիացի զինվորները ի նշան հաղթանակի գարեջուր են խմել և հաղթողներից վերածվել պարտվածների Դանիացի զինվորներին կաթվածահար էր արել մահամորմի թունավոր հյուսքը, որ շոտլանդացիները խառնել էին գարեջրին:

Բույսերի մեջ թաքնված ուժը հնում մարդկանց մոգական, կախարդական էր թվում նրանց տգիտության պատճառով նրանք հավատում էին, թե կան այնպիսի խոտեր, որ կարող են ցույց տալ թաքցրած գանձի տեղը, վնասել հիշողությունը, սիրելի դարձնել չսիրած մարդուն: Շատ լեգենդներ են հյուսվել *ժենշենի* և մանդրագորայի (մարդախոտի) փոքրիկ մարդուկների նմանվող արմատների մասին. Հրաջք էր թվում, որ ժենշենի արմատը կենսահյութով է լցնում տկարացած, հոգնած մարդու մարմինը: Ժամանակի ընթացքում գիտությունը կարողացավ բացատրել, թե ինչու է այս կամ այն բույսը մեզ բուժում, և անհավանական հնարովի պատմությունները հողմացրիվ եղան:

Այսօր էլ բազմաթիվ դեղաբույսեր օգտագործվում են բժշկության մեջ, ծառայում մարդկանց Գիտության նվաճումների շնորհիվ մարդը կարողացել է մանրամասն ուսումնասիրել բույսերի քիմիական բաղադրությունը և նոր հայտնագործություններ արել: Բաղնիքի բորբոս կոչված սընկից այսօր պատրաստում են պենիցիլին դեղը:

Որոշ դեղաբույսեր մշակում են պլանտացիաներում օրինակ, անանուխը որի համն առավոտյան զգում է ամեն ոք, ով չի ծուլանում լվանալ ատամները: Ատամի փոշուն դուրալի համ ու հոտ և թարմացնող հատկություն է տալիս մենթոլը անանուխի յուղի հիմնական մասը: Մենթոլ կա վալիդոլի և սրտային ու ցավամոքիչ այլ դեղերում անանուխաբլիթներում, անանուխի կարամելում այս վերջինը տեղ է զբաղեցրել նաև տիեզերագնացների օրապահիկի մեջ:

Սովետական Միությունը հարուստ է նաև վարի դեղաբույսերով Անտառում

օրինակ աճում է հովտաշուշան որից դեղ են պատրաստում հիվանդ սրտի համար, բացատներում և խոնավ մարգագետիններում կատվախոտ, որն ունի հանգրտացնող ազդեցություն: Մարգագետնում ամեն քայլափոխի կհանդիպես որևէ դեղաբույսի ահա սա սրոհունդ է (արևքուրիկ), որի մասին ժողովուրդն ասում է, թե 95 հիվանդություն է բուժում, սա արջականջ է, սա արյունխմիկ, հազարատերվուկ, բոգ (օձի դեղ), կղմուխ (ձվախոտ)

Երեխաներ, դուք ևս կարող եք մարդկանց օգտակար շատ դեղաբույսեր հավաքել:

Դեղահումքը հավաքում են լավ եղանակին երբ ցողն արդեն գուրջիացած է լինում Պետք է հիշել որ շատ բույսեր թունավոր են, դրա համար էլ չի կարելի դրանք բերանը տանել կամ բույսերը հավաքելու ժամանակ ձեռքերը հպել աչքերին: Հավաքել վերջացնելուց հետո ձեռքերը պետք է խնամքով լվանալ:

Չի կարելի հավաքել աղտոտված և հիվանդ բույսերը Շրջանային դեղատանը ձեզ մանրակրկիտ կպատմեն թե ինչ, երբ և ինչպես հավաքեք:

Դեղախոտեր հավաքելիս միշտ անհրաժեշտ է նրանց մի մասն անձեռնմխելի թողնել, որպեսզի այդ արժեքավոր բույսերը պահպանվեն նաև ապագայի համար:

Բույսերի բուժիչ հատկությունների մասին հայ իրականության մեջ առաջին գրավոր վկայությունն արել է դեռևս 5-րդ դարի հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացին, իսկ դրանք որպես դեղամիջոց օգտագործել են *Մխիթար Հերացին* և միջնադարի հայ բնագետ-բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացին:

Դեղձենի

Մեր հանրապետության ցածրադիր շրջանների այգիներում գարնանը *ծիրանենիների* նշենիների ու խնձորենիների առատ սպիտակ ծաղիկների մեջ անմիջապես աչքի են զարնում դեղձենու վարդագույն ծաղիկները:

Ենթադրվում է որ դեղձենին չինական բույս է, որն, իբր, շատ հնում բերվել է Մերձավոր Արևելք, այդ թվում Պարսկաստան, այստեղից էլ տարվել Եվրոպա: Եվրոպացիներին շատ դուր եկավ «պարսկական սալորը» (այդպես նրանք անվանեցին նորահայտ բույսը, համարելով, թե



նրա հայրենիքը Պարսկաստանն է) որն արագորեն տարածվեց Միջերկրական ծովի ափամերձ շրջաններում: Հետագայում միայն պարզվեց որ դեղձենին պարսկական բույս չէ, սակայն նրա գիտական անվանումը «պերսիկա», մնաց անփոփոխ:

Հայաստանի տարածքում կատարված հնագիտական պեղումներից պարզվել է նաև որ դեղձենին այնտեղ տարածված է եղել վաղ անցյալում հնարավոր է, նույնիսկ Չինաստանից ու Պարսկաստանից շատ առաջ: Կարմիր բլուրում և Արցախում օրինակ հայտնաբերվել են 3000-ից մինչև 6000 տարվա հնության դեղձի կորիզներ: Բացի դրանից Հայաստանի անտառներում աճում են դեղձենու որոշ վայրի տեսակներ իսկ մշակվողների շարքերում կան շատ արժեքավոր սորտեր: Նարընջի, զաֆրանի, կիտրոնի սալամի շերտավոր լոճ սորտերը աշխարհում մը շակվող լավագույն դեղձենիներից են: Մեր հանրապետությունում տարածված են նաև քաղցրակորիզ դեղձենու մի շարք տեսակներ որոնք ոչ մի այլ երկրում չեն հանդիպում: Կարելի է հավանաբար ասել որ Հայաստանը դեղձենու մշակության հին և ինքնուրույն բնօրրաններից է:

Դեղձենին 3—5 մ (երբեմն 8 մ) բարձրությամբ փոքր ծառ է տարածված ճյուղերով, լայն սաղարթով: Տերևները երկարավուն-նշտարաձև են: Դեղձենին ապրում է ընդամենը 10—15 տարի:

Դեղձենու համեղ ու սննդարար պտուղները հասունանում են մայիսից սկսած

մինչև նոյեմբերի կեսերը: Նշանակում է, եթե մենք ճիշտ ընտրենք մշակվող սորտերը ապա մայիսից մինչև նոյեմբեր մեր սեղաններին թարմ դեղձ կունենանք: Դեղձենու այգու մեկ հեկտարից ստացվում է 20—40 տ բերք: Պտուղներն օգտագործվում են թարմ և պահածոյացված վիճակում: Սրանցից պատրաստում են չիրալանի (Հայաստանում) կոմպոտներ, մուրաբաներ, հյութեր, ժելե, ջեմ, պովիլդո և այլն: Կորիզներն օգտագործվում են քիմիական արդյունաբերության մեջ:

Դեղձենին աճում է սննդանյութերով հարուստ փուխր հողերում առատ խոնավության և ջերմության պայմաններում: Դեղձենին, ինչպես նաև ծիրանենին խիստ զգայուն է ուշ գարնանային ցրտահարությունների նկատմամբ, և այն տարիներին երբ ուշ գարնանը ձյուն է տեղում կամ սառնամանիքներ են լինում նրա բերքի մեծ մասը ոչնչանում է:

Դեղձենին բազմանում է սերմերով և պատվաստի միջոցով:

Մեր հանրապետությունում դեղձենին աճեցվում է Արարատյան դաշտում: Արփայի գետահովտում Թումանյանի Նոյեմբերյանի, Իջևանի Շամշադինի Մեղրիի շրջաններում:

Դեմիրձյան Դերենիկ Կարապետի

1877 —
1956

Մի մուկիկ կար անունը Պուլյաույ Ապրում էր այդ Պուլյաույը «Հնդստանի անտառում» որտեղ կոկոսյան արմավենիներ շատ կային: Մի օր էլ միտք է անում Պուլյաույը:

Տունս կոկոս ծառի տակ
Բերան չունեմ, թե՛ ճաշակ
ձանձ կերել եմ, ծեղ կերել
Տեսնեմ կոկոսի համն էլ

Անշուշտ, հիշեցիք ուրախ պատմությունը Պուլյաույ մուկիկի մասին որ գրել է Դերենիկ Դեմիրձյանը: Երբ ճանաչված գրող էր արդեն: Բազմաթիվ բանաստեղծությունների և պատմվածքների հետ միասին նա լույս էր ընծայել իր «Քաջ Նազարը» ժողովրդական ծաղր ու ծիծաղով լի, հյութեղ և իմաստուն կատակեր գուրջունը ուր ոչնչացնող ծաղրի է են

Դեղձենու
ծաղկած
ճյուղը հա
սուն պը
տուղները,
պտղի կը
տըրվածքը
կորիզով





թարկել պատահականորեն իշխանության գլուխ անցած բախտախնդիրներին

Դեմիրճյանը ծնվել է Վրացական ՍՍՀ-ում գտնվող Ախալքալաք քաղաքում: Կրթությունն ստացել է Էջմիածնի Գեվորգյան ճեմարանում, ապա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում Երաժշտություն ուսանելու նպատակով 1903 թ Դեմիրճյանը մեկնում է Մոսկվա, իսկ 1905—1910 թվականներին նա սովորում և ավարտում է Ժնևի համալսարանը: Դեմիրճյանի համար գրական ուսումնառության կարևոր կենտրոն էր *Հ թումանյանի* «Վերնատունը»:

1925 թ Դեմիրճյանը տեղափոխվում է Երևան, մասնակցում Սովետական Հայաստանում ծավալվող կուլտուրական շինարարության աշխատանքներին

Դեմիրճյանը հայ արձակի և դրամատուրգիայի ակնառու դեմքերից է եվ դժվար է պատկերացնելն անգամ, որ նա գրական ասպարեզ է իջել իբրև բանաստեղծ, նախքան արձակին անցնելը հրատարակել բանաստեղծությունների մի քանի ժողովածու «Անցյալի ուրուներ» խորագրով հրատարակված նրա մի շարք պատմվածքներին հաջորդեցին արդեն սովետական շրջանում գրած նոր պատմվածքներն ու վիպակները, ինչպես «Հանգրստի տանը», «Կրասնարմեյցը», «Կայարանի Ակոբը», «Ռաշիդ», «Նիգյար»:

1941 թ, երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց մեր երկրի վրա, հայրենասեր գրողը գրվեց աշխարհագրային, հագավ գինվորական համազգեստ, բայց նրան թույլ չտվեցին ռազմաճակատ մեկնել Հայրենիքի հանդեպ իր պարտքը Դեմիրճ

յանը կատարեց գրչով ստեղծելով իր «գրքերի գիրքը» «Վարդանանք» պատմավեպը Այդ ստեղծագործությամբ հեղինակը ոչ միայն ռազմաճակատում կռվող մարտիկներին, այլև բոլոր մարդկանց կոչում էր հայրենասիրության ու խիզախության վեպում նկարագրված է 5-րդ դարում հայ ժողովրդի հերոսական պայքարը պարսկական զավթիչների դեմ «Վարդանանք»-ում ժողովրդի իղձերի ու ցանկությունների արտահայտիչ քաջ զորավար *Վարդան Մամիկոնյանն* ու նրա զինակիցները Վարդանանք կենաց և մահու պայքարի են ելնում հանուն հարազատ ժողովրդի ու հայրենիքի փրկության որ կանգնած էին ոչնչացման եզրին. Վարդանի և նրա զինակիցների քաջությունն ու խիզախությունը այսօր էլ դաստիարակում են մեզ հայրենասիրության ոգով, մղում անձնագոհության հանուն հայրենիքի

Դ Դեմիրճյանը Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս էր, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հարուստ է Դեմիրճյանի գրական ժառանգությունը. «Ավելորդը», «Քաջ Նազար», «Գիրք ծաղկանց», «Վարդանանք» գործերը, ինչպես և նրա մյուս պատմվածքները, վիպակներն ու պիեսները զարդարում են հայ ընթերցողի գրադարանը և հայ գրականության մեծարժեք գործերից են Այդ բոլորի հետ կողք կողքի ապրում է ուրախ «Պուլպուլ մուկիկը» մեր մանուկների ամենասիրելի գրքերից մեկը

Դետեկտիվ

«Դետեկտիվ» բառը ծագում է լատիներեն «դետեգո» բառից, որ նշանակում է «բացահայտում, հայտնագործում»: Դետեկտիվը խուզարկուն է այն մարդը, որ հանցագործություններ է բացահայտում

Դետեկտիվները արկածային գրականության սիրելի հերոսներից են: Նրանք ընթերցողին զարմացնում են ամենաբարդ ու առեղծվածային հանցագործությունները բացահայտելու հմտությամբ: Այդպիսին էր, օրինակ, հանրաճանաչ Շերլոկ Հոլմսը Դետեկտիվների մասին այնքան շատ պատմություններ են գրվել ու գրվում, որ «դետեկտիվ» բառը մեկ ուրիշ նշանակություն էլ է ստացել. այսպես կրճատ անվանում են այն ստեղծագործությունները, ուր պատմվում է հանցագործությունների բացահայտման մասին:



Լավ դետեկտիվ ընթերցելը շատ հետաքրքիր է Ակամա քեզ պատկերացնում ես ամենախճճված հանցագործություններ բացահայտողի դերում, ջանում ինքքո մեջ էլ դաստիարակել խիզախություն, դիտողականություն, տրամաբանորեն մտածելու կարողություն Բայց այս հիանալի հատկանիշները կարող են ծառայել տարբեր նպատակների: Ջուր չէ, որ արտասահմանյան դետեկտիվ գրականությունը երբեմն ստեղծում և գովերգում է կապիտալիստներին ծառայող խուզարկուների: Երեխաներից ոմանք այնքան են տարվում դետեկտիվներով, որ ուրիշ գրքեր այլևս չեն կարդում և նույնիսկ չեն էլ ուզում լսել դրանց մասին Եվ դա անշուշտ աղքատացնում է այդպիսի վայրնթերցողների հոգևոր աշխարհը:

Դիլիջան

Ռուս նշանավոր ճանապարհորդ Դ. Լ. Մարդովցևը որ եղել էր աշխարհի շատ երկրներում 1882 թ. Արարատ լեռը բարձրանալու նպատակով անցել է Աղստև գետի հովտով և հիացական տողեր գրել Դիլիջանի մասին. և նշել է որ Դիլիջանի հովիտը իր գեղեցկությամբ չի գիջում աշխարհի այնպիսի գեղեցիկ անկյունների ինչպիսին են Թերեքի ու Արագվի հովիտները Ռազմավիրական ճանապարհը Բոսֆորը, Մարմարա ծովի Ղրիմի ափերը Միջերկրական ծովի և Գանգես ու Ամազոն գետերի գեղածիծաղ ափերը «Որչափ խորանաս հովտի մեջ այնչափ ավելի կգեղեցկանա. մեծաշուք է դառնում ճոխ բուսականությունը, այն աստիճանի է ծառերի մեծությունը որ չես հավատա թե հեռու ես հասարակածից և Գանգես ու Ամազոն գետերի ափերից»

Դիլիջանը առողջարանային կանաչ քաղաք է տարածված Աղստևի հովտի

արևմտյան մասում շրջափակված Փամբակի և Բազումի լեռնաշղթաներով Այն իրավամբ անվանել են լեռնային Հայաստանի մարգարիտը: Հիանալի է Դիլիջանի բնությունը Կլիման ամռանը զով է, ձմռանը՝ մեղմ Դիլիջանի մասին հիացմունքով են խոսել Մաքսիմ Գորկին ու ֆրանսիացի նշանավոր գրող Անրի Բարբյուսը Դիլիջանի բնության գրկում է գտնվում կոմպոզիտորների ստեղծագործական համափութենական տունը, որտեղ հանգրստացել ու ստեղծագործել են Մարտիրոս Սարյանը Արամ Խաչատրյանը Դմիտրի Շոստակովիչը, անգլիացի կոմպոզիտոր Բենջամին Բրիտտենը, ամերիկացի տաղանավոր նկարիչ Ռոբուել Զենտը գերմանացի գրող Աննա Ջեգերսը աշխարհում առաջին կին տիեզերագնացօդաչու, Սովետական Միության հերոս Վալենտինա Տերեշկովան և շատ ուրիշներ:

Հեղափոխական անցյալ ունի Դիլիջանը 1917 թ. գիմնագիայի մի խումբ ուսուցիչների նախաձեռնությամբ Դիլիջանում ստեղծվում է կոմունիստական առաջին ընդհատակյա բջիջը 1920 թ. այստեղ կազմակերպված բոլշևիկյան «Սպարտակ» ընդհատակյա երիտասարդական կազմակերպությունը վառ ու անմոռաց էջեր է թողել Դիլիջանի պատմության մեջ:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո միայն լայն հնարավորություններ ստեղծվեցին Դիլիջանի զարգացման համար: Կառուցվեցին «Իմպուլս», կաթի հացի, հանքային ջրերի գործարանները ձկած կահույքի, տրիկոտաժի ֆաբրիկաներ, տպարան և ախասովետական Դիլիջանում եղած մեկ գիմնագիայի և մեկ ծխական դպրոցի փոխարեն այժմ գործում են բազմաթիվ հանրակրթական գիշերօթիկ երաժշտական նկարչական մարզական դպրոցներ ռադիոտեխնիկում բժշկական և պրոֆտեխնիկական ուսումնարաններ. Կան գրադարաններ ակումբներ մանկապարտեզներ առողջարաններ հանգստյան տներ Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի մասնաճյուղը Երկրագիտական թանգարանը, որն ունի իր պատկերասրահը, քաղաքի մշակութային կենտրոններից է Պատկերասրահի հարստությունն են կազմում Հովհաննես Այվազովսկու Վարդգես Սուրենյանցի Մարտիրոս Սարյանի Գևորգ Բաշինջաղյանի և մեծանուն այլ արվեստագետների շատ գործեր:



Զանգառն



Դեպի Դիլի
ջան տանող
շրջապատ
ընդ



Հաղարծնի վանքային համալիրը (10—13 դդ դարեր)

Հայրենի քաղաքի կենդանական և բուսական աշխարհի լավագույն բարեկամներն են դպրոցներում գործող «Կանաչ պարեկ» «Պատանի անտառապահ», «Բնության բարեկամ», «Ալ առագաստներ», «Կարմիր մեխակներ», «Պատանի բնասերներ» և այլ ակումբների ու խումբակների անդամ պիոներ-դպրոցականները, որոնք պահպանում են նաև պատմական և ճարտարապետական հուշարձաններն ու կոթողները Աշնան ամիսներին նրանք հավաքում են ծառերի ու ծաղիկների սերմեր, տերևներ, զանազան միջատներ, բույսերի նմուշներ և պատրաստում ալբոմներ ու հերթաբիուլներ հարազատ դպրոցի համար

Հանրահայտ է «Դիլիջան» մանկական առողջարանը, որտեղ ամբողջ տարին բուժվում, կազդուրվում, հանգստանում և սովորում են հանրապետության տարբեր քաղաքներից ու շրջաններից եկած 7—15 տարեկան երեխաներ

Ամեն տարի ամռան ամիսներին Դիլիջանը դառնում է իսկական մանկական քաղաք Այստեղ գործում են պիոներական մի շարք ճամբարներ Պիոներներն ու դպրոցականները լինում են գետափին, անտառում, քաղաքի տեսարժան վայրերում

Դիլիջանի ուշագրավ կոթողներից են Վ Ի Լենինին, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակին, Հայրենական մեծ պատերազմում զոհված դիլիջանցիներին նվիրված հուշարձանները:

Դիլիջանը բաց թանգարան է Հաղարծնի վանքի իր բազմադարյան համալիրով Գոշավանքով Զուխտակ վանքով ու Մաթոսավանքով, հազվագյուտ մատուռներով ու խաչքարերով, պատմական ու ճարտարապետական այլ հուշարձաններով

1982 թ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ Դիլիջանում ստեղծվեց ժողովրդական արգելավայր թանգարան պահպանելու համար Հաղարծին և Գոշավանք միջնադարյան ճարտարապետական հուշարձանները, քաղաքի փողոցներից մեկը իր հնամենի կառույցներով

Դիլիջանը հայտնի է նաև բուսական ու կենդանական աշխարհի պահպանման ու բազմացման արգելանոցով

Մեր նախնիք Դիլիջանը հնում կոչել են Հովք, որ նշանակում է ամառանոց

Դիմապատկեր

Դիմապատկերը մարդու կամ մի խումբ մարդկանց պատկերումն է գեղանկարչության, գծանկարչության, փորագրության, քանդակագործության մեջ: Դիմապատկերում արվեստագետը, լինի նա գեղանկարիչ թե գծանկարիչ, փորագրիչ թե քանդակագործ, ոչ միայն կերտում է մարդու արտաքին նմանությունը, այլև աշխատում էրևան հանել նրա բնավորությունը, պատմել նրա կյանքի, զբաղմունքի մասին: Երբ արվեստագետը իրեն է պատկերում, դա արդեն կոչվում է ինքնադիմապատկեր

Առաջին դիմապատկերները (որոնց մեջ կային նաև դիմանկարներ) ստեղծել են հին եգիպտացիները և հույները դեռևս մեր թվականությունից շատ առաջ: Ճիշտ է, նրանցում պատկերված մարդիկ հիշեցնում էին առասպելների աստվածների և



Հուզի
— սկարը»
— արիչ
Ա Տրո
— Նին

հերոսների *Վերածննդի* դարաշրջանում մարդը գնալով ավելի ու ավելի էր հետաքրքրում նկարիչներին Այդ շրջանում հիասքանչ դիմանկարներ ու դիմաքանդակներ են ստեղծել *Լեոնարդո դա Վինչին, Միքելանջելոն, Ռաֆայելը*

15—16-րդ դարերում դիմապատկերային արվեստն սկսեց ծաղկում ապրել: Այդ ժամանակ արվեստագետները զարմանալի վարպետությամբ ստեղծում էին իրենց ժամանակակիցների դիմապատկերները, ստեղծում էին կտավի և թղթի վրա, քանդակում մարմարից, ձուլում բրոնզից Աշխարհի թանգարաններում ցուցադրված են 15-րդ դարի իտալացի նշանավոր նկարիչներ Բոտիչելլիի և Տիցիանի, 16-րդ դարի գերմանացի նկարիչ Դյուրերի, 17-րդ դարի ֆլամանդական նկարիչներ Ռուբենսի և Վան Դեյքի ստեղծած դիմանկարները:

19-րդ դարի առաջին կեսին Ռուսաստանում ապրում էր հայտնի դիմանկարիչ Վ Ա Տրոպինինը «Որդու դիմանկարը» նրա լավագույն ստեղծագործություններից է Անփութորեն բացված բաճկոնով սիրունատես, խարտյաշ տղան ուշադիր նայում է դեպի հեռուն, ասես հետաքրքիր մի բան է տեսել այնտեղ Տղայի դեմքի

«Նազելի Օրբելլանի դիմանկարը» նկարիչ Ն. Հովնաթանյան

արտահայտության, գլխի կտրուկ դարձվածքի մեջ հեշտությամբ կռահում ենք աշխույժ և միաժամանակ քնքուշ ու մեղմ բնավորությունը, անկեղծ հափշտակվածությունը աշխարհով ու կյանքով: Նրա դեմքը լուսավորված է վաղորդյան գորովալից արևով. Դիմանկարի բոլոր գույները ներդաշնակ են. Այն լի է կյանքի բերկրանքով և մանկության հմայքով:

Սովետական Միության շատ պատկերասրահներում դուք կտեսնեք ռուս ականավոր արվեստագետների ստեղծած բազմաթիվ հոյակապ դիմապատկերներ Դրանց շարքում են Ի Ե Ռեպինի, Ի Ն Կրամսկոյի, Վ Ա Սերովի և շատ ուրիշների դիմապատկերները:

Մեր ժամանակակիցների և պատմական գործիչների հիանալի դիմապատկերներ են ստեղծել սովետական արվեստագետներ Մ Վ Նեստերովը, Ա Ի Գերասիմովը, Վ Ի Մուխոման, Պ Դ Կորինը և ուրիշներ:

Լենինի կերպարը վառ մարմնավորում է գտել քանդակագործ Ն Ա Անդրեևի աշխատանքներում: Մենք Վլադիմիր Իլյիչին տեսնում ենք զեկուցում կարդալիս, աշխատելիս, զրուցելիս: Այդ դիմաքանդակներն ստեղծել են մի ամբողջ լենինապատում, որը ներկա և ապագա սերունդների համար պահպանում է մեծ մարդու թանկագին գծերը:

Համընդհանուր ճանաչման են արժանացել հայ արվեստագետների կերտած դիմապատկերները Եզակի են միջնադարում ստեղծված հայկական դիմապատկերները, ինչպես, օրինակ, Գագիկ Առա-



ջինի արձանը, որ 11-րդ դարի աշխատանք է, 13—14-րդ դարերի հայկական մանրանկարներում հանդիպող դիմանկարները:

Հայ դիմանկարչության նշանավոր վարպետներից է 19-րդ դարի գեղանկարիչ Հակոբ Հովնաթանյանը, որի մասին դուրս կարող եք կարդալ «Հովնաթանյաններ» գրույցում Նրա «Նազելի Օրբեյանի դիմանկարը» դիմանկարչության նկատելի երևույթներից է Նուրբ դիմագծերով և խոհուն հայացքով երիտասարդ կինն ասես, մի ակնթարթ կտրվել է իր առօրյա հոգսերից և ամփոփվել ինքն իր մեջ: Գլխի գեղեցիկ դարձվածքը, ձեռքերի մեղմ, հանդարտ դիրքն ու կանացի պարկեշտ նստելաձևը մատնում են կնոջ օժտվածությունը արժանապատվության խոր ըզգացումով: Մարմնաձևերի նուրբ և սա հուն անցումները զարմանալիորեն ներդաշնակվում են հոգեբանական խորունկ նկարագրին: Սև, կանաչ, ճերմակ գույների փայլուն զուգորդումները, զուսպ, թրթռուն լուսավորումը, կարծես, եթերային են դարձնում նրան Նկարիչը գեղանկարչական պարզ, խոսուն, մատչելի հրնարքներով ստեղծել է տվյալ ժամանակի հայ կնոջ տիպական կերպարը

Հրաշալի դիմապատկերներ են ստեղծել նաև Վ Սուրենյանցը, Փ Թերլեմեզյանը, Հ Գյուրջյանը, Ե Թադևոսյանը, Մ Սարյանը, Հ Կոչոյանը, Ա Բաժբեուկ-Մելիքյանը, Ե Քոչարը, Գ Գրիգորյանը (Ջիոտտո), Մ Ավետիսյանը և շատ ուրիշ հայ արվեստագետներ

Դիմիտրով Գեորգի Միխայլովիչ

1882—
1949

Տասներկուամյա բուլղարացի տղային Գեորգիին, կարիքը ստիպեց թողնելու դպրոցը և աշխատանքի անցնելու Առավոտից մինչև ուշ երեկո աշխատում էր տպարանում, հետո իր խցիկում, երբեմն ողջ գիշերը վառվող նավթի ճրագի տակ, նստում դասագրքերի առջև 15 տարեկանից արդեն Գեորգին բանվոր դասակարգի գործին անսահման նվիրված խիզախ հեղափոխականների կողքին էր

Դիմիտրովը *Բուլղարիայի* գործարանների բանվորների և լեռնային հեռավոր գյուղերի բնակիչների հաճախակի հյուրն էր՝ Նա բացատրում էր, թե ինչպես պետք



է փոխել կյանքը, որ բոլոր երեխաները կարողանան սովորել, որ մարդիկ քաղցից չմեռնեն: «Բուլղարիան կդառնա ազատ ու երջանիկ», — ասում էր նա Դիմիտրովը պարզ և հասկանալի նրանց պատմում էր Լենինի մասին

Մի անգամ հանքափորների փոքրիկ մի քաղաքում տեղի ունեցած միտինգի ժամանակ ոստիկանները ցանկացան ձերբակալել անհնազանդ հռետորին Բայց նրանք չկարողացան ձեռքել ամբոխը, և Դիմիտրովը հանգիստ շարունակեց իր ելույթը

Հեղափոխության թշնամիները հաճախ էին փորձում հանկարծահաս մի կրակոցով հաշվեհարդար տեսնել Դիմիտրովի հետ: Բայց ոչ մի բան ոչ սպառնալիքները, ոչ բանտախուցը, ոչ էլ շղթաները, չէր կարող ընկճել նրա երկաթե կամքը, հարկադրել հրաժարվելու սեփական համոզմունքներից Գերության մեջ էլ նա շարունակում էր վստահելի ընկերների միջոցով ղեկավարել հեղափոխական պայքարը

Դիմիտրովի անունը ողջ աշխարհում տարածվեց, երբ 1933 թ գերմանական ֆաշիստները նրան մեղադրեցին Ռայխստագը (կառավարական շենքը) հրկիզելու մեջ, որը հենց իրենք էլ հրդեհել էին Այդ հրեշավոր կեղծիքով նրանք ուզում էին արատավորել բոլոր կոմունիստներին:

Բայց Դիմիտրովը մեղադրյալից դարձավ ֆաշիզմի ահեղ մեղադրող Դատավորները փորձում էին լռեցնել նրան, խոսելու իրավունք չէին տալիս, ուժով դուրս էին տանում դահլիճից: «Ես կոմունիստ եմ», — դատարանում հնչում էր նրա հը-

պարտ ձայնը ֆաշիստներին սարսափն էր պատում այն մտքից, որ Դիմիտրովը մենակ չէ, որ նրա կողմնակիցների թիվը ողջ աշխարհում օրավուր աճում է Բուլոյր երկրների բանվորները պահանջում էին անհապաղ ազատ արձակել նրան՝ Եվ նրանց հզոր ճնշման ներքո ֆաշիստները հարկադրված եղան տեղի տալու և ազատեցին Դիմիտրովին

Շուտով Եվրոպայում բռնկեց երկրորդ համաշխարհային պատերազմը՝ Դիմիտրովը բուլոյրանվեր զինվորագրվեց հարազատ Բուլղարիան ֆաշիստական հորդաներից ազատագրելու և երկրում հեղափոխական ապստամբություն նախապատրաստելու գործին Դիմիտրովը Բուլղարիայի առաջին բանվորագյուղացիական կառավարության ղեկավարն էր

Անցան շատ տարիներ, բուլղար ժողովուրդը ազատ ու երջանիկ կյանք կառուցեց Եվ իբրև սուրբ մասունք նա իր հիշողության մեջ պահպանում է այն ամենը, ինչ կապված է Դիմիտրովի անվան հետ Ամեն ոք, ում վիճակվում է լինել Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում, անպայման այցելում է Դիմիտրովի դամբարանը:

Դիսպետչեր

Այս բառն անգլերեն է և նշանակում է «մարդ, որը կարողանում է արագ աշխատել»: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե արագ աշխատող ամեն ոք դիսպետչեր է Օրինակ, դիսպետչեր չեն ո՛չ հաստոցի մոտ արագ աշխատող խառատը, ո՛չ էլ այն ինժեները, որ կարողանում է արագորեն գծագրեր գծել

Դիսպետչերը նա է, որից շատ բանով կախված է գործարանի, ծովային նավահանգստի, երկաթուղային կայարանի կամ օդանավակայանի կարգավորված, հստակ աշխատանքը: Դիսպետչերը հետևում է, որ հաստոցներն անգործ չմնան, որ ավտոմեքենաները չերթնեն դատարկ, առանց բեռի: Նա թույլ չի տա, որ օդում բախվեն ինքնաթիռները կամ ռելսերի վրա՝ գնացքները: Ահա, թե որքան կարևոր ու պիտանի մարդիկ են դիսպետչերները:

Ընդամենը մեկ րոպեով անշարժացավ ավտոգործարանի գլխավոր կոնվեյերը, և հերթական ավտոմոբիլը պատրաստ չէ Անհրաժեշտ է կոնվեյերն անհապաղ գործի գցել, իսկ թե ինչպես պետք է որոշի դիսպետչերը, այն էլ արագ ու անսխալ:

Բայց ճիշտ ու արագ, հաճախ միակ, որոշում ընդունելու համար անհրաժեշտ է, որ դիսպետչերը տեսնի աշխատանքային տեղամասը միանգամից ամբողջ գործարանը, ասես դա ոչ թե գործարան է, այլ սեղանին դրված մանրակերտ

Դիսպետչերին այդ նպատակով ծառայում է հեռուստացույցի էկրանը Բուլոյր արտադրամասերում դրված են հաղորդող հեռուստատեսային խցիկներ, և դիսպետչերն էկրանին տեսնում է, թե ինչպես է ընթանում աշխատանքը ամեն մի տեղամասում: Դիսպետչերի սեղանի կամ, ինչպես սովորաբար ասում են, վահանակի վրա շատ լամպիկներ կան: Երբ մի հաստոց կանգ է առնում, վառվում է լամպիկներից մեկը Դա տագնապի ազդանշանն է: Հիմա արդեն դիսպետչերը պետք է վրձռի, թե ինչ պիտի անել խափանումը վերացնելու համար

Ահա արդեն հայտնաբերված է խափանման պատճառը Դիսպետչերը վերցնում է միկրոֆոնն ու կարգադրում «Համար ութ արտադրամասի վարպետ, կանգ է առել երկրորդ ավտոմատ գծի համար երեսունվեց հաստոցը: Միջոցներ ձեռնարկեք»: Անցնում է մի քանի րոպե, լամպիկը մարում է: Նշանակում է, հաստոցը կարգի է գցված, և աշխատանքը շարունակվում է Դիսպետչերը ճիշտ որոշում է ընդունել Այսօր մեկ դիսպետչեր երբեմն կառավարում է ամբողջ մի արտադրամաս

Դիսպետչերի վահանակի վրա կան նաև բազմաթիվ կոճակներ ու անջատիչներ Միշտ չէ, որ դիսպետչերը դիմում է վարպետին այլ սեղմելով կոճակը կամ պտտելով անջատիչը, հրաման է արձակում, և այդ հրամանով ինքը հաստոցը ավտոմատորեն կարգի է ընկնում ու շարունակում աշխատել:

Օդանավակայանի դիսպետչերի խընդիրներն այլ են: Ռադիոլուկատորի էկրանին վառ կետերի ձևով արտապատկերված են օդանավակայանի մոտակայքում օդում գտնվող ինքնաթիռները Դիսպետչերը տեսնում է, թե ուր, ինչ արագությամբ ու բարձրությամբ են դրանք թռչում, և օդաչուներին տալիս է վայրէջքի ու թռիչքի համար անհրաժեշտ հրամանները:

Դիսպետչերի հրամաններին են ենթարկվում թե էլեկտրակայաններում էլեկտրաէներգիա արտադրող մեքենաները, թե խողովակներով ջուր ու նավթ մղող պոմպերը, թե դիսպետչերի սենյակից տասնյակ կիլոմետրեր հեռու գտնվող եր

կաթուղային ռելսերի ու կայարանների ուղեփոխ սլաքները:

Հեշտ չէ դիսպետչերի աշխատանքը Նա ոչ մի ազատ ընտրություն չունի: Անընդհատ պետք է մտածել, արագ ու անսխալ որոշում ընդունել: Սխալը կարող է աղետաբեր լինել մարդկանց համար Նա միշտ պետք է նաև հանգիստ լինի, ամենադժվարին պահերին իսկ չշփոթվի Դժվար է դիսպետչեր լինելը, դժվար է, բայց և պատվավոր է

Դիրիժոր

Երբ երևան եկան երաժշտական մեծ կոլեկտիվները երգչախմբերը, նվագախմբերը, կարիք զգացվեց նաև դրանց ղեկավարի, այսինքն դիրիժորի (ֆրանսերեն նույնանուն բառից, որ նշանակում է «ուղղություն տալ, ղեկավարել») կամ նվագավարի 15-րդ դարի առաջին կեսին դիրիժորը ղեկավարում էր հատուկ փայտիկի բատուտայի օգնությամբ: Դիրիժորի դերը սահմանափակվում էր չափ տալով Ավելի ուշ դիրիժորի դերը կատարում էր գեներալ-բասի անընդմեջ հնչող ցածր ձայնի, նվագամասը կլավեսինով կամ երգեհոնով կատարող երաժիշտը: Գեներալ-բասը լավ լսելի էր յուրաքանչյուր երաժշտի և թույլ չէր տալիս շեղվել տակտից Այն, ինչպես ասում են, բռան մեջ էր պահում նվագախումբը:

18-րդ դարի երկրորդ կեսին գեներալ-բասի տեղը գրավեց նվագախմբի առաջին ջութակահարը, որին այդ ժամանակից ի վեր կոնցերտմայստեր են անվանում:

Կոնցերտմայստերը կանգնում էր մեջքով դեպի նվագախումբը. Նա միաժամանակ և ջութակ էր նվագում, և չափ տալիս աղեղով: Դիրիժորության այս ձևը երկար պահպանվեց: Բայց 19-րդ դարի կեսերից արդեն հնարավոր չէր նվագախումբն այդպես ղեկավարելը Նվագախմբերը մեծացել էին, համալրվել նոր նվագարաններով, բարդացել էր բազմաձայն ստեղծագործությունների նոտագրումը: Ահա հենց այդ ժամանակ էլ կարիք զգացվեց այնպիսի դիրիժորի, որը ոչ թե պարզապես տակտ «նշող» լիներ, այլ նրբաճաշակ և հարուստ գիտելիքների տեր երաժիշտ

Աստիճանաբար դիրիժորը դարձավ իր երաժշտական «գործի» նվագախմբի իսկական գեներալը Նա կանգնում է դեմքով

դեպի նվագախումբը, որպեսզի լավ տեսնի ու լսի բոլոր երաժիշտներին Աջ ձեռքին նա բռնած ունի ոսկրե նուրբ ձողիկ: Դիրիժորական ձողիկի թափահարումը նշանակում է ժամանակն է, որ հանդես գան ջութակները, կամ թավջութակները, կամ էլ միանգամից տարբեր նվագարանների մի քանի խումբ Դիրիժորից է կախված ստեղծագործության կատարման տեմպը արագությունը: Նա կարող է «հրամայել» նվագել ֆորտե-ֆորտիսսիմո (ուժգին, շատ ուժգին) կամ պիանո-պիանիսսիմո (մեղմ, հազիվ լսելի) Ձողիկի մի թափահարումով նա կարող է նվագախումբում փոթորիկ առաջ բերել և վայրկենապես հանդարտեցնել այն

Բայց դիրիժորը ոչ մի բան հանպատրաստից չի հորինում: Բազմաթիվ փորձերի ընթացքում նա մշակում է երաժշտության յուրաքանչյուր տակտը Նրա առջև, նոտակալին, դրված է պարտիտուրը՝ նվագախմբային ստեղծագործության նոտագրությունը Այնտեղ գրված են նվագախմբի բոլոր նվագամասերը: Դիրիժորը նայում է պարտիտուրին և հետևում յուրաքանչյուր երաժշտի նվագին Պարտիտուրի մեջ նշված են կոմպոզիտորի բոլոր ցանկությունները հիմնական տեմպերը, շեղումները դրանցից, զանազան նրբերանգներ՝ հնչերանգների փոփոխությունները, կատարվող ստեղծագործության բնույթը և այլն:

Բայց դա չի նշանակում, թե դիրիժորը սոսկ միջնորդ է կոմպոզիտորի և երաժիշտների միջև Դիրիժորին կարելի է անվանել նաև նվագախմբի գլխավոր երաժիշտ Պատահական չէ, որ ասում են «Ես լսել եմ այսինչ դիրիժորին...», թեև ինքը դիրիժորը ելույթի ընթացքում ոչ մի նվագարան չի նվագում:

Դիրիժոր են անվանում գործիքային, երգի-պարի անսամբլների, սիմֆոնիկ, թատերական և ժողովրդական նվագախմբերի ղեկավարներին: Զինվորական նվագախմբերի դիրիժորներին անվանում են կապելմայստերներ, իսկ երգչախմբերի դիրիժորներին խմբավարներ

Դիքենս Չարլզ

1812–
1870

Ճնցոտիապատ ու քաղցած փոքրիկ թափառաշրջիկն ահա սողոսկում է գեղեցիկ պարտեզը, ուր աշխատում է խստադեմ մի պառազ



— Կորիք: Այստեղ ոչ մի տղա ուտք դնելու իրավունք չունի, — խիստ ասում է պառազը:

— Թույլ տվեք, տատիկ ես ձեր թոռն եմ

Հուզված ու կցկտուր նա պատմում է թե ինչպես էր ապրում մոր ու դայակի հետ, բայց կարծրասիրտ, անգութ խորթ հայրը չէր սիրում տղային Իսկ երբ մայրը մահացավ, երեխային հանեցին դպրոցից և ստիպեցին աշխատել: Ամբողջ օրը նա շշեր էր լվանում ու վրան պիտակներ փակցնում: Եվ երբեք կուշտ չէր ուտում

Արդեն ուժերից վեր էր այդ կյանքով ապրելը Եվ Դավիթը որոշում է փնտրել ու գտնել իր տատիկին որին երբեք չէր տեսել: Ուտքով թափառեց նա շաբաթներով, գյուղից գյուղ և քաղաքից քաղաք, և շատ տանջվեց Այս տղայի տանջանքների մասին է գրել անգլիացի գրող Չարլզ Դիքենսն իր «Դավիթ Կոպպերֆիլդ» վեպում:

Թշվառների ու աղքատների կյանքը Դիքենսը լավ գիտեր Նրա ընտանիքն էլ էր աղքատ մերթ հացավաճառն էր իր լուտանքը թափում հոր գլխին, մերթ կաթնավաճառը, որովհետև նա չէր կարողանում պարտքը վերադարձնել: Հարազատներին օգնելու համար Չարլզը աշխատանքի անցավ նախ ֆաբրիկայում, ապա փաստաբանի մոտ Նա տեսավ, որ հասարակ մարդիկ ամենուր ծանր են ապրում

Գրող դառնալու գործում Դիքենսին օգնեց աշխատանքը թերթում: Սկզբում տըպագրվեցին Լոնդոնի մասին գրած նրա փոքրիկ հոդվածները, ապա նաև ակնարկ-

ները. Իսկ երբ երիտասարդ լրագրողին առաջարկեցին մի հայտնի նկարչի նկարների տակագրեր հորինել, ստացվեց «Պիկվիկյան ակումբի ետմահվան հուշերը» հրաշալի և ուրախ գիրքը, որ հռչակ բերեց ոչ թե նկարչին, այլ Դիքենսին

Դիքենսը կարողանում էր նուրբ և ուրախ կատակել, նաև սուր ու թունոտ ծաղրել նրանց, ում ատում էր Իսկ ատում էր նա երկերեսանի ու սնապարծ արիստոկրատներին, անգութ դատավորներին, բուրբ աստիճանավորներին, տգետ ուսուցիչներին Նա ցույց էր տալիս, թե որքան ծանր է կյանքը մանկական ապաստարաններում Միշտ սիրով էր խոսում երեխաների ու աշխատավոր մարդկանց մասին Նա արտասվում էր, երբ իր հերոսները մեռնում էին, և երջանկանում, երբ նրանք հաջողության էին հասնում Ճիշտ է ասել նրա մասին Ա Մ Գորկին. «Այդ մարդը հրաշալի գիտեր մարդկանց սիրելու դժվարագույն արվեստը»: Դիքենսի փառքը տարածվեց Անգլիայում, այնուհետև ողջ Եվրոպայում և Ամերիկայում:

Նրա «Օլիվեր Թվիստի արկածները», «Դավիթ Կոպպերֆիլդ», «Դոմբի և որդին», «Փոքրիկ Դորրիթը», «Սառը տուն» գրքերը կարդում են աշխարհի բոլոր ծայրերում Դուք դեռ շատ առիթներ կունենաք հանդիպելու Դիքենսի հերոսներին, որոնք կդառնան ձեր մշտական բարեկամները

Դմիտրի Դոնսկոյ

1350—
1389

Մոսկվայի իշխան Դմիտրի Իվանովիչը պատերազմների սովոր մարդ էր Առաջին անգամ նրան արշավի էին վերցրել, երբ փոքր տղա էր Բոյարները նրան օղագրահ էին հագցրել, նստեցրել ձիուն, ձեռքը գենք տվել ու հետները տարել Մոսկվայի ախոյան Սուզդալի իշխանի դեմ:

Իշխանների միջև տիրող երկպառակությունները խանգարում էին Ռուսիայի բոլոր հողերի և ուժերի միավորմանը: Մինչդեռ նա ասեղ հակառակորդ ուներ Ռսկե հորդան Մոտ մեկուկես դար էր արդեն, ինչ մոնղոլ-թաթարական նվաճողները տնօրինություն էին անում Ռուսիայում Նրանք կողոպտում էին գերեզարում և սպանում մարդկանց հավաքում էին հսկայական հարկեր, իրար դեմ հրահրում ռուս իշխաններին

Դմիտրի Իվանովիչը երկար ժամանակ վճռական ճակատամարտի էր պատրաստ-



**ΠΑΙΚΟ ΣΡΑΖΗΒΗΣΕΑ . ΜΗΩΓΑΤΕΛΕΣΑ ΠΑ
 ΔΑΛΧΟΥ ΗΕΓΩ ΠΟΜΟΓΩΟΥ ΠΕΛΗΚΟΜΟΥ ΠΟ
 ΒΕ ΔΟΝΟ ΕΝΟΜΩ Δ ΜΗΤΡΕΗ . Η ΠΟΒΕΖΔΕ
 Η ΝΕΒΙ ΣΑ ΠΟΓΑ ΝΙ Η ΠΑ
 ΠΑΡΟΠΕ . Η ΚΟΝΕ
 ΥΗ Ε Η ΠΑΓΩΒΕ
 ΠΡΕΔΑΝΗ
 ΒΥ
 Σ
 Α**

Կուլիկով-
 յան ճակա
 տամարտը
 մանրանը-
 կար հին
 գրքից

վում նվաճողների դեմ ուժեր կուտակում:
 Ժողովուրդն աջակցում էր թշնամու դեմ
 պայքարի դրոշ բարձրացրած իշխանին
 Մոսկվան, որ գտնվում էր ռուսական հո-
 դերի կենտրոնում, կարողացավ աստիճա
 նաբար ի մի բերել և համախմբել առան
 ձին իշխանությունների ուժերը.

Դմիտրի Իվանովիչը հրամայեց փայտե
 հին կրեմլի փոխարեն կառուցել նորը քա-
 րե հզոր պարիսպներով ու աշտարակնե
 րով 1380 թ օգոստոսի 10-ին այստեղից

հնչեց մարտական ազդանշանը. Կրեմլի
 դարպասներից դրոշները պարզած դուրս
 հորդեցին զորքերը: Ամբողջ օրը քաղա-
 քով շարժվում էր թաթարների դեմ մեծ ար-
 շավի ելած ռուսական բանակը:

Ճանապարհին իշխանն իմացավ, որ
 թաթարական Մամայ խանը իր զորքի հետ
 ճամբար է խփել Դոնի մոտ և օգնության է
 սպասում Լիտվայի իշխան Յագայլոյի
 զորքերին.

«Թանկագին եղբայրներ և բարեկամ-
 ներ, — ասաց իշխան Դմիտրին ռազմա-
 կան խորհրդում: — Գիտցեք, որ ես այս-
 տեղ եմ եկել, որպեսզի ռուսական հողն
 ազատեմ գերությունից և ավերից Այծ-
 ևեթ գնանք Դոնի այն կողմը և այնտեղ կամ
 հաղթենք, կամ վայր դնենք մեր գը-
 լուխները»:

Եվ ահա ռուսական զորքերն անցան
 Դոնը. ճակատամարտի համար ընտրեցին
 Կուլիկովո դաշտը, որպեսզի թաթարական
 հեծելազորը չկարողանա խոր հեղեղատ-
 ներով և Նեպրյադվա գետով շրջանցել
 հիմնականում հետևակ ռուսական զոր-
 քերը Հարևան անտառում թաքնվել էր
 դարանակալ գունդը: Սեպտեմբերի 8-ի
 առավոտյան սկսվեց ճակատամարտը
 Առաջին շարքերում կռվում էր ինքը՝ իշ-
 խան Դմիտրին

Ռուսական ջոկատները երերացին Բայց
 այդ ժամանակ թշնամու հեծելազորի վրա
 անսպասելի հարձակվեց դարանակալ
 գունդը, և թաթարները փախուստի դիմե-
 ցին, նրանց հետ նաև Մամայ խանը

Թաթարների դեմ այդ մեծ ճակատա
 մարտն ավարտվեց ռուսների հաղթանա
 կով. Կուլիկովյան ճակատամարտը ողջ
 ժողովրդին ցույց տվեց, որ մեկընդմիջտ
 ազատագրվելու համար հարկավոր է հա-
 մախմբվել: Իսկ Դմիտրի Իվանովիչ իշխա-
 նին Դոնի վրա տարած այդ մեծ հաղթանա-
 կի պատվին այդ օրից սկսեցին անվանել
 Դմիտրի Դոնսկոյ

«Դյուլցագնական սիմֆոնիա»

Պատահում է, որ որևէ նկար երկար
 դիտելիս այն, ասես, կենդանանում է
 երևակայությանդ մեջ, և թվում է, թե մի
 հրաշալի մեղեդի է հնչում ականջիդ. Լսում
 ես, թե ինչպես է դայլայլում Հազարան
 բլբուլը նորից կյանքի կոչելով չորացած

այգին, կամ սուլոցով սլանում է նետը, որ խիզախ Արին է արձակել Սպիտակ դևին սպանելու համար

Դողոշ

Լինում է և հակառակը մանկուց սիրելի մեղեդին աստիճանաբար վեր է ածվում գունազեղ, կենդանի պատկերների Դա նորից մեր երևակայությունն է մեզ հետ զարմանալի խաղեր խաղում:

Ահա մենք լսում ենք նվագարանների հզոր խմբանվագը, իսկ հիշողությունը հին զրույցներից, գեղանկարչական ստեղծագործություններից մեզ ծանոթ կերպարներ է հուշում

Հենց այդպես է մտահղացել կոմպոզիտոր Ալեքսանդր Պորֆիրևիչ Բորոդինը (1833-1887) իր հայտնի սիմֆոնիան, որը հետագայում անվանվեց «Դյուցազնա՝ կան»: Մենք, կարծես, անձամբ տեսնում ենք Իլյա Մուրոմեցին, Դոբրինյա Նիկիտիչին կամ Միկուլա Սեյանինովիչին, լսում նրանց խոսքն ու երգը, տեսնում նրանց խնջույքի նստած կամ արշավի ելած: Այդ երաժշտությունը հարազատ է հին ռուսական դյուցազունների մասին պատմող *բիլիաներին*: Այնպիսի հզորությամբ են լեցուն մեղեդիները, որ սիմֆոնիան, ասես ստեղծվել է դյուցազնական տաղանդով:

Ե վ երաժշտության բնույթը, և հենց իր Ա Պ Բորոդինի մտահղացումը ռուս նշանավոր քննադատ Վ Վ. Ստասովին հուշեցին սիմֆոնիան «Դյուցազնական» անվանելու միտքը Այդ անունը թևավոր դարձավ, և նրանով էլ սիմֆոնիան մտավ համաշխարհային մշակույթի գանձարանը

Ա Պ Բորոդինի հրաշալի երաժշտությունը նրա «Իշխան Իգոր» օպերան, երկու սիմֆոնիաները, ռոմանսները, կվարտետները, կատարում են ողջ աշխարհում: Ի դեպ, նրա «Իշխան Իգոր» օպերան բեմադրվել է նաև Երևանի Ալ Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում

Կենդանի, հզոր կերպարները շրջապատում են մեզ այդ ստեղծագործությունների առաջին իսկ հնչյունների հետ: Կոմպոզիտորը փառաբանում է մարդու ուժը, գեղեցկությունը և իր հայրենիքի մեծ անցյալը, պատկերում լուսավոր ապագան: Ա Պ Բորոդինի երաժշտությունն իր բոլոր արձաններով կապված է Ռուսաստանի և նրա ժողովրդի հետ, արտահայտում է ռուսական բնավորության լավագույն կողմերը:

Ա Պ Բորոդինը ոչ միայն մեծ երաժիշտ էր, այլև քիմիկոս-գիտնական, բժիշկ հասարակական գործիչ


Շատերն են, որ դողոշին չեն սիրում: Ասում են, վնասակար է, նրանից ձեռքերի վրա գորտնուկներ են առաջանում: Դա ամենևին էլ ճիշտ չէ Իր մաշկի վրայի բշտիկներից դողոշն, իրոք որ, սպիտակավուն հեղուկ է արտադրում, բայց դրանից ոչ մի գորտնուկ էլ չի առաջանում Պարզապես այդ հեղուկը ուժեղ հոտ ունի և շատ տհաճ է նրանց համար, ովքեր ցանկանում են բռնել և ուտել դողոշին Այդ եղանակով նա վախեցնում և իրենից վանում է թշնամիներին: Չէ որ նա ոչ սուր ատամներ ունի, որ պաշտպանվի, ոչ էլ արագավազ ոտքեր որ փախչի



Դողոշների մասին բազմաթիվ անհավանական պատմություններ են պատմում Զչերն են միայն, որ գիտեն ճշմարտությունը Օրինակ, սակավաթիվ մարդիկ գիտեն, թե որքան մեծ օգուտ է տալիս դողոշը: Ամբողջ օրը նստում է նա որևէ մեկուսի, խոնավ անկյունում, իսկ երբ իջնում է մթնշաղը, սկսում է որսը: Եվ որքան վնասատուներ է ոչնչացնում մի գիշերվա ընթացքում էլ թրթուրներ ու վնասակար փափկամորթներ, էլ ճանճեր ու զանազան միջատներ, հաշվել անգամ չի լինի Ահա թե ինչու դողոշը մեր լավ բարեկամն է նա, իրոք, շատ տգեղ է, բայց բարեկամներին հո գեղեցկության համար չէ, որ սիրում են, ճիշտ չէ

Դոմնա

Օր ու գիշեր, հանգստյան ու տոն օրերին էլ, վառվում են անխոնջ վառարանները, որտեղ հանքաքարից թուջ են հալում Դրանք կոչվում են դոմնային վառարաններ կամ, պարզապես, դոմնաներ Դեռ հնում մարդը կարողանում էր վառարաններում երկաթի հանքաքարից եր-



կաթ ստանալ ՉԷ որ բնության մեջ երկաթը հանդիպում է ոչ թե մաքուր ձևով, այլ թթվածնի հետ միացություն կազմած միայն Դա էլ հենց երկաթի հանքաքարն է երկաթը հանքաքարից հալում են դոմնային վառարաններում, ավելի ճիշտ, դոմնային վառարաններում ստանում են ոչ թե մաքուր երկաթ, այլ երկաթի և ածխածնի համաձուլվածք թուջ

Հին ժամանակների դոմնաները նման են վերևում նեղացող կավե փոքրիկ աշտարակների: Որոշ վայրերում, օրինակ, Աֆրիկայում, դրանք պահպանվել են մինչև մեր օրերը Մինչդեռ ժամանակակից դոմնաները 30-հարկանի տան բարձրությամբ վիթխարի կառույցներ են պատրաստված մետաղից ու հրահետ աղյուսից Սովետական Միությունում գործող դոմնաները աշխարհում եղած հզորագույններից են: Այդ դոմնաներից յուրաքանչյուրը մեկ տարում այնքան մետաղ է տալիս, որքան 20-րդ դարի սկզբին հալում էին ցարական Ռուսաստանի բոլոր դոմնաները միասին

Որքան էլ տարբեր է ժամանակակից և հինավուրց դոմնաների տեսքը, նրանց կառուցվածքը, հիմնականում, նույնն է Նրանց նպատակն էլ է նույնը երկաթը ազատել թթվածնի «գերությունից»: Դոմնաները նաև բեռնավորում են նույն

նյութերով ածխով ու հանքաքարով Միայն թե հիմա հալումից առաջ ածուխը հատուկ ձևով մշակում են, որովհետև այն պարունակում է մետաղի համար չափազանց վնասակար բազմաթիվ խառնուկներ Այդ պատճառով ածուխը կոքսացնում են, այսինքն ազատում վնասակար խառնուկներից Դա արվում է հետևյալ կերպ ածուխը մանրացնում վերածում են շատ նուրբ փոշու, ապա եռակալում (ստանում են ծակոտկեն կտորներ) Այդ ընթացքում վնասակար խառնուկներն անջատվում են Ստացվում է կոքս:

Հանքաքարն ու կոքսը դոմնայի մեջ լցնում են վերևից հնոցաբերանից, շերտ առ շերտ մի շերտ կոքս, մի շերտ հանքաքար և նորից կոքս: Հանքաքարն ու կոքսը իջեցվում են դոմնայի միջին մասը հորան, այնուհետև ստորին մասը հնոց

Որպեսզի կոքսն ավելի լավ այրվի, ներքևից վառարանի մեջ օդ են փչում Այդ տաքության մեջ կոքսը ագահորեն թթվածին է խլում հանքաքարից առաջանում է մաքուր մետաղ, որը հոսում է դեպի ներքև: Երբ շատ մետաղ է կուտակվում, հնոցում անցք (հալանցք) են բացում, և մետաղը դուրս է հոսում Այդպես վարվում են օրը մի քանի անգամ, ստույգ սահմանված ժամերի

Հեղուկ մետաղը դոմնայից ճռուով հոսում է դեպի հրահետս զանգվածով երեսապատված ակոսները, իսկ այնտեղից լցվում երկաթգծերին պատրաստ կանգնած շերեփների մեջ Այա մետաղը փոխադրում են հետագա վերամշակման ենթարկելու: Իսկ հալանցքը խցում են հրահետ կավով և սպասում, թե հնոցում նորից երբ բավականաչափ մետաղ կկուտակվի:

Հալված խարամը մետաղից թերևս է և վերև է բարձրանում: Դրա համար էլ խարամի հալանցքը թուջի հալանցքից ավելի բարձր են անում:

Դոն Կիխոտ

16-րդ դարի վերջն է *Իսպանիայի* անծայր ու քարքարոտ ճանապարհներին այրում է տոթակեզ արևը: Ո՛վ ասես չի անցնում այդ ճանապարհներով Ահա վազեցին անցան ոտաբոքիկ գեղջկուհիները, իսկ այնտեղ հեռվում ձգվում է մռայլ վանականների տաղտկալի թափորը: Մեկ աչքիդ է զարնում ճանապարհորդ սենյորի կառքը, մեկ էլ տեսնում ես, շղթայակապ տաժանապարտների են տանում:

Ահա հորիզոնում երկու տարօրինակ հեծյալ երևացին Նրանք կամաց-կամաց մոտենում են, և արդեն կարող ես լավ զանազանել նրանց: Մեկը նիհար է ու բարձրահասակ Նրա անձոռնի մարմինը զարդարված է ասպետական զենք ու գրահով, չնայած վաղուց արդեն դրանք ոչ ոք չի կրում: Սաղավարտի փոխարեն գլխին պղնձե թաս է դրել Նրա ուղեկիցը գեր ու կարմրաթուշ մի մարդ է՝ հաստիկ գորշ իշուկին հեծած:

Ետևում են մնացել բազմաթիվ արկածները, էլ ավելին սպասվում են առջևում: Իսկ ովքեր են նրանք և ինչու են ճամփա ընկել: Հիշեցեք նրանց անունները Դոն Կիխոտ և Սանչո Պանսա: Այս մարդկանց վիճակված է շատ դարեր փառաբանելու հայրենի Իսպանիան:

Իսպանացի աղքատ ազնվական Դոն Կիխոտի կյանքն անցնում էր անհրապույր ու տաղտկալի: Նրա միակ ուրախությունն ու սփոփանքը ասպետական վեպեր կարդալն էր: Այնտեղ պատմվում էր վիշապների ու չար կախարդների դեմ մենամարտերի մասին, այն ասպետների մասին, ովքեր թափառում են երկրով

մեկ և օգնում թուլյերին ու հալածվածներին, պատժում չարերին ու անիրավներին:

Դոն Կիխոտը չէր հավատում, որ ասպետների ժամանակները վաղուց անցել են: Եվ որոշեց թափառական ասպետ դառնալ: Հոգ չէ, թե մարտական նժույգ չունի. նա թամբեց իր գառամյալ ձին և կոչեց Ռոսինանտ հնչեղ անունով: Ոչինչ, որ իսկական ասպազենք չունի. նա գտավ հին օրերից մնացած ու ժանգոտած մի գրահ, իսկ սաղավարտի դիմակալը պատրաստեց սովորաթղթից ու թիթեղից: Փուլթ չէ նաև, թե իսկական զինակիր չունի՝ նա ընտրեց խորամանկ ու բարեհոգի գեղջուկ Սանչո Պանսային:

Դոն Կիխոտի ուղեղում իրար էր խառնըվել այն ամենը, ինչ կարդացել էր գրքերում ու երազել և ինչ տեսել էր իրական կյանքում: Նա կարող էր հողմադացն ընդունել չար հսկայի տեղ և կռվել նրա դեմ:


Տեսնելով, թե ինչպես հարուստ գյուղացին ծեծում է փոքրիկ հովվին, Դոն Կիխոտը պաշտպան կանգնեց նրան, որովհետև թափառական ասպետի պարտքն էր համարում փորձանքի մեջ ընկածին ձեռք մեկնելը:

Կշտամբանք ու նախատինք, ծեծ ու ծաղրուծանակ էին բաժին ընկնում Դոն Կիխոտին և նրա ուղեկցին Բայց Դոն Կիխոտը համառորեն ու հաստատակամորեն շարունակում էր իր դժվարին ուղին: Նա ոչ միայն հին գրքերով գլուխը լցրած տարօրինակ մարդ էր, այլև ազնիվ, արիասիրտ ու վեհանձն անձնավորություն:

Եվ միշտ նրա կողքին էր հավատարիմ Սանչո Պանսան:

Այս մարդկանց պատմությունը հորինել և շարադրել է իսպանացի հռչակավոր գրող Միգել Սերվանտես դե Սաավեդրան (1547-1616):

Սերվանտեսն ապրեց տքնանքով, արկածներով, դառնությամբ և խիզախությամբ առլեցուն մի կյանք: Նա քաջաբար կռվեց պատերազմում, մասնակցեց ծովամարտի, գերի ընկավ և երկար տարիներ տանջվեց գերության մեջ՝ սպասելով փրկկազնի ու փախչելու փորձ անելով: Հետո վերադարձավ հայրենիք: Սերվանտեսը ոտքի տակ տվեց ողջ Իսպանիան, հանդիպեց ու զրուցեց գյուղացիների ու զինվորների, թափառաշրջիկ դերասանների և ուսանողների, հարուստների ու չքավորների հետ: Նա տեսնում էր, թե ինչ ծանր կյանքով է ապրում հասարակ ժողովուրդը, և շատ էր մտորում, թե ինչպես օգնի նրան:



P. D. 022

J. H. P. 222

Այս ամենն արտացոլվեց Դոն Կիխոտի
 լուսին գրքում որը Սերվանտեսը գրում էր
 երբևրև և որքան գրում էր, այնքան գիրքը
 բարձրացվում էր որքան նա շատ էր մտա-
 փում իր հերոսի մասին, այնքան ավելի
 լուսին էր սիրում նրան

Երբ մենք կարդում ենք այդ գիրքը,
 սպասում ծիծաղում ենք Դոն Կիխոտի
 ապրիլականությունների վրա թվում է,
 և չէր հասկանում իր շրջապատում ե-
 լած ամենապարզ բաներն անգամ և այն-
 քան թեկուզ և ազնիվ, նպատակներ էր
 ռեալիստիկում, որոնց իրագործումը մի-
 անգամայն անհնարին էր: Այդպիսի
 էասելվածք ու բնավորություն ունեցող
 ստոկպանց այժմ էլ անվանում են դոնկի-
 խոտներ

Բայց Դոն Կիխոտը միայն ծիծաղ չէ, որ
 բարուցում է Գիրքն ընթերցելով մենք աս-
 տիճանաբար սիրով ու հիացմունքով ենք
 օջվում նրա հանդեպ

Նորից ու նորից կարդալով այդ գիրքը,
 դուք ամեն անգամ մի նոր բան կգտնեք, և
 այն ավելի ու ավելի թանկ կդառնա ձեզ
 համար



Բայց դուք երբեք չեք մոռանա ձեր ա-
 ռաջին հանդիպումը նրա հերոսների
 հետ Ձգվում է Իսպանիայի քարքարոտ
 ճանապարհը, և երկու տարօրինակ հեծ-
 յալներ շտապում են օգնության հասնելու
 բոլոր նրանց, ովքեր դժբախտության մեջ
 են

անգամ արդեն վերջինը ձեր ավագ ըն-
 կերների տասներորդ դասարանցիների
 կյանքում:

Դա ձեր ուղին է առաջինից մինչև
 տասներորդ դասարան Ձեր կյանքի
 տասը տարին կապված կլինի դպրոցի
 հետ Այդ տասը տարիների ընթացքում
 դուք շատ բան կիմանաք, շատ բան
 կսովորեք, սկզբում հոկտեմբերիկներ կլի-
 նեք, հետո՝ պիտներներ և կոմերիսմիու-
 թյան անդամներ:

Եվ միշտ ձեր կողքին կլինի ձեր ամե-
 նագլխավոր ղեկավարն ու բարեկամը
 ուսուցիչը՝

Յուրաքանչյուր ուսուցիչ ունի ծրագիր,
 որով նախատեսվում է, թե ինչ պետք է
 սովորեցնել առաջին դասարանցուն, երկ-
 րորդ դասարանցուն... և առհասարակ
 դպրոցում սովորող բոլոր երեխաներին
 Սովետական Միության բոլոր դպրոցների
 համար այդ ծրագրերը միասնական են:

Կուսակցության և կառավարության
 որոշմամբ բոլոր դպրոցականներն ապա-
 հովվում են անվճար դասագրքերով, ինչ
 նախատեսված է ՍՍՀՄ նոր սահմանա-
 դրությամբ:

Դպրոցն ունի «Կանոններ սովորողների
 համար» չէ որ եթե աշակերտը ջանասի-
 րաբար չսովորի, իրեն օրինակելի չպահի,
 ակտիվորեն չմասնակցի դասարանի, խըմ-
 բի, ջոկատի, դպրոցի կյանքին, ապա կա-

Դպրոց

«Դպրոց» բառն առաջացել է «դպիր»
 բառից, որ հնում նշանակել է գրագետ
 մարդ, գրագիր, քարտուղար:

Դուք, անշուշտ, երբեք չեք մոռանա
 դպրոցական ձեր առաջին օրը

Սեպտեմբերյան արևոտ առավոտ է. Բո-
 լոր դասարանները շարված են դպրոցի
 մոտ Ամենուր ծաղիկներ են, ժպիտներ,
 խնդուն դեմքեր. Այստեղ դուք առաջին
 անգամ տեսնում եք ձեր համադասարան-
 ցիներին, ծանոթանում ուսուցչուհու հետ
 Ձեզ առաջին դասարանցիներիդ, ջերմ,
 բարի խոսքերով դիմում են ուսուցիչները,
 դպրոցի դիրեկտորը, ծնողները: Հնչում է
 դպրոցական առաջին զանգը ձեր կյան-
 քում

Իսկ գարնանը, աշակերտների նույնպի-
 սի մի հանդիսավոր հավաքի ժամանակ,
 նորից կինչի դպրոցական զանգը, այս

Սերվանտե
 սի «Հնարա
 միտ հիդալ
 ցո Դոն Կի-
 խոտ Լա
 Մանչեցի»
 վեպի հա
 մար ֆրան
 սիացի նկա
 րիչ Գյուս
 տավ Դորեի
 պատկերա
 զարդումից



Երևանի Ստ
Շահումյա
նի անվան
դպրոցի
շենքը

րող է պատահել, որ ոչ ինքը, ոչ էլ իր ընկերները չկատարեն նշված ծրագրերը Մինչդեռ դպրոցի յուրաքանչյուր շրջանավարտ պետք է լինի գրագետ, կրթված, ձգտի նորանոր գիտելիքների, նվիրված լինի կոմունիստական կուսակցությանն ու ժողովրդին, պատրաստ լինի աշխատանքի Արանք էլ հենց դպրոցի գլխավոր խնդիրներն են:

Կուսակցությունն ու կառավարությունը մշտապես հոգում են դպրոցի մասին, որպեսզի այն էլ ավելի լավ գործի և հաջողությամբ կատարի իր խնդիրները:

Իսկ ձեր գլխավոր խնդիրը, սովետական ողջ հասարակության հանդեպ ձեր պարտականությունն է հաստատակամորեն և կատարելապես տիրապետել այն բոլոր գիտելիքները, որ տալիս է դպրոցը. Բազմակողմանի զարգացած, գիտակ մարդիկ միայն կարող են լինել կոմունիզմի ակտիվ կառուցողներ:

Սակայն միշտ չէ, որ դպրոցը մատչելի է եղել բոլոր երեխաներին, և հիմա էլ ամեն տեղ չէ, որ մատչելի է: Մինչև *Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը* մեր երկրում չքավորների երեխաներն, իբրև կանոն, կարող էին ստանալ միայն տարրական կրթություն գրել-կար-

դալ սովորել Դուք, հավանաբար, «*Պիոներ կանչ*»-ում կարդացել եք այն մասին, թե ինչպես են ԱՄՆ-ում առաջադեմ ուժերը պայքարում, որպեսզի բոլոր երեխաները միատեսակ կրթություն ստանան անկախ մաշկի գույնից, բնակչության հարուստ կամ ունեզուրկ խավերին պատկանելուց:

Բոլոր երկրների աշխատավորների համար սովետական դպրոցն օրինակ է ծառայում:

Դուք պետք է հիշեք այդ և պատվով կրեք սովետական դպրոցականի կոչումը

Հայաստանում հայկական դպրոցներ են բացվել 5-րդ դարի սկզբից երբ *Մեսրոպ Մաշտոցն* ստեղծեց հայերեն գրերը Միջնադարում հռչակված էին Անիի, Տաթևի, Սանահինի, Հաղպատի դպրոցները Հայկական շատ դպրոցներ են գործել նաև հայ գաղթավայրերում, ինչպես, օրինակ, *Լազարյան ճեմարանը* Մոսկվայում, Ներսիսյան դպրոցը Թիֆլիսում (Թբիլիսիում)

Սովետական իշխանության հաղթանակից հետո Հայաստանը դարձավ համատարած գրագիտության երկիր, դպրոցներ բացվեցին քաղաքներում, գյուղերում, բոլոր բնակավայրերում: Սովորելու հնարավորություններ ստացան բոլոր երե-

խաները: Կառուցվեցին նոր, գեղեցիկ դպրոցական շենքեր՝ ուսուցման ժամանակակից պահանջներին համապատասխանող կաբինետներով, լուսավոր ու ընդարձակ մարզասրահներով: Հայաստանի դպրոցների մի մասը ունի մասնագիտական թեքում, ուր ընդգրկված են համապատասխան նախասիրությունների տեր երեխաները

Դրամ

Հազարամյակներ առաջ մարդիկ չգիտեին թե ինչ է դրամը՝ նրանք պարզապես զանազան առարկաներ փոխանակում էին միմյանց հետ: Բրուտները փոխանակում էին խեցամաններ և սափորներ, դարբինները դանակներ, կացիկներ ու նետի ծայրապանակներ, երկրագործները հացահատիկ, ձեթ, գինի, անասնապահները ոչխարներ, եզներ, բուրդ ու կաշի՝ իսկ հաղթանակած մարտիկները իրենց գերիները

Բայց փոխանակություն կատարելը բարդ էր, քանի որ իրերն ու մթերքները տարբեր արժեքներ ունեին: Արժեքը կախված է այն բանից, թե որքան աշխատանք է ծախսվում այս կամ այն առարկան կամ մթերքը պատրաստելու համար, կամ էլ նրանից, թե ինչպիսի դժվարություններ, երբեմն էլ վտանգներ պետք է հաղթահարել դրանք ձեռք բերելու համար: Մեկ ոչխարի փոխարեն, օրինակ, կարելի էր ստանալ երկու կացիկ կամ մեկ անդրավարտիք, կամ էլ չորս սափոր Իսկ հովազի ժանիքներից ու ձիրաններից պատրաստված ապարանջանի փոխարեն կարելի էր ստանալ նավակ կամ մեկ զույգ եզ: Պետք էր գտնել նաև այդպիսի փոխանակություն կատարելու ցանկություն ունեցող մեկին:

Փոխանակությունը պարզեցնելու համար մարդիկ փորձում էին գտնել փոխանակման միջոց ծառայող ամենից հարմար

առարկան: Անասունը, մթերքները, մորթեղենը, կտորեղենը որպես դրամ հարմար չգտնվեցին, որովհետև դրանք խնամք էին պահանջում կամ էլ երկար պահելուց փչանում էին

Մարդիկ աստիճանաբար հասկացան, որ դրամը պետք է լինի ոչ թե ժամանակավոր, այլ մշտական ու հաստատուն: Այն պետք է լիներ դիմացկուն, որպեսզի պահելիս կամ ձեռքից ձեռք անցնելիս չփչա-

նար, թեթև, որպեսզի հեշտ լիներ հետը կրելը, իսկ նրա փոքր քանակությունն անգամ արժեքով պետք է հավասարվեր թե եզան ու տան, թե նավի ու հողակտորի արժեքին: Անհրաժեշտ էր նաև, որ այն հեշտությամբ բաժանվեր մանր մասերի, որպեսզի կատարվեին ոչ միայն խոշոր, այլև մանր առարկաների գնումներ հոբուրդը չէ որ եզ կամ նավ են գնում: Սովորաբար մարդը գնում է մի բոքոն հաց, մի կտոր միս, մի զույգ կոշիկ

Բայց ահա ծագեց մի նոր պահանջ: Հարկավոր էր, որ դրամն ամենամանր մասերի բաժանելու ժամանակ նրա ընդհանուր արժեքը չփոքրանար եթե, օրինակ, սամույրի մորթին բաժանենք փոքր կտորների, ապա այդ կտորների արժեքը կհավասարվի զրոյի: Բուրդ այս պահանջներին քիչ թե շատ համապատասխանող ամենաառաջին դրամներից էին հարավային ծովերից բերված կաուրի փափկամորթների խեցիկները: Դրանց վրա անցք էին բացում և հուլունքի նման շարում թելին: Բայց դրանք էժան էին մեկ եզի համար պետք էր վճարել հազարավոր խեցիկներ


Պարզվեց, որ ամենահարմարը մետաղե դրամներն են: Կարելի էր ցանկացած արժեքի դրամ հատել պղնձից էժանները, արծաթից ավելի թանկերը, ոսկուց ամենաթանկերը: Բայց մետաղե դրամներն էլ իրենց թերությունն ունեին ծանր էին և մեծածավալ: Հեռավոր երկրների հետ առևտուր անող հարուստ վաճառականների համար վտանգավոր էր ու ոչ հարմար իրենց հետ նման բեռ վերցնելը ինչպես էլ թաքցնեին, ավազակները կգտնեին: Ուստի և մարդիկ ուրիշ ելք գտան ոսկին պահպանության էին հանձնում բանկ և փոխարենը վերցնում ստացականներ, որոնք ճանապարհի համար հարմար էին:

Այսպես առաջին անգամ լույս աշխարհ եկան թղթադրամները, որոնց վրա գրված է թե բանկում պահված ոսկու ինչ քանակի են հավասար

Դրամով վճարվում են այն բոլոր իրերը, մթերքներն ու ծառայությունները, որոնց համար աշխատանք է ծախսվել: Դրա համար էլ ասում են, որ դրամը այնպիսի հատուկ ապրանք է, որի որոշակի քանակը միշտ համարժեք է ցանկացած այլ ապրանքի և կարող է փոխանակվել նրա հետ:

Հայաստանում գտնված ամենահին մետաղադրամը մեր թվականությունից առաջ 5րդ դարից է: Մեր թվականությունից





13

14

առաջ 3-րդ դարի վերջին սեփական դրամներ են հատել Ծոփքի հայոց թագավորները Հայկական շատ դրամ է հատվել, մասնավորապես, մեր թվականությունից առաջ 2-րդից 1-ին դարերում, Արտաշեսյան թագավորության շրջանում, և դրանց գրեթե բոլորի նմուշները հասել են մեզ: Տիգրան Մեծի դիմապատկերով դրամ է հատվել Տիգրանակերտում, Արտաշատում և Անտիոքում: Միջնադարում հայ իշխանների և թագավորների դիմապատկերներով ու հայերեն գրությամբ դրամներ են հատվել Կիլիկիայի հայկական պետությունում. 17-րդ դարում, պարսկական տիրապետության օրոք, երևանն ունեցել է դրամատուն:

Կա պատմագիտության հատուկ ճյուղ դրամագիտությունը, որն ուսումնասիրում է դրամահատման պատմությունը, մետաղադրամները շքանշանները և այլն՝

1 կաուրիի խեցիներ 2. ոսկու հռոմեական ձուլակտոր դրոշմներով, 3 իբրև դրամ ծառայող աղվեսի մորթի, 4 մետաղե օղակ-դրամներ, 5 ոսկե սկավառակ Միկենից (Հին Հունաստան), 6 մեր թվականությունից առաջ 5—4-րդ դարերի հունական մետաղադրամ Աթենաս աստվածուհու գլխի և Պեգաս նժույգի պատկերով, 7. հռոմեական մետաղադրամ երկդեմ Յանուսի պատկերով, 8 արծաթե դրամ Պսկովից (15-րդ դար), 9 Պետրոս Առաջինի կոպեկանոց պղնձադրամ, 10 Պետրոս Առաջինի ոսկե դրամ 11 Պետրոս Առաջինի արծաթե դրամ, 12 սովետական ռուբլիանոց արծաթե դրամ (1924) 13 Տիգրան Մեծի (մեր թվականությունից առաջ 1-ին դար) արծաթե դրամ 14 Կիլիկիայի թագավոր Անտիոքի (12—13-րդ դարեր) արծաթե դրամ

12



Այ դրոշն առաջին անգամ բոցի պես փողփողաց 1832 թ հունիսին՝ Փարիզի աշխատավորության ապստամբության ժամանակ, բարիկադների վրա: Ֆրանսիայի մայրաքաղաքի երկնքում այն կըրկին ծածանվեց 1871 թ, Փարիզի կոմունայի օրերին:

Ռուսաստանում կարմիր դրոշն առաջին անգամ ասպարեզ է եկել 1878 թ, Պետերբուրգի բանվորների ցույցի ժամանակ: Այն դեպի երկինք պարզեց երիտասարդ արհեստավոր Յակով Պոտապովը, որին իրենց ամուր բազուկներով բարձրացրած պահում էին ընկերները:

1905 թ մարտական կարմիր դրոշները ծածանվում էին Մոսկվայում՝ բանվորական Պրեսնյայի հերոսական բարիկադների, փողփողում ապստամբած հեղափոխական նավերի «Պոտյոմկին» զրահանավի և «Օչակով» հածանավի վրա

Կարմիր դրոշի ներքո, Լենինի կուսակցության գլխավորությամբ, բանվորները, զինվորները և գյուղացիները հաղթանակ տարան 1917 թ հոկտեմբերին Այդ հաղթանակից հետո կարմիր գույնը դարձավ սովետների երկրի պետական դրոշի գույնը եվ մենք կարող ենք հպարտությամբ ասել, որ մեր դրոշն այդ գույնը ժառանգել է ողջ աշխարհի հեղափոխական մարտիկների շատ սերունդներից:

Մեր դրոշի վրայի մուրճն ու մանգաղը խորհրդանշում են բանվորների ու գյուղացիների անխախտ բարեկամությունը իսկ մուրճ ու մանգաղի վերևում պատկերված աստղի հինգ թևերը նշանակում են երկրագնդի հինգ մայր ցամաքների աշխատավորների եղբայրությունն ու միասնությունը:

Պետական դրոշը ժողովրդի դրոշն է սրբությունը: Այն մարմնավորում է ժողովրդի հպարտությունն իր երկրի համար, նրա մշտական պատրաստակամությունը աշխատանքով և կյանքով պաշտպանելու նրա պատիվն ու անկախությունը:

Իրենց պետական դրոշներն ունեն մեր երկրի 15 եղբայրական հանրապետությունները Էստոնական ՍՍՀ և Լատվիական ՍՍՀ դրոշների վրա պատկերված են փրփրադեզ կապույտ ալիքներ չէ որ ծովը մեծ դեր ունի մերձբալթյան այդ հանրապետությունների կյանքում: Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության

պետության պետական դրոշը նույնպես կարմիր է դրոշի մեջտեղից երկայնքով անցնում է կապույտ մի շերտ, որը կազմում է դրոշի լայնքի մեկ քառորդը:

Միութենական հանրապետությունների բոլոր դրոշները պսակված են հնգաթև աստղով և մուրճ ու մանգաղի պատկերով: Դրանց միավորում է կարմիրը՝ աշխատավորների ինտերնացիոնալ եղբայրության գույնը

Սովետական Միության կարմիր դրոշը խաղաղության դրոշն է

Մարդկության սերն է այդ դրոշի մեջ,
Չկա այլ դրոշ այդքան պարզ ու մեծ
Նրա մեջ է մեր փառքը հուրհրում
Ավելի ջերմը չկա աշխարհում
Նրա մեջ անշեղ լույսն է մեր զորեղ
Ջորեղ ավելի չկա ոչ մի տեղ
Նրա մեջ կյանքն է մեր արդար, ազատ,
Չկա այլ դրոշ այդքան հարազատ

Լ Ս Տիխոնով

Դրուժինա

«Դրուժինա»-ն հին ռուսական բառ է, որ ծագում է «Друг» «բարեկամ» բառից:

Երբ վրա է հասնում դժբախտությունը կամ պատերազմելով գալիս է ոսոխը, ի՞նչ է առաջինը օգնության հասնում: Անշուշտ, բարեկամը, բոլոր բարեկամները միասին եվ այն, ինչ վեր է նույնիսկ դուրս գալիս ուժից, հաղթահարում են համերաշխ, համախմբված մարդիկ: Դրուժինաները տարբեր են լինում: Բանվորական դրուժինաները (ջոկատները) մարտնչում էին Կրասնայա Պրեսնյայի բարիկադներում Սանիտարական ջոկատները ռազմաճակատում պայքարում էին վիրավորների կյանքը փրկելու համար Հրշեջ ջոկատները ա-

րիաբար կռվի են բռնվում կրակի հետ Ահա փողոցով քայլում է ժողովրդական դրուժինան, և ոչ ոք չի համարձակվի խախտել կարգը, փչացնել մարդկանց տրամադրությունը

Յուրաքանչյուր դպրոցում, պիոներական ճամբարում կամ հենց թեկուզ գյուղական փողոցում գործում են պիոներական դրուժինաներ: Նրանք բոլորը միասին կազմում են Վ Ի Լենինի անվան Համամիութենական պիոներական կազմակերպությունը:

Պիոներական դրուժինաները բաժանվում են ջոկատների, ջոկատները օղակների: Երբ դրուժինան ստեղծվում է, հենց առաջին հանդիսավոր տողանի ժամանակ նրան կարմիր դրոշ են հանձնում Կոմբրիտմիությունը դրուժինա է ուղարկում ավագ բարեկամին պիոներական ջոկատավարին: Պիոներական շատ դրուժինաներ փառաբանված հերոսների անուններ են կրում

Պիոներական բոլոր գլխավոր գործերը երեխաները վճռում են դրուժինայի հավաքում: Այստեղ նրանք ընտրում են դրուժինայի խորհուրդ, խորհուրդն էլ նախագահ Դրուժինան կազմակերպում է պիոներական հավաքներ, արշավներ և սպարտակիադաներ, աշխատանքային կիրակնօրյակներ և ուրախ հանդեսներ: Դրուժինան փոքրիկ հոկտեմբերիկներին օգնում է դառնալու իսկական պիոներներ, իսկ մեծերին բազմաթիվ լավ գործեր կատարելու: Երբ տեսնեք քայլերթի ելած պիոներական դրուժինա, պատվի առեք



փակվելով դասասենյակում գիրք էր կարդում ու գրում: Այդ պատանին Պետրոս Դուրյանն էր Տանը Պետեկը (այսպես էին ծնողներն անվանում նրան) մինչև կեսգիշեր դարձյալ կարդում էր ու գրում:

Դուրյանը մեծացավ կարիքի ու թշվառության մեջ Կարոտյալ ընտանիքին օգնելու համար Պետրոսը, որ արդեն ավարտել էր ճեմարանը, դարձավ դեղագործի աշակերտ, գրագիր, զբաղվեց դերասանությամբ: Բայց ամենից շատ գրել էր սիրում Տակավին դպրոցում, երբ դասատուներից մեկը բարեմտորեն խորհուրդ էր տվել թողնել «բանաստեղծական տքնությունները», Դուրյանը խորապես վիրավորված պատասխանել էր «Ախ, չես գիտեր էՖենտի, շատ կսիրեմ բանաստեղծությունը»

Բազմազան էին Դուրյանի գրական հետաքրքրությունները: Գրել է թատերախաղեր, տաղեր, կատարել թարգմանություններ, փորձել ուժերը վիպասանության մեջ, զբաղվել հրապարակախոսությամբ

Պետրոս Դուրյանի տարերքը, սակայն, քնարերգությունն էր Նրա քնարական ստեղծագործությունն ամբողջովին սեր է մարդու և բնության հանդեպ, մահվան ժխտում է ու կենսասիրության փառաբանում: Նա կարողացավ բնությունն իր բոլոր գույներով ու բույրերով ներհյուսել մարդկային եությանը Դուրյանի ըմբռնմամբ բնությունն ինքը մարդկային հոգեվիճակների արտացոլումն է Բանաստեղծը ծարավի էր մեծ սիրո, մահն անխուսափելի է, բայց տխուր է առանց սիրո մեռնելը: Դուրյանի բանաստեղծություններում մահվան գաղափարը դառնում է իրական

Դուրյան Պետրոս Աբրահամի

1851 —
1872

Ամեն անգամ, առավոտյան պարապմունքներից հետո, Կ Պոլսի Ակյուտարի ճեմարանի ունևոր աշակերտները գնում էին սեղանատուն, իսկ չքավորները, հնարավորություն չունենալով տնից նախաճաշիկ բերելու, տնտեսին մանր-մունր ծառայություններ էին մատուցում՝ փոխարենը ստանալով կերակրի մնացուկներ Աշակերտների մեջ կար սակայն, մեկը շագանակագույն մազերով, մրահոն, գեղեցիկ ու նուրբ դիմագծերով սևաչյա մի պատանի, որ նույնպես աղքատ էր բայց նախընտրում էր քաղցած մնալ, և


նության դեմ բողոքի կրքոտ ու տառապալի արտահայտություն: Դուրյանը հայ ամենաըմբոստ քնարերգակներից է Խռովքը, կասկածանքն ու ընդվզումը փոթորկում էին նրա միտքն ու հոգին, որ այնպես հանճարեղորեն ժայթքեց սբանչելի «Տըրտունջք»-ում

Դուրյանի բանաստեղծական ժառանգությունը կազմում է ընդամենը 39 գործ Սակայն դրանց մեծ մասը իսկական գրչության գործոցն են («Սիրել», «Դրժել», «Թրքուհին», «Հծծյունք», «Իմ ցավը», «Իմ մահը», «Լճակ», «Տրտունջք»), նրանցով է սկզբնավորվել հայ նոր քնարերգությունը

Պետրոս Դուրյանը, որ տառապում էր թոքախտով, կյանքից հեռացավ 21 տարին

չբոլորած, հեռացավ երազելով իր տաղերի փոքրիկ ժողովածուի «արև տեսնելը» հեռացավ նույնիսկ առանց լուսանկար ունենալու (գրողի դիմանկառը ստեղծվել է մահից 20 տարի հետո հարազատների նկարագրությունների հիման վրա) Բայց նա մնաց պաշտված մի բանաստեղծ, որի գերեզմանը մինչև օրս էլ ուխտատեղի է: Հովհաննես Թումանյանը նրան համարել է «վաղամեռիկ հանճար», եղիշե Չարենցը «իսկական սրինգ» ունեցող բանաստեղծ նրանով հիացել են Միսաք Մեծարենցը, Դանիել Վարուժանը, Վահան Տերյանը, Ավետիք Իսահակյանը, Պարույր Սևակը, ինչպես նաև ռուս և եվրոպական գրողներն ու գրականագետները





Հանրագիտարանի բոլոր հատորներում զետեղված գրույցների հեղինակների ազգանունները դուք կկարդաք 4-րդ հատորի վերջում:

Պատ. քարտուղարի տեղակալ արտադրության գծով ՍԿՈՔՅՈՒԿԻՆ Վ Լ

մանկական հանրագիտարանի գիտաճյուղային խմբագրություն

Վարիչներ ԶԱՐԵՅԱՆ Մ Ս., ՍԱՐԳՍՅԱՆ Է Լ., ավագ գիտ խմբագիրներ ԱԴԱՄՅԱՆ Շ Գ ՄԱԿՈՒՉՅԱՆ Թ Գ գիտ խմբագիրներ ԱՀԱՐՈՆՅԱՆ ՅՈՒ. Հ ԶԱՔԱՐՅԱՆ Մ. Ս ԿՈՍՏԱՆՅԱՆ Լ Կ

Պատկերագրարման և քարտեզագրության խմբագրություն

Վարիչ ԱՐՄԱՂԱՆՅԱՆ Ս Ս ավագ գիտ խմբագիրներ ԳԵՎՈՐԳՅԱՆ Ս Պ ԻՎԱՆՅԱՆ Է Վ ԽԱՉԱՏՐՅԱՆ Կ Կ գիտ խմբագիր ՍԱՐԳՍՅԱՆ Պ Վ

Առտադրական բաժին

Վարիչ ԳԱՆՁԱՆՅԱՆ Մ. Ա ավագ տեխ. խմբագիր ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ Հ Հ ինժեներ թողարկիչ ԱՎԵՏՅԱՆ Կ Լ

Կազմը, անվանաթերթը և նախանվանաթերթը նկարիչ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ա Ա

Հայկական նյութերի պատկերագրողները ՀԱԿՈՔՅԱՆ Խ Զ., ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռ Ս լուսանկարները ԱԴԻՅԱՆ Վ Հ ՍԱՐԳՍՅԱՆ Զ. Ա ԱԱԶՅԱՆ Ա Գ ԲԱՐՍԵՂՅԱՆ Ա Գ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ Լ Գ

Սրբագրական բաժին

Վարիչ ԱՆԱՆԻԿՅԱՆ Ն Պ սրբագրիչներ ԳԱՍՏՅԱՆ Պ Ե ԳԱՍՊԱՐՅԱՆ Հ Ա ԴՐԱՅՅԱՆ Գ Լ

Հատորի պատրաստմանը մասնակցել են ՀՍՀ գլխավոր խմբագրության մյուս գիտական խմբագրություններն ու բաժինները

Հայկական ՍՍՀ հրատարակչությունների պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գույնավոր տպագրության տպարան

Դիրեկտոր ԳԵՎՈՐԳՅԱՆ Մ. Ա գլխ ինժեներ ՄՈՎՍԵՍՅԱՆ Ա Ա., ֆոտոշարող ավտոմատների հավաքողներ ՂԱԶԵԼՅԱՆ Ս Հ և ՄԻԽՔԱՐՅԱՆ Ա Կ., մոնտաժող ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Մ Ս տպագրիչներ ՄԻՆԱՍՅԱՆ Գ Մ և ՄԻՆԱՍՅԱՆ Մ Մ կազմարարական արտադրամասի ավագ վարպետ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ Ս փորագրիչ ԱՎԱԳՅԱՆ Վ. Հ

ԻՆՉ Է. ՈՎ Է

Կրտսեր դպրոցականների համար
4 հատորով
Հատոր 1, Ա — Դ
368 էջ պատկերներով

ЧТО ТАКОЕ. КТО ТАКОЙ

Для младших школьников
В 4 томах
Том 1
368 стр. с ил
(На армянском языке)
Главная редакция
Армянской Советской энциклопедии
Ереван — 1984



Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն 375001 Երևան— 1, Թումանյան 17

Հանձնված է շարվածքի 18 02 1983: Ստորագրված է տպագրության 22.05 1984 ՎՋ 02360 84X108 1/16. Թուղթ օֆսետը 100 գր.՝
Տպ. 23 մամ., 38,64 պայմ մամ 43 77 հաշվահրատ մամ · Տպաքանակ 100 000 (3 ռդ թողարկում 60001—80 000) Պատվեր
3204: Գինը 5ռ. 30 կոպ.:

ՀԱԱՀ երատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտորի գործերի պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան,
375082 Երևան— 82, Ադմիրալ Իսակովի պող 48

Главная редакция Армянской Советской энциклопедии Ереван—1 ул Туманяна 17

Типография цветной печати Госкомитета по делам издательства, полиграфии и книжной торговли Арм ССР
Ереван—82, пр Адмирала Исакова 48